Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման** (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր` հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին` աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh** (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

**Մեր տվյալները – Наши контакты - Our contacts**

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

# ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ

ՑԱԿ
Գ 27

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐ

# ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի

5Ծ 731



«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ—1982

ԳՄԴ 84.21
Կ53

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ.
Աբրահամյան Ա. Ա., Աբրահամյան Ա. Գ., Առևշատյան Ս. Ս.,
Սարգսյան Գ. Խ., Խաչիկյան Լ. Ս., Նալբանդյան Վ. Ս.

Խմբագիր՝ Լ. Ա. ԽԱՆԼԱՐՅԱՆ

Կիրակոս Գանձակեցի
Կ53 Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմ., առաջաբանը և ծանոթագր. Վ. Առաքելյանի: Խմբ. Լ. Խանլարյան.— Եր.: Սովետ. գրող, 1982, 352 էջ:

Կիրակոս Գանձակեցին XIII դարի հայ պատմիչ է: Ապրել է ու գործել մոնղոլների Անդրկովկասյան արշավանքների ժամանակ: Քաջածանոթ է հայոց պատմությանը և հայ հին գրականությանը: Ճշմարտացի պատմիչ է, և նրա պատմական տեղեկությունները Անդրկովկասի, Հայաստանի և մասնավորապես մոնղոլների արշավանքների մասին լայն ճանաչում են գտել Հայաստանի սահմաններից շատ հեռու: Ականատես եղել է մոնղոլների զորավարներից մեկի [illegible]: Իր գրքում լայնորեն պատմում է մոնղոլների մասին և իբրև նմուշ բերում է մոնղոլական շատ բառեր՝ ընթերցողին ծանոթացնելու նրանց և նրանց լեզվին:

Թարգմանությունը կատարված է Կիրակոս Գանձակեցու «Պատմություն Հայոց» աշխատության գիտա-համեմատական բնագրից, որը պատրաստել է ակադեմիկոս Կ. Ա. Մելիք-Օհանջանյանը:

ԳՄԴ 84.21

Կ $\frac{4702080100\ (145)}{705\ (01)\ 81}$ 781 «Տ» Ap1

© «Սովետական գրող» հրատարակչություն,
Թարգմանության, առաջաբանի և ծանոթագրությունների համար, 1982

# ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ

## Ա. ԿՅԱՆՔԸ ԵՎ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Կիրակոս Գանձակեցին սիրում է պատմության թելը ընդհատել և խոսել իր մտերիմների ու մտերմական հարաբերությունների մասին, մի բան, որ շատ հաճելի ու անհրաժեշտ մի զեղում է, և որից հաճախ կարևոր տեղեկություններ ենք իմանում: Խոսելով Ալավկա որդի Դավթի մահվան մասին՝ ի միջի այլոց, հիշում է, որ Ալավկա որդի Դավիթը, Թոքակերի որդի Գրիգորը և Վանականը նստած զրույց էին անում, ու անմիջապես ավելացնում է, թե այս երեքն էլ Գանձակի երկրից էին, «որտեղից և ես եմ»: Այս նշանակում է, որ Կիրակոսը Գանձակի երկրից է իսկապես և ոչ թե քաղաքից: Սրան իբրև ապացույց կարելի կլինի մատնանշել Արքայության քահանայի մասին հիշատակածը, ուր նշված է, թե նա Գանձակ քաղաքից է, իսկ Ալավկա որդի Դավթի և Թոքակերի որդի Գրիգորի ու Վանականի մասին այդպես չի ասված: Սրանք նույնպես եղել են Գանձակի երկրից, բայց ոչ երբեք քաղաքից: Իսկ Գանձակի երկիրը ընդարձակածավալ մի տարածք էր:

Ուրեմն Կիրակոսը, ըստ իր հայտարարության՝ ծնվել է Մեծ Հայքի Արցախ նահանգի Գանձակ երկրում, որի մեջ մտնում էին Գետիկը, Հաղարծինը, Ամարասը, Դիզափայտը և այլ վայրեր: Թե այս վայրերից ո՞րն է նրա ծննդավայրը, մինչև այժմ հայտնի չէ:

Կիրակոսին Գանձակեցի շատ ուշ են կոչել: Գրքի վերնագիրը համարյա բոլոր ձեռագրերում միևնույն կաղապարով է գալիս և, ինչպես երևում է գրությունից, իրեն չի պատկանում, այլ գրված է հետագա գրիչների ձեռքով: Այդ վերնագիրն է «Համառօտ պատմութիւն ժամանակաց ի սրբոյն Գրիգորէ մինչև ցյետին աւուրս Թեացեալ: Արարեալ Կիրակոսի՝ ընտրեալ վարդապետի ի մեծահռչակ ուխտն Գետկայ»: Բոլոր ձեռագրերն էլ չնչին փոփոխություններով ունեն սույն վերնագիրը: Մեր պրպտումները, թե ե՞րբ է Կիրակոս անվան վրա Գանձակեցի ավելացվել, մեզ հասցրին 17-րդ դարը: Դրանից հին նշում ոչ մի տեղ չենք գտնում:

1617 թվականին արտագրված մի ձեռագրում (Մատենադարան, № 5587) գրված է. «Ի պատմութենէ Կիրակոսի Գանձակեցւոյ»[1]: Նրա անունը հիշա-

1 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», Երևան, 1961, էջ 2 (Առաջաբանում):

տակով բոլոր պատմիչներն էլ կա՛մ Կիրակոս են կոչում, կա՛մ՝ Կիրակոս Վարդապետ։ Իսկ ինքը իրեն անվանում է Կիրակոս Արևելցի։ Հետագա պատմաբաններից Կիրակոսին Գանձակեցի կոչողներից ամենահինը Միքայել Չամչյանն է, որի «Պատմութիւն Հայոցը»[2] լույս է տեսել 1784 թ.։ Ամենայն հավանականությամբ այս վերջին աղբյուրից էլ Մխիթարյանների միջոցով ընդհանրացել է Կիրակոսի՝ Գանձակեցի հորջորջումը։ Նրա երկի բոլոր հրատարակությունները՝ սկսած 1858 թվականից, արդեն որդեգրել են այդ անվանումը։ Կիրակոսը կոչվել է նաև Գետիկցի, Արևելցի։

Կիրակոս Գանձակեցին ծնվել է 1203 թվականին։ Նա մեր պատմիչների մեջ այն բացառիկներից է, որոնք երբեմն իրենց մասին հիշատակություններ են անում հենց այնպես, ի միջի այլոց. և ուսումնասիրողները այդ թանկագին ի միջի այլոցներից տեղեկություններ են քաղում տվյալ հեղինակի մասին։ Մենք արդեն այդպիսի մի դիպվածական խոսքից իմացանք, որ Կիրակոսը Գանձակի երկրից է։ Այդպես էլ որոշում ենք նրա ծննդյան ժամանակը։

Գանձակեցին իր «Հայոց պատմության» 33-րդ գլխում պատմում է մի ասորի ազդեցիկ մարդու մասին, որի անունը Ռաբան էր, և սա արժանացել էր թաթարների խաքանի ջերմ վերաբերմունքին։ Խաքանը նրան հայր էր կոչել։ Օգտվելով այդ բարեհաճ ուշադրությունից՝ ասորի Ռաբանը օգնում է բոլոր քրիստոնյաներին։ Այս Ռաբանի մասին պատմելիս, չգիտես ինչու, մտքովն է գալիս հիշատակելու իր տարիքը՝ հետևյալ ձևով։ «Երբ այս նկարագրությունը տվյալ պահին եղավ, հայոց վեց հարյուր իննսուն թվականն էր» (1241 թ.)։ Շարունակության մեջ ավելացնում է. «Մեր կյանքի քառասնամյա, մի քիչ ավել կամ պակաս, ժամանակն էր»։

«Մի քիչ ավել կամ պակասը» ավելորդ մի արտահայտություն չէ Գանձակեցու համար։ Նա քսանութ տարի հետո Հայսմավուրքի հիշատակարանում գրում է. «Աստծու հույսով և նրա սրբերի սիրով ես՝ նվաստ հոգի Կիրակոս վարդապետս Արևելցիս, միասին հավաքեցի աստծու սրբերի տոները (բնագրում՝ «զտօնս») ըստ յուրաքանչյուր օրվա հիշատակության։ Գրեցի նաև պատմությունը նրանց, որոնց մասին Հայսմավուրքում չէր գրված, ու խառնեցի նախապես դասավորվածներին։ Եվ աղաչում եմ տոնողներից ու գրողներից (գրիչներին, որոնք որ արտագրելու լինեն) գրել նաև այս խոսքի հիշատակարանը, որպեսզի դուք էլ գրվեք կյանքի գրքում։ Իսկ ով կջնջի մեր գրածը, թող ինքը էլ ջնջվի կյանքի գրքից։ Եվ այս գործը կատարվեց 718 թվականին Կիլիկիա երկրում, Սիս մայրաքաղաքում Հեթումի թագավորության ու նրա որդի Լևոնի իշխանության առաջին տարում, մեր պանդուխտ կյանքի 66 տարեկանում, երբ ավարտվեց ի փառս աստծու, հավիտյան, ամեն»[3]։

Այս հիշատակարանի տվյալը նկատի ունենալով՝ Ալիշանը Գանձակեցու ծնունդը դնում է 1203 թվականին, որովհետև, եթե հայոց 718 թվականին, այսինքն՝ 1269-ին Կիրակոսը եղել է 66 տարեկան, առանց ավել կամ պակաս հիշատակելու, ապա պետք է ընդունել, որ իսկապես նա ծնվել է 1203 թվականին։



2 Տե՛ս Մ. Չամչյան, «Պատմութիւն Հայոց», հտ. Ա, Վենետիկ, 1784, էջ 16:

3 Տե՛ս Ղ. Ալիշան, «Հայապատում», Վենետիկ, էջ 472:

Ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանը առարկում է այս թվականի դեմ՝ ընդունելով, որ Գանձակեցին պետք է ծնված լինի 1201—2 թվականներին։ Մեր կարծիքով այսպիսի առարկության հարկ չկա, որովհետև երբ 38—39 տարեկան մեկին հարցնում ես տարիքը, հաճախ ասում է, մոտ քառասուն տարեկան։ Գանձակեցին «ավել կամ պակաս» ասելով, մոտը նկատի ունի, որ մենք ներկայումս հաճախ ենք գործածում՝ նույնիսկ մեր ծննդյան ոչ միայն տարեթիվը, այլև օրը գիտենալով հանդերձ։ Այնպես որ, կասկածի տեղ չպետք է անել 1203 թվականը։ Քանի որ 1269 թվականին Սիսում գրված Հայսմավուրքի հիշատակարանում հաստատապես ասված է, թե ինքը՝ պատմիչը, 66 տարեկան է, ուստի դա պետք է հիմք ընդունել և հաշվել, որ 1983 թվականին լրանում է Գանձակեցու ծննդյան 780 տարին։

Մի հիշատակարանում, որ նույնպես Ալիշանն է բերում, Գանձակեցին գրում է, թե ինքը տեսել է Մխիթար Գոշին։ Մխիթար Գոշը մեռել է 1213 թվականին։ Շատ հավանական է, որ Գանձակեցին Գետիկի վանքը գնացած լինի 6—7 տարեկան հասակում, առնվազն մի երեք տարի աշակերտած լինի վանքում Գոշի կենդանության օրոք, երբ Գոշը Նոր Գետիկի առաջնորդը, տերն ու տնօրենն էր։

Այստեղից պետք է ենթադրել, և ուրիշ կերպ էլ չի կարելի մտածել, որ Գանձակեցուն վաղ մանկությունից տվել են Գետիկի վանքը ուսման։

Երբ Գոշը վախճանվել է, ինչ-ինչ պատճառներով Կիրակոսը հեռացել է Նոր Գետիկից և գնացել է Տավուշ, ուր հռչակված էր Վանական վարդապետի Խորանաշատ վանքը իր նշանավոր դպրոցով ու վանահայր Վանականով։ Նշենք, որ Վանականը աշակերտել է Գոշին և դուրս է եկել Նոր Գետիկի դպրոցից, որտեղ ուսուցիչ էր նրա ավագ եղբայր Պողոսը։

Թե ո՛ր թվականին է Կիրակոսը գնացել Խորանաշատ վանքը Վանականի մոտ, հայտնի չէ։ Պետք է կարծել, որ դա չէր կարող տեղի ունենալ Գոշի մահից անմիջապես հետո, որովհետև Խորանաշատը կառուցվել է 1215—1220 թվականներին։ Հավանորեն Կիրակոսը իբրև կրտսեր աշակերտ Վանականի հետ կապված է եղել դեռևս Նոր Գետիկում, ուր գուցե նաև դասեր է առել Վանականից մինչև Խորանաշատ գնալը։ Վանականի կենսագրության մեջ ասված է. «Մարմնով վայելչահասակ էր, խոշորադեմ, փոքրաբիթ, լայնամորուք և փառահեղ, մեծաշուք և պատկառազդու, քաղցրախոս և շնորհալից, մտքով բազմիմաստ ու պերճախոս, ժուժկալ ու անձանձիր ուսուցանող»[4]։ Այսպիսի մարդը չէր կարող չգերել ուսումնածարավ Կիրակոսին։ Եվ ահա հենց Խորանաշատը կառուցվում է, Կիրակոսը դեռևս 17 տարեկան պատանի Նոր Գետիկից փոխադրվում է իր սիրելի Վանականի մոտ՝ Խորանաշատ։ Այնուհետև (սկսած 1220 թվականից) նա գործում է Խորանաշատում և վարդապետ է ձեռնադրվում Վանականի կողմից։

4 Տե՛ս «Հայապատում», էջ 463:

խորանաշատին բախտը երկար չի ժպտում. չանցած մի հինգ տարի՝ 1225 թվականին խորասանի սուլթան Ջալալադդինի հրոսակները հաղթում են հայ-վրացական միացյալ զորքերին և հասնում են Տավուշ։ Այստեղ կողոպտում են Խորանաշատը, ցաքուցրիվ անում միաբանությունը։ Վանականը չի հուսահատվում։ Տավուշի Լորուտ գյուղի մոտ մի քարայր է փորում և գրքեր հավաքելով վերսկսում է խորանաշատի գործը։ Այս ամբողջ ընթացքում Կիրակոսը Վանականի հետ էր։

Այստեղ գործը ավելի երկար է տևում, քան Խորանաշատում։ Ուղիղ տասը տարի հետո՝ 1235 թ. թաթարական բանակը Մոլար նոյինի առաջնորդությամբ լցվում է Անդրկովկաս և բանակում Մուղանի դաշտում։ 1236 թ. ամռանը այդ բանակը գրավում է Տավուշը և շրջապատում Վանականի վանք-քարայրը, ուր հավաքվել էին շրջակա գյուղերի բնակիչներից շատերը։ Սովից ու ծարավից տառապող ժողովուրդը ստիպված անձնատուր է լինում, երբ Վանականը, նախապես այցելելով զորապետին՝ խնդրում է խնայել անմեղ ժողովրդին։

Կողոպտելով ժողովրդի ունեցվածքը՝ մոնղոլ-թաթարների հրոսակները արձակում են ժողովրդին, բայց գերի են տանում Վանականին, Կիրակոսին և նրանց ընկերներին։ Թե քանի՞ ամիս է տևում այս գերությունը, հայտնի չէ։ Միայն գիտենք, որ նույն 1236 թ. փրկագնով ազատվում է Վանականը, իսկ միևնույն գիշերը փախչում է նաև Կիրակոսը։

Կիրակոս Գանձակեցին գրում է, որ իրենց օգտագործում էին իբրև գրագիր և ոչ մի գնով չէին ցանկանում ազատել. խոստանում էին կին, ձիեր, միայն թե համաձայնություն տար մնալու Մոլար նոյինի բանակում։

Թե ինչ լեզվով էր գրագրությունը տարվում, անհայտ է. հավանորեն պարսկերեն էր և հայերեն, նայած ուր էին ուղարկվում թղթերը։ Իսկ Կիրակոսը, ամենայն հավանականությամբ, պարսկերեն իմացել է։

Կիրակոսը իր գերության ամիսներին ծանոթանում է նաև մոնղոլ-թաթարական լեզվին, որից ծանոթացման կարգով բերում է իր պատմության մեջ ավելի քան հիսուն բառ և տալիս նրանց հայերեն զուգահեռները՝ ասելով, թե այդ լեզուն շատ տարիներ մեզ անծանոթ էր, իսկ այժմ ակամայից ծանոթացանք։

Կիրակոսը գերության տառապալից օրերը նկարագրում է սարսափազդու գույներով. դա այնպես ծանր էր, որ նա՝ համբերատար բնավորության վարդապետը, չի դիմանում։ Գերությունից փախչելուց հետո վերջնականապես հանգրվանում է Նոր Գետիկում, որովհետև թաթարական բանակը հեռանում է երկրից։

Նոր Գետիկում նա սոսկ միաբանության անդա՞մ է եղել, թե նաև պաշտոններ է վարել, հստակ տվյալներ չկան։ Ալիշանը ենթադրում է, որ Կիրակոսը վանքի առաջնորդ կամ տեսուչ է եղել, որովհետև Վարդան Արևելցին նրան կոչում է րաբունիների պետ և մարեմինների ազատ, անբուսաբեր վայրերի մշակ: Ալիշանը նշում է նաև այն հանգամանքը, որ նա գործածում



է նզովիւ և բանադրանօք բառերը և որ այդպիսի բառեր կիրառում են իշխանություն ունեցողները[5]։

Շատ հավանական է, որ Կիրակոսի նման ուսումնական մի վանական, խառնվածքով բավական եռանդուն, ազգային ու եկեղեցական անկախության ազնիվ գիտակցությամբ օժտված հայրենասեր հայ մարդը ունենար նաև պաշտոններ (մենք հավատացած ենք)։ Սա տվյալ դեպքում կարող էր նպաստել նրա ազգային ու եկեղեցական գործերին։ Գուցե հենց սա է եղել պատճառը, որ նա շրջել է Հայաստանի շատ վայրերում, հանդիպել է նշանավոր մարդկանց, զրուցել է նրանց հետ և այդ զրույցները երբեմն օգտագործել է իր պատմության մեջ։ Այսպես օրինակ՝ 1255 թվականին Կիլիկիայի Հեթում թագավորը Մանգու ղանի մոտից վերադարձի ճանապարհին իջևանում է Նիգ գավառի Վարդենիս գյուղում (Արագածի լեռան մոտ)։ Այստեղ Կիրակոսը տեսակցություն է ունենում թագավորի հետ և թագավորի տեղեկությունները բարբարոս ցեղերի ու այլ ժողովուրդների մասին պատմագրում է՝ բաց թողնելով շատ բաներ, որ կարող էին ընթերցողին հարկավոր չթվալ[6]։

Կիրակոսը նկարագրում է Հուլավուի կողմից Բաղդադի գրավման մանրամասները, վերջում ավելացնում է. «Այս ամենը մեզ պատմեց Հասան Պռոշյանը, որին Պռոշ էին անվանում. սա Հաղբակի որդու բարեպաշտ Վասակի որդին էր՝ Պապաքի ու Մկդեմի եղբայրը, Մկդեմի, Պապաքի, Հասանի ու Վասակի հայրը, որ ականատես ու ականջալուր էր այս դեպքերին և մեծ պատվով հարգված էր խանի աչքում» (գլ. Կ)։

Այս փաստերը ցույց են տալիս, որ նա սոսկ վարդապետ չի եղել, այլ հանրային-կրոնական, քաղաքական ու հասարակական գործիչ, որը կարող է տեսակցել երկրի մեծերի հետ, և կամ մեծերը անհրաժեշտ են համարել տեսնել նրան։

Կիրակոսը շատ եռանդուն ու անզիջող է եղել հայ եկեղեցու ավանդույթների և հռոմեական եկեղեցու հանդեպ՝ չզիջելով ոչ մի նշանախեց։

Գանձակեցու գործունեության հայտնի շրջանը հասնում է մինչև 1260 թվականը։ Դրանից հետո նա ապրում է ևս 11 տարի։ Չգիտենք նա ինչով է զբաղվել ավելի քան մեկ տասնամյակ։ Պատմությունը հասցրել է մինչև 1265 թվականը։ Այս թվականը հաստատ է, որովհետև պատմիչը ծրագրում է պատմել Հուլավուի և Բերքայի ճակատամարտի մասին, որ տեղի է ունեցել Կուր գետի ափին վերոհիշյալ 1265 թվականին։ Ահա թշնամի բանակները պատնեշներով ու խորագույն փոսերով դիրքեր են շինել Կուր գետի երկու ափերին, և պատմությունը ավարտվում է։ Ամենայն հավանականությամբ Կիրակոսը այս տողերը գրել է ճակատամարտից վեց տարի հետո և կիսատ թողնելով վախճանվել է։

Վերևում բերված հիշատակարանից հայտնի է դառնում, որ Կիրակոս

[5] Տե՛ս Կիրակոս Վարդապետի Գանձակեցւոյ համառօտ պատմութիւն, Վենետիկ, 1865 թ., էջ Դ և այս գրքում՝ գլուխ ԽԲ։

[6] Տե՛ս այս գրքում՝ գլուխ ԾԸ։

*Գանձակեցին եղել է Կիլիկիայում։ Բայց թե ո՞ր թվականին է նա մեկնել այնտեղ, հայտնի չէ։*

*Հանգուցյալ ակադեմիկոս Գ. Մելիք-Օհանջանյանը՝ վերոհիշյալ հիշատակարանի վրա հենվելով, անտարակույս գտնում է, որ Կիրակոսը եղել է Կիլիկիայում և Հայսմավուրքը այնտեղ է լրացրել։ Մենք նույնպես համաձայն ենք այդ կարծիքին։ 1260 թվականից Կիրակոսին Արևելյան Հայաստանի ոչ մի վանքում չենք գտնում։ Բարեբախտաբար պատմական կեղծիքները վերջին դարերի գործ են, և սկիզբ առան կաթոլիկական-եկեղեցական հողի վրա։ Կիրակոսը ճշմարտությունը վեր հանելու համար ոչ մի ջանք չի խնայում, և նրա մտքով երբեք չէր անցնի ուրիշի աշխատանքը յուրացնել։ Հիշատակարանը Կիրակոսինն է, գրված է նրա ձեռքով ու նրա սեփական արտահայտություններով։ Բացի սրանից կա մի այլ պարագա ևս. Կիրակոսը շատ լավ ճանաչում է Կիլիկիան։ Այն ժամանակ աշխարհագրության գրքեր չկային, որ նա «Հայոց պատմությունը» գրելու ընթացքում ուսումնասիրեր նաև Կիլիկիայի աշխարհագրությունը։ Նա շրջել է այնտեղ և ծանոթ է տեղին ու պայմաններին և Կիլիկիայի քաղաքների ու վանքերի մասին խոսում է ականատեսի վստահությամբ։ Կիլիկիա նրան կարող էր հրավիրած լինել թեկուզ Հեթում արքան, որ, ինչպես գիտենք, նախապես ծանոթ էր Կիրակոսին։*

*Կիրակոսի մահը, սակայն, տեղի է ունեցել Արևելյան Հայաստանում։ Գրիգոր Ականցին (նույն ինքը Մաղաքիա Աբեղան), որ Կիրակոսի դասընկերն էր, հաղորդում է, որ հայոց 720 թվականին (1271 թ.) վախճանվեցին Հայոց փառավոր վարդապետ Վարդանը և Կիրակոսը։ Այս հաստատ հաղորդումը նույնպես ավելորդ է կասկածի տակ առնել։ Կենդանի մնացած դասընկերը գրեթե նույն ժամանակ (1271 թ.) գրում է իր երկու ընկերների մահվան մասին։ Ի՞նչը այստեղ կարող է ենթադրությունների առիթ տալ։ Մեզ թվում է, ոչ մի բան։ Ալիշանը, ըստ երևույթին, ձեռքի տակ ունեցել է մի աղբյուր, որ ասում է՝ Վարդանը Կիրակոսից 50 օր շուտ է մեռել։ Շատ հնարավոր է։ Գրիգոր Ականցին պատահականորեն չի ասում՝ վախճանվեցին Վարդանը և Կիրակոսը, այսինքն՝ առաջ հիշատակում է Վարդանին, ապա Կիրակոսին։*

*Ժամանակակիցների և հետագա պատմիչների համար Կիրակոս Գանձակեցին մեծ հեղինակություն է եղել։ Նրան կոչել են մեծ, ընտրյալ և այլ մակդիրներով։ Ամենից առաջ Գանձակեցու մասին կարծիք է հայտնել նրա ընկեր և գործակից Վարդան վարդապետ պատմիչը, որը դեռևս Գանձակեցու կենդանության օրոք իր «Երգ Երգոցի մեկնության» առաջաբանում գրում է. «Դու ճանաչվում ես տերունական ոչ միայն անունով (Կիրակոս հունարեն նշանակում է տերունական—Վ. Ա.), այլև էությամբ, իրապես»։ Վարդանը նրան անվանում է րաբունիների սյուն, ցանկալի քաղցրավենի։ Կիրակոսը Վարդանին առաջարկել է գրել «Երգ Երգոցի» մեկնությունը, իսկ այս Վարդանը դիմելով Գանձակեցուն, ասում է. «Իսկ դու, մորենիների և աղուտ, անբուսաբեր վայրերի մշակդ, մեզ համար*



*համամ անուշ ճաշակ ես և ատամու վրա դրված հույզը»[7]։ Նույն Վարդանը «Հավաքումն պատմութեան» գործի մեջ Կիրակոսին համեմատում է Վանականի հետ և կոչում է «մեր հարազատ»[8]։ Մի այլ Վարդան պատմիչ, որ Գրիգոր Ականցին է, նույն ինքը Մաղաքիա Աբեղան, նույնպես փառաբանելով Գանձակեցու ուսուցիչ Վանականին, Կիրակոս Գանձակեցուն համարում է նրա գովելի աշակերտը[9]։*

*17-րդ դարի առաջին կեսի պատմիչ Դարանաղցին գրում է, թե Կոստանդին կաթողիկոսը ժողով հրավիրեց և դրեց սահմանադրական եկեղեցական կանոններ, որ գրել էր մեծ վարդապետ Կիրակոսը[10]։*

*Կիրակոս Գանձակեցու մասին այդպիսի գովեստներով են խոսում նաև ուրիշ պատմագիրներ։ Նրա մեծ հեղինակությունը վայելելը անցյալի գրական շրջաններում իզուր չի եղել, որովհետև Գանձակեցին ստուգապատում պատմագիր է և իր ժամանակի իրադարձությունները շատ մանրամասն ու հավաստի է նկարագրել։*

*Հայ հին գրականության մասնագետ Զարպհանալյանը՝ քննադատելով Գանձակեցուն, ասում է, իբր թե նա չունի այն կարգաբան ոճը, որը իր վարդապետն (այսինքն Վանական վարդապետը) և ուսումնակիցը (Վարդան պատմիչը, որ Կիրակոսի դասընկերն էր) գործածել են իրենց գրվածքների մեջ[11]։*

*Մեզ անհասկանալի է այս «կարգաբան ոճ» ասածը, եթե դա նշանակում է խրթնաբանություն և ճոռոմաբանություն, ապա իսկապես Կիրակոսը այդպիսի գրող չէ։ Նա իբրև պատմիչ հայ ժողովրդի հարազատ զա-*

---

7 Տե՛ս Ղ. Ալիշան, «Հայապատում», էջ 470—71։

8 Տե՛ս «Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 146—147։

9 Մաղաքիա Աբեղա, Վասն ազգին նետողաց, Ս. Պետերբուրգ, 1870, էջ 12 և Պատմութիւն թաթարաց Վարդանայ պատմչի, Երուսաղեմ, 1870, էջ 22։

10 Ժամանակագր. Գրիգոր Վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, Երուսաղեմ, 1915, էջ 304։

11 Տե՛ս «Հայկական հին դպրութիւն», Վենետիկ, 1897, էջ 747։ Դժբախտաբար այսպիսի կարծիք դեռևս 1865 թ. Կիրակոսի երկի հրատարակության առաջաբանում հայտնել է նաև Ալիշանը։ Ալիշանը գտնում է, որ Վարդան Արևելցին անարդար է մեծարում Կիրակոսին... «նրա գիրքը ոչ խոսքի հերթությամբ և ոչ էլ բառերի ընտրությամբ արժան չէ զուգակցվելու հոր (Վանական վարդապետի) և եղբայրակցի (Վարդան Արևելցու) շարժում»։ Հետագայում Ալիշանը արդարորեն փոխել է վերաբերմունքը Կիրակոսի հանդեպ։ «Բավական կիրթ ճաշակ և լեզու ունի սա և կրկին պատիվ իր շատ անգամ հիշած և գոված Վանական Վարդապետին» (տե՛ս «Հայապատում» Ա, էջ 106)։ Շարունակության մեջ, ասում է. «Ինչպես հաստ գիրք մի չէ, բայց բավական հմտությամբ և արժեքի, որով ԺԳ դարու պատմչաց ընտրելագույն կրնա ըսվիլ» (նույն տեղում, էջ 107)։

*վակն է և իր աշխարհայացքով, սկզբունքներով կանգնած է ժողովրդի շահերը պաշտպանողի դիրքերում. Նրա գրքի մեջ չենք կարող ցույց տալ որևէ արտահայտություն, որ մատնանշի նրա սատանումը կամ լքումը իր ազնիվ սկզբունքներից։ Իբրև ժողովրդի մարդ ու գրող, նա պարտավոր էր գրել այնպես, որ ամեն ընթերցող հասկանար։ Արդարև, Գանձակեցու լեզուն 13-րդ դարի ժողովրդական հայերենն է՝ գրական մշակումներով։ Ամբողջ գրքում չկա այնպիսի արտահայտություն, որ անհասկանալի մնա, եթե այն չի աղավաղված։ Աշխատավոր ժողովրդի վճիտ ու ազնիվ մտածումները նա արտահայտում է նույնքան վճիտ ու կանոնավոր լեզվով՝ խույս տալով խրթնաբանությունից ու ճոռոմաբանությունից, որ նկատվում են Վանականի ու Վարդանի գրվածքներում։ Խորատես ու լայնահուն Մանուկ Աբեղյանը նկատել է Գանձակեցու լեզվի ու ոճի առավելությունը և, կարծես իբրև պատասխան Զարպհանալյանի, գրում է.*

*«Եվ այդ [պատմությունը] պատմել է նա պարզ, հեշտ, հասկանալի լեզվով, առանց ձգտելու որևէ ճարտասանական զարդարանքների ու վերամբարձության»*[12]։

*Գրաքարագետ Արր. Զամինյանը նույնպես նշում է, որ Կիրակոսի «լեզուն իր ժամանակակիցների լեզվի համեմատությամբ ընտիր է. Հին և ընտիր արտահայտությունների հետ ունի նաև աշխարհաբարի բառեր ու դասավորություն»*[13] *(իմա՝ շարադասություն)։*

*Այսպիսով՝ որքան ավելի խորն է ուսումնասիրվում Գանձակեցին, այնքան ճանաչվում է իր բարձր արժանիքներով։*

## Բ. ԳԱՆՁԱԿԵՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

*Ըստ ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանի կազմած ցանկի՝ Կիրակոս Գանձակեցու գրչին պատկանող աշխատությունների մեջ նախ նշվում է Տոնապատճառ-տոնացույցը (Հայսմավուրքը)։ Այս աշխատությունը Կիրակոսից առաջ կազմված է եղել։ Բայց Կիրակոսը, քաջածանոթ լինելով հայ եկեղեցական գրականությանը, հավաքում է այն բոլոր եկեղեցական-տոնական գրվածքները, որոնք այդ Հայսմավուրքի մեջ չեն ընդգրկվել, և ըստ տոնական օրերի վերադասավորում է Հայսմավուրքը, լրացնում, ամբողջացնում է՝ ավելացնելով մեկ հարյուր յոթանասուն ճառ։ Վերջացնելուց հետո գրում է նաև հիշատակարան ու այնքան կարևորություն է տալիս իր հեղինակությանը, որ ջնջողի հասցեին սպառնական անեծքով է փակում այն։*

*Հայսմավուրքի մեջ մտնում են «Պողոս եպիսկոպոսի վարքը», «Աստ-*

[12] Մ. Աբեղյան, Երկեր, Դ, 1970, էջ 237։

[13] Արր. Զամինյան, Հայ գրականության պատմ., Ա. մաս, Նոր-Նախիջևան, 1914, էջ 204։



*վածածնի վերափոխման պատմական շարականը»։ Կիրակոսը գրել է նաև բանագրական թուղթ ընդդեմ Դավիթ Տարեցու, մեզ չհասած նամակներ՝ ուղղված Վանականին, Վարդանին և այլ ուսումնակիցներին։*

*Հիշյալ գրություններով Կիրակոսը հայոց հին գրականության պատմության մեջ տեղ չէր ունենա, եթե գրած չլիներ իր «Հայոց պատմություն» աշխատությունը։*

*Կիրակոսը իր պատմության շարադրմանը ձեռնամուխ եղավ 1241 թվականին՝ դրդված հետևյալ հանգամանքներից։*

*Ամենից առաջ նա մարդու մեջ գնահատում է տքնաջան աշխատանքը, չեղածից նոր բան ստեղծելու և ուրիշներին օգտակար լինելու մեծ խորհուրդը։ Մարդը պետք է հյուծվի ու մաշվի տաժանքով և ծանր աշխատանքով, որ թեկուզ պետքական բան գտնի, կարող լինի հետաքրքրվողի իղձն ու փափագը կատարել։*

*Կիրակոսին դրդող մյուս պատճառն այն է, որ նա ուզում է հավիտյան հիշվել ու չմոռացվել։ Միջնադարյան բանաձևը՝ «Ձեռքս երթայ զատնայ ի հող, գիրս մնայ յիշատակող», շատերին քուն ու դադար չի տվել։ Կիրակոսը նույնպես շատ է հոգում այդ առթիվ։ Քրիստոնյա վարդապետը նզովք է կարդում իր հիշատակարանն ու իր անունը ապառիկ ջնջողին։ Մոռացման վախը ստեղծագործական ազդակ է դառնում։*

*Երրորդ պատճառը պատմիչն ինքը ձևակերպում է այսպես. «Եվ մեր այս ձեռնարկումը թող ոչ ոք հանդգնություն չհամարի, այլ (ընդունի) իբրև բարի նախանձի գործ, որովհետև մեր մտածումները մեզ տանջում են՝ լռության չմատնելու այսպիսի ծանր աղետները, որ լսեցինք մեր ականջներով և տեսանք աչքերով»։ Պատմիչին մտահոգում է պատմական անցքերի ու անձերի անկորուստ փոխանցումը հաջորդ սերունդներին. Նա իրեն, իբրև մտավորական մարդու, պատասխանատու է զգում սերունդների առջև. միանգամայն ազնիվ և բարձր պատասխանատվություն, որի գիտակցումն իսկ այն ժամանակի համար իմաստություն ու առաքինություն էր։*

*Չորրորդ հանգամանքն էլ այն է, որ Կիրակոսը փոքր հասակից մեծացել էր այնպիսի միջավայրում, ուր խոսակցության առարկան գիրքն ու գրությունն էր, ուր միտքն ու մտահոգությունը գրի և գրականության համար էր, ուր Կիրակոսի ուսուցիչները պատմիչներ ու գրողներ էին, իսկ ընկերակիցները այնպիսի մարդիկ, որոնց ինքն էր պատվիրում գիրք գրել։*

*Ահա այս բոլոր հանգամանքները գալիս են միահաղույն պարտադրելու Կիրակոսին հայոց պատմություն գրելու, և նա պատվով է կատարում իր խնդիրը։*

*Կիրակոսը գիրքն սկսել է շարադրել 1241 թվականին։ Նա մի շնչով չէր կարող վերջացնել իր աշխատությունը, քանի որ նպատակադրվել էր ժամանակի պատմությունը գրել։ Եվ նա հանգիստ սպասում է դեպքերի կատարման և, ըստ երևույթին, շարադրում էր ոչ անմիջապես։*

*Վիճում են, թե Կիրակոսը պատմությունը կիսատ չի թողել, այլ գրել վերջացրել ու վերջակետը դրել է։ Այս պնդումը իրական չէ։ Կիրակոսի պատմությունը կիսատ է մնացել։ Նա Բերքայի ու Հուլավուի ճակատամար-*

որ սկսել է նկարագրել 5—6 տարի հետո՝ ամենայն հավանականությամբ 1271 թվականին և, չհասցնելով ավարտել, վախճանվել է։ Երևի նա պետք է նկարագրեր նաև հետագա դեպքերը։ Կիրակոս Գանձակեցին սովորություն ուներ հիշատակարանով պսակելու իր ավարտուն աշխատանքները։ Անկարելի է, որ նա «Հայոց պատմությունը», որ նրա տարիների քրտնաջան աշխատանքի արդյունքն է, թողներ առանց հիշատակարանի և թշնամի բանակների դիրքերը նկարագրեր առանց ճակատամարտի ու նրա արդյունքի հիշատակման։ Պատմության վերջին կիսատ էջը բաց է մնացել հեղինակի հանկարծական մահվան կամ շատ ծանր հիվանդության հետևանքով, երբ նա արդեն ի վիճակի չի եղել մի որևէ տող ավելացնելու։

Գանձակեցու հիմնական նպատակն է եղել գրել մոնղոլ-թաթարների արշավանքների պատմությունը, չնայած իրենից առաջ իր ուսուցիչ Վանականը գրել էր։ Կիրակոսը գտնում է, որ մի մարդը չի կարող պատմելով սպառել այն ամենը, ինչ որ գործել են մոնղոլ-թաթարները։ Այդպես են մտածել նաև Կիրակոսի ընկերներ Վարդան Արևելցին, Գրիգոր Ականցին, որոնք նույնպես գրել են մոնղոլ-թաթարների մասին։ Բայց որպեսզի իր պատմության համար հենարան ունենա, Գանձակեցին համառոտ շարադրում է Հայոց եկեղեցական ու քաղաքական պատմությունը մինչև իր ժամանակները, որից հետո միայն սկսում է իր բուն նպատակադրության իրագործումը՝ այսինքն թաթար-մոնղոլների արշավանքների, պատերազմների, ավարառության ու կոտորածների պատմության շարադրումը։

Գանձակեցու, իբրև պատմիչի, արժանիքները ի հայտ են գալիս ամբողջ երկի մեջ։ Ամենից առաջ պետք է նշենք նրա ազնիվ հայրենասիրությունը, որ միջնադարյան կրոնակենտրոն համապարփակ գաղափարի անթյունը, որ միջնադարյան կրոնակենտրոն շրջանում մի կողմ էր մղված։ Հայրենիքը, պետական անկախությունը, ազատությունը և նման ըմբռնումները հարաբերական էին։ Եթե սուրը չէր բռնանում քրիստոնյայի հոգու վրա, վանքերն ու վանականներին չէր կողոպտում, թույլ էր տալիս ժամերգություններն ու կրոնական այլևայլ արարողությունները, ապա քրիստոնյա որոշ պատմիչների համար ամեն ինչ բարեհաջող էր ներկայանում, և տիրապետողը գովերգվում էր իբրև քրիստոնասեր, ազատության պաշտպան և այլն։ Գանձակեցին խստիվ զանազանվում է դրանցից։ Հայրենիքի ազատությունը, պետական անկախությունը նրա ըմբռնողությամբ ազգի համար կենսական գործոններ են։

Իր պատմության առաջին մասի շարադրանքը արդարացնելու համար նա գրում է. «Բայց առաջին աշխատասիրողներից (պատմագիրներից) յուրաքանչյուր ոք բանելու մի տեղ գտավ. դա կամ նշանավոր թագավոր էր և կամ հայտնի ազգերի նահապետություն։ Իսկ մենք այս բոլորից զրկվել ենք, որովհետև Արշակունի ու Բագրատունի թագավորությունը վաղուց արդեն վերացած է, իսկ հայկական իշխանները ոչ մի տեղ չեն երևում. (եթե կան էլ), «ապա ուրեմն օտար աշխարհի զանազան տեղերում թաքնված ու պահված են»[14]։

14 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 9։



Պատմիչն այսպես է ողբում Արշակունի ու Բագրատունի թագավորությունների անկումը։

Հայրենասիրության հետ նա փառաբանում է նաև ազգային արժանապատվությունը։ Կարդացեք այդ գրքի 101-րդ էջում, թե ինչպես է Գագիկ թագավորը պատժում ամբարտավան բյուզանդացի մետրոպոլիտ Մարկոսին՝ այս ճիվաղի կողմից հայ անվանը հասցված անարգանքի համար[15]։

Հայրենասիրությունը Գանձակեցու համար ամենից առաջ ժողովրդասիրություն է, որ նրան ժամանակակիցներից աչքում շատ է բարձրացնում։ Հայ ժողովրդին բնութագրելով քաջությամբ, ազնվությամբ, կրոնասիրությամբ և այլ բարեմասնություններով՝ Կիրակոսը միաժամանակ հենց նրա մեջ երկու շերտ է տեսնում՝ իշխաններ-հարուստներ և աշխատավորներ։ Գանձակեցին անդավաճանորեն կանգնած է այս վերջինների պաշտպանության դիրքերում և առիթ չի փախցնում առաջիններին դատապարտելու համար։ Նա պատմում է, թե Չարմաղունը շրջապատել է Անին. ժողովուրդը հերոսաբար կռվում է պարիսպների վրա, իսկ քաղաքի իշխանների մի մասը օգնում է թշնամուն, որպեսզի իր անձը ազատի։ Սակայն, ինչպես միշտ այս անգամ էլ Արևելքը դավաճանությունը խստորեն պատժում է՝ կոտորելով նաև դավաճան իշխաններին։ Գուցե սա Կիրակոսի ցանկությունն է, որ դավաճանները պատժվեն։ Մեզ համար կարևորը տվյալ դեպքում պատմիչի վերաբերմունքն է։

Կիրակոսը պատմում է, թե երկիրը փոքր-ինչ խաղաղվել էր, և մարդիկ ավելի էին ապավինել իշխաններին, քան աստծուն։ Իշխանները վերցնում ու կողոպտում էին աղքատներին և այդ զրկանքների գնով գնում էին թանկագին զգեստներ ու հագնում, ուտում-խմում էին և ամբարտավանորեն հպարտանում[17]։

Գրքի 57-րդ գլխում պատմվում է Մանգու ղանի աշխարհագրի մասին։ Հարկերը այն աստիճան շատ էին, որ վճարել անհնարին էր։ Բոլորը աղքատացել էին, հարկերի դիմաց երեխաներին էին վերցնում, թաքնվողներին բռնում սպանում էին։ Ահա այս համատարած թշվառության մեջ, ըստ Կիրակոսի հաղորդման՝ իշխանները, գավառատերերը նույնպես կողոպտում էին ժողովրդին։

Կիրակոսը ատում է մանավանդ ժլատ հարուստներին ու իշխաններին, որոնք չեն զբաղվում երկրի շինարարությամբ, բարեգործությամբ, այլ դրամը կուտակում էին միայն ընչաքաղցությունից։

Ձաղատա անունով զորավարը գալիս է Լոռե քաղաքի վրա։ Քաղաքի իշխան Շահնշահը «զրկել ու կողոպտել էր իր հպատակներին և այնտեղ ստեղծել էր մի խոր գանձատուն, որ ոչ ոք չէր կարող տեսնել, քանի որ հորի բերանը այնքան նեղ էր արել, որ միայն լցնելու համար էր պիտանի, իսկ հանելու համար պիտանի չէր»[18]։

15 Նույն տեղում, էջ 100—101։

16 Նույն տեղում, էջ 258։

17 Նույն տեղում, էջ 318։

18 Նույն տեղում, էջ 253—254։

Կիրակոսը տարեգրական պատմիչ է։ Հայրենասեր ու ժողովրդասեր իշխաններին փառաբանում է ըստ նրանց արժանավոր գործերի, իսկ դավաճաններին, մատնիչներին, կողոպտիչներին դատապարտում է ամենախիստ խոսքերով։

Այս ամենը բխում են նրա լուսավորական գաղափարներից, մանավանդ մարդասիրությունից։ Նա խարազանում է եսասիրությունը, ծուլությունը, և սրան հակառակ փառաբանում է աշխատասիրությունը, ուրիշների համար գործելու՝ ստեղծելու ձգտումն ու աշխատանքը։ Իր ուսուցիչ Վանականի առաջին արժանիքը Կիրակոսի համար այն է, որ նա քրտինք ու ջանք է թափել ուսուցչական գործի վրա, բազմաթիվ տղաների փառքի է հասցրել։ Կիրակոսը նրան նմանեցնում է թռչող նրբաթև մեղվի, որ բազմատեսակ ծաղիկներից պիտքականն ու օգտակարը հավաքում է ռամիկների և թագավորների համար։ Մարդու մեծությունը ըստ Կիրակոսի ուրիշին օգնելու, բարձրացնելու մեջ է. սա, քրիստոնեական առաքինություն լինելով, ամենից առաջ մարդկային առաքինություն է։

Իբրև պատմիչ Կիրակոսը Խորենացու նման մեծ չէ անշուշտ, բայց նրա ուշադիր ընթերցողը կտեսնի, որ Կիրակոսը քաջածանոթ է հայ և հայերենի միջոցով մեզ հասած օտար գրականությանը, ինչ նա ձեռք բերելու հնարավորություն է ունեցել։ Նա մինչև իսկ ծանոթ է պատմական այնպիսի երկերի, որոնք մեզ չեն հասել (Խոսրով, Շապուհ Բագրատունի, Վանական)։

Իր ժամանակի պայմաններում նա, բնական է, չէր կարող չփման մեջ մտնել արաբ, հույն, ասորի և այլ պատմիչների հետ, որպեսզի ընդլայներ իր պատմագիտական հայացքներն ու պատմական տեղեկությունները, մանավանդ որ իր պատմության նպատակադիր մասի համար մտադիր էր իր տեսածներն ու լսածները գրի առնել և ոչ թե կարգավորված մի պատմական երկ գրելու ձեռնարկել։ Այս առումով նա լիովին հասել է իր նպատակին։

Վերջապես պատմիչի համար իբրև քրիստոնյայի ամենահեղինակավոր աղբյուրը Աստվածաշունչն էր, որը Կիրակոսը գիտեր փայլուն կերպով։ Իր ձեռքի տակ գտնված և իրեն անհրաժեշտ գրականությանը նա քաջ ծանոթ էր։

Կիրակոսը ուներ նաև պատմիչի համար մի ուրիշ շատ կարևոր հատկանիշ, որ մեր աչքում շատ է բարձրացնում նրան։ Նա բավարար չափով ծանոթ է այն աշխարհագրական միջավայրին, որը նկարագրում է իր պատմության մեջ։ Հատկապես Հայաստանի վայրերի իր քաջածանոթությամբ զարմացնում է ընթերցողին։ Հազվադեպ է պատահում, որ նա վայրերը շփոթի միմյանց հետ, որ այս դեպքում նույնպես բնական է։ Հավանորեն Կիրակոսը Հայաստանի վանքերն ու եկեղեցիները շրջելու առաքելություն է ունեցել և կամ հենց այդ առաքելությունը հանձն է առել երկրին ծանոթանալու համար։ Ամենուրեք տոնահանդեսներին, նավակատիքներին (շինարարական տոնահանդես), համազգային նշանակություն ունեցող տոներին, նշանավոր հանդիպումներին նա ներկա է գտնվել, և սրանք նրան հնարավորություն են տվել ամենը նկարագրելու ճիշտ ու հավաստի և ժամանակագրական ստույգ տեղեկությամբ։



Կիրակոսը իբրև մարդ ու մտավորական տառապել է իր դարի համար մի բնորոշ թերությամբ՝ սնահավատությամբ։ Նա հավատացել է որոշ հրաշագործություններին, դևերին ու սատանաներին, նրանց չարագործությունները իրականություն է համարել և իր հրաշալի պատմության մեջ բերել է մի շարք ծիծաղելի հրաշապատումներ, որոնք նսեմացնում են իրեն ու իր գիրքը մեր աչքում, որքան էլ որ մենք լայնահայացորեն փոխադրվենք 13-րդ դարը և երևույթները չափակշռենք պատմական հողի վրա՝ դարաշրջանի հասարակական, կրոնական ըմբռնումները հաշվի առնելով։ Բայց այս խեղճ սնահավատության մեջ էլ Կիրակոսը բարձր է իբրև մարդ։ Նա հրաշապատումները ներկայացնում է իբրև ականջալուր տեղեկություններ. ոչ մի անգամ չի ասում, թե ինքը տեսել, կամ ներկա է գտնվել. իրեն պատմել են, և նա էլ հավատացել է։

Նա եղել է մի պարզամիտ մարդ, այնքան պարզամիտ, որ խորամանկ մի գեղջուկ ծաղրել է այդպիսիների պարզամտությունը և ծիծաղել վարդապետների վրա, որոնք գնացել են գեղջուկի մոտ, որ տեսնեն նրա աներևույթ (դև) կնոջը։ Գեղջուկը խորամանկորեն ցույց է տալիս կնոջը, իբր թե սյան տակ կանգնած, և ասում է, թե միևնույն է, դուք նրան չեք տեսնի, ես և իմ երեխաներն ենք միայն տեսնում[19]։

Սնահավատությունը, սակայն, չի խլում նրա ազնվությունը, ճշմարտախոսությունը, վճիտ պարզամտությունը, մի բան, որ հեռու է պահում պատմիչին կեղծ բարոյախոսական նախապաշարումներից և անմեղորեն պատմել է տալիս կենցաղային այնպիսի բաներ, որ 13-րդ դարի վարդապետը անպայման կխուսափեր պատմելուց։

Կիրակոս վարդապետի այս բոլոր առաքինություններն ու պակասությունները արտացոլվել են նրա շարադրած պատմական երկում, որի խոշոր արժեքը ամենից առաջ պարփակվում է մոնղոլ-թաթարական արշավանքների հավաստի նկարագրության մեջ։ Անգրկովկաս ներխուժած հորդաների առաջնորդների, մղած ճակատամարտերի, ավերած բնակավայրերի, ճնշած ժողովրդի ու սրանց առաջնորդների հետ ունեցած բոլոր հարաբերությունների մասին բնականաբար Կիրակոսը պատմում է նաև հարցափորձի հիման վրա, բայց շատ պատմական իրողություններ էլ ինքը տեսել է իր սեփական աչքերով, մանավանդ մի քանի ամիս էլ շրջել է մոնղոլ-թաթարական մի զորաբանակի հետ։ Սրանցից բացի Կիրակոսը ձեռքի տակ ունեցել է նաև Վանականի, գուցե նաև Վարդան Արևելցու, պատմությունները, որոնք վերաբերել են մոնղոլ-թաթարական արշավանքներին։ Ուրեմն Կիրակոսի պատմության վերջին մասը հավաստի պատմություն է՝ շարադրված ճշմարտախոս, սուտն ու կեղծիքը սատանայական մեղք համարող աստվածավախ մի մարդու կողմից։ Եվ իզուր չէ, որ մոնղոլ-թաթարական արշավանքների ու նրանց աշխարհակալ նվաճումների պատմությամբ զբաղվող օտար պատմաբանները և նույնիսկ վիպասանները Գանձակեցու պատմությունը շատ կարևոր մի աղբյուր են համարում. նրանից վերցված տեղեկությունները հավաստի ու անառարկելի են նրանց համար։

---

19 Նույն տեղում, էջ 329—330։

Կիրակոսը սոսկ ճակատամարտերի ու թագավորների ժամանակագիր չէ։ Նրան հետաքրքրում են ժողովուրդների կենցաղը, սովորույթները, պաշտամունքային արարողությունները, արտաքինը, ուտելիքները, ռազմական միջոցները, կռվելու եղանակները, հոգեկան ու բարոյական ըմբռնումները, լեզուն և այլ հատկանիշներ, որոնք նա սիրով սփռում է իր պատմության մեջ՝ նույնիսկ չխուսափելով կենցաղագրական անպարկեշտություններից։ Կիրակոսի նկարագրելու կարողությունը ցույց տալու համար բերենք ԼԲ գլխից մի փոքրիկ հատված։ «Կերպարանքով ու մազ այստեղ բերենք ԼԲ գլխից մի փոքրիկ հատված. «Կերպարանքով ու տեսքով ահավոր տգեղ էին և զարհուրելի. մորուք չունեին, բայց ոմանք սակավաթիվ մազ ունեին շրթունքին կամ դնչին։ Աչքերը նեղ էին ու արագատես ձայները՝ նուրբ ու սուր, երկարակյաց էին ու դիմացկուն։ Երբ լինում էր, հաճախ էին անհագ ուտում ու խմում, իսկ երբ չկար, ժուժկալ էին։ Ուտում էին ամեն տեսակ կենդանի՝ մաքուր, անմաքուր. ձիու միսը ավելի էին գերադասում, կտոր-կտոր հոշում էին, խաշում կամ խորովում էին առանց աղի և ապա մանր կտրում էին, թացացնում աղաջրում և այդպես ուտում. ոմանք ուղտերի նման ծնկում էին, ոմանք էլ նստած էին ուտում։ Ուտելիս համահավասար բաժանում էին տերերին ու ծառաներին, իսկ կումիս կամ գինի ըմպելիս՝ մեկը մեծ ամանով վերցնում էր իր ձեռքը և փոքր բաժակով մեծ ամանից առնում շաղ էր տալիս դեպի երկինք, ապա արևելք, հյուսիս, հարավ, և ապա ինքը՝ շաղ տվողը, մի քիչ խմում էր նրանից և մատուցում էր ավագագույնին։ Իսկ եթե որևէ մեկը նրանց համար ուտելիք կամ ըմպելիք էր բերում, նախ բերողին էին տալիս ուտելու և խմելու, իսկ հետո իրենք էին ուտում ու խմում, որպեսզի մահացուներից չվնասվեն։ Ինչքան կին կամենում էին, այնքան առնում էին, բայց իրենց կանանց հետ պոռնիկ չէին պահում. իսկ որտեղ հանդիպում էին այլազգի կանանց, անխտիր խառնակվում էին։ Գողությունը ատում էին, մինչև իսկ [գողերին] դաժանորեն սպանում էին։ Որևէ պաշտամունք կամ երկրպագություն չէին կատարում, բայց ամեն բանում շատ հիշատակում էին աստծու անունը... (ասում էին), թե իրենց արքան ազգակից է աստծուն։ Երկինքը աստված վերցրել է իր համար բաժին, իսկ երկիրը տվել է խաղանին։ Որովհետև ասում էին խաղանի հայրը՝ Չանգզ ղանը, տղամարդու սերմից չի սերվել, այլ ինչ-որ լույս է եկել աներևույթից, տան երդիկով ներս է մտել, և մորն ասել, թե՝ «կհղիանաս և ինքնակալ որդի կծնես երկրի համար» (գլուխ ԼԲ)։

Այս փոքրիկ հատվածում ամեն ինչ ասված է մոնղոլ-թաթարների մասին։ Պատմիչը շտապում է ասել, թե ով է իրեն այս բաները պատմել, իսկ պատմողը որտեղ և ումից է լսել։ Ամեն ինչ ճշմարիտ է ու պարզ։

Գանձակեցին նաև պատմում է ավելի այնպիսի ցեղերի մասին, որոնց հետքն անգամ չի մնացել։ Ահա թե որքան կարևոր է Գանձակեցու պատմությունը հենց իրենց՝ մոնղոլների, նրանց տիրած երկրների և 13-րդ դարի ընդհանուր պատմությամբ զբաղվող մասնագետների համար։

Հայաստանի և ընդհանրապես Անդրկովկասի 13-րդ դարի քաղաքական, կրոնական, մշակութային, հասարակական ու տնտեսական կյանքի պատմության տեսակետից Կիրակոսը եզակի նշանակություն ունի մեր



պատմագրության մեջ։ Մանավանդ, ընդգծելով այդ, մոնղոլ-թաթարական շրջանի Անդրկովկասի պատմությունը շարադրել է Կիրակոսի տվյալների հիման վրա։ Նա հավանաբար է դիմում Վարդան վարդապետին, Օրբելյանին, Հեթումին, որովհետև ավելի մանրամասն ու սպառիչ այդ շրջանը ոչ ոք այնպես չի ներկայացրել, ինչպես Գանձակեցին։

Կիրակոսը չի սահմանափակվում Անդրկովկասի պատմությամբ։ Նա նկարագրում է նաև Արևմտյան Հայաստանի և նրանից հարավ ընկած երկրների նվաճումը և հատկապես մեծ գոհունակությամբ պատմում է արաբական խալիֆայության անկումը։

Կիրակոսը, սոսկ ժամանակագիր չէ. նա մանրամասն նկարագրում է հայ ավատական իշխանությունների դերն ու նշանակությունը, նրանց իրավունքներն ու գործունեությունը, վրացական կենտրոնական պետության հետ գոյություն ունեցող փոխհարաբերությունները, հարկերը, ժողովրդի տնտեսական, քաղաքական վիճակը, հավատալիքները, մշակութային կյանքը, շինարարությունն ու շինարարական արվեստը, դպրոցները, վանական հաստատությունները և այլն։ Կիրակոսը համառոտ ու ընդհանուր կերպով սրվագծել է հայոց հին գրականության, հատկապես եկեղեցական գրականության պատմությունը։ Այս տեսանկյունից այդ գիրքը իսկական պատմություն է։

Կիրակոսի գիրքը հետագա պատմիչները օգտագործել են իբրև սկզբնաղբյուր՝ մեծ հաճախ ընծայելով նրա ստուգապատում պատմությանը։

Նա պատմությունը գրել է իբրև սարկավագական իրողության գրառում, որն անհրաժեշտ է ստույգ կերպով փոխանցել սերունդներին։ Հենց այդ է պատճառը, որ նրա համար պատմական աղբյուր են ծառայել ոչ միայն գրավոր հիշատակարանները, այլև զրույցները, բանավոր պատումները, ավանդությունները, որոնցից նա անխտիր օգտվել է։ Եթե չլիներ ավանդական մտավախությունը (թե կարող է հարկավոր չհամարվել), գուցե Կիրակոսի միջոցով ստացած լինեինք շատ հետաքրքրական զրույցներ ու ավանդություններ, որոնք նա չի հանդգնել մացնել որոշ չափով սրբագործության ենթարկված պատմության մեջ։

Կիրակոս Գանձակեցու աշխատության պատմագիտական թերությունները պետք է որոնել ոչ այնքան հեղինակի՝ իբրև պատմիչի, անձի, նրա մտավոր ունակությունների, պատմության հանդեպ ունեցած պատասխանատվության գիտակցության պակասի, որքան ժամանակի ու այս վերջինի ընձեռած հնարավորությունների մեջ, մի խանգարիչ հանգամանք, որ շատ պատմիչներ չեն կարողացել հաղթահարել ու վերացնել իրենց ճանապարհից։ Նա իր գրքի առաջին մասի համար իբրև աղբյուր ունեցել է մեր հին պատմագրությունը, որտեղ ժամանակագրական ու պատմագիտական բազմապիսի հարցեր պարզաբանելու և ճշգրտելու համար, ժամանակակից ծով տեղեկությունների առկայության պայմաններում, այսօր էլ դեռ շատ ջանք ենք թափում։

Կիրակոսը իր դարում բնականորեն չէր կարող այդ հարցերը լուծել և մեզ հասցնել ժամանակագրորեն ճշգրիտ պատմություն։



SD. 731

Այդ նույնը կարելի է ասել մոնղոլական արշավանքների վերաբերյալ։ Շատ իրողություններ նա նկարագրել է լսելով, ականատեսների և նույնիսկ ոչ ականատեսների պատմածներով։ Բնականորեն այդպիսի նկարագրությունների մեջ էլ պետք է թափանցեին անճշտություններ, թյուրիմացություններ, ժամանակագրական շփոթմունքներ։

Եվ վերջապես մտքով պետք է փոխադրվենք 13-րդ դարը ու պատկերացնենք ժամանակակից մարդուն։ Տվյալ դեպքում Կիրակոսը իրեն պատկերացնել տալու համար ստեղծել է բոլոր հնարավորությունները։ Նա եղել է միամիտ հավատացյալ ոչ միայն այս բառի կրոնական առումով։ Ինքը ճշմարտախոս լինելով՝ հավատացել է ամեն ասի ու առասպելախառն պատմության։

Այս առարկայական ու անձնական հանգամանքները չէին կարող իրենց խոր ազդեցությունը չթողնել Գանձակեցու ստեղծած պատմության վրա։

Բացի այն հնարովի անիրական, միջնադարյան միամիտ երևակայության ստեղծած զրույցներից ու սնահավատություններից, որոնց մասին մենք հիշատակեցինք, գրքի մեջ անցել են նաև պատմական անճշտություններ։

Մանուկ Աբեղյանը՝ խոսելով Գանձակեցու աշխատության այս կարգի թերությունների մասին, ավելացնում է. «Բայց նրա այդ գործն իր ամբողջությամբ մեր առաջ բաց է անում մի շատ կարևոր պատմական դարաշրջանի պատկերը։ Անհեթեթ բաների մասին պատմվածքներն անգամ իրենց կողմից պարզում են այն ժամանակը և իրեն՝ Կիրակոսին, հետը նաև իր ժամանակակից մտավորականների հասկացողության մակարդակը»[20]։

Աբեղյանի այս խոսքը, մեղմացուցիչ լինելով՝ իր խորքում ճիշտ է և ընդունելի, իսկ որքան իմաստուն ու արդարացի է, երբ մեր հին գրականության խոշորագույն ռեսաբանը գրում է. «Ինչքան էլ դժվար ժամանակներում էր ապրում նա, բայց և այնպես նա հուսահատ չէր, և այս է նրա անձնական մեծ առավելություններից մեկը»[21]։

Թերությունները պատկանում են այն դարաշրջանին, որի մեջ ապրում էր Կիրակոս Գանձակեցին։ Նրա գրքի փայլուն գնահատականը և պատմագիտական արժեքավորումը տվել է ակ. Կ. Մ. Օհանջանյանը Գանձակեցու երկի իր հոյակապ քննական հրատարակության առաջաբանում, որը քննական բնագիրը կազմողի լավագույն աշխատություններից մեկն է՝ Կիրակոսին, նրա երկին, դարաշրջանին վերաբերող բազմազան հարցերի դրմամբ և փայլուն լուծումով։

«Մեր բանասերները ըստ արժանվույն մեծ կարևորություն են տվել Կիրակոսի պատմության մեջ տեղ գտած զանազան կրոնադավանաբանական թղթերին, կանոնադրություններին և շրջաբերականներին որպես պատմական վավերագրերի»,— գրում է ակադեմիկոսը։

Բացի վերոհիշյալ վավերագրերից Կիրակոս Գանձակեցու պատմու-

---

20 Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, 2, Երևան, 1946, էջ 133։

21 Նույն տեղում։



թյունը անչափ շատ արժեքավոր է հայ-աղվանական եկեղեցու ներքին կյանքի, եկեղեցական նվիրապետության, ծիսական խնդիրների, վանական դպրոցների և դպրության, գիտության ու մատենագրության, արվեստի ու արհեստի, երաժշտության և ճարտարապետության պատմության, տնտեսության և շինարարության, ինչպես նաև եկեղեցական ժողովների, դավանաբանական պայքարի, հայ և հույն, վրացի, հայ և լատին եկեղեցիների փոխհարաբերության պատմության համար[22]»։

Այստեղ հայ հին գրականության հմուտ մասնագետը սպառիչ կերպով թվել է Գանձակեցու գրքի այն կարևոր նյութերը, որոնք կազմում են նրա գրքի բովանդակության ողն ու ծուծը։ Սակայն հմուտ բանասերը դրանով չի բավականանում։ Շարունակության մեջ նա նշում է, որ «Սա մի պատմագրական հուշարձան է, որ ընդարձակորեն խոսում է թուրք-թաթարական-մոնղոլական ժողովուրդների, նրանց նվաճումների և նվաճած երկրներում ստեղծած քաղաքական-վարչական և սոցիալ-տնտեսական պայմանների մասին»։

Այս միտքը նա ավելի որոշակի ձևակերպում է հաջորդ ՁԶ էջում։ «Կիրակոսի պատմության ամենագլխավոր և հիմնական արժեքն այն է, որ այստեղ կարելվույն չափ մանրամասն նկարագրված են թուրք-թաթարական ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում, Վրաստանում և Աղվանքում տեղի ունեցած քաղաքական-սոցիալական և տնտեսական իրադարձությունները։ Այս դարաշրջանում Հայաստանում վերանում են հայկական մանր թագավորությունները, բազմաթիվ ֆեոդալական տներ և տեղի են տալիս մի կողմից սելջուկյան տիրապետությանը և տիրակալությանը, մյուս կողմից միանում են Վրաստանի վերելքի շրջան ապրող պետությանը»։

Անցնելով մոնղոլական տիրապետության շրջանի պատմության հարցին ակադեմիկոս Կ. Մ. Օհանջանյանը Կիրակոսին համարում է մոնղոլական տիրապետության շրջանի ճշմարտախոս պատմագիր։ Նրա երկը ըստ ակադեմիկոսի յուրատեսակ պատմագիտական վավերագիր է, որի մեջ բացահայտվել է թաթար-մոնղոլական ռազմավարչական և սոցիալ-տնտեսական քաղաքականությունը, հարկադրման և հարկահավաքման համակարգը, նրանց նիստ ու կացը, հավատալիքներն ու սովորույթները, անգամ լեզուն[23]։

Գանձակեցու գիրքը բարձր գնահատականի է արժանացել նաև օտար պատմաբանների ու տնտեսագետների կողմից. դրանցից հիշատակենք միայն մեկին։ Ի. Պ. Պետրուշևսկին գրում է. «Ինչպես հայտնի է մոնղոլական տիրապետության ժամանակների պատմական երկերը՝ մասնավորապես Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմությունը» (XIII դար), «Պատմութիւն ազգին նետողաց», որ վերագրվում է Մաղաքիա Աբեղային, Վարդան Բարձրաբերդցու «Տիեզերական պատմությունը» (XIII դար), Ստեփանոս Օրբելյանի (Սյունիքի եպիսկոպոս) «Պատմություն տանն Սիսական»

---

22 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, առաջաբան ՁԴ—ՁԵ։

23 Տե՛ս նույն տեղում, էջ ՁԶ։

(1299-ից հետո) չափազանց կարևոր են մոնղոլական նվաճումների պատմության և հուլավուիդների պետության պատմության համար»[24]։

Իսկ «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատոր հրատարակության երրորդ հատորի «Պատմագրություն» տեսության մեջ Գանձակեցու «Հայոց պատմությունը» արժեքավորվում է հետևյալ ձևով. «Կիրակոս Գանձակեցու երկը չափազանց կարևոր է մանավանդ Հայաստանում ու Մերձավոր Արևելքում մոնղոլների տիրապետության շրջանի պատմության լուսաբանման համար։ Այնտեղ հանգամանորեն շարադրված են մոնղոլներից խույս տվող Ջալալադդինի ասպատակությունները, մոնղոլական արշավանքները, Անդրկովկասի ու Փոքր Ասիայի նվաճումը, մոնղոլների վարած արտաքին պատերազմները ու ներքին հակամարտությունները, հայ ժողովրդի ատելությունը նվաճողների նկատմամբ»[25]։

Կիրակոս Գանձակեցու պատմությունը բազմաբովանդակ հուշարձան է... կարևորագույն աղբյուրներից է XIII դարի 50-ական թվականների Հայաստանի սոցիալ-դասակարգային հակամարտությունների, ինչպես նաև մոնղոլների դեմ Անդրկովկասի ժողովուրդների մղած ազատագրական պայքարի պատմության լուսաբանման համար։ Նրա մեջ արտացոլում են գտել նաև մոնղոլների նիստ ու կացը, հավատալիքներն ու սովորույթները, մասամբ լեզուն... Կիրակոսի երկը իր ժամանակաշրջանի պատմության ստուգապատում աղբյուր է»[26]։

Այսպիսի գնահատությունները հիմնված են իրական ու փաստական տվյալների վրա։ Մոնղոլական արշավանքների շրջանի Հայոց պատմության լրիվ շարադրանքներ Չամչյանից հետո գրել են ակ. Հ. Մանանդյանը[27] և նորերս հրատարակված «Հայ ժողովրդի պատմությունը»[28]։ Թե Չամչյանը և թե վերջին երկու ուսումնասիրությունները այդ շրջանի Հայոց պատմությունը շարադրում են գերազանցապես ըստ Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմության»։

Աբեղյանի այն խոսքը, թե Կիրակոսը հուսահատ չէր հակառակ ահռելի աղետների, բացարձակորեն ճիշտ է։ Նա իր ժողովրդի ապագայի հանդեպ լցված էր մեծ հավատով. «Որովհետև հուսով ակնկալում ենք մեզ պատած այս նեղություններից փրկություն, դրա համար մտադրվեցինք մեր ազգի եկող սերունդներին հիշատակ թողնել»,— գրում է Կիրակոսը։

Եվ նա նույն վառ հավատով հիշատակ թողեց այս պատմությունը ապագա սերունդներին՝ անմահացնելով իր անունը, որի համար նա զարմանալիորեն շատ էր մտահոգված։ «Նախաշավիղի» վերջում նա գրել է. «Սա թող մեզ համար հուշարձան լինի ոչ թե Աբիսողոմի քարի նման, այլ կենդանի, որպեսզի սրա մեջ հիշվի ԿԻՐԱԿՈՍԻ անունը»։

ՎԱՐԱԳ ԱՌԱՔԵԼՅԱՆ

---

24 Земледелие и аграрные отношения в Иране XIII—XIV веков М-Л, 1960, стр. 18:

25 **Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1976, հ. III, էջ 807:**

26 **Նույն տեղում, էջ 808:**

27 **Հակոբ Մանանդյան, Երկեր, հ. գ., գլուխ տասներորդ, էջ 189, XI, էջ՝ 210, և գլուխ XII, էջ՝ 225 և շարունակությունը:**

28 **Տե՛ս Գ հատոր, Երևան, 1976, բաժին Զ, էջ՝ 614:**

# ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻՑ ԳԱԼԻՍ ՀԱՍՆՈՒՄ Է ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐՍ

Տեր վարդապետ Կիրակոս Գանձակեցին Գետիկի[1] մեծանուն վանքում (ՆԱԽԱՇԱՎԻՂ)[2]

*Կիրքը, որ մարդկանց էության մեջ հաստատված է արարչի* նախախնամությամբ, այն բանի համար է հաստատվել, որպեսզի [մարդիկ] քննասեր լինեն անցած և գալիք իրողությունների նկատմամբ։*

*Իսկ այս բանին այլ կերպ անհնար է վերահասու լինել և իմանալ, քան թե բազում չարչարանքով ու երկարատև աշխատանքով։ [Մարդ] պետք է հյուծվի ու մաշվի տաժանքով ու ծանր աշխատանքով, թերևս պետքական բան գտնի, որ կարող լինի հետաքրքրվողի իղձն ու փափագը կատարել։*

*Բարունական աշխատասիրությամբ՝ և ոչ թե վայրիվերո, խորամուխ պետք է լինի ժամանակների քրիստոնեական և հեթանոսական պատմությունների մեջ։*

*Անբաններին իմաստուն և տգետներին բանական դարձնելու համար պետք է նկատի առնել նաև ս. հոգու զորությունը։*

*Կարող ու ձեռնհաս պետք է լինել նրան աներկմիտ ու անթերի հավատալու։*

*Որով ամեն ինչ՝ երևացողներն ու աներևույթները նրա կամքով են հորինվում ու կազմվում։*

*Սուրբ ու մաքուր սրտով ու անչար կերպով պետք է ականջ դնել վերին և ներքին աստվածային խոսքերին և պատմական գրվածքներին, որոնք կարող են որոնողին հասցնել որոնելիին**։*

---

* Բնագրում յարարչէն. ճիշտը համարում ենք արարչին և ըստ այդ թարգմանում։

** Սկզբից մինչև «որոնելիին» Կիրակոսը բաժանել է 8 պարբերությունների և ամեն պարբերության սկիզբը ըստ կարգի սկսել է Կ, Ի, Ի, Ր, Ա, Կ, Ո, Ս տառերով. մենք հարմարեցրինք առանց Ի տառի։

Որովհետև այս ևս աստվածային օրենք է. «Հայրերը պետք է սովորեցնեն որդիներին, որպեսզի իմանա մյուս սերունդը*», ինչպես որ Դավիթ[3] մարգարեն հրամայում է, որովհետև դեպի այս էր խրատում ու ասում Իսրայելի որդիներին[4] մարգարեների մեջ ամենամեծը՝ Մովսեսը[5], «Կխորհես սրանց վրա գիշեր ու ցերեկ տանը նստած, ճանապարհ գնալիս, ննջելիս ու վեր կենալիս**։ Եվ սրանց մեջ, որոնք օժանդակում*** և օգնում են, շատերն աստվածային այրեր են. դրանք իրենցից հետո գրքերը կենդանի հուշարձան թողին բոլոր ազգերին։ Ինչպես մեծ Եվսեբիոսը[6], որ երկու գիրք թողեց՝ ժամանակագրությունը [Քրոնիկոն]՝ սկսելով նախնի Ադամից. նա հեթանոս պատմիչների գրած նահապետների խժալուր անունները համեմատելով քրիստոնյա մարդկանց պատմության հետ, բերեց հասցրեց մինչև Քրիստոսի գալուստը և ավելի այս կողմ շատ ազգերի նահապետներին ու թագավորներին։ [Նաև գրեց] և Եկեղեցական պատմությունը՝ սկսած Քրիստոսի ծնունդից. (ներկայացրեց) թագավորների ժամանակները, սուրբ առաքյալների քարոզությունները, թե նրանցից ով ինչ արեց, և ամեն մեկը որ կողմը գնաց, և կամ ինչպես մարտիրոսացան։ [Նկարագրեց] սուրբ եպիսկոպոսների ու նշանավոր մարդկանց գործն ու քաջությունը, բերեց հասցրեց մինչև Կոստանդիանոս Բարեպաշտի[7] օրերը և այնտեղ կանգ առավ։

Ապա մեծ իմաստուն Սոկրատեսը[8] ճարտար խոսքերով սկսեց Հռոմի հայրապետ սուրբ Սեղբեստրոսից[9] և Կոստանդիանոս Մեծից, բերեց հասցրեց մինչև Թեոդոս[10] Փոքրի օրերը։ Բոլոր թագավորների, եպիսկոպոսների թե առաքինիների ու թե վտարների, տեղի ունեցած բազմաթիվ ժողովների՝ պիտանիների ու մերժվածների, գործերն ու արարքները ավարտեց ընդարձակ ու ծավալուն պատմությամբ։

Իսկ մեր**** Հայոց ազգի շատ պատմիչներ գրեցին աշ-

---

* Սաղմ. Հէ, 5, 6։

** Յեսու Ա, 8, Բ օրինաց Զ, 7։ ԺԱ, 19։

*** Բնագրում՝ յօժանդակ են. ուղղում ենք՝ օժանդակեն, որն հաստատվում է հաջորդ ձեռն տան հարադրությամբ [օգնում են]։ Սրանք զույգ հոմանիշներ են։

**** Բնագրում՝ ազգի, ճիշտն է ազգիս, որ ունեն տարընթերցվածները։



խատություններ. ինչպես սքանչելի և հանճարեղ Ագաթանգեղոսը, որ թարգմանվում է բարի լրաբեր. սա մեծազոր և քաջ արքա Տրդատի[11] հրամանով բացահայտեց Քրիստոսի ուսմունքին հավատացող և նրա համար չարչարված սուրբ Գրիգոր Պարթևի ձեռքով Հայերի մոտ կատարված եղելությունների հանգամանքները, հրաշագործություններն ու սքանչելագործությունները. և մեր Հայոց աշխարհի քրիստոնեությունը ընդունելու շարժառիթները գեղեցիկ ու վառ պատմությամբ ավարտեց։

Նրանից հետո գիտությամբ ամենահարուստ ու իմաստությամբ շատերից մեծը՝ աստծու սուրբ այր Մովսես Խորենացին, որ Հայոց պատմությունը շարադրեց շատ իմաստալից ու ճարտար լեզվով։ [Նա] համառոտ պատմությամբ, բայց ընդարձակ խորությամբ սկսելով առաջին մարդուց՝ շատ սերունդների վարմունքները, գործերն ու արարքները բերեց մինչև Տրդատի և սուրբ Գրիգորի օրերը և այնտեղից մինչև Հայոց հայրապետ սուրբ Սահակի[12] վախճանը. և իր ողբը ասաց մեր Հայոց աշխարհի վրա, որտեղ և ավարտեց։

Նրանից հետո [գալիս է] սուրբ Եղիշեն[13], որ պատմում է սուրբ Սահակի թոռ Վարդանի[14] ու նրա ընկերների քաջագործությունը, որոնք Քրիստոսի հույսով մահ հանձն առան և Քրիստոսից փառավորվեցին. նաև [պատմում է] սուրբ Հովսեփյանց[15] հերոսական մահը, Հայոց նախարարների դեպի Քրիստոսը ունեցած հույսի համար կամավոր արքունի կապանքներին հանձնվելը. և սուրբ Խորենի[16] ու Աբրահամի համբերատար նահատակությունը, որ ստույգ կերպով ցույց է տալիս սքանչելի այրը [Եղիշեն]։

Եվ ապա [գալիս է] ճարտասան Ղազար Փարպեցին[17], որ սկսելով սուրբ Սահակի օրերից, նույն ոճով պատմում է։

Եվ ապա նրանից հետո Փավստոս Բուզանդն[18] է, որ պարսիկների նկատմամբ մեր Հայոց աշխարհի և նրանց կողմից մեր նկատմամբ կատարված իրադարձություններն է պատմում։

Եվ Հերակլի պատմությունը Սեբեոս Եպիսկոպոսի[19] կողմից է պատմվում և սքանչելի այր Կորյունի[20] պատմությունը, և Խոսրովը[21] և Ղևոնդ Երեցի[22] պատմությունը, որ նկարագրում է Մահմեդի և նրա աթոռակալների գործած արարք-

ները բոլոր երկրների և առավել ևս մեր հայոց ազգի նկատմամբ։ Եվ Արծրունյաց տան պատմագիր Թովմա վարդապետը[23], Շապուհ Բագրատունին[24], Տեր Հովհաննես հայոց կաթողիկոսը[25], Աղվանից աշխարհի պատմագիր Մովսես Կաղանկատվացին[26], Ուռհայի Ուխտանես եպիսկոպոսը[26], որ գրեց՝ Կյուրիոնի[27] միջոցով հայերից վրացիների բաժանվելու մասին։ Եվ Ասողիկ մականունով Ստեփանոս վարդապետը[28], Լաստիվերցի կոչված Արիստակես վարդապետը[29], վանքի երեց Մատթեոս Ուռհայեցին[30], Անիի կաթողիկեի քահանա Սամվելը[31], ապա Վանական անվանված մեծիմաստ ու հանճարեղ վարդապետը[32] ։

Այս սուրբ մարդկանցից յուրաքանչյուրը հոգաց գրավոր բարի հիշատակ թողնելու գալիք սերնդին ի շահ լսողների և ի վարձատրություն նույն սուրբ մարդկանց, որպեսզի նրանց հիշատակը պայծառ լինի մինչև Քրիստոսի գալստյան օրը։

Իսկ մեր այս ձեռնարկումը թող ոչ ոք հանդգնություն չհամարի, այլ [ընդունի] իբրև բարի նախանձի գործ, որովհետև մեր մտածումները մեզ տանջում են՝ լռության չմատնելու այսպիսի տագնապալի աղետները, որ լսեցինք մեր ականջներով և տեսանք աչքերով։ Կատարվեցին մարգարեությունները բոլոր այն սրբերի, որոնք կանխագուշակեցին տեղի ունենալիք այս նեղությունները, որ մեր նկատմամբ գործնականում կատարվեցին։ Այդ ասաց մեր փրկիչը և աստված՝ տեր Հիսուս Քրիստոսը, թե՝ «Ազգ ազգի վրա ու թագավորություն թագավորության վրա կհարձակվի»*։ Եվ «Այս, ասում է, երկունքի սկիզբն է»**, կորստյան որդու*** հայտնվելը, որից սարսափում ենք. գուցե նա հայտնվի մեր օրերում, որովհետև այժմ կատարվող ամեն գործ նույնն է մատնանշում։

Սերը ցամաքել է, տիրել է անգթությունը. աստվածապաշտությունը նվազել է, գլուխ է բարձրացրել անհավատությունը։ Բեմերն ու պատարագները լռել են, և քահանաները անողորմաբար սրով ընկել, կանայք ու մանուկները գերվել են, իսկ տղամարդիկ դաժան մահով մեռել։ Այն, ինչ աստծու

* Մատթ. ԻԴ, 78։
** Մատթ. ԻԴ, 8։
*** Կորստեան որդին Նեռն է կամ Հուդան։



մարդ սուրբ Ներսեսը[33] կանխագուշակեց նետողների ազգի ու մեր հայոց աշխարհի ավերման մասին, այժմ կատարվեց թաթար կոչված ազգի կողմից. սա շատ ազգեր ու ցեղեր ջնջեց, որ իր տեղում կպատմենք, եթե տերը կամենա։

Բայց առաջին աշխատասիրողներից [պատմագիրներից] յուրաքանչյուր ոք բռնելու մի տեղ գտավ. [դա] կամ նշանավոր թագավոր էր և կամ հայտնի ազգերի նահապետություններ։ Իսկ մենք այս բոլորից զրկվել ենք, որովհետև Արշակունի ու Բագրատունի թագավորությունը[34] վաղուց արդեն վերացած է, իսկ հայկազն իշխանները[35] ոչ մի տեղ չեն երևում. [Եթե կան էլ] ապա ուրիշ օտար աշխարհի զանազան տեղերում թաքնված ու պահված են։ Բայց միայն մի հույս ունեմ՝ այսօրվա շնորհը և խորհրդի ուժը, որովհետև այս օրը, երբ ձեռնարկեցինք սրան, ամենասուրբ հոգու գալստյան տոնն է[36] վերնատանը առաքյալների դասի մեջ. [Քրիստոսը] նրանց հրեղեն խոսքերով հրաշազարդեց ու առաքեց աշխարհը՝ ավետարանի ուռկանով բոլորին անմահական կյանքի կոչելու։ Եվ մենք նույն հոգու վրա վստահ լինելով՝ անձնատուր եղանք այսպիսի աշխատության, որ վեր է մեր կարողությունից։ Դրա համար աղաչում ենք ձեզ՝ հետո եկողներիդ, չաղարտել մեր աշխատությունը իբրև անուսումների* և քիթ վեր չքաշել [խիստ անարգանքով վերաբերվել], հոնքերը չկիտել, այլ եղբայրաբար զիջող լինել և հիշատակ թողնել հետո եկողներին, որովհետև ինչպես ուսուցանում ենք Ս. գրքից. Քրիստոսի աշակերտները [քրիստոնյաները] ամեն ինչ անում են համաձայնությամբ։

Բայց մենք այս սկսած գործը կձեռնարկենք և նախ ցույց կտանք սուրբ Գրիգորի[37] աթոռակալների անունները՝ սկսելով նրանից [կհասցնենք] մինչև մեզ՝ կարճ ու համառոտ։ Սա թող մեզ համար հուշադամբան լինի ոչ թե Աբիսողոմի քարի[38] նման, այլ կենդանի, որպեսզի սրա մեջ հիշվի Կիրակոսի[38 ա] անունը։

* Ռուսերենը как нечто невежественное.

## Ա.

### Համառոտ պատմություն ու հիշատակություն* սուրբ Գրիգորի և նրա աթոռը հաջորդածների անունների

Ամեն գովեստների արժանի և բարի հիշատակով հռչակված մեր հոգևոր հայրը և ըստ Ավետարանի մեր ծնող սուրբ Գրիգորը մեր Հայաստան աշխարհը աստվածածանոթությամբ և ամեն ուղղափառ կարգերով ու օրենսդրությամբ լուսավորելուց և ավելի քան չորս հարյուր երեսուն եպիսկոպոս ձեռնադրելուց հետո անհրաժեշտ եղավ, որ նա և մեծ արքա Տրդատը[39] գնան Հռոմ տեսնելու սուրբ առաքյալներ Պետրոսի ու Պողոսի մասունքները, մեծ թագավոր Կոստանդիանոսին ու սուրբ հայրապետ Սեղբեստրոսին և գաշինք կնքեն իրար հետ։ Սուրբ Կոստանդիանոսը և աշխարհամուռ պալատի մեծ հայրապետը բարձր պատվով ընդունեցին, մեծարեցին սուրբ Գրիգորին իբրև Քրիստոսի խոստովանողի ու առաքելաշնորհ մարտիրոսի։ Նրան հայրապետական պատվի արժանացրին որպես Պետրոսի[40] աթոռակալի. նրան հանձնեցին առաքյալների նշխարներից սրող մաս՝ առաքյալ Անդրեի[40] ձախ ձեռքը և ուրիշ այլ ընծաներ։

Երուսաղեմում** [ցույց են տալիս] Գողգոթան[41], Քրիստոսի խաչելության տեղը, Սուրբ Հակոբը[42] [եկեղեցին] և պատարագի մի տեղը Սուրբ Հարության [եկեղեցու] հետնակողմում։ Ասում են, թե սուրբ Գրիգորը մի կանթեղ կախեց Քրիստոսի գերեզմանի վրա ու աղոթքներով աստծուց խնդրեց, որ առանց կողմնակի կրակի սուրբ պասեքի տոնին վառվի. այդ հրաշքը մինչև այսօր կատարվում է։ Նույնպես էլ մեծարեցին մեծ Տրդատին, ինչպես արժանի էր նրա քաջությանը։ Քրիստոսական արյունով ու հավատով, որ նրա մեջ կան, դաշինք կռեցին, որպեսզի նրանցից հետո երկու ազգերի միջև անքակտելի մնա համերաշխությունը։

Կոստանդիանոսը սուրբ Գրիգորին հարցրեց. «Ինչքա՞ն կուրախանան հրեշտակները այսքան մոլորյալ ոչխարների գյուտով» [մոլորյալին քրիստոնյա դարձնելով]։ [Գրիգորը]

* Ռուսերեն թարգմանված է перечень, ֆրանսերենի index բառի հետևողությամբ։

** Երուսաղեմ բառից հետո ինչ-որ բան պակասում է։



պատասխանեց. «Խիստ շատ, բայց Ադամի սերունդներս վերնային բազմության [հրեշտակների] համեմատությամբ ոչխար թող չհամարվեն»։ Իսկ կայսրն ասում է. «Բայց մենք՝ փրկյալներս [քրիստոնյա դարձածներս] ձեր այցելությամբ չդադարենք նրանց հետ հանդիսակից լինել*»։

Եվ հրամայեց ամբողջ քաղաքին՝ անասուններ մորթելով զվարճանալ։ Թե հրեաները և թե այն հեթանոսները, որոնք մնացել էին անհավատության մեջ, լվացվում էին օրհնված աղով, քանի որ սուրբ Գրիգորը և Սեղբեստրոսը աղ օրհնեցին։ Եվ սուրբ Գրիգորը ասում է հրեաներին. «Դուք թլպատությունը անթլպատություն արիք հակառակ օրենքի»։ Եվ ասում է. «Այն անասուններից, որոնք մատուցվում են իբրև աստծո զոհ, կամ սրբերի համար մատաղ, կամ ննջեցյալների հիշատակին՝ առանց օրհնված աղի, որպես զոհ, հատուկ է հեթանոսներին»։

Եվ հետո վերադառնալով մեր երկիրը, բուռն ցնծությամբ ու հոգեկան ուրախությամբ մեծապես զարդարեցին մեր երկիրը քրիստոնեական բոլոր կարգերով։ Եվ [Գրիգորը] կենդանության ժամանակ իր սուրբ որդի Արիստակեսին[43] ձեռնադրեց Հայոց, վրաց ու աղվանից եպիսկոպոսապետ, իսկ ինքը անցավ ճգնակեցության, որպեսզի ամեն բանով փառավորվի, այսինքն՝ առաքելականությամբ, մարտիրոսականությամբ, հայրապետականությամբ և միայնակեցությամբ, որը մարդուն ավելի է մոտեցնում աստծուն, որովհետև անքաղ կերպով է նրա հետ խոսում։ Եվ երբ Արիստակեսը եկավ Նիկիայի[44] ժողովից, սուրբ Գրիգորը այլևս ոչ մեկին չերևաց։ Ապրելով երկար ժամանակ, հանգավ ի Քրիստոս՝ հայրապետական գահին տիրած լինելով երեսուն տարի։ Եվ հովիվները նրան վախճանված գտնելով՝ քարակարկառ կուտակեցին նրա վրա։

Իսկ հետո [սուրբ] հոգու զորությամբ ոմն Գառնիկ ճգնավոր՝ սուրբ մի մարդ, գտավ նրան. տարան թաղեցին Թորդան[45] գյուղում։ Եվ Զենոն[46] կայսեր օրերում նրա ու սուրբ

* Ֆրանսերենը՝ մենք փրկվածներս չհամառենք հաշակել ձեր գալուստը նրանց մեջ։ Ռուսերենը՝ մենք փրկվածներս ձեր այցելությամբ թող չդառնանք վերջինները։

Հռիփսիմյանների[47] մասունքներից տարան Կոստանդնուպոլիս. և շինելով արծաթյա տապանը, սրբերի նշխարները դրեցին նրա մեջ. յուրաքանչյուրի անունը վրան գրելով՝ զետեղեցին մարմարյա տապանում ու մատանիներով կնքեցին։ Երկար ժամանակ անհայտ մնաց, չգիտեին թե որը ումն է, բացի այն միայն, թե սրբերի է պատկանում։

Իսկ Վաղես կայսեր[48] և Հայոց թագավոր Աշոտ Բագրատունու[49] ժամանակ հայտնվեց հետևյալ ձևով։ Մի պատանի բռնված էր չար ոգու կողմից. մինչդեռ միևնույն եկեղեցում, որտեղ սրբերի մասունքներն էին, պատանին աղոթք էր անում, դևը բարձրացրեց պատանուն, գցեց սրբերի տապանի վրա. նա աղաղակում և ասում էր. «Հայոց լուսավորիչ սուրբ Գրիգոր, մի տանջիր ինձ, և դու, տիկին Հռիփսիմե, եկար ինձ տանջելու, և դու, Գայիանե[50], տանջում ես ինձ»։ Եվ այս էր աղաղակում երկար ժամանակ։

Բազմությունը այս լսելով՝ հայտնեց թագավորին։ [Թագավորը] հրամայեց տապանը բանալ։ Եվ երբ բացին, սաստիկ լույս փայլատակեց սրբերի մասունքներից։ Կայսրը հրամայեց մարմարյա տապանը պատել ոսկով ու վրան գրել սրբերի անունները, որպեսզի ամեն ոք իմանա, թե ում տապանն է։ Կայսեր մի ներքինին եկավ ու այս ամենը պատմեց Աշոտ թագավորին։ Նա լսելով՝ փառք տվեց աստծուն. ու այդ օրը նշանակեցին սուրբ Գրիգորի տոն, որ աղուհացի[51] վեցերորդ շաբաթում շաբաթ օրը մինչև այժմ կատարվում է։

Իսկ սուրբ Արիստակեսը բարեհաջող հովվում էր իրեն վստահված հոտը. անաչառությամբ հանդիմանում էր ուղղության չեկածներին։ Դրա համար Չորրորդ Հայք[52] կոչված [երկրամասին] վերակացու կարգված ոմն Արքեղայոս իր չար գործերի համար նրանից հանդիմանվեց. հանդիմանելով Ծոփք[52] գավառում, [Արքեղայոսը] նրան սպանեց, իսկ ինքը հայոց Տրդատ արքայից երկյուղելով՝ փախստական ընկավ Կիլիկիայի Տարսոն[53] քաղաքը։ [Արիստակեսը] յոթ տարի եպիսկոպոսությունը կառավարած լինելով՝ մարտիրոսական մահով վախճանվեց։

Նրա փոխարեն հայոց արքա Տրդատը հայրապետության աթոռին նստեցրեց սուրբ Գրիգորի ավագ որդի մեծ Վրթանե-



սին՝ սուրբ Արիստակեսի եղբորը։ Ինքն էլ [թագավորը] սիրեց միայնակեցիկ կյանքը, ինչպես սուրբ Գրիգորը։ Այնուհետև ժամանակ առ ժամանակ իր զորքերի մոտից անհայտանում էր. ամբողջ քառասուն օրը անց էր կացնում պասերով ու աղոթքներով։ Իր զորքերը գնում աղաչում էին նրան, որ գա տիրություն անի թագավորությանը։ Իսկ նա չէր համաձայնվում, նրանց տիրանենգ* էր կոչում ու ասում՝ թե դուք մարդկանց ցույց տալու համար եք ընդունում աստվածապաշտությունը։ Իսկ նրանք երդումներ էին անում ու ստորագրություններ տալիս, թե սրբությամբ են ընդունում քրիստոնեությունը և հավատարմությամբ ծառայում նրան։ Իսկ նա՝ ընդառաջելով նրանց ցանկությանը, վերադառնում էր իր աթոռը ու առաքինության բոլոր կարգ ու կանոններին ինքն էր օրինակ դառնում։

Իսկ նրանք՝ ձանձրանալով նրա բարեպաշտությունից՝ խորհեցին նենգությամբ սպանել նրան։ Զբոսանքի պատրվակով նրան որսի տարան ու նետահարելով խոցեցին իբրև թե պատահաբար։ Եվ նկատելով, որ դրանից չի մեռնում, մահադեղ տվին։ Եվ այսպես զրկեցին կյանքից այն մարդուն, որին իր թշնամիները չկարողացան հաղթել։ Նրան, որ հսկայական քաջությամբ հաղթում էր բոլոր թշնամիներին**, որ անասելի էր համարված ուժով, որի քաջության համբավը բռնել էր ամբողջ աշխարհը, նենգորեն սպանեցին ու իրենց համար բազմալույս ջահը մարեցին։ Այսպես վախճանվեց բարեպաշտ ու աստվածասեր Տրդատը, որ թագավորեց հիսունվեց տարի։

Իսկ մեծ Վրթանեսը գնաց Կոստանդին կայսեր մոտ, որպեսզի թագավորեցնի քաջ ու առաքինի Տրդատի որդի Խոսրովին[54], որը և իսկույն կատարեց։ Մեծ քանակությամբ օգնական զորք տվեց նրան, որպեսզի պատերազմով ընդդեմ կանգնի պարսից Շապուհ թագավորին։

Բայց Սանատրուկը[55], որը Տրդատի ձեռքով Աղվանքի կողմերին վերակացու էր նշանակված, երբ լսում է նրա մահվան մասին, սպանում է Վրթանեսի[58] որդի սուրբ Գրիգորիսին՝[56] Հուսիկի եղբորը, կապելով նրան մի ամեհի ձիու պոչից Վատնյան[57] դաշտում։ Իսկ ինքը գնում է պարսից արքա

---

* Տիրանենգ, այսինքն՝ Քրիստոսին դավաճանող։

** Ընտրում ենք տարբերակը։

Շապուհի մոտ և ընդունում թագավորական իշխանություն՝
երկիրը անջատելով Խոսրովից։
Խոսրովը բավական համարելով իր մնացած երկիրը, պատերազմների մասին ոչ մի հոգ չի տանում, այլ խաղաղ կյանք վարելով, հնազանդվում է մեծ Վրթանեսի[58] խրատին. Արտավարելով, հնազանդվում է մեծ Վրթանեսի խրատին. Արտաշատ[59] մայրաքաղաքը փոխում է Դվին[60] ու տնկում է կաղնու անտառներ[61], իբրև զվարճանքի տեղ։ Նա թագավորելով ինը տարի՝ մեռնում է բարեպաշտ կերպով։ Նրա փոխարեն թագավորում է նրա որդի Տիրանը[62]։

Իսկ սուրբ Վրթանեսը բարեհաջող անցկացրեց իր կյանքի ժամանակը. թեպետ նախարարները շատ անգամ կամեցան սպանել նրան, բայց աստված թույլ չտվեց, որ այդպես լինի, այլ խաղաղ մահով փոխվեց ամենքի հույս Քրիստոսի մոտ։
Իսկ Տիրան թագավորը նրա տեղը նշանակեց նրա որդի սուրբ
Հուսիկին՝ Աղվանքի կաթողիկոս Գրիգորիսի եղբորը։

Բայց Տիրանը աստվածային օրենքների համապատասխան չէր վարում թագավորությունը, այլ չար գործերով, որը Տիանաշառությամբ պախարակում էր սուրբ Հուսիկը։ Իսկ Տիրանը ատում էր նրան և հետո էլ սպանեց այս պատրվակով։

Այնպես եղավ, որ մեծ Կոստանդիանոս[63] կայսեր որդի
Կոստանդինի[63] մահից հետո բյուզանդացիների վրա թագավոր
դարձավ ուրացող Հուլիանոսը[64]։ Սա ուղարկում է մի տախտակ, որի վրա նկարված էր սատանայի պատկերը ու նրան կից Հուլիանոսինը, որպեսզի այն դնեն հայոց եկեղեցում։ Տիրանը նրա երկյուղից կատարում է կարգադրությունը։ Իսկ սուրբ Հուսիկը[65] դիմադարձ կանգնելով՝ թույլ չի տալիս եկեղեցի մտցնել, այլ առնելով նրա ձեռքից՝ գցում է գետին ու փշրում է այն։ Իսկ Տիրանը բարկանալով՝ հրամայում է ճիպոտներով ծեծել նրան, մինչև որ մեռնի։ Սա եպիսկոպոսապետությունը վարեց վեց տարի։

Իսկ Տիրանը կանչում է ազգով ասորի մեծ քորեպիսկոպոս Դանիելին, որին սուրբ Գրիգորը գավառների եպիսկոպոս էր նշանակել. սա մի սուրբ և սքանչելագործ մարդ էր։ Նա եկավ հանդիմանեց նրան խիստ անեծքներով՝ սուրբ քահանայապետ Հուսիկին սպանելու համար։ Եվ Տիրանը բարկանալով՝ հրամայեց խեղդել նրան. սուրբը վախճանվեց



մարտիրոսական մահով։ Դրանից հետո Տիրանը քահանայապետության աթոռը հանձնեց ոմն Փառներսեհի. սա սուրբ Գրիգորի տոհմից չէր, այլ Տարոնի[66] Աշտիշատ գյուղից էր, որ աթոռակալեց հինգ տարի։

Պարսից Շապուհ արքան խաբեությամբ իր մոտ է կանչում Տիրանին, ճանապարհին նրա աչքերը ածուխով կուրացնում են։ Աստծուց վրեժխնդրություն եղավ այն անօրեն մահերի համար, որ նա կատարեց Հուսիկի ու Դանիելի նկատմամբ։ Հետո նրան [Տիրանին] խեղդեց իր որդի Արշակը[67], որ թագավորեց տասներեք տարի։

Շապուհի հրամանով նրա թագավորական աթոռը գրավում է Արշակը։ Սրա մոտ եկան իր բոլոր նախարարները և մեր հայոց երկրի բոլոր եպիսկոպոսները ու խնդրեցին նրանից սուրբ Գրիգորի արժանավոր տոհմից մի հայրապետ [կարգել]։
Նրան գեղեցիկ կազմվածքով ու տիրոջ [Քրիստոսի] բարի
տեսքով մի տղա, որի անունն էր Ներսես[68]. սա Հուսիկի որդի
Աթանագինեսի որդին էր։ Հուսիկը ուներ երկու որդի՝ մեկի անունը Պապ էր, իսկ մյուսինը՝ Աթանագինես։ Մինչդեռ Հուսիկը կենդանի էր, նրանցից ոչ ոքի չձեռնադրեց եկեղեցական գործի համար, որովհետև արժանի չէին։ Նրա մահից հետո նրանց բանի կերպով սարկավագ են ձեռնադրում։ Իսկ նրանք եկեղեցական գործը թողնելով՝ իրենց տվել էին ուտել-խմելուն. և սաղմոսների ու հոգևոր երգերի փոխարեն, գուսաններով, հարճերով ու բոզերով էին բավականանում։

Եվ մի օր եկեղեցում նստած կանանց ու երիտասարդների հետ ուտում-խմում էին, երկնքից կրակ թափվեց ու երկուսին էլ այրեց՝ անօրինակ մահվամբ խայտառակելով։ Երկար ժամանակ եկեղեցում մնացին, ու ոչ ոք չէր համարձակվում ներս մտնել ու նրանց դիակները դուրս բերել։

Բայց սքանչելի Ներսեսը արժանի էր այն կոչմանը, որին կոչում էին նրան. քանի որ նա արդար ու սուրբ մարդ էր։ Նա զինվորագրված էր Արշակ արքային և պողպատյա սուսերը նրա սպասին միշտ պատրաստ էր պահում, իսկ իրեն անարժան էր համարում այդպիսի պատվի։ Իսկ Արշակ արքան հրաման տվեց ծերունի եպիսկոպոս Փաուստոսին՝ նրան [Ներսեսին] սարկավագ ձեռնադրելու։ Ապա մեծ զորք է կազմում,

նրան ուղարկում է Կեսարիա՝ Հայրապետ ձեռնադրելու համար։ Այնտեղից գալով՝ լուսավորում է մեր հայոց աշխարհը տեսակ-տեսակ կարգերով. շինում էր վանքեր ու աղքատանոցներ, հավաքում էր որբերին ու հալածվածներին և նրանց պարէն ու օրապահիկ էր նշանակում։

Իսկ Արշակը թագավորությունը կառավարում էր ոչ աստծու օրենքներով, քանի որ սպանեց իր եղբորորդի Գնելին ու առավ նրա կին Փառանձեմին։ Աստծու սուրբ Ներսեսը անիծեց նրան, նաև նրան թշնամիներ դարձան պարսից Շապուհ արքան ու հունաց Վաղես կայսրը, որ Հովբիանոս* բարեպաշտից հետո էր։ Եվ Արշակը խնդրում է Ներսեսին, որ սա իբրև պատգամավոր գնա Վաղես** կայսեր մոտ։

Սուրբ Ներսեսը գնաց երկու թագավորների միջև հաշտություն գցելու։ Բայց որովհետև Վաղեսը խմորված էր Արիոսի[69] ու Մակեդոնի[70] աղանդով, դարձել էր ուղղափառների հալածիչ։ Երբ տեսավ սուրբ Ներսեսին ու լսեց, թե նա սքանչելագործ մարդ է, ասաց նրան. «Բժշկիր իմ որդուն», որովհետև մահամերձ հիվանդ էր։ Եվ սուրբն ասում է. «Եթե հեռանաս այդ անմիտ աղանդից, ես նրան կբուժեմ»։ Նա հանձն առավ թողնել. սուրբը աղոթեց, մանուկը հիվանդությունից ողջացավ։ Իսկ Վաղեսը կրկին դարձավ միևնույն հերձվածին, ու մանուկը իսկույն մեռավ։

Նա հրամայեց սրբին աքսորել մի անբնակ կղզի[71], ուր ավազից բացի ոչ մի կանաչ բույս չկար։ Եվ երբ սուրբը աղոթեց, բխեց քաղցրահամ մի աղբյուր, իսկ ծովը դուրս նետեց ձուկ ու փայտ, և փայտը առանց կրակի ինքն-իրեն վառվում էր։ Այսպես կերակրվեցին ինը ամիս։

Երբ Արշակը տեսավ, թե սուրբ Ներսեսը աքսորվեց, սկսեց մեծամեծ չարիքներ գործել. շինեց մի քաղաք ու այնտեղ հավաքեց բոլոր չարագործներին ու ասաց. «Նրանք, որոնք չարիքներ են գործում և այնտեղ են ընկնում, օրենքի ենթակա չեն»։ Քաղաքը լցվեց անիրավությամբ և [այդ քաղաքը Արշակը] անվանեց Արշակավան[72]։

Իսկ Վաղես կայսրը հրկիզվելով, չարամահ կերպով սատկեց՝ հավիտենական գեհենի օրինակը այս աշխարհը բերելով։

Գրատիանոսի հրամանով թագավորությունը իր ձեռքն է վերցնում Թեոդոս Մեծը[73]։ Նա աքսորից սուրբ Ներսեսին բերեց ու իր մոտ պահեց մեծարանքով մինչև հարյուր հիսունի ժողովի[74] Կոստանդնուպոլսում հավաքվելը հոգեմարտ Մակեդոնի համար. այդ ժողովին եկել էին Գրիգոր Աստվածաբանն ու Գրիգոր Նյուսացին՝ սուրբ Բարսեղի եղբայրը, և այլ բազմաթիվ սուրբ հայրեր։

Ապա սուրբ Ներսեսին [Թեոդոսը] ուղարկում է իր աթոռը։ Նա [Ներսեսը] տեսնելով Արշակի անիրավ գործերը՝ անիծեց Արշակավանը, ու անմիջապես չարամահ կոտորվեցին նրա բնակիչները, բազմամարդ քաղաքը ամայացավ։ Արշակին Շապուհը կանչեց ու նրան դրեց Անհուշ բանտում, ինքը՝ Արշակը, իր ձեռքով ինքնասպան եղավ, որ թագավորեց երեսուն տարի։

Իսկ սուրբ Ներսեսը աղաչեց Թեոդոս Մեծին ու Հայաստանի վրա թագավոր տվեց Արշակի որդի Պապին[75]։ Եվ որովհետև Պապը զաղրագործ էր, սուրբ Ներսեսը հանդիմանում էր նրան. [Պապը] մահացու դեղ տվեց նրան ու այն արդարին զրկեց այս կյանքից։ Սուրբը մեռնելիս կանչեց իր հոտին, օրհնեց նրանց և շատ բան նախագուշակեց նետողաց[76] ազգի, մեր Հայաստան աշխարհի ավերման, Ներսեհի[77] ու այն նեղությունների վերաբերյալ, որ նրանից գալու էին մեր ամբողջ երկրի վրա։ Ապա հանգավ սուրբը մարտիրոսական մահով՝ երկար արտասուք թափել տալով իր հոտին. նա հայրապետությունը վարեց երեսունչորս տարի։ Նրա աթոռը չորս տարի գրավեց ոմն Շահակ ոչ նույն տոհմից, այլ Ալբիանոսի[78] սերնդից, որ Հարքի[79] Մանազկերտ քաղաքից էր։

Իսկ բարեպաշտ Թեոդոսը, երբ տեսավ Պապի գործած չարիքները, կորցրեց նրան[80], ըստ նրա անզգամության, որ թագավորեց յոթ տարի։ Մեծ Թեոդոսը հայոց վրա թագավոր կարգեց Արշակունի տոհմից ոմն Վարազդատի[81], որ մի զորավոր և ուժեղ մարդ էր։ Շահակից հետո կաթողիկոս է դառնում նրա եղբայր Զավենը՝ չորս տարի։

Իսկ Վարազդատը մտածեց հեռանալ Թեոդոսից և ձեռք մեկնել պարսիկներին։ Նրան հալածեց Մանվել Մամիկոնյա-

---

* Կայսր էր 363—364 թթ.։

** Թագավորում է 364—378 թթ.։

նը[81], եղբայրը Հայոց քաջ սպարապետ Մուշեղի, որին Վաղարշը նենգությամբ սպանեց. սա գնաց Բյուզանդիա, այնտեղ վախճանվեց՝ թագավորած լինելով չորս տարի։

Զավենից հետո կաթողիկոսությունը հինգ տարի գրավում է Ասպուրակեսը՝ նույն Շահակի ու Զավենի եղբայրը։ Մանվելը թագավորական աթոռին է նստեցնում Պապի երկու որդիներին՝ Արշակին ու Վաղարշակին, որին իրեն փեսա դարձրեց, սրանք թագավորեցին չորս տարի։

Այս բյուզանդական ու պարսից թագավորները մեր հայոց աշխարհը երկուսի բաժանեցին[82]։ Բյուզանդական բաժնի վրա Մեծ Թեոդոսի որդիներ Արկադիոսի ու Օնորիոսի հրամանով իշխում էր Արշակը։ Իսկ Պարսից արքա Շապուհը իր բաժնի վրա թագավոր դարձրեց նույն տոհմից ոմն Խոսրովի։ Արշակի ու Խոսրովի միջև պայքար կար, քանի որ Արշակի հետի իշխանները նրա գանձերը առնելով գնացին Խոսրովի մոտ։

Իսկ Խոսրովը Ասպուրակեսի մահից հետո հայրապետության աթոռին է նստեցնում Ներսես Մեծի որդի սուրբ Սահակին[83]։ Այս ժամանակներում Կոստանդնուպոլսի հայրապետն էր եկեղեցու զարմանալի ու պայծառ ջահ սուրբ Հովհան Ոսկեբերանը[84], որ Քրիստոսի համընդհանուր եկեղեցին լուսավորում էր կենաց խոսքի վարդապետությամբ։ Սա սկզբում ոմանց կողմից արհամարհվում էր հունարեն ոչ ճիշտ առոգանությամբ խոսելու համար, որովհետև հոր կողմից ասորի էր։ Սա մկրտվելուց հետո գինի չխմեց, չծիծաղեց, չերդվեց ոչ ոքի և ոչ մեկին չնզովեց։

Եվ երբ նրան աքսորում էին, ձեռքը խփեց եկեղեցուն ու ասաց. «Կանգուն մնա, սուրբ եկեղեցի, տիրոջ փառքի բնակարան, և մի մոռանա իմ աշխատությունները, որովհետև աստծուց իմ ստացած պարգևներից քո գանձերին ավելացրի ութ հարյուր գիրք և տասներկու հազար ճառ»*։ Սա հայրապետ մնաց հինգ տարի, երեք տարի էլ աքսորում եղավ ու վախճանվեց Կոմանայում**, հիսուն տարեկան հասակում։

Խոսրովը թագավորեց հինգ տարի. Նրան պարսից արքան

* Այսպես գրված է նաև Հայսմավուրքում։

** Քաղաք Թոքաթի մոտ (Փոքր Հայքում)։



զրկում է թագավորությունից ու թագավորեցնում է Վռամշապուհին։ Իսկ սուրբ Սահակը Քրիստոսի եկեղեցին ամենքից ավելի է պայծառացնում առաքինության զանազան կարգերով ու կանոնական օրենսդրությամբ։

Եվ սրա ժամանակ գիտության մեծ լույս ծագեց մեր հայոց աշխարհի վրա, որովհետև երանելի Մեսրոպը եկավ սուրբ Սահակի մոտ [և ասաց], թե ինչ-որ հնար կա հայերենի համար գիր ստեղծելու։ Եվ նրան գտավ ավելի այդ բանին փափագող, որովհետև մինչև այդ հայերեն գիր չունեին, այլ հունական և ասորական գրերով ու նշանագրերով էին կառավարվում։ Այս մտադրությունը հայտնում են Վռամշապուհ թագավորին։ Նա ասում է, թե՝ «Երբ ես Ասորիքի կողմերում էի, Դանիել անունով մի ասորի եպիսկոպոս ինձ ասաց, թե ես հայոց լեզվի նշանագրեր ունեմ, ես այն ժամանակ անուշադրության մատնեցի»։ Եվ Վախրիճ (Վահրիճ) անունով մի նախարարի ուղարկում է Դանիելի մոտ նրանից նշանագրերը* խնդրելու։ Իսկ նա ուղարկում է Հաբել քահանայի ձեռքով։ Եվ երբ տեսան, ուրախացան ու սկսեցին հայերենի թարգմանել ամբողջ Աստվածաշունչը։ Բայց նայելով նկատեցին, թե չի բավականացնում բոլոր վանկերը, մասնիկներն ու բառերը ամբողջովին արտահայտելու։ Սկսեցին այդ առթիվ մտահոգվել։ Երբ բոլոր մարդկային հնարներից հիասթափվեցին, ապավինեցին նրան, որի համար ամեն ինչ հնարավոր է. աղոթքներով խնդրեցին տիրոջից, հանձն առան սաստիկ պահեցողությունը ու աղոթքները։ Իսկ նա, որ իր երկյուղածների կամքը կատարում է ու նրանց աղոթքները լսում, անտես չարեց նրանց բարի խնդրվածքը։ Մեսրոպին երևաց մի հզոր ձեռքի թաթ, որ վեմի վրա գրում էր։ Եվ նա ծանոթանալով բոլոր հանգամանքներին՝ վեր կացավ ստեղծեց գիրը։

Եվ այնուհետև հավաքում են բազմաթիվ մանուկների և ուսուցանում մեր ամբողջ երկրին, իսկ մատաղատի, լավ սովորող, փափկաձայն և երկարաշունչ մանուկներին բաժանում են երկու խմբի, և հիմնում են ասորերեն ու հունարեն լեզվով դպրոցներ։ Այդ մանուկները սովորեցին բոլոր գիտություն-

* Բնագրում՝ զնշանակագիրն (եղակի)։

ները՝ քրիստոնեական ու հեթանոսական և դարձան ճշգրիտ թարգմանիչներ։ Թարգմանեցին Հին ու Նոր կտակարանների բոլոր գրքերը՝ սկսելով Սողոմոնի առակներից[85], ամենը ամբողջացրին։

Սրանք ոչ միայն թարգմանիչներ էին, այլև վարդապետներ և ուսուցիչներ, նաև ապագան կանխագուշակող մարգարեներ։

Սրանք լցված էին սուրբ Հոգով, խոսում էին ազգերի լեզուներով, թարգմանողներ էին բազմաթիվ ազգերի [լեզուներից], խրթին խոսքերի բացահայտողներ էին, խորիմաստ խոսքերի պարզ մեկնիչներ։

Սրանք եկեղեցու սյուներ էին ու նրա զավակների համար ամրափակ պարիսպներ, լուսատու աշտանակներ էին ու վառված ջահեր, որոնք իրենց լույսը համընդհանուր կերպով ծավալում էին աշխարհի ոլորտները։

Սրանք կենաց խոսքի աստվածաբաններ էին ու պապակված անձանց արբուցիչներ, բանսարկուի ջերմ տապի զովացուցիչներ էին և ջերմացնողներ հավատի մեջ սառածներին։

Սրանք ճավողող ծիծառներ էին, քաղցրախոս տատրակներ ու ողջախոհ մարդիկ, սրբություն սիրողներ և աղտեղության անարգիչներ։ Սրանք մանուկների դաստիարակներ էին և երիտասարդների համար բարի օրինակներ, կույսերի համար զարդարանք էին, ամուսնացածների համար օրենք, ծերերի սփոփիչներ, տկարների մխիթարիչներ, ընկածներին բարձրացնողներ, մեղք գործածներին ուղղողներ, ծույլերին խթանողներ ու դրդիչներ, եռանդուններին դեպի գործ մղողներ, ուսում սիրողներ ու ատողների հանդիմանիչներ։

Սրանց վարդապետներն և ուսուցիչներն էին սուրբ Սահակն ու Մեսրոպը, իսկ գլխավոր աշակերտներից էին սուրբ Հովսեփը[86], Հովհանը[87], Ղևոնդը[88], Սահակը, քերթողահայր Մովսեսը[89], Մամբրե Վերծանողը[90], նրա [Մովսեսի] եղբայրը, Եզնիկն[91] ու Կորյունը[92], սուրբ Եղիշեն[93], Դավիթ[94] փիլիսոփան ու Հովհաննեսը[95], տեր Աբրահամը, Արձանը*[96], Մուշեն[97], Խոսրովը, Ղազարը[98] և հետո Ստեփանոս Սյունյաց[99] եպիսկոպոսը, Հովհաննես Սամոսատցին[100], որ գրերը գե-

* Արձանը ըստ Ալիշանի գուցե Աղան (Փարպեցու ուսուցիչը)։



ղեցիկ կերպով հարդարեց, և ուրիշ շատերը, որոնցից ոմանք հասան եպիսկոպոսության աստիճանի, իսկ մի մասն էլ ժողովրդի առաջնորդներ կարգվեցին։ Նրանցից ոմանք և թարգմանության վրա [պարապեցին], և իրենցից գրքեր շարադրեցին, ինչպես սքանչելի Մովսեսը (Խորենացին) Սահակ Բագրատունու խնդրանքով [գրեց] «Հայոց պատմությունը», և Արծրունի իշխանների խնդրանքով «Սուրբ Աստվածածնի ու նրա պատկերի պատմությունը», և «Պիտոյիցը» ամն Թեոդորի խնդրանքով, և «Սուրբ Հռիփսիմեանների ներբողեանը», և «Վարդավառի» [ներբողյանը] և այլ ճառեր ու իմաստասիրական գրություններ։ Կորյունը (գրեց) սուրբ Մեսրոպի ու այլ ժամանակակիցների* պատմությունը։ Եղիշեն [գրեց] սուրբ Վարդանանց պատմությունը, Կանոնների գիրքը, Սուրբ գրքի այլ մեկնաբանություններ և փրկչի չարչարանքների մասին։ Ղազարը (գրեց) իր գիրքը։ Եզնիկը բազմաթիվ գրություններ թողեց ի շահ ընթերցողների։ Դավիթ փիլիսոփան (գրեց) «Սահմանաց ու էակաց գրքերը», «Արիստոտելի Մեկնությունը», «Պորփյուրի Ներածությունը» և այլ հարցմունքներ ու պատասխաններ, սուրբ խաչի և մեր տեր Հիսուս Քրիստոսի ծննդյան ներբողականը։ Նմանապես Մամբրե Վերծանողը ներբողական գրեց Լազարոսի մեռելներից հարության օրվա, Քրիստոսի՝ ավանակով Երուսաղեմ գալու առթիվ։ Եվ հետո մեծ Ստեփանոս Սյունյաց եպիսկոպոսը Սուրբ գրքի բազմաթիվ մեկնություններ թողեց. ինչպես ավետարանների համառոտը, Հոբի, Դանիելի, Եզեկիելի գրքերի ու Կոստանդնուպոլսի Գերմանոս պատրիարքի թղթի պատասխանները։ Ստեղծեցին Քրիստոսի ծննդյան տաճար քառասունօրյա գալստի, մկրտության, Բեթանիա ու Երուսաղեմ գալու, չարչարանքների ու հարության, համբարձման և հոգու գալստյան խաչի ու եկեղեցու, այլ տերունական տոների, բոլոր սրբերի, ապաշխարության և բոլոր ննջեցյալների քաղցր ու գեղեցիկ եղանակով, մեծիմաստ սենալես, զանազանաձև ու անթիվ շարական-

* Բնագրում գրված է. «Եւ Կորիւն զպատմութիւն սրբոյն Մեսրոպայ և այլ ժամանակացս»։ Ժամանակակից ձևը ուղղում ենք ժամանակակցաց և ըստ այդմ թարգմանում։ Կորյունը ժամանակների պատմություն չի գրել, նրա գործը վերաբերում է Մեսրոպին ու նրա ժամանակակիցներին։

ներ, որ մինչև այսօր երգվում են Հայաստանի եկեղեցիներում։

Իսկ երբ սուրբ վարդապետ Մեսրոպը Հայաստանը լիացրեց ուսմամբ ու թարգմանություններով, ամեն բան հանձնեց Սահակ կաթողիկոսին, իսկ ինքը գնաց Աղվանք ու նրանց համար նշանագրեր ստեղծեց. ապա ուսուցիչներ թողնելով նրանց համար՝ գնաց Վրաստան։ Եվ ըստ վերուստ նրան տրված շնորհքի ստեղծեց նա և՛ նրանց համար նշանագրեր[101]։ Եվ այդպես ամբողջ երկիրը ուրախացրեց անսահման խնդությամբ։ Իր աշակերտներից թողեց նաև նրանց համար ուսուցիչներ, դարձավ Հայաստան և մեծ Սահակին գտավ թարգմանությամբ զբաղված։

Իսկ Վռամշապուհ թագավորը թագավորելով քսանմեկ տարի՝ խաղաղ վախճանվում է։ Դարձյալ թագավորում է նրա եղբայր Խոսրովը մի տարի, ապա Արտաշեսը, որ նաև կոչվում է Արտաշիր, թագավորում է նրանից հետո։

Այդ ժամանակներում հույների վրա թագավոր դարձավ Արկադիոսի որդի բարեպաշտ Թեոդոս Փոքրը։ Սուրբ Սահակը Մեսրոպ վարդապետին ու իր թոռ [Սահակի] Վարդանին նամակով ուղարկում է Թեոդոս կայսեր մոտ, որպեսզի հրաման տա, որ իր իշխանության ներքո գտնվողները՝ [հայերը] սովորեն հայերեն գրեր, քանի որ սրանց վերակացուները նախանձից թույլ չէին տալիս հայերեն գրեր սովորել։ Իսկ հեթանոս դարձրած Թեոդոսը սկզբում մեղադրեց, թե ինչու ասորիներից և ոչ թե մեր այս քաղաքում գտնվող հույն իմաստասերներից խնդրեցիք գրեր։ Մեսրոպը պատմեց, թե այդ հրաշքի կատարումը սուրբ հոգու շնորհիվ եղավ։ Այդ ժամանակ բարեպաշտ թագավորը գոհացավ աստծուց, հրամայեց պատվել Մեսրոպին իբրև իմաստուն ու ճշմարիտ վարդապետի։ Նաև Ատտիկոս պատրիարքը և եկեղեցու ամբողջ միաբանությունը թագավորով հանդերձ Մեսրոպին դրեցին եկեղեցու առաջին վարդապետների՝ Աթանասի ու Գրիգորյանների, Բարսեղի ու Ոսկեբերանի շարքը։ Իսկ Բարեպաշտ Թեոդոսը Վարդանին ստրատելատ[102] դարձրեց։ Նաև թուղթ գրեցին մեծ Սահակին՝ նրան էլ բարձրագույն պատվի արժանացնելով։

Եվ հրաման տվեց իր իշխանության մեջ հավաքել ուշիմ մանուկներին՝ ուսուցանելու [հայերեն] գրերը. պարենն ու ծախսերը վերցրեց արքունիքի վրա։ Հրաման տվեց նաև Հայաստանի Կարին[103] գավառում շինել մի քաղաք և անվանել Թեոդուպոլիս, որ այժմ կոչվում է Կարին քաղաք։ Մեսրոպը եկավ և սովորեցրեց Թեոդոսի իշխանության տակ գտնվող մեր ազգի կեսին։

Իսկ հայոց թագավոր մանուկ Արտաշիրը զազրագործ էր ու տոփասեր, որ ոչ միայն գիշերը, այլև ցերեկն էր անարժան գործեր անում ու սուրբ Սահակի խրատին չէր լսում։ Այդ պատճառով զզվեցին բոլոր նախարարները ու եկան մեծ Սահակի մոտ, որպեսզի նրա հետ միասին ամբաստանեն պարսից արքայի առջև, որ Արտաշիրին գահընկեց անի։ Բայց սուրբ Սահակը հանձն չառավ գառը գայլերին նետել։ Իսկ նրանք գնացին Պարսից Վռամ արքայի մոտ և նրան գահընկեց արին։ Հանեցին նաև սուրբ Սահակին կաթողիկոսությունից, որովհետև չհամաձայնվեց նրանց հետ։ Ապա վերացավ Արշակունիների թագավորությունը Արտաշիրից հետո, որ թագավորեց վեց տարի։ Արշակունիների թագավորությունը Հայաստանում տևեց հինգ հարյուր վաթսունութ տարի[105]։ Նաև դադարեց հայրապետությունը սուրբ Գրիգորի արժանավոր տոհմի. չնայած դրանից հետո սուրբ Սահակը մնաց տասնվեց տարի և լուսավոր վարդապետությամբ պայծառացրեց մեր երկիրը, սակայն անարժան վերակացուներով* ու պարսիկ մարզպանով, ինչպես էր Վեհմիհրշապուհը, փոխանակ Արտաշիր թագավորի, և թշնամանք սիրող Սուրմակը սուրբ Սահակի փոխարեն. [Սուրմակը] մնաց մի տարի։ Սուրմակից հետո ասորի Բրքիշոն եղավ, որ ավելի վատթար էր, քան նա. [սա մնաց] երեք տարի։ Սրանից հետո եղավ ավելի անպիտան Շմվելը հինգ տարի։

Իսկ սուրբ Սահակը աղոթքներով և ուսուցչությամբ էր զբաղվում։ Ապա եկան հայոց բոլոր նախարարները, ընկան սուրբ Սահակի առաջ, իրենց հանցանքը հանձն առան, ներում խնդրեցին նրանից և աղաչեցին նրան վերադառնալ գրավել իր աթոռը։ Իսկ նա չհամաձայնվեց նրանց հետ։ Եվ երբ

* Ռուսերեն և ֆրանսերեն թարգմանությունները վերակացու համարում են իշխող-իշխանավոր, բայց մենք այդ բառին տալիս ենք իր հին նշանակությունը՝ եպիսկոպոս, այսինք ունի կաթողիկոս իմաստը։

շատ ստիպեցին, այդ ժամանակ նրանց պատմեց իր տեսած տեսիլքը, թե տիրոջից եղավ այդ, այսինքն՝ քահանայապետության դադարումը սուրբ Գրիգորի տոհմի և Արշակունյաց տանից թագավորության վերացումը, և թե Ներսի հայտնվելու մոտերքը ասված դարձյալ կանգնեցնելու է Արշակունիների թագավորությունը և սուրբ Գրիգորի տոհմի քահանայապետությունը։ Ապա թույլ տվին, որ նա ապրի իր կամքով։ Պարսից արքան Վարդանին Հայաստանի մարզպան[106] դարձրեց և մեր երկիրը հանձնեց նրա ձեռքը։

Սուրբ Սահակը հայրապետությունը վարեց հիսունմեկ տարի և խաղաղ մահով փոխադրվեց հրեշտակների կարգը (մեռավ)՝ իր աթոռը հանձնելով սուրբ Մեսրոպին, որ և բարի հիշատակ թողնելով գալոց սերունդներին նույն տարին լրացրեց կյանքը՝ Վռամ երկրորդի որդի պարսից Հազկերտ արքայի առաջին տարվա սկզբում[107]։ Աթոռը անցավ նրանց աշակերտ սուրբ Հովսեփին[15]։

Իսկ Հազկերտ արքան բռնանում էր բոլոր քրիստոնյաների վրա, որպեսզի ուրանան քրիստոնեությունը և դառնան մազդեզական կրոնին։ Դրան չհամաձայնվելով՝ հայոց զորքերը ընդդիմանում են նրա հրամանին, սպանում են մոգերին ու մոգպետներին, որոնք եկել էին ավերելու եկեղեցիները ու վերացնելու հավատքը։ Իսկ երբ Հազկերտը լսեց այս ամենը, բազմաքանակ զորք ուղարկեց պատերազմելու ընդդեմ հայոց զորքի, որոնց գլխավորներն էին սուրբ Վարդանը ու իր ընկերները։) Պարսիկները, ավերելով մեր երկիրը, ուրացած Վասակի խորհրդով գերություն են քշում մնացած նախարարներին, սուրբ Հովսեփին, Սահակին, Ղևոնդին ու սրանց ընկերներին և բանտարկում են արքունի բանտում։ Դրանից հետո սպանում են սուրբ Հովսեփին ու նրա ընկերներին, իսկ նախարարներին արգելափակում են բանտում մինչև Պերոզ արքայի ժամանակ։ Ապա աստծու խնամքով ազատվում են բանտից, խոստովանողի անուն ժառանգելով՝ վերադառնում են մեր Հայաստան աշխարհը։

Իսկ բարեպաշտ Թեոդոս կայսեր մահից հետո թագավորությունը իր ձեռքն է վերցնում Մարկիանոսը[108], որ կազմակերպեց վեց հարյուր երեսունվեց եպիսկոպոսներից բաղկացած Քաղկեդոնի[108] ժողովը՝ պառակտելու ուղղափառ դավա-



նանքը, որ [ժողովը] մինչև այսօր ամբողջ աշխարհը լցրեց նրանց [ժողովին մասնակցողների] հայհոյությամբ։

Սուրբ Հովսեփից հետո կաթողիկոսությունը ստանձնում է տեր Գյուտը տասնհինգ տարի, որ Դավիթ փիլիսոփայից խնդրեց [գրել] «Բարձրացուցէքը»[109]։ Ապա Հովհան Մանդակունին գահակալեց տասներկու տարի։ Սա բազմաթիվ կարգավորություններով օժտեց եկեղեցին՝ կարգավորեց Աղուհացքի[110] քարոզները, սրա աղոթքները, ժամի երեքի, վեցի, իննի աղոթքները, եկեղեցու հիմնարկեքը, ժամահարությունը, սկիհը և մաղզման,[111] գրքերն ու կնունքը, խաչօրհնեքը, պսակը. այս ամենը նա կարգավորեց։ Այլև Պերոզ[112] արքայի առջև համարձակորեն ընդունեց Քրիստոսին, չվախեցավ նրա սպառնալիքներից, որ համոզում էր հեռանալ Քրիստոսից և հույների հետ հաղորդակցվելուց։ Նա իր կյանքը վերջացրեց ամենայն առաքինությամբ ու վախճանվեց։

Մարկիանոսից[113] հետո Բյուզանդիայի թագավոր է դառնում Լևոն Մեծը, իսկ պարսից Պերոզ արքան Հայաստանի մարզպան է նշանակում Մանդնոսին[114], [որը իշխում է] քսան տարի։ Այս ժամանակ եկավ Քերթողահայր Մովսեսը [Խորենացին]։ Երկրում այդ օրերին սքանչելի մենակյացի կյանքով փայլում էր սուրբ հայր Թաթուլը[115] իր եղբայր Վարոսի և Թումա աշակերտի հետ։ Հովհան Մանդակունուց հետո կաթողիկոսությունը հանձն է առնում տեր Բաբգենը՝ հինգ տարի՝ Զենոն կայսեր օրոք։

Այս Զենոնը նզովեց Քաղկեդոնի ժողովը. նզովքի տասներկու հատված [կանոն] շարադրեց նրա դեմ։ Սրա մասին ասում են, թե հաճախ էր միս ուտում. և մի օր անչափ ուտելուց՝ կերակուրը թթվում է նրա որովայնում. դրանից զզվելով՝ օրենք դրեց բարեկենդանի երկու շաբաթը միս չուտել, այլ պանիր ուտել, որ մինչև այսօր պանրուտ են անվանում։ Ասում են, թե Հուլիանոսը եկավ Կոստանդնուպոլիս և հրամայեց բոլոր վաճառվող կերակուրներին խառնել մատաղների արյունից։ Իսկ սուրբ Թեոդորոսն հայտնեց քրիստոնյաներին, իսկ նրանք ասացին, թե՝ «Մենք այս երկու շաբաթը իրավունք չունենք միս ուտելու, այլ պանիր պետք է [ուտենք]։ Եվ պանրուտեքը նույն ձևով սահմանվեց։ Սրա

օրերում Գառնիկ երանելին Մանյա այրերում գտավ սուրբ Գրիգորի մասունքները, որ թաղեցին Թորդանում[116]։

Բարգենից հետո կաթողիկոսությունը հանձն է առնում տեր Սամվելը հինգ տարի*։ Այս օրերում Ալեքսանդրիայում փայլում էին Սիմոն Սյունականը և Տիմոթեոս[117] երեցը՝ ճշմարիտ հավատով մի իմաստասեր, որ ամենահմուտ գրչաճշմարիտ հավատով մի իմաստասեր, որ ամենահմուտ գրչով, հավաքեց աստվածային այրերի՝ հերձվածողների դեմ գրված բոլոր գրությունները։ Իսկ պարսից Պերոզ արքան խիստ ամարդի բարքի տեր էր, ուստի սպանվեց հեփթաղներից[118]։ Այստեղ թագավորում է նրա Վաղարշ եղբայրը։ Սա Հմայակի որդի Վահան Մամիկոնյանին[119] մարզպան է նշանակում։ Այս Վահանը ենկեղեցին փառավորեց տեսակ-տեսակ բաներով և ալանների[120] արշավանքների առջևը փակեց։ Սրա օրոք էր ապրում ճարտասան ու պատմագիր Ղազար Փարպեցին։ Սամվելից հետո կաթողիկոսությունը ստանձնում է տեր Մուշեն ութ տարի։

Զենոն կայսրից հետո թագավորությունը ստանձնում է Անաստասը, որ Զենոնի հետ ուղղափառություն ընդունեց, որովհետև կամեցավ ժողով գումարել ընդդեմ Քաղկեդոնի անօրեն ժողովի և հաստատել ուղղափառությունը. բայց թագավորելով մեռավ։ Նրանից հետո թագավորում է Հուստինոսը՝ մի ագետ ու անաստված մարդ, որ երկիրը հեղեց ուղղափառների արյունով. նա չար դարձրեց քաղկեդոնականություն ու հալածեց՝ Քրիստոսին մի մարմնացած էություն համարողներին։

Պարսից արքա Վաղարշից հետո Թաղը սահմանում է Կավատը, ապա Զամասպը և հետո Կավատը[121]։

Մուշեից հետո կաթողիկոսությունը ստանձնում է տեր Սահակը հինգ տարի, ապա տեր Քրիստափորը հինգ տարի, սրանից հետո տեր Ղևոնդը երկու տարի։ Սրա օրոք արևը լրիվ խավարեց, ու սաստիկ սով եղավ։ Ապա [կաթողիկոս եղավ] Բագրևանդի[122] Մովսես տեր Ներսեսը ինը տարի։ Սրա օրով եպիսկոպոսի աշակերտ Եզրաս Անգեղացին բազմացրեց ճարտասանների դասը։ Հայաստան է վերադառնում նաև Մովսեսի եղբայր Մամբրեն[90], որի մասին ասում են, թե նրան պետք է երրորդ փիլիսոփան համարել։

Հուստինոսից հետո թագը վերցնում է նրա քեռորդի մյուս Հուստինոսը[123]։ Սրա կինը ուղղափառ Թեոդորան էր, որ աղաչում էր իր ամուսնուն՝ հաստատել ուղղափառությունը, թեպետև նա կամենում էր, բայց երկաբնակների[124] երկյուղից չհամաձայնվեց, որոնք նրան մահով էին սպառնում։

Սրա մոտ եկավ մի չարամիտ հրեա, ասաց, թե «Պետք է տերընդառաջը տոնել ըստ ծննդյան տոնի*, ինչպես որ հույներն են անում, և ոչ թե ըստ հայտնության [տոնի], որ հունվարի վեցին է**, քանի որ մինչև այն ժամանակ բոլոր քրիստոնյաները առաքելական դրվածքով տոնում են փետրվարի 14-ին։ Եվ կայսրը համաձայնվելով անօրենի խոսքին՝ [նրան] ուղարկում է Երուսաղեմ այդպես տոնելու համար։ Իսկ երուսաղեմցիները չհամաձայնվեցին փոխելու սուրբ հայրերի ավանդությունները, որ մինչև այդ օրը պահպանվել էին։

Կայսրը հրամայում է զորավարին՝ բռնությամբ անել տալ, իսկ թե մեկնումեկը ընդդիմանա՝ սպանել։ Եվ ճշմարտության համար բոլորը մահ էին հանձն առնում։ Իսկ մարդասեր աստված իր վրա հույս դրածներին չթողեց ձեռնունայն, այլ ահեղ հրաշքներով սարսափեցրեց հանդգնածներին։ Աստվածային աջ երևաց սուրբ մատուռի մեջ, նաև ահեղ, հրաշափայլ և արյունագույն նշան հայտնվեց երկնքում։ Դրանից սարսափելով՝ դադարեցին այդ գործից։ Երբ մյուս տարին սկսվում է, դարձյալ նույն խառնակչությունը գրգռվում է, որովհետև [կայսրը] սաստիկ հրաման տվեց՝ ոչնչացնել ընդդիմացողներին. իսկ նրանք ընդհանրապես մահը գերադասեցին խղճի խայթով ապրելուց։ Եվ բարերար աստված տեսնելով մարդկանց հավատը՝ այցելեց իր հոտին, երևաց ամենասուրբ աստվածածինը ծիրանի սյան մեջ՝ գրկում բռնած մանուկ Հիսուսին։ Եվ ջուր բխեց այն սյունից. իսկ ովքեր այդ ջրով ցողվում էին, բժշկվում էին ամեն մի ցավից։ Այսպես հրաժարվեցին այդ դատարկ պահանջից։

* Միշտը 10 տարի (տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 402)։

* Դեկտեմբերի 25-ին։

** Քրիստոնեության առաջին դարերում հարության տոնը նշվում էր հունվարի 6-ին։

Հուստինոսի ժամանակներում տասնութ ամիս արեգակը խավարեց․ ցերեկը երեք ժամ [արևը] լույս էր տալիս, մնացած ժամանակը ոչ ցերեկ էր, ոչ գիշեր։ Այդ տարվա պտուղները չհասան․ ամբողջ երկիրը դարձավ ինչպես երկարատև հիվանդ։ Եղավ տարաժամ մարդամահ, որ բնավ չէր եղել․ այն սկսվեց Կոստանդնուպոլսում․ առաջին օրը մեռավ հինգ հազար հոգի, երկրորդ օրը՝ տասը հազար, երրորդ օրը՝ տասնըհինգ հազար, իսկ չորրորդ օրը՝ տասնութ հազար։ Եվ մի օրում մեռած հաշվեցին մինչև երեք հարյուր հազար մարդ։ Ձեռքերի մեջ բշտիկ էր առաջանում, և անմիջապես մեռնում էին․ [պատահում էր, որ] մարդ տուն էր մտնում և տեսնում էր բոլորին մեռած։ Քաղաքը նեխվեց, որովհետև չէին կարողանում մեռելներին թաղել։ [Հիվանդությունը] տարածվեց ամբողջ երկրում, շատ քաղաքներ անբնակիչ մնացին, միայն Հեմսը[125] ազատվեց, որովհետև ապավինեցին Հովհաննես Մկրտչի գլխին, որ այնտեղ էր գտնվում։ Միմյանց հետ հաշտվեցին Հուստինոսը և պարսից Խոսրով արքան, ու ծաղկեց ողջ աշխարհում ամբողջ քրիստոնեության ուխտը։

Իսկ Վահան Մամիկոնյանը վախճանվեց խաղաղ մահով․ սրանից հետո մարզպան դարձավ նրա եղբայր Վարդը երեք տարի, սրանից հետո պարսիկ մարզպաններ եղան երեք տարի, ապա Մժեժ Գնունին [դարձավ մարզպան] երեսունչորս տարի։

Ներսեսից հետո կաթողիկոսությունը ստանձնում է տեր Հովհաննեսը՝ տասնհինգ տարի։ Սրա օրով սաստիկ մարդամահ եղավ՝ սկսվելով արևմուտքից։ Հայոց մայրաքաղաքում սքանչելի հրաշք տեղի ունեցավ․ բորբոքված կրակը այրեց պարսիկ համակարի[126] ապարանքը, որ վերակացու էր մեր երկրի վրա։ Երբ չկարողացան մարել, ապավինեցին Քրիստոսի խաչին և աղաչեցին եկեղեցու սպասավորներին՝ շտապել այնտեղ տանելու խաչը։ Երբ փրկիչ նշանը [խաչը] մոտ բերվեց, անմիջապես մարեց բոցը։ Եվ ամենքը տեսնելով՝ փառավորում էին փրկիչ Քրիստոսին ու գովում քրիստոնյաների հավատը, որին և հավատաց երանելի Մախոժը*, որ նահատակությամբ վախճանվեց։

* Դվինի մոգպետի որդին էր, որ հետո պարսիկների ձեռքով սպանվեց։



Հովհաննեսից հետո կաթողիկոսական գահը ստանձնում է տեր Մովսեսը։ Սրա առաջին տարին սուրբ Մանաճիհրը, որ անվանվեց Գրիգոր և ծագումով ռաժիկ էր[127], նահատակությամբ վախճանվեց։

Նրա [Մովսեսի] երրորդ տարում լրացավ Քրիստոսի ծննդյան 553 տարին*, և սպառվեցին երկուհարյուրամյակի կանոնները, որ կարգել էր Մանգնոս եպիսկոպոսի եղբայր իմաստասեր Անդրեասը՝ Կոստանդին կայսեր հրամանով զատիկների ու այլ տոների լրումների համար։ Որովհետև երբ լրացավ երկու հարյուր տարին, զատկի [լուսնային] լրումը մարտի 25-ին էր, իսկ սկզբում [200 տարի առաջ] ապրիլի 4-ին էր։ Եվ չկարողացան վերադառնալ սկիզբը, որովհետև մարտի 25-ից հետո [լրումը] ապրիլի 13-ին էր, և ինն օրվա տարբերություն կար մեջտեղում։ Այդ պատճառով սկսեցին շփոթվել տոները և բոլոր տոմարական հաշվումները[128]։

Ապա Մովսես Հայրապետը հավաքեց ժամանակի իմաստուններին, որոնց մեջ էր նաև Աթանասը սուրբ Կարապետի վանքից, և հաստատեցին Հայոց թվականը[129], որ ուղղեն տիրոջ զատիկը այլ տոներով հանդերձ։ Բայց ինը տարի չկարողացան անսխալ կերպով ճշտել։ Իսկ տասներորդ տարում ալեքսանդրացի Էաս անունով մեկը, որ մի հմուտ և իմաստուն մարդ էր, երբ տեսավ բոլոր եկեղեցիներում այդպիսի խառնաշփոթություն, կոչ ուղարկեց և իր մոտ հավաքեց ամեն ազգի բոլոր գիտուններին․ Աղդեին Գամիրքից[130], Գիգանին Ասորիքից, Ելոգսին Հունաստանից, Փենեհեսին Հրեաստանից, Հոհանին Արաբիայից ու երեսունվեց իր նման այլ այրեր և ուրիշ բազմությամբ՝ առաջ տանելով Անդրեասի 532 հաշվարկը, կրկին նույնին անցավ։ Ապա կազմեցին ճշգրիտ օրինակը, որ կոչվում է հինգհարյուրյակ, բազմիմաստությամբ ու անսխալ կերպով՝ բոլորի սկիզբը դնելով ապրիլի 4-ը, որպեսզի երբ լրանա 532 տարին, կրկին դառնա նույնին։ Եվ սկսեցին ուղղվել բոլոր տոները և տոմարական հաշվումները։

Բայց Հուստինոսի պալատի ումն Իրոնի չկանչեցին ժողո-

* Մովսեսը ըստ Օրմանյանի գահակալել է 574—604 թթ.։ Այդ կանոնները կարգավորվել են 553 թ., երբ կաթողիկոս էր Ներսես Բ-ն։

վի։ Նա այդ արհամարհանք համարեց իր անձի նկատմամբ։ Երբ Եղիգա իմաստասերը օրինակը տարավ Թագավորի մոտ, իրոնք սկսեց քննել հնգյակ և վեցյակ մասերը, որ երբեք չէին կիրառված, որովհետև հնգյակն ու վեցյակը մասեր են՝ մեկը արեգ, արեգակի, իսկ մյուսը լուսնի, բայց նա հակառակն արեց, որովհետև ապրիլի 17-ը փոխեց 16-ի, իսկ վեցը՝ հինգի։ Տասնվեցը սխալի չի հանգեցնում, այլ այն վեցը լինելով հինգ մեզ համար կիրակի է բերում, իսկ այն հինգը նրանց [հրեաների] համար շաբաթ է բերում ըստ իրանի հաշվարկ-ների։ Զատիկը հրեաների հետ են անում և ընկնում են նի-կիայի[131] սուրբ ժողովի նզովքի տակ, որոնք [ժողովականնե-րը] օրենք սահմանեցին խաչ հանողների հետ զատիկ չանելու

Իսկ մենք մյուս կիրակին ենք անում և ազատվում ենք նզովքից, որովհետև հայերը սխալական օրինակը, ինչպես և Քաղկեդոնի ժողովը [որոշումները] չընդունեցին՝ պարսկա-կան տիրապետության տակ գտնված լինելով։ Բայց ութ տա-րուց հետո իրողության եղծումը երևաց։

Մարգպան Մժեժից հետո պարսիկները հայերին տիրում են երեսունվեց տարի։ Այդ ժամանակներում վախճանվում է վրաց եպիսկոպոսը. եկան տեր Մովսեսի մոտ, որպեսզի նը-րանց եպիսկոպոս տա։ Նա ձեռնադրեց իր եկեղեցու փակա-կալ Կյուրիոն[27] անունով մեկին և հանձնարարեց նրանց՝ վստահած լինելով նրան, թե կպահպանի սերն ու միաբանու-թյունը սուրբ Գրիգորի աթոռի նկատմամբ, որովհետև մինչև այդ ժամանակ վրացիները հայերից էին ընդունում ձեռնա-դրությունը։

Մովսեսի վախճանվելուց հետո այս Կյուրիոնը պառակ-վեց Քրիստոսի ուղղափառ եկեղեցու դավանությունից և ըն-դունեց Քաղկեդոնի ժողովի դավանությունը, որովհետև ման-կությունից խմորված էր այդ աղանդով՝ գտնված լինելով Բյուզանդիայում, և չարությունը ծածուկ էր պահում իր մեջ, ինչպես կրակը, որ թաքցված է լինում հարդի տակ, բայց չէր համարձակվում երևան գալ Մովսեսի կենդանության օրոք։

Տեր Մովսեսը երեսուն տարի կառավարելով հայրապե-տությունը՝ վախճանվում է, իսկ աթոռի տեղապահությունը ստանձնում է Վրթանես Քերթողին[132]։ Երբ Ցուրտավի Մովսես



եպիսկոպոսը տեսնում է Կյուրիոնի չեղումը, հայտնում է Վրթանեսին, որպեսզի թերևս կարողանա Կյուրիոնի մոլորված միտքերը փոխել, որին շատ անգամ աղաչանքներով գրեց՝ հե-ռու մնալ անմիտ աղանդից։ Իսկ նա ոչ միայն չհամաձայնվեց գրածներին, այլև հալածեց Մովսես եպիսկոպոսին։ Երբ Մով-սեսից հետո հայոց կաթողիկոսությունը ստանձնեց տեր Աբ-րահամը, նույնպես և նա երկու-երեք անգամ թուղթ գրեց՝ հիշեցնելով նրան այն թյուրությունը։ Իսկ Կյուրիոնը պատճա-ռաբանում էր, թե այլ կերպ չի մտածում, քան նրանք են խորհում, և Մովսեսին իր զրպարտիչն էր համարում։ Իսկ երբ ասվեց, թե քննության ժողով պետք է լինի, որ այդ մասին իմանան, Կյուրիոնը բացարձակ ընդունեց Քաղկեդոնի դա-վանությունը։

Երբ Աբրահամը տեսավ, թե ոչ մի օգուտ չեղավ, այլ ավե-լի անամոթացավ, այդ ժամանակ շրջաբերական թուղթ գրեց իր վիճակներին, որպեսզի վրացիների հետ բոլորովին չհա-ղորդակցվեն ոչ եկեղեցով, ոչ ուխտով, կամ ամուսնությամբ, կամ թե որևէ հոգևոր գործով. բացի որևէ վաճառքից, ինչ-պես հեթանոսների հետ, որպեսզի մարմնավոր ծանոթու-թյամբ հոգևոր մեղքի մեջ չթաղվեն։

Եվ այնուհետև վերացավ վրաց եպիսկոպոսների ձեռնա-դրությունը, որ կատարվում էր հայերի միջոցով, որովհետև նրանք սկսեցին ենթարկվել հույներին։

Այս ամենը ճշտությամբ քեզ կսովորեցնի Ուխտանես[28] եպիսկոպոսը, որովհետև նա բոլորը կատարելապես նկարա-գրել է՝ թղթերն ու պատասխանները, Պետրոս եպիսկոպոսի համարձակախոսությունը, որ տեր Աբրահամի պատգամա-վորն էր՝ հղված Կյուրիոնի մոտ։ Վրացիները իր համարձա-կության համար նրան (Պետրոսին) Գայլ կոչեցին։

(Հուստինոս կայսրից հետո հաջորդեց մյուս Հուստի-նոսը, մի չար ու պիղծ մարդ, որ ուղղափառներից շատե-րին սպանեց, իսկ ինքն ու պատրիարք Հովհանը այսահար-ված մոլեգնում էին և այդպես էլ սատկեցին։ Ապա թագա-վորեց Տիբերիոսը, իսկ նրանից հետո՝ Մորիկը[133]։)

Սրա մասին ասում են, թե Հայաստանի Օշական գյուղից էր, իսկ ուրիշները՝ թե Տարոնից էր։ Աղքատության պատճա-

ռով գնաց Կոստանդնուպոլիս, և այնտեղ դիպվածով բախտը բերեց ու թագավոր դարձավ հետևյալ հանգամանքներում։

Երբ Տիբերիոս կայսրը մեռավ, մեծամեծները միմյանց դեմ գրգռվեցին ու իրար չէին հնազանդվում։ Նրանց միջև անասելի կռիվ տեղի ունեցավ այն առումով, թե ով հաղթի, նա թագավորի։ Իսկ պատրիարքը մեջտեղ ընկնելով համոզեց նրանց վիճակ գցել, ում ընկնի վիճակը, նա էլ ստանձնի թագավորությունը, իսկ մյուսները ենթարկվեն նրան։ Եվ այս՝ երդումով ու ամենքի գրություններով [հաստատեցին]։ Վիճակը այսպիսին էր։ Լուսանալիս պետք է բանային քաղաքի ավագ դարպասը և այնտեղ հանդիպող մարդուն, որքան էլ նա խիստ անարգներից լիներ, բերեին արքայական պալատը։ Իշխանները նստելու էին միատեղ. ում գլխին նա թագը դներ, նա էլ պետք է ստանձներ թագավորությունը։ Բոլորը համաձայնվեցին ու խռովությունից ետ կանգնեցին։

Երբ հասավ նշանակված ժամը, բացեցին քաղաքի դարպասը, տեսան Մորիկին՝ դռան մոտ կանգնած շալակը ինչ-որ ցողուն՝ վաճառելու և իր կարիքները հոգալու համար։ Զինվորները հափշտակեցին նրան, տարան բաղնիք, լողացրին, հագցրին թանկագին հագուստներ ու տարան պալատ։ Եվ երբ ասացին այն մասին, ինչի համար նա կանչվել էր, նա նրանցից պահանջեց գրություններն ու երդումները, որպեսզի թագից զուրկ մնացածները իրեն չսպանեն։ Իսկ նրանք խիստ երդվեցին նրան, որ դրանից անհոգ լինի։

Ամենքը փուչ հույսով նստել էին, և յուրաքանչյուրը ինքն իրեն ասում էր, թե ինքը կլինի։ Կանգնած էր գահը՝ թագը նրա վրա և կոշիկները կից նրա մոտ։ Մորիկը մեջտեղով անցավ, թագը վերցրեց ձեռքը ու սկսեց շրջել բազմածների մեջ։ Երբ մոտեցավ առաջինին, սա ուրախացավ, իսկ երկրորդը տխրեց, երբ թողեց նրան, դարձյալ տրտմությունը պատեց սրան, իսկ նրա ընկերը ուրախացավ։ Եվ այսպես երբ կարգով երկու-երեք անգամ շրջվեց, նրանց տխրեցրեց ու ուրախացրեց։ Անցավ նա, նստեց գահի վրա ու թագը դրեց իր գլուխը։ Բոլորը տեսնելով զարմացան։ Բայց որովհետև երդվել էին նրան, թե դու ում գլխին դնես, մենք



կհնազանդվենք նրան, թույլ տվին։ Պատրիարքը մոտեցավ, կոշիկները հագցրեց նրա ոտքերը ու երկրպագեց։ Նույնպես բոլոր մեծամեծները երկրպագեցին նրան և ասացին. «Կեցցե Մորիկ արքան»*։

Սա ժողով արեց Քաղկեդոնի դավանության քննության համար. կանչեց հայոց վարդապետներին։ Գնացին Վրթանեսն ու Գրիգորը և այլ վարդապետներ. սրանք ոչ մի օգուտ չտալով հույներին՝ վերադարձան նզովելով։ Սրա մոտ [Մորիկի] ապաստանեցին պարսից տերությունից փախած հայ նախարարները, իսկ սա ամարդի վերաբերմունք ցույց տալով՝ ոչ մի գթություն չընծայեց նրանց, այլ նախորդ թագավորներից նրանց համար նշանակված թոշակները կտրեց։

Սրա մասին ասում են, թե իր հոր մոտ [մարդիկ] ուղարկեց, որ [հայրը] թողնի պանդխտությունը և գա վայելի նրա փառքը, իսկ եթե ոչ, խրատ ուղարկի իրեն, որով կարողանա թագավորությունը կառավարել։

Պաշտոնյաները գնացին նրան գտան, երբ բանջարանոցն էր մշակում. հաղորդեցին նրան արքունական հրամանը։ Նա չպատասխանեց ու ասաց. «Ես վայել չեմ թագավորի հայր լինելու»։ Եվ ինքը սկսեց այնտեղ բանջարանոցում եղած մեծամեծ կաղամբները արմատախիլ անել, գլուխները կտրել ու հողով ծածկել, իսկ փոքրերը փայփայել ու խնամել։ Մարդիկ տեսնելով այդ՝ նրան ցնդած համարեցին ու թողեցին հեռացան։ Իսկ ինչ նա արեց, նրանք չհասկացան։ Գալով թագավորի մոտ՝ պատմեցին ամեն բան և այն հիմարությունը, որ բանջարանոցում արեց։

Իսկ երբ Մորիկը լսեց, ծիծաղեց ու ոչինչ չհայտնեց. և բռնելով մեծամեծներին, որոնց իր թագավորության թշնամի կարծեց և բոլորին վերացրեց, որպեսզի յուր թագավորության դավադիր չլինեն. իսկ փոքրերին նշանակեց նրանց տեղերը։ Եվ կանչելով իր հոր մոտ ուղարկված մարդկանց, ասաց նրանց. «Այս են իմ հոր խրատները, որ նա բանջարանոցում արեց, իսկ դուք չհասկացաք»։

---

* Սա ավելի շուտ զրույց է. Մորիկը Տիբերիոսի զորապետներից էր. Տիբերիոսը փեսայացրեց նրան։ Վերջինիս մահից հետո Մորիկը կայսր հռչակվեց։

Մի մասն էլ ասում է, թե սա [Մորիկը] Կապաղովկիայի Արփուս[133ա] գյուղից էր, որը հետո զորավար Տիբերիոսը քաղաք դարձրեց։

Բայց Մորիկը իր դաժան բնավորության պատճառով տանջանքով ու որդիներով ողորմելի մահով ոչնչացվեց իր զորքի կողմից։ Որովհետև իր զորքերը, որոնց առաջնորդն էր Փոկասը, որ նշանակում է հուր, ապստամբվեցին նրա դեմ. սա սպանեց նրան, իսկ ինքը նրա փոխարեն թագավոր դարձավ։

Պարսից Որմիզդ արքայից հետո Մորիկի օժանդակությամբ թագավորում է Խոսրովը։ Այս ժամանակ Սմբատ Բագրատունին[134] մեծ քաջությամբ շատ կռիվներ մղեց Խոսրովի թշնամիների դեմ. այդ բանի համար [Խոսրովը] մեծարելով Սմբատին՝ նրան է տալիս Վրկան երկրի մարզպանությունը[135]։ Նա գնալով, գտնում է Հայաստանից գերի տարվածներին այնտեղ, որ Սագաստան է[136] կոչվում։ Նրանք մոռացել էին լեզուն ու դպրությունը, որ նորոգում է Սմբատը։ Եվ Հաբել անունով մեկին հայոց կաթողիկոսի միջոցով եպիսկոպոս է ձեռնադրել տալիս ու սուրբ Գրիգորի աթոռի վիճակ է հաստատում [այնտեղ]։

Տեր Աբրահամի տասներորդ տարում ու հայոց երեսունյոթ թվականին (688 թ.) ճարտարախոս սորի այրեր եկան Հայաստան և կամենում էին Նեստորի[137] աղանդը տարածել, բայց նրանց նզովելով հալածեցին. սակայն ոմանք [այդ աղանդը] ընդունեցին։

Նրանք թարգմանեցին սրանց, [աղանդ ընդունողների] համար սուտ գրքեր՝ Գորտոսակը, Կիրակոսակը, Պողոսի տեսիլքը, Ադամի ապաշխարությունը, Դիաթեկը, Տիրոջ մանկությունը, Սերկոսը, Օրհնության ճիռը, Անթարջելի մատյանները* [հայտնությունները], Մանիի՝ Ավետարանի մեկնությունը[138]։ Ով որ հավատում է նրանց, ուղղափառների կողմից նզովվում է։

Տեր Աբրահամից հետո կաթողիկոսությունը ստանձնում է կոգովիտցի[139] տեր Հովհաննեսը՝ Բագարան գյուղից՝ քսանվեց տարի։ Պատմագիրներից ոմանք ասում են, թե երկուսն էլ, այսինքն՝ Աբրահամը և Հովհաննեսը միևնույն օրն են վախճանվել, իսկ մի մասը ժխտում է։

* «Անթարջելի մատեանքը» մի ինչ-որ աղանդի կանոնական գրությունների հավաքական անունն է։ Սրանք սորի նեստորականների միջոցով բերվելով Հայաստան՝ 6-րդ դարի վերջում թարգմանվեցին հայերեն (տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Ա., էջ 890)։



Իսկ երբ պարսից արքա Խոսրովը լսեց Մորիկի մահվան մասին, վրեժխնդիր եղավ, որովհետև միմյանց հետ դաշնակիցներ էին. բյուզանդական շատ գավառներ ավերեց։ Նաև Պաղեստին* է ուղարկում իր Խոռիան զորավարին, որ գնալով պաշարում է սուրբ քաղաք Երուսաղեմը, գրավում է այն ու կոտորում նրա բնակիչներին, գերում է Քրիստոսի սուրբ խաչը ու տանում Պարսկաստան։ Նա մեծ զորքով գնաց Հերակլ թագավորի վրա ու նեղ դրության մեջ դրեց մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը։

Իսկ Հերակլես կայսրը խազիրների[140] թագավորի՝ Խաքանի[141] օգնությամբ գնաց Պարսկաստան, սպանեց Խոսրովին, վերադարձրեց սուրբ խաչը և ուղարկեց Երուսաղեմ։

Այս Խաքանին ծաղրեցին Տփղիս քաղաքի բնակիչները. տանելով մի դդում՝ վրան նկարեցին Խաքանի կույր պատկերը, իբր թե նրանց աչքերը նեղ են ու փոքր. դդումը դրեցին նրա դիմաց պարսպի վրա ու սկսեցին նետաձգությունը։ Իսկ նա այս տեսնելով՝ խիստ բարկացավ. բայց որովհետև ձմեռ էր, փոխհատուցել չկարողացավ։ Բայց երբ գարունը եկավ, պաշարեց ու գրավեց քաղաքը. հրամայեց կոտորել տղամարդկանց, կանանց և մանուկներին. ավերեց քաղաքը, խլեց նրանց ինչքը, գնաց իր քաղաքը։

Իսկ մարզպաններ Ճիհր Բուրզենի, Ճիհր Վշնասպ Սուհենի, Ճիհր Վզոն Միհրանի և այլ արաբների սպանությունից հետո երեսուն տարի մարզպան եղավ Դավիթ Սահառունին[142]։ Սրա օրոք վաթսուներկու թվականին (613 թ.) կառուցվեց Մրենի[143] կաթողիկեն։

Տեր Հովհաննեսից հետո կաթողիկոսությունը ստանձնում է տեր Կոմիտասը՝ ութ տարի։ Սա կառուցեց սուրբ Հռիփսիմեի պայծառատես ու հրաշալի վկայարանը, որովհետև առաջին կառույցը անշուք էր։ Սրա մեջ [հին շենքի]

* Բնագրում՝ ի Պաղեստինէ, որ ակնհայտ սխալ է. Խոռիան զորավարը Պարսկաստանից է ուղարկվում Պաղեստին և ոչ թե Պաղեստինից՝ Պաղեստին։ Բնագիրը պետք է ուղղել՝ ի Պաղեստին։

գտնում է [Կոմիտասը] սրբի ոսկորների մասունքները, որ կնքված էին սուրբ Գրիգորի ու սուրբ Սահակի մատանիներով. չհամարձակվեց բանալ, այլ իր մատանիով կնքեց ու ամփոփեց այնտեղ. սրբերի համար շարականի երգ ստեղծագործեց հայերեն այբուբենով, որի սկիզբն է այս՝ «Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի»[144]։

Պարսից արքա Խոսրովից հետո թագավոր է դառնում Կավատը։ Սա գերությունից ազատում է Աղվանքի Վիրո կաթողիկոսին, որին բանտարկել էր նրա հայրը։ Կավատից հետո [թագավորում է] Արտաշիրը, ապա Հերակլի հրամանով՝ Խոռոյամը, ապա՝ Խոսրովը, որանից հետո՝ Բորն ու Զարմանդուխտը։ Սրանք բոլորն էլ սակավակյաց էին։ Սրանցից հետո [թագավորում է] Հազկերտը։

Իսկ տեր Կոմիտասից հետո կաթողիկոսությունը ստանձնում է տեր Քրիստափորը՝ երկու տարի և ապա Եզրը՝[145] տասը տարի։

Իսկ Հերակլ կայսրը գալիս է Կարին քաղաքը, ժողով է անում, կանչում է նաև հայոց Եզր կաթողիկոսին։ Իսկ նա իր հետ չտարավ իմաստուն այրեր, մանավանդ Հովհան վարդապետ Մայրավանեցուն[146], որ լավատեղյակ էր աստվածաշնչական գրքերին։ Գնաց, ընդունեց Քաղկեդոնի աղանդը։ Կայսրը նրան պարգևեց Կողբի[147] երրորդ մասը և ամբողջ աղահանքը։ Եվ գալով Հայաստան՝ փոխեց եկեղեցու ամբողջ ուղղափառ կարգ ու կանոնը, Հակոբի ու Կյուրեղի ընթերցվածները, որոնց* փոխարեն Արտեմոնի ընթերցվածը դրեց[148], Նրան հանդիմանեց սուրբ վարդապետ Հովհանը՝ ասելով՝ թե ինչո՞ւ տգիտաբար համաձայնվեցիր ու քանդեցիր բարի կարգ ու կանոնը, որ սուրբ Գրիգորից մինչև այսօր պահված էր մեր հայոց ազգի մեջ։ Իսկ Եզրը զղջալու փոխարեն սուրբին անարգանքներով հալածեց՝ նրան Մայրագոմեցի կոչելով։

Հովհանի աշակերտներից Սարգիս անունով մեկը աղանդ մեջտեղ հանեց, և Եզրը հռչակեց, թե դա Հովհանի աղանդն է. գրություն շարադրեց ու այլ աղանդավորների հետ բանադրեց՝ նրա աշակերտի խոսքերը իրեն՝ Հովհանին վերագրելով. բայց թող ոչ ոք չհանդգնի սրբին բամբասել։

* Բնագրում այնորիկ, հարմար համարեցինք հոգնակին։



Հովհանը գնաց, Գետարակ բերդի[149] կողմերը իր համար մի լուռ տեղ ընտրեց ու այնտեղ մնալով մշտապես աստծու հետ էր խոսում։

Աստված իբրև նրա սրբության վկայություն մի հրաշք ցույց տվեց։ Նա ուներ մի էշ, որ ծառայում էր նրա կարիքների համար. մի արջ պատահեց դրան ու կերավ։ Երբ Հովհանին հայտնեցին, գնաց արջին ասաց. «Որովհետև դու սպանեցիր մեր սպասավորին, այժմ նրա փոխարեն դու սպասավորիր մեզ»։ Արջը գնաց ու ամենայն հնազանդությամբ երկար տարիներ սպասարկում էր բեռնակրության և ամեն ինչի մեջ։ Շատ ժամանակ անց որսորդները հանդիպեցին ու սպանեցին արջը՝ կարծելով թե վայրի է։ Եվ երբ վանքի միաբանները տեսան, դիակը գցեցին մի փոսի մեջ։ Մինչև այսօր այդ վայրերի բնակիչները գնում, արջի թաղված տեղից հող են վերցնում։ Եվ դա Հովհանի աղոթքներով անասունների ամեն տեսակի ցավերին դեղ է լինում։ Նույնպես էլ սրբի գերեզմանը դեղ է ամեն ցավերի ու վտանգվածների, որոնք հավատով ապավինում են սրբի աղոթքներին։

Դավիթ Սահառունուց[150] հետո քսանհինգ տարի հայոց մարզպան է լինում Թեոդորոս Ռշտունին[151]։ Իսկ Հերակլ կայսրից հետո թագավորում է նրա որդի Կոստանդինը։

Երբ Քրիստոսի ծննդից սկսած լրացավ վեց հարյուր տասնութ տարին՝ հայոց թվականի վաթսունյոթ տարին, հեթանոսների մի սուտ մարգարե հայտնվեց, որ իր աղանդը վերցրել էր Կերինթոսից[152] և Արիոսականներից[153]. սրա անունը Մահմեդ էր՝ ծագումով արաբ՝ Հագարի[154] որդիներից։ Մինչդեռ սա վաճառականության համար Եգիպտոս էր գնում, Սինայի[155] անապատում հանդիպեց արիանոսական աղանդավոր մի մենակյացի, որի անունն էր Սերգիս Բխիրա։ Սա Մահմեդին սովորեցրեց սուտ աստվածագիտությունը, նրա համար գովաբանեց Մովսեսից սահմանված հին օրենքները ու ասաց. «Եթե լսես իմ խոսքերին, կլինես քո ազգին առաջնորդ ու օրենսդիր»։

Մահմեդը իր ճանապարհը շարունակեց, հանկարծ նրա մեջ մտավ պիղծ ոգի, ու նա ընկավ փրփրոտվեց։ Ընկերները տեսնելով այս՝ կանգնեցին նրա մոտ, մինչև մի քիչ ուշքի եկավ, ապա վերկացրին նրան։ Հարցրին այդպիսի կատա-

ղության պատճառը, նա ասաց, թե դա լինում է սուրբ հրեշտակի կողմից, և նրան ուղարկեցին իր ազգի մոտ իբրև պատգամավոր։ Գնաց իր քաղաքը ու սկսեց քարոզել այն, ինչ նրան սովորեցրեց սուտ քրիստոնյան։

Նա ուներ երևելի հորեղբայրներ. նրանք հալածեցին նրան ու մահվան սպառնալիք տվին, եթե կրկին այդպիսի խոսքեր լսեն նրանից։ Նա գնաց իր տունը ու տխուր-տրտում նստած էր. մտավ նրա հորեղբորորդի և փեսա Ալին ու հարցրեց տխրության պատճառը։ Նա ասաց. «Որովհետև նրանց Աստված քարոզեցի, մահվան սպառնալիք տվին ինձ»։ Ալին ասաց. «Արի գնանք դարձյալ քարոզենք, եթե մեզ արգելեն, սրով սպանենք նրանց»։ Որովհետև Ալին զորեղ մարդ էր, նաև զորեղ էին այն մարդիկ, որոնք նրա հետ էին։ Եվ երբ սկսեցին քարոզել, սաստիկ խռովություն ու կռիվ առաջացավ։ Մահմեդի կողմնակիցները պարտվեցին ու փախստական ընկնելով գնացին Փոքր Մադիամ[156], ուր հավաքված էին տասներկու հազար հրեաներ, որոնց հալածել էր Կոստանդին կայսրը։ Մահմեդը հավաքելով սրանց, գնաց իրեն հալածողների վրա ու կոտորեց նրանց։ Երբ հրեաները տեսան գործի հաջողությունը, նրան իրենց առաջնորդ դարձրին. սրանց միացան նաև այլ մադիամացիք [և ունեցան] քաղրթական[157] առաջնորդ. դարձան մեծ բանակ, շարժվեցին Պաղեստինի վրա, ջարդեցին հռոմների զորքերին, որոնք հափշտակում էին նրանց վաճառականների ունեցվածքը։

Երբ տեսան այդ հաղթությունը, գնացին պարսից տերու-
թյան վրա, սպանեցին պարսկական Հազկերտ թագավորին,
և վերացավ պարսից Սասանյան թագավորությունը[158], Այս
ժամանակ արեգակի կեսը խավարեց. դա աշնան արեգ[159]
ամիսն էր, [որ տևեց] մինչև ամռան քաղոց ամիսը[160], Ապա
զորքեր ուղարկեցին երեք կողմերի վրա. մեկը դեպի բյուզան-
դական Հաց անունով վայրը, խորհրդատուն էր Հովել.
սրանք կոտորեցին յոթանասուն հազար հռոմներ։ Պարս-
կաստանի կողմը ուղարկեցին Օթման ամիրային ու Մավիե
զորավարին։ Նրանք ջարդեցին Միհրդատին ու նրա քսան հա-
զար զորքին, Հայոց սպարապետ Մուշեղին իր զորագնդի հետ
ու տիրեցին ամբողջ Հայաստանին, Պարսկաստանին, Ասորի-
քին, Եգիպտոսին, Մարաստանին, Պարթևստանին և սկսեցին



փոխել նրանց հավատները, իսկ նրանք չհամաձայնվեցին։

Իսկ մադիամացիները[161] և նրանց հետ համաձայնվողները Մահմեդից օրենքներ խնդրեցին, և սա նրանց սաստիկ խայտառակ օրենքներ տվեց։ Ասաց, թե երկրի վրա արքայությունը պետք է լինի մարմնավոր կերակուր որովայնի համար, ամուսնություն նաև հարությունից հետո, իսկ կույս մնացած կանանց հետ մշտապես պետք է խառնակություն լինի։ Օրենքներ սովորեցրեց հակառակ Հին և Նոր Կտակարանների. պետք է ճանաչել անարժաններին և անուղղաններին (ոչ մահմեդականներին). սարսափելի անարգանքով վարկաբեկեց աստծու ուխտադրությունը, որ Աբրահամի նըկատմամբ է. գրված է. «Թլպատվելու է ձեր ամեն ութօրյա արուն»*. Իսկ սա սահմանեց. երբ կամենա, թող թլպատի, ինչ հասակի էլ որ լինի. ոչ միայն տղամարդկանց, այլև կանանց անգամ։ Եվ լուսավոր մկրտության փոխարեն, որի համար մեր տեր Հիսուս Քրիստոսը ասաց. «Եթե մեկը չծնվի ջրից ու հոգուց, չի մտնի աստծու արքայությունը»**. սա ասաց. «Պետք է մշտապես լարիքներ գործել ու լոկ ջրով ցողվել և մաքրվել»։ Եվ ուրիշ շատ անարժան ու խելագար ավանդություններ ու ծաղրելիքներ։

Սա յոթ տարի եղավ օրենսգիր պատգամաբեր։

Այս Մահմեդը արգելեց սուրը. նրա խրատի խոսքով հնազանդեցրին երկրագնդի մեծ մասը։ Անդրժելի երդումով պայմանագիր կնքեց, որ մեր Հայոց աշխարհը ազատ ու համարձակ պաշտի քրիստոնեությունը։ Բայց նրանց հավատը փառաւեց հենց իրենց. ամեն տնից առավ չորս դրամ ու երեք մոթ[164] խորբալ, այսինքն՝ ցորեն, մի ձիատոպրակ, մի մազե պարան, մի տապճակ[165], իսկ հրամայեց քահանաներից, ազնվականներից ու հեծյալներից հարկ չառնել։

Բայց կոտորեցին Բզնունիքը[162], Աղիովիտն[163] ու Տարոնը[56]***, Եվ երբ տիրեցին երկրներին, կոչվեցին ամիրմումնիք։ Մահմեդի քսաներորդ տարուց հետո Իսմայելի [արաբ-

* Ծննդոց ժէ, 11—12։

** Յովհ. Գ., 5։

*** Մեզ թվում է, որ նախադասությունը իր տեղում չէ, ուստի տեղափոխեցինք։

ների] իշխանությունը գրավեցին Արաբները, Օթմանը ու Ամրը՝ երեսունութ տարի:

Եզրից հետո կաթողիկոսությունը ստանձնում է տեր Ներսեսը՝ քսան տարի[166]: Սա Դվինում կառուցեց սուրբ Սարգսի վկայարանը [եկեղեցին]: Դվին քաղաքում արաբների կողմից տասներկու հազարի կոտորածի ժամանակ սպանվածների արյունով ծածկվեց սուրբ սեղանն ու ավազանը. ավելի քան երեսունհինգ հազար էլ ուրիշների գերեցին: Հայրապետը սպանվածների ոսկորները ամփոփեց նույն վկայարանում. շինեց նաև վիրապը[167] սուրբ Գրիգորի տեղը. կառուցեց նաև տեսնողներին հիացնող սուրբ Գրիգորը[168], որ հետո արաբների կողմից ավերվեց:

Ներսեսի մոտ եկան ուղղափառ ասորիներ ու եպիսկոպոս խնդրեցին: Սա նրանցից գրավոր հավատի խոստովանություն պահանջեց, իսկ նրանք տվին հետևյալ խոսքը. «Հավատում ենք Հորը, որդուն ու սուրբ Հոգուն. Հորը, որի հայրությունն անհասանելի է, որդուն, որի ծնելությունը անբաժանելի է, ու սուրբ Հոգուն, որ Հորից է ելնում և Հոր ու որդու հետ երկրպագվում ու փառավորվում է»: Սա կցուրդ[169] են անում և մինչև այսօր կարդացվում է հայոց եկեղեցիներում տիրոջ հայտնության ճրագալույցի օրը:

Ապա Արդիշոյին ձեռնադրում է նրանց համար եպիսկոպոս:

Այնպես պատահեց, որ սա վարդավառի տոնին մեծ հանդիսախմբում եղավ Բագավանում[170]: Շարականների երգերը բազմացել էին հայոց եկեղեցիներում այնքան, որ մի գավառի երգեցողը չէր իմանում մյուս գավառի երգերը: Երբ երգեցին Վարդավառի հարցի[171] շարականը, մյուս դասը չկարողացավ փոխն [փոխաձայնությունը] ասել. փոխեցին շատ շարականներ, բայց դրանք ևս չգիտեին: Ապա Ներսես Հայրապետը ամբողջ ժողովի հավանությամբ ընտրեց կարևորն ու պիտանին, որպեսզի բոլոր եկեղեցիներում ամեն օր օրվա նշանակության համապատասխան միևնույն ժամերգությունը կատարվի: Ընտրեցին իմաստուն մարդիկ, որ շրջեն ամբողջ Հայաստան աշխարհում և նույն կարգը հաստատեն, որ մինչև այսօր գոյություն ունի:

Թեոդորոսից հետո յոթ տարի Հայաստանի մարզպան



եղավ Համազասպը: Ներսեսից հետո վեց տարի կաթողիկոս եղավ տեր Անաստասը: Սա իր մոտ կանչեց Շիրակ գավառի մեծ վարդապետ Անանիային[172], որ մի բանիբուն ու հանճարեղ մարդ էր և հրաշալի գիտեր ամբողջ տոմարական գիտությունը[173], որպեսզի հաստատեն հայոց անշարժ տոմարը, ինչպես ունեն այլ ազգեր: [Անանիան] այս բանը մեծ ջանքով գլուխ բերեց. և մինչդեռ կամենում էին ժողովով հաստատել, սուրբ Անաստասը վախճանվեց: Նրա հաջորդները անուշադրության մատնեցին այդ բանը, և կառավարվում էին նախկին կարգով: Անաստասի հինգերորդ տարում Արուճ[174] ավանում կառուցվեց կաթողիկեն, որ շինեց Գրիգոր Պատրիկը. այստեղ մկրտվեց Քրիստոսի նահատակ՝ ազգով պարսիկ Դավիթը[175], որ նախապես Սուրհան էր կոչվում. Քրիստոնեությունն ընդունելու համար Դվինում կախվեց փայտից:

Համազասպից հետո տասը տարի հայոց մարզպան եղավ Գրիգոր Մամիկոնյանը, որին սպանեցին խազիրները: Իսկ Ներսեհ Շիրակացին իշխան մնաց երեք տարի:

Անաստասից հետո վեց տարի կաթողիկոս մնաց տեր Իսրայելը, ապա տեր Սահակը՝ քսանվեց տարի: Սա պատգամավորության առիթով գնաց արաբական Մահմեդ զորավարի մոտ, որ գալիս էր կոտորելու մեր հայոց ազգին արաբների դեմ ապստամբվելու պատճառով: Հասնելով Խառան[176] հիվանդացավ* և անմիջապես մեռավ: Դեռևս Մահմեդը Խառան չէր եկել, [Սահակը] գրեց մի աղերսագիր, թե՝ «Ես եկա քեզ ընդառաջ՝ երես առ երես աղաչելու իմ ազգի համար, բայց չհասա քո տեսությանը, որովհետև նա, որ բոլորի կյանքի տերն է, ինձ կանչեց: Արդ՝ քեզ երդվեցնում եմ աստծու ուխտագրությամբ, որ վերաբերում է Աբրահամին ու ձեր հայր Իսմայելին[177], որպեսզի չար որևէ բան իմ ազգի հանդեպ չգործես, և կծառայեն ձեզ[178]: Եթե իմ աղաչանքներին լսես, իմ օրհնությունները կիջնեն քեզ վրա, իսկ եթե չլսես, անեծք կհասնի քեզ, և աստված քո զորքերի ցանկությունը կփոխի, որ չկատարեն քո կամքը: Այս երկուսից մեկն ընդունիր»:

* Բնագիրը ունի Հիւանդացաւ հիւանդութիւն, որ մեռաւ խոյ: Որ-ը ոչ մի կերպ չի առնչվում նախադասության հետ: Ճիշտն է. հիւանդացաւ հիւանդութիւն և մեռաւ խոկ., ինչպես են տարբերակները:

Երբ Մահմեդը եկավ Խառան, ամեն ինչ հաղորդեցին և
թուղթը տվին նրան։ Երբ կարդաց, հարցրեց, թե «Ո՞ւր է
նրա գերեզմանը»։ Նրան ցույց տվին տեղը, որովհետև նոր
էր վախճանվել ու դեռևս չէր թաղված։ Շտապփույթ գնաց
ըստ իրենց կրոնի ողջույն տվեց մեռյալին իբրև ողջի։ Ասում
են, թե մեռած մարմինը պատասխան տվեց ու ողջույնն ըն-
դունեց իբրև ողջ։ Եվ Մահմեդը ասաց. «Քո նամակից ճանա-
չեցի քեզ, ով դու աստծու այր։ Կանեմ ու կկատարեմ քո բո-
լոր պատվիրանները»։ Անմիջապես վերացրեց թշնամությունը
և կուսակալներ ուղարկեց հայերին, հարկ դրեց նրանց վրա,
իսկ ինքը վերադարձավ իր երկիրը։ Սահակից հետո կաթո-
ղիկոսությունը ստանձնում է տեր Եղիան։
Հերակլից հետո թագադրվում է նրա որդի Կոստանդինը։
Սրա օրով արաբները հարձակվեցին բոլոր երկրների վրա։
Սրանից հետո [թագավոր է դառնում] Հոր Համանան որդին։
Իսկ արաբական իշխանությունը Աբուբաքրից, Օթմանից ու
Ամրից հետո ստանձնում է Մավիեն։
Իսկ հայոց մարզպանությունը Ներսեհից հետո ստանձ-
նում է Աշոտը՝ երեք տարի, որ արաբների կողմից սպանվեց։
Սրանից հետո երեք տարի [իշխում է] Ներսեհ Կամսարակա-
նը[179]։ Սրանից հետո քսան տարի [կառավարում է] Սմբատ
Բագրատունի Բյուրատյանը[180]։ Սա Վարդանակերտ[181] ավա-
նում այլազգի զորքերի դեմ պատերազմեց ու Բագրևանդ[182]
գավառում քաջությամբ հաղթեց։ Սրա տասներեքերորդ տա-
րում Մահմեդը Գեղամա ծովը բաց թողեց ու Սևանը գրա-
վեց[183], իսկ սրա տասնվեցերորդ տարում Կասմ ամիրան կո-
տորեց Վասպուրականի իշխաններին[184],
Կոստանդին կայսրից հետո թագավորեց Հուստինիանոսը։
Սրա վրա հարձակվեցին իր նախարարները ու քիթը կտրե-
ցին։ Փախավ խազիրների մոտ, այնտեղ իր համար կին
առավ ու վերցրեց մեծ քանակությամբ զորք, եկավ ու կըր-
կին թագավորեց։ Նրանից հետո թագադրվում է Լևոնը, սրա-
նից հետո Ափսիմերոսը, իսկ սրանից հետո Հուստինիանոսը,
սրանից հետո Փիլիկոս Վարդանը,[185] սրանից հետո Թեոդո-
սը և սրանից հետո Լևոնը։
Արաբների իշխանությունը Մավիեից հետո գրավում է
Իզիդը, սրանից հետո Մրվանը և ապա Աբդլմելիքը։ Սա նա



և, որ Նախիջևանի եկեղեցու մեջ այրեց հայոց իշխաններին։[184]
Ապա [իշխում է] նրա որդի Վլիթը, ապա Սուլեմանը։ Սա
գրավեց Դերբենդը ու հրամայեց պարիսպը քանդել։ Քանդելու
ժամանակ գտան մի քար, որի վրա գրված էր. «Ես Մանկվոն
կայսրս կառուցեցի քաղաքի աշտարակները իմ գանձերով։
Հետագայում սա կքանդվի արաբների կողմից և իրենց գան-
ձերով կշինվի»։ Երբ քարը տեսան, քանդելուց դադարեցին ու
սկսեցին վերաշինել։

Սուլեմանից հետո իշխանությունը գրավում է Օմարը։ Սա
[նամակ] է գրում Լևոն կայսրին՝ քրիստոնեական ուսմունքին
տեղեկանալու համար։ Կայսրը իմաստությամբ լի պատաս-
խան է գրում՝ խիստ դատափետելով նրանց կրոնը։ Երբ
Օմարը կարդաց, մեծ ամոթ զգաց ու սկսեց զարշելի բաները
իրենց կրոնից դուրս գցել, չնայած չհանդգնեց ամբողջը ջըն-
ջել, սակայն անկարգ բաներից շատերը ուղղեց ու այնու-
հետև բարյացակամ էր բոլոր քրիստոնյաների, առավելա-
պես մեր հայոց ազգի հանդեպ։ Հրամայեց՝ գերվածները վե-
րադառնան Հայաստան։ Այդ ժամանակ ուղարկվեց նաև
Գողթնի[186] տեր Վահանը, որ նահատակվեց Շամ* Հեշմի օրե-
րում, որովհետև Օմարից հետո իշխանությունը գրավեց Իզի-
դը, ապա Շամը, ապա Վլիթը, իսկ սրանից հետո Մրվանը։

Տեր Եղիայից հետո կաթողիկոսությունը ստանձնում է
տեր Հովհաննես Օձնեցին։ Սա իմաստասեր ու սուրբ մարդ
էր, մարմնով ու հասակով վայելուչ, իսկ հոգով առավել ևս
գեղեցիկ։ Սրան Հեշմը կանչեց իր պալատը և դեմքի գեղեց-
կության համար շատ մեծարեց նրան, որովհետև ոսկին
խարտեց, ցանեց իր մորուքի վրա, մտավ նրա մոտ։ Հեշմը
տեսնելով հիացավ գեղեցկության վրա ու նրան հեգաբար
ասաց. «Ձեր Քրիստոսի մասին ասում են, թե չափազանց
հեզ էր ու խոնարհ և աղքատությունը ավելի էր սիրում։ Այս
բանը ցույց են տալիս նաև քրիստոնյաների կարգերը։ Նրանց
առաջնորդները աղքատությունն ու անշքությունը ավելի են
հարգում, քան փարթամությունն ու ճոխությունը։ Իսկ դու
ինչո՞ւ ես այդպես զարդարվել»։

* Բնագրում՝ շանի Հեշմայ. ճիշտ է Շամի Հեշմայ:

Սուրբը նրան ասում է. «Դու քո ծառաներից ավելի բան չունես, բացի միայն թագավորական թագից ու հանդերձանքից. դրա համար վախենում են քեզնից ու մեծարում են քեզ: Մեր առաջին հայրերը հրաշագործներ ու վարքով սքանչելի էին, այդ պատճառով նրանց ձեռքի տակ գտնվողները երկյուղում էին նրանցից ու նրանց հրամանները ջողահար կատարում, Իսկ մենք այնպիսին չենք, այդ պատճառով հանդերձներով ու զարդերով զարդարվում ենք, որպեսզի մեր հրամանները չանտեսվեն»: Եվ իր կուրծքը բանալով, նրան ցույց տվեց մազեղեն հագուստը, որ հագել էր երևացող հագուստի տակից, ու ասաց. «Այս է իմ հագուստը»:

Հիացավ արքան ու գովաբանեց քրիստոնյաների հավատը և ասաց սրբին. «Խնդրիր, ինչ որ կամենաս, կանեմ քեզ համար»: Հայրապետը ասում է. «Քեզնից երեք բան եմ խնդրում, որ քեզ համար հեշտ է տալ: Առաջինը այս է. քրիստոնյաներից ոչ մեկին չստիպես իր հավատը ուրանալ, այլ յուրաքանչյուրին թողնես իր կամքին. երկրորդ՝ եկեղեցու ազատությունը հարկի տակ չդնես ու ոչինչ չառնես քահանաներից, սարկավագներից. երրորդ՝ քո տերության մեջ քրիստոնյաները ուր էլ լինեն, համարձակ կերպով կատարեն իրենց պաշտամունքը: Սա գրավոր տուր մեզ, և իմ ամբողջ ազգը կենթարկվի քեզ»:

Հրամայեց անմիջապես թուղթ գրել ըստ նրա խնդրանքի, իր մատանիով կնքեց. տվեց նրան շատ պարգևներ, մեծ զորք դրեց նրա հետ և մեծ պատվով ուղարկեց մեր Հայոց աշխարհը: Նա եկավ և մեր երկրում գտնվող բոլոր հույներին հալածեց՝ թե վերակացուներին, թե զինվորներին: Եվ նրանք փախան այնքան շտապով, որ մինչև անգամ չհասցրին գանձերն իրենց հետ տանել, այլ թաղեցին այստեղ մեր երկրում և տեղի հանգամանքների նկարագրությունը գրավոր իրենց հետ տարան:

Եվ սուրբ հայրապետը մեր երկիրը դնելով արաբական տիրապետության տակ, ինքը ժողով է գումարում Մանազկերտում.[187] կանչում է նաև ասորիների Աթանաս պատրիարքին: Նա ուղարկում է վեց եպիսկոպոս: Նզովում է Հուլիանոսի[187] հետևողներին ու Քրիստոսին ոչնչանալի ասողներին՝ Բարշապուհին, Գաբրիելին՝ Հայոց ու ասորիների բանսար-



կոսներին և կանոնական օրենսդրությամբ բարեկարգում է եկեղեցին՝ մերժելով Քաղկեդոնի դավանությունը, որ Հերակլ կայսեր և Եզր կաթողիկոսի օրերից անկարգության մեջ էր պահում մեր Հայոց աշխարհը: Կարգեց սուրբ Հակոբի և Կյուրեղի ընթերցվածները, բոլոր տոները, ինչպես որ կարգել էր սուրբ Գրիգորը: Դեկտեմբեր ամսի 25-ին տոնեցին Դավիթ մարգարեի ու Հակոբ առաքյալի [տոները], որ այլ ազգերը տիրոջ ծննդյանն են տոնում. երգեց «Հարցնի»[188] շարականը. «Ամեն բանում մեղանչեցինք և քո պատվիրանները չպահեցինք. արդ խոստովանում ենք քեզ», որ մինչև այսօր ժամերգվում է Հայոց եկեղեցիներում՝ սկսած հարյուր յոթանասունհինգ թվականից (726 թ.) մինչև վեց հարյուր իննսուն թվականը (1241 թ.), որ այժմ մեր ժամանակն է: Եվ այսպես կարգավորելով մեր երկիրը ամեն առաքինություններով՝ ինքը ուսուցչությամբ ու աղոթքներով էր զբաղվում: Շինում է նաև մի մեծ եկեղեցի իր Օձուն[189] գյուղում, որ մոտ է Լոռե[189] քաղաքին. և ինքը ընտրելով գյուղից քիչ հեռու բնակության տեղ՝ այնտեղ էր նստում:

Եվ մի օր, երբ սուրբը աղոթում էր, երկու ահավոր վիշապներ հարձակվեցին այն տեղի վրա, որը առաքինի մարդու նստավայրն էր: Նրա սպասավորը տեսավ, զարհուրեց ու աղաղակ բարձրացնելով դիմեց սրբի օգնությանը: Սուրբը խաչակնքեց նրանց դիմաց, և անմիջապես քարացան ու մինչև այսօր կան*: Վիշապի պորտից ջուր բխեց, որ բուժիչ է ամեն օձահարին, ով ապավինում է սրբի աղոթքներին:

Հայրապետությունը վարելով տասնմեկ տարի՝ պարկեշտ կյանքով վախճանվեց:

Նրա մահից հետո տասներեք տարի կաթողիկոս եղավ տեր Դավիթը: Սա Կոտայք գավառի Արամունիքից[190] էր: Սա աթոռը Դվինից փոխադրեց Արամոնք. այստեղ շինեց եկեղեցի ու հայրապետական կացարան, որովհետև նեղվեց Մահմեդի ոճրագործ ազգից: Նրանից հետո քսաներեք տարի կաթողիկոս նստեց տեր Տրդատը: Սա Օթմուս[191] գյուղից մի պարկեշտ, սուրբ մարդ էր և փայլում էր ամեն առաքինությամբ: Սրա

* Հին Հայաստանում քարե կոթող վիշապները ջրի աստվածներն էին: Օձունից բացի գտնվում են նաև այլ վայրերում:

օրոք արաբական տապատակությունները դադարեցին։ Սրա-
նից հետո երեք տարի կաթողիկոս եղավ մյուս տեր Տրդատը,
ապա տեր Սիոնը՝ ութ տարի։ Տեր Տրդատը Դասնավորքը[192]
գավառի Բվայնից էր, իսկ տեր Սիոնը՝ Բագավանից։ Սա
Սիմ[193] կոչված լեռան ստորոտում ցամաքած աղբյուրը
աղոթքների ազնությամբ կրկին բխեցրեց։

Իսկ Լևոն կայսրից հետո թագավորում է նրա որդի Կոս-
տանդինը։ Սա կոչվեց Կավալինոս, այսինքն Թրիքհավաք,
որովհետև արաբական զորքերը բանակել էին Ալիս գետի
ափին, հրամայեց թրիք հավաքել և լցնել գետը։ Նրանք տես-
նելով՝ ահաբեկ եղան, կարծեցին, թե զորքը անհամար է, և
փախան նրանից։ Պատմվում է, թե մի օրում սա միմյանց
հետևից հինգ առյուծ սպանեց։ Սա Կարին քաղաքը գրավեց,
իսկ երկու տարի հետո այն վերակառուցեց Իպիտ ամիրան։

Մրվանից հետո արաբական իշխանությունը գրավում է
Աբդլան, սրանից հետո մյուս Աբդլան, մի ժանտ ու փողա-
սեր մարդ, որին իր ազգը կոչում էր Աբդլդանգի, այսինքն
դանգի [փողի] հայր կամ դանգի [փողի] ծառա, որովհետև
արաբների լեզվով այսպես է նշանակում*, քանի որ փողն
ավելի էր սիրում քան աստծուն։ Սա շինեց Բաղդադը**։ Ան-
թիվ չարիքներ բերեց մեր Հայոց աշխարհի գլխին հարկա-
պահանջությամբ, հափշտակությամբ ու այնքան նեղեց,
մինչև իսկ մեռելների համար կենդանի մնացածներից հար-
կեր էր պահանջում։ Մեր Հայաստան աշխարհում փողը վեր-
ջացավ, կոտորած եղավ Քաղյանում, Մրենում, Թալինում, որ-
տեղ յոթ հարյուր հոգի սպանվեցին ու հազար երկու հարյուր
մարդ գերվեցին։ Մուշեղ Մամիկոնյանն ու Սամվելը հայոց այլ
ազատանու հետ զատկի օրերում արաբների կողմից կոտոր-
վեցին։

Այս ժամանակ հայոց երկու հարյուր քսաներկու թվակա-
նին (773 թ.) Ստեփանոսը պալատական քահանա էր, որ
բանիբուն էր ճանաչվում, հասավ բոլոր իմաստասիրական և
քերականական [քերականական, գրական, գրագիտական]
արվեստների կատարը՝ հոգևորական առաքինությամբ հան-

* Ուզում է ասել աբդլա արաբերեն նշանակում է հայր կամ ծառա։

** Բաղդադը կառուցվել է սկսվել 763 թ.։



ցերն։ Մեր Հայոց աշխարհում կային նաև այլ ընտիր ու լու-
սավոր վարդապետներ. տեր Եփրեմն ու Անաստասը, Խաչիկն
ու Դավիթ Հոռոմայրեցին, մեծ իմաստասեր Ստեփանոս Սյու-
նեցին՝ վերևում հիշատակված Մովսեսի աշակերտը, որ հու-
նարենից հայերենի թարգմանիչ եղավ, թարգմանության հետ
ստեղծագործեց նաև քաղցր եղանակով հոգևոր երգեր, շա-
րականներ, կցուրդներ ու այլ երգեր։ Գրեց ավետարանների,
քերականության, Հոբի և «Տէր, եթէ շրթանցն գիշերոյի» հա-
մառոտ մեկնությունները։

Սուրբ Ստեփանոսի մասին ասվում է, թե մանկական հա-
սակում վարժվել ու կրթվել էր սուրբ գրքերով։ Սրան հանդի-
պում է հակաճառող Սմբատ ասպետը՝ մի երկաբնակ[194]
մարդ։ [Սյունեցին] դրանից դժգոհ մնալով գնում է Բյուզան-
դիա. այնտեղ գտնում է մի ուղղափառ մենակյաց և մնում է
նրա մոտ ու սովորում է նրանից։ Սմբատը լսելով՝ գրում է
Բյուզանդիայի թագավորին, թե Ստեփանոսը հերձվածող է,
որ հայհոյում է ձեր դավանությունը, այդտեղ այսինչ անու-
նով մենակյացի մոտ է կանգ առել։ Թագավորը խիստ բար-
կանալով՝ նրան կանչում է պալատ։ Մենակյացը նրան խրատ
է տալիս, թե քո մասին ասա. «թափառական մուրացիկ եմ»։
Երբ կայսրը այս լսեց, բարկությունը իջավ։ Ստեփանոսը հա-
մարձակություն ստանալով՝ աղաչում է կայսրին իր համար
բանալու սուրբ գրքերի արկղը։ Եվ գտնելով հավատի վերա-
բերյալ մի ոսկետառ մատյան, դրեց կայսեր առջև։ Կարդա-
լով այն՝ [կայսրը] նրան ուղարկում է Հռոմ քաղաքը, որ-
պեսզի այնտեղից բերի երեք համաքարոզ* գրքեր այն
գրքերից ճշմարիտ հավատի համար, որպեսզի երկիրը այն
կրոնին դարձնեն։

Իսկ նա Հռոմից գրքերը առած անտես է անում ինքնա-
կալի հրամանը, գալիս է Դվին քաղաքը՝ իր երկիրը նրանցով
լուսավորելու։ Տեր Դավիթը նրան ձեռնադրում է Սյունիքի
եպիսկոպոս Սյունիքի իշխաններ Քուրդոյի ու Բաբգենի խնդ-
րանքով։ Մի տարի կառավարելով աթոռը՝ պոռնիկ կանանց

* Համաքարոզ նշանակում է միմյանց հետ միաբան, իրար չհակա-
ռող՝ համապատասխան։ Այդ երեք գրքերը ըստ Օրբելյանի՝ Կյուրեղի,
Աթանաս Ալեքսանդրացու և Եպիփանի երկերն էին։

ձեռքով Մող[194] գավառում սպանվեց. մարմինը վերցրին բե-րին Արկազյան սենյակը[195] ու այնտեղից փոխադրեցին Թա-նահատների[196] վանքը թաղելու։

Երանելի Ստեփանոսը գրքերը Հռոմից բերեց Սյունիքի եպիսկոպոսությունը՝ Հայոց եպիսկոպոսների երեք դաս հաստատվեց։

Իսկ Նոյ անունով մի ոմն մենակյաց երազում տեսավ, թե Ստեփանոսը գոգը արյունով լիքը բռնել էր փրկչի առջև և ասում էր. «Տես, տեր, այս, որովհետև քո՛ դատաստաններն են արդար»։ Մենակյացը հայտնելով գավառի վրա գալիք ցասման մասին՝ պահանջում է աղոթքի ելնել։

Եվ ահա ի վերուստ մի անթափանցելի խավար բռնեց Մողի սահմանը, ու քառասուն օր այդ վայրը շարժվեց. խո-րասույզ լինելով՝ կենդանի-կենդանի թաղվեցին մոտավորա-պես տասը հազար մարդ։ Այդ պատճառով [ըստ Կիրակոսի Մողի գավառը] Վայոց ձոր անվանվեց մինչև այսօր[196]»։

Նրա [Ստեփանոսի] մասունքներից բազմաթիվ բժշկու-թյուններ են լինում տեսակ-տեսակ ցավերով ու հիվանդու-թյուններով հիվանդացածներին, ովքեր հավատով ապավի-նում են սրբի բարեխոսությանը։ Որովհետև աստված այս-տեղ իր փառավորիչներին փառավորում է, իսկ հանդերձյալ կյանքում տալիս է պատրաստված բարիքները, «որ աչքը չի տեսել, ականջը չի լսել, մարդու սիրտը չի զգացել»*։

Ապա տեր Եսային, որ Եղապատրուշ[197] գյուղից էր, աստ-ծու շնորհներով իր ժողովրդի կարիքների համար քահանա-յության ու եպիսկոպոսության աստիճանից հայրապետու-թյան է կանչվում արժանավորապես տասներեք տարի։ Նրա մահից հետո Իբնդոկլը** Դվինում կողոպտում է եկեղեցին***, և մեծ կաշառքով հաջորդում է տեր Ստեփանոսը մի տարի. սա Դվինից էր։ Սրանից հետո հաջորդում է տեր Հովաբը մեկ տարի. սա Ոստանից [Դվին] էր Կուրապաղատի[198] [ապա-

* Ա Կորնթ. Բ, 9։

** Սամվել Անեցին ունի նաև Իբնդակլ. հավանորեն ճիշտ է Իբն Դակլի կամ Դոկլի=Դակլի՝ Դոկլի որդի։

*** Բնագրում չկա Դվինում (ի Դուին), իսկ այդ դեպքում չի հաս-կացվում որ եկեղեցին է կողոպտում Իբնդոկլը։ Սամվել Անեցին ունի զե-կեղեցին ի Դուին։ Ուղղում ենք ըստ այդմ։



րանքից]։ Սրանից հետո մի տարի [կաթողիկոս եղավ] տեր Սողոմոնը, որ Մաքենացիների[199] վանքից էր և խիստ ծերա-ցած։ Սրանից հետո տեր Գևորգը՝ երեք տարի, որ Խուլ* որբուկ էր կոչվում. սա Արագածոտնից[200] էր։ Սրանից հետո տեր Հովսեփը՝ տասնմեկ տարի. սա Արագածոտնի Սուրբ Գրի-գորի միաբաններից էր։

Կոստանդին կայսրից հետո թագը գրավում է Լևոնը, որից հետո Կոստանդինը և նրա Եփինե մայրը։ Սրանց օրոք Հռո-մում տեղի ունեցավ պատկերների կանգնեցումը [ընդունվեց պատկերապաշտությունը]։

Այնպես եղավ, որ սրանք տեսան մի մարմարյա մեծ տապան ու զարմացան. հրամայեցին տապանը բանալ ու նրա մեջ գրված գտան, թե «Ի՞նչ օգուտ է ինձ այս ծածկելը, քանի որ Կոստանդինի ու նրա մայր Եփինեի օրոք արեգակը ինձ տեսնելու է»։ Տասը տարի միասին թագավորելուց հետո իր մորը գահընկեց արեց Կոստանդինը, ինքը թագավորեց յոթ տարի։ Ապա մայրը որդուն բռնեց, փորեց նրա աչքերը ու ին-քը թագավորեց հինգ տարի։ Սրանից հետո թագավորեց Նի-կիփորը։ Սրա օրոք արար երկու եղբայրներ՝ Սահակն ու Հովսեփը Կարինում Քրիստոսի համար նահատակվեցին արաց[201] ամսի տասնհինգին։ Նրանից հետո թագավորեց Մի-քայելը։ Սրա ժամանակ համընդհանուր սաստիկ սով եղավ։ Կարին քաղաքում մի օրվա մեջ գտան երեք հազար մեռել։ Նրանից հետո [թագավորեց] Լևոնը։ Սա պատկերները տա-պալեց ու կառուցեց Բյուզուն ու Արկադուպոլիսը։

Իսկ Հայոց իշխաններին Նախիջևանում այրելուց ու Հայոց հիսունչորս թվականից հետո մարզպան** եղավ Աշոտ Բագ-րատունին տասնյոթ տարի, սրանից հետո Սմբատը՝ քսաներ-կու տարի, սրանից հետո Աշոտ Մսակերը՝ քսան տարի, ապա Աշոտի որդի Սմբատը, որը Աբլաբաս էր կոչվում՝ երեսունհինգ տարի։ Սա Երազգավորսում[202], որ այժմ Շիրակավան է կոչ-վում, մեծապայծառ զարդարանքով մի տաճար է կառուցում։

Իսկ արաբական իշխանությունը Աբդլայից հետո ստանձ-

* Խուլ կամ խուլ նշանակում է ուռուցք։

** Այս ժամանակվա իշխանները մարզպան չէին կոչվում։ Ըստ Ալի-շանի իշխանների կարգն էլ ճիշտ չէ։

նում է Մահադին, ապա Մուսեն, սրանից հետո Ահարոնը, ապա Մահամադը, ապա Մահմուդը, ապա Աբուսահակ Մահմեդը ու սրանից հետո Ահարոնը։

Իսկ Հովսեփից հետո քսանհինգ տարի կաթողիկոս եղավ տեր Դավիթը. սա Մազազի[203] Կակաղ գյուղից էր։ Սրանից հետո քսաներկու տարի [կաթողիկոս եղավ] տեր Հովհաննեսը։ Սա Կոտայքի Ովայք[204] գյուղից էր։ Սրա ութերորդ տարում մի քանի չարախոսներ նույն գյուղից՝ սրբի մասին հայհոյական խոսքեր խոսեցին. սրանք իբրև գրախոսներ չարամահ կիրքով սատկեցին, ինչպես նրանք, որոնք Երուսաղեմի եպիսկոպոս Նարկեսոսի ժամանակ էին։ Նրանից հետո տեր Զաքարիան էր, սա Կոտայք գավառի Ձագ[205] գյուղից էր։ Մի օրում նա ամեն ինչով արժանի դարձավ սարկավագության, քահանայության ու կաթողիկոսության. մի սուրբ ու առաքինի մարդ էր, [աթոռակալեց] քսաներկու տարի։

Սրա օրերում արաբների գլխավորը եղավ մի անօրեն ու աստվածատյաց մարդ, որի անունն էր Ջաֆր։ Սա Քրիստոսի անվանը խիստ նախանձում էր ու շատերին գայթակղում էր դիմելու ուրացության և առավել շատերին, որոնք չէին համաձայնվում նրան, դաժան տանջանքներով սպանում էր։ Շատ չարիքներ գործեց իր իշխանության տակ գտնվող երկրներում, առավելապես Հայաստանում՝ սպանությամբ ու գերությամբ, որովհետև Ապուսեթ անունով մի ոստիկան* ուղարկեց. սա եկավ բռնեց Տարոնի իշխան Բագարատին և ուրիշ շատերի։ Այս իմանալով Խութ[206], որ Սասուն է կոչվում, լեռան բնակիչները, եկան սպանեցին Ապուսեթին։ Ջաֆրը այս լսելով՝ կատաղեց և ուղարկեց ազգությամբ թուրք Բուղա անունով մի զորապետ, որ խորամանկ ու անօրեն մարդ էր։ Սա եկավ ավերեց մեր Հայոց աշխարհը, որը՝ խաբեությամբ, որն էլ պատերազմով, քշեց Սամարա գերության և Հայոց Սմբատ սպարապետին էլ խաբեությամբ տարավ Ջաֆրի մոտ։ Նա բանտարկեց Սմբատին, որ Քրիստոսին ուրանա. սա չհամաձայնվեց անօրենի հրամանին, այլ համարձակորեն պաշտում էր Քրիստոսին և պահվեց նույն բանտում, մինչև

* Ոստիկան նշանակում է կուսակալ, երկրի կառավարիչ, գլխավոր իշխան։ Հայաստանի արաբ կառավարիչները կոչվում էին ոստիկան։



որ այնտեղ մեռավ և նահատակի անուն ժառանգեց։ Ուրիշ շատերն էլ Քրիստոսի համար նահատակվեցին, մեռան անօրենի ձեռքով։

Նանան անունով մի ոմն ասորի սարկավագի իր քարոզության հաջակման պատճառով բռնեցին բերին Ջաֆրի մոտ. նա համարձակորեն խոստովանեց, որ պաշտում է Քրիստոսին։ Նրան տանջելով երկար ժամանակ բանտարկեցին, հետո աստծու խնամակալությամբ արձակվեց։ Սա պարզ խոսքերով գրեց Հովհաննու ավետարանի մեկնությունը։ Նույնպես և Հայոց իշխաններից Ստեփանոս անունով մեկը, որ Կոն էր կոչվում, նահատակությամբ վախճանվեց Քրիստոսի համար։ Շատերը մահվան երկյուղից ուրացան ճշմարիտ աստծուն։ Եվ այլ շատ չարիքներ բերեց մեր երկրի գլխին, որոնք կգտնես Թովմայի, Շապուհի և այլ պատմագիրների գրքերում։

Հայոց հարյուր իննսունչորս թվականին* (745 թ.) ու արաբների հազար յոթանասուներեքին Ջաֆրը Տիգրիս գետի վրա շինեց Բաղդադը, որ Բաբելոնից չորս օրվա ճանապարհ հեռու է։ [Այդ ժամանակ] մի կին ծնվեց, երեսուն տարի ապրեց ու ոչինչ չկերավ։

Նահատակ Սմբատի մահից հետո իշխանությունը ստանձնում է նրա որդի Աշոտը**։ Սա իր բոլոր նախնիներից ավելի բարձր գտնվեց, որովհետև սպարապետությունից հետո եղավ իշխանաց իշխան և ապա թագավոր ճանաչվեց արաբական ու բյուզանդական երկու թագավորների կողմից էլ։ Ջաֆրից հետո թագը ստանձնում է Մահմեդը, ապա Ահմադը, ապա Արդլան և հետո Մահմեդը։ Սա Աշոտին իշխանաց իշխան կարգեց, ապա թագ տվեց նրան։

Իսկ Լեոն կայսրից հետո թագը ստանձնում է Միքայելը, սրանից հետո՝ Թեոփիլոսը, սրանից հետո՝ Միքայելը, ապա՝ Վասիլը։ Ասում են, որ սա Տարոնի Թիլ գյուղից էր։ Սա կառուցեց Սուրբ Զորավարը և կրկին արաբական թագի վրա

* Բաղդադը հիմնադրել է Աբդուլլա Աբու-Ջաֆար ալ Մանսուր իբն Մուհամմեդը 763 թ.։ Կիրակոսը շփոթել է։

** Աշոտ Երկրորդը (Երկաթ)։ Ըստ Ալիշանի Աշոտի թագավորելուց առաջ Վասիլը մեռել էր։

Թագ ուղարկեց Աշոտին։ Աշոտին թուղթ գրեց Կոստանդնուպոլսի Փոտ պատրիարքը և տերունական խաչից մաս ուղարկեց։ Աշոտի հրամանով [Փոտի թղթի] գեղեցիկ ու իմաստասիրական պատասխանը գրեց Իսահակ վարդապետը։

Արդ՝ Արշակունիների թագավորության վերացումից մինչև Բագրատունիների թագավորությունը անում է չորս հարյուր երեսունչորս տարի[207]։

Հայոց երեք հարյուր երեսունչորս թվականին (885 թ). թագավորեց աստվածավախ ու բարեպաշտ, եկեղեցու զարդարիչ ու աստծու սպասավորներին սիրող Աշոտը, որ հայոց եկեղեցիները զարդարեց մեծ զարդերով ու պայծառությամբ։ Սա երեսուներկու տարի իշխանաց իշխան մնաց ու հինգ տարի թագավորեց Հայաստանի վրա. վախճանվեց խաղաղ մահով ու ճշմարիտ հավատով։ Սրանից հետո քսանչորս տարի թագավորեց նրա որդի Սմբատը։ Սա Քրիստոսի համար նահատակությամբ վախճանվեց Դվինում՝ Ապուսեթի որդի Հուսուփի կողմից՝ կախվելով փայտից։

Իսկ Զաքարիայից հետո կաթողիկոսությունը ստանձնում է Գառնի գյուղաքաղաքից տեր Գևորգը. սա արաբների կողմից գերվեց, իսկ աղվանից իշխանները գնեցին և ուղարկեցին։ Նրանից հետո մի տարի կաթողիկոս եղավ տեր Մաշտոցը[208]։ Սա մի սուրբ ու առաքինի մարդ էր, լցված էր հանճարով ու իմաստությամբ. բնակվում էր Սևանա կղզում մեծ ճգնակեցությամբ. քառասուն տարի հաց չկերավ ու ջուր չխմեց, մի շորով էր ու բոբիկ։ Սա կարգավորեց այն գրքերը, որոնք իր անունով կոչվում են Մաշտոց։ Հավաքելով միասնաբար կարգավորեց բոլոր աղոթքներն ու ընթերցվածները՝ կցելով իր կողմից գրված հավելված, որ իր մեջ պարունակում է քրիստոնեության հավատի կարգուկանոնը։ Սա հասնելով պատվական ծերության՝ վախճանվեց փառքով ու պատվով։ Սրա մարմինը գերեզման դրվեց Գառնիում[209] Տրդատի սքանչելի թախտի մոտ։ Եվ նրա գերեզմանի վրա շինեցին մի վայելուչ եկեղեցի։

Սրանից հետո աթոռը ստանձնում է նրա աշակերտ ու ազգական տեր Հովհաննեսը[210], [որ աթոռակալում է] քսանութ տարի։ Սա իմաստուն ու ճարտարաբան մարդ էր Գառնի գյուղաքաղաքից, որտեղից սուրբ հայրապետ Գևորգն էր։ Նա մի գեղեցկահյուս պատմություն գրեց [այսինքն] թե ինչ մեծամեծ չարիքներ գործեց արաբների անօրեն ազգը ամբողջ աշխարհում։

Այժմ այստեղ ցանկանում եմ մի փոքր կրկնել՝ արաբական չար ազգի պառակտման մասին, որովհետև մեր փրկիչ ու աստված տեր Հիսուս Քրիստոսը ասում է, թե՝ «Ամեն թագավորություն իր վրա բաժանվելով՝ քայքայվում է»*, ինչպես և սրանցը, որովհետև տերությունը բաժանվել է շատերի վրա։ Սոփարը տիրում է Խորասանի երկրին, Ավալիկ Ապուբերոսը՝ բասրացիների[211] քաղաքում, Շեխի որդի Հիսեն՝ Պաղեստինում, Ասլտիի որդին՝ Դիլմաց[212] աշխարհում, իսկ ուրիշները զանազան տեղեր իշխանություններ բարձրացնելով՝ ջանում էին բռնությամբ իրար տիրել։ Դրա համար անօրենների անունները դժվար գտնվեցին։ Բայց դրանց կողմից այլևայլ չար ու ամարդի ոստիկաններ էին ուղարկվում մեր երկիրը, ինչպիսիք էին գազանաբարո Բուղան և ավելի անօրեն Ափշինը՝ նախապես եկած չարագործ Ապուսեթի որդին և կամ էլ ավելի չարագույն ոչնչացնող Հուսուփը** Ափշինի եղբայրը, որ Դվինում սպանեց Սմբատ թագավորին և թագավորեցրեց Արծրունյաց տանից ոմն Գագիկի՝ Դերենիկի որդուն, որ մի բարի, աստվածասեր մարդ էր ու Սմբատ Բագրատունի թագավորի քեռորդին էր։ Սա Բզնունյաց ծովի Աղթամար կղզում[213] կառուցեց արքայական քաղաք և հրաշալի ու լուսեղեն հորինվածքով մի եկեղեցի։

Այս բոլորը [ոստիկանները] չար վերակացուներ էին, որոնք գալիս էին մեր երկիրը ավերելու և ոչնչացնելու, մինչև որ վերացավ ամիրմումնիների թագավորությունը, և փոխարինեցին սելջուկցիները[214], բայց ոչ քաղաքակիրթները, այլ բարբարոսները, որովհետև շատ ազգերի ջարդելով հնազանդեցրին ու իրենք իշխեցին, որոնց հետ հնազանդեցրին նաև

* Մատթ. ԺԲ, 25։ Ղուկ. ԺԱ, 17։

** Բնագրում՝ Եւ կամ ևս չարագունին ապականչին Յուսփա եղբօր Ափշնոյ: Ուղղում ենք՝ Եւ կամ ևս չարագոյնն ապականիչն Յուսուփ եղբայր Ափշնոյ։ Գանձակեցին թվարկում է Հայաստան եկած ոստիկաններին. դրանցից մեկը Յուսուփն է Բուղայից ու Ափշինից հետո։ Ուղղականները սխալական են դարձել նախորդ սեռականով դրված բառերի մեքենայական ներգործությամբ։

արարների իշխանությունը։ Բայց որովհետև նրանց անունները ոչ մի տեղ գրված չգտանք, այդ պատճառով մենք էլ չկարողացանք հիշատակել. թեև թվարկվում է ու կյանքի դպրության, այլ անօրենների արձանագրության մեջ։ Այդ պատճառով մերժելով թողնում ենք նրանց ու նրանց զորականներին, իբրև հուսացող մարդկանց, որոնք զրկվեցին աստծու հարկարաժիններից։

Թուրքերի թագավորությունը սկսվելուց հետո ազգով հայ հիսուն մարդ նրանցից հալածվելով՝ սպառազինված գնացին անապատ, ապա եկան Մարաշ, գտան Փիլարտոս անունով մի քաջ հայ մարդ, դարձրին իրենց ղեկավար ու մտան Կիլիկիա, գրավեցին ամբողջ երկիրը, որտեղ գտնվում էին նաև ծագումով թագավորազուն Ռուբինյանները։ Որովհետև մինչև Մելիքշահ սուլթանը նրանց տիրելու պատճառների մասին գրել էր մեծիմաստ վարդապետը, որ կոչվում էր Սարկավագ[215], և կրկնել էր Սամվել[216] քահանան [Անեցին]։ Այլև գրել էր [Սարկավագը] նրա արյունարբու հոր Ալփասլանի[217], սրա հոր ու պապերի մասին, որոնց անուններն են Տուղրիլ բեկ, Մահմուդ և Սալջուկ։

Բայց մենք կվերադառնանք մեր խոսքի վերջին, որտեղ ընդհատեցինք. դուրս կբերենք մեկը և խրախուսված կասենք. «Նրանք քո ձեռքով մերժվեցին, մենք քո ժողովուրդն ենք ու քո արոտի խաշինքը»*։

(Սմբատ Բագրատունու մահից հետո՝ այսինքն հոր սպանությունից յոթ տարի անց, Ռոմանոս կայսեր հրամանով ութ տարի թագավորում է Սմբատի որդի Աշոտը։) Իսկ Վասիլ կայսրից հետո թագավորեց Լևոնը, ապա Ալեքսը. սրանից հետո Ռոմանոսը։ Սա հալածեց բոլոր կրոնավորներին ու հայոց այն քահանաներին, որոնք Բյուզանդիայում էին, որովհետև քաղկեդոնական դավանությունը չընդունեցին։ Նրանք եկան մեր Հայաստան աշխարհը Սմբատի որդի Աբասի օրերում ու Արշարունիքում[218] հիմնադրեցին Կամրջաձոր, Կապույտ քար վանքերը, Շիրակում Հոռոմոս[219] կոչված հուչականուն վանքը և Դպրեվանքը[219]։ Կառուցեցին նաև ամենասուրբ Աստվածածնի անունով մի եկեղեցի Սանահին կոչված վանքում՝ Լոռե[189]

---

* Սաղմ. Ջէ, 6, ՀԸ, 13։



քաղաքի սահմաններում։ Եվ որովհետև քահանաները կոչվում էին հոռոմոց երեց, Շիրակում գտնված մի վանքը անվանեցին Հոռոմոց վանք, որ մինչև այժմ էլ կոչվում է Հոռոմեցի վանք։

Ռոմանոսից հետո թագավորում է Լևոնի որդի Կոստանդինը, ապա Ռոմանոսը, սրանից հետո՝ Նիկիֆորը և սրանից հետո՝ Կիռժանը։

Հովհաննեսից հետո կաթողիկոսությունը մի տարի տանձնում է տեր Ստեփանոսը, ապա տասնմեկ տարի՝ տեր Թեոդորոսը, ապա տեր Եղիսեն՝ յոթ տարի, հետո տեր Անանիա Մոկացին՝ քսաներկու տարի։

Այս օրերում Սյունիքի կողմերից Հակոբ անունով մի եպիսկոպոս կար, որ սկսեց լեզվի ու կարգ ու կանոնի նորաձևություն ստեղծել. կար Խոսրով անունով մի այլ եպիսկոպոս ևս, որ ասում էր. «Չպետք է տերունական օրը կյուրակե կոչել, այլ կյուրիակե, որովհետև հունարեն է»։ Խոսում է նաև հասակների* մասին. ասում էր նույնպես, թե երեխաների մազերը պետք է թողնել ու չկտրել, մինչև երկարի և պատ տա, որովհետև այդ պատճառով է պատանի կոչվում, իսկ հետո հրամայում էր կտրել, որովհետև այդ պատճառով է կտրիճ կոչվում։ Նաև ասում էր. «Չպետք է եպիսկոպոսը եպիսկոպոսապետին՝ այսինքն կաթողիկոսին ընծա մատուցի, որովհետև ավելի օրհնություն չունի, բացի միայն անվանակոչությամբը»։ Եվ ուրիշ այսպիսի անմիտ խոսքերով երկիրը լցրեց ու ամենուրեք խռովություն գցեց նորաձևության համար։

Սրան խրատական թղթեր է գրում տեր Անանիան, որ ձեռքի անմիտ դատարկաբանություններից։ Իսկ սա զզջալու

---

* Բնագիրն ունի. ասէ նոյնպէս և համարակալ թողուլ, ասէր զգէսս ողայոց և ոչ հատանել մինչև երկայնանալ և պատ առնել։ Համարակալ ձեռ ըստ տարբերակների և ժամանակի իմաստի համահալ է (մի տող հետո ավելի է. Զի վասն այնորիկ, ասէ, Կոչի պատանի, և ապա կտրել հրամայէր, զի վասն այնորիկ (այստեղ բնագրի սորակետը սխալ է (կոչի կտրիճ)։ Ճշտությամբ բառից հետո պետք է միջակետ դնել, իսկ մինչևից առաջ ստորակետ։ Ճիշտ բնագիրը կլինի այսպես. Ասէ նոյնպէս և զհասակաց. թողուլ, ասէր, զգէսս ողայոց և ոչ հատանել, մինչև երկայնանալ և պատ առնել։

չխոխարեն ավելի լկտիացավ. իրեն իմաստուն էր համարում, իսկ նրանց՝ տգետներ։ Պետք եղավ դարձյալ երկու-երեք անգամներ գրել սրան։ Գրում են նաև այլ խելոք վարդապետներ ու հիշեցնում են նրան գրքերից կարգ ու կանոնի հանգամանքները։ Իսկ նա նույն մոլորության մեջ մնալով՝ բոլորին արհամարհում էր։

Եվ ինքը Հակոբը ըմբոստանալով կաթողիկոսի դեմ՝ ամրանում է Սյունիքի[220] բերդում. սրան կաթողիկոսը բանադրում է. գրում է Սյունիքի տիկնոջը, որպեսզի նրան իր ձեռքը հանձնի խրատելու համար, գուցե թե զղջա։ Նրանք նրան չհանձնեցին նրա ձեռքը։ Նրանց նույնպես բանադրեց։ Նա նույն տեսակետին մնաց, մինչև որ մեռավ։

Ապա տեր Անանիան գնաց Սյունիք՝ ըմբոստներին հնազանդեցնելու։ Երբ Սյունիքի իշխանները լսեցին հայրապետի գալուստի մասին, ընդառաջ ելան նրան, մեղքները հանձն առան ու նրան երդմնագիր տվին, որ այլևս սերնդեսերունդ չեն ըմբոստանա սուրբ Գրիգորի աթոռի դեմ։ Ապա նրանց ցեղից մեկին ձեռնադրեց արքեպիսկոպոս։ Քանի որ նախապես Սյունիքը ուներ եպիսկոպոսական աթոռ, այն պատիվն արեց Սյունիքի իշխաններին, որ հրամայեց Սյունյաց արքեպիսկոպոսի առջևից խաչ տանել, ուր էլ որ գնա նա։

Տեր Անանիայի մահից հետո նրա աթոռը մի տարի նըստեց տեր Վահանը՝ Բաղաց[221] աշխարհից։ Սա Վրաստանի հետ միաբանական հավատի դաշինք կնքեց։ Այդ պատճառով Աբասի որդի Աշոտի թագավորության ժամանակ Անի ամրոցում հավաքվեցին շատ եպիսկոպոսներ ու խոստակրոն վանականներ, որոնք հավատի կերպով ճանաչել էին նրա մտքի կորստաբեր հերձվածը, որովհետև նա պատկերներ բերել տվեց Քաղկեդոնի աղանդի վերականգնման համար։ Եվ նըրան հեռացնելով հալածական դարձրին։

Եվ միաբանվելով՝ սուրբ Լուսավորչի աթոռին նստեցրին աստծու սուրբ այր Մաշտոցի[208] հարազատ արյունից Ստեփանոսին, որ Սևանա կղզում էր։ Սա հետևում էր նրա [Մաշտոցի] վարքին։ Սա երկու տարի աթոռակալեց։ Բայց քանի որ Վահանիկը դեռևս Վասպուրականում կենդանի էր, միաբաններից ոմանց հավատացրեց, որ նրան հերձվածողի անուն վերագրելը սուտ է։ Այդ պատճառով Հայոց միջնաշ-



խարհը լցրին անեծքներով։ Իսկ աստծու հրամանով մի տարում երկուսն էլ մեռան։ [Հայաստանը] մի տարի անկաթողիկոս մնաց։ Ապա Ողորմած[222] կոչված Աշոտ թագավորի հրամանով ընտիր այրերը և սուրբ եպիսկոպոսները հավաքվեցին, հայրապետական աթոռին նստեցրին աստծու երանելի այր տեր Խաչիկին՝ մեծ հայրապետ տեր Անանիայի հարազատին, որ վարդապետական խոսքով սանձեց հերձվածողների բերանները՝ լինելով սրբասեր ու քրիստոսասեր. սա աթոռակալեց տասնինը տարի։ Սրանից հետո քսանչորս տարի աթոռակալեց տեր Սարգիսը։

Աշոտից հետո թագավորում է նրա որդի Սմբատը, որ կոչվում էր Շահնշահ։ Սա իր թագավորության ընթացքում Անիի պարիսպը շինեց բարձրաբերձ բուրգերով և երկար տարածությամբ՝ Ախուրյան գետից մինչև Ծաղկոցաձոր կոչված վայրը։ Նույն քաղաքում հիմնարկեց պայծառատես կաթողիկեն[223], բայց չկարողացավ ավարտել, որովհետև մահը վրա հասավ. սա թագավորեց տասներեք տարի։ Սրա օրերում սկսեց կառուցվել Մարմաշեն[224] կոչված հոյակապ վանքը քրիստոսասեր իշխան Վահրամի կողմից։

Սրանից հետո թագավորում է նրա եղբայր Գագիկը՝ քսանինը տարի։ Սա Ծաղկոցաձորի գլխին շինեց գերահռչակ Սուրբ Գրիգորը[225] ընդօրինակելով Ներսես հայրապետի կառուցած Սուրբ Գրիգորը[225]։ Ավարտվեց մեր տեր Հիսուս Քրիստոսի մարմնանալու հազարերորդ տարում և Հայոց չորս հարյուր քառասունյոթ* թվականին։ Նրա կին Կատարամիդե թագուհին ավարտեց սուրբ կաթողիկեն, որը Սմբատ թագավորը չկարողացավ ավարտի հասցնել։ Նաև Սմբատ Մագիստրոսը կառուցեց փափագատես Բագնայր[226] կոչվող վանքը։

Իսկ Կիրժան-կայսրից հետո թագը գրավում է Վասիլը՝ թագավորելով հիսուն տարի։ Սա մշտապես հայ ազգի հանդեպ մի բարեմիտ մարդ էր, որ Քաղկեդոնի դավանությունը թողեց ու հետևեց մեր ճշմարիտ դավանանքին։ Եկավ Կիլիկիա, մկրտվեց Հայոց Պաղակձիակ կոչվող վանքում ու վանքին տվեց գյուղեր, ագարակներ և ուրիշ բազմաթիվ բաներ։

* Պետք է լինի քառասունինը։

Տեր Սարգսից հետո հայոց կաթողիկոսությունը ստանձնում է տեր Պետրոսը երեսունինը տարի։ Գագիկ Շահնշահից հետո քսան տարի թագավորեց նրա որդի Հովհաննեսը։

Սրա օրերում մեծապատիվ Վեստ Սարգիսը շատ բերդեր ու եկեղեցիներ կառուցելուց հետո շինեց փառավոր Խըցկոնք վանքն ու սուրբ Սարգսի անվան եկեղեցին և Ծառաքար վանքը բերդ դարձրեց, ու շատ ամուր պարսպապատեց՝ նրա մեջ կառուցելով փառավոր եկեղեցիներ։

Բայց Հովհաննես թագավորը գժտված լինելով Պետրոս հայրապետի հետ՝ բանտարկեց նրան ու Սանահին կոչվող սուրբ ուխտի առաջնորդի՝ ոմն Դեոսկորոսի բերեց Պետրոսի փոխարեն կաթողիկոս ձեռնադրեց։ Ապա եկավ Աղվանքի Հովսեփ կաթողիկոսը հաշտություն գցեց թագավորի ու հայրապետի միջև և կաթողիկոսին հանեց բանտից։

Երբ Անի քաղաքի ամբողջ բազմությունը տեսավ, որ կաթողիկոսը բանտից ազատվեց, հանդգնորեն հարձակվեց Դեոսկորոսի վրա տիրոջ հայտնության օրը, մինչդեռ ջուրն էին օրհնում, պատռեց նրա երեսի քողը,— այն ժամանակ կաթողիկոսները քող էին գցում,— և անարգանքով հանեցին նրան քաղաքից ու Պետրոսին նստեցրին իր աթոռը։ Դեոսկորոսը տրտում գնաց Սանահին իր տունը, և այնտեղ վերջացավ նրա կյանքը, թաղվեց եկեղեցու մոտ։

Զաքարեի իշխանության ու Սանահնի Տուտեորդի Գրիգոր վարդապետի, որ մի երևելի մարդ էր, առաջնորդության օրերում Անի քաղաքի բնակիչները Սանահին ուղարկեցին մի քարագործ մարդ*, որ նույն քաղաքից էր, որպեսզի Դեոսկորոսի մասունքներից հայտնի կամ գաղտնի վերցնի ու տանի քաղաք [Անի], որովհետև. այլազգիների ձեռքով այս քաղաքում միշտ տեղի ունեցող այս կոտորածները նրա պատճառով են։ Գուցե թե թողություն տա մեր քաղաքին այն հանդգնության դիմաց, որ մեր հայրերը նրա նկատմամբ ցուցաբերեցին։

Իսկ այդ մարդը գնաց, կամեցավ գիշերը բանալ գերեզմանը ու նրանից մի ինչ-որ մաս վերցնել։ Մեծ երկյուղից ահաբեկվելով՝ չկարողացավ գերեզմանը բանալ ու գնաց պատմեց Գրիգոր վարդապետին։ Նա ասաց. «Ես չեմ համարձակվի այդ բանը անել, մինչև Անիի բնակիչների բազմությունը այստեղ գա։ Եվ մենք նրանց հետ կպաղատենք՝ նրա նշխարներից. թողություն հայցել»։ Իսկ ասածը ուշանում էր, որովհետև ոչ ոք այդ մասին չէր հոգում։

Հովհաննեսից հետո թագավոր է դառնում Աշոտի որդի Գագիկը՝ երկու տարի։ Արդ՝ Հովհաննեսի մահից հետո, որ և Սմբատ էր կոչվում, իշխաններն ու զորքը միաբանվելով, առավել ևս Պետրոս պատրիարքը, հավաքվեցին Անիի մեծափառ կաթողիկեի դռանը և Հովհաննեսի եղբորորդի Գագիկին թագավոր դարձրին իրենց վրա՝ ուխտելով ու երդվելով հավատարմորեն ծառայելու նրան։ Իսկ նա ռազմական քաջության մասին, որով աշխարհն է կառավարվում, հոգ չէր տանում, մանավանդ որ այն ժամանակ ավելի անհրաժեշտ էր քաջանալ, որովհետև արքայական իշխանությունը խառնաշփոթ վիճակի մեջ էր՝ սկյութների[227] նրանց վրա հարձակվելու պատճառով, ինչպես ցույց տվինք նախապես։ Նույնպես նաև խռովյալ վիճակում էր նաև Բյուզանդիան։ Բայց, որովհետև նա մանկությունից գրքերի ուսումնասիրությամբ էր զբաղված, նրանցով էլ զվարճանում էր։ Հույներն այս բանը իմանալով՝ խաբեությամբ իրենց մոտ կանչեցին, առավելապես [դա եղավ] իշխանների սադրանքով, որոնք իրենց վրա նրա իշխանությունը աննենգ պահպանելու նրա հետ կնքված ուխտը դրժեցին և չմնացին այդ ուխտի վրա։ Եվ գործի վախճանը կործանարար եղավ այդ անձանց ու մեր երկրի համար, որովհետև հույները գնացածին [Գագիկին] արգելափակեցին մի կղզում, իսկ նրա փոխարեն մի սարով վերակացուներ ուղարկեցին։

Իսկ մեր երկրի բնակիչները միմյանց դեմ գրգռվելով անհեթեթ հոխորտանքով ու խորամանկությամբ միմյանց վրա հարձակվելով՝ ստախոսությամբ հղանում էին միմյանց կայսրին մատնելու նենգ խորհուրդներ՝ հերյուրելով արքաներին օրենքը. սրանք զրպարտում էին իշխաններին, անգամ հայրապետին, իսկ սա՝ նրանց, որոնց բռնի առնում տանում էին իրենց բնակավայրերից։ Իսկ մնացածներին իբրև անտերունչ-

* Բնագրում ունենք՝ Առաքեցին բնակիչք քաղաքին Անւոյ առ այր մի քարակոփ ի Սանահին ի նոյն քաղաքէ։ Անեցիները Անիից սանահինցի քարակոփին են ուղարկում Սանահին և ոչ թե քարակոփի մոտ մի այլ մարդ։ Առ նախդիրը այստեղ թյուրիմացություն է, որ չունեն մի շարք ձեռագրեր։

ների արհամարհելով՝ բանի տեղ չէին դնում։ Հույները տիրեցին քանմեկ տարի։

Դրանից հետո հարավային խորշակի հուրը շարժվեց և բերեց մարդախողխող գազանին, որ հրդեհելով բնաջնջեց մեր ազգը և առավելապես Անի քաղաքը, որովհետև պաշարեց այն քսանհինգ օր* և ապա գրավելով՝ կոտորեց Անի քաղաքի բնակիչներին. ոչ ոքի չխղճաց Ալփասլան[217] կոչված արյունարբու գազանը։

Բայց մեր թագավորական իշխանությունը վերջացավ. միայն մի տեղ գոյություն ուներ պետություն, ինչպես Կյուրիկյանք[228], որ Լոռի քաղաքում և նրա շուրջն էր. սա [Կյուրիկյան թագավորը] ևս Բագրատունյաց տոհմից էր։ Վանանդի ու Կարսի մի այլ Գագիկ թագավոր էլ կար, որ գնաց հույների մոտ, սակայն գլխավորը Գագիկի ժամանակ դադարեց գոյություն ունենալուց. ուրիշները նույնպես անձնատուր եղան վերջապես, մի մասն էլ փախստական դառնալով գնաց բյուզանդական կայսրի մոտ։ Եվ նրանք տիրեցին մեր ամբողջ երկրին։ Հույները գնացածներին տվին երկրներ ու կալվածական քաղաքներ. իսկ Կեսարիայի ու Սեբաստիայի կողմերը [կայսրը] տվեց երկու Գագիկ թագավորներին։

Իսկ Պետրոս[229] կաթողիկոսին կայսրը մեծ պատվով մեծարեց ու ոսկի աթոռ դրեց նրա համար։ Եվ երբ կաթողիկոսը վեր կացավ աթոռից ու կամենում էր դուրս գալ, Եղիսե անունով մի եպիսկոպոս վերցրեց ոսկի աթոռը, որի վրա նստել էր կաթողիկոսը։ Պալատի սպասավորները թույլ չէին տալիս, որ նա վերցնի։ Կայսրը հարցրեց եպիսկոպոսին, թե՝ «Ինչո՞ւ ես այդ անում»։ Եպիսկոպոսը նրան ասում է. «Մենք կարգ ունենք, այն աթոռը, որի վրա նստում է կաթողիկոսը, նրանից բացի ոչ ոք իրավունք չունի նստելու»։ Կայսրը զարմացավ այն մեծարման վրա, որ եպիսկոպոսը արեց կաթողիկոսին և հրամայեց սպասավորներին՝ թույլ տալ, որ եպիսկոպոսը տանի։ Եվ ասաց նրան. «Յոթ հազար դահեկան արժե այդ, տար պահիր դա ի պատիվ քո կաթողիկոսի»։

* Բնագրին ունի քսանյոթ օր։ Գանձակեցին այս ամբողջը քաղել է Սամվել Անեցուց, ուստի ըստ այս վերջինի և թարգմանվածների ուղղեցինք քսանհինգ օր։



Մի ժամանակ այնպես պատահեց, որ տիրոջ հայտնության օրը բոլոր քրիստոնյաները և ուրիշ մեծ ամբոխ հավաքվել էին Տրապիզոն քաղաքում ջրօրհնեքի, ինչպես որ սովոր են քրիստոնյաները։ Ըստ հույների դեպի հայերը ունեցած ատելության՝ Պետրոս հայրապետին իր ժողովրդով կանգնեցրին գետի վերևը, իսկ իրենք կանգնեցին ներքևը՝ այն մտքով, որ հայերի օրհնությունը թերակատար էին համարում. քանի որ իրենք ներքև կանգնելով՝ հայերի օրհնած ջուրը միրատին կօրհնեն։ Մի սպիտակ աղավնի էլ վարժեցրել էին, որ գար մտներ ջուրը ու վեր թռչեր, որով անծանոթներին կխաբեին, թե սուրբ հոգին իջավ աղավնու նմանությամբ։

Պետրոս հայրապետի աղոթքի ժամանակ գետի ջուրը դարձավ դեպի վեր, ու չափազանց պայծառ լույս ծագեց, որ արեգակի ճառագայթները աղոտացրեց։ Եվ երբ նրանց աղավնին եկավ մտնելու ջուրը, ինչպես որ վարժված էր, հանկարծ մի արծիվ խոյանալով առավ աղավնին ու թռավ։ Բոլոր հույները սաստիկ ամոթահար եղան ու հարկադրված գովաբանում էին հայերի հավատքը։

Կայսրը հրամայեց հայրապետին իր աթոռը հաստատել Սեբաստիայում[220] ու այնտեղից հսկել իր հոտը։

Հայրապետը այնտեղ նստեց մինչև իր մահը և թաղվեց այնտեղ Սեբաստիայում՝ կաթողիկոս մնալով երեսունինը տարի։ Նրանից հետո սակավ ժամանակ տեր Խաչիկը [գահակալեց]։

Ապա մեր հայոց աշխարհը մի վայրում հավաքվելով՝ հայրապետական աթոռին նստեցնում են տեր Վահրամին՝ Գրիգոր Մագիստրոսի որդուն, որին անվանեցին Գրիգորիս. սա Բջնի[230]* քաղաքից էր և նահատակ Վասակի թոռը, որ իմաստուն ու առաքինի մի մարդ էր։

Սա իր հորից խնդրեց, որ մեկնաբանի քերականության արվեստը, որովհետև նա իմաստասեր էր. իսկ նա մեկնաբանեց ճարտար խոսքերով։ Այս սքանչելի հայրապետը թարգմանեց ասածու նահատակների բազմաթիվ ճառեր և հունարենից ու ասորերենից ներբողական ճառեր։ Սա մտադրվեց որոշ ժամանակից հետո գնալ Հռոմ՝ երկրպագելու սուրբ առաքյալներ Պետրոսի ու Պողոսի նշխարներին՝ իրեն խորհրդակից անելով Գևորգ անունով մի վարդապետի։ Եվ

կանչելով իր հոտին՝ եպիսկոպոսներին, քահանաներին, իշխաններին, հաղորդեց իր մտադրությունը։ Իսկ նրանք արտասվագին լաց էին լինում դառնորեն ու աղաչում էին նրան չթողնել իրենց որբ ու անհովիվ։ Իսկ նա նրանց ասում է. «Ես ուխտել եմ և իմ ուխտը չեմ կարող դրժել. ընտրեցեք ձեզ համար մի մարդ, և ես նրան իմ փոխարեն կձեռնադրեմ»։ Այդտեղ էր նաև վերևում հիշատակված պատգամավոր Գեորգ վարդապետը։ Բայց ժողովուրդը չէր համաձայնվում, նույն աղաչանքները պնդում էր, և ոչ ոքի չէին գտնում նրան փոխարինող։ Այդ ժամանակ Գեորգը նրանց ասում է. «Ինչո՞ւ եք այդքան աղաչում նրան, նա ուխտել է գնալ, իսկ ես տեղյակ եմ նրա մտադրությանը, այդ մտքից նա չի հրաժարվի։ Ահա ես, թող ինձ ձեռնադրի իր փոխարեն»։

Իսկ երբ կաթողիկոսը լսեց, զարմացավ և ցասումով լցվեց, որովհետև Գեորգը երդվել էր նրա հետ միասին գնալ։ Սակայն հակառակ իր կամքի ձեռնադրեց նրան, իսկ ինքը ճանապարհ ընկավ։ Եվ Գեորգը նստեց նրա աթոռը։

Սուրբ հայրապետը գնաց Հռոմ. իտալացիները մեծապես պատվեցին նրան։ Իր ուխտը կատարելուց հետո նավ նստեց Կոստանդնուպոլիս գալու թարգմանության համար։

Ծովի վրա մրրիկ բարձրացավ, ու նավը այլ ճանապարհով տարավ և նրանց հանեց Եգիպտոս։ Իսկ նրա հետ գտնված նրա սպասավորները վախեցան, որովհետև այդ երկրի բնակիչները սովորություն ունեին ալեկոծված նավերը կողոպտել ու [նավորդներին] սպանել։

Եվ սուրբ հայրապետ Գրիգորիսը աղոթքի կանգնեց, Եգիպտոսում սաստիկ անձրև եկավ, որ երբեք չէր եղել։ Երբ այդ երկրի բնակիչները այս տեսան, սարսափեցին. բայց այն արքան, որ թագավորում էր նրանց վրա, մի իմաստուն մարդ էր, կանչեց իր զորքը և նրանց ասաց. «Դուք ինքներդ գիտեք, որ Եգիպտոսում սկզբից ի վեր մինչև այժմ անձրև չի եկել. միայն Մովսեսի ժամանակ կարկուտ է եկել. իսկ մի անգամ անձրև է եղել Հիսուսի եկած ժամանակ. այդպես էլ այս նշան է մի հրաշագործ մարդու գալստյան։ Որոնեցեք, նրան և տեսեք, թե ով է»։

Եվ զորքը շրջելով երկրում՝ գտավ Գրիգորիսին իր սպասավորներով, որ ծովափին աղոթում էին։ Նրան բերին սուլ-



թանի մոտ։ Հարցրեց նրանց, թե՝ «Ձե՞ր համար եկավ այս անձրևը»։ Իսկ նրանք ասում են. «Այո»։ Եվ ասում է նրանց. «Ի՞նչ պատճառով խնդրեցիք այս»։ Նրանք ասում են, թե՝ «Վախեցանք այս երկրի սպանության սովորույթի համար, որովհետև նավաբեկ եղանք ծովում»։ Ամեն ինչ ճշտությամբ հայտնեցին։ Այդ ժամանակ [թագավորը] հիացավ ու գովեց նրանց հավատը ու ասաց հայրապետին. «Դու նստիր Ալեքսանդրիա քաղաքում Մարկոսի աթոռին, իսկ իմ իշխանության ներքո բոլոր քրիստոնյաները կհնազանդվեն քեզ»։ Եվ նրան բազմաթիվ պարգևներ տվեց ու սիրեց ինչպես հոր։ Այդ օրվանից Ալեքսանդրիայի աթոռը հնազանդվեց սուրբ Գրիգորի [Լուսավորչի] աթոռին։ Սուրբը այնտեղ մնաց ու գովեստով վախճանվեց ի փառս աստծու*։

Երբ Դերենիկի որդու Դավթի որդի Բագրատունյաց տոհմի Կյուրիկե արքան, որ հիմնադրեց Հաղպատ ու Սանահին[230] հոյակապ վանքերը, տեսավ, թե տեր Գրիգորիսը թողեց իր աթոռը ու գնաց Հռոմ, իր մոտ կանչեց Աղվանքի կաթողիկոս տեր Հովսեփին ու հայոց կաթողիկոս ձեռնադրել տվեց տեր Բարսեղին։ Իսկ Կյուրիկեի պալատական քահանա ոմն Սարգսի ձեռնադրում են Հաղպատի եպիսկոպոս։ Դրանից հետո այն դարձավ եպիսկոպոսական աթոռանիստ։ Սարգսից հետո եպիսկոպոս եղավ Գեորգը, սրանից հետո՝ Բարսեղը։ Սա տեսքով գեղեցիկ մարդ էր։ Վրաց թագուհի Թամարը սրան տեսնելով՝ նրա վայելուչ գեղեցկության համար չափազանց մեծարեց նրան, մանավանդ որ նրա եղբայրներն էլ արքունի տան վերակացուներ էին։

Բարսեղից հետո եպիսկոպոս եղավ սուրբ Գրիգորիսը։ Սա Զաքարե ու Իվանե իշխանների ազգականն էր, և մեր օրերում եղավ։ Սրանից հետո [եպիսկոպոս դարձավ] Հովհաննեսը՝ Խաչենի[231] իշխանների ազգականն էր և մի հեզ ու առաքինի մարդ։ Սա Հաղպատի կաթողիկեի դռան փոքրիկ գավիթը քանդեց և կառուցեց մի մեծ ու գեղեցիկ շինվածք, որ տեսողներին հիացմունքից ապշեցնում է։

Սրանից հետո [եպիսկոպոս է դառնում] Զաքարե ու Իվա-

* Ըստ Օրմանյանի Գրիգորիս կաթողիկոսը Ալեքսանդրիայի եպիսկոպոս է ձեռնադրում իր եղբորորդի Գրիգորիսին, որպեսզի հովվի այնտեղ գտնված բազմաթիվ հայերին։ Կիրակոսը շփոթել է անունները։

նե իշխանների քեռորդի ու առաջին Հովհաննեսի եղբորորդի մյուս Հովհաննեսը։ Սա շինեց շատ ամուր պարիսպներով մի բերդ Հաղպատի ու Սանահնի միջև։ Այդ պատճառով երկու խոշոր վանքերի միջև գժտություն առաջացավ. որպես թե Սանահնի հողից է վերցված։ Եվ Զաքարեի որդի Շահնշահ իշխանը վրեժխնդիր եղավ Սանահնի համար, որովհետև իր հայրը այնտեղ էր թաղված, և դա իրենց սեփականություն էին համարում, քանի որ Հաղպատը վրաց թագավորների կողմից այն ժամանակ վիճարկվում էր։ Երբ Հովհաննես եպիսկոպոսը մեռավ, թաթարների հրամանով բերդի պարիսպը քանդեցին։

Հովհաննես եպիսկոպոսի մահից հետո երկու տարի նրա տեղը բռնեց Աղսարթանի որդի մածնաբերդցի Հովհաննեսը, որ Բագրատունիների տոհմից էր։ Սա խառը ժամանակի պատճառով դեռևս եպիսկոպոս չէր ձեռնադրված. հետո ձեռնադրվեց Աղվանքի Ներսես կաթողիկոսի կողմից Մածնաբերդի կողմերի համար։

Սրանից հետո [եպիսկոպոս եղավ] Անի քաղաքից Համազասպը։ Սա շինեց հրաշալի մի եկեղեցի զանգակատնով, մեծ ու սքանչելի ժամատնով։

Բայց մենք նորից դառնանք մեր խոսքին, որտեղ ընդհատեցինք։ Որովհետև Հայոց կաթողիկոսությունը շատ մասերի բաժանվեց, [այսինքն]՝ տեր Գրիգորիսը, որ է Վահրամը, Եգիպտոսում էր, Գևորգը արևմտյան կողմերում էր, մեկ ուրիշը Վասպուրականում՝ Աղթամար կղզում էր, իսկ տեր Բարսեղը մեր Հայոց աշխարհում էր։ Այսպես բազմաթիվ մասերի էր բաժանված։

Բայց Կարսի Գագիկ* թագավորը գնաց բյուզանդական կայսրին տեսնելու, որովհետև նրա իշխանության ներքո էր գտնվում, և վերադարձին եկավ Կեսարիա։ Նա լսեց, որ Կեսարիայի մետրոպոլիտ ոմն Մարկոս մի շուն ունի, և հույների՝ հայերի հանդեպ ունեցած ատելության պատճառով, շան անունը Արմեն էր դրել։ Եվ այսպես էր կանչում նրան, որովհետև հայերին բոլոր ազգերը արմեններ են կոչում Արամ Հայկազնի քաջության համար։

* Սա Անիի Գագիկ երկրորդն է։



Գագիկ թագավորը գնաց իջևանելու մետրոպոլիտի մոտ, իսկ նա ուրախությամբ ընդունեց սրան։

Եվ երբ գինովցան, թագավորը ասաց. «Ես լսել եմ, որ դու մի ազնվացեղ շուն ունես, ինձ ցույց տուր, որ տեսնեմ այն»։

Մետրոպոլիտն ասում է. «Ահա գառների մոտ մեր գիմացն է»։

Թագավորն ասում է. «Կանչիր, թող գա այստեղ»։

Նա նրան այլ շան անունով է կանչում և ոչ թե իր անունով։ Իսկ շունը վեր չի ցատկում ու ներս չի գալիս։

Թագավորն ասում է. «Իր անունով կանչիր նրան»։

Եվ երբ կանչեց՝ «Արմեն, Արմեն», անմիջապես վեր կացավ եկավ։

Թագավորն ասում է. «Ինչո՞ւ ես դրան այդ անունը դրել»։

Մետրոպոլիտն ասում է. «Որովհետև լակոտ է»։

Թագավորը հրաման տվեց իր սպասավորներին և ասաց. «Բերեք մի մեծ պարկ ու շունը գցեք այնտեղ»։ Հազիվ կարողացան գցել։ Եպիսկոպոսը կարծում էր, թե կամենում է իր հետ վերցնել շունը և բարկանում էր թագավորի սպասավորների վրա։ Թագավորն ասում է. «Գցեք նաև եպիսկոպոսին, թող տեսնեմ՝ լակո՞տ է շունը, ինչպես դա ասաց»։ Իսկ նա լալիս ու աղաչում էր թագավորին՝ ներել իր հանցանքը։ Բայց թագավորը բարկությամբ ասում է. «Այժմ խթանով խթեցեք այդ շներին, որ իրար ուտեն»։ Եվ նրանք խթում էին շանը, իսկ նա ցավի կսկիծից ժանիքներով ու ճանկերով պատառպատառ արեց նրան, մինչև մեռավ։ Եվ [թագավորն] ասում է. «Այժմ իմացիր՝ լակո՞տ է Արմենը»։

Ինքը [Գագիկը] կողոպտեց եպիսկոպոսարանը ու այլևս կայսրին չտեսավ։

Իսկ [հետո] մյուս Գագիկը թագավորեց*։ Մի օր որսի էր դուրս եկել և հարբած էր։ Մի տաթ ժամի իջավ երիվարից ծառերի ստվերում հանգստանալու, իսկ ոչ ոք նրա մոտ չկար, բացի մի փոքրիկ մանուկից, որովհետև մյուս ամբողջ զորքը ցրված էր որսի հետևից։ Նրան հույներ հանդիպելով՝ ճանաչեցին, վերցրին տարան մի բերդ։ Երբ սթափվեց գինուց, աչքերը բացեց ու ասաց՝ ո՞ւր եմ ես։ Հույները ասացին. «Ո՞ւր

* Սա միևնույն Գագիկն է։

է մեր մետրոպոլիտ Մարկոսը»։ Ու նրան անարգանքով նետեցին բերդի պարսպից, և նա ջարդվելով մեռավ։ Իսկ այն մանուկին, որ նրա հետ էր, գնեց մի հայ վաճառական ու փեսայացրեց իրեն։

Տարիներ հետո, երբ մանուկը մեծացավ ու դարձավ տղամարդ, մի մարդու հետ գնաց Կիլիկիայի սահմանները կաքավներ որսալու։ Այնտեղ մի բերդ կար, որը կոչում են Բարձրաբերդ։ Այստեղ գտնվում էր մի հույն եպիսկոպոս։ Ծանոթություն ստեղծվեց այդ մարդու ու եպիսկոպոսի միջև, դարձան իրար սիրելիներ ու երկար ժամանակ միասին ուտում-խմում էին։ Բայց այդ մարդը մոռահան չէր անում Գագիկ թագավորի՝ իր ազգականի նկատմամբ հույների կատարած գործը։

Եվ եղավ մի օր, որ եպիսկոպոսի բոլոր սպասավորները բերդից դուրս էին ելել իրենց գործերով. միայն եպիսկոպոսն էր մնացել ու նրա հետ մի պատանի։ Այդ որսորդ մարդը եկավ բերդի մոտ կաքավներ որսալու։ Եպիսկոպոսին պարսպի վրա տեսնելով՝ կանչեց նրան, որ գա միասին ճաշակեն։ Իսկ եպիսկոպոսը մարդուն հրավիրեց գնալ բերդը, բայց սա չհամաձայնվեց։ Եպիսկոպոսը իջավ նրա մոտ առանց սպասավորի։

Երբ տեսավ այդ մարդը, որ եպիսկոպոսը միայնակ է գալիս, հասկացավ, թե բերդում ոչ ոք չկա։ Ասաց իր հետ եղած մարդուն. «Այսօր համար է, որ մենք մեր թագավորի՝ հույների գործած սպանության արյան վրեժը առնենք։ Նկատիր, գուցե եպիսկոպոսը քեզ ուղարկի բերդը, ջանա գրավել այն և ինձ ձեռքի նշանով իմացրու, որպեսզի ես էլ եպիսկոպոսին սպանեմ»։

Երբ եկավ եպիսկոպոսը, նստեցին ճաշելու։ Եվ երբ գինին վերջացավ, եպիսկոպոսը սպասավորին ասաց. «Գնա բերդը ու մեզ համար գինի բեր, որ միասին զվարճանանք»։

Այդ մարդը գնաց եպիսկոպոսի հրամանը փոխանցեց նրա սպասավորին։ Եվ մինչ նա կռացավ կարասի մեջ, որ գինի հանի, սա բռնեց նրա ոտներից, շուռ տվեց գլխի վրա ու գինու մեջ խեղդեց նրան։ Բարձրացավ պարսպի վրա, նշան արեց իր տիրոջը, թե բերդը գրավեցի։

Իսկ սա այստեղ ներքևում եպիսկոպոսին խեղդեց։ Եվ ին-



քը մտնելով բերդը՝ գրավեց ու քիչ-քիչ իր կալվածքը մեծացրեց, որը բռնի, որն էլ խաբելով, մինչև որ նա, իր որդիները, թոռները տիրեցին Կիլիկիայի քաղաքներին ու գավառներին։ Սա Լևոն թագավորի նախնին է, որն իր սահմանները քաջությամբ ընդարձակեց, որ իր տեղում կասենք։

Վասիլ կայսրից հետո թագավորեց Կոստանդինը, սրանից հետո՝ ծեր Ռոմանոսը, ապա՝ Միխայիլը, ապա՝ Կյուռգին* ու սրանից հետո Մոնոմախը։ Սրա օրով է, ասում են, Գագիկը Բյուզանդիա գնացել։ Սրանից հետո՝ Կիռ Թոդորը, ապա՝ Դուկիծը, սրանից հետո՝ Դիուժենը։ Սրա առաջին տարում մեռավ Վանանդի[232] թագավոր Գագիկ Շահնշահը։ Իր թագավորության ութերորդ** տարում Դիուժենը մեծ զորքով գնաց Պարսկաստանի վրա պատերազմի։ Եկավ Մանազկերտ ու գրավեց այն։ Այս լսելով՝ բանակալ Ալփասլանը ընդառաջ դուրս եկավ։ Տեղի ունեցավ զորեղ ճակատամարտ։ Դիուժենը պարտվեց ու նրա կողմից բռնվեց. բայց [Ալփասլանը] հարկ դնելով նրա վրա՝ բաց թողեց։ Իսկ նրա ազգը չհնազանդվեց իրեն, այլ թագավորեցրին Դուկիծի որդի Միխայելին։ Միխայելը կրկին պատերազմելով՝ ջարդեց Դիուժենին, իսկ զորքը նրան քուրձ հագցնելով՝ բերեց Միխայել թագավորի մոտ։ Կայսեր հրամանով ճանապարհին նրա աչքերը փորեցին, և կսկիծից հինգ հարյուր քսանմեկ թվականին (1072 թ.) մեռավ։

Այս նույն տարին երկայնամիտ ու արդարադատ աստված վրեժ առավ գոռոզ ու անխանդակ գազան Ալփասլանից։ Մինչդեռ նա ղայրագինորեն մռնչում էր՝ տիրելու ամբողջ աշխարհին և բորբոքված սրտի դառնությունը թափելու նրանց վրա, որոնց ձեռք չէր գցել, անակնկալ մի պահի սրախողխող եղավ. անօրենը վերացավ աշխարհից և աստծու փառքը շատացավ։

Սրանից հետո թագավորեց նրա Մելիքշահ կոչված բարեխառն որդին։ Սա չհետևեց իր հոր չարությանը, այլև բարի մտածեց և նույնը արեց բոլոր իրեն հնազանդվածների

* Կիռ կամ Կիռ-Զոյե, այսինքն՝ տիկին Զոյե, իբրև կայսրուհի է եղել և մեռել է 1056 թ. (տե՛ս Մանանդյան, Քնն. տեսութ., հ. բ. էջ 27)։

** Դիուժենը (Դիոգենը) թագավորել է միայն երեք տարի։ Կիրակոսը սխալվում է։

նկատմամբ, առավելապես Հայոց ազգի հանդեպ։ Որովհետև վերահասու լինելով՝ պատասպարում էր իր հոր դիտավորությունները, այն որ հակառակ էր մարդկանց կյանքի խաղաղությանը, արյունով ու զրկանքներով էր ուրախանում։ Իսկ ինքը իմաստնաբար, քաղցր վարվեցողությամբ ու սիրով* հոգում էր ամեն ինչ։

Արդ՝ շատ թագավորներից քաջն ու խոհեմը հոգ տարավ ամեն բանի, որ արդարությամբ կառավարվի, որպեսզի ոչ ոք զրկվածներից տխուր ու զոռողներից հպարտ չլինի։ Ազնվամիտ էր ու լայնախոհ, իսկ մարմնի տեսքով արժանի էր թագավորության։ Սա կարճ ժամանակում ամբողջ աշխարհը հնազանդեցրեց և ոչ այնքան պատերազմով ու բռնությամբ, որքան սիրով ու խաղաղությամբ։ Այսպես բարի անունով թագավորեց քսան տարի ու կնոջ կողմից թունավորվելով վախճանվեց։

Ապա չորս տարի անասելի խռովություն եղավ, որովհետև նրա եղբայր Դրղուշը և որդի Բերքիարուքը այս տարիներին պատերազմով աշխարհի անդորրությունը վերացրին։ Որպեսզի նրանցից որևէ մեկը անմիջապես չիշխի՝ արյունահեղությունը ջրի առատ հոսքի** նման էր, և դա ոչ միայն վերաբերում է կռվող զինվորներին, այլև ընդհանրապես ազգերին ու երկրներին։

Եվ այսպես՝ բարիքները թագավորի վախճանի հետ վերացան։ Ապա տիրեց Բերքիարուքը՝ սպանելով Դրղուշին։ Սրանից հետո տիրեց Խզըլը, որ թարգմանվում է կարմիր։ Սա գրավեց Լոռե քաղաքը և Սանահին ու Հաղպատ սուրբ վանքերը։

Իսկ Միխայել կայսրից հետո թագը ստանձնում է Ալեքսը։ Սրա տասնյոթերորդ տարում բյուզանդացիները շարժվեցին Ասիայի կողմերը՝ Թիրակ (Թրակիա) որպեսզի քրիստոնյաների տառապանքների վրեժը լուծեն սկյութացիներից ու

---

* Բնագրում՝ Իսկ ինքն իմաստաբար քաղցրավարութեամբ կարգօք հանդերձ զամենայն։ Նախ՝ իմաստաբար ուղղում ենք իմաստնաբար. իսկ կարգօք ձևը ըստ տարբերակների ճշտում ենք կարեօք, որ այստեղ նշանակում է սիրով։

** Բնագրում՝ Հոսմունս արեանց իբրև գուխից լինէր։ Հոսմունս ուղղելի է հոսումն, իսկ գուխից՝ գուղխից, ավելի ճիշտ՝ գուղխիցն։



պարսիկներից, ինչպես նաև արաբներից։ Եվ շատերը նեղություններ կրեցին գաղտնի ու հայտնի նենգությամբ սաղայելի որդու՝ Ալեքս կոչվածի կողմից, որ թագավոր էր Կոստանդնուպոլսում։ Որովհետև անօրենը հրամայեց կերակուրների հետ մահադեղ խառնել և այդպես տալ նրանց. նույնպես էլ ըմպելիքներին։ Ովքեր ուտում, մեռնում էին։ Ծովի վրա էլ խարդավանեց նրանց, ովքեր վստահում էին նրան իբրև իրենց հավատակցի։ Նա խորամանկությամբ օգնում էր բարբարոսներին։ Թող նրան տերը հատուցի։ Որովհետև նա քրիստոնյա իսկ չէր, ինչպես ոչ էլ նրա մայրը։ [Եվրոպացիներից]* շատերը մեռան, իսկ մնացածները դատարկաձեռն վերադարձան Անտաք[233], և գրավեց այն ու Երուսաղեմը. այստեղ էին երկու թագավորազներ՝ Մայմունն ու Տանգրիլը և յոթ կոմսեր**։ Երուսաղեմում թագավորեց Կոնտափրին, ապա Պաղտույնը՝ տասնյոթ տարի, իսկ Ամարին՝ տասնինը տարի։ Այս տեղի ունեցավ Հայոց հինգ հարյուր քառասունվեց (1097) թվականին։

Մեռավ սկյութացի[214] Խզըլ բռնակալը պարսից զորքերի կողմից Դվին քաղաքը գրավելու ժամանակ. ապա նրանց տերությունը բազմաթիվ մասերի է բաժանվում. մեկը բռնանալով տիրում է Խորասանում, մեկ ուրիշը՝ Ասորեստանում, մի երրորդը՝ Կապադովկիայի ու Հայոց կողմերում, մեկն էլ՝ Եգիպտոսում։ Եվ ուրիշները՝ այլևայլ տեղերում, որոնց անունները անծանոթ են մեզ։

Հինգ հարյուր վաթսուներկու թվականին (1113) վախճանվեց տեր Բարսեղը՝ հայրապետությունը վարելով երեսուներեք տարի։ Աթոռը մեծաշուք պատվով ստանձնում է Ներսեսի եղբայր տեր Գրիգորիսը։ Սրանք սուրբ Գրիգորի տոհմից էին։ Այդ պատճառով սուրբ Լուսավորչի աթոռը նստելուն պես սքանչելի հայրապետ սուրբ Գրիգորիսը սուրբ եկեղեցին պայծառացրեց զանազան կարգերով ու կանոնական օրինադրությամբ։ Ամեն բանով ջանում էր իր նախնիների օրինա-

---

* Ֆրանկներ ասելով Գանձակեցին հասկանում է և իտալացի, և՛ ֆրանսիացի, գուցե նաև ուրիշ եվրոպական ժողովուրդներ, ուստի հարմար համարեցինք ֆրանկը եվրոպացի թարգմանել։

** Մայմունը Բոյմոնդն է, իսկ Տանգրիլը՝ Տանկրեդը, որոնք խաչակրաց արշավանքների առաջնորդներից էին։ Անտիոքը գրավվեց 1098 թ.։

կով կենցաղավարել և սուրբ Գրիգորին ու նրա զավակին նմանվել։ Սա Հայրապետական աթոռը փոխադրեց Հռոմկլա[234] բերդը։ Որովհետև երբ բյուզանդացիները Գագիկ թագավորին ու տեր Պետրոսին տարան իրենց մոտ, դրանից հետո Հայրապետական աթոռը արևելքում դադարեց գոյություն ունենալուց. այն գտնվում էր Հունաց իշխանության ներքո, երբեմն Սեբաստիայում էր լինում, երբեմն Ծովք[234] կոչված վայրում, իսկ սա [Գրիգորիսը] փոխադրեց Հռոմկլա[235]։ Փոխադրելու պատճառը հետևյալն եղավ. նեղվելով սկյութներից ու արաբներից [կաթողիկոսը] այստեղ-այնտեղ էր շրջում և ապա տեսնելով ամուր բերդը՝ վերցրեց իր սրբությունները և եկեղեցու սպասները, տարավ դրեց այնտեղ մի իշխանի բարեմիտ եվրոսյացի կնոջ մոտ ի պահ։ Այնպես եղավ, որ այդ ժամանակ բերդատեր իշխանը վախճանվեց, ու նրա կինը այրի մնաց։ Սրբազան հայրապետը բարեպաշտ կնոջը աղաչեց բերդը իրեն՝ հայրապետին տալու, որպեսզի այն լինի Հայոց կաթողիկոսության աթոռանիստը։ Եվ կինը հոժարությամբ տվեց։ Սուրբ Հայրապետը կնոջը ուղարկեց Կիլիկիա[236] Հայոց մեծ իշխանաց իշխան Թորոսի մոտ, իսկ նա սրան տվեց գյուղեր, ագարակներ ու այլ կալվածքներ և կնոջը չափազանց ուրախացրեց, ապա նրան ուղարկեց իր երկիրը։

Այս Թորոս իշխանը և իր եղբայր Ստեփանեն իշխան Լևոնի որդիներն էին. [Լևոնը] Կոստանդի որդին էր, [սա՝] Ռուբենի, որոնք թոռներն էին նախապես հիշատակված այն մարդու, որ Գագիկ Արծրունու* ազգականությունից ու զավակներից էին։ Սրանք իրենց սահմանները քաջությամբ ընդարձակեցին՝ տիրելով Կիլիկիայի, Սիրիայի և ուրիշ շատ երկրների բազմաթիվ գավառների ու քաղաքների։ Գրավեցին [Կիլիկիայի] անվանի քաղաքներ Տարսոնը, Սիսը, Ադանան, Սելևկիան ու սրանց շուրջ գտնվող գավառներ ու քաղաքներ։

Այս լսելով՝ բյուզանդական Ալեքս** կոչված կայսրը մեծ զորքով Հայոց իշխաններ Ստեփանեի ու Թորոսի վրա է

* Կիլիկիայի թագավորները Անիի Գագիկ Բագրատունու սերունդներից էին։

** Այս ժամանակ կայսր էր Մանվելը (1143—1180)։



ուղարկում Անդրոնիկոսին։ Սա խաբեությամբ Ստեփանեին բռնելով՝ սպանել է տալիս։ Իսկ Թորոսը վերցնելով իր եղբորորդիներ Ռուբենին ու Լևոնին՝ գնում է մի ամուր բերդի մեջ, ապա այն բյուզանդացիներից, որ բնակված էին [Կիլիկիայում], առնում է իր եղբոր արյան վրեժը։ Բռնածներին կոտորում է, մյուսներին դուրս քշում երկրից, իսկ ինքը մեծ ուժով տիրում բոլոր գավառներին։

Այս իսկ հինգ հարյուր վաթսուներկու թվականին (1113), երբ Բարսեղ կաթողիկոսը վախճանվեց, Քրիստոսի մոտ փոխադրվեց նաև հռչականուն վարդապետ Գևորգը, որին իր բարձր բնավորության համապատասխան Մեղրիկ էին անվանում։ Սա կարգավորեց Դրազարկ[237] կոչվող հռչակավոր վանքը։ Այնտեղ գիշեր-ցերեկ անդադար ու մշտապես պասերով պաշտամունք էին կատարում. և ոչ մեկը սեփական որևէ բան չուներ, ամեն ինչ ընդհանուր տանն էր պատկանում։ Նույն տարին մեռավ նաև բյուզանդական քաջ Տանգրիը՝ Անտիոք քաղաքի իշխողը՝ թունավորվելով իրենց պատրիարքից։

Տեր Բարսեղից հետո Հայոց կաթողիկոսությունը ստանձնում է Գրիգորիսը՝ հիսուներեք տարի։

Իսկ սքանչելի Հայրապետ Գրիգորիսը ձեռնարկելով՝ նույն բերդում մի հրաշագեղ գմբեթարդ եկեղեցի կառուցեց և սկսեց թարգմանություններ կատարել կրոնական գրքերից։ Բազմաթիվ գրքեր թարգմանել տվեց հայերենի՝ մի մասը իր ձեռքով, մյուս մասն էլ ուրիշների միջոցով։

Սրա ժամանակ կային անվանի ու իմաստուն վարդապետներ. սքանչելի Ներսեսը՝ նույն կաթողիկոսի հարազատը, և մյուս Ներսես եպիսկոպոս Լամբրոնացին՝ Հեթումի եղբայրը, որ թարգմանեց Հովհաննու տեսիլքի մեկնությունը, Հռոմի Գրիգոր պապի պատմությունը և սուրբ Բենեդիկտոսի Օրենսդրությունը։ Իր կողմից գրեց նաև Դավթի սաղմոսների, Սողոմոնի առակների, սուրբ պատարագամատույցի, Հովհաննու ավետարանչի աղոթքների մեկնությունները. այս վերջինի սկիզբը հետևյալն է. «Երան* եղբայրների հետ էր»։

* Բնագիրն է երա։ Ալիշանը իր հրատարակությունից Երա-ն հանել է (տե՛ս Կ. Գանձակեցու Համառոտ պատմութիւն. Վենետիկ, 1865, էջ 63)։

Սկևռա[238] վանքում անառիկ Լամբրոն բերդի մոտ կառուցեց նաև մի հրաշագեղ եկեղեցի ու վանքի պաշտամունքային սպասավորությունը կարգավորեց այլ ազգերի օրինակով՝ սարկավագով, դպիրով, գլխարկով. որը հայերից շատերը պարսավում են։

Կար նաև Իգնատիոս անունով մի այլ եպիսկոպոս, որին կաթողիկոսը հրամայեց գրել Ղուկասու ավետարանի մեկնությունը։ Նա հանձն չառավ, մինչև որ երազում տեսավ լուսավոր ու ամեն վայելչությամբ զարդարված մի տուն և եկեղեցու բոլոր վարդապետներին այնտեղ զվարճանալիս։ Կամեցավ նաև ինքը մտնել ներս, բայց արգելեցին նրան ու ասացին, թե՝ «Որովհետև չչարչարվեցիր ավետարանը մեկնելու, այստեղ չես մտնի»։ Եվ զարթնելով՝ սկսեց Ղուկասու ավետարանը մեկնել խելամիտ ու իմաստալից լեզվով։

Ասորերեն Քարաշիթավ կոչված վանքում կար նաև ոմն Սարգիս անունով մի սքանչելի վարդապետ. սա գրեց կաթողիկեական յոթ թղթերի մեկնությունը՝ նախաբանով, հորդառակյան խոսքով ու ընդարձակ բազմաթիվ ճառերով։ Կար նաև Հովսեփ անունով մի այլ եպիսկոպոս՝ մի երևելի մարդ, որ Անտիոքի կողմերում էր։

Իսկ արևելքում կային եկեղեցու լուսավորիչ անվանի այրեր ու գիտականներ. Անանիա վարդապետը Սանահինում Պետրոս Գետադարձի* օրերում. սա մի բանիբուն ու հանճարեղ մարդ էր, տոմարական գործի գիտակ և աստվածաշնչական գրքերի մեկնաբան։ Ասում են՝ սա մեկնության համար ի մի հավաքեց առաքյալների թղթերի հետ Եփրեմի, Հովհան Ոսկեբերանի, Կյուրեղի և այլ սրբերի ճառերը ու համառոտեց՝ ընթերցողներին դյուրամատչելի դարձնելու համար։ Գրեց նաև ավետարանների խորամիտ, իմաստալից մեկնություն ու համեմատություն օրինակների հետ։ Գրեց նաև լուսամիտ քննություն նվիրական սրբասացության համար, որ ուղղափառների եկեղեցիներում «խաչեցար»-ով են ասում, և ապա Շողակաթի ներբողյանը։

Այսպես և գիտությամբ շատերից մեծիմաստ ու ամեն ինչում հանճարեղ՝ Սարկավագ կոչված հարտամիտ Հովհաննեսը Հաղպատում։ Սա շատ բան ուսումնասիրեց գրքերով ու բարի հիշատակ թողեց։ Սա, շատ անձեռնհասների կողմից փափագվածը՝ Հայոց հաստատուն ու անշարժ տոմարը հաստատեց շարժական և ոչ հաստատուն տոմարի փոխարեն։ Նաև բոլոր ազգերի տոմարները Հայոց տոմարի հետ համապատասխան դարձրեց։ Որովհետև չափազանց իմաստուն էր այդ մարդը ու աստվածային շնորհներով լցված. նրա բոլոր խոսքերը իմաստասիրական ոճով էին, ինչպես Գրիգոր Աստվածաբանինը, և ոչ թե գեղջկական։ Սա գրեց ներբողական ճառեր Հայոց մեծազոր արքա Տրդատի, սուրբ հայրապետ Ներսեսի և սքանչելի Սահակի ու Մեսրոպի մասին։ Գրեց նաև Ղևոնդյանց շարականը քաղցր եղանակով ու ներդաշնակ խոսքով, որի սկիզբը այս է. «Պայծառացան այսօր սուրբ եկեղեցիները»։ Գրեց նաև նրանց համար ներբողական ճառեր, աղոթագրքեր ու գրքերի ստույգ օրինակներ։

Սրան շատ էր սիրում Դեմետրիոսի հայրը՝ Դավթի ու Գեորգեսի պապ վրաց Դավիթ թագավորը։ Այնքան էր սիրում, որ երբ լսում էր նրա գալուստի մասին, ոտքի էր կանգնում, ընդառաջ էր գնում նրան և գլուխը խոնարհելով օրհնություն էր հայցում նրանից։ Նա ձեռքը դնում էր նրա գլխին և ասում էր հետևյալ սաղմոսը. «Գտա իմ ծառա Դավթին և իմ սուրբ յուղով օծեցի նրան։ Իմ ձեռքը թող օգնական լինի նրան ու իմ բազուկը զորացնի նրան։ Թող թշնամին նրան չվնասի, և անօրենը չչարչարի նրան»*։ Եվ սրա պատճառով թագավորը սիրում էր մեր Հայոց ազգին։

Այնպես պատահեց, որ սա մի օր անառակ վարքի համար Զոմզոմա անունով մեկին հեռացրեց սուրբ պատարագից։ Նա զղջալու և ապաշխարհելու փոխարեն մտածեց սպանել սքանչելուն։ Մի օր հանդիպելով նրան, երբ նա գալիս էր վանքի ներքևում գտնվող և գետի վրա նայող քարայրից, անամոթը բռնեց նրան, գցեց գետին ու վեր կացավ** նրա վրա։ Իսկ սուրբը, որ իմաստուն էր, ասաց նրան. «Որդեակ Ստեփանոս, մի սպանիր ինձ»։ Այդ հանդուգնը նրան

* Սանահնի առաջնորդ (1037 թ.)։

* Սաղմ. ՁԸ, 21—23։

** Բնագրում՝ Հարաւ ի վերայ նորա. ուղիղ է տարընթերցվածը. յարեաւ ի վերայ նորա։

ասում է. «Մինչև այժմ Ջոմզոմա էի, իսկ այժմ փոխանակ մի նու-ի (ն) բազմաթիվ (ն-եր) եմ ավելացնում։ Ստեփաննոս»[239], որովհետև նրա Ջոմզոմա անունը մականուն էր։ «Դու ինչո՞ւ սպանեցիր ինձ, ինչո՞ւ հանեցիր եկեղեցուց»։ Իմաստասերը ասում է նրան. «Դարձյալ քեզ եկեղեցի կընդունեմ»։ Թողեց նրան։ Գալով վանքը՝ ասում է միաբաններին. «Ինչ որ ասում էին այս միաբանի մասին, կարծում եմ, թե սուտ է, ահա ընդունում եմ եկեղեցի»։ Եվ հրամայեց եկեղեցու վերակացուին՝ նրան ավագերեց դարձնել։ Շատ շշուկներ եղան այդ մասին, այն թե անարժան էր, և նա կաշառք առավ ու նրան եկեղեցի ընդունեց։ Երբ հասավ սրբազան պատարագի ժամը, թշվառականը բեմ բարձրացավ, որ պատարագ մատուցի։ Վարդապետը եկավ գավիթ, ժողովրդի մեջ սուրբ սեղանի հանդեպ բացեց գլուխը ու սկսեց աղոթել։ Չար ոգին անմիջապես մտավ աներկյուղած մարդու մեջ, բեմից գցեց տաճարի հատակին ու սկսեց խփել տանջել։ Եվ նրան տաճարից դուրս հանեցին, ինչպես Ոզիային*, և մեծ երկյուղ տարածվեց տեսնողների մեջ։

Այսպիսի բարի կենցաղավարությամբ ապրելով աշխարհում՝ փոխադրվեց Քրիստոսի մոտ աշխատասերը [Մարկավագը] Հաղպատում։ Նրան թաղեցին մեծ եկեղեցու արևելյան կողմից փոքր եկեղեցու դռների մոտ, որը (փոքր եկեղեցին) հետո Համազասպ եպիսկոպոսը քանդեց ու շինեց մի հրաշալի կառույց, ուր զանգակները կախեցին՝ նրա մեջ նաև եկեղեցի հարմարեցնելով։ Սուրբը վախճանվեց հինգ հարյուր յոթանասունութ թվականին (1129)։

Մի տարի հետո վախճանվեց Ալավկա որդի սուրբ լուսավորիչ Դավիթ վարդապետը, որ Գանձակ քաղաքի բնակիչ Արքայություն անունով մի քահանայի խնդրանքով գրեց գեղեցիկ շարադրված ու օգտակար Կանոնական օրենսդրություն։ Գրիգոր անունով մի այլ սքանչելի վարդապետ ևս կար, որին Թոքակերի որդի էին կոչում։ Սրանք երկուսն էլ Գանձակ աշխարհից էին, որտեղից նաև ես եմ։

Այնպես պատահեց, որ մի օր այս երեք սքանչելի մարդիկ նստած էին. այնտեղ եկավ մի գյուղացի մարդ և ասաց նրանց. «Երանի նրան, ով իմանում է, թե ձեզանից որն է ավելի իմաստուն»։ Այս ասաց ծաղրանքով։ Թոքակերի որդին պատասխանեց ու ասաց. «Ես կպատասխանեմ քեզ։ Մինչդեռ մեր երկրում էինք, ես ձևող էի ու կարող, իսկ այս սարկավագը միայն կարել գիտեր. բայց այժմ սա և՛ ձևում է և՛ կարում, ու նաև շատ նկարներ է ավելացնում վրան»։ Այս ասաց առակաբար նրա իմաստությունը ցույց տալու համար, որովհետև այդ մարդը անչափ շատ փութեռանդ էր ուսման նկատմամբ։ Մի անգամ այնպես պատահեց, որ նա գնաց քարայրը, որտեղ գրքերն էին, և ուրիշները նրա հետ։ Երբ նրա հետ եղածները դուրս եկան, փակեցին դուռը, նա թաքնվեց ներսում. նրանք այնպես իմացան, թե նա առաջ դուրս եկավ։ Երբ դրա վրա շատ օրեր անցան, դարձյալ գնացին քարայրը ինչ-որ բանի համար. տեսան նրան ու զարմացան. հարցրին նրան, թե՝ «Ինչպե՞ս ապրեցիր առանց կերակրի ու խմելու»։ Նա նրանց ցույց տվեց գրքերը, որ կարդացել էր, և ասաց. «Այդ է իմ ուտելիքն ու խմելիքը, որ կերա ու խմեցի այս օրերին»։

Հինգ հարյուր ութսունութ թվականին (1139) սաստիկ երկրաշարժ եղավ, և կործանվեց Գանձակ քաղաքը. սրա մեջ գտնված շենքերը փլվեցին իրենց բնակիչների վրա։ Դավթի ու Գիորգիի հայր վրաց Դեմետրե թագավորը եկավ ու քաղաքի դռները տարավ իր երկիրը։ Երկրաշարժից փլվեց Ալհարակ լեռը ու փակեց իր միջով անցնող ձորակը. գոյացավ ծովակ, որ կա մինչև այսօր։ Նրա մեջ կան ազնիվ ձկներ։

Իսկ սքանչելի Գրիգորիս հայրապետը օրըստօրե ճոխանում էր բարեգործությամբ սուրբ եկեղեցու պայծառության համար. նա բոլոր ազգերից սիրված էր։ Նա գնաց սուրբ քաղաք Երուսաղեմ, որպեսզի երկրպագի փրկչական սուրբ տեղերին։ Երբ նա հասավ Անտիոք քաղաքը, ամբողջ քաղաքը նրան ընդառաջ ելավ ջահերով, լապտերներով ու մեծ պատվով նրան տարան նստեցրին Պետրոս առաքյալի աթոռին։ Երբ նա Երուսաղեմ հասավ, ֆրանկները, որ իշխում էին քաղաքին, և նրանց պատրիարքը էլ ավելի սեր հաստատեցին մեր ազգի նկատմամբ այն բանի համար, որ նա տեսքով բարի էր ու սուրբ գրքի գիտությամբ էր լցված։ Տրդատի ու

* Ըստ Աստվածաշնչի Ոզիան տապանակը պատշաճ ձևով չէր փոխադրում և Աստված նրան մահով պատժեց տապանակը տանելիս։

սուրբ Գրիգորի և Կոստանդիանոս կայսեր ու Սեղբեստրոս Հայրապետի կնքած հին դաշինքը նրա օրով վերստին նորոգեցին։ Եվ այսպիսի բարի կյանք ապրելով՝ փոխվեց Քրիստոսի մոտ ծեր տարիքում ու կատարյալ առաքինությամբ։ Աթոռը ստանձնեց նրա եղբայր Ներսեսը՝ յոթ տարի։

Այս Ներսեսը[240] իմաստությամբ ավելի էր լցված, քան այն ժամանակ շատերը՝ ոչ միայն հայ վարդապետների մեջ, այլև հույների ու ասորիների։ Այնքան [իմաստուն էր], որ նրա իմաստության համբավը տարածվեց բոլոր ազգերի մեջ. Թեորա անունով մի կոստանդնուպոլսեցի իմաստասեր լսելով սրա հռչակը՝ իր գրքերը բառնալով գրաստների վրա՝ եկավ փորձելու և վերահասու լինելու նրա իմաստությանը։ Եկավ շատ օրեր զրուցեց նրա հետ ու գտավ ամեն բանի մեջ հմուտ, նաև սուրբ Հոգով լցված։ Եվ երբ գնաց Կոստանդնուպոլիս քաղաքը, հարցրին նրան, թե՝ «Ինչպես էր լույսը, ճի՞շտ էր, թե ոչ»։ Նա ասում է. «Ինչպես լսեցինք, այնպես էլ տեսանք. քանի որ նոր ոմն Գրիգորիոս Աստվածաբան է հարություն առել»։ Եվ ամենքին զարմացնում էր նրանով։

Եվ որովհետև նա հանճարեղ մարդ էր, շատ բան կարգավորեց եկեղեցիներում քաղցր եղանակով. (օրինակ)՝ խոսրովյան* ոճով շարականներ, մեղեդիներ, տաղեր ու ոտանավորներ. նրան են պատկանում Հարության օրհնությունը, Երրորդ կողմը**, Աստվածածնի փոխման երկու օրվանը, Պետրոսի ու Պողոսի օրհնությունը, Մանկունքը, Համբարձինը, որի սկիզբը այսպես է. «Ցնծա այսօր, աստծու եկեղեցի», Որոտման Որդիների օրհնությունը (որի սկիզբն է)՝ «Նա որ կա էության մեջ միշտ էի որդին է»։ Անտոնի մի շարականը, Թեոդոսի երկուսը, քառասնիցի մեկը, առաքյալների մեկը, Ավագ շաբաթի երեքօրյա օրհնությունը՝ երկուշաբթին, երեքշաբթին, չորեքշաբթին, Հարության ճաշի երկու շարականը, նինվեացիներինը, հրեշտակապետներինը, սուրբ Վարդանանցը և այլ բազմաթիվ շարականներ։

Նա քաղցր եղանակով գրեց սուրբ պատարագի քարոզը,

* Խոսրով արքայի անունից՝ շատ հաճելի, քաղցրաձայն։

** Եկեղեցական երգեցողությունը կատարվում է 8 ձայնով, չորսը բուն ձայներն են և չորսը կողմ ձայները, ամեն բուն ձայն ունի իր կողմ ձայնը։



նույն խոհականությամբ շարականների տները, իր անվան տառերով երկու գանձեր՝ մեկը «Վարդավառի», մյուսը «Աստվածածնի փոխման», ինչպես Գրիգոր Նարեկացին գրեց «Հոգու գալստյանը», «Եկեղեցունը» և «Սուրբ խաչինը»։ Այն [Նարեկացին], որ բազմազան խոսքերով ու իմաստասիրական ոճով գրեց «Աղոթամատյանը», «Սուրբ Հակոբ Մծբնացու ներբողը», և «Առաքելոցը»։ Սա [Ներսես Շնորհալին] նույնպես կարգավորեց Մատթեոսի ավետարանի համառոտ լուսավոր ու հարուստ մտքերով մինչև այն տեղը, ուր տերն ասաց, թե՝ «Մի համարեք, թե եկա օրենքը կամ մարգարեությունները քանդելու»*։ Եվ չգիտեմ, թե ինչ պատճառով այնտեղ ընդհատվել է։ Նա գրեց նաև հրեշտակապետների ճառերը Դիոնիսիոս Արիսպագացու[241] ոճով, նաև սուրբ բազմաթիվ նահատակների ճառեր թարգմանեց։ Եվ այսպիսի բարի վայելչությամբ փոխադրվեց ամենքի հույս Քրիստոսի մոտ ցանկալի ու երանելի մահով, որովհետև սրբի կամքը այսպես էր, եթե հնարավոր լինի, ոչ ոք չպետք է աշխարհաբար լեզվով խոսի, այլ միայն գրաբար, ոչ գինարբուքների և ոչ էլ այլ ուրախությունների ժամանակ։ Այդ պատճառով նա երգեր գրեց ու սովորեցրեց նրանց, որոնք բերդապահներ էին, որպեսզի դատարկահունչ ձայների փոխարեն այն առեն, որին իբրև սկիզբ Դավթի սաղմոսն է։ «Գիշերը հիշեցի քո անունը, տեր»** և այդպես իմաստուն կերպով ըստ կարգի «Զարթիր, փառք իմ»***, որ այժմ եկեղեցում ասվում է գիշերային [illegible]արողության ժամանակ։

Սա [Ներսեսը] կանչվեց մեծ Ալեքսի կողմից, որ բյուզանդական ինքնակալ թագավոր Մանուելի փեսան էր. [Ներսեսը] եկավ Կիլիկիայի Մամեստիա քաղաքը և [Ալեքսը] նրան գրքերից հարցրեց խորին ու դժվարիմաց բաներ. ամեն բանում կատարյալ գտավ նրան ու չափազանց մեծարեց։ Դարձյալ գրեց նրան, որ նա գրավոր իրեն հանձնի հայոց հավատի խոստովանությունը, տոների և առաջավորաց պասերի[242] նշանակությունը, մի էության նշանակությունը, որը

* Մատթ. Ե., 17։

** Սաղմ. ՃԺԸ, 55։

*** Սաղմ. ՃԶ, 9, ՃԷ, 3։

*մենք վերագրում ենք Հիսուս Քրիստոսին միավորումից հետո, և եկեղեցու այլ կարգերի [նշանակության] մասին, որ համապատասխան չէ այլ ազգերի [եկեղեցական կարգերին]։ Իսկ նա համառոտ ու պարզ լեզվով տվեց նրան խնդրածը, որը Հայաստանյայց եկեղեցին ուղղափառությամբ այսպես է ասում։*

## Թ.

**Հայաստանյայց եկեղեցու խոստովանության հավատո գիր՝ գրված հայոց Գրիգորիս կաթողիկոսի եղբայր Ներսես եպիսկոպոսի կողմից բյուզանդական ինքնակալ թագավորի գերապատիվ փեսայի՝ մեծ հեծելազորապետ* Ալեքսիոսի խնդրանքով, երբ եկավ արևելք ու գտնվում էր Կիլիկիայի Մամեստիա մայրաքաղաքում, որտեղ հետևում էր նրան՝ [թագավորին] նրա հրավերով վեց հարյուր տասնչորս թվականին (1165)։**

*Անշուք լեզվով խոսում եմ խոհեմագույնից լսելիքին և աստվածասեր անձիդ մեր հավատքի ու եկեղեցու կարգի մասին՝ Ձեր կողմից արված հարցին պատասխան տալով։ Բայց որովհետև շրթունքներով խոսքի իմաստը իր էությամբ չի կարող հիշողության շտեմարանում մնալ առանց կորչելու, ընդհանրապես մոռացության է այն դատապարտված, այդ պատճառով խնդրում եք գրավոր արձանագրել այն, որպեսզի մեր կողմից ասված խոսքի հիշատակը անաղարտ մնա, որը և սիրով տալիս ենք իմաստություն սիրողիդ ըստ մեր համեստ գիտելիքների ու տկարության հայճեկ, համառոտ ու պարզ լեզվով։*

*Սակայն մեր սուրբ հավատի ճշմարտությունը և եկեղեցու կարգավորությունը ամբողջապես ամփոփում ենք սուրբ հայրերի ավանդներից վերցնելով, որ այսպես է. «Ընդունում ենք ամենասուրբ երրորդությունը՝ հորը, որդուն ու սուրբ հոգուն, որ երեք անձերի մեջ են բաժանված և մեկ էության ու աստվածության մեջ են հավաքված։ Հայրը անծին է ու անսկիզբ և հավիտենությունից առաջ է եղել։ Որդին ծնվել է Հոր էությունից, անխափան է ու անմարմին, ժամանակից առաջ է։ Սուրբ հոգին բխումն է հորից. և ոչ թե որդու նման ծնունդով է, այլ առաջ է եկել աղբյուրի նման՝ իրեն միայն բնորոշ եղանակով, արարածների կողմից անճանաչելի է։ Ոչ մի ժամանակ հայր չէր, երբ նրա հետ որդին, հոգին չկային։ Այլ որպես հայր միշտ հայր է եղել և ոչ թե հետո է հայրության անունը ստացել, նույնպես էլ որդին միշտ որդի է եղել իր** մշտնջենավոր հոր հետ։ Այսպես էլ սուրբ հոգին միշտ եղել է աստծու հոգին՝ հորից ու որդուց անբաժան. [եղել են] մի էություն, մի իշխանություն, մի կամք և մի արարչագործ զորություն, որ իմացվում է երեք անձնավորության մեջ։ Ոչ մեծություն և ոչ փոքրություն, ոչ բարձրություն և ոչ ցածրություն, ոչ առավելություն և ոչ պակասություն, այլ մի կարգ, մի պաշտամունք, մի երկրպագություն սուրբ երրորդությանը համագոյակից*** է ճանաչվում, որով ոչնչությունից գոյացան բոլոր եղածները՝ երկինքը երկնավորներով ու երկիրը երկրավորներով, երևացող ու աներևույթ արարածները՝ արարչության սկզբնական ստեղծվածները։ Իսկ երկրորդ հերթին երրորդությունից մեկը հոր մտքի ծնունդը [բանն]՝ միածին որդին, հոր և հոգու կամքով, Գաբրիել հրեշտակապետի ավետումով, իջավ կույս Մարիամի որովայնը՝ հոր ծոցից չպակասելով ըստ աստվածային անպարփակելի էության, և իրեն քաշելով ամենամաքուր կույսի արյունից, որ Ադամի զանգվածից էր, միացրեց աստվածության հետ՝ անքննելի ու անճառելի միացումով, և երկու էությունից՝ աստվածային ու մարդկային, ստացվեց կատարյալը, մի կատարյալ անձնավորություն՝ էությամբ անփոփոխելի ու անբաժանելի. ոչ փոխեց մարդկային մարմնավոր ու հոգավոր էությունը աստծու անհոգավոր ու պարզ էության՝ իրենը կորցնելով, և ոչ էլ աստծու պարզ անմարմին էությունը խառնեց մարմնական էության՝ շեղելով իր հավիտենական պարզությունից, թեպետև անքակտելի միասնության համար*

---

* Բնագրում պատոստրատոր, հունարեն πρωτοστρατωρ, ավելի մոտ կլինեն հունարենին տարընթերցվածի պրոտոստրատոր-ը։



** Բնագիրն ունի՝ նույնպես և որդի, ընդ հօր եղյում մշտնջենաւոր։ եղյում բառը բացարձակ վրիպակ է այստեղ. պետք է լինի եղեալ, ինչպես Շնորհալու համապատասխան տեղում իսկ է (Ն. Շնորհալի, Թուղթ ընդհանրական, 1865 թ., էջ 118), տե՛ս և Գանձակեցու փոփոխակը։

*** Շնորհալին համագոյ բառը չունի։

ավում է՝ անմարմինը մարմնանում է, և միտքը թանձրանում։ Այլև անմարմին միտքը խառնվում է մարմնի հետ և իր հետ միացնում է մարդկային էությունը՝ աստվածացնելով այն՝ խառնումով ու միավորումով և միավորման մեջ չկրելով փոփոխություն կամ այլակերպություն, բայց այժմ և ոչ էլ մարդկային հոգին ու մարմինն է [փոփոխություն կրում]։ Թեպետ ճշմարտությունը գերազանց է իմացվում, քան օրինակը, ինչպես որ արարչի ու արարածի միջև գոյություն ունի համեմատություն, բայց անհասանելի եղանակով մերը միավորելով իրենի հետ, մնացին անփոփոխ առնողն ու առնըվածը։ Ոչ թե պարունակության ձևով, ինչպես օդն ու ջուրը ամանում, որ դուրս գալով [ամանը] դատարկվում է, այլապես միավորված ավելի բարձր, քան անբաժանելի ու անփոփոխելի միտքը միավորությամբ. և Ադամի էությունը վերցնում է ոչ թե երբ Ադամը անմեղության ու դրախտի մեջ էր, այլ մեղանչելուց ու փչացման ենթարկվելուց հետո, որովհետև կույս Մարիամը, որից Քրիստոսը մարմնացավ, մեղանչական Ադամի էությունից էր։ Սակայն միավորվելով աստծու էությանը՝ մեղանչականը դարձավ անմեղ, իսկ ապականացուն [հատկությունը] դուրս մնաց մերժելի փըչացման կարիքներից, ինչպես հրահալ նյութերը, որ երբ կրակի հետ միավորվում են, փչացնող ժանգը, եթե ունեն, ոչնչանում է։ Իսկ էությունը մաքրվելով փչացման հատկությունից, մնում է անոչնչանալի։ Որովհետև այն, որի սկիզբը անսովորական է, քանի որ առանց սերմի անապական կույսից էր ծնունդը, ուստի և վախճանն էլ անապական է։ Որովհետև նրա մարմինը գերեզմանում չփչացավ, պետք է, որ ծննդի ու մահվան միջև ընկած ժամանակամիջոցը անապական լինի։ Ոչ բնական ու կամավոր պետքերից ենք ասում, թե նա անապական է, այսինքն՝ քաղցը, ծարավը, ննջելը, հոգնելը, տխրելը և արտասվելը, որոնք իրական և ոչ թե առերևույթ հնարավորություն են մեզ ընձեռում՝ իմանալու նրա մարդեղությունը,— այլ ընդունում եմ, որ ակամա ու մերժելի պետքերից է նա անապական։ Որովհետև նրա մեջ կար ինչ-որ բան, որ նման էր մերինին, և կար, որ վեր էր մերինից, ըստ այն գրվածի, թե մարդ է և ի վեր է քան մարդը, և թե մարդ է, ո՞վ է ճանաչում նրան։



Արդ՝ ըստ մեր ըմբռնումի միավորության եղանակը այսպես է եղել. կույսի արգանդում ինը ամիս և ըստ անդրանկածնության հինգ հավելյալ օր է բնակվում. և այն, որ նա կարող էր մի վայրկյանում կատարյալ լինել, օրըստօրե աճումով մեծանում էր, որպեսզի սրանով վերանա մարդեղությունը առերևույթ կարծելը։ Ծնվում է իբրև մարդ՝ մարդացած աստված՝ ծնողի կուսությունը անապական պահելով, որպեսզի ծնունդը օրենքի անեծքներից և կուսությունը նախապատվի։ Թլպատվեց ութ օր հետո, որպեսզի այն ուխտը, որ հայրերի հետ գրված էր, կատարի և մեզ հոգևոր կերպով ուսուցանի սրտի թլպատությունը։ Քառասուն օրից հետո եկավ տաճարը ըստ օրենքների նվիրման, որպեսզի մեր մարդկային էությունը իրենով ընծայի հորը՝ բարձունքում։ Փախավ Եգիպտոս, որպեսզի կռապաշտության մայրաքաղաքը դարձնի աստվածապաշտության և մեզ խրատի, համբերությամբ նրա հետ փախչենք հալածանքներ կրելով։ Երեսուն տարի շրջեց երկրում աղքատությամբ ու խոնարհությամբ՝ ծածկելով իր աստվածությունը, որպեսզի մեզ ճոխացնելով բարձրացնի, երբ նրա ուղուն հետևողներ լինենք։ Եկավ Հորդանան երեսուն տարին լրանալիս ու հայտնեց իր աստվածության փառքը՝ հոր վկայությամբ, թե՝ «Դա իմ սիրելի որդին է»* և հոգու աղավնակերպ իջնելով**։ Մկրտվեց Հորդանանում Հովհաննեսի ձեռքով, որպեսզի ջրերը մաքրի, հին մեղքերը ընկղմի նրանց մեջ և մեզ տա հոգևոր մկրտություն ըստ Հովհաննու այն վկայության, թե՝ «Նա կմկրտի ձեզ սուրբ հոգով ու հրով»***։ Քառասուն օր պաս պահեց երկրորդ Ադամը**** առաջին Ադամի համար, որը չպահեց. երեք փորձությամբ հաղթեց մարդկանց հաղթողին [սատանային]։ Եվ դրանից հետո իր աստվածային թաքուն զորությունը հայտնեց աշխարհին՝ դևերին հալածելով, հիվանդներին բուժելով, կույրերին լուսավորելով, կաղերին քայլեցնելով, մեռելներին հարություն տալով, ծովի վրա, ինչպես ցամաքի վրա, գնալով, քիչ հացով շատերին կերակրելով, արարածների

* Մատթ. Գ. 17. ԺԷ, 5, Մարկ. Ա, 11. Թ, 6, Ղուկ. Գ. 22։

** Մատթ. Գ. 16, Մարկ. Ա. 10։

*** Մատթ. Գ, 11, Մարկ. Ա, 8, Ղուկ. Գ, 16։

**** Երկրորդ կամ Վերջին Ադամը Քրիստոսն է։

լությունը ըստ ցանկության փոխելով, ջուրը՝ գինի, կավը լույս դարձնելով։ Եվ նախքան հարությունը իր աստվածային լույսը՝ մարմնի մեջ իբրև վարագույրով ծածկված, հայտնեց իր աշակերտներին Թաբորական[243] լեռան վրա՝ Մովսեսի ու Եղիայի հեղինակավոր կոչումով իրեն տեր ճանաչեցնելով ողջերի ու մեռելների։

Այնուհետև կամավոր կերպով գալիս է չարչարանքի, որպեսզի օրենքի ու մարգարեների գրքերը[244] կատարյալ դարձնի։ Նստում է էշի և քուռակի վրա՝ իբրև հրեական ու հեթանոսական եկեղեցու օրինակ։ Կատարում է զատիկը ըստ օրենքի որպեսզի հինը՝ նորի, ստվերը՝ ճշմարիտ լույսի փոխի։ Լվանում է աշակերտների ոտքերը, որպեսզի նախահոր ոտքերի դեպի գիտության ծառը ընթացքի հանցանքները մաքրի։ Իր մարմինը կյանքի կերակուր ու արյունը մեղքերի քավության համար է տալիս, որպեսզի մենք, որ առաջին պտղի ճաշակումով մեռանք, սրանք ճաշակելով կենդանանանք։ Իմ [այսինքն՝ մարդկային] էությամբ Հորը աղոթում է ինձ համար, որպեսզի նախկին փառքին դարձնի և օրինակ տա, որ մենք էլ աղոթենք մեր փորձության ժամանակ։ Տփվեց ու ապտակվեց երկնավորների ու երկրավորների ուրախության համար, որպեսզի վերացնի ամեն արտասուք ամեն երեսներից ըստ Եսայու։ Երկյուղեց, որպեսզի վերացնի մահվան երկյուղը։ Քրտնեց, որպեսզի [մարդկանց] երեսների քրտինքը մաքրի։ Ապտակվեց, որպեսզի ուժգին հարվածի թշնամուն։ Մերկացավ, որպեսզի նախահոր դեմքի ամոթի ծածկույթը պատռի։ Խմեց լեղին, որպեսզի դառը մեղքերի ճաշակումը քաղցրացնի։ Բևեռվեց խաչին, որպեսզի մեզ ազատի կապանքներից և կենաց փայտ շնորհի մահվան փայտի փոխարեն, մեռավ մարդկային մահացու էությամբ ու կենդանի մնաց աստվածային անմահ էությամբ։ Ոչ թե մի մասը մեռած է, մի մասը կենդանի ըստ [հոգին ու մարմինը], բաժանվողների, այլ միևնույն անձնավորությունն է։ Եվ միևնույն Քրիստոսը չարչարվում ու մեռնում է մահկանացու մարմնով, որը մեզնից է, և կենդանի անմահ էր նաև կենդանարար աստվածությամբ, որ Հորից է, ինչպես և սուրբ Աթանասն է ասում, թե՝ «Մահկանացու մարմինը չմեռավ անմահ աստվածությանը, որովհետև անախտ էր, այլ ամե-



լին՝ մնաց նաև ինքը անախտ՝ անմահի զորությամբ»։ Եվ քիչ հետո ասում է, թե՝ «մահ եղավ մահկանացուներիս համագոյակից մարմնին»...

Այդ պատճառով մենք Քրիստոսին ընդունում ենք աստված ու մարդ։ Սա չենք ասում բաժանելու համար, քավ լիցի, որովհետև նա ինքը չարչարված է և չարչարված չէ. աստվածային էությամբ անփոփոխելի ու անչարչարելի է, իսկ մարմնով չարչարված ու մահ ճաշակած։ Այդ պատճառով սխալվում են նրանք, ովքեր ասում են, թե այլ մեկն է, որ չարչարվեց, և մեկ ուրիշն է, որ չչարչարվեց։ Բայց ոչ ոք չէ, բան Քրիստոսը [բանը], որ չարչարվեց ու մարմնով մահ ընդունեց. քանի որ նույն ինքը անչարչարելին հանձն առավ, որ իր չարչարանքներով փրկի մարդկանց։ Որովհետև այն, որ Քրիստոսի մարդկային մարմինը չարչարվում էր, դրա հետ լինելով Քրիստոսը, իրեն էր վերագրում այդ, և դառնում էր չափազանց հրաշափառագույն իր, որովհետև ինքն էր, որ չարչարվում էր և ինքն էր, որ չէր չարչարվում։ Չարչարվում էր չարչարելիով, որովհետև ինքը իր մարմինը չարչարում էր և նույն չարչարելիի մեջ էր ինքը առանց չարչարանքի՝ անբաժանելի չարչարյալ մարմնից, քանի որ Քրիստոսը աստված լինելով՝ էությամբ անչարչարելի էր, սակայն չարչարելի մարմնի հետ անբաժանելի կերպով միացած էր անմարմինը, և մարմինն էլ իր մեջ ուներ անչարչարելի Քրիստոսին, որ իր [մարմնի] թուլության ոչնչացնողն էր. սրանք ասաց* Աթանասիոսը։ Նրա հետ և մենք՝ մեռնելուց հետո մարմնից ու մարդկեղեն հոգուց անբաժանելի ենք ընդունում աստվածությունը։ Եվ երբ մարմնով խաչի վրա էր ու գերեզմանում, իր աստվածությամբ Հոր աջ կողմում էր, և նրա փառքով լի էին երկինքն ու երկիրը։ Երկրում Հայրն էլ նրա հետ էր, ինչպես որ ասաց. «Իմ Հայրը ինձ հետ է և ինձ մենակ չթողեց»**։ Որովհետև ուր Հայրն է, այնտեղ և Որդին է և Հոգին, իսկ ուր Որդին է, այնտեղ է և Հայրը, և Հոգին, իսկ ուր սուրբ Հոգին է, այնտեղ է Հայրը, և Որդին։ Արդ՝ մեռած մարմնով

* Բնագիրը ասաց բայը չունի, վերցնում ենք Շնորհալու համապատասխան տեղից (Թուղթ ընդհանրական. 1865. էջ 125)։

** Հովհ. Ը, 28—29։

գերեզման իջավ, իսկ կենդանի աստվածայնությամբ ավերեց դժոխքը։ Եվ երրորդ օրը հարություն առնելով՝ իր հետ մեղքերի մեռելությունից հարություն տվեց նաև հավատացյալ մարդկանց հոգիներին։ Եվ հույս տվեց նաև մարմնական հարության, ինչպես ինքը երկրորդ գալստի ժամանակ։ Քառասուն օրից հետո բարձրացավ երկինք առաքյալների հանդեպ ու նստեց բարձունքում հոր մեծության աջ կողմը. ըստ առաքյալի գալու է մեր մարմնով, որով համբարձվեց, արդարությամբ դատելու ողջերին ու մեռելներին* ու հատուցանելու յուրաքանչյուրին ըստ իր գործերի։ Արդ՝ Սուրբ երրորդության ու Քրիստոսի տնօրինության վերաբերյալ մեր հավատի ճշմարիտ խոստովանությունը այս է, որ համառոտ խոսքով ներկայացրինք։

Իսկ այն, ինչ վերաբերում է եկեղեցու ու տոների կարգերին և այլ հարցումներին, որ ձերոնցից ոմանք մի բանը մի այլ բան համարելով՝ մեր մասին գրավոր հայտնեցին ձեզ, կգրենք նաև ճշմարիտ խոսքերով այս, թե որոնք ենք ընդունում և որոնցից ենք հրաժարվում։

Առաջին՝ գրված էր, թե՝ «Հունվարի հինգին առավոտյան տոնում են ավետիքի տոնը, իսկ իրիկունը՝ ծննդյան տոնը։ Մյուս օրը առավոտյան, որ հունվարի վեցն է, տոնում են Քրիստոսի մկրտության տոնը»։ Սրանից որոշ բան ուղիղ է, որոշ բան ճշմարտությունից հեռու է. այսպես է։

Միևնույն օրը հունվարի վեցին մենք տոնում ենք Քրիստոսի ծննդյան ու մկրտության տոնը, ինչպես որ ընդունել ենք առաջին հայրերի ավանդներից. այս բանում նրանց գրածները [մեր մասին] ուղիղ են։ Իսկ այն, թե ամսի հինգին առավոտյան ավետիքի տոնն ենք տոնում, ամեն ստությամբ լեցուն է, որովհետև ավետիքի տոնը ըստ մեր [կարգի] ապրիլի վեցին է, իսկ ծննդյան տոնը հունվարի վեցին է, այսինքն տասներկու օր հետո է այն օրվանից, որը դուք եք տոնում։ Ինչ հարկ կար ապա անմտորեն երեքը միասին տոնելու, այնինչ ծննդյան և մկրտության տոները միասին տոնելու համար շատ վկայություններ ունենք։

Նախ որ սկզբնապես բոլոր եկեղեցիները՝ սկսած եկա-

* Բ. Տիմ. Դ, 1)։



կաններից, այնպես էին տոնում, իսկ հետո ոմանք բաժանեցին Բեթղեհեմի ու Հորդանանի համար, որովհետև մի օրում երկու եկեղեցիներում չէին կարող տոները կատարել՝ [եկեղեցիները] միմյանցից հեռու լինելով. և քիչ-քիչ աճելով, նույնը ընդունեցին նաև այլ եկեղեցիներ։ Իսկ հայերը, ինչպես որ ընդունեցին սուրբ Գրիգորից, անփոփոխ մնացին նրա վրա։

Երկրորդ՝ Ղուկաս ավետարանիչը վկայում է սրա ճշտությունը, որովհետև, պատմում է, քավության տոնին, որ Թշրինի* տասին է, այսինքն՝ սեպտեմբերի քսաներկուսին, Զաքարիա քահանայապետը մտնում է տաճարը ու խունկ է ծխում և տեսնում է հրեշտակապետի երևումը ու ամուլի հղիանալու ավետիքն է լսում և [ավետմանը] չհավատալուց լեզուն պապանձվում է, և ապա ասում, թե՝ «Երբ լրացան նրա սպասավորության օրերը, գնաց իր տունը**»։ Նրա տունը Երուսաղեմում չէր, այլ Հրեաստանի լեռնակողմը, որտեղ Մարիամը Եղիսաբեթին ողջույն տվեց։ Նրա սպասավորության օրերն էին՝ հինգ օր քավության տոնի, յոթ օր տաղավարահարության[245], որ անում է տասներկու օր։ Արդ՝ այս երկու տոնը ավետարանիչը կոչում է Զաքարիայի քահանայության սպասավորելու օրեր, որոնք ըստ օրենքի միասին էին տոնում։ Երբ դրանք լրացան, գնաց, ասում է, իր տունը և Թշրինի քսաներկուսին՝ հոկտեմբերի հինգին Եղիսաբեթը հղիացավ։ Արդ՝ նրանք, որոնք մարտի քսանհինգին են կատարում կույսի ավետման տոնը, Եղիսաբեթի հղիությունը տոնում են Զաքարիայի պապանձման առաջին օրը, որ Թշրինի տասին է, սրանք Ղուկաս ավետարանչի կողմից չեն վկայվում, իսկ նրանք, որոնք ապրիլի վեցին են տոնում՝ նրա տասներկուօրյա սպասավորությունից հետո, Եղիսաբեթի հղիությունը համարում են ըստ վերևում ասվածի, որ Թշրինի քսաներկուսն է, սա և հաստատում է ավետարանիչը։

Սրանց համար կա նաև մի երրորդ վկայություն ըստ նույն ավետարանչի պատմության. այդ այն է, որ ասում է, թե Հիսուսը երեսուն տարեկան էր՝ սկսած իր ծնունդից մինչև մը-

* Եբրայական տոմարի յոթերորդ ամիսը։

** Ղուկ. Ա, 9, 23։

կիրառությունը. և պետք է ըստ իմաստի և ուղիղ մտքի նույն ամսաթիվը, երբ ծնունդն է, այսինքն՝ հունվարի վեցը, զուգադիպի նաև մկրտության օրվան երեսուն տարուց հետո։ Չնայած շաբաթվա օրը նույնը չէ։ Եվ շատ բան կար սրա մասին ասելու, բայց քեզ՝ իմաստունիդ համար քիչն էլ շատ է. բայց այսպես թե այնպես, ի փառս աստծու թող կատարվեն։

Սուրբ աստվածածնի երգը,— գրել էր այստեղ թղթում,— թե ինչ չի ասվում մեր եկեղեցիներում։ Այս ամբաստանությունը ճշմարտության հետ կապ չունի, որովհետև երկնավորներից ու երկրավորներից պատվի արժանավոր աստծու մայր Մարիամը մեզանից փառավորվում է այնքան, մինչև որ նրա խոսքերը ոչ թե օրերը երից մանկանց և Դավիթ մարգարեի խոսքերի հետ ենք երգում, այլ միայն կիրակի օրը և տերունական տոներին, որ և ձերոնցից նրանք, որոնք տեղյակ են մեր եկեղեցու կարգերին, վերահասու կդառնան ձեզ։

Դարձյալ՝ այստեղ թղթում մեզ համար գրված էր նաև հետևյալը, թե՝ «Քրիստոսի ու մարմնի համար մի էություն եք ընդունում, որից Ապողինարը, ասում են, մեր կողմից ամբաստանվում էր։ Սա կարիք է զգում երկար պատասխանի, բայց ժամանակ չլինելու պատճառով քչով բավականանանք։ Ասում ենք՝ Քրիստոսի մեջ մի էություն ընդունում ենք ոչ խառնումով ըստ Եվտիքեսի և ոչ էլ նվազությամբ ըստ Ապողինարի, այլ ըստ Կյուրեղ Ալեքսանդրացու, որը նա իր «Գիրք պարապմանց»-ի մեջ ասում է ընդդեմ Նեստորի, թե՝ «Մարմնացած Քրիստոսի էությունը մեկ է, ինչպես որ հայրերը ասացին։ Հայր է կոչում Աթանասիոսին և նրանից առաջ-եղածներին, իսկ մենք սրբերի ավանդությունից ենք այս ասում և ոչ թե ըստ չարափառների կարծիքի խառնաշփոթմունք, փոփոխություն, այլափոխություն գցելով Քրիստոսի մարմնավորության վրա. մի էություն ենք ասում, մի անձնավորություն ասելու փոխարեն, որը դուք եք ասում Քրիստոսի վերաբերմամբ, և սա ուղիղ է ու մեր կողմից ընդունված։ Մեր մի էություն ասելն էլ հավասար ու նման է, բայց ոչ թե հերձվածողների կարծիքների համար։ Սա նրանից է հայտնի, որ երբ խոսքով միևնույն բանի մասին խոսում ենք, միայն մեկի վրա կանգ չենք առնում, այլ երկուսի հատկությունն էլ ցույց ենք տալիս, ինչպես և չարչարանքի ու



մահվան մասին սուրբ Աթանասից վերևում հիշվածներն են հայտնում։ Աթանասը ասում է, թե Քրիստոսը աստված լինելով՝ էությամբ անչարչարելի էր, սակայն չարչարելի մարմնի հետ անբաժան միացած էր անմարմինը. և այսպես շատերը։ Որովհետև մի էություն* մեր կողմից ուրիշ բանի համար չի ասվում, եթե ոչ նրա մեջ Քրիստոսի և մարմնի անբաժանելի ու անճառելի միասնության մասին։ Իսկ երկու էություն ասելուց, երբ ասվածները ըստ Նեստորի բաժանման չեն, այլ անխառնությունը ցույց տալու ընդդեմ չարափառ Եվտիքեսի ու Ապողինարի,— չենք հրաժարվում։ Բայց օրինակ՝ մարդու հոգին ու մարմինը տարբեր էություն ունեն. այն է՝ մեկը երկնային է, իսկ մյուսը երկրային, մեկը երևացող է, իսկ մյուսը՝ աներևույթ, մեկը առժամանակյա է, իսկ մյուսը՝ անմահ, սակայն միասնությունից հետո մարդը մի էություն է համարվում և ոչ թե երկու. մի էություն ասելով էլ խառնում չպետք է հասկացվի մարդու մեջ, այսինքն՝ կամ նրան միայն հոգի պետք է համարել, կամ մարմին։ Այսպես էլ Քրիստոսը թեպետև մեկ էություն է համարվում, ասվածները խառնումին չեն վերաբերում, այլ խոսքը երկու էության միմյանց հետ անճառելի միավորման մասին է։ Որովհետև եթե այսպես չլիներ, ապա հարկ կլիներ ոչ միայն երկու էություն ընդունել Քրիստոսի համար, այլ երեք. երկու մարդկային՝ հոգին ու մարմինը, և մեկն էլ աստվածայինը։ Բայց միավորումից հետո, ըստ սուրբ վարդապետների ասվածի, բաժանման երկվությունները վերացան։ Արդ՝ եթե մի էություն անքակտելի ու անբաժանելի միավորության համար է ասվում և ոչ թե խառնումի, և երկու էություն անխառն ու անփոփոխելի լինելու համար է ասվում և ոչ թե բաժանման համար,— երկուսն էլ ուղղափառության սահմանում են։

Դարձյալ՝ գրությունում գրված է, թե մեր մեռոնը բուսական ձեթից է, որին [բույսի սերմին] չուշմա են կոչում [քունջութ], և ոչ թե ձիթենի ծառերից։ Եվ այս իրոք այսպես է։

* Բնագիրն ունի՝ Քանզի մի բնութիւն ոչ վասն այլ իրիք ասի ի մէնջ։ Բանիւն ձեր բացարձակ սխալմունք է այստեղ. այդ բառի փոխարեն Շնորհալին ունի բնութիւն, որ ճիշտն է (նույն տեղում, էջ 129)։

Իսկ դրա պատճառը ոչ այլ ինչ է, եթե ոչ այն, որ ցուրտ եղանակի պատճառով Հայաստանում ձիթենիներ չեն աճում։ Հարկ եղավ այնպիսի ձեթ վերցնել իբրև մեռոնի նյութ, որ հեշտությամբ ճարվում է երկրում։ Սրա մեջ հոգևոր որևէ վնասից չտեսան, որովհետև եթե նյութին էր պատկանում զորությունը, ապա անհրաժեշտ էր այն նյութը որոնել, որի մեջ ինչ-որ աստվածային ներգործություն կար։ Իսկ եթե քահանայական օրհնությունն ու աղոթքը ձեթի նյութի հետ միացնում են աստվածային շնորհը, ոչ մի առավելություն ու պակասություն չի լինի՝ ձեթը ծառապտղից է, թե բույսերից, ինչպես որ Քրիստոսի արյան նյութ հանդիսացող գինին ինչ գույնի էլ լինի, ընդունելի է, լինի սև, կարմիր, թե սպիտակ, որովհետև պատարագը սրբագործում է այն, և դառնում է Քրիստոսի արյուն։

Գրության մեջ ասված էր նաև սրբերի պատկերների մասին, թե հայերը բոլորովին չեն ընդունում։ Ով սրանց մեջ կա ճշմարտություն, բացահայտ ցույց կտանք այն հակառակությունից, որ առկա է մեր երկու ազգերի մեջ։ Սատանան շատ չարիքներ սերմանեց, ինչպես որ մեր ազգի մարդկանցից ոմանց մեջ սրբերի պատկերների մերժումը, որոնք* [աղանդները] նաև մեր կողմից են անարգվում. նաև նզովք ենք դնում նրանց վրա, որոնք հանդգնում են հայհոյել։ Որովհետև մենք, որ առաջնորդական աստիճան ունենք, ընդունում ու երկրպագում ենք մեր Փրկչի մարդացման պատկերը. այլև ամեն սրբի պատկեր ըստ իր կարգի փառավորում ենք, որոնք նաև նկարում ենք մեր եկեղեցիներում ու պատարագամատույցի հանդերձների վրա։ Եվ մերոնցից չընդունողներին՝ աղանդներին ու հիմարներին պատժելով լռեցնում ենք։

Գրված էր նաև հետևյալը. թե՝ բոլոր խաչերը մեխում ենք։ Իսկ սա ճիշտ չէ, որովհետև այնպիսիները, որոնք միակտուր նյութից են, ինչպես ոսկեղեն, արծաթեղեն ու այլ խաչեր, որոնք երկու կտոր միմյանց վրա չեն դրված, չենք մեխում։ Իսկ փայտյա [խաչերը], որ երկու կտորից են, անհրաժեշտ է երկաթյա մեխերով ամրացնել, որպեսզի քամիներից կամ մի այլ պատճառից իրարից բաժանվելով, չընկնեն, ինչպես

* Բնագրում՝ որ, ուղղում ենք ըստ Շնորհալու՝ որք:



նույնպես առաջին խաչը, որի վրա մեխվեց Քրիստոսը, ընդունվում է, որ երկու կտոր էր՝ միմյանց վրա մեխված, որպեսզի դիմանա կրելու մարմինը ու չքանդվի։ Արդ՝ եթե ինչ-որ իմաստ ունի բանը*, պետք է բոլոր խաչերը, ոչ ամեն տեսակ նյութից են, մեխել և ոչ թե միայն փայտյա խաչերը, երբ երկյուղ կա քանդվելու և ընկնելու։ Դարձյալ՝ եթե ոչ երկու մասից, այլ մի մասից կազմված քարե կամ երկաթյա խաչերի վրա մեկը մեխ տեսնի, թող իմանա, որ այն տգետների, հակառակասերների գործ է և ոչ թե մեր կողմից է առաջարկված։

Երեք սրբասացությունների մասին գրված էր, թե խաչեցար ենք ասում, և թե մենք այս սրբասացությունները երգում ենք երրորդության համար, ինչպես դուք, չար ու խոր մոլորություն էր խաչեցար ասելը։ Բայց քանի որ որդու մի անձնավորության նկատմամբ ենք ասում սրանք, այդ պատճառով նրա կողմից մեր հանդեպ եղած մեծագույն երախտիքն ենք մատուցում նրան, թե՝ «Աստված, և հզոր, և անմահ, որ մարմնով խաչվեցիր մեզ համար, ողորմիր մեզ»։ Նրան առընթեր աստծու խոսքի [Քրիստոսի] մորը բարեխոս ու միջնորդ ունենք իր միածնի մոտ, երբ ասում ենք, թե՝ «Մատուցիր մեր աղաչանքները քո որդուն՝ մեր աստծուն»։ Այդ պատճառով թե որևէ մեկը երրորդության համար ասի, ինչպես դուք, կամ թե միայն** որդու համար, ինչպես մենք, երկուսն էլ հաճելի են աստծուն, երբ ասածները միմյանց չեն հակասում։ Սակայն թեև այստեղ որդու համար ենք սրբասացությունները ասում, բայց սուրբ պատարագի մեջ երեք անձնավորությունների վերաբերյալ ենք երգում սերովբեների երգերը։

Նաև մեր մասին գրված էր այս ամբաստանությունը, թե՝ սուրբ քառասունքի պասին անասունների կաթնեղեն ու ձու են ճաշակում շաբաթ ու կիրակի օրերը։ Այժմ ցույց տանք ձեզ նաև սրա ճշտությունը։ Հին ժամանակ արևելքում հայոց իշխանները սովորություն ունեին քառասունքի պասի բոլոր

* Բնագրում՝ բանն, կարծում ենք՝ ուղղելի ի բանն:

** Բնագրում միայնոյ, ուղղում ենք միայն ըստ Շնորհալու և տարընթերցվածների։

օրերը ուտել ձուկ ու ձեթ և խմել գինի ըստ ձեր ազգերի ու Ֆրանկների, իսկ այն ժամանակ առաջնորդները քարոզում էին՝ պաս օրերին զերծ մնալ այդպիսի կերակուրներից, ասելով՝ թե ձուկը ավելի է [պասի առումով], քան կաթնեղէն կերակուրները, որովհետև ձուկը կատարյալ կենդանի է, իսկ կաթնեղենը կենդանի չի, այլ կենդանիների կերի քամվածքը։ Այդ պատճառով, եթե կամենում եք սրբությամբ պահել ըստ աստծու կամքի, զերծ մնացեք որպես կաթնեղենից, նույնպես էլ ձկներից։ Իսկ եթե չեք կամենում այդ անել, շաբաթվա հինգ օրերը սրբությամբ ամեն կերակուրներից ու ըմպելիքներից պաս պահեցեք, իսկ շաբաթ ու կիրակի օրերը, բացի մսից, ամեն ինչ կերեք ձեր անզսպության պատճառով, և ձուկ, և միս, որպեսզի ոչ ոք, միայն ձուկ ուտելով և կաթնեղեն չուտելով, չկարծի, թե պաս է պահում՝ ձուկը պասից կերակուր համարի։ Եվ սա որովայնամոլների սահմանն է, ոչ թե պաս պահողների։ Սա էլ հայերի մեջ երկար չտևեց, այլ կարճ ժամանակ, հետո մեջտեղից շուտափույթ վերացավ, և այժմ մեր ժամանակ բացի իշխաններից ու զինվորներից, դրանցից էլ ոմանք ինքնահոժար կերպով և ոչ թե կանոնական հրամանով, կամ մեր կողմից թույլտվություն ստանալով, պաս օրերին ճաշակում են ձուկ, ձեթ ու գինի։ Իսկ եկեղեցական ամեն դասերը, ժողովրդից շատերը ոչ միայն կաթնեղեն կերակուրներից ու ձկներից զերծ են մնում, որ բոլորովին բացառվում է քառասունքի պասի օրերին, այլև ամեն յուղալի կերակուրներից ու գինու ըմպելիքներից։ Իսկ եթե մեկը անզսպությամբ սխալվում է և զղջալով խոստովանում, ապաշխարության շատ ծանր բեռ ենք դնում վրան։

Գրության մեջ մեր մասին գրված էր նաև հետևյալը, թե՝ միայն գինով, առանց ջուր խառնելու են պատարագ մատուցում։ Այս մասին Աստվածաշնչի վկայություններից մենք շատ բան ունենք ասելու, բայց խոսքը համառոտելու պատճառով ավելորդ համարեցինք բոլորը բերել՝ բավականանալով միայն քչով։

Առաջինը այն է, որ մեր Լուսավորիչ սուրբ Գրիգորից ունենք այս ավանդությունը, որը նա ընդունեց իրենից առաջ եղած նախնի սուրբ հայրերից։ Դարձյալ՝ երբ Քրիստոսը, որ իբրև օրինակ իրեն պատարագ մատուցեց վերնատանը,



միայն գինի է գրել, թե «Վերցրեք ձեռքը և ասաց. այս է իմ արյունը»*, իսկ ջուր բառը բնավ չի հիշատակվում։ Ինչպես նաև ասաց խորհուրդի կատարումից հետո, թե՝ «Սրանից հետո այլևս չեմ խմի որթի բերքից»**, իսկ որթը գինի է տալիս և ոչ թե ջուր, ինչպես որ ավետարանի մեկնության մեջ ասում է Հովհան Ոսկեբերանը։ Իսկ եթե կողերից հոսած ջրի և արյան մասին եք ասում, թե ջուր լցրեց բաժակը, այս դարձյալ նույն Հովհան Ոսկեբերանը Հովհաննու ավետարանի մեկնության միևնույն խոսքի մեջ ջուրը մեր մկրտության խորհուրդն է համարում, իսկ գինին՝ սուրբ պատարագինը։ Նաև եկեղեցու շատ վարդապետներ նույնն են ասում, իսկ մենք նրանց խոսքերի ու ավանդությունների հետևողը լինելով, այդ պատճառով ջուր չենք լցնում, այլ անապակ գինով Քրիստոսի անապակ արյան խորհուրդն ենք կատարում։ Բայց թե այսպես է, թե այնպես, պետք է միայն մաքուր հոգով սպասավորել աստվածային խորհրդին, և բոլորը ի հաճույս աստծու կկատարվեն։ Իսկ անմաքուրն ու պիղծը թե՛ անապակ բաժակով անի, թե՛ ջուր լցնելով, հաճելի դարձնելու փոխարեն կբարկացնի պատարագ ընդունող աստծուն։

Գրության մեջ կար նաև այս ծիծաղելի բանը, թե իրենց խաչերը ամեն տարի նորապես մկրտում են ու օրհնում։ Այս բանը մեր ազգի մեջ ոչ գիտունների կողմից է եղել և ոչ էլ ագետների, որովհետև խաչի օրհնությունը մի անգամ է և ոչ թե շատ անգամ, ինչպես գրել էիք, իսկ խաչի օրհնությունը մեզնից չի եղել, այլ ձեր առաջին հայրերից, որ մեր նախնիները թարգմանել, մեզ են տվել, ինչպես որ այժմ արևելքում գտնում ենք հունարեն հին գրքերի մեջ մերինից ոչ ավել, ոչ պակաս. որովհետև գրված է՝ լվանալ նորոգ խաչը նախ ջրով և ապա գինով իբրև օրինակ երկու վտակների, որ հոսեցին Քրիստոսի կողերից. սաղմոս ասել ըստ այդ օրինակի, ընթերցել մարգարեական և առաքելական խոսքեր ու սրբազան ավետարաններ, դրանից հետո քահանայական աղոթքներ՝ խնդրելով աստծուց, որ տա այդ խաչին առաջին խաչի շնորհներն ու զորությունը, որի վրա ինքը մեխվեց, որպեսզի դևե-

---

* Մատթ. ԻԶ, 28, Մարկ. ԺԴ, 24։

** Մատթ. ԻԶ, 29, Մարկ. ԺԴ, 25։

րին հալածի, մարդկանց հիվանդությունները բուժի ու ցավերը, որ մեր մեղքերի համար իջնում են վերուստ, դադարեցնի. նաև, թե՝ «Միշտ բնակվիր սրա մեջ, ինչպես քո առաջին խաչի մեջ, և այնպես արա, որ սա լինի քեզ համար տաճար ու աթոռ և զորության զենք, որպեսզի մեր երկրպագությունը սրա առջև լինի ոչ թե իբրև նյութեղենի, այլ քեզ՝ միակ աներևույթ աստծուդ մատուցվի». և այսպիսի աղոթական խոսքեր։ Եվ ապա առնելով օրհնված խաչը, կանգնեցնում ենք արևելքում ու նրան երկրպագում ենք՝ մի անգամ միայն օրհնելով և ոչ թե շատ անգամ, ինչպես գրված էր։

Այս գրվածքը մեզ ցույց տվեց նաև հետևյալը, թե՝ լսեցինք նրանցից ոմանցից, որոնք ասում էին, թե Քրիստոսը մեզ համագոյակից մարմին է՝ թանձր, մահկանացու, չարչարելի, երկրային, ոչնչացող և եղական է ոչ թե կույսից*, այլ անապական է, անմարմին, անչարչարելի, անլինելի. և մարդ երևաց, ինչպես ինքը կամեցավ, կերավ, խմեց, ինչպես Աբրահամի մոտ։ Եվ այսպիսի խոսքերին կատարելապես պատասխան ունեն մեր կողմից ձեզ գրված [խոսքերը], բայց մի փոքր էլ այժմ դարձյալ կասենք։ Քրիստոսին ընդունում ենք աստված ու մարդ. ըստ աստվածության նա համագոյակից է հորը, իսկ ըստ մարդեղության համագոյակից է մեզ, և նույն ինքը մի աստվածությունն է ու անբաժանելին. ըստ աստվածային էության նա երկնային է, պարզ, անչարչարելի ու անմահ, իսկ ըստ մարդկային էության երկրավոր է՝ թանձր, չարչարելի ու մահկանացու, բայց ոչ ոմն, և ոմն ըստ Նեստորի կարծիքի, որ մարմինը բանի [Քրիստոսի] տաճար համարեց, որովհետև միավորումից հետո երկուությունը վերացավ, ինչպես են բարձրագույններն ու աստվածայինները**։ Երբեմն նույն բանը այդ գրքում մարմնի՝ մեր համագոյակցի համար է ասվում. ըստ այդմ մեր տիրոջ փրկչական անուն-

* Ըստ բնագրի՝ Քրիստոս մարմին համագոյակից մեզ. թանձր, մահկանացու, չարչարելի, երկրային. ապականացու և եղանելի, ոչ էառ ի կուսէն։ Նախ՝ եղանելի բառից հետո եղած ստորակետը պետք է ջնջել, և էառ, որ նշանակում է առավ, թյուրիմացություն է։ Այդտեղ առ բայ չէ, այլ նախդիր, ուստի էառ ուղղում ենք՝ առ և ըստ այդմ թարգմանում։

** Բնագրի աստուածայինքն բառից հետո կա՝ երբեմն աստուածութեանն, որ ավելորդ է. չունեն Շնորհալին և այլ տարընթերցվածներ։



ները առաքյալը աստվածությանն է հատուկ համարում, ասելով՝ «Հիսուս Քրիստոսը երեկ էր և այսօր է, նույնը և հավիտենականն»*։ Երեկ՝ համարում է մշտնջենավոր աստվածությունը, որ հոր հետ էր, իսկ այսօր՝ համարում է մարդեղությունը. և նույն ու հավիտյանս համարում է անվախճան թագավորությունը։ Եթե առաքյալը բաժանումը հասկանում էր մարդկությունն ու աստվածությունը, պետք է ասեր՝ Քրիստոս աստված երեկ էր, իսկ Հիսուս Քրիստոսը՝ այսօր։ Բայց միավորումից հետո բաժանման եղանակ երբեք ցույց չտվին ոչ առաքյալները և ոչ էլ եկեղեցու վարդապետները, ինչպես և Հովհաննես ավետարանիչը մարմինը շոշափելը համարեց «բանը շոշափել». «Մեր ձեռքերը, ասում է, շոշափեցին կենաց բանը»**։

Դարձյալ՝ նաև մարմնին հատուկ*** բաները երբեմն վերագրում են աստվածությանը, ինչպես օրինակ ըստ աստվածային Գրիգորի և այլ սրբերի խաչված աստված, աստծու արյունը, չարչարանքն ու մահը։ Եվ սրանք ոչ այլ ինչ են, եթե ոչ անճառելի միավորությունը և անբաժանելին մեկ եղած են համարում****։

Այդ բանի համար մենք էլ ենք ընդունում, որ մարմինը համագոյակից է մեզ, քանի որ Ադամի կանգվածքից էր ու թանձր և ոչ առ աչոք երևացած մարմնի ձև էր միայն, ինչպես երևաց Աբրահամին։ Եվ սա ոչ միայն հարությունից առաջ էր, այլև հարությունից հետո, ինչպես և ինքն էլ ասաց. «Շոշափեցե՛ք ինձ և տեսե՛ք, որ ես նույնն եմ, որ ոգին մարմին ու ոսկորներ չունի, իսկ ինչպես ինձ եք տեսնում, ես ունեմ*****»։ Թեպետև աստվածային զորությամբ երբ կամենար, կթեթևացներ մարմինը, ինչպես այդ երևում է ծովի վրա գնալուց, փակված գերեզմանից դուրս գալուց, փակ դռներով աշակերտների մոտ մտնելուց, որովհետև ոչ թե ինքն է բնության օրենքներին ծառայում, ինչպես մենք,

* Եբր. ԺԳ,8։

** Յովհ. Ա., 1։

*** Բնագրի յատուկքն ուղղելի է յատուկսն։

**** Յանճառ միութիւն և զանբաժանելին մի գալ նշանակեն նախադասության մեջ մի չունեն Շնորհալին և ուրիշ տարընթերցվածներ։

***** Ղուկ. ԻԴ, 39։

այլ բնության օրենքները ծառայում էին նրան, որպես արարչի։ Ըստ այդ և կուսական ծնունդից ու այլ բարձրագույն հրաշքներից պետք է իմանալ։ Եթե մարմինը թանձր չէր, խաչի վրա ո՞ւմ մեխեցին և կամ իբրև մեռած ո՞ւմ գերեզման դրին* և հարությունից հետո Թովմասը ո՞ւմ շոշափեց։ Եթե չարչարելի չէր, ինչպե՞ս չարչարվեց, և եթե մարմնով մահկանացու չէր, ինչպե՞ս գլուխը խոնարհեցնելով հոգին ավանդեց։ Սակայն ամենը կամքով ու զորությամբ էր կրում և ոչ թե ակամա ու թուլությամբ ըստ իր ասելու. «Զորություն ունեմ իմ անձը դնելու և զորություն ունեմ վերցնելու այն»**։ Ինչ վերաբերում է մարմինը ապականացու համարելուն, ապա եթե մեկը մարմինը ոչնչացող համարի բնական պահանջմունքների պատճառով, այսինքն՝ քաղցի, ծարավի, արտասվելու, խաչի վրա արյան հոսման, որով մենք կենդանացանք, մենք էլ այդ ընդունում ենք։ Իսկ եթե անբնական ու պախարակելի պահանջմունքների համար մեկը նրան ոչնչացող համարի, այսինքն՝ կերակուրների, ըմպելիքների մոլի ընդունումը, սրա հետ չենք համաձայնվում, որովհետև ոչնչացումը մեղքերի ծնունդ է, և ով մեղք չգործեց, այսպիսի ոչնչացումն էլ չտիրեց նրան։ Դարձյալ որովհետև Աստվածաշնչում վկայվում է, թե բնական պահանջմունքները ոչ թե ակամա կրեց, այլ կամավոր, և ոչնչացման այս պահանջմունքները կամավոր չեն, այլ ակամա, և դրանք են բռնությամբ ներգործում մարդու էության վրա։ Եվ ով այս է ասում, հայտնում է, որ ոչ թե պահանջմունքները նրան, այլ ինքն էր նրանց ծառայում, և եթե այսպիսի ոչնչացնող պահանջմունքներին ակամա հնազանդվում էր, պարզ է, թե նաև ընկած էր մեղքի տակ, որն ամեն ոչնչացման հայրն է, սա թող չընդունեն կամ ասեն ճշմարիտ հավատացյալները։ Իսկ եթե մեկը մարդեղությունը հաստատելու համար ասի, թե այս եղել է նրա վերաբերմամբ, բավական են հայտնի ու անպարսավելի պահանջմունքները, որ

* Բնագիրն ունի՝ Եւ կամ որպէս զմեռեալ ի գերեզմանի եդին։ Որպէս հարցական դերանուն չէ, այլ կապ է։ Դրանից առաջ զո՞ հարցականը դուրս է մնացել, որ վերականգնում ենք (տես նաև տարընթերցվածները)։

** Յովհ. Ժ., 18։



գրված են հաստատելու, թե ճշմարիտ կերպով մարդ եղավ, և անպիտանների ու վատթարագույնների կարիքը չի զգում, և այն որ ճշմարիտ ասված է, նրան է ընդունում։

Մեր մասին վերևում գրված էր, թե Քրիստոսի համար մի էություն ենք ընդունում այն բանի համար, որ իբր մարդկությունը ամբողջովին սուզվեց աստվածության մեջ այնպես, ինչպես որ քացախի կամ մեղրի մի կաթիլը ծովն ընկնելով՝ աներևութանում է։ Եվ այս խոսքին մեր կողմից գրված սկզբնական խոսքերը պատասխան ունեն, թե միավորության մեջ մարդկային թանձր ու բաղադրյալ էությունը փոխվեց աստծու անբաղադրելի ու պարզ էության և իր թանձրությունը կորցրեց, և աստծու ոչ պարզ ու անմարմնական էությունը խառնվելով մարմնավոր էության հետ՝ փոխվեց կամ այլակերպվեց իր հավիտենական պարզությունից, որովհետև քացախն ու մեղրը փոփոխվում ու ոչնչանում են, ինչպես ջուրն ու գինին՝ ծովը թափվելով։ Աստվածայինի ու մարդկայինի միավորման օրինակը այսպիսին չէ, որովհետև դրանք լինելով մարմիններ, իրար ոչնչանում են՝ միմյանց խառնվելով։ Իսկ մարմինն ու անմարմինը խառնվում են և միանում աննկարագրելի կերպով ու միմյանց հետ չեն խառնվում կամ փոփոխվում, ինչպես են և մարդկային հոգին ու մարմինը։ Իսկ եթե ստեղծված էությունը այսպես է, որչափ ավելի պետք է իմանալ հրաշափառագույն արարչական էության միավորությունը արարածի էության հետ։

Մի փոքր էլ խոսենք՝ առաջավորաց՝ մեր կողմից սյաս կոչվածի մասին, որին դուք ագիտաբար հայհոյում եք՝ էշ ու [illegible]որիկ շուն ունեցող ոմն կախարդ Սարգսի ասելով։ Մեր [illegible]ովորից հեռացածները զանազան բաներ սրա համար առասպելաբանում և ստահոդ խոսքերով ձեզ են պատմում։ Բայց մեր մեջ այդպիսի Սարգսի հիշատակը ավելի անգո է, քան եզջերվաքաղ ասվածը, որովհետև այս վերջինը թեև գոյություն չունի, բայց անունը կա. իսկ այս Սարգիսը ոչ գոյությո՛ւն ունի մեր ազգի մեջ, ոչ էլ անո՛ւն։ Իսկ եթե որևէ տեղ այդպիսի մեկը կա, չնայած մեզ անհայտ է, թող կաթողիկե եկեղեցին նզովի նրան, նրա էշին, շանը, և նրան տեսնողներին ու ընդունողներին, որովհետև նրա անունը մեր ազգի մեջ ոչ ոք չի լսել, բացի հոռոմներից, որ ասում են մեզ գրպար-

տելու համար։ Իսկ մենք աստծու վկայությամբ այս բաների մասին կգրենք ճշմարտությունը, որպեսզի ոչ ոք տգիտությամբ չհայհոյի ու վտանգի չենթարկի իր հոգին։

Արդ՝ սա առաջավորք է ասվում, որովհետև հայերի առաջին պասն է. և պատճառը հետևյալն է. մեր սուրբ Գրիգոր Լուսավորիչը, երբ վիրապից ելավ, և նրա առաջ հավաքվեցին Հայոց թագավոր Տրդատը, որ աստծուց վարազի կերպարանք ստանալով պատժվել էր, բոլոր իշխաններն ու այսահարված զորքը,— ամենքի համար հինգօրյա անսվաղության պաս նշանակեց, որպեսզի ոչինչ չճաշակեն, ինչպես նինվեացիները. դրանով նրանք բուժվեցին նրա ձեռքով։ Եվ այս պասը, որ այդ պատճառով ամենից առաջ նշանակվեց սուրբ Գրիգորի կողմից, նույն ինքը Լուսավորիչն ավանդեց Հայոց եկեղեցիներին, որ նույն պասը պահեն ամեն տարի այդ օրը գալիս, որպեսզի նրանց նկատմամբ եղած աստծու երախտիքը չմոռացվի։ Եվ պատշաճ համարեցին այս պասը, որով հայերը փրկություն ընդունեցին, խառնել նինվեացիների պասին, որով նրանք ազատվեցին մահվան սպառնալիքից. այդ պասը մինչև այժմ պահում են ասորիներն ու եգիպտացիները։ Իսկ որ սա ասվում է նաև սուրբ Սարգսի անունով, նույնանունության պատճառով թող ոչ ոք չգայթակղվի, որովհետև այս Սարգիսը, որի տոնն է սա, բարեպաշտ մի իշխան էր Կապադովկիայում Կոստանդիանոս մեծի ու նրա որդիների օրոք։ Իսկ երբ թագավորեց հանցավոր Հուլիանոսը, [Սարգիսը] նրա կողմից հալածվելով գնաց Պարսկաստան Շապուհ արքայի մոտ։ Այնտեղ պարսից զորքից շատերին քրիստոնյա դարձնելով՝ իր որդու հետ մարտիրոսվեց հենց նույն պարսից Շապուհ արքայի կողմից։ Եվ որովհետև նրա մահվան օրը հունվար ամսի երեսունին էր, այդ պատճառով նրա հիշատակի տոնը նշանակեցին շաբաթ օրը, որ առաջավորաց պասից հետո է։ Այդպես էլ սուրբ Թեոդորոսի [հիշատակը] բոլոր եկեղեցիները տոնում են քառասնորդաց պասի առաջին շաբաթից հետո։ Եվ արդ՝ աստծով ասված՝ այս է մեր այս պասը պահելու պատճառը, որ կոչվում է առաջավորք։

Արդ՝ աստվածասեր ու խոհեմագույն անձիդ խնդրանքով, ով պատվական գլուխ և մանկական հասակում Սողոմոնի ու



Դանիելի նման ծերերի իմաստություն ունեցող, համառոտ խոսքերով ձեր պատվասիրության առջև ենք ներկայացնում Հայաստանյայց եկեղեցու ճշմարիտ դավանությունը։ Եվ եթե մարդկանց հաճոյանալու երկյուղի ու պատկառանքի համար ծածկեցինք մեր դավանանքից ու չդրեցինք, կամ թե ավելին գրեցինք, որ չունենք, որպեսզի ձեր կողմից ընդունելի լինի, թող անհավատների, հերձվածողների հետ Քրիստոսի ատյանի առաջ դատվենք, որովհետև թաքցված կամ կեղծված հավատը անհավատությունից հեռու չէ։ Իսկ եթե մեկը այս բաները մեզնից լսելուց [կարդալուց] հետո կգայթակղվի, դատելով մեզ առանց ասածները հավատալու, ինքը Քրիստոսի դատաստանը թող տա նրա դատաստանի օրը իբրև նրա հավատացյալներին պառակտող։ Իսկ նա, որ մի անգամ լսում ու հավատում է և չի դատում, ինչպես ասաց սրանց քննողը, թող ճշմարիտ հավատացյալների հետ ընդունի բարիքների վարձը մեր Քրիստոս աստծուց, որին փառք ու զորություն հավիտյանս հավիտենից, ամեն։

* *
*

Երբ այս ընթերցեցին, հույն բոլոր իմաստունները գովեցին Հայոց հավատը։ Եվ քանի որ Ներսեսը ամեն բանի մեջ հանճարեղ էր, գրեց նաև խորիմաստ առակներ գրքերից ու հանելուկներ, որպեսզի սուտ զրույցների փոխարեն ասեն գինարբուքներում ու հարսանիքներում։ Եվ ինքը՝ աստծու այն արժանավոր մարդը, հեզ էր և ամեն բանով պարկեշտ։

Նրանից հետո աթոռը ստանձնում է Տղա կոչված Գրիգորը* քսան տարի[246]։ Սա կառուցեց Կլայի[247] գեղակերտ եկեղեցին ու այն փառավորապես զարդարեց։ Ապա մի տարի հաջորդեց Գրիգորիսը՝ նրա քեռորդին։ Նա պարթևահասակ էր ու բարեհամբույր տեսք ուներ։ Բայց որովհետև նրա նա-

---

* Այստեղ բնագիրը աղավաղված է. Տղայն կոչեցեալ՝ ետ է ընկել և փոխադրվել Գրիգորիսին, որ Գրիգոր Տղայի քեռորդին էր. Նույնպես հոգնակի ձևը փոխում ենք եզակիի, որովհետև այս Գրիգորիսը Գրիգոր Տղայի քրոջ որդին էր, իսկ Ներսեսի ավագ եղբոր Վասիլի թոռը։

խանձորդները շատ էին, զրպարտանքներ բարդեցին նրա վրա նախանձոտ եպիսկոպոսները և սուտ մեղադրանքներով Լևոն թագավորի մոտ մատնեցին նրան։ Իսկ Լևոնը հրամայեց նրան բանտարկել մի ամրոցում, մինչև նրա վերաբերյալ ճիշտ քննություն կատարվի, իսկ ինքը թուղթ ուղարկեց արևելք՝ Հայոց աշխարհը, վարդապետներին ու եպիսկոպոսներին, թե ինչ են ցանկանում նրա վերաբերյալ։ Դեռևս պատասխանը չէր ընդունել, կաթողիկոսը վախճանվեց հետևյալ մահով։ Մի օր տեսան նրան, որ բերդի պարսպից մեջքը կտավով փաթաթված ընկել ու այդպես մեռել է։ Ոմանք ասացին, թե նրան նախանձող այն եպիսկոպոսները գցեցին, որոնք աչք ունեին աթոռը ժառանգելու. դրանցից մեկը համարում էին Հովհաննեսին, որ նրանից հետո գրավեց աթոռը, [և մյուսը]՝ Անանիային, որ հակաթոռ կաթողիկոս եղավ Սեբաստում[248] հռոմեների սուլթանի իշխանության տակ, և եպիսկոպոսներից վեց ուրիշ մարդիկ։ Իսկ մի մասը ասում էր, թե գիշերը կամեցել է բերդից փախչել, մտածել է պարսպից կտավով իջնել, իսկ կտավը կտրվել է, ինքը ընկել մեռել է։ Մենք ճշմարտությունը չգիտենք, որ արդարադատ աստված կարող է իմանալ, որին մարդկանց համար թաքուն բաները հայտնի են։

Ապա յոթ տարի [աթոռակալում է] տեր Գրիգոր Ապիրատը։ Դրանից հետո Գրիգորի նախանձորդները սկսեցին միմյանց դեմ պայքարել, թե ով պետք է նստի հայրապետական աթոռը։ Եվ որովհետև Հովհաննեսը մոտ էր Լևոն թագավորին, բռնացավ ու գրավեց։ Երբ մյուս եպիսկոպոս Անանիան այս տեսավ, գնաց հռոմեների սուլթանի մոտ, նրան կաշառեց ու կաթողիկոս նստեց Սեբաստում, որովհետև իրեն համարում էր այնտեղ թաղված Պետրոս կաթողիկոսի տոհմից։ Այսպիսով սուրբ Գրիգորի կաթողիկոսությունը բաժանվեց երեքի. մեկը իսկականը, որ առանձնեց Հովհաննեսը՝ Հռոմկլայում, մյուսը՝ Սեբաստում, ուր պատսպարվեց Անանիան, իսկ երրորդը՝ Դավիթը Աղթամար կոչված կղզում։

Այս ժամանակ հենց Ալեքս կայսրից հետո թագավորում է Կալոժանը, որանից հետո՝ Մանվելը։ Արդ՝ հայոց հինգ հարյուր իննսունութ թվականին (1149 թ.) հռոմեացիները զորաժողով են անում բյուրավոր մարդիկ և գնում են Օվկիանոսի* այս կողմը նույն Թիրակով [Թրակիա]՝ առաջին անպատիվ, որը նշեցինք հինգ հարյուր քառասունվեց թվականով.** Նրանք մոռացան անասելի նեղությունները, որը նրանց այն ժամանակ պատճառեց սադայելի որդի Ալեքսը, նրանք չիմացան նրա նենգ խաբեբայությունը՝ համարելով նրան հավատակից և Քրիստոսի պաշտավոր։ Դրա համար էլ և սրանք այստեղ [այժմ], որովհետև չհիշեցին աղետալի անցքը, ավելի խաբվեցին ու մոլորվեցին նրա թոռից, որի անունը, ըստ նախնի, Դերքրիատոս է կոչվում։ Սույնպես էլ ամեն բանով զատ ու հեռու գտնվելով Մանիլ անունով էմանվելի գործերից ու կրոնից, որ դավեց հույներին մահաբեր կերակուրներով ու ըմպելիքներով։

Բայց նրա պապ Ալեքսի օրերում մի ոմն կոմս Երուսաղեմից Անտիոք է գալիս։ Երբ մտնում է սուրբ Պետրոս առաքյալի տաճարը ու մասնակցում է արարողությանը, նրան երևում է սուրբ Պետրոս առաքյալը և ասում է. «Եկեղեցու պատուհանում թաղված է այն Գեղարդը, որով խոցեցին մեր Փրկչին. կվերցնես կտանես քո երկիրը»։ Նա ուրախությամբ վերցնում է ու գալիս է Կոստանդնուպոլիս։ Ալեքս կայսրը լսելով՝ չափազանց մեծարում է նրան և բազմաթիվ գանձեր է տալիս ու գեղարդը խնդրում է նրանից։ Կոմսը գեղարդը թողնում է նրա մոտ ու շարունակում է իր ճանապարհը։

Իսկ վեց հարյուր երեսունվեց թվականին (1187) Մասյոցանից[249] հանդես եկավ մի ոմն բռնակալ՝ ազգով քուրդ ու անունով Սալահադին. սա ենթակա էր Մերդինի ու Հալեպի սուլթանին։ Սա շատ մեծ զորք կազմեց և գնաց Երուսաղեմ քաղաքի վրա։ Երուսաղեմի թագավորը, որ ազգությամբ ֆրանկ էր, նրա դեմ դուրս եկավ մեծ զորքով։ Նրան դավեց իր ծովեզերյա զորքը, որովհետև Տրապոլիսի տերը թշնամիների հետ բարեկամ լինելով՝ թագավորին մատնում է նրանց ձեռքը հետևյալ ձևով։

Ժամանակը խիստ շոգ էր, իսկ վայրը անջրդի։ Կոմսը խորհրդակցում է թագավորի հետ, և իրենց համար կայան են ընտրում անջրդի տարածությունը, իսկ թշնամիները դրա-

* Օվկիանոս այստեղ պետք է հասկանալ Միջերկրական ծովը։

** Տես էջ 84։

վում են Հորդանանի եզերքը։ Երբ կեսօրին սկսվում է պատարագը, քրիստոնյաների զորքի ծարավից պապակած ձիերը ջուրը տեսնելով՝ հեծյալներին տարան դեպի թշնամիների մեջ, և նրանք սրերը գործի դրեցին ու անխնա կոտորեցին։ Իսկ Երուսաղեմի թագավորը՝ քաջ մարդ լինելով՝ թշնամիներից շատերին անձամբ կոտորեց։ Եվ երբ տեսավ, թե անհնար է դուրս պրծնել, մանավանդ որ սպանեցին նրա երիվարը, կամավորապես հանձնվեց նրանց ձեռքը։ Իսկ նրանք երդում առնելով նրանից, որ իրենց դեմ այլևս սուր չի հանի, թողին, նա գնաց Բյուզանդիա։ Իրենք շարժվեցին Երուսաղեմի վրա, գրավեցին այն ու նրա շուրջը գտնված քաղաքները և բոլորին կոտորեցին։ Արեգակը երկար ժամանակ խավարեց։ Եվ այլահավատները տիրեցին Պաղեստինին, Եգիպտոսին, Միջագետքին, իսկ մեր հայոց աշխարհի մեծ մասին տիրեցին իրենք ու իրենց թոռները, որ կոչվում են Եյուբյաններ։ Դրանցից էին Մելիք Քեմլը, Մելիք Աշրաֆը ու այլ սուլթաններ, որ տիրեցին շատ երկրների։

Իսկ Կյուրիկե Բագրատունին, որ Լոռե քաղաքում էր, իր ամբողջ կյանքի ընթացքում կանգնեց վրացիների դեմ ու հաստատուն պահեց իր հայրենիքը։ Նրա մահից հետո իր որդիները՝ Դավիթն ու Աբասը զավթվելով վրացիներից, ելան իրենց տնից, գնացին պարսիկների մոտ, [վրացիները] սրանցից առնում են իրենց ժառանգություն Տավուշը[250], Մածնաբերդը[251] ու այլ տեղեր։ Ապա միառժամանակ հետո պարսիկները դարձյալ նրանցից ետ են առնում Տավուշը, իսկ նրանք բնակվում են Մածնաբերդում. Դավիթն ու Աբասը մահվամբ փոխադրվում են այս աշխարհից։ Իր Դավիթ հոր տեղը գրավում է որդի Կյուրիկեն, որ բարքով մի բարի ու առաքինի, գործերում կատարյալ մարդ էր ավելի, քան իր հայրը*։ Եվ խաղաղ մահով մեռնելով՝ ժառանգավոր է թողնում իր տասներկուամյա մանուկ որդի Աբասին։ Սա կին է առնում Վահրամի թոռ՝ Զաքարիայի որդի բարեպաշտ իշխան Սարգսի դուստրը՝ մեծամեծ իշխաններ Զաքարեի ու Իվանեի Նանա անունով քրոջը։ Սրանց գործերը շատ են,

* Բնագրում դհարս ակնհայտ սխալ է, պետք է ուղղել զհայրն։ Ակնարկը վերաբերում է Կյուրիկեի հայր Դավթին և ոչ թե տպագրածներին։



սրանք իրենց տեղում կիշխեն։ Աբասը իր կնոջ հետ երկու տարի ապրելով՝ մեռնում է տասնինը տարեկան հասակում։ Սա իր կնոջից զավակ չունեցավ։

Երբ նրա Ռուզուքան անունով քույրը տեսավ, որ մահով բնաջնջվում են, անասելի սգի մատնվեց։ Ապա նրան ասացին, թե կա մի կին, որ մի կաթնակեր մանուկ ունի քո եղբորից։ Որոնում է այդ կինը [քույրը], վերցնում է մանուկին ու սնուցանում։ Նրա անունը դնում է Աղսարթան, որ դարձավ Մածնաբերդի ժառանգատերը. մի աստվածապաշտ ու քահանասեր մարդ էր։ Երբ հասավ մեր օրերը, ծերության հասակում ոտքերը հիվանդացան։ Սրա հետ խաբեությամբ վարվեց Նոր բերդի[251ա] Դավիթ իշխանը, որ Բագրատունյաց տոհմից Վասակ իշխանի հայրն էր, Նոր բերդի մոտ կառուցեց Անապատ կոչված վանքում հրաշագեղ եկեղեցի՝ առաջնորդությամբ ու օժանդակությամբ Շամքոր քաղաքի, Գարդմանի, Եղեգյանքի, Տերունականի[252], Տավուշի և Վահրամ իշխանի իշխանության այլ կողմերի արքեպիսկոպոս Հովհաննես Տիեցու։ Եվ ավարտվեց եկեղեցին, որ օծվեց ու մկրտվեց սուրբ Աստվածածնի անունով հայոց վեց հարյուր ութսունինը թվականին (1240 թ.)։ Հովհաննես [այր] եպիսկոպոսը սուրբ, առաքինի ու բարեգործ մարդ էր, որ շատ քառասունքներ անսվաղ պաս էր պահում։

Իսկ Նոր բերդի Դավիթ իշխանը խաբեց մանուկ Աղսարթանին ու նրան փեսայացրեց՝ տալով իր դուստրը, իսկ ինքը տիրեց Մածնաբերդին, ապա իր դստերը բաժանեց նրանից։ Աղսարթանը իր կողմը գրավեց բերդի բնակիչներին, որոնք հանկարծակի անսպասելի մի պահի բռնեցին Դավթին իր ընտանիքի հետ միասին, դուրս հանեցին բերդից ու բերդը հանձնեցին Աղսարթանին։ Նա որոշ ժամանակ անց իր կենդանության օրոք իշխանությունը հանձնեց իր որդի Կյուրիկեին, իսկ ինքը դարձավ կրոնավոր Գետակիցք[253] վանքում։ Կյուրիկեն ունեցավ որդիներ, որոնցից մեկի անունը Փահլավան էր, մյուսինը՝ Թաղիադին, իսկ երրորդինը՝ Աղսարթան։

Գ.

## Արևմտյան կողմերում Լևոնի ունեցած թագավորության մասին

Մինչև այստեղ մեր պատմությունը տքնաջան աշխատանքով հավաքեցինք մեզնից առաջ եղած գրողներից, իսկ մեր առաջիկա պատմությունը, ինչ-որ շարադրելու ենք, ականջով լսել և աչքով տեսել ենք։

Երբ մեռավ Կիլիկիա աշխարհի Ռուբեն թագավորազնի թոռ Լևոնի որդի՝ Կոստանդինի թոռ մեծ իշխան Թորոսը, իշխանությունը ստանձնեց նրա Ռուբեն անունով եղբորորդին՝ Ստեփանեի որդին, որին հոռոմների զորավար Անդրոնիկոսը նենգաբար սպանեց։ Կարճ ժամանակից հետո սա էլ վախճանվեց, և իշխանությունը վերցրեց քաջ ու պատերազմող Լևոնը։ Սա հենց որ տիրեց, անմիջապես ընդարձակեց իր տերության սահմանները։ Նա պատերազմեց շրջակա ազգերի հետ և քաջությամբ հաղթեց, ըստ իր անունի՝ առյուծաբար, որովհետև Լևոն առյուծ է նշանակում։

Երբ սուլթան անվանված թուրք ու մահմեդական բռնակալները տեսան նրա հաջողությունը, Հալեպի ու Դամասկոսի իշխող սուլթանը անհամար զորքով ու զենքով եկավ նրա վրա։ Իշխանաց իշխան Լևոնը լսելով այլազգիի իր վրա գալու մասին, աճապարեց հավաքեց իր զորքերը ու հանկարծակի հարձակվեց նրանց վրա, ինչպես որ արծիվն է խոյանում թռչունների երամների վրա։ Եվ մեծամեծ հարվածներով ջարդեց նրանց։ Այն սուլթանը, որ խրոխտանքով գալիս էր նրա դեմ, փախավ ու նրանից մազապուրծ եղավ։ Իսկ Լևոնը նրա վրա հարկեր դնելով՝ հարկատու դարձրեց։ Նրա այս քաջագործությունը արաբական շրջակա ազգերը տեսնելով, սարսափում էին նրանից ու հարկ էին տալիս։ Այսպես նա տիրեց բոլորին։

Երբ նա տեսավ, որ իշխանությունը իրեն ավելի հաջողվեց քան իր նախնիներին, այնուհետև իր իշխանների ու մեծամեծների հետ խորհեց թագավոր դառնալ։ Եվ [պատվիրակ] ուղարկեց աշխարհահռչակ Հռոմ քաղաքը ինքնակալ կայսրի ու պապի մոտ, որպեսզի նրան թույլտվություն ու թագավորական թագ տան, որովհետև նա չկամեցավ թագի համար բացի ֆրանկների [իտալացիներ] ազգից որևէ այլ մեկի հնազանդվել։ Միաժամանակ իր համար պարծանք համարեց սուրբ առաքյալներ Պետրոսին ու Պողոսին, որ գտնվում են [շիրիմները] Հռոմ քաղաքում, որպես թե նրանցից է առնում օրհնության պսակը։

Եվ Հռոմի թագավորն ու պապը ուղարկում են առաջին թագավորների մի թանկարժեք թագ ու մի պատվավոր արծվենի, այսինքն՝ արքեպիսկոպոսի, որպեսզի թագադրի նրան և երեք բան պահանջի նրանից՝ տիրոջ ու բոլոր սրբերի տոնը տոնել որ օրը որ հանդիպի, ցերեկվա ու գիշերվա աղոթքները միշտ եկեղեցում անել, որ արաբական ավազակահենության պատճառով վաղուց ի վեր հայերը չէին անում, բացի միայն սուրբ պատարագի խորհրդածության ժամանակից. ծննդյան ու հարության ճրագալույցը [ճրագալույցի պասը] լուծել այլ կերպ, քան միայն ձկնով ու ձեթով։ Եվ երբ այդ կանեք, ու մի հոգ մի տանեք, ասում է, թագի համար կայսրին ու պապին տրվելիքների ու ընծաների մասին։ Իսկ եթե չանեք, հրաման ունեմ, ասում է, ձեզնից ոսկու, արծաթի ու թանկագին քարերի անչափ գանձեր առնելու։

Իսկ Լևոնը կանչում է կաթողիկոսին ու եպիսկոպոսներին և հարցնում է, թե հռոմեացիների պատգամին ինչ պատասխան տա։ Նրանք չեն համաձայնվում առաջարկն ընդունել։ Լևոնը նրանց ասում է. «Դրա մասին հոգ մի տանեք, ես նրանց այս անգամ կեղծավորությամբ կգոհացնեմ»։

Եվ Լևոնը պատասխանելով ասում է Հռոմի եպիսկոպոսին. «Ինչ որ ինքնակալ կայսրն ու մեծ պապը հրամայում են, անհապաղ ամենը կանենք»։ Նա տասներկու եպիսկոպոսներից երդում պահանջեց, իսկ ինքը Լևոնը համոզեց եպիսկոպոսներին երդում տալ։ Եպիսկոպոսները երդման խոսքը ասացին. դրանցից մեկն էր Տարսոնի[254] եպիսկոպոս վերևում հիշատակված Ներսես Լամբրոնացին[255], Անտիոքի կողմերի Շուղրանց կոչված վանքի առաջնորդ Հովսեփը, Հովհաննեսը, որ կաթողիկոս եղավ, Անանիան, որ Սեբաստում հակաթոռ կաթողիկոս եղավ, և ուրիշներ սրանց հետ։

Այս զորապետների ու զորքերի, ազգերի ու ցեղերի խիստ մեծ բազմություն հավաքվեց. [եկավ] Տարսոնում նրա-

տող Հունաց պատրիարքը, Մելիտինեի սահմաններում գտնվող սուրբ Պարսամայի վանքում նստող ասորիների կաթողիկոսը ու Հայոց կաթողիկոսը բոլոր եպիսկոպոսներով. և թագավորեցրին Լևոնին, իսկ շրջակա ազգերը ընծաներ բերին թագադրված նորոգ թագավորին։

Եվ Հունաց կայսրը լսելով, որ ֆրանկները թագ տվին Լևոնին՝ նա էլ ընծաներ, ոսկով ու թանկագին ակներով ընդելուզված գեղեցիկ թագ ուղարկեց ու ասաց. «Հռոմեացիների թագը մի դնիր քո գլուխը, այլ մերը դիր, որովհետև մեզ ավելի մոտիկ ես, քան Հռոմին»։ Իսկ Լևոն թագավորը իմաստուն մարդ էր, երկու թագավորներից ոչ մեկին էլ չմերժեց՝ ոչ Հռոմինը և ոչ էլ Կոստանդնուպոլսինը, այլ նրանց կամքի համաձայն պատասխան տվեց, սիրալիր ընդունեց եկվորներին, մեծամեծ նվերներ տվեց թագ բերողներին ու երկուսի կողմից էլ պսակված եղավ։

Բնավորությամբ բարի էր նա, աղքատների ու կարոտյալների հանդեպ ողորմած, եկեղեցու ու աստծու սպասավորների նկատմամբ սիրալիր։ Վանքեր էր հաստատում իր տերության բոլոր կողմերում ու բազմացնում էր նրանց կալվածքները, որպեսզի մարմնավոր պետքերից ոչ մի բանի կարիք չզգան, այլ որ միայն աղոթքներով ու արարողություններով զբաղվեն։ Նրա հաստատած վանքերից մեկն էր Ակներ կոչված հռչակավոր վանքը, որ մինչև այժմ կառավարվում է նրա դրած կարգ ու կանոնով, այսինքն՝ շաբաթվա բոլոր օրերը պաս են պահում, միայն շաբաթ ու կիրակի պասը լուծում են ձկնով ու կաթնեղենով։

Եվ այսպիսի բարեկարգությամբ հաստատեց իր թագավորությունը բարեպաշտ Լևոնը։ Ամեն բանով նա իրոք ընտիր էր, բացի մի բանից, որ իգասեր էր։ Նա թողեց իր առաջին կնոջը, որ իշխանության ժամանակ ուներ, և իրեն կին առավ Կիպրոս կղզու ազգով ֆրանկ արքայի դստերը, որպեսզի իրեն թիկունք ու օգնական լինի։

Մի անգամ այնպես պատահեց, որ նա գնաց Կիպրոս կղզին իր աներոջ տեսության։ Նրա թշնամիները, որ ցամաքում նրա վրա ներգործել չէին կարողանում, բազմաթիվ նավեր պատրաստեցին, որպեսզի ծովում գավթեն նրան։

Լևոնը այս լսելով՝ կրկին ետ դարձավ Կիպրոս, որովհետև



ծովի վրա ճանապարհին էր։ Վերցրեց իր ռազմական նավերը և եկավ այն զարանը, որ բազմաթիվ նավեր պատրաստել էին նրա համար։ Եվ քանի որ իմաստուն էր, ճանաչեց, թե նավերից որն էր գլխավորը, հարվածեց նրան իր արագընթաց նավով ու ջրասույզ արեց բոլորին։ Իսկ մնացած նավերը փախան։ Նրա ահը տարածվեց ամենքի՝ հեռավորների ու մոտավորների վրա։

Եղավ մի ժամանակ, երբ Հալեպի կողմերի տիրող սուլթանը զատկի օրերին զորաժողով արեց նրա վրա հարձակվելու և այսպիսի պատգամ ուղարկեց Լևոն արքային. «Եթե հնազանդվելով հարկատու չլինես ինձ, իմ բազմաթիվ զորքերով քո երկրի բոլոր բնակիչներին՝ մորը մանկան մոտ, սրածելով կոչնչացնեմ և ձեր այդ տոնը, երբ ուրախանում եք քրիստոնյաներդ՝ պատվելով այդ, իբր թե ձեր Քրիստոսի հարությունն է, ձեզ համար սգի կվերածեմ։ Եվ այնպես կանեմ, որ այդ տոնի համար ձեր պատրաստած կերակուրը ուտեք ձիերի վրա»։

Եվ երբ առաքեց այս, ինքը իր բազմաթիվ զորքերը առավ ու բանակեց նրա սահմանների մոտ, սպասում էր պատգամի պատասխանի գալստյանը։

Երբ Լևոնը իմացավ պատգամի գալու և այլազգիների զորաժողովի մասին, հրամայեց շրջեցնել պատգամաբերներին երկրի այլ կողմում այն պատրվակով, որպես թե արքան այնտեղ է։ Իսկ ինքը շտապելով հավաքեց իր զորքերը և այլ կողմով հարձակվեց նրանց վրա։ Եվ անսպասելի ժամանակ ընկավ նրանց վրա, ահավոր հարվածներ հասցրեց նրանց. սուլթանը մազապուրծ փախավ։ Լևոնը առնելով այլազգիների բանակի ավարը նրանց վրաններով հանդերձ ու բոլոր գերիներին, եկավ բանակ զարկեց իր երկրում գետի ափին ու հրամայեց իր զորքերին այլազգիների վրանները խփել և յուրաքանչյուրի դրոշը կանգնեցնել իրենց վրանների առջև. ապա հրամայեց պատգամաբերներին կանչել։

Եվ երբ եկան տեսան իրենց զորքերի վրանները ու յուրաքանչյուր գնդի դրոշանշանները, մեծ զարմացումով հիացան, որովհետև կատարվածը չգիտեին։ Իսկ երբ իմացան, ընկան թագավորի ոտքերը ու խնդրեցին իրենց անձերի փրկությունը։ Իսկ արքան մարդասիրաբար վարվեց նրանց

հետ, կյանք շնորհեց նրանց և ուղարկեց իրենց տիրոջ մոտ։ Արքայից պահանջվող այս նույն հարկը հավելյալ չափով դրեց սուլթանի վրա և այլազգիներին հարկատու դարձրեց։ Նրա թագավորումը տեղի ունեցավ հայոց վեց հարյուր քառասունվեց թվականին (1197* թ.)։

## Դ

## Արևելյան Հայաստանի Զաքարե և նրա եղբայր Իվանե իշխանների մասին

Հայոց արքա Լևոնի թագավորության ժամանակ արևելքում էին գտնվում երկու եղբայրներ, որոնք Զաքարիայի որդի Վահրամի որդու բարեպաշտ Սարգիս իշխանի զավակներն էին։ Սրանք բաժանվեցին քրդերի բաբիրական ցեղից**։ Առաջինի անունը Զաքարե էր, իսկ երկրորդինը Իվանե, որոնք քաջ ու իշխանությամբ զորեղ մարդիկ էին՝ հարգված վրաց Թամար կոչված թագուհու կողմից, որ Դեմետրեի որդի քաջ Գիորգիի դուստրն էր։ Զաքարեն վրաց ու հայ զորքերի զորավարն էր, որոնք [զորքերը] ենթարկվում էին վրաց թագավորին. իսկ Իվանեն ուներ աթաբեկության*** տիտղոս։ Սրանք բազմաթիվ հերոսական մարտեր մղեցին, որովհետև պարսիկների ու արաբների կողմից գրավված հայոց շատ երկրամասեր խլեցին նրանցից իրենց համար. [գրավեցին] Գեղարքունյաց ծովի շուրջ գտնվող գավառները՝ Տաշիրը, Այրարատը, Բջնի քաղաքը, Դվինը, Ամբերդը, Անի քաղաքը, Կարսը, Վայոց ձորը, Սյունյաց աշխարհը ու նրա շուրջ գտնվող բերդերը, քաղաքներն ու գավառները։ Հարկատու դարձրին նաև Կարին քաղաքի սուլթանին, ավերեցին պարսից ու

* Ոմանք ընդունում են 1198 թ., իսկ Օրմանյանը դնում է 1199-ը։

** [illegible] Աճառյանը թարգմանում է կոյմ, մենք համարում ենք ցեղ [illegible] բառից ելնելով. որ նշանակում է ցեղից բաժանվելով. իսկ բաբիրական պարզապես ցեղի անուն է։ Ալիշանը կասկածով դնում է Բաբիլական, իսկ Ա. Շահնազարյանը ուղղակի Բաբելական է համարում (Շողակաթ, Վաղարշապատ, 1913, էջ 68)։

*** Աթաբեկ նշանակում է թագավորահայր։



Ատրպատականի շատ գավառներ. ամեն կողմից ընդարձակեցին իրենց սահմանները։ Այսպես էլ Զաքարե անունով մյուս իշխանը, սրա եղբայր Սարգիսը, մյուս Սարգիսը՝ Շալվեի ու Իվանեի հայրը, մեծ իշխանների ազգականները նրանց օժանդակությամբ գրավեցին և պարսից բազմաթիվ գավառներ ու ամուր բերդեր՝ Գարդմանը, Քարհերձը, Երգեվանքը, Տավուշը, Կածարեթը, Տերունականը, Գագը, իսկ Շամքոր քաղաքը պաշարեց, և հետո գրավեց նրա որդի Վահրամը՝ Աղբուղի հայրը՝ Վահրամի, Զաքարեի և Իվանեի [illegible]։

Եվ այսպես ի վերուստ հաջողվեց նրանց իրենց հաղթությունը. նրանց քաջության համբավը տարածվեց շատ երկրներ, և շատ ազգեր, որը սիրուց, որն էլ երկյուղից, հարկատու դարձան նրանց։ Վերաշինվեցին բազմաթիվ վանքեր, որ վաղուց ի վեր ավերվել էին արաբական ավազակների կողմից։ Վերստին նորոգվեցին եկեղեցիները, պայծառացան եկեղեցական սպասավորության դասերը։ Կառուցվեցին նաև նոր վանքեր ու եկեղեցիներ, որ հնում գոյություն չունեին*, ի թիվս որանց հռչակավոր Գետիկ[1] կոչված վանքը Կայան գավառում, որ կառուցեց Գոշ կոչված սուրբ վարդապետ Մխիթարը։ Սա շինեց գմբեթաձև երկնանման հրաշալի մի եկեղեցի ու եկեղեցին մկրտեց օծեց սուրբ Աստվածածնի անունով իբրև տիրոջ փառքի տաճար և Քրիստոսի բանավոր հոտի համար բնակարան։

Եվ երբ այսպես հաջողվեց նրանց [ձեռք բերել] իշխանությունը, ջարդեցին նաև Շահ-Արմեն[256] կոչված սուլթանին։

Ապա կամեցան գրավել Բզնունյաց հոյակապ Խլաթ քաղաքը. զորք հավաքելով պաշարեցին այն և մոտ էին գրավելու, երբ զորավարի եղբայր Իվանե իշխանը պարիսպը դիտելու համար գրոհների դուրս եկավ, աննպատակ շրջելիս երիվարի ոտքը սայթաքեց խորխորատ, որ թաքցված էր, և գետին գցեց նրան։ Քաղաքի մարդիկ տեսնելով հարձակվեցին վրան՝ ձերբակալելով նրան տարան քաղաք։ Քաղաքը չափա-

* Բնագիրն ունի՝ Շինեցան և նոր վանորայք և եկեղեցիք, որ ի հնոցն չև էին լեալ վանք: Վերջին վանք բառը ավելորդ է։ Ճիշտ են տարընթերցվածները։

ղանց ուրախացավ, և իսկույն իմացրին սուլթանին նրա բռնվելու մասին, որի համար նա շատ ու շատ ուրախացած՝ հրամայեց իր մոտ բերել։

Զաքարե զորավարը լսելով՝ քաղաքացիներին սպառնալից խոսքեր ուղարկեց՝ ասելով. «Եթե իմ եղբորը այդ քաղաքից հանեք և կամ կորցնեք, ձեր երկրի հողը տանել կտամ վրաց կողմերը ու կբնաջնջեմ ձեզ»։ Նրանք երկյուղելով չտվին տանել Դամասկոսի ու Եգիպտոսի կողմերը գտնվող Նուր, Մելիք Քամլ և Երուսաղեմը գրաված Սալահադինի տոհմից Աշրաֆ անունով սուլթանների մոտ։

Այդ հաշտություն կնքելով միմյանց հետ, Իվանեի դուստրը կնության ուզեցին։ Կատարվեց, ինչպես որ պահանջեցին, պատանդներ առան ու ազատեցին Իվանեին։ Նա գնաց իր տունը, ուղարկեց դստերը, որ դարձավ Կուզի ու նրանից հետո Աշրաֆի կինը։

Շատ օգուտ եղավ այդ կնոջ սուլթանների տունը գալով, որովհետև անդորրություն տվին իրենց ենթակա քրիստոնյաներին, առավել ևս Տարոնին, որի վանքերը հարկատու էին, թեթևացրին հարկի չափը, իսկ մի մասին էլ բոլորովին զիջեցին։

Եվ հրամայեցին իրենց ենթակա մարդկանց՝ չլրկել, չնեղել այն ուխտավորներին, որոնք աղոթքի համար Երուսաղեմ էին գնում։ Ավելի ևս ազատ դարձրին վրաց ազգին, որովհետև Իվանեն խոտորվեց դեպի քաղկեդոնական աղանդը, որով վրացիները կործանվել էին. որովհետև նա [Իվանեն] մարդկային փառքը ավելի սիրեց, քան աստծու՝ հրապուրվելով Թամար թագուհու՝ Գիորգիի դստերից։ Իսկ Զաքարեն մնաց հայերի դավանած ուղղափառության մեջ։ Դրա համար ավելի էին մեծարում վրացիներին, որովհետև նրանք հարկատու չէին նրանց բոլոր քաղաքներում, նաև Երուսաղեմում։ Եվ կնոջ անունը Թամթա էր [Իվանեի դուստրը՝ Աշրաֆի կինը]։

Այսպես սեր ու միաբանություն ստեղծվեց վրաց թագավորության ու սուլթանների իշխանության միջև։



Ե.

## Այն ժողովի մասին, որ Զաքարիան արեց որոշ խնդիրներ քննելու համար

Նրանից հետո, երբ խաղաղացրին իրենց իշխանության ենթակա երկրները բոլոր ավազակներից, ու բազմացան վանքերը, պայծառացան եկեղեցու արարողությունները, ինչ որ մի բան մտածեց Զաքարե իշխանը։ Որովհետև տեսնում էր իր թագավորի հետ եղած վրաց զորքերից յուրաքանչյուրը իր հետ ուներ քահանաներ և ամենուրեք պատարագներ էին մատուցում, իսկ ինքը ճանապարհին եկեղեցի չուներ, որովհետև այն բանից հետո, երբ հայոց մեծամեծ իշխանները օտարից ու արաբական բռնությունների հետևանքով վերացան, հայերը երկար ժամանակ սովորություն չունեին [ճանապարհին եկեղեցական պաշտամունք կատարելու]։ Եվ վրացիները հայերին նախատում էին ճանապարհին եկեղեցի չունենալու, անհաղորդ մնալու և աստծու նահատակների տոները յուրաքանչյուր օրվա վերջում չտոնելու համար։ Այս պատճառով նա չափազանց վշտանում էր։

Ապա հարցնում է Գոշ կոչված մեծ վարդապետ Մխիթարին, որ Գետիկ վանքի կառուցողն էր և իր խոստովանահայրը։ Եվ ասում է, թե՝ «Մեր թագավորները կամ իշխանները երբևէ չե՞ն ունեցել ճանապարհի կարիքների համար եկեղեցի՝ պաշտամունքի կամ պատարագի տեղ»։ Հարցնում է նաև այլ վարդապետներին։ Նրանք ասացին նրան այս, թե մեծազոր արքա Տրդատի օրոք կային վրանն ու սեղանը, որ շրջեցնում էին արքունական բանակում, և սուրբ Վարդանանց ժամանակ, որոնք մկրտությունն ու հաղորդությունը կատարում էին բանակում,— և այն, ինչ գրեցին Հիպերեքոս ու Փիլոթեոս նահատակները Հակոբոս երեցին, թե՝ «Վերցնես քեզ հետ պատարագի սպասքը ու յուղի եղջյուրը, կգաս մեզ մոտ»։ Եվ սրանց նման այլ բաներ [ասացին վարդապետները]։ Ապա մեծ զորավարը նրանց ասում է. «Ինձ էլ հրաման տվեք, որ նաև ես իմ հետևից քահանաներ ու պատարագի վրան շրջեցնեմ»։ Մեծ վարդապետը նրան ասում է. «Մենք այդ բանը առանց հայոց կաթողիկոսի ու Լևոն թագավորի հրամանի չենք կարող անել»։

Ապա թուղթ է գրում ու պատվիրակներ է ուղարկում Հովհաննես անունով Հայոց կաթողիկոսի մոտ, որ այն ժամանակ ինչ-ինչ պատճառներով ապաստանել էր Լևոն թագավորի դեմ Հռոմկլայում։ Նմանապես գրում է Լևոն թագավորին ու ծանուցում է իր խնդրանքը։ Նա [Լևոնը] կաթողիկոս էր նստեցրել Արքայակաղնի վանքում* տեր Դավիթին Հովհաննեսի փոխարեն, որ ապաստանել էր Կիլիկիայի դեմ։

Ապա Լևոն արքան հավաքում է իր իշխանության ենթակա վարդապետներին ու եպիսկոպոսներին և հարցնում է Զաքարեի խնդրանքի մասին։ Նրանք պատվիրեցին**, որ նա իր եղբոր նման դուրս չգա ուղղափառ հավատից, և հետևյալ թուղթն են գրում արևելքը։

«Արևելյան կողմերի մեծ սպարապետ ու շահնշահ Զաքարիան հետաքրքրվում է քրիստոնյաների եղծված ու աղավաղված կարգերով, որ առաջացել են այլազգիներին սովորուկ լինելուց։ Վարդապետներն ու եպիսկոպոսները, հայերն ու երեցները ժողով գումարելով՝ քննեցին ու գտան, որ նրա խնդրանքը համապատասխան է Աստվածաշնչին։ Ապա առաքելոց*** քրիստոսապսակ արքա Լևոնին, որ արևմտյան կողմում՝ Կիլիկիա աշխարհում է։ Նա ժողովի է հավաքում Սիս մայրաքաղաքում Դավիթ կաթողիկոսին, վարդապետներին, եպիսկոպոսների ու ճգնավոր մենակյացների հետ միասին։ Սրանք նրա խնդիրը գտան համապատասխան առաքելական կանոններին և ոչ նրանցից դուրս։ Դրա համար ութ գլուխներով կանոններ գրեցին ու առաքեցին, որոնք հետևյալներն են.

ա) պատարագը մատուցել սուրբ գրքերի ու սարկավագի միջոցով, ինչպես որ կարգն է.

բ) սուրբ աստվածածնի ավետյաց տոնը տոնել ապրիլի վեցին ինչ օր որ պատահի։ Իսկ նրա փոխման տոնը տոնել

* Կիլիկիայի հայոց վանքերից մեկն է եղել, այժմ ավերված է։

** Բնագրում գրված է. Եւ նորա յանձն առին, զի մի ելցէ նա արտաքոյ ուղղափառ հաւատոյն։ Յանձն առին պետք է ուղղել՝ յանձն արարին։ Հավաքված հոգևորականները Զաքարեին հանձնարարում են՝ դուրս չգալ ուղղափառ հավատի սահմաններից և ոչ թե իրենք են հանձն առնում։

*** Բնագրում՝ Առաքեաց, հետևելով մի տարընթերցվածի՝ ուղղում ենք առաքեցաւ։



օգոստոսի տասնհինգին, ինչ օր որ ընկնի. սուրբ խաչի տոնը տոնել սեպտեմբերի ամսի տասնչորսին, ինչ օր համընկնի։ Նույնպես և նահատակների մյուս տոները, որ օրը պատահի յուրաքանչյուրի հիշատակի.

գ) Սուրբ հայտնության ու զատկի ճրագալույցի պասը պահել մինչև երեկո և ոչ մի բանով չլուծել, բայց միայն ձկով ու ձիթով.

դ) ընդունել փրկչի ու բոլոր սրբերի պատկերների նկարահանությունը ու չմերժել դրանք իբրև հեթանոսների պատկերներ.

ե) պատարագ մատուցել նաև ողջերի համար.

զ) կրոնավորները միս չպետք է ուտեն.

է) ձեռնադրել դպիր, ապա շատ օրեր հետո՝ սարկավագ, իսկ ապա չափահաս ժամանակ՝ քահանա.

ը) միայն մնալ վանքերում ու անփական իրեր չստանալ։

Սրանք ու սրանց նման գրեցին արևմուտքի ժողովում և ուղարկեցին արևելք Զաքարիային։

Իսկ Հռոմկլայում գտնվող Հովհաննես կաթողիկոսը արևելքի իշխաններին դուր գալու համար ուղարկեց զմբեթարդ ու եկեղեցաձև մի վրան, որա շինողներին ու հորինողներին, մի մարմարյա սեղան, պատարագների այլ սպասք, Մինաս անունով մի եպիսկոպոս, սարկավագներ, դպիրներ ու բազմաձայն քահանաներ՝ պատարագի ասացողներ։ Դրանք եկան Լոռե քաղաքում հանդիպեցին ամիրսպասալարին և մատուցին նրան կաթողիկոսի հրամանը, նրա թուղթն ու ընծաները։ Լևոն արքայի ու Դավիթ կաթողիկոսի կողմից ուղարկված պատվիրակներն ու թղթաբերները նույնպես եկան։

Դրա համար Զաքարիան չափազանց ուրախացավ. հրամայեց Լոռե քաղաքում ժողովի կանչել Հաղպատի եպիսկոպոս իրենց ազգական Գրիգորեսին, Անիի եպիսկոպոսին, Բջնիի, Դվինի, Կարսի ու այլ եպիսկոպոսների, որոնք պատահեցին։ Նույնպես վանքերի վարդապետներին ու առաջնորդներին քահանաների և այլ աշխարհական բազմության հետ կամենում էր դրանք կանոնեցնել ու պատարագ մատուցել։

Այդ ժամանակ կային երկու վարդապետներ՝ Գետիկի վանքը կառուցող Գոշ կոչված Մխիթարը՝ մի իմաստուն, հեզ

մարդ և օրինագիտական ուսումով հռչակված. Իգնատիոսը, Վարդանը, Հաղպատի Դավիթ Քոբայրեցին, Սանահինի հայր Հովհաննեսը, որ Գրիգոր վարդապետի մահից հետո էր, որին Տուտեորդի էին կոչում. նա նույն իշխանների դաստիարակն էր. Կեչառուքի[257] Մոնոնիկն կոչված Գրիգորը, Թեղենիքի[258] Տուրքիկը, որ հրաշալի կարգավորեց վանքը, այն է ամեն ինչ պետք է ընդհանուր լինի և ոչ ոք սեփական ոչինչ չպետք է ունենա. Հավուց[259] Թառի Եղիան, որ իր վանքի պաշտամունքային արարողությունը գեղեցիկ կերպով կարգավորեց, այսինքն ամենքը միանման պետք է հնչեն՝ բարձր կամ ցածր, և ոչ թե ընկերը պետք է նվաստացնի ընկերոջը. Գրիգոր Դվնեցին, Սևանի Սարգիս մենակյացը։ Այս նշանավոր մարդիկ, սրանց հետ և ուրիշները՝ Հաղպատի Գրիգորես եպիսկոպոսը, Բջնիի ու Դվինի Վրթանեսը, Անիի աթոռակալ Սարգիսը, Կարսի Հովհաննեսն ու այստեղից-այնտեղից բազմաթիվ ուրիշները՝ վանքերի, քաղաքների ու գյուղերի հայտնի քահանաների հետ միասին։

Իսկ երբ լսեցին ու իմացան կաթողիկոսի ու թագավորի հրամանի մասին, ոմանք հավանություն տվին, իսկ ոմանք մերժեցին։ Այսպես անմիաբան լինելով՝ պառակտվեցին. Մի մասը գիշերը գաղտագողի հեռացավ, մի մասին բռնի արգելեց, մինչև պատարագը մատուցվեց։ Այսպես անմիաբան միմյանց մեղադրելով գնացին։

Իսկ Զաքարե իշխանը ուղարկեց իր իշխանության ներքո գտնված վանքերը և բռնի կերպով անել տվեց Աստվածածնի փոխման ու սուրբ խաչի վերացման տոնը ոչ թե կիրակի, ինչպես որ սովորույթ էր, այլ շաբաթվա կամ ամսվա ինչ օր որ պատահեր*։ Շատ տարաձայնություններ ու կռիվներ առաջացան եկեղեցիներում. ուրախության փոխարեն տրտմություն էր, միմյանց սիրելու փոխարեն ատելություն էր, մինչև իսկ մտածեցին սուր գործածել միմյանց դեմ։

Այս Զաքարիան Մինաս եպիսկոպոսին, որ կաթողիկոսի կողմից եկել էր, ուղարկեց Հաղպատ իր եկեղեցական սպասավորներով, որպեսզի այնտեղ էլ նույնը կատարեն։ Երբ նա ներս էր մտնում վանքին, Հաղպատի Գրիգորես եպիսկոպոսը մարդիկ ուղարկեց, որոնք բրերով սաստիկ* ծեծեցին նրան ու նրա սպասավորներին. ծանր վերքեր հասցնելով՝ թողին կիսամահ, իսկ նրա հետ եղած բեռնակիր ջորիները գահավեժ արին սատկեցրին։ Եպիսկոպոսին մահճով վերցրին տարան Զաքարեի մոտ։ Նա այս տեսնելով խիստ բարկացավ Գրիգորես եպիսկոպոսի վրա և հրամայեց բռնել նրան ու մահվան պատժով սպառնաց։ Իսկ նա փախստական ընկավ գնաց Կայան գավառը՝ Գետիկ վանքը մեծ վարդապետ Մխիթարի մոտ ապավինելու, որովհետև գիտեր, թե նա մեծ վստահություն է վայելում Զաքարեի մոտ։ Այդ անգամ նրա մահից ճողոպրեց, իսկ հետո նրան բռնելով՝ Կեչառուքում[257] բանտարկեց ու նրա փոխարեն Հաղպատի եպիսկոպոս նշանակեց Հովհաննեսին, որ առաջ աթոռը թողել ու գնացել էր Խաչեն[231]։ Հովհաննեսը մի առաքինի մարդ էր, նա հիշատակելու արժանի բազմաթիվ գործեր կատարեց Հաղպատում, որոնց հետ շինեց նաև եկեղեցու հռչակավոր գավիթը, որ տեսնողներին հիացնում է։

Եվ այսպես խառնաշփոթ վիճակում էին արևելքի եկեղեցիները, որովհետև այն, ինչ որ [Զաքարեն] առաջարկում էր, երկար ժամանակ սովոր չէին կատարելու, ոչ էլ յուրաքանչյուր օրվա տոները, որպեսզի տոնի պատճառով պահքը չլուծվեն. նաև սուրբ պատարագը սարկավագով ու դպիրով չէին մատուցում, այլ քահանաներն էին միմյանց սպասավորում։ Կարծում եմ, որ այս սովորությունը ընդունեցին արաբների բռնությունից, որոնք քրիստոնյաներին թույլ չէին տալիս իրենց պաշտամունքները ազատ կատարելու. նաև եկեղեցիների դռները չէին համարձակվում բաց թողնել սարսափով կատարվող արարողության ժամանակ, որպեսզի այլազգիները ոճիրներ չգործեն, կամ իրենց այլ ցանկացած բաները չանեն։

Դարձյալ հրամայում է ձաղով անել Շիրակ գավառում

---

* Բնագրի Այլ զպատկերն զինչ օր և էր պետք է ուղղել՝ Այլ զպատկեր աւուրն զինչ օր և էր: Պատկեր աւուր նշանակում է շաբաթվա կամ ամսվա օրը և օրվա շարականը։

* Բնագրում սաստիւ. ճիշտն է սաստիկ, որ ունեն տարընթերցումները։ ժամանակին ուղղել է Ն. Բյուզանդացին (տես «Նախնիք» էջ 395, Մատենագրական, ժամանակագրական)։

գտնվող Անի մայրաքաղաքում։ Հավաքվեցին վերոհիշյալ եպիսկոպոսներն ու վարդապետները և ավելի շատերը։ Զաքարիան գրեց Մխիթար վարդապետին, որպեսզի նա էլ ներկայանա ժողովին։ Իսկ նա պատճառ բերեց հիվանդությունն ու տկարությունը և գրեց այսպիսի պատասխան, թե՝ «Ինչ որ դրանք անեն ու կամենան, ես համաձայն եմ դրան, և քեզ աղաչում եմ, ինձ ավելի մի չարչարիր, քանի որ չեմ կարող»։

Իսկ Զաքարեն գումարեց ժողովը ու խնդրեց ժողովականներից ստորագրություն, որպեսզի անեն այն, ինչ ուզում էր ինքը։ Իսկ նրանք ասում են. «Մենք առանց մեծ վարդապետի այդ անել չենք կարող»։ Մեծարանքի համար այսպես էին կոչում նրան։ Իսկ նա ցույց տալով թուղթը՝ ասում է. «Ահա նա, որովհետև այս նրա ձեռագիրն է, սա նա է, իսկ նա սա»։ Եվ թուղթը չտվեց նրանց, [որ իմանան] թե ինչ է գրված այնտեղ։ Իսկ ժողովը նրանից թույլտվություն խնդրեց, մինչև իրենք [մարդ] ուղարկեն նրա մոտ, որ գա ժողովի։

Եվ [մարդ] ուղարկեցին Մխիթար վարդապետի մոտ ու աղաչեցին նրան՝ գալ ժողովի, որ միաբան պատասխան տան զորավարին. գրեցին, թե՝ «Մարմնի տկարությունը պատճառ մի բռնիր. եթե ճանապարհին քեզ մահ պատահի, եկեղեցու առաջին սուրբ վարդապետների հետ կհարգենք քո հիշատակը»։ Երբ կարդաց ժողովի թուղթը, անմիջապես վեր կացավ ու գնաց հրավիրողների հետևից։

Ձմեռային օրեր էին, և Հիսուս Քրիստոսի ծննդյան ու հայտնության տոնը մոտեցել էր։ Երբ զորավարը իմացավ, որ նա գալիս է, մի իշխանի ուղարկեց քաղաքի դռներից դուրս, որպեսզի երբ գա, չթողնեն նրան ժողովի գնալ, այլ տանեն իր մոտ։ Նախքան նրա գալը [Զաքարեի] իշխանության սահմաններում եղած եպիսկոպոսների մի մասը համաձայնվեց նրա խնդիրքը կատարել, որպեսզի աթոռից չընկնեն, իսկ մյուս մասը մերժեց։

Երբ վարդապետը եկավ, իշխանը նրա երիվարի սանձը բռնեց, տարավ զորավարի մոտ։ Երբ ժողովը իմացավ, թե նրան չթողին իրենց մոտ գնալ, ուղարկեցին առաքինի ու ողջախոհ այր Ներսես վարդապետին, որ հետո Մոնոնիկեն կոչված Գրիգոր վարդապետի մահից հետո եղավ Կեչառուքի



առաջնորդ, որ գնա ասի նրան՝ նախ գա ժողովի, որպեսզի միասին մտածեն, թե ինչ պետք է անեն, որովհետև հակառակության տակ էին, և զորավարը պատրաստվում էր նրանց ստորագրությունը առնելու։

Նա [Ներսեսը] գնում, նրան հանդիպում է այնտեղ, երբ նա [Մխիթարը] պատրաստվում էր մտնելու զորավարի ապարանքը. դրսից ձայն տվեց նրան ու հայտնեց ժողովի պատգամը։ Իսկ իշխանը բռնի տարավ նրան մտցրեց ներս. զորավարը ընդառաջ գալով՝ ողջունեց ու ասաց. «Քանի որ դու եկար, նրանց մասին փույթ չեմ անում»։

Ժողովը այս բանը լսելով՝ նախանձով լցվեց. նախանձից չարացած ասացին. «Այս ամենը, որ զորավարը անում է մեր նկատմամբ, նրա խորհրդով է գործում. մենք նրա աչքում անասուններ ենք համարված»։ Եվ շատ խոսքերով բամբասում էին նրան։

Իսկ երբ նա հասկացավ ժողովի հանդեպ կատարված բաները, մեղադրեց զորավարին, [ասելով] թե իշխանությամբ չպետք է նման բաներ անել։ Եվ ուղարկեց ժողովին ու ասաց. «Դուք հոգ եք տանում մեր ազգի համար, որպեսզի այդպիսի ամոթալի չխառնվեն վրացիների հետ, իսկ ես հոգում եմ այս զորավարի համար, որպեսզի սա, ինչպես իր եղբայրը, վրացի չդառնա, որին ատում են վրացիները։ Արդ՝ եթե այդպես է, ապա ինչո՞ւ եք ինձ մեղադրում, երբ հրաման ունի կաթողիկոսից ու Լևոն թագավորից այս անելու։ Իսկ դուք կամենաք, չկամենաք, սա չի դադարի այդ անելուց։ Եթե դուք վերադարձեք յուրաքանչյուրդ ձեր բնակավայրը, իսկ մենք սրան կաղաչենք ձեր եկեղեցիներից ու ձեր անձերից ձեզ չհանի, իսկ մենք այն պաշտամունքը, որ մինչև այսօր կատարել ենք, նույնը կանենք»։

Իսկ ամիրսպասալար [մեծ սպարապետ] Զաքարեն զավակի առանց վարդապետի գիտության, հրաման տվեց արտաքսել նրանց օտարություն։ Այս բանը իմանալով՝ վարդապետը բոլորից շատերին աղաչեց վերադառնալու իրենց տեղերը, իսկ մյուսներին քիչ օրերից հետո զորավարի եղբայր Իվանեն հրաման տվեց վերադառնալ իրենց տեղերը։

Իսկ Զաքարիան ինչքան որ ապրեց, իր կյանքի ընթաց-

քում այնպես վարվեց, ինչպես կամենում էր, բայց բոլոր եկե-ղեցիները հին պաշտամունքով էին ընթանում։

Այս ժողովի բովանդակ եղելությունները՝ խոսքն ու գործը իր պատմության մեջ նկարագրեց խորամիտ ու առատամիտ Վանական[32] վարդապետը, որովհետև նա ականատես էր ու ականջալուր կատարված իրողություններին՝ այն ժամանակ լինելով մեծ վարդապետի [Մխիթարի] մոտ աշակերտ։ Այս և ուրիշ շատ իրողություններ գտնվում են [նկարագրված] նրա գրքում, ովքեր կամենում են, [կարող են] դյուրությամբ սովորել։

## Չ.

### Աղվանից կաթողիկոսի՝ այլազգիներից նեղված, Մեծ իշխանի* մոտ գալու մասին

Բազմաթիվ տառապանքներից ու նեղություններից,— որ կրեց ընդհանրապես ամբողջ աշխարհը հարավային ազգից** Իսմայելի որդիներից [արաբներից], առավել ես [դրանք կրեցին] Հայաստանն ու Աղվանից աշխարհը, որովհետև բնաջինջ եղանք թագավորների ու իշխանների կողմից,— աղվանից կաթողիկոսներն այստեղ-այնտեղ թափառում էին՝ աթոռի հաստատուն տեղ չունենալու պատճառով։ Այնպես պատահեց, որ նրանք եկան մի քարայր Չարեք[260] կոչված բերդի սահմաններում, այնտեղ կանգ առան ու այնտեղից էին հովվում իրենց հոտը։ Նույն կաթողիկոսներից Բժգեն անունով մի ոմն թողեց իր կարգը, կին առավ ու որդիներ ունեցավ։ Նրան մերժեցին աթոռից ու նրա փոխարեն ձեռնադրեցին տեր Ստեփանոսին։

Սա ուներ Սարկավագ անունով մի քորեպիսկոպոս։ Պատահեց, որ նա Գանձակ գնաց այնտեղ գտնված քահանաներից ու քրիստոնյաներից եկեղեցական տուրքերը հավա-

* Բնագրում՝ իշխան բառը հոգնակի է, բայց կաթողիկոսը իշխանների մոտ չի գնում, այլ՝ Օմար ամիրային է դիմում։

** Բնագրում՝ յուզաց, որ նշանակի ներ Թուրքմենաց։



բիլու։ Երբ նա քաղաք մտավ, քաղաքի ամիրան, որի անունն էր Պուրչի Թադրադին, տեսավ նրան ու հարցրեց, թե՝ «Ո՞վ ես»։ Եվ երբ ասաց թե՝ «կաթողիկոսինը»,— ասաց նրան. «Ես լսել եմ, թե քրիստոնյաները շատ են ուրախանում, երբ ջուրը օրհնում են։ Արդ՝ ահա ձեր տոնը մոտեցել է, կանչիր ձեր կաթողիկոսին իր եկեղեցական սպասավորներով, ինչպես ձեր սովորությունն է, օրհնեցեք մեր քաղաքի ջուրը, որպեսզի մենք էլ ձեզ հետ ուրախանանք»։

Իսկ քորեպիսկոպոսը գնաց պատմեց կաթողիկոսին ամիրայի հրամանի մասին։ Նա շատ ուրախացավ, որովհետև կաթողիկոս կամ նշանավոր մեկը երբեք չէր համարձակվում հայտնապես քաղաքը մտնել կամ այնտեղ շրջել, քանի որ պարսիկները՝ քրիստոնյաների արյան ծարավ այդ մարդիկ, գրավել էին քաղաքը։ Որովհետև սրանք բազմաթիվ տառապանքներ էին կրել Խաչենի բնակիչների կողմից, որոնք ավազակային կյանք վարելով պարսիկներից շատերին սպանում էին, իրենց ձեռքի տակ գտնված քրիստոնյաներին կողոպտում. նույնպես էլ վրաց թագավորը ու նրա զորքը [պարսիկներին կոտորում էին] այս պատճառով [պարսիկները] թշնամի էին բոլոր քրիստոնյաներին։

Իսկ կաթողիկոսը հավաքելով իր թեմի եպիսկոպոսներին ու վարդապետներին՝ նրանց հետ գնաց ամիրայի կոչին։ Ամիրան նրան տեսնելով՝ չափազանց ուրախացավ և հրամայեց մեծ ճոխությամբ ու հանդեսով՝ խաչվառներով, ժամհարներով, ու մեծաձայն արարողությամբ գնալ ջուրը օրհնել։ Ինքը նստեց երիվարը ու բազմաթիվ զորքով գնաց դիտելու զվարճության համար։

Ամբողջ քաղաքը իր հեթանոս բնակիչներով տեղահան եղավ. սրանք ևս գնացին նայելու։ Երբ սուրբ յուղը լցրին ջրի մեջ, պարսիկները ասացին. «Անհավասիկ մեր ամիրան բոլորիս քրիստոնյա դարձրեց, որովհետև քրիստոնյաները մկրտելուց ու օծելուց բացի ավել ի՞նչ են անում։ Իսկ մենք ամենքս խմում ենք այս ջրից և լվացվում ենք սրանով. սրանից հետո մենք բոլորս անհավատ ենք ու հավատակորույս։ Արդ՝ եկեք մի բան մտածենք»։

Այն ժամանակ մեծ խռովություն բարձրացրին, կաթողիկոսին բռնեցին ու բանտարկեցին, և հետո չարչարեցին ամի-

բայի ետևից, նրան արգելափակեցին ամրոցում, իսկ իրենք գրեցին աթաբեկին [փոխարքային], որ Սպահանում էր նստում, թե՝ «Այս ամիրան մեզ բոլորիս հանեց մեր հավատից, որովհետև քրիստոնյաների գլխավորի միջոցով խոզի յուղը լցնել տվեց մեր ջրերի մեջ։ Այժմ երկուսն էլ՝ և կաթողիկոսը, և ամիրան կալանքի տակ են. արդ՝ ինչ որ դու հրամայես, այն էլ կկատարվի»։

Նա հրամայեց իշխանությունից զրկել ամիրային ու իր մոտ բերել։ Իսկ կաթողիկոսից արծաթի, ոսկու մեծ գանձեր առնելով, թողին որ գնա, ուր կամենա։ Եվ նա վտանգից դուրս պրծնելով՝ գնաց Խաչենի կողմերը ու այլևս չէր համարձակվում մուտք գործել Գանձակի սահմանները։

Իսկ քաղաքի կողմերում գտնվող վանականներն ու գավառի քահանաները երբ տեսան, թե տեր Ստեփանոսը չի համարձակվում այն կողմը գալ և ոչ էլ իրենք են համոզնում նրա մոտ գնալ, այն կարգաթող արված Բժգենին առան ու քահանայության կարգ ու ձև տվին։ Այս բանը լսելով տեր Ստեփանոսը՝ նրան ու այդ բանը անողներին բանադրեց, իսկ ինքը այստեղ-այնտեղ մնաց այնքան, մինչև որ մեռավ Հերգ* գավառում։

Երբ Աղվանքի կողմերի վարդապետներն ու եպիսկոպոսները տեսան, թե նրանց կաթողիկոսությունը վերացավ, և այն տոհմից ոչ եպիսկոպոս կա, ոչ քահանա, բացի մի մանուկ սարկավագից, նրան առան տարան Բջնի Վրթանես եպիսկոպոսի մոտ և քահանա ձեռնադրել տվին։

Նրան վերցրին բերին Գանձակ քաղաքը քաղաքի Օմար անունով [իշխան ամիրի] մոտ և նրան աղաչեցին, որ թույլ տա նրան կաթողիկոս ձեռնադրելու։ Նա ասում է. «Հասակով չափազանց մանուկ է, դուք որ չափահաս եք, ինչո՞ւ կաթողիկոս չեք լինում»։ Նրանք ասում են. «Որովհետև սա կաթողիկոսների տոհմից է, աթոռը նրան է պատկանում»։ Հրաման է տալիս նրան ձեռնադրելու։ Այնտեղ քիչ եպիսկոպոսներ կային, որ ձեռնադրեցին նրան։ Երբ ձեռնադրվեց, ամիրան նրան նստեցրեց մի ազնիվ երիվարի և վրան թանկագին կերպաս

---

* Ըստ Ալիշանի ենթադրության պետք է գրվի Հերք, որ Աղվանից աշխարհի Հերեթն է Սղնախի մոտ։



գո՜ց ի պատիվ նրա և առջևից ու հետևից փողհարներ՝ հրամայեց շրջեցնել քաղաքի փողոցներով։

Եվ այսպես շատ տարիներ աղվանից աթոռը վարեց տեր Հովհաննեսը։

Սա իր աթոռը հաստատեց Ջարեքի սահմանների այն բարայրում*, որը վերևում հիշատակեցինք։ Սա այլազգիներից նեղվելով՝ դիմեց եկավ մեր Հայաստան աշխարհը մեծամեծ իշխաններ Զաքարեի ու նրա եղբայր Իվանեի մոտ։ Սրանք մեծ պատվով ընդունեցին նրան։ Իվանեն նրան բնակեցրեց Միափոր գավառում՝ Խամշի կոչված վանքում։ Սա սկսեց այնտեղ շինել մի մեծ ու հրաշալի եկեղեցի։ Դեռևս** չավարտած, խափանվեց, որովհետև Խորասանի Ջալալադին կոչված սուլթանը եկավ ու ջախջախեց վրաց թագավորությունը և սպանեց, թե այլազգի զորքերը կգան ու մեկմեկի հետևից կավերեն Հայոց, Աղվանից ու Վրաց աշխարհները։

# Է.

## Վասպուրականի կողմերում գտնվող նշանավոր վարդապետների մասին

Այն օրերում կային առաքինի ու կրթված վարդապետներ, որոնք փայլում էին երկրում իբրև լուսատուներ. Հուսիկի որդի Ստեփանոսը՝ մի սքանչելագործ ու սուրբ մարդ, որի մահից հետո գերեզմանը հոլոր հիվանդներին բուժում էր. Գարգ Կարնեցին, որ մի գիտնական ու իմաստուն մարդ էր. մեկ ուրիշն էլ կար Տիրացու անունով, որ եպիսկոպոսության աստիճան ստացավ. Արճեշ[262] քաղաքից Աստվածատուրը, որին կոչում էին Աղբայրիկի որդի։ Տեսնողները սրա մասին բազմաթիվ առաքինություններ էին պատմում։

Սա մի հարուստի որդի էր՝ չափազանց ազնվածին ու աղքատասեր։ Երբ նրան ասացին, թե քո մարմնավոր մայրը

---

* Բնագրում ի Բարի, ուղղում ենք ի Բառայէն:

** Բնագրում մինչև, ուղղում ենք մինչ չև և ըստ այդ թարգմանում։

մեռավ, աստծուն գոհանակություն հայտնեց. գնաց նրա թաղմանը, առավ ոսկի ու արծաթ, լցրեց իր մոր բուռը և աղջատներին կանչեց, որ մոր ձեռքից վերցնեն, որպես թե մայրը հենց իր ձեռքով է տալիս։ Իսկ երբ հայրը վախճանվեց, վերցրեց ամբողջ ունեցվածքը բաշխեց կարիքավորներին։

Նա ուներ բազմաթիվ խանութներ. դրանք վարձով տվեց և ամեն ամիս վարձերը առնում էր, դրանցով գնում էր ուխտավորների մարթիներ, կտորեղեն ու իր ձեռքով հագուստներ էր կարում ու բաժանում աղքատներին։

Արաբներից շատերը տեսնելով սրա բարեգործությունը՝ գալիս էին մոտը և նրանից մկրտվելով՝ դառնում էին քրիստոնյաներ։

Անհավատները տեսնելով, որ նա է այդ ամենի պատճառը, կամենում էին սպանել, բայց բացարձակ չէին համարձակվում՝ ժողովրդական բազմությունից [վախենալով]։ Մտածեցին դավանի թակարդ լարել նրա դեմ։ Բռնեցին իրենց ծառաներից մեկին, խեղդեցին ու գիշերը բերին գցեցին վանքի դռների մոտ և առավոտ վաղ եկան պաշարեցին վանքը, որպեսզի բոլորին սպանեն, իբր թե նրանք են արել այդ բանը։

Քրիստոնյաները լսելով՝ անհամար բազմությամբ հավաքվեցին, որ բոլորը մեռնեն և ապա նրան ձեռք հանձնեն։ Իսկ աստծու սուրբ մարդը տեսնելով թշնամու դավանի որոգայթները, և թե իր պատճառով կամենում են շատերին սպանել, որովհետև քաղաքի իշխանությունը պարսիկների ձեռքն էր, ասաց նրանց. «Մի գիշեր մեզ վիճեցեք, իսկ առավոտյան, ինչպես կամենում եք, այնպես արեք։ Տվեք մեզ այդ մեռելը»։ Նրանք տվին։ Վարդապետը հրամայեց գիշերային ժամերգություն անել և աստծուց խնդրել, որ զրպարտանքից ազատվեն։ Ինքը առանձնացավ ու մեծ հառաչանքով խնդրում էր աստծու օգնությունը։ Առավոտյան վանքի դռները բացեց ու բոլորին՝ հավատացյալ ու անհավատ, ներս կանչեց։ Ինքը առավ տերունական նշանը [խաչը] և բարձր ձայնով ի լուր ամենքի ասաց. «Քեզ եմ ասում, ով մարդ, վեր կաց կանգնիր հանուն ողջերի արարածներ ստեղծող Հիսուս Քրիստոսի և բոլորի ներկայությամբ ասա, թե ով սպանեց քեզ»։ Նա շտապիրույթ վեր կացավ, [illegible], տեսավ



[illegible] սպանողին ու ասաց. «Այն մարդը սպանեց ինձ»։ Այդ ժամանակ աստծու սուրբը ասաց նրան. «Դարձյալ գլուխդ դիր ու ննջիր մինչև ընդհանուր հարությունը»։ Եվ նա դարձյալ խաղաղ մեռավ։ Եվ այսպես մահից ազատվեցին, փառաբանելով Քրիստոսի անունը։

## Ը.

## Զաքարե զորավարի մահվան մասին

Բազմաթիվ քաջագործություններից ու հաղթություններից հետո, որ կատարեցին մեծամեծ իշխաններ Զաքարեն ու Իվանեն, մեծ զորքով գնացին Մարանդ քաղաքը, գրավեցին այն ու ավերեցին նրա շուրջը գտնվող գավառները։ Ապա գնացին Արտավիլ քաղաքը, այն նմանապես գրավեցին։

Նրանցից շատերը իրենց աղոթասացների հետ, որոնց մոգքի* են անվանում, ապաստանել էին իրենց աղոթարանում։ Զաքարեն հրամայեց բերել խոտ ու ցողուն, դրանց վրա լցրեց ձեթ ու նավթ և կրակ տալով այդպես այրեց նրանց՝ ասելով. «Իշխաններն ու աշխարհականները արաբների կողմից Նախիջևանում այրված հայ իշխանների փոխարեն, իսկ նրանց ընթերցողները (կրոնավորները)** Բագավանի այն քահանաների փոխարեն, որոնց մորթեցին և արյունը եկեղեցու պարսպով թափեցին, որ մինչև այսօր տեղը սևացած երևում է»[263]։

Իսկ երբ վերադարձավ իր երկիրը, ճանապարհին հիվանդացավ, քանի որ անբուժելի վերքեր դուրս եկան նրա մարմնի վրա։ Մեկի առողջանալով մեկ ուրիշն էր դուրս գալիս։ Եվ այսպես [հիվանդությունը] տանջելով նրան՝ քիչ օրեր անց վախճանվեց։ Բոլոր քրիստոնյաները ողբացին։ Նրան տարան թաղեցին Սանահինում՝ մեծ եկեղեցում, դռան առաջ խորանի տակ ձախ կողմից։ Մեծ սուգ կալեցին վրաց Գիորգի

* Մոգքի նշանակում է մահմեդական [illegible] կրոնավոր, արաբերեն՝ զուրան [illegible]։

** [illegible] բառը նույնպես աղոթասաց՝ կոչված ընթերցող է նշանակում։

Լաշա մականունով թագավորը՝ Սոսլանի ու Թամարի որդին՝ մեծ թագավոր Գիորգիի թոռը և իր եղբայր Իվանեն վրաց ամբողջ զորքով։ Զաքարեին Շահնշահ անունով մի որդի մնաց, որ հասակով մանուկ էր. սրան խնամեց Իվանեն իր որդի Սարգսի հետ, որին Ավագ էին անվանում, մինչև արբունքի հասավ և տիրեց հայրենի իշխանությանը։

## Թ.

## Լևոն արքայի ու նրա մահվան մասին

Իսկ Հայոց բարեպաշտ ու հաղթական Լևոն թագավորը ի թիվս կատարած բազմաթիվ քաջագործությունների հնազանդեցրեց շրջակա ազգերին։ Եկավ նաև Հայոց Հովհաննես ապստամբ կաթողիկոսը, որ Հռոմկլայում էր, հաշտվեցին միմյանց հետ, երբ Արքայակաղնում գտնված տեր Դավիթը վախճանված էր։

Ապա Լևոն արքան ևս հիվանդացավ հիվանդությամբ և խելույն մեռավ։

Նա իր մոտ կանչեց Հովհաննես կաթողիկոսին ու բոլոր զորագլուխներին՝ իրենց զորքերով։ Եվ որովհետև ուստր չուներ, միայն մի դուստր ուներ, հանձնարարեց կաթողիկոսին ու բոլոր իշխաններին, որ իր փոխարեն նրան թագավորեցնեն, հնազանդ մնան* ու մի հավասարաստիճան մարդու հետ ամուսնացնեն։ Նրան հանձնեց կաթողիկոսին ու երկու մեծամեծ իշխաններին՝ իր ազգական Կոստանդինին ու իշխան Ատանին, որ հռոմեադավան էր, և ինքը խաղաղ մահով մեռավ Հայոց վեց հարյուր վաթսունութ թվականին (1219 թ.), հաղթությամբ ու բարի անվամբ թագավորելով քսանչորս տարի։

Իր ամբողջ երկիրն ու բոլոր զորքը ընդհանրապես ծանր սգով համակվեցին քաջի մահվան պատճառով, որովհետև օրհնաբանելի արքան բոլորի կողմից չափազանց սիրված էր։ Պատշաճ սգից հետո մարմինը պատրաստեցին թաղելու համար։ Բայց հակառակություն ընկավ. մի մասը ասում էր, թե պետք է նրան թաղել Սիս[264] արքայական քաղաքում, իսկ մի մասը [պնդում էր, թե պետք է թաղել] Ակներ կոչված վանքում, որովհետև նա չափազանց շատ էր սիրում այդ վանքը՝ նրանց [վանականների] բարեկարգ պահելու [վանքը] և հայրական աղոթքների համար։ Իսկ մի մասը պատշաճ չհամարեց, որովհետև այն տեղը սահմանամերձ էր, իսկ նրա այլազգի թշնամիները՝ բազմաթիվ. «Գուցե, ասում էին, գան հանեն ու հրով այրեն նրան, նրա դեմ ունեցած մեծ վրեժի համար»։ Ապա բոլորը համաձայնվեցին, նրա մարմինը տարան թաղեցին Սիս քաղաքում, իսկ սիրտն ու փորոտիքը տարան Ակներ կոչված վանքը։

Այսպես բարեպաշտությամբ հանգավ քաջ ու բոլորին հաղթող Լևոն արքան։

Կաթողիկոսն ու իշխանները բերին Անտիոքի տիրոջ որդուն, որին պրինց էին կոչում, Լևոն արքայի դստերը տվին նրան կնության և թագավորեցրին։ Պատանու անունը Փիլիպոս էր, իսկ թագուհու անունը՝ Զաբել։ Բայց երբ չորս տարի թագավորեց, նրան իր հայրը խաբեց ու առավ Լևոն արքայի թագն ու արքունական վրանը*, որը կանգնեցնում էին նշանավոր օրերին, նաև ոսկու ու արծաթի այլ գանձեր։ Երբ իշխանները տեսան, որ այդ մարդը հավատարիմ չէ թագավորությանը, բռնեցին նրան, արգելափակեցին, մինչև որ բերի թագն ու տարած գանձը։ Իսկ նրա հայրը չավեց ոչ մեկը, ոչ էլ որևէ բանով օգնել կարողացավ իր որդուն։ Եվ նրան թողեցին այնտեղ [արգելարանում], մինչև որ այնտեղ մեռավ։

Մեծ իշխան Կոստանդինը համոզեց կաթողիկոսին ու այլ մեծամեծներից ոմանց՝ թագավորեցնելու իր մանուկ որդի Հեթումին, որ մարմնապես առույգ էր ու տեսքով գեղեցիկ։ Իսկ թագուհին չհամաձայնվեց մանկանը կին դառնալ, ըմբոստացավ գնաց Սելևկիա այնտեղ գտնվող ֆրանկների մոտ, որովհետև նրա մայրը ազգով ֆրանկ էր՝ Կիպրոս կղզուց։

Իսկ Կոստանդինը առավ բոլոր զորքերը, պաշարեց քաղաքը, մինչև որ ստիպված թագուհուն հանձնեցին նրան։ Տարավ նրան ամուսնացրեց իր որդու հետ։ Նրանից որդիներ

* Բնագրում՝ կեալ, ճիշտն է կալ, որ ունեն տարընթերցվածները։

* Բնագրում պաղատան. ըստ Ալիշանի՝ վրան կամ գահավորակ։

ծնվեցին։ Այդ կինը չափազանց բարեպաշտ էր ու բարոյական, սիրում էր աստծու բոլոր երկյուղածներին և աղքատասեր էր, միշտ անց էր կացնում պասերով ու աղոթքներով։

Իսկ մեծ իշխան Կոստանդինը իր որդու՝ Հեթումի համար թագավորական իշխանությունը առնելուց հետո արքայության ամբողջ հոգսը վերցրեց իր վրա և իմաստուն կերպով կարգավորեց։ Մի մասը սիրով հնազանդվում էր, իսկ անհնազանդներին մեջտեղից վերացնում էր՝ ոմանց փախստական էր դարձնում, ոմանց սպանում։ Հույների Ալադին անունով սուլթանի հետ հաշտություն ու միաբանություն հաստատեց, որն իր ձեռքի տակ ուներ բազմաթիվ երկրներ։ Այդպես վարվեց բոլոր շրջակա ազգերի հետ և բոլոր կողմերից մեր երկիրը խաղաղեցրեց։

Իր անդրանիկ որդի Սմբատին նշանակեց զորավար, իսկ մյուսին՝ Թագավորական իշխան։ Երկրի բոլոր վանականների մարմնական պետքերի հոգսերը վերացրեց, որովհետև ինքն էր հոգում նրանց կարիքները, որպեսզի նրանք աղոթքներով ու պաշտամունքով զբաղվեն։

Երկիրը լցվեց անարհեստ ու արհեստավոր մարդկանց բազմությամբ, որոնք բոլոր կողմերից հավաքվեցին հյուսիսարևելքից եկած ու ամբողջ աշխարհը կործանած թաթարների ավերումից փախչելով։

Սրանից հետո մեռավ նաև Հովհաննես կաթողիկոսը՝ աթոռակալելով տասնութ տարի։ Եվ մեծ իշխանը թագավորի հետ միասին սուրբ Գրիգորի աթոռն է նստեցնում տեր Կոստանդինին, որ մի աշակերտ, հեզ մարդ էր, սա սուրբ կյանքով ապրեց ու անձամբ բարին առաջնորդեց, ինչպես որ ուղղափառությամբ հարգարեց եկեղեցու կարգը։ Սրան հարգում էին բոլոր ազգերը, ոչ միայն քրիստոնյաները, այլև մահմեդականները։

Այնպես պատահեց, որ երբ սուլթաններ եկան Հռոմկլա կոչված քաղաքի սահմանները, որտեղ Եփրատ գետի ափին կաթողիկոսական աթոռն էր գտնվում։ Կաթողիկոսը գնաց սուլթաններին տեսության։ Երբ իմացան նրա գալուստի մասին, իրենք ընդառաջ գնացին նրան և մեծ պատվով բերին բանակը։ Թանկագին վրան կանգնեցրին նրա համար իրենց վրանների միջև. մի կողմը Եգիպտոսի վրա իշխող Մելիք Քե-



միլի վրանն էր, մյուս կողմը մեր Հայաստանի մեծ մասին ու Միջագետքին իշխող Մելիք Աշրաֆի վրանն էր։ Նույնպես և նրանց եղբորորդու վրանը, որ իշխում էր Դամասկոսի կողմերը։ Եվ այսպես շատ օրեր մեծամեծ պատիվներ տալով նրան, ուղարկեցին շատ պարգևներով, գյուղերով ու դաստակերտներով, որովհետև աստված իրեն փառավորողներին փառավորում է այստեղ և հանդերձյալում։

Հեթումի թագավորությունը սկսվեց հայոց վեց հարյուր յոթանասուներեք թվականին (1225 թ.)։

ժ.

## Աղվանից կողմերի պատմության համառոտ շարադրանք՝ մեջ* բերված պատմողաբար

Առաջին պատմության սկզբում գրեցինք հայոց սուրբ լուսավորչին՝ առաքյալին ու մարտիրոսին, երեք սուրբ առաքյալների՝ Թադեոսի, Բարդուղիմեոսի ու Հակոբյան Հուդայի, աթոռակալին՝ սուրբ Գրիգորիոսին, և նրա աղոթքով հասանք մինչև այստեղ։ Իսկ երկրորդ հատվածիս համար իբրև գլուխ կդնենք աղվանից կողմերի լուսավորիչներին, իբրև մեր ազգայինների ու հավատակիցների, մանավանդ որ նրանց շատ առաջնորդները հայալեզու ու հայերենախոս էին։ Թագավորները հնազանդ էին հայոց թագավորներին, նրանց իշխանության տակ էին գտնվում, եպիսկոպոսները սուրբ Գրիգորից ու նրա աթոռակալներից էին ձեռնադրվում, և ժողովուրդը ուղղափառությամբ մեզ հետ էր մնում կրոնով [եկեղեցով]. այդ պատճառով անհրաժեշտ է, որ երկու [երկրների] ժողովուրդների հիշատակումը միասին լինի։ Եվ մենք համառոտ կերպով կսկսենք խոսել նրանց առաջնորդների մասին մինչև այստեղ, ուր թողնվեց։

Արդ՝ Արևելյան կողմերի լուսավորության [քրիստոնեության] առաջին պատճառը համարում են մեծ Թադեոս

---

* Բնագրում Ներնոյս, ճիշտը համարում ենք Ներգոյս, որ ունեն տարընթերցվածները։

առաքյալի աշակերտ Եղիշեին, որ սուրբ առաքյալի մահից հետո գնաց Երուսաղեմ տիրոջ Հակոբոս եղբոր մոտ և նրանից եպիսկոպոս ձեռնադրվեց, եկավ Պարսկաստան ու հասավ Աղվանից աշխարհը։ Նա եկավ Գիս[265] անվանված մի վայր և այնտեղ շինեց եկեղեցի, իսկ ինքը նահատակությամբ վախճանվում է այնտեղ, որ անհայտ է, թե ում կողմից կատարվեց։ Բազմաթիվ դիակների հետ նրան նետեցին մի ջրհոր, որ մնաց մինչև բարեպաշտ արքա վերջին Վաչագանի օրերը։

Եվ սրանք են Հայքի գահից աղվանից թագավորները, որ սերում են այն կողմերի համար Վաղարշակ պարթևի ձեռքով վերակացու ու իշխան նշանակված Առանից։ Առաջին Վաչագան, Վաչե, Ուռնայր։ Սա եկավ հայոց մեծ արքա Տրդատի ու սուրբ Գրիգորի մոտ և մկրտվեց այս վերջինի կողմից։ Եվ սուրբ Գրիգորը իր աշակերտներից մեկին, որ նրա հետ Հռոմից էր եկել, եպիսկոպոս է ձեռնադրում և հանձնում է Ուռնայր արքային։ Վաչագան, Մերհավան, Սատո, Ասա, Եսվաղեն։ Սրա օրոք երանելի Մեսրոպը գիր ստեղծեց հայերի, վրացիների ու աղվանների համար։ Վաչե. սրան պարսից Հազկերտ արքան, որ կոտորեց սուրբ Վարդանանց, բռնությամբ մոգ դարձրեց։ Հետո թողած մոգությունը, ընդ որում և թագավորությունը՝ կրոնավոր դարձավ. խստակրոն կյանքով հաշտեցրեց աստծուն, որի դեմ մեղանչել էր։ Ապա Վաչագան Բարեպաշտը, որին վերևում հիշատակեցինք։ Սա լսեց, թե սուրբ Եղիշեին նետել են գուբը, հրամայեց հանել գբում եղած բոլոր ոսկորները։ Եվ հանելով, շեղջ-շեղջ կուտեցին*։

Աղոթքի կանգնեց բարեպաշտ արքան առ աստված, որպեսզի սուրբ Եղիշեի ոսկորներ ցույց տա։ Ուժգին հողմ բարձրացավ ու ցրուցրիվ արեց բոլոր ոսկորները դաշտի երեսը, բացի սուրբ Եղիշեի ոսկորներից։ Արքան մեծ հարգանքով հավաքեց՝ գոհանալով աստծուց, բաշխեց իր ամբողջ երկրի վրա։

Ապա եպիսկոպոս** դարձավ սուրբ Շուփհաղիշոն։ Բայց այս մարդուն առաջ դնելու համար մենք երկմտության մեջ

---

* Շեղջ-շեղջ բառից առաջ բնագրում ունի զԵտ, որ ավելորդ ենք համարում, որոշ տարընթերցվածներ չունեն։

** Այստեղ եպիսկոպոս կաթողիկոս է նշանակում։



ենք, որովհետև աղվանից պատմության գրքը այս անունը նշում է Վաչագան Բարեպաշտի օրերում եղած։ Սրան ապացույց են Վաչագան արքայի աղվանից բոլոր եպիսկոպոսների հետ դրած կանոնները, և այսպես է գրում. «Ես աղվանից Վաչագան արքաս ու Պարտավի արքեպիսկոպոս Շուփհաղիշոս»։ Եվ սրանից հետո այս անունը չի գտնվում եպիսկոպոսների համակարգի մեջ, իսկ մենք ինչպես գտանք, այնպես էլ գրինք։

Ապա տեր Մատթեն, տեր Սահակը [հովվեցին] հինգ [տարի] տեր Մովսեսը՝ վեց, տեր Պանտը՝ յոթ, տեր Ղազարը՝ ութ։ Ապա [հովվեց] սուրբ Մանուկ Գրիգորիսը՝ մեծ Վրթանեսի որդին՝ Հուսիկի եղբայրը՝ սուրբ Գրիգորի թոռը, որին հայոց մեծ արքա Տրդատը ուղարկեց, և սա սպանվեց Վատնյան դաշտում աստվածապաշտության համար ու բերվեց թաղվեց Ամարասում[266]։ Հետո Վաչագանի օրոք նրա նշխարները գտնվեցին. դրանց հետ գտնվեցին նաև Հովհաննես Մկրտչի հոր՝ Զաքարիայի, Քրիստոսի մեծ նահատակ Պանտալիոնի*, որ նահատակվեց Նիկոմիդիա քաղաքում Մաքսիմիանոսի օրերում, որին [Պանտալիոնին] սուրբ Գրիգորը իր հետ տարել էր։

Ապա տեր Զաքարիան՝ տասը տարի, տեր Դավիթը՝ տասնմեկ, տեր Հովհաննեսը, որ եղավ հոների եպիսկոպոս՝ տասներկու, տեր Երեմիան՝ տասներեք։ Սրա օրոք երանելի Մեսրոպը մեծ ջանքով աղվանների համար գիր ստեղծեց. տեր Աբասը՝ տասնչորս։ Սրան Դվինի ժողովից գրեցին, որ ասի «Սուրբ աստված անմահ, և խաչեցար» ու «Մի էությամբ [ունեն] աստվածությունն ու մարդեղությունը»։ Տեր Վիրոն (աթոռակալեց) երեսուներեք տարի։ Սա երկար տարիներ պարսից արքա Խոսրովի պալատում կալանքի տակ էր, իսկ նրա մահից հետո ազատվեց, եկավ իր երկիրը։ Սա ազատեց Հայաստանի, Վիրքի ու Աղվանքի գերիներին Ջեբու խաքանի որդի Շաթ խազրից, որ սարկացրեց մեր երկիրը։ Սա Շաթի անունով վեց** քաղաք շինեց՝ Շաթառը, Շամքորը,

---

* Բնագրում՝ Պանտալեիմոն, ուղղում ենք ըստ Կաղանկատվացու

** Բնագրում՝ հինգ, ուղղում ենք ըստ տարընթերցվածների և քաղաքների թվարկման

Տաքին, Շիրվանը, Շամախին, Շապորանը։ Տեր Զաքարիան [աթոռակալեց] տասնհինգ տարի։ Սա իր աղոթքներով գրավումից ազատեց Պարտավ քաղաքը։ Տեր Հովհաննեսը [իշխեց] քսանհինգ տարի, տեր Ուխտանեսը՝ տասներկու։ Սա աղվանից նախարարներին անիծեց ազգապիղծ խառնակության համար, և բոլորը սատկեցին։ Տեր Եղիազարը [աթոռակալեց] վեց տարի, տեր Ներսեսը՝ տասնյոթ տարի։ Սա քանի դեռ Գարդմանի եպիսկոպոսն էր, Սպրամ անունով մի կնոջ՝ աղվանից իշխանի կնոջը, համոզեց, որ, եթե իրեն Աղվանքի կաթողիկոս ձեռնադրել տա, ամեն ինչ կանի նրա կամքի համապատասխան։ Այդ կինը շաղախված էր Քաղկեդոնի աղանդի մեջ։ Կինը աղաչում է եպիսկոպոսներին ու Ներսես Բակուրին ձեռնադրել է տալիս աղվանից կաթողիկոս։

Որոշ ժամանակ անցնելուց հետո [կաթողիկոսը] իր հղացած աղանդը մեջտեղ բերեց։ Երբ եպիսկոպոսներից ու քահանաներից հանդիմանվեց, շատերին հալածեց։ Աղվանից առաջնորդները հավաքվելով՝ նզովեցին նրան ու գրեցին հայոց կաթողիկոս Եղիային՝ օգնելու իրենց։

Եղիան գրեց արաբների գլխավոր Աբդլմելիքին, թե աղվանից կաթողիկոսը և մի կին կամենում են երկիրը ապստամբեցնել քո դեմ, որ հույների կողմը անցնեն։ Նա հրամայում է Եղիային գնալ Աղվանից աշխարհը և նրան աթոռից զցել. նրա, ինչպես և այդ կնոջ ոտքերը միմյանց կապել ու իբրև բեռ գցել ուղտի* վրա և տանել արքունի դուռը, որպեսզի ամբողջ զորքի համար նշավակության առարկա լինեն։

Եվ Եղիան ու արքայի ներքինին գնացին Պարտավ քաղաքը, կատարեցին արքունական հրամանը։ Երբ այդպես անարգանքով ամենքի առաջ ծաղրուծանակի էին ենթարկում նրան, Ներսեսը նեղսրտվեց և ութ օրվա մեջ դառնորեն վախճանվեց։ Եվ Աղվանքի բոլոր նախարարներն ու բոլոր եպիսկոպոսները ներքինու առջև արքունական հրամանով ու կնիքով պարտավորագիր տվին, որ առանց հայոց կաթողիկոսի հրամանի աղվանից կաթողիկոս չեն ձեռնադրի։

Աղվանից աթոռի համար Եղիան ձեռնադրում է տեր Սիմոնին, որ Ներսեսի պղտորումը վերացրեց։ Մեկ ու կես տարի մնաց. յոթ կետից կանոններ դրեց։

Տեր Միքայելը [աթոռակալեց] երեսունհինգ տարի։ Սա կանչեց Մաքենացիների[199] վանահայր Սողոմոնին ու անիծեց աղվանից այն տերերին, որոնք ամուսնացել էին երրորդ պորտի ազգակիցների հետ. դրանք մեջտեղից վերացան ընդհանրապես. նզովեցին նաև վրաց Թալիլե կաթողիկոսին, որովհետև նա էր անօրեն ամուսնության հրաման տալիս։

Տեր Անանիան [աթոռակալեց] չորս տարի, տեր Հովսեփը՝ տասնյոթ տարի։ Սրա հինգերորդ տարում լրացավ հայոց տոմարի երկու հարյուր տարին։ Տեր Դավիթը [աթոռակալեց] չորս տարի. սա եկեղեցիների հողն ու սպասքը ազատեց և թունավորվելով մեռավ։ Տեր Դավիթը [աթոռակալեց] ինը տարի։ Սա անօրեններին վաճառեց Դաստակերտն ու Սահմանախաչը։ Տեր Մատթեոսը [աթոռակալեց] մեկուկես տարի. սա ևս մահադեղ խմելով մեռավ։ Տեր Մովսեսը՝ մեկուկես տարի, տեր Ահարոնը՝ երկու տարի, տեր Սողոմոնը՝ կես տարի, տեր Թեոդորոսը՝ չորս տարի, տեր Սողոմոնը՝ տասնմեկ տարի, տեր Հովհաննեսը՝ քսանհինգ տարի։ Սա կաթողիկոսությունը փոխադրեց Բերդակ, որ իրենց ամառանոցավայրն էր, երբ Պարտավից հանվեց։ Տեր Մովսեսը [աթոռակալեց] կես տարի, տեր Դավիթը՝ քսանութ տարի. սա օրհնեց Շաքիի տիրոջ անօրեն ամուսնությունը։ Նույն իշխանի աշխարհական եղբայրը հարցնելով ասում է նրան. «Որտեղի՞ց ես գալիս, տեր»։ Նա պատասխանում է. «Քո եղբոր տանից»։ Իշխանը Դավթին ասում է. «Այդ լեզուդ, որ օրհնեց, թող չխոսի, և աչքդ չորանա»։ Եվ անմիջապես կատարվեց, ու մինչև մահ չբուժվեց։

Տեր Հովսեփը [աթոռակալեց] քսանհինգ տարի. սրա երրորդ տարին լրացավ հայոց երեք հարյուր թվականը։

Տեր Սամվելը [աթոռակալից] տասնյոթ տարի. սա ինքն է կաթողիկոս ձեռնադրվում. հետո հայոց կաթողիկոս Գևորգի կողմից լուծվում է ու Դվինում հարկադրված երկրորդ ձեռնադրությունն է ընդունում։

Տեր Հովնանը [աթոռակալում է] ութ ու կես տարի։ Սա հայոց պալատական եպիսկոպոս էր։ Երբ Գևորգը դեռ գերության մեջ էր գտնվում, սա գալիս է Աղվանից աշխարհը և

* Բնագիրը վրիպակով ունի զուխտով, ուղղված է պուղտով, պետք է լինի զուղտա։

առանց Գևորգի համաձայնության այնտեղ ձեռնադրվում էր։ Եվ երբ աղվանից իշխանները տեր Գևորգին ազատագնեցին, նա Հովհաննին զրկեց կաթողիկոսությունից։ Բայց աղվանից իշխանները աղաչեցին, և նրանց իր հանդեպ ունեցած երախտիքի համար կրկին ձեռնադրեց։

Տեր Սիմոնը [աթոռակալեց] քսանմեկ տարի, տեր Դավիթը՝ հինգ տարի, տեր Սահակը՝ տասնութ տարի, տեր Գագիկը՝ տասնչորս տարի. սրա չորրորդ տարում լրացավ հայոց չորս հարյուր թվականը։

Տեր Դավիթը [աթոռակալեց] յոթ տարի [Կապաղակի եպիսկոպոսությունից]*, տեր Դավիթը՝ վեց տարի. սա ձեռնադրվեց հայոց Անանիա կաթողիկոսի կողմից։ Տեր Պետրոսը՝ տասնվեց տարի, տեր Մովսեսը՝ վեց տարի Փառիսոսի վանքի առաջնորդությունից։ Ապա աստծու մարդ տեր Մարկոսը, սրանից հետո՝ Հովսեփը, ապա մյուս տեր Մարկոսը, սրանից հետո տեր Ստեփանոսը, իսկ հետո տեր Հովհաննեսը՝ հիսուն տարի, ապա տեր Ստեփանոսը՝ տարի ու կես, որ վախճանվեց երիտասարդ հասակում։ Հայոց հինգ հարյուր ութսունութ թվականին հայոց մեծ կաթողիկոս տեր Գրիգորիսի օրերում Աղվանքը քսանհինգ տարի հոգևոր առաջնորդ չուներ։

Ապա կաթողիկոսների տոհմից Գագիկ անունով մի մանուկ կար, որ Գևորգի որդին էր ու Կարապետի թոռը. սրան դաստիարակեցին և ուսուցանեցին. և երբ մանուկը չափահաս եղավ, Թոքակերի որդի Գրիգոր վարդապետը, Ալավկա որդի Դավիթը և Աղվանքի այլ մարդիկ մաղթանքի թուղթ գրեցին հայոց մեծ հայրապետ Գրիգորիսին, որ այն ժամանակներում արևմուտքի կողմերում էր։ Եվ մի մարդ թղթով ուղարկեցին, որ սրան եպիսկոպոս ձեռնադրի, ինքն էլ իր եպիսկոպոսներից մեկին ուղարկի և հրաման տա աղվանից աթոռի համար մանուկ Գագիկին ձեռնադրելու, որպեսզի երկիրը առանց հոգևոր առաջնորդի՝ կորստի չմատնվի։

Հայրապետը ուղարկվածին ձեռնադրեց, նաև հրամայեց Կարինի եպիսկոպոսին գնալ Աղվանից աշխարհը և կաթողիկոս ձեռնադրել Աղվանքի համար։

* Փակագծվածը ըստ Կաղանկատվացու։



Ապա Կարինի Սահակ եպիսկոպոսը գալիս է ու մյուս եպիսկոպոսի հետ ձեռնադրում են և տասներկու եպիսկոպոս ըստ կանոնների. հետո Գագիկին կաթողիկոս են ձեռնադրում ու հայոց կաթողիկոսի անունով կոչում են Գրիգորիս։

Այն օրերում հանկարծակի մեգ ու մառախուղ եղավ և դառեց առհասարակ լեռ ու դաշտ. մեծ երկրաշարժ եղավ ու կործանվեց Գանձակ մայրաքաղաքը։ Աստծու շնորհով ազատվեց նորընծա կաթողիկոսը, բայց երկրաշարժից անթիվ տղամարդկանց, կանանց ու մանուկների բազմության հետ մեռավ Գրիգոր վարդապետը, սրանք սպանվեցին շենքերի փլատակների տակ մնալով։

Եկավ վրաց թագավոր Դեմետրեն, ավարեց ամեն ունեցվածք, իր երկիրը տարավ նաև քաղաքի դռները։

Փլվեց նաև Ալհարակ լեռը, փակեց իր միջով անցնող ձորակը, և գոյացավ լիճ, որ մինչև այսօր էլ գոյություն ունի։

Ութ տարի հետո մի լիալույս գիսաստղ երևաց. սա եղավ նշան սովի, սրի, գերության, որ բռնեց մեր երկիրը։

Երբ Գագիկ կաթողիկոսը դարձավ աստվածային իմաստությամբ լի կատարյալ մարդ, վախճանվեց ու գորձյալ խավար տիրեց այն կողմերին։

Ապա [աթոռակալեց] տեր Բեժգենը, որ կարգաթող եղավ ու կին առավ. սրանից հետո տեր Ստեփանոսը [աթոռակալեց] քառասուն տարի և հետո տեր Հովհաննեսը՝ քառասուն տարի, որ Միափոր[261] գավառում խամշի կոչված վանքում շինեց մի հրաշալի եկեղեցի։ Սա հասավ մեր օրերը։ Ապա տեր Ներսեսը՝ նախարարի եղբայրը, որ բնավորությամբ հեզ ու բարի մի մարդ էր, ձեռնադրվեց հայոց վեց հարյուր ութսունչորս (1235) թվականին։

## ԺԱ.

## Թաթարական զորքի (Դերբենդից) ելնելու և վրաց թագավորին փախստական դարձնելու մասին

Հայոց վեց հարյուր վաթսունինը թվականին (1220 թ.), երբ վրացիները հպարտացած էին իրենց հաղթությունով, այսինքն՝ որ հաղթեցին մահմեդականներին, Հայաստանի

բազմաթիվ գավառներ խլեցին նրանցից իրենցը դարձնելով, հանկարծակի անսպասելի ժամի ծանր զորքի բազմաթիվ գնդերով* ու ամբողջ կազմությամբ ուժգին հարձակումով եկան Դերբենդի դռնից ու եկան Աղվանք՝ անցնելու Հայաստան ու Վրաստան. և ինչ որ ճանապարհին գտնում էին, ամեն ինչ սրի ճարակ էին դարձնում՝ մարդ, անասուն, մինչև իսկ շներն անգամ**։ Բացի ձիուց թանկագին հագուստներով ու այլ հարստությամբ չէին հետաքրքրվում։ Շտապով գնացին մինչև Թիֆլիս քաղաքը և կրկին վերադարձան իջան Աղվանից աշխարհը՝ Շամքոր քաղաքի սահմանները։ Նրանց մասին սուտ լուր էր հասնում, թե մոգեր են, հավատով քրիստոնյաներ ու հրաշագործներ և եկել են քրիստոնյաների նկատմամբ մահմեդականների գործած չարիքների վրեժը լուծելու։ Եվ ասում էին, թե վրանից եկեղեցի ու հրաշագործ խաչ ունեն, թե երբ բերում են մի չափ գարի, լցնում են խաչի առաջ, և ամբողջ զորքը դրանից վերցնում տանում տալիս է ձիերին, չի պակասում, այլ երբ ամենքը վերջացնում են տանելը, նույն չափով գարին այնտեղ մնում է։ Նույն ձևով էլ մարդկանց ուտելիքները։ Եվ այսպիսի սուտ համբավը տարածվեց երկրում։ Այս էր պատճառը, որ մեր երկրի բնակիչները չամրացան. մինչև իսկ ոչ-կուսակրոն մի քահանա իր ժողովրդին առած խաչվառներով գնաց նրանց ընդառաջ։ Իսկ նրանք սրահարելով նրանց բոլորին անխտիր կոտորեցին։ Եվ այսպես շատերին անհոգ գտնելով՝ կոտորեցին ու ավերեցին բազմաթիվ տեղեր։ Իսկ իրենք իրենց քոչերը ամրացրին մի ճահճոտ ու աղմոտ վայրում, որ գտնվում է երկու քաղաքների Պարտավի ու Բելուկանի*** միջև Բեղամեջ կոչված մի շատ ամուր տեղում, իսկ իրենք հանդուգն հարձակումներով ավերում էին բազմաթիվ գավառներ։

Ապա զորահավաք են անում վրաց թագավոր Լաշան ու մեծ հազարապետ Իվանեն՝ պատերազմով նրանց դիմագրավելու համար։ Եվ իջնում են Խունան* կոչված մի դաշտավայր տեղ, որովհետև այնտեղ էր գտնվում թշնամու զորքը։ Ճակատամարտ տալով միմյանց դեմ՝ սկզբում փախուստի մատնեցին թշնամիներին։ Բայց քանի որ թշնամիները դարան էին մտել, հարձակվեցին թիկունքից և սկսեցին վրաց զորքը կոտորել։ Փախածները նույնպես վերադարձան ու այս կողմից, այն կողմից մեջտեղ առնելով՝ մեծ հարված հասցրին քրիստոնյաների զորքերին։ Փախան թագավորն ու բոլոր իշխանները։ Իսկ թշնամիները հավաքեցին զորքի ավարը, տարան իրենց բանակատեղերը։

Մյուս անգամ կրկին վրաց թագավորը նախորդ անգամից ավելի մեծ զորք հավաքելով՝ կամեցավ ճակատամարտ տալ թշնամիների դեմ։ Իսկ նրանք վերցնելով իրենց կանանց, որդիներին ու ամբողջ ունեցվածքը կամեցան Դերբենդի դռնից անցնել իրենց երկիրը։ Բայց մահմեդականների զորքը, որ Դերբենդում էր, նրանց անցամուտք չտվեց։ Նրանք կտրեցին Կովկաս լեռը անանցանելի տեղերով, վիհերը լցնելով փայտ ու քար և իրենց քոչերը, ձիերը, ռազմապաշարը [առնելով], անցան գնացին իրենց երկիրը։ Նրանց գլխավորի անունն էր Սաբադա Բահադուր։

## ԺԲ.

## Գանձակի սահմաններում ջարդված զորքերի մասին

Սրանից հետո, երբ որոշ ժամանակ անցավ, մի այլ զորք դուրս եկավ Հոնաստանից, որին ղփչաղ** են ասում. սրանք եկան Վրաստան Լաշա թագավորի ու Իվանե հազարապետի մոտ, որպեսզի իրենց բնակության տեղ տան, իսկ իրենք նրանց հավատարմությամբ կծառայեն։ Սակայն նրանք չհամաձայնվեցին սրանց բնակության տեղ տալու

---

* Բնագրում յոլով զունդս, ուղղում ենք ի յոլով գունդս:

** Բնագրում՝ մինչև ի յաւէտ անգամ, ուղղում ենք Մինչև դյաւէտ անգամ ըստ Ձ ձեռագրի։

*** Բելուկանը Կուրի և Արաքսի խառնարանի մոտ է գտնվել, որ մոնղոլ-թաթարները ավերեցին հենց այս արշավանքի ժամանակ։

* Խունանը գտնվել է Տփղիսից հարավ Հայաստանի, Վրաստանի ու Աղվանքի սահմանագլխին։

** Ղփչաղները թյուրքական ցեղերին պատկանող ժողովուրդ են եղել։

*Նրանք ուղղություն վերցրին ու գնացին Գանձակ քաղաքի բնակիչների մոտ, որոնք հոժարությամբ ընդունեցին, որովհետև վրաց զորքերի կողմից մեծ նեղություն էին քաշում. նրանք ավերում էին նրանց երկիրը, գերի էին տանում մարդկանց ու կողոպտում անասունները։ Նրանց բնակվելու տեղ տվին քաղաքի սահմաններում, այլև ուտելիքներով ու խմելիքներով օգնում էին, որպեսզի նրանց միջոցով կանգնեն վրաց թագավորության դեմ։ Իսկ հոնաց զորքը այնտեղ ձմեռեց ու տեղակայվեց։*

*Իվանեն զորահավաք արեց ու գոռոզամտությամբ նրանց վրա դիմեց։ Սաստիկ հոխորտում էր բնաջնջել նրանց և նրանց քաղաքը՝ հուսալով իր զորքի բազմության և ոչ թե աստծու վրա, որ հաղթություն է տալիս, ում կամենում է։*

*Երբ ընդհարվեցին միմյանց, խուժերը [հոները] հանգիստ վիճակում իրենց որջերից դուրս եկան ու հոգնած ու լքված վրաց զորքին սրի բերան տվին. շատերին բռնեցին, իսկ մնացածին փախցրին։ Այս օրերում քրիստոնյաների զորքերի մեջ մեծ հուսալքում առաջացավ. այնքան լքվեցին աստծուց, մինչև որ մի վախկոտ մարդ բազմաթիվ քաջ ու պատերազմում անուն հանած մարդկանց իր առջևը գցած բերում անց էր կացնում, ինչպես հովիվը հոտը, որովհետև տերը նրանց սրից վերցրեց իր օգնությունը և պատերազմում նրանց օգնական չեղավ։ Պատվական մարդկանց բերում փոխում էին չնչին հագուստների կամ ուտելիքների հետ։ Պարսիկները գնելով նրանց՝ անասելի տանջում էին։ Նրանցից ոսկու և արծաթի այնպիսի քանակ էին պահանջում, որ անհնարին լիներ վճարել։ Շատերը բանտում մեռան։ Այնտեղ ուրիշների հետ բռնվեցին նաև Հաղբակի որդի Գրիգորը՝ քաջ Վասակի եղբայրը և սրա եղբորորդի Պապաքը, քանի որ Վասակը երեք որդի ուներ՝ Պապաքը, Մկրտիչը, Հասանը, որին Պռոշ էին անվանում։ Սրանք քաջ ու անվանի մարդիկ էին, որոնց ահից դողում էր արաբական ամբողջ զորքը։ Պապաքին սպանեցին պատերազմում, Գրիգորին բռնելով բազմաթիվ խոշտանգումներով տանջեցին, որպեսզի Քրիստոսին ուրանա, իսկ նա հանձն չառավ, այլ ավելի ևս անարգում էր նրանց մոլար օրենսդիր Մահմեդին ու նրանց գարշելի կրոնը։ Նրանք կապված նրան մերկ քաշ տվին գետնի վրա ու փշով*



*ըլկտեցին նրա ողջ մարմինը. այնքան տանջեցին նրան, մինչև որ գանահարելիս հոգին ավանդեց և Քրիստոսից ընդունեց մարտիրոսության պսակը։ Սրանք Խաչեն գավառից էին, երևելի տոհմից, հավատով քրիստոնյաներ, ուղղափառ ու ազգությամբ հայ։*

*Եվ գերվածներից ուրիշ շատերին անօրեն պարսիկները այլևայլ տանջանքներով չարչարում էին՝ քաղցով, ծարավով ու մերկությամբ. իսկ Գանձակ քաղաքի քրիստոնյաները գերյալների համար շատ բարեգործություններ արին, որոնց գնելով ու ազատելով, մի մասին կերակրելով. մի մասին հագուստներ հագցնելով, մեռածներին թաղելով և այսպես ամեն առնչությամբ բարեգործություններ ցույց տալով։*

*Բայց որոշ օրեր անցնելուց հետո ընտրյալ զորք հավաքից մեծ հազարապետ Իվանեն, որպեսզի գնա վրեժ լուծի նրանցից, որոնք նրա զորքը ջարդեցին։ Եվ անսպասելի մի ժամի հարձակվելով նրանց վրա՝ զարկեց սպանեց խուժադուժներին սրահարելով, իսկ նրանց ավարը ու մանուկներին գերեվարեց բերեց իր երկիրը։*

ԺԳ.

## Մխիթար վարդապետի մասին, թե որտեղից և ինչպիսի մարդ էր

*Այն հռչակավոր ու գիտությամբ մեծիմաստը Գանձակ քաղաքից էր, զավակ քրիստոնյա ծնողների, որոնք նրան տվին Սուրբ գրքի ուսման։ Եվ երբ չափահաս դարձավ, ձեռնադրեցին կուսակրոն քահանա։ Շատ տարիներ քահանայություն անելով՝ նա ցանկացավ հմտանալ սուրբ գրքի մտքերին ու խորին իմաստություններին, որ կան նրանց մեջ։ Նրան հանդիպեց Տավուշեցի անվանված Հովհաննես վարդապետը, որ այն ժամանակ հռչակված էր գիտությամբ [Հ. Տավուշեցին]։ Սկզբում քիչ ժամանակ աշակերտական կրթվելով նրանից և, կնոջից զրկվելով՝ հետևեց կրոնավորության ու վերահասու լինելով աստվածային գրքերին՝ վարդապետական աստիճան ընդունեց։ Մխիթարը բազմաթիվ տարիներ*

նրա մոտ մնալով գրքերի ուսումնասիրությամբ էր պարապում [Հավանորեն Աստվածաշնչի]։

Հովհաննես վարդապետը շրջագայող էր, տեղից տեղ շրջելով քարոզում էր աստծու խոսքը ու բարի վարք էր սովորեցնում մարդկանց։ Սա քրիստոնյաների կարգերի ու կրոնի բազմաթիվ գործերը կարգավորեց, որովհետև դեռ այն ժամանակ տեղ-տեղ սուրբ քառասունքի աղուհացքի շաբաթվա ու կիրակիի պասերը լուծում էին։ Սա օրենք դրեց պասով անցկացնել, նույնպես շաբաթվա մյուս օրերը, բացի միայն նրանից, երբ շաբաթ օրը տոնում են աստծու նահատակների, իսկ կիրակի՝ Քրիստոսի հարության խորհրդի [տոնը] ու մատուցում են պատարագ։ Եվ այսպես ամեն տեղ հաստատվեց հիսունօրյա պաս պահելու օրենք, որը [պասը] առաջ մի մասը պահում էր, մյուս մասը չէր պահում։

Մխիթարը մնալով սրա ու ուրիշների մոտ՝ վարդապետության կոչում ստացավ։ Եվ դրանով չբավականացավ, այլ մեկնեց արևմտյան կողմի երկիրը, որ կոչվում է Սև լեռ, վարդապետների մոտ, որոնք այնտեղ ուսուցիչներ էին։ Նա չհայտնեց, որ ինքը վարդապետական աստիճան ունի, այլ շատ բան օգտվելով նրանցից՝ եկավ Կարին քաղաքը։ Այնտեղ պատահեց հավատով քրիստոնյա Քուրդ անվանված իշխանին, որ այդ ժամանակ այնտեղ էր լինում՝ փախած վրաց թագավորից։ Նա ծանոթ եղավ ու սիրվեց նրա կողմից իբրև հայր։ Սրանից հետո նա վերադարձավ իր երկիրը։

Նրա իմաստության լուրը տարածվեց ամբողջ երկրում։ Շատերը աշակերտում էին նրան ուսուցչական ուսման մեջ։ Եվ ապա Աղվանքի Ստեփանոս կաթողիկոսի բանսարկությամբ նեղվելով արաբներից՝ եկավ Խաչեն երկիրը Հաթերքի Վախթանգ իշխանի ու նրա եղբայրների մոտ, որոնք շատ պատիվներով մեծարեցին նրան, և այնտեղ նա մնաց որոշ տարիներ։ Ապա Քուրդ իշխանը վերադարձավ եկավ իր հայրենիքը՝ Կայան և Մահկանաբերդ գավառը։ Բազմաթիվ մեծարանքներով պատվեց նրան վրաց Թամար կոչված թագուհին՝ վերադարձնելով նրան նրա հայրենի վայրերը և ուրիշ շատերը։ Սա [Քուրդը] Սադունի ու Դավթի հայրն է, Սադունի հոր՝ Շերբարոքի սպայը։

Իսկ երբ Մխիթար վարդապետը լսեց, թե իշխանը վերադարձավ իր հայրենիքը, եկավ նրա մոտ հին սիրո և մտերմության համար, որ ունեին միմյանց հանդեպ։ Եվ նա բնակվեց Գետիկ կոչված վանքում՝ Կայան գավառում Աղստև անվանվող մեծ գետի աջ կողմի վրա։ Վանքի առաջնորդը նրա աշակերտ Սարկավագ կոչված վարդապետն էր, որ մեծ ուրախությամբ նրան ընդունեց և ինքն էր սպասավորում նրան։ Այնտեղ բավական ժամանակ մնաց։

Ապա սաստիկ երկրաշարժ եղավ, որ բազմաթիվ վայրեր կործանեց ու տապալեց բարձրաբերձ շենքերը, որոնց հետ նույնպես ուժեղ խախտվեց նաև Գետիկի եկեղեցին, որ վերստին նորոգելու հնար չկար։ Ապա վանքի բնակիչները երկմտելով կամենում էին ցրվել այս ու այն կողմ, ոչ միայն եկեղեցու խախտվելու պատճառով, այլև մերձակայքից նեղված էին, որովհետև իշխաններից Սարգիս անունով մեկը իր գյուղը տեղահան արեց ու բերեց վանքի մոտ մի այլ գյուղ շինեց։ Այնուհետև երկար գժտության մեջ էին միմյանց հետ, որովհետև միշտ պարսավում էին իրար։

Իսկ սուրբ վարդապետը արգելեց նրանց այդ մտադրությունը, [ասելով]՝ չպետք է միմյանց թողնել և ցրվել, այլ միասին ապրել ու խնդրել իրենց համար բնակության տեղ։ Ապա միաբան գնացին մեծ իշխան Իվանեի՝ վրաց զորավար Զաքարեի եղբոր մոտ, որոնք այդ ժամանակ Կայան բերդին ու գավառին իշխող բարեպաշտ Քուրդ իշխանի քեռորդիներն էին, ցույց տվին նրան իրենց խնդիրքը, որպեսզի տեղ տա, ուր փոխադրեն իրենց վանքը։ Նա հրամայեց նրանց, որ որոնեն թե որտեղ է հարմար։ Նրանք շրջելով գտան մի բարեվայելուչ ու զգաստ տեղ երկու լեռների ստորոտների մոտ* [որ կա գետ], որ գալիս է նրա [լեռան] գլխից։ Տեղը անվանում են Տանձուտի ձոր։ Այնտեղ կար մի գյուղ ու մի փոքրիկ ձորակ էր անցնում նրա միջով և մի [գետ] ավելի հարավային կողմից. տեղը փայտաշատ էր ու ջրավետ։ Այնտեղը պատշաճ համարեցին տեղափոխվելու համար։

* Եւ նորա շրջեալ գտին տեղի մի բարեվայելուչ և զգաստ առ ստորոտս երկուց լերանցն, որ կայ ի գլխոյ նորա, զոր անուանին զտեղին Տանձուտ ձոր։ [illegible] [illegible] [illegible] ի գլխոյ [illegible] է։

ԾԴ.

## Նոր Գետիկ վանքի կառուցման մասին

Այնուհետև սքանչելի վարդապետն իր միաբանների հետ միասին մեծ իշխան Իվանեի հրամանով ձեռնարկեց վանքի ու եկեղեցու շինությանը վերևում հիշատակված Տանձուտ ձորում։ Շինեցին մի գեղեցկաշեն փայտակերտ եկեղեցի և օծելով կնքեցին սուրբ Լուսավորիչ Գրիգորի անունով։

Եկեղեցու առնախմբության ժամանակ ներկա էր նաև սուրբ վարդապետ Խաչատուր Տարոնացին՝[267] Հաղարծին կոչված սուրբ միաբանության առաջնորդը, սուրբ ու առաքինի, գիտությամբ, մանավանդ երաժշտական արվեստով հռչակված մի մարդ։ Սա պայծառացրեց իր առաջնորդության ենթակա սուրբ միաբանությունը, որ իր գալուց առաջ ամայի էր ու խամրած։ Սրան մեծապես հարգում էր վրաց թագավոր Թամարի հայր Գիորգին։ Իր առատաձեռնությամբ եկեղեցուն տվեց երկու գյուղ՝ Աբասաձորը և Տանձուտը ու Միջնաշենում մի այգի։ Եվ բոլոր սրբերով նզովք գրեց, որպեսզի ոչ ոք չհանդգնի դրանք վանքից վերցնել։

Սա [Տարոնացին] խաղերը՝ իմաստունների ստեղծագործությունները, որ մինչև այն ժամանակ դեռևս տարածված չէին աշխարհում, բերեց արևելքի կողմերը. անմարմին եղանակները մարմնավորեց [ձայնագրեց]։ Սա եկավ գրեց ու սովորեցրեց շատերին. և ծանր աշխատանքներից լավ հանգստացավ։ Ինքը այնտեղ վախճանվեց ու թաղված է եկեղեցու արևմտյան կողմում։

Նոր Գետիկում վանքի վերևը կառուցեցին մի շատ փոքրիկ եկեղեցի հանուն սուրբ Կարապետ Հովհաննեսի՝ կանան-

րաս ասել վիճակի պետք է թարգմանել, որ գտնվում է նրա գլխից (անդրադարձություն)։ Ինչպես ասացինք, խոսքը վերաբերում է հոսող ջրի, ասածը որ կայ առանց կասկածելու պետք է ուղղել որ գայ. այսինքն՝ ջուրը որ գալիս է նրա գլխից (լեռներից մեկի)։ Պակասող տողերում խոսվում է երկու լեռներից մեկի ու նրա գագաթից հոսող ջրի մասին։ Այս ասացվում է շարունակության մէջ. Եւ էր ի նմա գիւղ, և ծորակ մի փոքրագոյն անցանէր ընդ մէջ նորա, և միւս ևս յորդագոյն յաջմէ կողմանէ։ Ընդգծված մասը թարգմանվում է. մի այլ ջուր էլ ավելի նորդ աջ կողմից։ Այս նշանակում է, որ նախապես խոսել է ձախ կողմից հոսող մի ջրի մասին, որին ավելացնում է և աջից հոսող երկրորդը։



ների ծնվածների մեջ մեծի՝ Քրիստոսին մկրտողի։ Սակայն սկըզբնական կոփածո վեմերով, գեղեցկաշեն արվեստով երկնանման գմբեթաձև եկեղեցու հիմքը գցել, որ տեսնողներին հիացք էր պատճառում։ Սկսվեց հայոց վեց հարյուր քառասուն թվականին (1191 թ.)՝ Սալահադինի Երուսաղեմը գրավելուց չորս տարի հետո, ավարտվեց հինգ տարում հունաց խեղաթյուր զատկին։

Այս զատկի համար շատ ազգեր բազմաթիվ հակառակություններ ու վեճեր ունեին հայերի հետ, առավել ևս վրացիները, որովհետև հանդգնելով թյուրը ուղիղ էին համարում, որը [ուղիղը] եղծեց ու փչացրեց անիծյալ Իրոնը, որ անօրեն Հուստինիանոսի պալատում էր, զատիկների ու այլ տոների լրման համար Ալեքսանդրիայում տեղի ունեցած ժողովին իրեն չկանչելու պատճառով։ Անդրեասի երկհարյուրյակը լրանալուց հետո ինը տարի խանգարված մնացին բոլոր տոները, որովհետև լրանալուց հետո չկարողացան նրա տոմարական արվեստը ուղիղ կարգավորել։ Սակայն Էաս անունով մի իմաստասեր ձայն բարձրացրեց, իր մոտ կանչեց բոլոր ազգերի իմաստուններին՝ հրեա Փենեհեսին, ասորիներից Գիգանին, գամիրներից Աթգենին, հույներից Եղոգին և ուրիշ շատերին։ Եվ սկսեցին ներքևից վերև հաշվել տարիները ու հաստատուն կերպով գտնելով՝ կարգեցին ամբողջ հինգհարյուրյակը իբրև հավիտենական անսխալական օրինակ, որ տարան Հուստինիանոս կայսեր մոտ։ Նա հրամայեց Իրոնին, իսկ նա նախանձով լցվեց մեծ ունկերի տոմարական արվեստի ու իրեն չկանչելու համար։ Կամեցավ այն որևէ ձևով եղծել, ապրիլի տասնհինգը փոխեց տասնվեցի ու վերջ՝ հինգի, պատրվակ բանելով, թե մյուս բոլորը ճիշտ են բացի դրանից։ Այն տասնվեցը չի սխալեցնի*, իսկ այն հինգը իննսունհինգ տարում միշտ կսխալեցնի նրանց՝ հրեաների հետ գալով զատիկը լրման ժամանակ, որովհետև հինգը նրանց զատիկը շաբաթ կգցի, իսկ վեցը մերը կգցի՝ կիրակի, ինչպես և այստեղ պատահեց։

Եվ հայերի ու վրացիների այսպիսի վեճի համար Թամար թագուհին ու Զաքարիա սպարապետը վրաց իշխաններից մե-

* Բնագիրն է սխալ Է. պետք է լինի սխալէ:

կին, նմանապես և Հայերից [մեկ ուրիշի] զատկից առաջ ուղարկում են Երուսաղեմ՝ տեսնելու ճիշտը։ Եվ սրանց համար զատավճիռ է կանթեղի վառումը, որ Քրիստոսի սուրբ գերեզմանի վրա է։ Սրա մասին ասում են, որ Հայոց լուսավորիչ սուրբ Գրիգորի խնդրանքով առանց մարդու ձեռքերի ու տեսանելի կրակի՝ աստծու հրամանով վառվում է ամեն զատկին, որ մինչև այսօր լինում է։

Բայց քաղաքի իշխանությունը արաբների ձեռքին էր. հարցրին քրիստոնյաներին, թե՝ «Ո՞րն է ձեր զատիկը»։ Հույներից ու այլ ազգերից [այնտեղ եղածները] պատասխանեցին, թե «Այս կիրակի»։ Իսկ ովքեր Հայերից էին, ասացին. «Ոչ այս կիրակի, այլ մյուս կիրակի»։ Իսկ քաղաքի արաբ վերակացուն մի խելացի մարդ էր, հրամայեց տաճարում եղած բոլոր լույսերը մարել ու դռները փակելով՝ կնքեց իր մատանիով ու ոչ ոքի թույլ չտվեց ներս մտնել, որպեսզի տեսնի թե որ ազգն է ճշմարիտ։

Եվ երբ այն ցերեկը անցավ ու երեկո եղավ, սպասում էին կանթեղի վառվելուն. բայց երբ չվառվեց, իշխանը հրամայեց անարգանքով ու ծանր գանահարությամբ բոլորին հանել՝ իբրև ադետների ու ստախոսների, բացի Հայերից։ Եվ երբ շաբաթն անցավ, ու եկավ մյուս կիրակին, որը Հայերը զատիկ էին համարում, երբ պաշտամունք ու աղոթք էին անում, տասներորդ ժամին ամենքը ազդմունք ունեցան, և անմիջապես կանթեղը առանց ձեռքերի վառվեց։ Հայերը մեծապես ուրախացան։ Վերցրին ծեծեցին այլ ազգերին, և ամենքը գովում էին Հայերի իմաստությունն ու հավատը, առավելապես արաբները, ու անարգում, ծաղրում էին Հույներին այն բոլոր քաղաքներում, որոնք արաբների իշխանության ներքո էին գտնվում։ Այս տեսան նաև վրաց թագավորի ու զորավարի կողմից ուղարկված մարդիկ, եկան պատմեցին տեսածները։ Մեծ զորավար Զաքարեն ուրախացավ, և այն բոլոր Հայերը, որ զորքի մեջ էին, ավելի ևս ամրացան Հայոց ուղիղ հավատի մեջ։

Այս տարում ավարտվեց Գետիկի հոյակապ ու ծիծաղատեսք եկեղեցին, որ կառուցեց Մխիթար վարդապետը միաբանների հետ՝ Հաթերքի տեր՝ Խաչենցի Վախթանգի ու իր եղբայրներ Գրիգորի, Գրիգորիսի, Խոյդանի, Վասակի,



այլև բարեպաշտ իշխանների՝ Քրդի որդիներ Դավթի ու Սադունի, սրանց քույր Արզուխաթունի՝ Հաթերքցի Վախթանգի կնոջ օգնությամբ։

Ու շատ բաներում օգտակար եղավ. իր դուստրերի հետ պատրաստեց նաև գեղեցիկ վարագույր, սուրբ խորանի ծածկույթ, որ հիացնում էր տեսնողներին. պատրաստված էր այծերի շատ փափուկ աղվամազից, ներկված էր պես-պես ու գույնզգույն, գործված էր բանդակաձև ու նկարված էր պատկերներով՝ Փրկչի մարդեղության ու այլ սրբերի ճշգրտագույն [նկարների] ընդօրինակությամբ, որ հիացնում էր տեսնողներին։ Ովքեր տեսնում էին, աստծուն օրհնություն էին տալիս*, որ կանանց ոստայնանկության իմաստություն ու նկարակերտության հանճար տվեց, ինչպես որ ասված է Հոբի գրքում։ Ոչ մի բան պակաս չէր խորանի զարդարանքից, որ արին Բեսելիելն ու Եղիաբը**. հանդգնություն չի այս ասելս, որովհետև նույն հոգին էր, որ թե նրանց, թե սրանց ոգեշնչում էր։ Նա ոչ միայն այս եկեղեցու համար ծածկույթ պատրաստեց, այլև ուրիշ եկեղեցիների՝ Հաղպատի, Մակարավանքի ու Դադի վանքի, որովհետև այդ բարեպաշտ կինը չափազանց սիրում էր եկեղեցիները։

Մեծ թափորներով եկեղեցու բացման տոնահանդես կատարեցին։ Այնտեղ էր նաև Հաղպատի Հովհաննես եպիսկոպոսը՝ մի առաքինի ու սուրբ մարդ, և քահանաների ու հոգևոր սպասավորների այլ բազմություն։ Եկեղեցին օծվեց ու մկրտվեց սուրբ Աստվածածնի անունով։

Եկեղեցու համար կառուցվեց նաև գեղազարդ ու կոփածո վեմերով գավիթ։ Շատ օգնեցին մեծ զորավար Զաքարեն ու

---

* Եւ որք տեսանէին, օրհնութիւն տային աստուծոյ, որ ետ կանանց իմաստութիւն ոստայնանկութեան և հանճար նկարակերտութեան, որպէս ... Յոբն ասացաւ, որ ոչինչ ընդհատ էր ի կազմածոյ խորանին զոր արա... Բեսելիէլ և Եղիաբ։ Բնագրի այս հատվածի առաջին բաժնից հետո ... է վերջակետ դնել, որովհետև Հոբի ասածը վերաբերում է մինչև ...ցանկյին։ Հոբի գրքում (ԼԸ, 36) ասված է. «Ո՞վ ետ կանանց իմաստութեան ոստայնանկութեան կամ հանճար նկարակերտութեան»։ Առաջին բաժնից հետո ՈՐ-ը այստեղ մտել է բնագիրը լավ չհասկացվելու հետևանքով։ ... Գանձակեցին Հոբի ասածը վերջացնում է, այնինչ կարծվել է, թե ... ասածը հարցում է, մինչդեռ շարունակությունը նրից գրեց է։

** (Ել 29, 1)։

*իր եղբայր Եղիային, քանի որ գավառը նրանց իշխանության տակ էր ու չափազանց սիրում էին վարդապետին [Մխիթարին], որովհետև Զաքարին նրա խոստովանության հոգևոր որդին էր։ Եկեղեցուն նվիրեցին առավել հողատարածություն։ Բացի դրանից, մի տուն Արտամետում, Զորանքը Երզ-նկի գավառում և Աշտիշատ՝ վանքի վերևում։*

*Իրենք մի շատ փոքր, բայց անառիկ խոր ձորակի մոտ գյուղ շինեցին ու դրանը ձորակի անունով կոչեցին Տզրուկաձոր, որովհետև նրա մեջ կային ճահճասեր ու սղմասեր բազմաթիվ տզրուկներ։ Մի այլ փոքր գյուղ էլ [շինեցին] վանքի ներքևում, որին Ոսկեյանց անվանեցին։ Կառուցեցին նաև այլ մատուռներ սուրբ առաքյալների ու սուրբ Հռիփսիմեի անունով։*

*Եվ որովհետև ինքը [Մխիթարը] սիրում էր անապատ ու ամայություն, իր համար տուն պատրաստեց վանքից հեռու։ Այնտեղ սուրբ Հոգու անունով շինեց նաև մի փայտակերտ փոքրիկ եկեղեցի։ Եվ ծերության ժամանակ վանքի վերևում աջ կողմից շինեց մի եկեղեցի իբրև շիրիմ իր գերեզմանին՝ սրբատաշ քարով ու կրով ագուցված՝ Քրիստոսի համբարձման անունով։*

## ԺԵ.

## Այն մասին, թե նրա աշակերտների մեջ ովքեր էին նշանավորները

*Շատ էին նրանք, որ նրա ուսուցչական խոսքին աշակերտեցին, որովհետև նրա իմաստության համբավը հռչակվեց ամեն տեղ։ Նրա մոտ գալիս էին ամեն կողմերից, որովհետև իր անձի համբերատարական բոլորին մխիթարում էր. նա մխիթարող էր, ինչպես Բառնաբասը*, և նշանավոր էր ժողովրդի մեջ, ինչպես Անտոնը**։ Նրա խոսքերը շահեկան էին ու շնորհալի էր. ամեն ոք փափագում էր տեսնել նրան ու լսել նրանից։ Այսպիսի համբավի համար վարդապետական ուսումն ունեցող շատերը թողնում էին իրենց իշխանությունը ու գալիս՝ աշակերտների շարքում էին նստում, սովորում էին նրանից ու վերստին թույլտվություն էին ստանում։ Նրա աշակերտներից շատերը վարդապետական աստիճան ստացան։ Բայց նրանցից երկուսը մյուսներից ավելի իմաստուն էին, որոնք կարող էին և ուրիշներին օգտակար լինել. առաջինի անունը Թորոս էր՝ Հայոց Մելիտինեի[268] սահմաններից. նրա հայրը հայ էր, իսկ մայրը՝ ասորի։ Մի հեզ, խոնարհ, ողորմած ու չափազանց աղքատասեր մարդ էր, օտարականների հյուրընկալող, աղոթքի մեջ աստվածահաճո. նա իր կյանքի ժամանակը բարությամբ անցկացրեց, խոր ծերության մեջ ննջելով միացավ իր հայրերին և թաղված է Հռչակավոր Հաղպատ վանքում, վանքի վերևում՝ եպիսկոպոսների ու վարդապետների գերեզմանատանը։ Նրա հիշատակը թող օրհնությամբ լինի, իսկ նրա աղոթքները դառնան հավատացյալների համար պատնեշ։*

*Երկրորդի անունը Վանական էր. սա սուրբ ու պարկեշտ մարդ էր ու ամեն բարի գործի մեջ հառաջադեմ, աղքատասեր ու զգաստ էր ամեն ինչում. իսկ վարդապետական խոսքով այդ ժամանակի զորություն ունեցողներից բոլորին գերազանցում էր. մտքով բեղմնավոր էր ու խոսքով ճարտար։ Այդ բանի պատճառով շատերը գալիս էին նրա մոտ ոչ միայն ուսուցչական խոսքի ուսման համար, այլ նրա ամբողջ կյանքն ու վարմունքը անգիր օրենքներ էին տեսնողներին։ Եվ սա ես ասում եմ ոչ թե լսելով միայն, այլև ականատես լինելով, որովհետև երկար ժամանակ մենք կրթության համար մնացինք նրա մոտ Տավուշ բերդի սահմաններում՝ անապատում, ուր նա իր բնակության համար ստացավ. և որպես աղբյուր ծարավներին խմեցնում էր ուսուցչական խոսքը։*

## ԺԶ.

## Նոր անվանված մեծ վարդապետ Մխիթարի մահվան մասին

*Ինչպես վերևում ասացինք, սա կյանքի երանելի ընթացքը կատարելով ու հավատը պահելով հասավ խոր ծերության [illegible] տարեկան, թե տկարացավ մարմնական զորությամբ և*

* Պողոսի աշակերտներից էր, որ վաճառեց իր անդաստանը և հանձնեց առաքյալներին (Գործք Դ 36, 37)։

** Հռչակավոր Անտոն Թեբացի անապատականն է, որ հայտնի էր իր բարի և աստվածահաճո վարքով (251—356 թթ.)։

պատրաստ է դրանից հետո գնալու ավելանալու իր հայրերին, կանչեց Նոր Գետիկ վանքի միաբանության անդամներին, որոնք իր հետ դիմացել էին վանքի ու եկեղեցու բոլոր դժվարություններին, օրհնեց նրանց ու իր աշակերտներին տիրոջ անունով։ Նրանցից Մարտիրոս անունով մեկին ընտրելով, որ աշակերտել էր իրեն ու մտերիմ էր իր հետ, նշանակեց նրանց առաջնորդ։ Սա հասակով պատանի էր, բայց իմաստությամբ կատարյալ էր, պաշտամունքի երգերում քաղցրաձայն մի մարդ էր, առատամիտ ընթերցող ու գրչության մեջ արագագիր։ Սրան հրամայեց առաջնորդել նրանց։ Եվ կտակ գրեց ուղղված մեծ հազարապետ Իվանեին՝ Զաքարեի եղբորը ու նրան հանձնեց վանքն ու առաջնորդին, իսկ ինքը այս կյանքից փոխադրվեց Քրիստոսի մոտ ալեզարդ ու տարիներով բեռնավորված։ Վանքի վերակացու Մարտիրոսը միաբանների հետ գեղեցիկ կերպով կազմակերպեց նրա թաղման հոգևոր ու մարմնական պատշաճ պատույքները. և տարան նրան վանքի վերևում գտնվող փոքրագույն եկեղեցու դրան առաջ արևմտյան կողմում հանգստացրին։ Մինչև այսօր էլ նրա գերեզմանը օգնում է այն հիվանդներին, որոնք հավատով ապավինում են նրա աղոթքներին, և այդտեղի հողը միշտ տանում են հիվանդ մարդկանց ու անասունների բուժման համար, որովհետև աստված իր փառավորիչներին փառավորում է թե ողջ, թե մեռած։

Այնպես պատահեց մի անգամ, որ նրա աշակերտները՝ վանքի պետքերի համար գինի բարձած գրաստներով գալիս էին։ Բասիլա անունով մի ոմն վրացի եկավ ու կամենում էր բռնի կերպով նրանցից գինին առնել, որովհետև Իվանեի գործակալն էր անտառի վրա ու պահում էր նրա իշխանատեղը։ Սպասավորները ասում են նրան. «Մեզ նեղություն մի տա, որովհետև մենք Գոշի մարդիկն ենք»։ Մականունով այսպես էին կոչում նրան, որովհետև շատ քիչ էին նրա մազերը*։ Իսկ այդ թշվառականը հայհոյելով անարգեց նրան ու Գոշին։ Երբ հասավ այն տեղը, ուր նրա անունը պետք է անարգանքով հիշատակեր, անմիջապես համրացավ. կապվեց նրա լեզուն, ծովեցին նրա շրթունքները, և այդպես մնաց շատ օրեր, մինչև որ հառաչանքներով թողություն խնդրեց։ Ամեն ոք, ով տեսնում էր այդ մարդուն, գովում էր աստծու ծառային։

Նա թողեց իբրև հիշատակ ու շիրմարձան, իմաստախոհ գրքեր ուսումնասերների օգտի համար. Երեմիայի մարգարեության համառոտությունը՝ գեղեցիկ դասավորված կարգերով. մի քիչ կանոններ տիրոջ մարմնի ու արյան սպասավորման համար, թե ինչպես է պատշաճ և ինչ կարգով. և մի գիրք՝ Ողբեր մեր էության վերաբերյալ ի դեմս Ադամի իր որդիների նկատմամբ և ի դեմս Եվայի իր դուստրերի վերաբերմամբ և մի գիրք՝ Ուղղափառ հավատի հայտարարություն ընդդեմ բոլոր հերձվածողների՝ մեծ զորավար Զաքարեի ու նրա եղբոր խնդրանքով, ու այլ խրատական թղթեր[269]։ Նրա վախճանը տեղի ունեցավ վեց հարյուր վաթսուներկու թվականին (1213 թ.)։

* Բնագիրն ունի՝ Քանզի նեղգացոյն եկին ալիւ նորա: Եկին-ի փոխարեն ճիշտ է էին, որ ունի մի ձեռագիր։



ԺԱ.

## Նրանից հետո վանքի առաջնորդությունը ստանձնողների մասին

Վանքը փառավորվեց և հռչակավոր դարձավ սուրբ վարդապետի անունով և առաջնորդ Մարտիրոսի իմաստությամբ, որովհետև սա մի շինարար մարդ էր։ Անտաշ քարերով կառուցեց մի այլ ժամատուն՝ ագուցված կրով, հաստահեղույս սյուներով, փայտակերտ վերնահարկով. վերնահարկը միաժամանակ անց փլվեց։ Շինեց նաև գեղակառույց հարկով մի գրատուն՝ արհեստավոր ունենալով հյուսն Մխիթարին, որ բազմաթիվ եկեղեցիների ու վանքերի շատ գործերի մեջ աշխատեց։

Եվ շատ միաբաններ հավաքվեցին հռչակավոր տեղի համար, որ շատերին եղավ սնունդի ու ուսման տեղ։ Մենք էլ սնվեցինք և ուսյալ դարձանք նույն վանքում։

Ձեռնարկեցին հինգ խորանով, կոփածո ու տաշած քարերով, գմբեթավոր ու գեղակառույց մի այլ եկեղեցի ևս շինել։ Եվ երբ կես եղավ եկեղեցին, երկար ժամանակ խափանվեց,

որովհետև Խորասանի Ջալալադին կոչված սուլթանը եկավ, ջարդեց հայոց ու վրաց զորքերը և ավերեց բազմաթիվ գավառներ։ Այս ու այլ բազմաթիվ պատճառներով [եկեղեցին] մնաց անավարտ։ Հետո կապալեցի Գրիգոր անունով մի մարդ, որ առաջ եկեղեցու կառուցման նյութական ծախսերը հոգում էր, վերստին ձեռնարկեց, ու այն ավարտեց վեց հարյուր իննսուն թվականին (1241 թ.)։

Վախճանվեց նաև Իվանեն՝ Զաքարեի եղբայրը ու թաղվեց Պղնձահանքում իր շինած եկեղեցու դռանը. [Պղնձահանքը] վերցրեց հայերից ու վրացական վանք հաստատեց։ Մեռնելիս նա իր որդուն ու տունը հանձնեց իր սնած ու փառքի հասցրած Գրիգոր անունով մի ոմն իշխանի, որին Տղա էին կոչում։

Սա Իվանեի որդի Ավագից Գետիկ վանքը խնդրեց իր համար գերեզմանատեղի։ Սրան շատ սիրելով [Ավագը] տվեց։ Նրանից Աղստևին մոտիկ Վաշխե անունով մեկը մի գյուղ գնեց ու սրա հետ վանքին տվեց ուրիշ շատ հարստություններ, գրքեր, խաչեր, անասուններ։ Շինեց նաև հրաշագեղ եռախորան մի եկեղեցի, եկեղեցու գավիթին մոտիկ մի հրաշակերտ շինվածք ու եկեղեցին կոչեց սուրբ Գրիգորի անունով։ Նրա մեջ կային նաև շատ այլ շինվածքներ։ Բազմացան քահանաներն ու հոգևոր սպասավորները, ուսումնական մանուկները։ Մարտիրոսը առաջնորդությունը վարեց քսան տարի ու կամավոր կերպով թողեց։ Սրանից հետո առաջնորդությունը ստանձնեց մի ոմն Մխիթար. բայց սա, և նա՝ Հովասափը, քիչ ժամանակով ուրիշները, նաև Աբրահամ վարդապետը [առաջնորդեցին]։ Ապա տեր Հովհաննես Արմանեցին, որ նաև Հաղարծնի առաջնորդն էր։ Սա եպիսկոպոս ձեռնադրվեց յոթ հարյուր հինգ թվականին (1256 թ.)։ Սա Հաղարծինում սրբատաշ քարերով շինեց նշանավոր սեղանատունը, ապա գնաց Հաղպատ մեծ աթոռը։ Յոթ հարյուր երեք թվականին (1254 թ.) Խաչատուր վարդապետն ու իր եղբայր Բարսեղը վանքի հանդեպ շինեցին մի եռախորան, գմբեթավոր եկեղեցի սուրբ Գևորգի անունով։





## Սուլթան Ջալալադինի և վեց հարյուր յոթանասունչորս թվականին (1225 թ.) վրացական զորքը կոտորելու մասին

Նախապես հիշատակված հյուսիս-արևելյան ազգը, որ Թաթար էր կոչվում, նեղեց Խորասանի սուլթան Ջալալադինին ու ջարդեց նրա զորքը, կործանեց նրա երկիրը։ Նրան հանեցին փախստական գցեցին Աղվանից աշխարհը։ Նա եկավ Գանձակ քաղաքը ու գրավեց այն։ Պարսիկներից, արաբներից, թուրքերից անչափ զորք հավաքեց իր համար ու եկավ Հայաստան։

Իվանեն այս տեսնելով՝ հայտնում է վրաց թագավորին ու մեծ զորք է հավաքում սուլթանի դեմ կանգնելու համար։ Հպարտությամբ մեծապես ուռչում-փքվում էին. և ուխտ էին անում, եթե նրան հաղթեն, իրենց իշխանության ներքո գտնվող ամեն հայի կզարձնեն վրաց դավանանքին, իսկ դիմադրողներին սրով կվերացնեն։ Այս խորհուրդը աստծով չմտածեցին և ուխտը կնքեցին, և ոչ էլ նրա հոգով խորհեցին այս ու տիրոջը չհարցրին, որ հաղթության տվիչն է նրան, ում որ կամենում է։

Սուլթանը հետո եկավ Կոտայք[270] գավառը։ Գնաց նաև Իվանեն վրաց զորքերով ու կանգնեց նրանց հանդեպ վերևից։ Տեսնելով նրանց՝ երկյուղեց ու այդ տեղում բանակեց։ Իսկ սուլթանը առաջ վարելով իր զորքը՝ եկավ նրանց հանդեպ։ Երբ սա տեսան վրաց ավագներից Շալվե անունով մի իշխան ու նրա եղբայր Իվանեն, որ քաջ, անվախ ու պատերազմում հաղթող մարդիկ էին, ասացին մյուս զորքերին. «Դուք մի փոքր ժամանակ սպասեցեք, մենք գնանք ընդհարվենք նրանց. եթե նրանցից ոմանց ետ դարձնենք, հաղթությունը մերն է, եկեք նաև դուք, իսկ եթե նրանք մեզ հաղթեն, դուք փախեք ու ձեր անձը ազատեցեք»։

Եվ երբ նրանք ընդհարվեցին, սկսեցին սուլթանի զորքը կոտորել։ Իսկ վրաց զորքը դրա վրա ուշադրություն չդարձրեց, այլ փախավ այդ տեղից այնպես, որ ընկերը ընկերոջ փախուստը չիմացավ։ Եվ առանց որևէ մեկի հալածանքի՝ վախից ամենքը մի վայր մղվելով լցվեցին գյուղաքաղաքի

Գանրիի[209] վերևում մի ձոր։ Երբ սուլթանի զորքերը այս տեսան, հետամտելով շատերին կոտորեցին, ուրիշներին էլ գահավեժ արին։

Սուլթանը եկավ ձորի գլուխը ու տեսավ այդ ողբալի տեսարանը, որովհետև քարակարկառների նման կուտված էր այնտեղ մարդկանց ու ձիերի բազմությունը։ Գլուխը շարժեց ու ասաց. «Այս գործը մարդու բան չէ, այլ միայն աստծու, որ ամեն բանում կարող է»։ Ապա դարձավ կողոպտեց ընկածներին ու բազմաթիվ տեղեր ավերելով՝ գնաց Տփղիս քաղաքը։ Քաղաքում գտնված պարսիկները օգնեցին նրան, առավ քաղաքը ու շատերին կոտորեց։ Ավելի շատերին ստիպում էր թողնել քրիստոնեությունը և ընդունել մահմեդականների խաբեբայական ու թյուր կրոնը։ Այնուհետև շատերը մահվան երկյուղից վախենալով՝ ճշմարտությունը փոխանակում էին ստով, իսկ ուրիշներն էլ քաջությամբ մահ էին հանձն առնում, քան թե խղճի խայթով կյանքը. սրանք մարտիրոսի անուն ժառանգելով՝ թողին այս աշխարհը բարի անվամբ։

Ապա հրամայեց համաձայնվողներին, չհամաձայնվողներին առանց հարցաքննության անելու ամենքին բռնությամբ թլպատել։ Եվ այսպես բռնի կերպով երկու հոգի հրապարակում բռնում էին մարդկանց ձեռքից, իսկ մի ոմն սուրը բռնած կտրում էր անանդամի մաշկը։ Նաև խառնակվում էին կանանց հետ զազրալի պղծությամբ։ Ամեն տեղ, ուր խաչ կամ եկեղեցի էին գտնում, կործանում ու քանդում էին։ Այս անում էին ոչ միայն Տփղիսում, այլև Գանձակում, Նախիջևանում ու այլ վայրերում։

Օրղան անունով ավագներից մեկը, որի կինը սուլթանի մայրն էր, բազմաթիվ չարչարանքներով տանջում էր Գանձակ քաղաքի ոչ միայն քրիստոնյա բնակիչներին, այլև պարսիկներին ծանր հարկապահանջությամբ։ Նույն քաղաքում նա սպանվեց մուլհեդների* ձեռքով, որոնք նենգությամբ մարդ սպանելու մեջ վարժ են։ Երբ նա անցնում էր քաղաքի փողոցով, մարդիկ մոտեցան նրան, իբր թե որևէ մեկից զրկանք են կրել և մոտենում են նրան, որ արդարությունը վե-

* Մահմեդական հերետիկոսներ (արաբերեն)։



րականգնի։ Նրան թուղթ ցույց տվին, որ բռնել էին ձեռքերին, աղաղակում ու ասում էին. «Դատ, դատ»։ Եվ երբ նա կանգնեց ու կամենում էր հարցնել, թե ով է նեղություն տվել նրանց, նրանք այստեղից-այնտեղից հարձակվեցին նրա վրա ու թաքուն պահված սրով խոցոտելով սպանեցին։ Եվ այսպես չարը չարով վերացավ մեջտեղից։ Նրա սպանողներին հազիվ կարողացան նետերով սպանել, որովհետև շատերը վիրավորված փախան քաղաքի միջով։ Այսպես սովոր են անելու այն ցեղերը, որոնք բնավորված* են Թուն և Թանբահ** կոչված ամուր տեղերում, նաև Լիբանանի մայրիների մեջ։ Նրանք առնում են իրենց թափած արյան գինը իրենց իշխանից, որին աստծու փոխարեն պաշտում են, և [դրամը] տալիս են իրենց որդիներին ու կանանց, իրենք գնում են, ուր ուղարկում է նրանց իշխանը։ Երկար ժամանակ թափառում են զանազան կերպարանքներ առած, մինչև հարմար ժամանակ են գտնում սպանելու, ապա սպանում են, ում կամենում են՝ Այդ պատճառով նրանցից վախենում են բոլոր թագավորներն ու իշխանները և հարկ են տալիս նրանց։ Եվ իրենց իշխանի հրամանների մոլի կատարողներ են, ինչ որ ասի, մինչև իսկ իրենց կյանքն էլ չեն խնայում։ Եվ այսպես բազմաթիվ մեծամեծներ են սպանում նրանք, որոնք հարկ չեն տալիս իրենց, ինչպես և այս անօրենին [Օրղանին]։

## ԺԹ.

## Սուլթան Ջալալադինի կորստյան՝ աշխարհից նրա վերանալու մասին

Այս չարիքները գործելուց հետո նա գնաց Խլաթ քաղաքը, որ Բզնունյաց[271] երկրում է։ Սա Աշրաֆ սուլթանի իշխանության էր ենթարկվում։ [Ջալալադինը] պատերազմեց նրա

* Բնագիրն ունի... Որ բանացեալ են յամուր տեղիս։ Յամուր տեղիս ներգոյականով խնդիրը հուշում է, որ բանացեալ են ճիշտ չէ ու այստեղ անիմաստ է։ Բանացեալ-ը ուղղում ենք բանացեալ, որ նշանակում է բնավորված, ավելի անարգական իմաստով՝ բնակած, որջացած։

** Թուն և Թանբահ—վայրեր են Իրանի հյուսիսում։

հետ, նվաճեց այն [Խլաթը]։ Այնտեղ էր նաև սուլթանի [Աշրաֆի] Թամթա անունով կինը՝ Իվանեի դուստրը, որի մասին վերևում հիշատակեցինք։ Սրան [Թամթային] իրեն կին առավ, գնաց ու ավերեց Հոռոմների Ալադին կոչված սուլթանի իշխանությունից բազմաթիվ երկրներ։ Ապա միայն Աշրաֆին ու իր եղբայր Քեմլը, որ իշխում էր Եգիպտոսի կողմերը, և Ալադինը։ Իրենց օգնության կանչեցին նաև Կիլիկիայի հայոց զորքերից ու ծովեզերյա ֆռանկներից, եկան պատերազմ տալու խորազմեցի Ջալալադինի դեմ։ Երբ մոտեցան միմյանց, երկու կողմերն էլ վախեցան, չէին հանդգնում բախվել միմյանց։ Ապա հայ ու ֆռանկ քրիստոնյաները խրախուսված աստծով՝ դիմեցին նրանց վրա։ Սրանք քանակով քիչ էին, մեկ հազարից ավելի պակաս։ Քրիստոսի զորությամբ ջարդեցին զորքը ու փախուստի մատնեցին։ Այս տեսնելով արաբական զորքերը, իրենք էլ համարձակվեցին։ Ջարդեցին, կոտորեցին շատերին մինչև մայրամուտ։ Ապա սուլթանները հրամայեցին չհետապնդել փախչողներին, որպես թե իրենց հավատակիցներ են։ Դադարեցին նրանց հետապնդելուց։ Իսկ սուլթանները, որովհետև բարեպաշտ մարդիկ էին, ավելի սիրով լցվան քրիստոնյաների զորքի հանդեպ, քանի որ հասկացան, թե նրանց միջոցով տերը հաղթություն տվեց։

Ապա մեծ ուրախությամբ վերադարձան իրենց երկիրը։ Եվ ինչ քաղաքով ու գավառով անցնում էին, նրանց ընդառաջ էին դուրս գալիս փողերով, ծնծղաներով ու զվարճանությամբ ընդունում։

Իսկ երբ Ալադինը գնաց Կապադովկիայի[272] Կեսարիա, քաղաքի ամբողջ բազմությունը՝ քրիստոնյաներով ու իրենց քահանաներով, խաչերով ու զանգերով մոտ մի օրվա ճանապարհ ընդառաջ գնացին նրան։ Երբ սուլթանը մոտեցավ, արաբների բազմությունը թույլ չէր տալիս քրիստոնյաներին խառնվել և իրենց դիպչել սուլթանին երկրպագելիս. ուստի նրանց ետ մղեցին։ Նրանք բարձրացան մի բլուր բանակի դիմաց։ Երբ սուլթանը հարցրեց, թե ովքեր են նրանք, և իմացավ, որ քրիստոնյաներ են, ինքն իսկ զորքից բաժանվեց մենակ ու գնաց նրանց մեջ, հրամայեց զանգեր հնչեցնել ու



բարձրաձայն պաշտամունք կատարել։ Եվ այդպես նրանց հետ մտավ քաղաք, նրանց պարգևներ տվեց և ուղարկեց յուրաքանչյուրին իր տեղը։

Իսկ Ջալալադին սուլթանը մեծ խայտառակությամբ վերադարձավ Ադլանից աշխարհի Մուղան կոչված բերրի ու արգավանդ դաշտը և այնտեղ տեղակայվելով՝ կամենում էր զորք հավաքել։ Ապա թաթարները, որ նրան հանեցին իր երկրից ու փախստական դցեցին, հետամտելով նրան՝ քշեցին տարան մինչև Ամիդ[273] ու այնտեղ նրա զորքը դաժանորեն ջարդեցին։ Ընկավ նաև անօրեն իշխանը նույն պատերազմում։ Եվ որպես թե, ինչպես ոմանք են ասում, փախստական ընկած հետիոտն գնում էր, հանդիպեց նրան մի մարդ ու իմացավ, որ նա է, սպանեց նրան իր մերձավորի սպանության փոխարեն, որին նա սպանել էր այլ ժամանակ։ Եվ այսպես չարը չարով վերացավ։

## Ի.

## Թե ինչպես թաթարները եկան ոչնչացնելու ամբողջ աշխարհը

Մեր այս պատմության ամբողջ [նախորդ] նկարագրությունը ու նախաշավիղը, որ մինչև այստեղ էր, սույն ազգի համար էր, որ աստծու շնորհներով պատրաստվում էր շարադրելու։ Կարծեմ թե շատերը և նույնը կպատմեն, և ամենն էլ պակաս կգտնվեն լիարժեքությունից, որովհետև պատմության համեմատությամբ չարիքները շատ են, որ եկան հասան ամբողջ մեր երկիրը։ Ժամանակի վերջը հասել է, ու տերի ավետարանները գուշակում են կորստյան որդու գալուստը։ Վախեցնում են նաև մեզ սուրբ մարդկանց ու մարգարեական հոգի կրողների հայտնությունները, որ սուրբ հոգին ցույց տվեց նրանց ի գուշության գալիքի։ Եվ մանավանդ մեր Փրկչի ու աստծու անսուտ պատգամը, որ ասում է. «Ազգ կհառնի ազգի ու թագավորություն՝ թագավորության վրա,

և այդ, ասում է, երկունքի սկիզբն է*։ Այլև մեր Հայրապետ սուրբ Ներսեսի [գուշակությունը], որ մարգարեաբար Հայաստանից նետողների ազգի կողմից մեր Հայոց աշխարհի կործանման մասին[33]. մեր աչքերով տեսանք և ավերը, և տառապանքը, որ բերին մեր ամբողջ երկրի վրա։ Եվ նրանց գալու պատճառը այսպես եղավ։

Քանզի Հյուսիս-արևելքի հեռավոր երկրում, որ բարբարոսական լեզվով կոչում են Ղարաղորում[274], Ղատայի** սահմաններում, այնտեղ գտնվող բարբարոս ազգերի բազմության շատերի համար անիմանալի ու անթվելի թագավորությունների ղեկավարը մի ազգ է, որ կոչվում է թաթար, որի [թագավորի] անունն է Չինգիզ ղան։

Եկավ նրա մեռնելու ժամանակը. վախճանվելուց առաջ կանչեց ամբողջ զորքին և իր ունեցած երեք որդիներին ու ասաց զորքին. «Ահա ես մեռնում եմ. իմ որդիներից մեկին, ում կամենում եք, իմ փոխարեն ընտրեցեք ձեզ համար թագավոր»։ Նրանք պատասխանեցին. «Որ մեկին դու ընտրես, նա էլ կլինի մեզ թագավոր, ու նրան հավատարմությամբ կծառայենք»։ Այն ժամանակ նրանց ասում է. «Ես իմ երեք որդիների բարքերի ու գործերի մասին ձեզ կասեմ։ Այս իմ Չաղատա անդրանիկ որդին է. սա մի կռվող ու զորասեր մարդ է, բայց բնավորությամբ հպարտ է ու մեծամիտ, քան նրան վիճակված բախտը։ Իսկ իմ երկրորդ որդին նմանապես հաղթող է պատերազմներում, բայց բնավորությամբ ագահ է։ Իսկ իմ կրտսեր որդին շնորհալի է իր մանկությունից, բնավորությամբ առատաձեռն է ու ձիրքերով հարուստ. նրա ծնվելուց հետո օրըստօրե ինձ համար ավելացան իմ փառքն ու մեծությունը։ Այժմ ահա ասացի ձեզ ամենը ճշտությամբ, ում կամենում եք երեքից, այստեղ երկրպագեցեք»։

Եվ նրանք մոտեցան, երկրպագեցին կրտսերին, որի անունն էր Հոքթա խաղան. հայրը թագը դրեց նրա գլուխը ու մեռավ։

* Մատթ. ԻԴ, 7, 8, Մարկ. ԺԳ, 8—9։
** Երկիր Տիբեթից հյուսիս. Ղարախիտա։



Իսկ երբ նա ստանձնեց թագավորական իշխանությունը, անթիվ բազմությամբ, իբրև ծովի ավազ, բազմության շատությունից անհամարելի, զորք հավաքեց. իր բուն ցեղից, որին մուղալ* թաթար են անվանում, խազիրներից, հոներից, ղատիացիներից, անկիտաններից** և այլ բարբարոս ցեղեր՝ ժողովրդով ու բանակներով, իրենց կանանցով, որդիներով ու վրաններով։ Սրանց երեք մասի բաժանեց. մեկին ուղարկեց հարավային կողմը՝ գլխավոր վերակացու նշանակելով իր հավատարիմներից ու սիրելիներից. մյուսին ուղարկեց արևմուտք՝ իր որդուն նրանց հետ [դնելով], և հյուսիսի կողմերը. իսկ երրորդին ուղարկեց հյուսիս-արևելք՝ վերակացու կարգելով ավագներից Չարմաղուն անունով մի մարդու։ Սա խորագետ ու իմաստուն պատերազմական գործերում հաջողակ մարդ էր։

Պատվիրեց նրանց՝ ավերել, քանդել բոլոր երկրները, աշխարհի թագավորությունները և չվերադառնալ իր մոտ, մինչև ավարտեն ամբողջ աշխարհի նվաճումը իրենց իշխանության ներքո։ Եվ ինքը այստեղ մնաց երկրում՝ զբաղվելով ուտել-խմելով, զվարճություններով, շնաբարությամբ՝ անհագ բոլոր կողմերից։

Իսկ նրա զորքերը գնացին աշխարհի զանազան կողմեր, ավերեցին երկրներ, գավառներ, վերացրին ազգերի պետություններ, գրավեցին ինչք ու ստացվածքներ, գերեցին նորահասակ կանայք, մանուկներ ստրկական ծառայության համար։ Կար որ ուղարկում էին հեռավոր տարածություն՝ իրենց երկիրը, իրենց խաղան թագավորի մոտ, կար որ պահում էին իրենց մոտ իրենց ընտանիքի պետքերին ծառայելու։

Իսկ այն զորքը, որ գնաց արևելք և որի գլխավորն էր Չարմաղուն նոյինը, հարձակվեց Ջալալադին սուլթանի վրա, որ իշխում էր Խորասանին ու շրջակա գավառներին։ Զարկեց ջարդեց նրան ու նրա զորքերը և նրան փախստական դարձրեց, ինչպես ցույց տվինք վերևում։ Եվ իրենց հերթականությամբ ավերեցին պարսից, Ատրպատականի, դիլմանների բոլոր երկրները, կարգով մաքրեցին ամեն ինչ, որպեսզի

* Մուղալ, այսինքն մոնղոլ։
** Մոնղոլական ու թաթարական ցեղեր։

ոչ մի բան չմնա նրանց համար արգելք ու խոչընդոտ*։ Գրավեցին մեծամեծ, հոյակապ, ամեն ինչով լիքը քաղաքներ Ռեն, Սպահանը և վերստին իրենց անունով շինեցին։ Այսպես էին վարվում իրենց անցած երկրների հետ։

Եվ ապա եկան հասան Աղվանից աշխարհը իրենց ամբողջ ընտանիքներով ու բազմությամբ. այնտեղ կանգ առնելով՝ իրենց վրանները խփեցին Մուղան կոչված բերրի ու արգավանդ դաշտում, որ լիքն է ամեն բարությամբ՝ ջրով, փայտով, մրգով ու որսով։ Այսպես էին անում ամբողջ ձմեռը, իսկ գարնանը ամեն կողմ ոչնչացնում ու ավեր էին սփռում և կրկին վերադառնում, այնտեղ բանակում էին։

## ԻԱ.

## Գանձակ քաղաքի ավերման մասին

Այս քաղաքը լցված էր բազմամբոխ պարսիկներով ու սակավաթիվ քրիստոնյաներով։ Սա [քաղաքը] Քրիստոսի ու նրան պաշտողների սարսափելի թշնամի էր. խաչի և եկեղեցու անարգիչ ու հայհոյիչ էր, քահանաների ու հոգևոր սպասավորների այպանիչ և նախատիչ։ Երբ լցվեց նրանց մեղքերի չափը, այդ պատճառով նրանց չարության աղաղակը հասավ տիրոջը։ Երևացին սրա [քաղաքի] ավերման նախնական նշանները, ինչպես որ Երուսաղեմի վրա [երևացին] սրա ավերումից առաջ, նույնպես էլ այս քաղաքում։ Որովհետև հանկարծ գետինը պատռվեց, դուրս եկավ սև ջուր։ Եվ քաղաքին կից մոտ մի չափազանց մեծ սոսի ծառ, որին ճանդարին էին կոչում, հանկարծ տեսան՝ ինքն իրեն շրջված։ Այդ տեսարանի վրա ամբողջ քաղաքը հուզվեց։ Դարձյալ տեսան այն կանգնած, ինչպես առաջ էր։ Այս տեղի ունեցավ երկու անգամ և ապա ընկավ ու այլևս չկանգնեց։ Եվ նրանց իմաստունները սկսեցին քննություն կատարել այս հրաշքի

* Բնագրում՝ խոչընդոտն գայթակղութիւն, պէտք է ուղղել՝ խոչընդոտն գայթակղութեան։ Սրանք համանիշ բառեր են՝ ոճական հավելադրությամբ։



[illegible], թե ինչ բան է։ Եվ իմանալով, որ դա քաղաքի ավերման նախանշանն է, սկսեցին այնուհետև խաչերը, որ ամրել էին քաղաքի դռների ցածի սեմերին, անարգանքից հանել, որովհետև անարգելու համար էին ամրացրել, որ բոլոր անցորդները տրորեն։

Հանկարծակի հասան թաթարական զորքերը և քաղաքը չորս կողմերից շրջապատեցին։ Ճակատամարտ տալով կռվում էին քաղաքի դեմ բազմաթիվ մեքենաներով։ Ոչնչացրին քաղաքի շուրջ եղած այգեստանը, ապա քարաններով ամեն կողմից փլցրին քաղաքի պարիսպները։ Թշնամիներից ոչ ոք չմտավ քաղաքը, այլ զինավառված՝ քաղաքը մի շաբաթ շրջապատված պահեցին։

Իսկ քաղաքի բնակիչները երբ տեսան, թե քաղաքը թշնամիների կողմից գրավվեց, յուրաքանչյուրը մտավ իր տունը և կրակ այրեց իր վրա, որպեսզի չընկնի թշնամիների ձեռքը։ Ուրիշներն էլ ամեն ինչ, որ վառելու էր, այրեցին, մենակ իրենք մնացին։ Թշնամիները այս տեսնելով՝ առավել ևս կատաղեցին. սուրը գործի դնելով ամենքին սրա ճարակ արին՝ տղամարդկանց, կանանց ու մանուկներին։ Նրանցից ոչ որ չազատվեց. միայն զորքի մի փոքրիկ գունդ, զինավառ ու ամեն ինչով պատրաստ, գիշերը ճեղքեց պարսպի մի կողմը փախավ։ [Մնացին]իսկ շատ քիչ [illegible], որոնց պահեցին ու խոշտանգեցին՝ պահված գանձերը ցույց տալու համար։ Ապա ամենց սպանեցին, մի մասին գերեվարեցին։ Եվ փորեցին փառավոր տները ու հանեցին ինչ որ թաքցրած գտան։ Եվ այս երկար ժամանակ անելուց հետո հեռացան։

Ապա բոլոր գավառներից թափվեցին այնտեղ բրիչ և բահ ու անոթներ փորելու։ Եվ գտնում էին նրա մեջ ոսկու, արծաթի, պղնձի ու երկաթի բազմաթիվ իրեր, ինչպես հանդերձներ, որ թաքցրել էին թաքստոցներում ու գետնափոր տներում։

Եվ չորս տարի քաղաքը այսպես ամայի մնաց, ապա վերաշինելու հրաման տվին։ Քիչ-քիչ եկան հավաքվեցին ու սկսեցին այն կառուցել բացի պարսպից։

ԻԲ.

## Նույն զորքերի կողմից Հայաստանի ու Վրաստանի ավերման մասին

*Գանձակ քաղաքի ավերումից տարիներ անցնելուց հետո այս կատաղի ու խորամանկ զորքը կարծես վիճակով բաժանել էր Հայաստանը, Վրաստանը, Աղվանքը։ Յուրաքանչյուր գլխավորի ըստ մեծության ու փոքրության [բաժանեցին] քաղաքները, գավառները, երկրներն ու բերդերը, որպեսզի գրավեն, քանդեն, ավերեն։ Եվ յուրաքանչյուրը կանանցով, որդիներով ու իր բանակի ժողովրդով գնաց իր մասնաբաժինը։ Եվ նստեցին անհոգությամբ՝ ոչնչացնելու, ուտելու բոլոր կանաչ բույսերը իրենց ուղտերով ու անասուններով։*

*Այս ժամանակ վրաց թագավորությունը թուլացել էր, որովհետև մի Ռուզուդան անունով կնոջ էր ենթարկվում։ Սա Թամարի դուստրն էր՝ Լաշայի քույրը՝ Գիորգիի թոռը. վավաշոտ էր ու կրքոտ, ինչպես Շամիրամը. իր համար բերված տղամարդկանց չհավանելով՝ շատերի հետ էր ընկնում և այրի էր մնացել։ Թագավորական իշխանությունը կառավարվում էր զորագլուխներ Իվանեի, սրա որդի Ավագի, Զաքարեի որդի Շահնշահի, Վահրամի ու այլոց միջոցով։ Եվ որովհետև կարճ ժամանակ առաջ մեռել էր Իվանեն, սրան տարան թաղեցին Պղնձահանքում[275], որտեղ ինքը վրաց վանք էր կառուցել՝ առնելով հայերից։ Նրա իշխանությունը վարում էր իր որդին։ Եվ որովհետև չէին կարող եկած անասելի մրրկին դիմագրավել, այս պատճառով ամենքը իրենց անձն էին պահպանում՝ ամրացնելով այն ամրոցները, ուր կարողանում էին։*

*Իսկ նրանք ընդհանրապես մորեխի բազմությամբ սփռված էին դաշտերը, լեռները, ձորերը, կամ թերևս անձրև հորդությամբ տեղացել էին երկրի վրա։ Այնուհետև այնտեղ պետք էր տեսնել տրտմագին աղետներ* և ողբերի արժանի սուգ։ Որովհետև հողը չէր թաքցնում մտածներին, ոչ էլ քարերն ու անտառներն էին պահում ապաստանածներին, ոչ բերդերի շատ ամուր շինվածքները, ոչ նեղ ու խոր ձորերը, այլ ամենը դուրս էին նետում թաքնվածներին։ Լցվում էր արանց արեն, ողեղնավորների կորովի ձեռքերը թուլանում էին, թաքցնում էին սրեր ունեցողները, որպեսզի թշնամիները չտեսնեն ու անողորմ կերպով չսպանեն։ Թշնամիների ձայները հալում էին նրանց, կապարճների չխկոցները ահաբեկում էին նրանց բոլորին։ Յուրաքանչյուր աչք իր օրհասը եկած էր տեսնում, և իրենց սրտերը ներսում մեռնում էին։ Մանուկները սրտից փախչում էին ծնողների մոտ, իսկ ծնողները նրանց հետ վախից ընկնում էին նախքան թշնամիների վար գցելը։*

*Այնտեղ պետք էր տեսնել, թե ինչպես սրերը անխնա կոտորում են տղամարդկանց ու կանանց, երիտասարդներին ու մանուկներին, ծերերին ու պառավներին, եպիսկոպոսներին ու քահանաներին, սարկավագներին ու դպիրներին։ Ծծկեր մանուկները քարի էին խփվում, և գեղեցիկ կույսերը խառնակվում ու գերվում էին։*

*Ահավոր էր նրանց կերպարանքի տեսքը, և անգութ էին նրանց որովայնի աղիքները [սրտերը]։ Միակին ու միամոր արտասուքներին չէին խղճում և ծերությանը երբեք չէին ողորմում։ Ուրախությամբ էին դիմում սպանությանը, կարծես գնում էին հարսանիք կամ գինարբուքի։*

*Ամբողջ երկիրը լցվեց մեռելների դիակներով, և չկար մեկը, որ թաղեր դրանք։ Սիրելիների աչքերի արտասուքը սպառվել էր, և չկար մեկը, որ անօրենների ահից ընկածներին ողբար։*

*Սուգ հագավ եկեղեցին, և նրա գեղեցկության պայծառությունը վերացավ. խափանվեցին նրա արարողությունները, և վերացան պատարագները նրա սեղանից. լռեցին նրա ժամասացությունները, և նրա մեջ այլևս չէր լսվում երգերի ձայնը։ Ինչպես խավարով պատած էր ամբողջ երկիրը, և մարդիկ ավելի գիշերն էին սիրում, քան ցերեկը։ Երկիրը ճափուր դարձավ իր բնակիչներից, իսկ նրա վրա օտար որդիներ էին շրջում։ Ինչք ու ստացվածք հափշտակվեցին, իսկ նրանց ագահությունը երբեք չհագեցավ։ Խուզարկվեցին բոլոր տներն ու սենյակները, և ոչինչ չմնաց, որ չգրավեցին։ Այստեղ-այնտեղ շրջում էին այծյամների արագությամբ ու կեղեքում, պատառոտում էին թերև գայլեր։ Նրանց երիվարները*

---

* Բնագրում՝ աղէտք տռամագինք, ճիշտն է՝ զաղէտս տռամագինս:

վաղքի մեջ չէին հոգնում, և նրանք ավար հավաքելով չէին ձանձրանում։

Եվ այսպես առհասարակ դառնություն հասցրին շատ ազգերի ու լեզուների, որովհետև տիրոջ բարկության բաժակը հեղված էր երկրի վրա իբրև մեր չար գործերի վրեժխնդրություն, որովհետև մենք մեղանչեցինք նրա առաջ ու նրա արդար ցասումը դրդեցինք։ Այդ էր պատճառը, որ նրանք դյուրությամբ մուտք գործեցին մեր ողջ երկիրը։ Եվ երբ գրավեցին մեր ամբողջ երկիրը, հավաքեցին բոլոր անասունները՝ որը փախուստի ճանապարհին էին, որը՝ ոչ, և ինչքերը, ստացվածքներն ու գերիները, որ արձակ վայրերում էին։

Սակայն այնուհետև մարտնչում էին բոլոր ամրոցների ու շատ քաղաքների դեմ։ Բազմաթիվ ու տեսակ-տեսակ մեքենաներ էին կանգնեցնում, որովհետև չափազանց խորամանկ ու հնարամիտ էին։ Գրավեցին, քանդեցին բազմաթիվ ամրոցներ ու բերդեր։ Եվ որովհետև ամառ ժամանակ էր ու չափազանց շոգ, և ջուր չէր ամբարված, քանի որ անսպասելի ժամանակ վրա տվին, այդ պատճառով մարդ ու անասուն ծարավից պապակած, կամա թե ակամա ընկնում էին թշնամիների ձեռքը կարիքից ու նեղվածությունից։ Իսկ նրանք ոմանց սպանում էին, ոմանց պահում էին իրենց պետքերի համար ստրկական ծառայության։ Նույն անցքերը կատարում էին նաև բազմամարդ քաղաքների հետ. շուրջը նստած՝ պաշարում էին դրանք։

ԻԴ.

## Շամքոր քաղաքի գրավման մասին

Ավագներից Մոլար նուին անունով մեկը, որին բաժին էին ընկել այն կողմերը, երբ Մուղան կոչված դաշտի իրենց բնակված տեղից շարժվում էին, մոտ հազար մարդուց կազմված փոքրիկ զորքամաս ուղարկեց, որոնք եկան նստեցին Շամքոր[276] քաղաքի դռների առջև ու արգելեցին այնտեղի ելումուտը։

Իսկ քաղաքը այն ժամանակ գտնվում էր Վահրամի ու իր



որդի Աղբուղայի իշխանության ներքո, որը նախապես գրավել էին պարսիկներից։ Շամքոր քաղաքի բնակիչները [մարդ] ուղարկեցին Վահրամի ու նրա որդու մոտ, որպեսզի իրենց օգնեն, և ասացին, թե քիչ են։ Իսկ նա չօգնեց ու որդուն էլ, որ կամեցավ գնալ, չթողեց, այլ խանգարեց, եկողներին սովորեցրեց, որ ասեն, թե շատ են։ Ու նույնիսկ քաղաքացիներին հրամայեց նրանց դեմ մարտնչել։

Իսկ այլազգիների զորքը օրըստօրե քանակով ավելանում էր, մինչև եկավ նրանց գլխավորը, որին Մոլար էին կոչում, և պատերազմ սկսեց քաղաքի դեմ։ Քաղաքի պարսպի շուրջը գտնված փոսը լցրեց փայտով ու ծղոտով, որպեսզի հեշտությամբ բարձրանան պարսպի վրա։ Իսկ նրանք [բնակիչները] ներսից կրակ տվին ու գիշերը վառեցին այն։ Առավոտյան երբ այս բանը տեսավ Մոլար նուինը, զորքին հրամայեց, որ յուրաքանչյուրը մի բեռ հող վերցնի ու լցնի փոսը. երբ փոսը լցրին, փոսը հավասարվեց պարսպին։

Եվ զորքը յուրաքանչյուրը ուղղություն վերցնելով իր առջևի կողմը, դիմեց դեպի քաղաք, գրավեց այն, բոլորին սրով կոտորեց, այրեց նրա մեջ եղած շենքերը և, ինչ որ այնտեղ գտավ, թալանեց։ Ապա հարձակվեց Վահրամին ենթակա այլ բերդերի՝ Տերունականի[277], Երգեվանքի, Մածնաբերդի վրա, որին տիրում էր Աղսարթանի որդի Կյուրիկե Բագրատունին։ Իսկ Գարդմանի և ուրիշ կողմերի՝ Չարեքի ու Գետաբակի վրա Ղատաղան նուին անունով մի այլ գլխավոր գնաց։ Վահրամը, որ այն ժամանակ Գարդմանում էր, գիշեր ժամանակ գաղտնի փախավ ինչ-որ տեղ ու կարողացավ ազատվել։ Այլազգիների զորքը ճակատամարտեց բերդերի դեմ. ներսում գտնվածները ստիպված տվին ձի, անասուն ու ինչ որ պահանջեցին։ Հարկ դնելով նրանց վրա՝ նրանց թողին իրենց անունով [իբրև իրենց կողմից գրավված]։

Բայց նրանք, որ գրավեցին Շամքորը, իրենց ամբողջ ունեցվածքով եկան Տավուշ, Կածարեթ, Նոր բերդ, Գագ և նրանց շուրջը գտնված վայրերը, և նեղը գցելով պաշարեցին նրանց։

ԻԴ.

## Վանական վարդապետի ու նրա հետ եղածների գերության մասին

*Այն ժամանակ Վանական կոչված մեծ վարդապետը մի շատ բարձր քարի գագաթին իր ձեռքով իր համար քարայր* էր փորել, որ գտնվում է Լորուտ** կոչված գյուղի հանդեպ՝ Տավուշ բերդի հարավային կողմից։ Այդ այրում շինել էր մի փոքրիկ եկեղեցի ու այնտեղ գաղտնի դադար էր առել, երբ Ջալալադին սուլթանի ավազակների կողմից Երգեվանքի բերդի հանդեպ գտնվող նրա առաջին վանքը ավերվեց։ Այնտեղ հավաքված ու զետեղված էին բազմաթիվ գրքեր, որովհետև այդ մարդը շատ ուսումնասեր ու մանավանդ աստվածասեր էր։ Շատերը գալիս էին նրա մոտ ու նրանից սովորում էին վարդապետական ուսումը։ Երբ մարդիկ շատացան, նա հարկադրված եղավ իջնել քարայրից ու ժայռի ստորոտում շինեց եկեղեցի, սենյակներ և այնտեղ տեղավորվեց։*

*Երբ երկրին թաթարների կողմից այս կործանումը հասավ, Մոլար նուինը եկավ այդ սահմանները. այդ գյուղերի բնակիչները դիմեցին քարայրը։ Քարայրը լցվեց տղամարդկանցով, կանանցով ու երեխաներով։ Թաթարները եկան, այդ այրում նրանց պաշարեցին։ Նրանք ոչ ուտելիք ունեին, ոչ ջուր. ամառային եղանակ էր ու խիստ շոգ։ Սկսվեցին այդ արգելարանում՝ իբրև բանտում, տապակվել։ Մանուկները ծարավից պապակվում էին ու մերձիմահ էին։ Թշնամիները դրսից ձայն էին տալիս, թե «Ինչո՞ւ եք մեռնում, դուրս եկեք մեզ մոտ, ձեզ համար վերակացուներ կնշանակենք ու ձեզ կթողնենք ձեր տեղերում»։ Երդումով կրկնում ու երեքկնում էին։ Ապա այրում գտնվածները ընկան վարդապետի ոտքերը, աղաչեցին ու ասացին. «Գնի՛ր մեր ամենքի արյունը ու իջի՛ր նրանց մոտ, մտերմացի՛ր նրանց հետ»։ Իսկ նա նրանց ասում է. «Ես իմ անձը ձեզ համար չեմ խնայի, եթե փրկություն կա, որովհետև Քրիստոսն էլ իր անձը մահու տվեց մեզ համար ու մեզ փրկեց սատանայի բռնությունից. ապա մենք էլ պարտավոր ենք մեր եղբայրների նկատմամբ նույն սերը ցուցաբերել»։*

*Ապա վարդապետը իջավ նրանց մոտ՝ մեզնից երկու քահանա վերցնելով, որոնցից մեկի անունը Մարկոս էր, իսկ մյուսինը՝ Սոսթենես, որոնք դրանից հետո նրա ձեռքով վարդապետական կոչում առան, այդ օրերին մենք այնտեղ էինք, որովհետև սուրբ գրքերի վրա ուսում ու կրթություն էինք ստանում։*

*Նրանց գլխավորը կանգնած էր այրի դիմաց մի բլրակի վրա. տոթի պատճառով նրա գլխին ամպհովանի էին բռնել, որովհետև մեզ արգելափակեցին վարդավառի տոնին։ Երբ մոտեցան զորապետին, նրանց տանողները հրամայեցին երեք անգամ ծնկաչոք երկրպագել*, ինչպես ուղտերը ծնկելու ժամանակ, որովհետև այդպես էր նրանց սովորույթը։ Եվ երբ եկան նրա առջևը, հրամայեց արևելյան կողմի վրա իրենց խագանին՝ արքային երկրպագել։ Իսկ հետո մեղադրեց (զորապետը) ասելով թե՝ «Ես քո մասին լսել եմ, որ դու մի իմաստուն ու երևելի մարդ ես, ու քո տեսքը հենց քեզ հայտնի է անում»։ Որովհետև նա բարի տեսքով, խաղաղ կեցվածքով, փառավոր մորուքով, ալեհեր մազերով մարդ էր։ «Երբ դու լսեցիր մեր՝ ձեր սահմանները գալու լուրը, ինչո՞ւ մեզ ընդառաջ չեկար սիրով ու խաղաղությամբ, իսկ ես հրամայել էի՝ քեզ ենթակա բոլորին՝ մեծից փոքր անվնաս պահել»։ Վարդապետը պատասխանեց ու ասաց. «Մենք ձեր բարեմտությունը չգիտեինք, ընդհակառակը, ահուդողով պաշարված էինք ձեր երկյուղից. ձեր լեզուն չգիտեինք, իսկ ձեզանից ոչ ոք չեկավ մեզ ձեզ մոտ կանչելու համար։ Մեր հապաղումը այս պատճառով էր։ Այժմ երբ կանչեցիք, եկանք ձեր առջև։ Մենք ոչ զինվոր ենք, ոչ հարստության տեր, այլ օտարական ու պանդուխտ մարդիկ ենք. հավաքվել ենք տարբեր տեղերից մեր կրոնի ուսման համար։ Արդ ձեր առջև ենք, ինչ կամենում եք, արեք մեզ հետ՝ կամ կյանքով կամ մահով»։*

---

* *Բնագրում՝ քարայրս, ճիշտն է քարայր։*

** *Ալիշանը կարծում է, թե* լոռ բույսերով առատ տեղ է *նշանակում։ Մինչդեռ* լորի ծառուտ է *իմաստը։*

* *Բնագրում՝* երկրպագել նոգա. նոգա *ավելորդ է, ինչպես չունեն որոշ ձեռագրեր.* նոգա*-ի փոխարեն պետք է լիներ* նմա։

Այդ ժամանակ իշխանը ասում է նրան՝ մի վախենա։ Նրանց հրամայեց նստել իր առջև։ Բազմաթիվ բաներ հարցրեց նրան բերդերի ու Վահրամ իշխանի մասին, թե որտեղ է, քանի որ կարծում էր, թե նա երկրի վրա մարմնավոր իշխան է։ Երբ իմացածները ասաց և այն ասաց, թե ինքը մարմնավոր որևէ իշխանություն չունի, ապա նրան հրամայեց, որ մարդկանց աներկյուղ ամրոցից իջեցնի։ Եվ խոստացավ, որ յուրաքանչյուրը իր տեղում կապրի նրա վերակացուներով, ու ի սեր նրա կշինի գյուղերն ու ագարակները։

Ապա վարդապետի հետ իջած քահանաները մեզ ձայնեցին, թե՝ «Շտապ իջեք և, ինչ որ ձերն է, բերեք ձեզ հետ»։ Մենք դողդողալով իջանք նրանց մոտ, ինչպես գառները գայլերի մեջ. սարսափելով ու զարհուրելով մահվան էինք սպասում. յուրաքանչյուր մեկս իր մտքում ասում էր սուրբ եղբայրության համար խոստովանությունը, որովհետև մեր բերդից իջնելուց առաջ հաղորդվեցինք աստվածորդու փրկավետ մարմնով ու արյամբ [հաղորդվել]։

Մեզ տարան մի շատ փոքր աղբյուրի մոտ, որ գտնվում էր վանքի մեջ, և ջուր տվին, որովհետև երեք օր չափազանց ծարավ էինք։ Ապա տարան լցրին արգելափակ մի տեղ, իսկ աշխարհականներին՝ եկեղեցու գավիթը։ Իրենք մեզ շրջապատած պահում էին գիշերը. որովհետև օրը երեկոյացել էր։ Առավոտյան մեզ բարձրացրին վանքի վերևը մի բարձրավանդակ տեղ. խուզարկեցին, ինչ որ կար որևէ մեկի մոտ իրենց պետքական, առան։ Իսկ ինչ որ քարայրում էր, և եկեղեցու սպասք էր՝ կամ շուրջառ, կամ որևէ անոթ, կամ արծաթի խաչ, և արծաթով ընդելուզված երկու ավետարան, տվին վարդապետին, որ հետո մեզնից առան։ Մեզնից մարդիկ ընտրեցին, որ կարող էին իրենց հետ շրջել, ապա հրաման տվին մյուսներին տանել վանքն ու գյուղը՝ իրենցից վերակացու թողնելով, որպեսզի ուրիշները նեղություն չտան նրանց*։ Հրամայեց նաև, որ վարդապետը մնա** այնտեղ վանքում։

---

* Եւ վերակացու թողին յիւրեանց, զի մի՛ այլք խաղեսցեն զնոսա։ Բնագրի խաղեսցեն ձևը ուղղում ենք՝ խռովեսցեն ըստ այլ ձեռագրերի, որ ճիշտ է և նշանակում է նեղություն տալ, անհանգստացնել։

** Բնագիրն ունի կեալ, ճիշտ է կալ, որ ունեն շատ ձեռագրեր։



Նա [Վանականը] Պողոս անունով մի քահանա եղբորորդի ուներ, նրան Մոլար նույնը հրամայեց մեզ հետ գնալ իր հետևից։ Իսկ սուրբ վարդապետը ափսոսեց իր եղբորորդուն, որովհետև հասակով պատանի էր. ինքը եկավ նրա ետևից՝ հուսալով, թե հնար կլինի և մեզ ազատել։ Մեզ իր հետևից ման էր տալիս երկար ժամանակ նեղություններով ու տառապանքներով, հետիոտն ու մինչև իսկ ոտաբոբիկ։ Իսկ մեզ հսկելու նշանակված մարդիկ պարսիկներ էին՝ ծարավ քրիստոնյաների արյան։ Նրանք ավելի էին կեղեքում մեր կյանքը ուղեգնացության բոլոր տառապանքներով. այնպիսի արագությամբ էին մեզ տանում, ինչպես երիվարները ասպատակության են քշում։ Իսկ եթե պատահում էր, որ մեկը մարմնական տկարության կամ խեղության պատճառով ընթացքից ետ էր ընկնում, անխնա ջարդում էին գլուխները, բազմաթիվ հարվածներով ծեծում էին մարմինները։ Փուշ անգամ չէին կարողանում ոտքներից հանել, եթե նույնիսկ փուշը ոտքի միջով դուրս գար։ Ստիպողների պատճառով ոչ ոք անգամ ջուր չէր կարողանում խմել։

Եվ երբ իջևանում էին, մեզ տանում լցնում էին նեղ տները, իսկ իրենք նստած տների շուրջը հսկում էին ու ոչ ոքի թույլ չէին տալիս դուրս գալ անգամ մարմնական պետքերի համար. տներում էին դուրս գնում ու նրանց մեջ էլ գիշերում էին շատ օրեր։ Չեմ կարող նկարագրել այն բոլոր նեղությունները, որ մենք քաշեցինք։ Վարդապետին չթողին մեզ մոտ, այլ առանձին, մեզնից հեռու, ուրիշներին հանձնեցին զգուշությամբ հսկելու։

Ապա ինձ էլ բաժանեցին իմ ընկերներից, վերցրին իրենց հետ գրագրության համար՝ թուղթ գրելու ու կարդալու։ Ցերեկը իրենց հետ շրջեցնում էին, իսկ երեկո լինելիս մեզ բերում երաշխավորությամբ հանձնում էին վարդապետին, դարձյալ գալիս վերցնում էին հետիոտն՝ կամ մերկ բեռնակիր գրաստի վրա։ Եվ այսպես վարվեցին երկար ժամանակ։

Իսկ երբ ամառը անցավ ու եկավ աշունը, և նրանք պատրաստվում էին մեր հարազատ երկրից հեռավոր օտարություն հեռանալու, ապա բոլորը մահը աչքի առաջ առնելով՝ սկսեցին գիշերները քիչ-քիչ փախչել ազատվել, ուր որ կարող էին։ Քրիստոսի շնորհներով այսպես բոլորը ազատվե-

ցին, բացի երկու քահանաներից, որոնք ցերեկով կամեցան գաղտնի գնալ, բայց չկարողացան դուրս պրծնել. դրանց բռնեցին բերին բանակ ու մեր առջև՝ ի սարսափ ու պարհուրանք մեզ, սպանեցին, քանի որ բոլոր փախչողների հետ այդպես էին վարվում։

Ապա մի օր սրանչելի վարդապետն ինձ ասաց. «Կիրակո՛ս»։ Իսկ ես ասացի. «Ի՞նչ ես հրամայում, վարդապետ»։ Ասաց ինձ. «Որդյակ, գրված է, թե՝ երբ նեղության մեջ եք ընկնում, համբերեցեք։ Այժմ մենք պետք է Սուրբ գրքի խոսքը մեր անձի վրա գործադրենք, որովհետև մենք ավելի լավ չենք, քան առաջին սրբեր Դանիելը, Անանիան* ու Եզեկիելը, որոնք իրենց գերության մեջ պահպանեցին բարեպաշտությունը, մինչև որ աստված հասավ փառավորեց նրանց գերության մեջ։ Այժմ մենք էլ սպասենք աստծու խնամքին, մինչև որ ինքը հասնի մեզ, ինչպես կամենում է»։ Ես ասացի. «Հայր սուրբ, ինչպես հրամայում ես, այնպես կանենք»։

Ապա այնպես պատահեց, որ մի օր մեզ գերող իշխանը եկավ մեր արգելափակված տեղը։ Մեզ տեսնելով՝ թեքվեց մեր կողմը ու մենք նրան ընդառաջ գնացինք։ Մեզ ասաց. «Ձեզ ի՞նչ է պետք. եթե քաղցած եք, ձեզ ձիու միս տամ ուտելու». քանի որ իրենք անխտիր ուտում են ամեն անմաքուր անասունի միս, նաև մուկ ու բոլոր սողունները։ Վարդապետը ասաց նրան. «Մենք ձիու միս չենք ուտում և ոչ էլ ուտում ենք ձեր մյուս կերակուրները։ Եթե կամենում ես մեզ շնորհ անել, ուղարկիր մեզ մեր տեղը, ինչպես որ խոստացար, որովհետև ես մի ծեր, հիվանդոտ մարդ եմ ու քեզ զինվորական գործի, կամ հովվության, կամ մի այլ բանի պետք չեմ»։ Զորապետը նրան ասաց. «Երբ Զուչու Ղանը գա, այդ մասին կհոգամ»։ Այդ Զուչու Ղանը նրա տան վերակացուն էր և նրա զորքի հետ ավարի էր գնացել։ Այսպես կանգնեցինք նրա առաջ երկու, երեք անգամ [խնդրեցինք], իսկ նա նույնը պատասխանեց։

Ապա այն մարդը եկավ ճանապարհից, և մեզ կանչեցին իշխանի պալատը։ Նույն մարդուն թարգմանի հետ մեզ մոտ ուղարկեց, որ ասաց. «Չէ՞ որ դուք ասում էիք, թե մեռելի

* Բնագրում է զԱնանիանն, ուղղում ենք զԱնանիան:



ինչ տալը նրա հոգու համար օգտակար է. արդ՝ եթե մեռելներին օգնում է, կենդանիներին ինչո՞ւ չի փրկի։ Ինչ ունես, տուր, գնիր քո հոգին և գնա նստիր քո տանը»։ «Մեր ինչքերը այն էին, որ դուք առաք, այսինքն՝ խաչերն ու ավետարանները, բացի դրանցից մենք այլևս ոչինչ չունենք»։ Մարդը նրան ասում է. «Եթե ինչք չունես, այստեղից գնալ չես կարող»։ Վարդապետը պատասխանում և ասում է. «Ճշմարիտ եմ ասում քեզ, մենք ոչինչ չունենք, ոչ նույնիսկ մի օրվա կերակրի արժեք. բայց եթե կամենում եք, մեզ ուղարկեցեք մեր շրջապատի այս բերդերից մեկը*, և նրանց մեջ գտնվող քրիստոնյաները կգնեն մեզ»։

Նրանք նրա համար ծանր գին կտրեցին. ապա դարձյալ դրանից զիջեցին ու նրան ուղարկեցին Գագ[278] կոչված բերդը։ Իսկ նա խնդրեց մեզ գնել, որ իր գնի հետ մերն էլ տա, բայց չտվին, ասելով՝ «Սա մեզ պետք է թուղթ գրելու և կարդալու. ինչքան էլ մեծ գին տաք, սրան չենք տա»։ Եվ մենք արտասուքով միմյանցից բաժանվեցինք. բայց ասաց ինձ. «Որդյակ, ես կգնամ կընկնեմ Սուրբ Նշանի ոտքը, որ սուրբ Սարգսի անունով է, և նրա միջոցով տիրոջից կխնդրեմ քո ու մյուս վանականների համար, որոնք գտնվում են անօրենների ձեռքում, որպեսզի աստված գութ և ձեռ իր գթով ազատի»։ Որովհետև Գագում բոլոր նեղյալների, մանավանդ գերիների համար մի հրաշագործ խաչ կար. ովքեր որ նրան ապավինում էին ամբողջ սրտով, հենց ինքը սուրբ Նահատակ Սարգիսը բացում էր բանտերի և արգելանոցների դռները, քանդում էր շղթաները ու մարմնավոր տեսքով առաջնորդում էր իրենց տեղերը։ Այդ հրաշքների լուրը տարածված էր բոլոր ազգերի մեջ, որը [խաչը], ասում են, կանգնեցրել է մեր սուրբ Մեսրոպ վարդապետը։

Եվ այնպես եղավ, ինչպես որ վարդապետը ասաց։ Նրան գնեցին ութսուն դահեկանի։ Եվ երբ նրան տարան, նույն օրը Մոլարը ինձ ասաց. «Մեծ քահանայի գնալու համար մի տրտմիր, քեզ նրա հետ չթողինք այն պատճառով, որ մեզ պետք ես. քեզ կմեծացնեմ իբրև իմ մեծերից մեկը. իսկ

* Բնագրում Առաքեցէք մի ի բերդիցս յայսցանէ, ուղիղն է՝ Առաքեցէք ի մի ի բերդիցս յայսցանէ։

եթե կին ունես, նրան քեզ մոտ կբերեմ. իսկ եթե չունես, մեզնից քեզ կին կտամ»։ Եվ անմիջապես ինձ մի վրան տվեց ու երկու սպասավոր պատանիներ։ Եվ ասաց. «Առավոտյան քեզ ձի կտամ ու կուրախացնեմ, անհոգ կաց»։ Եվ հեռացավ ինձնից։ Աստծու խնամքը ինձ հասավ նույն գիշերը, գաղտնի փախա նրանցից ու դուրս պրծա. եկա իմ սննդյան տեղը՝ Գետիկ կոչված վանքը։ Սա նրանց կողմից ավարի էր ենթարկված, և այնտեղ եղած շինվածքները այրված էին. այդտեղ դադար առա։

ԻԵ.

## Լոռե քաղաքի ավերման մասին

Հեթանոսների ամբողջ բանակի Չաղատա անունով զորավարը լսեց Լոռե քաղաքի ամրության ու նրա մեջ եղած գանձերի շատության մասին. որովհետև Լոռե քաղաքում էին Շահնշահի* տունն ու նրա գանձերը։ Վերցրեց իր հետ ընտիր սպառազեններ պատերազմական բազմաթիվ մեքենաներով ու ամբողջ պատրաստությամբ գնաց այնտեղ և բանակելով նրա շուրջը՝ պաշարեց այն։

Իսկ Շահնշահ իշխանը առավ իր կնոջն ու զավակներին, դաղտագողի գնաց մի ձոր ու ինչ-որ տեղ քարայրներում ամրացավ։

Քաղաքի վերակացությունը հանձնեց իր աներներին**։ Իսկ որովհետև նրանք թուլամորթ տղամարդիկ էին, զբաղված էին ուտելով, խմելով ու հարբեցողությամբ՝ հուսալով պարիսպների ամրության և ոչ թե Աստծու վրա։

Թշնամիները եկան, փորեցին պարսպի տակը և այն փլցրին. իսկ իրենք շուրջը նստած հսկում էին, որպեսզի ոչ ոք չփախչի։ Երբ բնակիչները տեսան, որ քաղաքը գրավվեց, սկսեցին վախից մղվել ու լցվել ձորը։ Այս տեսնելով թշնամիները մտան քաղաքը և անխնա կոտորեցին տղամարդ-

---

* Շահնշահ Զաքարե ամիրսպասալարի որդու անունն է։

** Այսինքն՝ աներոջ տղաներին։



կանց, կանանց ու երեխաներին՝ ավարելով նրանց ինչքն ու ունեցվածքը։ Գտան նաև Շահնշահ իշխանի գանձերը. սա գրկել ու կողոպտել էր իր հպատակներին և այնտեղ ստեղծել էր խիստ ամուր մի գանձատուն, որ ոչ ոք չէր կարող տեսնել, քանզի հորի բերանը այնքան նեղ էր արել, որ միայն լցնելու համար էր պիտանի, իսկ հանելու համար՝ այլևս ոչ։ Սպանեցին նաև Շահնշահի աներներին, իսկ իրենք գավառի բոլոր ամրոցները խուզարկեցին, որոնցից մի մասը գրավեցին խաբեությամբ, շատերն էլ բռնությամբ, որովհետև տերն [չ-ամրված] էր մատնում նրանց ձեռքը։

Այսպես վարվեցին նաև այլ քաղաքների՝ Դմանիսի, Շամշուլդայի, մայրաքաղաք Տփղիսի հետ։ Թողին ահ ու սարսափի, կոտորածի ու գերության մատնեցին. անխնա ասպատակեցին բոլոր կողմերում՝ հարձակումով, հափշտակությամբ, կոտորածով, որովհետև չկար մեկը, որ նրանց դեմ կանգներ, կամ նրանց հետ պատերազմեր։ Այդ պատճառով ամեն կողմից աներկյուղ էին։ Ճողոպրելով փախել էր Ռուսուդան կոչված վրաց թագուհին, ուր որ կարողացել էր ապաստանել։ Այսպես բոլոր իշխանները մարթիները փրկել էին նրանցից։

ԻԶ.

## Ավագ իշխանի՝ նրանց ձեռքը ընկնելու մասին

Իսկ երբ Ավագ անվանված մեծ իշխանը՝ Իվանեի որդին, տեսավ թշնամիների այդ հսկա բազմությունը, որ լցվեց ամբողջ երկիրը, ինքն էլ ամրացավ Կայան[279] կոչված ամուր բերդում։ Գավառի բոլոր բնակիչները նույնպես եկան ամրացան բերդի շուրջը։ Երբ այլազգիների զորքերը իմացան, թե այնտեղ է ամրացել իշխանը, նրանց գլխավորներից Խաութամա անունով մեկը բազմարանակ զորք վերցրեց, եկավ բերդը պաշարեց։ Եվ ընդհանրապես գավառը լցվեց այլազգի զորքերով, որովհետև տեղի ամրության պատճառով ամեն կողմերից այնտեղ էին գաղթել, պատսպարվել։

Բերդի շուրջը ամեն կողմից ստորոտով պատ քաշեցին և

յուր ուղարկեցին Ավագին, որ դա նրանց հարկատվության հնազանդվի և չվախենա։ Շատ անգամ ուղարկեցին ու նույն բանը ասացին։ Իսկ նա կամենալով նրանց սիրտը շահել՝ տալիս է իր դստերը և շատ հարստություն, որպեսզի գուցե թուլացնեն պաշարումը։ Նրանք առան այդ ու ավելի համառությամբ պահանջում էին իրեն։ Իսկ բերդի շուրջն ու ներսում գտնվածները սկսեցին ծարավից նեղվել։ Ապա իրենց ձիերն ու բոլոր անասունները տարան տվին թաթարներին, որպեսզի իրենցից ոմանց թույլ տան՝ գնան ջուր բերեն իրենց ընտանիքին։ Նրանք թույլ տվին, մարդկանց բազմությունը դիմեց դեպի ջուրը։ Բայց արգելեցին ջրի գնացածներին* [ետ դառնալ]. ոչ ոքի չսպանեցին, այլ ասացին, որ նրանք իջեցնեն իրենց ընտանիքներին ու մնան** իրենց մեջ։ Նրանք տանջանքի [ծարավից] պատճառով ակամա իջեցրին նրանց։ [Թաթարները] սրանց ջուր խմեցրին, արգելափակեցին իրենց մեջ և այն կանանց, որոնց ցանկացան, վերցրին՝ սպանելով նրանց ամուսիններին, իսկ մի մասին թողին իրենց ամուսինների մոտ։

Իսկ երբ Ավագը տեսավ, որ պաշարումն ու կոտորածը չեն թուլացնում, կամեցավ հանձնվել նրանց, որ թերևս մարդկանց վիճակը մի փոքր թեթևանա։ Իրենից առաջ ուղարկեց Խաչենի ազնվականներից իր տան վերակացու Գրիգորին, որին փաղաքշանքով Տղա էին կոչում, որպեսզի գնա հանդիպի նրանց Չարմաղուն կոչված գլխավորին, որ իր վրանը զարկել էր Գեղարքունյաց ծովի ափին։ Երբ մեծ նուինը այս լսեց, չափազանց ուրախացավ. և շտապ [մարդ] ուղարկեց Խուղաթայի մոտ, որ պաշարել էր նրան [Ավագին], շուտափույթ իր մոտ հասցնել ու այլևս չնեղել բերդի ու գավառների բնակիչներին։ Նա վերցնելով Ավագին՝ շտապ ներկայանում է նրան։ Երբ նրան տեսավ, ասաց. «Դո՞ւ ես Ավագը»։ Նա պատասխանեց, թե՝ «Ես եմ»։ Մեծ զորապետը ասաց նրան. «Ինչո՞ւ շուտ չեկար ինձ մոտ, երբ ես եկա քո երկրի սահմանները»։ Իշխանը պատասխան տվեց ու ասաց. «Քանի դեռ հեռու* էիր, և իմ հայրը ողջ էր, նա քեզ բազմաթիվ նվերներով ծառայություն մատուցեց. երբ հայրս մեռավ, ես ծառայություն մատուցեցի քեզ ըստ իմ կարողության։ Իսկ այժմ երբ եկար իմ երկիրը, ահա եկել եմ քո առջև, ինչպես հաճելի է քեզ, վարվիր ինձ հետ»։ Զորապետը ասում է նրան. «Առակով ասում են, թե եկա երդիկը, չեկար, եկա դուռը, նոր եկար»։ Ապա առաջարկեց նրան նստել իր առջև նստող բոլոր մեծամեծներից ներքև ու հրամայեց նրա պատվին մեծ խնջույք սարքել։

Մեծ քանակությամբ մաքուր ու անմաքուր անասունների միս բերին՝ կտոր-կտոր կտրած ու եփած. ձիերի կաթից ըստ իրենց սովորույթի բազմաթիվ տիկերով խմիչք [կումիս] բերին ու դցեցին առաջները։ Սկսեցին ուտել ու խմել։ Իսկ Ավագը և նրա հետ եկածները ոչ ուտում էին, ոչ խմում։ Զորապետը ասում է նրանց. «Ինչի՞ համար ոչ ուտում եք, ոչ խմում»։ Ավագը նրան պատասխանում է. «Քրիստոնյաները սովորություն չունեն ոչ ուտելու այս կերակուրը և ոչ էլ խմելու այս խմիչքը. այլ ուտում են մեր մորթած մաքուր կենդանիների միս և խմում են գինի»։ [Չարմաղունը] հրամայեց նրա խնդրածը տալ նրանց։ Առավոտյան նրան նստեցրեց շատ մեծամեծներից վերև. և այսպես օրըստօրե ավելացրեց նրա պատիվը, մինչև որ նրան նստեցրեց բուն մեծամեծների շարքը։ Բոլոր զորքերին հրամայեց՝ չկռվել նրա իշխանության տակ գտնվող բերդերի ու քաղաքների դեմ։ Եվ նրա երկրի վրդովությունը շատ թեթևացավ, ու բազմաթիվ գերիներ ազատ արձակեցին ի սեր նրա. նրա ամբողջ երկիրը հանձնեց իրեն, էլ ավելի, անքակտելի բարեկամություն հաստատեց նրա հետ։ Եվ վերցնելով նրան ու ամբողջ զորքը՝ ընթացավ Անի քաղաքի վրա։

* Եւ նոցա առդելնալ զերթալսն զջրէ և ոչ սպասին զուէ: Ամենից առաջ զերթալսն պետք է ուղղել զերթեալսն, որ ունի Թիֆլիսի 1909—10 թվականների հրատարակությունը, որովհետև զերթալսն քերականորեն անիմաստ է։ Զերթեալսն նշանակում է՝ գնացածներին: Եվ հետո ջուր բառի զջրէ բացառականը ճիշտ չէ. անհավանական է, որ դասական կրթություն ստացած Կիրակոս Գանձակեցին ջուր բառի հոլովման մեջ սխալ թույլ տար. պետք է լինի զջրոյ. մի քանի ձեռագրեր չունեն զջրէ, մի քանիսն էլ ասալիս են ի ջրոյ: Բոլոր դեպքերում պետք է ուղղել՝ զջրոյ:

** Բնագրում՝ կեալ, ճիշտն է կալ:

* Մինչդեռ հեռին էիր: Հեռին պետք է լինի հեռի:

ԻԵ.

## Անի քաղաքի մասին, թե ինչպես տերը մատնեց նրա [Չարմաղունի] ձեռքը

Այս Անի քաղաքը լցված էր մարդկանց ու անասունների բազմությամբ և պատնեշված էր շատ ամուր պարիսպներով։ Եվ անչափ եկեղեցի կար նրա մեջ, մինչև որ խոսքի մեջ երդվելիս այսպես էին երդվում. «Անիի հազար ու մի եկեղեցին [վկա]»։ Ամեն բանով խիստ հարուստ էր քաղաքը, այդ պատճառով առատությունը ամբարտավանացրեց նրանց, իսկ ամբարտավանությունը կորստի է մատնում, ինչպես սովոր է անելու սկզբից մինչև այժմ։ Չարմաղունը պատգամավորներ ուղարկեց նրանց մոտ, որ իրեն հնազանդվեն։ Քաղաքի գլխավոր իշխանները չհամարձակվեցին պատգամին պատասխանել առանց Շահնշահ իշխանին հարցնելու, որովհետև քաղաքը ենթակա էր նրա իշխանությանը։ Իսկ քաղաքի ամբոխն ու ռամիկները սպանեցին պատգամավորներին։ Այլազգիների զորքերը այս տեսնելով՝ կատաղեցին. քաղաքը բոլոր կողմերից պաշարեցին, հմտորեն կանգնեցրին բազմաթիվ քարաններ [քարաձիգ մեքենաներ] և ուժգնապես ճակատամարտելով քաղաքի դեմ՝ գրավեցին այն։ Այլև քաղաքի իշխաններից ոմանք օգնեցին թշնամուն՝ իրենց կյանքի փրկությունը ձեռք բերելու համար։ Նրանք քաղաքից դուրս կանչեցին բազմությունը, խոստացան ոչ մի չար բան չանել նրանց։

Եվ երբ ամբողջ բազմությունը դուրս եկավ նրանց մոտ, [թաթարները] նրանց իրենց մեջ բաժանեցին և սրերը քաշելով անողորմաբար համահավասար կոտորեցին՝ թողնելով սակավաթիվ կանայք, մանուկներ և արհեստավոր տղամարդիկ, որոնց քշեցին գերության։ Ապա իրենք մտան քաղաքը, գրավեցին բոլոր ինչքերն ու ստացվածքները, կողոպտեցին նաև բոլոր եկեղեցիները, ավերեցին ու քանդեցին ամբողջ քաղաքը, եղծեցին ու ոչնչացրին նրա վայելչության փառքը։

Այնտեղ պետք էր տեսնել ողորմագին տեսարանը. համահավասար կոտորված ծնողները և զավակները նրանց հետ դիզված էին միմյանց վրա, ինչպես կուտակված քարակարկառները. քահանաներ ու սարկավագներ և եկեղեցական



սպասավորներ, ծերեր ու պատանիներ, մանուկներ, շատ երիտասարդներ ու կույսեր՝ ըստ սուրբ ավետարանի, թե՝ «կը մատնվեք սովի ու գերության»*։ Նույն պատվիրանը կատարվեց սրանց վրա, որովհետև ցան ու ցիր ընկել էին դաշտերի երեսին, հողը հագեցել էր վիրավորների արյունից ու ճարպից. օճառով լվացված փափուկ մարմինները սևացել և ուռել էին։ Իսկ նրանք, որ քաղաքի դռներից դուրս չէին եկել, բոբիկ ու հետիոտն ընթացան դեպի գերություն. և նրանք, որոնք հաղորդվել էին աստվածորդու թանկագին մարմնով ու արյունով, ուտում էին անմաքուր [անուտելի կենդանիների] ու սատկած [անմորթ] միս և խմում էին անուտելի ձիերի կաթից։ Պարկեշտ ու ողջախոհ կանայք մատնված էին իգամոլ ու վավաշոտ մարդկանց խաղքությանը։ Սուրբ կույսերը, որոնք ուխտել էին աստծուն՝ սրբությամբ պահելու մարմինները և մաքուր՝ հոգիները, պղծվում էին տեսակ-տեսակ պոռնկությամբ, ապականվում խառնակությամբ։ Եվ գործի վախճանը այս եղավ։

ԻԶ.

## Կարսի ավերածության մասին

Երբ այս քաղաքը իմացավ, թե թաթարները ինչպես վարվեցին Անիի բնակիչների հետ, փութաց ու աճապարեց, քաղաքի բանալիները տարավ նրանց ընդառաջ, որ գուցե խնայեն իրենց։ Բայց որովհետև նրանք ավարի համար տոչորվում էին և ոչ ոքից երկյուղ չունեին, նույն աղետները նաև նրանց վրա թափեցին, ինչ որ Անիի հետ էին արել՝ ինչքի ու ստացվածքի հափշտակություն, բնակիչների կոտորած, քաղաքի ավերում. անշքացրին նրա վայելչությունը, գերեվարեցին նրա բնակիչներին. սակավաթիվ սրիկաների թողեցին, հեռացան։ Հետո հոռոմների սուլթանի զորքը եկավ, թաթարների կողմից ձերբազատվածներին ոչնչացրեց գերությամբ և սրով անխղճաբար, ըստ գրվածի, թե՝ «Ահ, գուբ և

* Երեմ., ԼԲ, 36. Մատնեսցաւ ի սուր եւ ի սով եւ ի գերութիւն։

որոգայթ լինի ձեզ, ով երկրի բնակիչներ. ով փախչի ահից, կընկնի գուբը, իսկ ով ելնի գբից, որոգայթով կբռնվի»*։ Իսկ ով փախչի սրանից, «սա՛ր կխայթի նրան»**։ Այսպես եղավ Կարսի տառապած բնակիչների համար։

Նույն զորքերը գրավեցին նաև Սուրբ Մարի[280] քաղաքը, որը քիչ տարիներ առաջ արաբներից առել էին Շահնշահն ու Ավագը. դեռևս չէին վերանորոգել,*** հանկարծակի բազմաթիվ զորքերով նրանց վրա հարձակվեց Ղարա Բահատուր անունով [թաթար] ավագներից մեկը և անմիջապես գրավեց այն [քաղաքը] ու, ինչ որ գտավ այնտեղ, հափշտակեց։

Երբ այսպես արվեց մեր ամբողջ երկրի նկատմամբ, ապա հրաման տվին մնացորդներին, որ ազատվել էին սրից ու գերությունից, որ յուրաքանչյուրը գնա իր տեղը՝ գյուղերն ու քաղաքները, շինի հանուն իրենց [թաթարների] ու ծառայի [հարկատու լինի] իրենց։ Եվ երկիրը քիչ-քիչ սկսեց շենանալ։

Բայց աստված միշտ սովոր է բարկության ժամանակ հիշել նաև ողորմածություն, որը և այստեղ արեց. որովհետև «ոչ ըստ մեր մեղքերի արեց մեզ համար և ոչ էլ ըստ մեր անօրենության հատուցեց մեզ»****։ Ամառ ժամանակ էր, երբ նրանք ասպատակեցին մեր երկիրը, բերքը դեռևս հնձված չէր կամ հավաքված շտեմարաններում. իսկ նրանք եկել էին ուղտերով ու անասուններով. կերան ու կոխոտեցին ամեն ինչ։ Իսկ ձմեռվա մոտ երբ գնացին Մուղան կոչված դաշտը՝ Աղվանք, որովհետև ձմեռ ժամանակ այնտեղ էին տեղակայվում, իսկ գարնանը տարածվում էին զանազան կողմեր։ Այն մարդիկ, որ ազատվել էին սրից, մերկ ու առանց ուտելիքի էին, ընկած ու տրորված հասկերով հոգում էին իրենց կարիքները. և այդ ձմեռ սաստիկ ցուրտ չեղավ, ինչպես ուրիշ տարիներ, այլ մեղմ էր ու ցանկացածի նման։ Եվ որովհետև եզներ չունեին, որ հողը վարեին, և ոչ էլ սերմեր, որ ցանեին, երբ գարունը եկավ, աստծու հրամանով հողը ինքնին բուսցրեց, որ բավական էր մարդկանց կարիքները բա-

* Եսայի. ԻԴ, 17—18։

** Ժողով. Ժ, 8։

*** Բնագրում՝ Եւ դեռ կարկառեալ էին... ուղղում ենք՝ դեռ չէ եւ կարկառեալ էին և ըստ այդմ թարգմանում։

**** Սաղմ. ՃԲ, 10։



վարարելու։ Նաև ամեն կողմ հացի լիություն եղավ, որով փախածները տեղերում ապրում էին։ Այլև վրաց անխիղճ ազգը մեծ գութ ու խնամք ցուցաբերեց իրենց մոտ պանդխտածների հանդեպ։ Եվ այսպես ողորմած աստված մխիթարեց տառապածներին։

ԻԹ.

## Ավագ իշխանին արևելքի խաղանի մոտ ուղարկելու մասին

Երբ որոշ ժամանակ անցավ, [թաթարները] Ավագին ուղարկեցին հյուսիս-արևելք հեռավոր ճանապարհ իրենց ղան կոչված արքայի մոտ, որովհետև բոլոր մեծամեծներին, ովքեր որ պատվել էին կամենում, այսպես էին անում. ուղարկում էին նրա մոտ և նրա հրամանով էին անում, ինչ որ անում էին, որովհետև չափազանց հլու էին իրենց արքայի հրամանների կատարման նկատմամբ։ Նաև ինքը իշխանը համաձայնվեց գնալ, գուցե թե իրեն և իր երկրի համար լավ լինի։ Եվ ամեն որ առ աստված աղոթում էր նրա համար, որ խաղաղությամբ նրան վերադարձնի այստեղ, որովհետև նա բնավորությամբ բարի էր, ավելի ևս հույս ունեին, թե նրա վերադարձով ինչ-որ բան կշահեն։

Իսկ նա գնաց, ներկայացավ մեծ արքային, նաև ցույց տվեց նրա զորապետների գրությունները և հիշեցրեց նրա մոտ գալու պատճառները՝ թե եկել է նրան հնազանդվելու։ Երբ մեծ արքան այս լսեց, սիրով ընդունեց նրան. թաթար ցեղից նաև նրան կին տվեց և ետ ուղարկեց իր երկիրը։ Նաև գրեց իր զորավարներին, որ նրան հանձնեն իր երկիրը և նրանով նվաճեն բոլոր ապստամբներին. իսկ և իսկ այսպես էլ եղավ։

Որովհետև երբ նա եկավ իր երկիրը, և զորապետները կատարեցին իրենց արքայի հրամանը, հնազանդության ու հարկատվության եկան նրանց՝ Զաքարեի որդի Շահնշահը, Վահրամ իշխանը և իր որդի Աղբուղան, Ջալալ կոչված Հասանը՝ Խաչենի կողմերի իշխանը և ուրիշ շատերը։ Յուրաքանչյուրի երկիրը տվին իրեն և միաժամանակ ներում շնորհեցին։

Ապա սկսեցին հարկապահանջությամբ, գնալ-գալով ու զինվորներով նեղել նրանց. Թեպետև այս ամենով, և ավելի քան սրանցով, նեղություն էին տալիս նրանց, բայց ոչ ոքի չէին սպանում։ Երբ որոշ տարիներ անցան, Ավագ իշխանը նեղացավ նրանցից, որովհետև չափազանց մլատ էին, և նա չէր կարողանում ամենքին իրենց կամեցածի չափով գոհացնել. որովհետև միայն ուտելով ու խմելով չէին գոհանում, այլև պահանջում էին ձիեր, թանկագին հագուստներ, քանի որ չափազանց ձիասեր էին։ Այս պատճառով ամբողջ երկրից ձին կտրեցին. ոչ ոք չէր համարձակվում բացարձակ ձիեր կամ ջորիներ պահել, պահում էին զինվորական կարիքից ստիպված և այն էլ ծածուկ։ Ուր որ գտնում, հափշտակում էին, ավելի ևս, որի վրա իրենց նշանն էին հայտնաբերում, քանի որ իրենց բոլոր անասունները և նրանք, որ բռնագրավվում էին, յուրաքանչյուր զորապետ իր նշանով կնքում էր՝ խարելով մարմնի որևէ մասը։ Թեպետև գնում էին նրանցից, բայց մի այլ գնդից հանդիպողը առնում էր նրանցից և պատժում իբրև գողերի։ Այս բանը անում էին ոչ միայն մեծամեծ մարդիկ, այլև փոքրերն էլ։ Եվ մանավանդ ավելի խիստ էին անում այս, երբ մեռավ զորքի Չաղատա անունով զորավարը։ Որովհետև նրան գիշերով սպանեցին մուլհեդներ կոչվածները, այս պատճառով զորքի մեջ գտնված գերիներին սարսափելի կոտորեցին։ Իսկ այս մարդը բարեկամ էր Ավագի հետ. երբ նա մեռավ, բազմաթիվ թշնամիներ գլուխ բարձրացրին նրա դեմ։

Մի օր Ավագի տան մեջ նրանցից մեկը, և այն էլ ոչ շատ մեծավորներից, եկավ Ավագի սենյակը, ուր նա նստում էր։ Եվ երբ նա անմիջապես չվերկացավ նրան ընդառաջ, ձեռքին բռնած ձիու մտրակով զարկեց նրա գլխին։ Իշխանի սպասավորները այս տեսնելով՝ բարկացան իշխանին՝ իրենց տիրոջը անարգելու համար. վեր կացան այդ մարդուն ծեծելու։ Եվ իշխանը, չնայած զայրացել էր, արգելեց նրանց։ Այդ մարդը, որի անունը Ջոչ-Բուղա էր, գնաց՝ իր հետ վերցնելով նաև այլ ընկերների, կամեցավ գիշերով սպանել իշխանին։ Նա իմացավ և մազապուրծ փախավ վրաց թագուհու մոտ, որովհետև նա դեռևս պատանի էր և քաշվել էր Վրաստանի շատ ամուր վայրերը։



Այդպիսի անկարգությունները առավել ևս այն պատճառով էին գործում, քանի որ ամենքի գլուխը հանդիսացող Չարմաղան կոչված մեծ զորավարը դևից և ցավերից համրացել էր։ Բայց իշխանությունը չէին վերցնում նրա տանից, որովհետև նրա կինն ու որդիքը նրա տան կառավարիչների հետ միասին վարում էին իշխանությունը։ Մանավանդ թե խաղանը այսպես էր հրամայել, թեպետև մեռնի, ոսկորները ևս պետք է չբաժանեն զորքի հետ, որովհետև չափազանց հաջողակ է այդ մարդը և շնորհներով հարուստ։

Երբ Ավագը փախավ, մեծամեծները տխրեցին ու մեղադրեցին այն մարդուն։ Պատգամավորներ ուղարկեցին նրա ետևից, որ իրենցից չապստամբվի, և երդվեցին, որ նրան ոչ մի չար բան չեն անի. և նրա երկիրը հանձնեցին Շահնշահին, իբրև նրա* եղբորը։ Եվ այս անում էին ավելի վստահեցնելու համար։ Իսկ Ավագը թուղթ գրեց և ուղարկեց խաղանին, թե՝ «Քո ծառայությունից դուրս չեմ եկել, այլ փախել եմ սպանվելուց և ենթարկվում եմ քո հրամանին»։

Եվ մինչդեռ նա ուշանում էր գալու և սպասում էր մեծ խաղանի հրամանին, սրանք խուզարկելով՝ բերդերում թաքցրած նրա բոլոր գանձերը հանեցին։ Բայց դարձյալ պատգամներ էին ուղարկում մեկ մեկի ետևից Ավագին՝ իրենց մոտ վերադառնալու, քանի որ վախենում էին իրենց Ուրդայից։

Եվ երբ Ավագը եկավ զորաբանակը, իսկույն խաղանից հրաման հասավ իր զորքին, որ ոչ ոք չհանդգնի չար բան անել Ավագի հանդեպ, և թուղթ եկավ Ավագին ու պարգևներ նրան, որ համարձակ գա և չվախենա։ Ապա մեծարեցին նրան և զորքից հեռացրին այն մարդկանց, որոնք կամենում էին սպանել նրան։ Ապա նրան և նրա հետ Տոնղուզ ադա անունով մի իշխանի, որ եկել էր ղանի հրամանով հարկ առնելու բոլորից, ուղարկեցին վրաց Ռուսուդան թագուհու մոտ, որ նա հնազանդվի մեծ արքային։

Սրանք գնացին նրա մոտ, հորդորեցին նրան հնազանդվել մեծ արքային և չվախենալ։ Նրանից զորք առնելով՝ եկան

---

* Բնագրում Եոցա, ճիշտ է Եորա, ինչպես ունեն բազմաթիվ ձեռագրեր։

իրենց ուղարկողների մոտ՝ խաղաղության և բարեկամության դաշինքով, որ թագուհին հնազանդ կմնա իր մանուկ Դավիթ որդով հանդերձ, որին նորընծա թագավորեցրել էր. և նրանք չդրժեցին ուխտը։

Լ.

## Խաչենի կողմերում տեղի ունեցած կոտորածի և բարեպաշտ իշխան Ջալալի մասին

Համառոտ նկարագրեցինք, թե ինչ կատարվեց մեր երկրում Թաթար կոչված մոլի ցեղերից։ Այժմ կխոսենք Խաչենի կողմերի և այնտեղ կատարվածների մասին, որովհետև ամեն կողմ սփռել էին իրենց ասպատակները. նաև վիճակահանությամբ բաժանված էր [Խաչենը]։ Այնտեղ հասան գլխավորներից ոմանք ծանր զորքով ու գնդով և բանակի ամբողջ ժողովրդով ու կազմությամբ։ Գերեցին ու սպանեցին հարթավայրերում գտնվածներից շատերին։ Ապա կռվով ճակատամարտեցին և ամրոցների և ամուր վայրերում գտնվածների դեմ. ոմանց խաբեությամբ, ոմանց էլ բռնի կռվով իջեցրին. մի մասին սպանեցին, մի մասին գերեցին։ Բայց շատերը ամրացել էին ապահով վայրերում, որոնց տեղի անմատչելիության պատճառով հավախաղաց էին կոչում։ Նրանք, որ ապաստանել էին ամուր տեղերում, աներկյուղ էին։

Բայց քանի որ կործանումը տիրոջից էր, անսպասելի մի ժամի գաղտագողի բարձրանալով [թաթարները] մտան ամրությունները և սրո ճարակ տվին բազմությանը, մի մասին էլ դահավեժ արին։ Ընկածների բազմությունից հողը ծածկըվեց, իսկ արյունը առու կազմած ջրի նման հոսում էր։ Ոչ ոքի չխնայեցին։ Իսկ ոսկորները երկար ժամանակ անց քարակույտերի նման դիզված երևում էին։

Գնացին նաև Ջալալ անվանված բարեպաշտ իշխան Հասանի վրա։ Սա մեծամեծ իշխաններ Զաքարեի և Իվանեի քեռորդին էր, մի բարեպաշտ, աստվածասեր, հեզ ու հանդարտ, ողորմած ու աղքատասեր, անապատականների նման



աղոթքների ու պաշտամունքների մեջ ճգնող։ Նրանից էլ լինեք, անխափան կատարում էր ցերեկվա և գիշերվա պաշտամունքը, ինչպես վանականները։ Եվ Փրկչի հարության հիշատակը կիրակի անքուն ու արթուն ոտքի վրա էր անցկացնում։ Չափազանց քահանայասեր և ուսումնասեր էր ու աստվածային կտակարանների [Սուրբ գրքի] ընթերցող։

Այլև բարեպաշտուհի էր սրա մայրը. իր Տանկիկ կոչված ամուսին Վախթանգի մահից հետո, անավարտեց իր երեք որդիներ Ջալալին, Զաքարեին ու Իվանեին, գնաց սուրբ քաղաք Երուսաղեմ և բազմաթիվ տարիներ ճգնությամբ անցկացրեց այնտեղ. զարմացնում էր բոլոր տեսնողներին ու լսողներին, քանի որ իր ամբողջ ունեցվածքը Աբգարի կնոջ՝ Հեղինեի* նման ծախսելով աղքատների ու կարոտյալների վրա՝ ինքը իր ձեռագործով էր կերակրվում։ Եվ այնտեղ էլ մեռավ, որին Աստված փառավորեց իբրև իր փառավորիչի՝ կամարաձև լույս կանգնեցնելով** նրա գերեզմանի վրա՝ ուրիշներին նույնպիսի բարեգործությունների հորդորելու համար։

Երբ այս իմաստուն իշխանը տեսավ անօրենների հարձակումը, իր երկրի բնակիչներին ամրացրեց պարսկերեն Լեռնով Խոխանաբերդ[281] կոչված ամրոցում։ Երբ [թաթարները] եկան այն պաշարելու, տեսան, որ հնարավոր չէ այդ ամրությունները գրավել, հաշտությամբ ու խաղաղությամբ նրան կանչեցին իրենց մոտ։ Նա իմաստնաբար*** գոհացրեց նրանց։ Հետո բազմաթիվ ընծաներով ինքն էլ նրանց մոտ գնաց։ Նրան մեծարելով, նրա երկիրը հանձնեցին իրեն և այն էլ մեծացնելով։ Նրան հրամայեցին ամեն տարի իրենց հետ պատերազմի գնալ և հավատարմությամբ հնազանդ մնալ իրենց։ Իսկ նա խոհեմաբար կարգավորեց իր երկիրը. ինչ որ կարող էր առնել երթևեկողների կարիքների համար, առնում էր, երբ գալիս էին նրանց մոտ. թե ուտելիք և թե այլ ինչ ինչ-որ առնում պահում էր ու իր կողմից ավելացնելով՝ տալիս էր նրանց, երբ որ նրա մոտ էին գալիս, և [նրանք] երկիրն

* Եդեսիայի Աբգար թագավորի կինը, որ ամուսնու մահից հետո իր ողջ հարստությունը բաժանեց աղքատներին (մեռել է 42 թվ.)։

** Բնագրում կացեալ՝ ագգում ենք կացուցեալ և թարգմանում այդպես։

*** Բնագրում՝ իմաստաբար, ճիշտն է՝ իմաստնաբար։

նեղություն չէին տալիս, բայց թե նրա մոտ էին գալիս։ Իսկ այլ երկրներում այսպես չէին վարվում, այլ ուր որ հասնում էին, ամեն տեղ նեղում էին նրանց։

## ԼԱ.

## Իր կառուցած եկեղեցու մասին

*[Սա] Գանձասար[282] կոչված վանքում, նախնիների հանգիստ, իրենց շիրմատեղում կառուցեց գեղեցկազարդ հորինվածքով, գմբեթաձև, երկնանման, սուրբ փառքի տաճար մի եկեղեցի, ուր մշտապես պատարագվում է սուրբ գառը, որ վերցնում է աշխարհի մեղքերը։ Շատ տարիներ չարչարվեցին նրա վրա։*

*Երբ ավարտվեց, բազմաթիվ մեծահանդես տոն կատարեց եկեղեցին օրհնելու համար։ Այնտեղ էր նաև Աղվանքի կաթողիկոս տեր Ներսեսը բազմաթիվ եպիսկոպոսներով, այլև մեծ վարդապետ Վանականը շատ աշակերտներով։ Այնտեղ էին նաև Գրիգորիս* և տեր Եղիա սուրբ վարդապետները՝ [նրանք] միմյանց հարազատ էին, որոնց աստված զարդարել էր երկու մարդով. այս կյանքից փոխադրվեցին Քրիստոսի մոտ և այժմ են դրված խաղաղի աստվածափառ տանը [գերեզմանատանը]։ Առաջինը [մեռել է] վեց հարյուր ութսունյոթ թվին, իսկ Եղիան՝ վեց հարյուր իննսունութ (1238, 1249)։ Եկեղեցին օրհնեցին բազմաթիվ քահանաներով, որոնց թիվը հաշվում էին յոթ հարյուր։*

*Եվ երբ [եկեղեցին] օծմամբ միրոնվեց, մեծ ճաշկերույթ սարքեց [Ջալալը]. ինքն իր իսկ ձեռքով մատուցում էր նստածներին. և յուրաքանչյուրին նրա պատվի համապատասխան առատությամբ նվերներ տվեց ու ճամփու դրեց ամբոխին։ Այս տեղի ունեցավ հայոց վեց հարյուր ութսունինը թվականին (1240 թ.) Վարդավառի մեծ տոնի օրը։*

*Նրա կին Մամքանը եկեղեցու դռանը կառուցեց հրաշալի*

---

* Ըստ Կիրակոսի Գրիգորիսը վախճանվել է 1238 թ., իսկ բացման հանդեսը տեղի է ունեցել 1240 թ.։ Թյուրիմացություն կա։



*զավթել, իսկ ինքը իրեն ամբողջովին առաքինության սիրո մեջ ձգում էր պասերով, աղոթքներով ու ընթերցանությամբ. գիշեր-ցերեկ միշտ պահպանում էր աչքերը պատմի- չափը քան գրածի։*

## ԼԲ.

## Թաթարների կերպարանքը ցույց տալու մի փոքրիկ նկարագրություն

*[illegible] հուսով ակնկալում ենք մեզ պատած այս նեղությունից փրկություն, մտադրվեցինք մեր աչքի եկող սերունդներին հիշատակ թողնել, ուստի համառոտ նկարագրենք հետաքրքրասերների համար նրանց կերպարանքն ու լեզուն։*

*Կերպարանքով ու տեսքով ահավոր տգեղ էին և զարհուրելի. մորուք չունեին, բայց ոմանք սակավաթիվ մազ ունեին շրթունքին կամ կզակին։ Աչքերը նեղ էին ու արագատես, ձայնը նուրբ ու սուր, երկարակյաց էին ու դիմացկուն։*

*Երբ լինում էր, հաճախ էին անհագ ուտում ու խմում, իսկ երբ չկար, ժուժկալ էին։ Ուտում էին ամեն տեսակի կենդանի՝ մաքուր ու անմաքուր. ձիու միսը ավելի էին գերադասում. կտոր-կտոր հոշում էին, խաշում, կամ խորովում էին առանց աղի և ապա մանր կտրատում էին, թացացնում աղաջրում և այդպես ուտում. ոմանք ուղտերի նման ծնկում էին, ոմանք էլ նստած էին ուտում։ Ուտելիս համահավասար բաժանում էին տերերին ու ծառաներին, իսկ կումիս կամ ըմպելիք խմելիս՝ մեկը մեծ ամանով վերցնում էր իր ձեռքը և հետը բաժակով մեծ ամանից վերցնում շաղ էր տալիս դեպի երկինք. ապա արևելք, արևմուտք, հյուսիս, հարավ, և ապա ինքը՝ շաղ տվողը մի քիչ խմում էր նրանից և մատուցում էր ավագագույններին։ Իսկ եթե որևէ մեկը նրանց համար ուտելիք կամ ըմպելիք էր բերում, նախ բերողին էին տալիս ուտելու և խմելու, իսկ հետո իրենք էին ուտում ու խմում, որպեսզի մահացու դեղերից չվնասվեն։*

*Ինչքան կին կամենում էին, այնքան առնում էին, բայց իրենց կանանց հետ պոռնիկ չէին պահում. իսկ որտեղ հանդիպում էին այլազգի կանանց, անխտիր խառնակվում էին։*

*Գաղությանը ասում էին, մինչև իսկ [գողերին] դաժանորեն սպանում էին։ Որևէ պաշտամունք կամ երկրպագություն չէին կատարում, բայց ամեն բանում շատ-շատ հիշատակում էին Աստծու անունը. այն՝ թե լինի՝ աստծուն, դժոխություն էին հայտնում, կամ թե ինչ-որ բան ասված էին անվանում, (թե ինչ էր) մենք չգիտենք, և անգամ իրենք չգիտեին։ Բայց սովորաբար այն էին ասում, թե իրենց արքան ազգակից է աստծուն։ Երկինքը առնված վերցրել է իր համար բաժին, իսկ երկիրը տվել է խաղանին։ Որովհետև ասում էին խաղանի հայրը Չանգզ ղանը ապամարդու սերմից չի սերվել, այլ ինչ-որ լույս է եկել անտեսությից, տան երդիկով ներս է մտել և մորն ասել է, թե՝ «Կհղիանաս և ինքնակալ որդի կծնես երկրի համար»։ Եվ սրանից էին նրան ծնված համարում։*

*Այս բանը ինձ պատմեց Մարզպանի որդի՝ Սաւանբեկի, Սարգսի, Ամիրայի եղբայր Գրիգոր իշխանը, որ Մամիկոնյան տոհմից էր, և որը ինքը լսել էր Ղութան նոյին անունով մի մեծ մարդուց, որ բարձր ավագներից էր, երբ նա մի օր փոքրիկ մանուկների սովորեցնում էր։*

*Եվ երբ նրանցից մեկը մեռնում էր, կամ սպանում էին, կար, որ շատ օրեր իրենց հետ շրջեցնում էին, որովհետև դևը մտնում էր [նրա մեջ] և այնտեղից շատ ցնդաբանություններ էր դուրս տալիս. և կար, որ այրում էին, մի մասին էլ հողի մեջ խոր փորելով թաղում էին և նրա հետ դնում էին իր զենքն ու հագուստը, ոսկին և արծաթը, ինչ որ իր բաժինն էր։ Իսկ եթե մեծավորներից մեկն էր լինում, ծառաներից և աղախիններից նույնպես նրա հետ դնում էին գերեզմանի մեջ, որպեսզի, ասում էին, սպասավորեն նրան. նաև ձի (էին դնում), որովհետև, ասում էին, այնտեղ սաստիկ պատերազմ է լինում։ Ինչ մեռելի հիշատակ որ կամենում էին նշել, ձիու փորը ճեղքում էին և ամբողջ միսը առանց ոսկորի նրա միջով քաշում էին, ապա փորոտիքն ու ոսկորները այրում էին և ձիու մորթին կարում էին, որպես թե ամբողջ մարմինը պարփակում է։ Սրում էին մի մեծ փայտ, մտցնում էին որովայնի միջով, բերանից հանում և այդպես բարձրացնում էին ծառի վրա կամ մի բարձրավանդակ տեղ։*

*Այլև նրանց կանայք կախարդ էին, ամեն ինչ գուշակում էին. առանց կախարդների ու գյութողների թույլտվության ոչ*



*մի ճանապարհ չէին գնում. [ճանապարհ էին ընկնում] միայն եթե նրանք թույլ էին տալիս։*

*Այլև նրանց լեզուն բարբարոսական ու անծանոթ է մեզ։ Որովհետև աստծուն ասում էին՝* թանգրի, *մարդուն՝* էրե, հառան. *կնոջը՝* էմե, աֆջի. *հորը՝* էչկա. *մորը՝* անա, *եղբորը՝* աղա, *քրոջը՝* ականչի, *գլուխը՝* թիրոն, *աչքերը՝* նիտուն, *ականջները՝* չիքին. *մորուքը՝* սախալ. *երեսը՝* յուզ, նիուր. *բերանը՝* աման, *ատամը՝* սխուր, սիդուն. *հացը՝* օթմակ, *եզը՝* օկար, *կովը՝* ունեն, *ոչխարը՝* ղոյնա, *գառը՝* ղուրղան, *այծը՝* իման, *ձին՝* մորի, *ջորին՝* լաւս, *ուղտը՝* թամաղ, *շունը՝* նոխա, *գայլը՝* չինա, *արջը՝* այտոյա, *աղվեսը՝* հոնդան, *նապաստակը՝* թաբլղա, թուլա. *հավը՝* թախյա, *աղավնին՝* կոկուչին, *արծիվը՝* բուրղութ, դուշ, *ջուրը՝* ուսուն, *գինին՝* դարասու[ն], *ծովը՝* նաւուր-տանգըզ, *գետը՝* մուրան-ուլանուս. *թուրը՝* իլ-դու, *աղեղը՝* նում, *նետը՝* սում, *թագավորին՝* մելիք, *պարոնին՝* նոյին, *մեծ պարոնին՝* եքա նոյին, *երկիրը՝* էլ, իրկան, *երկինքը՝* գոգա, *հրեշտակը՝* ճարան, *լուսինը՝* սարա, *աստղերը՝* սարղա, ճառում. *լույսը՝* օտոր, *գիշերը՝* սույնի, *գրագիրն՝* բիթիկչի, *սատանային՝* բարահուտ, էլեպ *և այլ այսպիսի բարբարոսական անուններ, որոնք բազմաթիվ տարիներ մեզ անծանոթ են եղել, իսկ այժմ ակամայից ծանոթացանք։*

*Երևելի գլխավորները, որոնք առաջին դեմքերն էին, սրանք են. առաջինը, որ գլխավորն է ու ամբողջ զորքի հրամանատարը՝ Չարմաղան նոյինն է, մի իմաստուն ու պատվավոր մարդ էր. նրան աթոռակիցներ էին՝ Բաչու նոյինը, Ղաթուն նոյինը, Տութուն նոյինը և Չաղաթան, որ զորքի դատավորն էր. և որին ասում էին մուղհեդները։ Եվ այլ բազմաթիվ գլխավորներ կային ու անհամար զորք։*

## ԼԹ.

## Սարի Շաքանի մասին

*Ամենքին կյանք կամեցող նախախնամ աստված իր մարդասիրությամբ նրանց [թաթարների] մեջ մի մարդ երևան բերեց. սա երկյուղած, աստվածապաշտ, ազգով ասորի էր,*

որին* նրանց խաղան կոչված արքան հայր էր անվանել. նրա անունը Սիմեոն էր, Ռաբան-աթա էին կոչում. ռաբան ասորերեն ուսուցիչ՝, իսկ աթա թաթարերեն հայր է [նշանակում]։ Երբ սա լսեց քրիստոնյաների անխնա կոտորածի մասին, որ կատարվում էր թաթարների զորքերի կողմից, մոտեցավ խաղանին, նրանից իր զորքին ուղղված թուղթ խնդրեց, որպեսզի այնպես համահավասար անմեղ մարդկանց չկոտորեն, որոնք նրանց դեմ չեն պատերազմում, այլ նրանց [կենդանի] թողնել, որպեսզի հարկատու լինեն նրան [խաղանին]։ Իսկ նա հենց նույն իրեն [Սիմեոնին] մեծ ու պայծառ շքով ուղարկեց՝ հրովարտակ գրելով իր զորապետներին, որպեսզի բոլորը ենթարկվեն նրա [Սիմեոնի] հրամանին։

Նա եկավ, շատ օգտակար եղավ քրիստոնյաներին՝ ազատելով մահից ու գերությունից։ Նաև եկեղեցիներ կառուցեց արաբների քաղաքներում, որտեղ չէին հանդգնում Քրիստոսի անունը տալ. նույն ատամեն Թավրիզ ու Նախիջևան քաղաքներում, ուր քրիստոնյաները ավելի շատ թշնամիներ ունեին, որտեղ քրիստոնյաները չէին համարձակվում բացահայտ երևալ կամ շրջել, ուր մնաց եկեղեցի կամ խաչ կանգնեցնեին։ Իսկ նա կանգնեցրեց խաչ ու եկեղեցի և զանգեր հնչեցնել տվեց գիշեր ու ցերեկ. ննջեցյալներին բացահայտ թաղման էին տանում խաչվառներով, ավետարանով ու արարողությամբ, ինչպես քրիստոնյաների կարգն է։ Ընդդիմացողներին մահվան էր ենթարկում։ Ոչ ոք չէր հանդգնում նրա հրամանին հակառակ կանգնել, ընդհակառակը թաթարների բոլոր զորքերը հարգում էին նրան, ինչպես իրենց արքային և առանց նրա ոչինչ չէին մտածում կամ անում։

Նրա վաճառական մարդիկ, որոնք ունեին նրա տամղան, այսինքն՝ նշանը և թուղթը, համարձակ շրջում էին ամբողջ երկրով** և ոչ ոք չէր հանդգնում մոտենալ նրանց, որոնք Սիմ-

———

* Բնագիրն է՝ Որ հայր անուանեալ էր արքային նոցա։ Այս նախադասությունը մենք թարգմանել ենք, որին նրանց արքան հայր էր անվանել. բստ այսմ՝ որ պետք է ուղղել զոր։

** Բնագրում՝ ընդ ամենայն աշխարհս. ճիշտը համարում ենք՝ ընդամենայն աշխարհն բստ սովորականների և թարգմանում՝ ամբողջ երկրով։



եոնի անունը տալիս էին։ Թաթարների բոլոր զորապետները իրենց ավարից ընծա էին մատուցում նրան։

Ինքը վարքով պարկեշտ մարդ էր, նույնպես էր իր սենյակների ու ըմպելիքների մեջ. օրական մի անգամ երեկոները սակայն ինչ կերակուր էր ճաշակում։ Այս ձևով ստոված այցելեց իր ժողովրդին պանդխտության մեջ այս մարդու միջոցով։ Թաթարներից շատերին մկրտեց, և ամեն ոք նրա անշելի վարքի և մեծաշուք պատվի համար սարսափում ու երկնչում էր նրանից։

Երբ այս նկարագրությունը տվյալ պահին եղավ, հայոց վեց հարյուր իննսուն թվականն էր (1241 թ.), Կիլիկիայում Հեթում բարեպաշտի հայոց թագավորության, իր եղբայր Սմբատի զորավարության, սրա հոր իշխանաց իշխան Կոստանդինի, Գրիգորի սուրբ աթոռի կաթողիկոս ծերունի և առաքինի Կոստանդինոսի կաթողիկոսության, որ նստում էր Հռոմկլայում[283], տեր Բարսեղի՝ Հեթում թագավորի եղբոր արքեպիսկոպոսության, որին պահում էին կաթողիկոսության սուրբ աթոռի փոխանորդ, հեղ ու մարդասեր տեր Ներսեսի՝ Ասորվոց կաթողիկոսության, որ այս օրերին նստում էր Միափարկին[261] գավառի Խամշի կոչված վանքում, սրա նոր ձեռնադրված եղբորորդի Հովհաննեսի արքեպիսկոպոսության, բոլորիս վրա թաթարների բռնակալության և մեր կյանքի յոթանասունամյա, մի քիչ ավելի կամ պակաս, ժամանակն էր։

## ԼԴ.

## Թեոդուպոլսի ավերման մասին

Այժմ հայոց վեց հարյուր իննսունմեկ թվականը (1242 թ.) սկսվելիս խաղանից հրովարտակ եկավ արևելքում գտնվող զորքերին ու զորապետներին, որ համբացած Չարմաղանի փոխարեն զորավար ու առաջնորդ դարձնեն զորքից [թերևս ուղղելի զորագլխաց] Բաչու-Նուրչի անունով մեկին. առաջնորդության վիճակը նրան ընկավ, որովհետև հմայությամբ էին առաջնորդվում։

Արդ՝ երբ նա իշխանությունը ստանձնեց, խսկույն իր իշ-

խանության ենթակա բոլոր ազգերից զորք հավաքեց և գնաց Հոռոմների սուլթանի իշխանության ենթակա Հայոց երկիրը։ Հասնելով Կարին գավառը՝ պաշարեց Թեոդուպոլիսը, որ այժմ կոչվում է Կարին քաղաք, և բանակեց նրա շուրջը։ Նրանց մոտ պատգամավորներ ուղարկեց, որ գան հնազանդվեն իրենց։ Բայց նրանք չկամեցան գալ, այլ պատգամավորներին անարգանքով ետ դարձրին, իսկ իրենք բարձրանալով պարիսպների վրա, նախատում էին նրանց։

Իսկ երբ նրանք տեսան, թե չընդունեցին խաղաղության առաջարկը, ամեն կողմից քաղաքի պարիսպը բաժանեցին զորապետներին, որպեսզի ամբողջովին փլցնեն։ Եվ նրանք ջանք թափելով կանգնեցրին բազմաթիվ բաբաններ [քարընկեց], պարիսպը կործանեցին ու մտնելով ներս, բոլորին անգթորեն սրի ճարակ դարձրին. հափշտակեցին ինչքերն ու ստացվածքները և քաղաքը հրդեհեցին։ Այդ ժամանակ քաղաքը չափազանց բազմամարդ էր, որովհետև լցված էր քրիստոնյաներով ու մահմեդականներով, այլև ամբողջ գավառը այնտեղ էր հավաքված։

Այնտեղ կային մեծամեծ ու փոքր աստվածային գրքերի անթիվ կտակարաններ. դրանք գրաված այլազգիները թանկագինները չնչին գնով ծախում էին զորքի մեջ գտնվող քրիստոնյաներին։ Իսկ նրանք ուրախությամբ առնում էին՝ տարածվելով շատ գավառներում, բաժանում էին եկեղեցիներին ու վանքերին։ Այլև գերվածներից շատերին գնեցին՝ ազատ մարդկանց, կանանց, մանուկների, եպիսկոպոսների, քահանաների ու սարկավագների, որքան որ հնարավոր էր։ Գնեցին քրիստոնյա իշխանները՝ Ավագը, Շահնշահը, Վահրամի որդի Աղբուղան, Դոփիի որդի Գրիգոր Խաչենցին, որ մի աստվածավախ մարդ էր, նրանց զորքը, որոնց թող Քրիստոսը վարձահատույց լինի. և բոլորին ազատ արձակեցին՝ թողնելով իրենց կամքին, որտեղ ուզում են՝ մնան։

Եվ ոչ միայն Կարին քաղաքը ավերեցին [թաթարները], այլև հոռոմների սուլթանության իշխանությունից բազմաթիվ գավառներ։ Սուլթանը ոչինչ չկարողացավ անել, որովհետև նրանց երկյուղից թաքնվել-պահվել էր. մինչև իսկ ասում էին՝ վախճանվել է։ Իսկ թաթար զորքը այս բանը անելուց հետո,



մեծ ավարով ու խնդությամբ վերադարձավ Աղվանք՝ իր ձմեռային կայանը՝ Մուղան կոչված արգավանդ ու բերրի դաշտը, և այնտեղ ձմեռեց։

## ԼԵ.

## Սուլթանի ու թաթարների միջև տեղի ունեցած պատերազմի մասին

Մինչդեռ թաթարական զորքը ապահով տեղակայված էր Հայաստանի ու Աղվանքի բոլոր դաշտավայրերում, դեսպան* եկավ Ղիաթադին սուլթանից՝ գոռոզ ու սպառնական խոսքերով, ինչպես արաբների սովորույթն է, թե՝ «Դուք մի քաղաքի ավերումով այնպես կարծեցիք, թե հաղթեցիք իմ** զորությանը։ Իմ քաղաքները շատությունից անհամար են, իսկ իմ զորքերը թիվ չունեն։ Արդ՝ կաց սպասիր, ուր որ ես, և ես ինքս կգամ ձեզ կտեսնեմ կռվով ու պատերազմով»։ Եվ սրանց նման ուրիշ շատ խոսքերով մեծ-մեծ փքթում էր։ Պատգամավորը այս էլ է ասում, թե՝ «Սուլթանը պատրաստվել է ամառվանից հետո եկող ձմեռը այստեղ Մուղանի դաշտում կանանցով ու զորքերով ձմեռելու»։

Իսկ նրանք լսեցին, բնավ չզրգռվեցին կամ նրանց դեմ պարծենկոտ խոսքեր չասացին. այլ միայն այս պատասխանեց նրանց գլխավոր Բաչու նոյինը, թե՝ «Մեծ-մեծ բարբառեցիք, սակայն ում աստված կտա, նա էլ կհաղթի»։

Եվ այսպես պատգամավորները մեկ մեկի հետևից գալիս էին՝ նրանց ճակատամարտի շտապեցնելու համար։ Իսկ նրանք բնավ չշտապեցին, այլ հանգիստ հավաքեցին իրենց և իրենց իշխանության ներքո գտնվածների զորքերը, եկան մեր Հայաստան աշխարհը՝ մի խոտավետ վայր ամբողջ ժողովրդով։ Գիրացրին ձիերը և ապա դանդաղ մոտեցան այն

* Բնագրում՝ գալը դեսպանս։ Ճիշտ են տարընթերցվածները՝ դեսպան։ Մի պատվիրակ է եկել։ Նույն էջի 9-րդ տողում ասված է. եւ գայր առեր պատգամաւորն։ Դեսպան բառի վերջին ս-ն թյուրիմացություն է։

** Այսպես համարեցայք դուք աւերմամբ քաղաքի միոյ, եթէ յաղթեցաք նմա. զօրութեան նորա։ Նախ՝ անհասկանալի է, որ յաղթեցաք, պետք է լինի՝ յաղթեցիք։ Մի ձեռագիր չունի նմա և նորա-ի փոխարեն ունի իմոյ։ Նախադասության վերջին մասն է. Յաղթեցիք զօրութեան իմոյ։

տեղին, ուր սուլթանի բանակն էր գտնվում։ Որովհետև նա էլ իր տեղից բարձրացել էր իր իշխանության ենթակա Հայոց երկիրը՝ Ջման-կատուկ կոչված մի գյուղաքաղաքի մոտ՝ անթիվ բազմությամբ, կանանցով ու հարճերով, ոսկով ու արծաթով և ինչ ստացքեղեն որ նրա մեծությունը ուներ, բոլորը բարձել ու իր հետ բերել էր։ Այլև զվարճանալու համար բերել էր վայրի ձեռնասուն երեներ, բազմաթիվ սողուններ, մինչև իսկ մկներ ու կատուներ, որովհետև կամենում էր այդպիսով իրեն աներկյուղ ներկայացնել զորքին։

Իսկ Բաչու զորավարը իրենց խորագետ իմաստության համապատասխան զորքերը բաժանեց բազմաթիվ մասերի՝ քաջ զորապետների առաջնորդությամբ, իսկ զանազան ազգերից նրանց մոտ գտնվող եկամուտ զորքերը ցրեց, որպեսզի չդավաճանեն։ Ընտրեց բոլորից արիներին ու քաջերին, նշանակեց իրենց առաջապահներ, որոնք գնացին հանդիպեցին սուլթանի զորքին, ճակատամարտեցին և փախուստի մատնեցին նրանց։ Մազապուրծ փախավ նաև սուլթանը՝ տեղն ու տեղը թողնելով կահն ու կարասին։ Սրանք հետապնդելով՝ անխնա կոտորեցին զորքին՝ սրո ճարակ դարձնելով, իսկ հետո անցան սպանվածների կողոպուտին։

Երբ հիմնական բանակը եկավ, տեսան, որ սուլթանը փախել է, և նրա զորքը ջարդված էր։ Ապա սկսեցին ասպատակել բազմաթիվ կողմեր՝ ավարելու։ Քանդեցին շատ գավառներ, հավաքեցին ոսկի ու արծաթ, թանկագին հանդերձանքներ, ուղտեր, ձիեր, ջորիներ և անհամար անասուններ։

Գնացին շրջապատեցին Կապադովկիայի Կեսարիա քաղաքը և պաշարեցին այն, և որովհետև բնակիչները չհանձնըվեցին, բռնի գրավեցին ու բնակիչներին սրակոտոր արին. հափշտակեցին ինչ-որ քաղաքում կար և՝ քաղաքը ամայի թողնելով եկան Սեբաստիա։ Եվ որովհետև քաղաքի բնակիչները նախապես հանձնվել էին նրանց և ընծաներով ու նվերներով ընդառաջ էին գնացել, մարդու ձեռք չտվին, այլ հափշտակեցին քաղաքից մի մաս ավար, իրենց անունով գրավված համարեցին քաղաքը, վերակացուներ նշանակեցին, վերադարձան։

Եկան պաշարեցին Երզնկան և բազմաթիվ ճակատամարտեր տվին նրա դեմ. քաղաքի բնակիչները մեծ հարվածներ



հասցրին թաթար զորքերին։ Ապա սկսեցին խաբեությամբ՝ հաշտության պատրվակով դուրս կանչել. իսկ նրանք համաձայնվելով եկան, որովհետև ոչ մի տեղից օգնական չունեին։ Սրանց սրի քաշելով* կոտորեցին համահավասար տղամարդկանց ու կանանց. սակավաթիվ մանուկներ ու աղջիկներ ողջ թողեցին, [սրանց էլ] քշեցին գերության ու ստրկության։

Եվ այսպես բազմաթիվ գավառներ ու երկրներ ավերելով ու գերելով՝ եկան Տյուրիկե[284] կոչված քաղաքը։ Երբ քաղաքի բնակիչները իմացան, որ անհնարին է պատերազմով նրանց դիմադրել, կամավոր հանձնվեցին նրանց. դրանցից շատ հարստություն առնելով՝ քաղաքը անվնաս թողին և շատ ավարով ու մեծ ինչքությամբ վերադարձան իրենց ձմեռանոց բանակատեղերը՝ որը Հայաստան, որը Աղվանք՝ ողջ-առողջ, անվնաս, որովհետև բոլոր ազգերի խորտակումը և նրանց կործանումը տիրոջից էր։ Բայց նրանց հետ զինվորագրված քրիստոնյաները շատերին՝ քահանաների, կրոնավորների, ազատեցին գերեվարությունից. ոմանց բացարձակ, ոմանց գաղտնի։ Մանավանդ մեծամեծ իշխանները Ավագը, Շահնշահը, Վահրամը ու իր որդի Աղբուղան, խաչենցիներ Հասան Ջալալը, իր զորքը, ազգականները՝ Գրիգորը, Ջալալի մորաքրոջ որդի Գոփին և այլ իշխաններ ու նրանց զորքը իրենց կարողության չափով [քրիստոնյաներ ազատեցին]։ Եվ սա տեղի ունեցավ հայոց վեց հարյուր իննսուներկու թվականին (1243 թ.)։

## ԼԶ.

## Հայոց Հեթում թագավորի և այն մասին ինչ որ կատարվեց

Երբ այս բաները տեղի ունեցան, Հեթում արքան իշխում էր Կիլիկիային և նրա նահանգներին. երբ տեսավ, թե սուլթանը պարտվեց նրանց կողմից, նրանց մոտ պատգամավոր-

* Բնագիրն ունի՝ Որոց սուր ի վերայ եղեալ կատարեցին առ հասարակ։ Որոց ձևը անցյալ դերբայի մոտ կարող է դիտվել իբրև ենթակա, մինչդեռ դա պետք է համարել ի վերայ որոց սուր եղեալ։ Տարընթերցվածները միշտ ձևով տալիս են յորոց:

ներ և արժանի նվերներ ուղարկեց՝ որ իր հետ խաղաղության դաշինք կռնն, և ինքը նրանց հարկատու դառնա։ Նրանք որ եկան մեծ պալատը, հանդիպեցին Բաչու նոյինին, Չարմաղունի կնոջը՝ Ելթինա խաթունին և այլ մեծամեծ ավագանուն՝ իշխան Ջալալի միջոցով։ Երբ լսեցին արքայի պատգամները, տեսան ընծաները, նրանից խնդրեցին նաև իրենց հանձնել սուլթանի մորը, կնոջն ու դստերը, որոնք փախել էին այնտեղ [Կիլիկիա] դալթի հետևանքով։

Երբ Հեթում արքան լսեց, խիստ տխրեց և ասաց. «Ինձ համար լավ կլիներ, եթե իմ որդի Լևոնին ինձնից խնդրեին, քան թե նրանց»։ Բայց քանի որ նրանցից վախենում էր և որպեսզի մեծ չարիքների պատճառ չլինի այդ, իր կամքի հակառակ հանձնեց նրանց, այլև շատ ընծաներ տվեց նրանց, որոնք եկել էին նրանց տանելու։ Նրանք բերին ցույց տվին Բաչուին և այլ մեծավորներին։ Երբ սրանք տեսան, ուրախացան և մեծարանքներով հարգեցին արքայի պատգամավորներին. ձմռանը նրանց օրապահիկ նշանակեցին և ձիերին կեր, որպեսզի գարունը բացվելիս նրանց հետ գնան իրենց երկիրը։ Բարեկամության հաստատեցին արքայի հետ, իրենց հավատի համապատասխան գրություն տվին, որին էլ–տամղա էին կոչում։

Եվ այսպես այնտեղ մնացին՝ սպասելով գարնան եղանակին, երբ մյուս անգամ գնան սուլթանի ու նրա երկրի վրա։

## ԼԷ.

## Լամբրոնի Կոստանդին իշխանի և այն մասին, թե ինչ գործեր արեց Կիլիկիայում

Երբ դեռ Լևոն արքան կենդանի էր, նրա երկրում Լամբրոն անունով խիստ ամրակի մի բերդ կար։ Այն իշխանը, որ տիրում էր բերդին, անունը Հեթում էր, սա ապստամբվեց նրա դեմ [Լևոնի]։ Նա շատ ջանաց ապստամբին նվաճել, բայց չկարողացավ։ Ապա հետո խնամիության պատրվակով խորամանկությամբ խաբեց նրան, որպես թե իր եղբոր դուստրը տալիս է նրա որդի Օշինին կնության։ Բռնեց նրան և



նրա որդիներին չարչարեց, ամրոցը հանձնեցին նրան [Լևոնին]։ Նա առավ, այնտեղ դրեց իր մորը՝ տիկնանց տիկնոջը և անեծք դրեց. «Այլևս այն չհանձնել որևէ իշխանի*, միայն արքունի պետք է լինի, որովհետև միշտ, ասում է, նրա տերերը ամրության պատճառով ապստամբներ են եղել»։

Երբ Լևոնը վախճանվեց, և նրա թագավորությանը տիրեց նրա դուստր Զաբելը, իշխանաց իշխան Կոստանդինը իր հետ միաբանեց Հովհաննես կաթողիկոսին ու այլ իշխանների, թագավորեցրեց հասակով մանուկ իր որդի Հեթումին՝ նրան դարձնելով Լևոնի դստեր ամուսինը պրինցի որդու փոխարեն, որին բռնելով բանտարկեցին։

Սա [Կոստանդինը] կամեցավ իրեն համանուն Կոստանդինին՝ իր աներ Հեթումի որդուն իրեն թիկունք անել**։ Այս վերջինին է տալիս իրենց սեփական Լամբրոնը և սրան դարձնում է իր որդուն թագադիր։ Իսկ նա որոշ ժամանակ անց ըստ իրենց հայրենի սովորության ապստամբվեց իր քեռորդի Հեթում արքայից։ Թեպետև արքայահայր Կոստանդինը շատ ջանաց, և հենց նույն ինքը արքան, նրան չկարողացավ համոզել հնազանդության գալու, որովհետև հենվեց հոռոմների սուլթանի վրա և այսպես մնաց ապստամբի վիճակում։

Երբ հոռոմների սուլթանը փախավ թաթարներից, արքան Լամբրոնի բոլոր գյուղերն ու հանդերը իր իրավունքի տակ դցեց, ապստամբին միայն բերդը մնաց։ Ապա Կոստանդինը պատգամավորներ ուղարկեց արքայի մոտ, հաշտություն խնդրեց, համաձայնվելով որդիներին տալու ի ծառայություն արքայի, իսկ ինքը մնա բերդում։ Արքան չկամեցավ։ Երկու, երեք անգամ ուղարկեց, բայց թե արքան և թե հայրը չհամաձայնվեցին։

Ապա Կոստանդինը գնաց Իկոն, հոռոմների սուլթանից

* Բնագրում՝ իշխանին, ճիշտն է իշխանի։

** Կամեցաւ թիկունս օգնականութեան իւր առնել զորդին Հեթմոյ՝ զԿոստանդին համանուն հօր, զորդին Հեթմոյ՝ զաներն իւր։ Որոշ ձեռագրեր այս ամբողջի փոխարեն տալիս են՝ կամեցաւ թիկունս օգնականութեան իւր առնել զորդին Հեթմոյ՝ զաներն իւր, այսինքն՝ չունեն՝ զԿոստանդին համանուն իւր զորդին Հեթմոյ։ Ամենայն հավանականությամբ վերջին բերվածը ճշմարիտ է, որ հաստատվում է նաև զորդին Հեթմոյ բառակապակցության անհարկի կրկնությամբ։

զորք վերցրեց, որոնք այն ժամանակ թշնամի էին արքային, որովհետև հռոմեների սուլթանի մորը նա տվեց թաթարներին,— եկավ անսպասելի մի ժամանակ, երբ արքայական զորքերը ցրվել էին իրենց տեղերը, և մտավ երկիրը, ավերեց բազմաթիվ տներ ու ագարակներ՝ հրդեհելով, սպանությամբ ու գերությամբ. բազմաթիվ քրիստոնյաներ կոտորեց ու կողոպտեց. և այսպիսով շատ չարիքներ բերեց երկրի վրա վրիժառությամբ։

Իսկ երբ արքան տեսավ այս չարիքները, հավաքեց իր զորքերը, քաջությամբ հարձակվեց բազմության վրա, բոլորին սրի ճարակ արեց։ Փախավ միայն ապստամբ իշխանը և քչերը նրա հետ։ Այսպես յոթ անգամ ջարդ կերավ նրա կողմից, ապա մտավ իր ամրոցը և չէր համարձակվում գլուխը ծակից հանել։

ԼԸ.

## Դավթի թագավորության մասին

Բազմահնար ու խորամանկ նետողների ազգը շատ անգամ [պատգամավոր] ուղարկեց վրաց թագուհի Ռուզուդանի մոտ, որ գնա իրենց մոտ, կամ իր մանուկ որդի Դավթին զորքով իրենց տա։ Իսկ նա այս չարից. քիչ զորք է տալիս, թաթարական բանակում գտնվող Ավագի՝ Իվանեի որդու, ձեռքով ուղարկում է նրանց մոտ՝ ասելով. «Մինչև խաղաղի՝ ձեր արքայի մոտ իմ ուղարկած պատգամավորը չվերադառնա, չեմ կարող ձեզ մոտ գալ»։

Իսկ նրանք երբ ջարդեցին հռոմեների սուլթանին՝ նրա փեսային, գրավեցին նրա քաղաքներից շատերը, նրա մոտ պատգամավոր ուղարկեցին Վահրամ իշխանին, որ հնազանդության գա իրենց։ Նա գալիս իր հետ բերեց վրաց թագավոր՝ Ռուզուդան թագուհու եղբայր Գիորգի Լաշայի որդուն, որին [Ռուզուդանը] իր դստեր հետ դավով ուղարկել էր հռոմեների սուլթանի մոտ, որպեսզի ոչնչացնի նրան, որ չխլի իր թագավորությունը. և նա սուլթանի մոտ արգելափակված էր։

Վահրամը բերեց, թաթարական զորքին հայտնեց, թե՝ «Մեր արքայի որդին է և անմեղ տեղը զրկված է իր տերու-



թյունից»։ Իսկ նրանք հակառակ նրա հորաքրոջ թագավորեցրին նրան, հրամայեցին ըստ քրիստոնյաների կրոնի օծել և նրա հոր բոլոր իշխաններին կարգադրեցին հնազանդ մնալ նրան, և սա էլ պետք է նստի Տփղիս քաղաքում։ Թաթարներին ենթակա մեծամեծ իշխանները՝ Ավագը, որ զորավար էր, Զաքարիայի որդի Շահնշահը, Վահրամը և նրա որդի Աղբուղան նրան վերցրին տարան Մցխեթ, կանչեցին նաև վրաց կաթողիկոսին և նրան թագավոր օծեցին։ Նրա անունը Դավիթ էր։

Իսկ նրա հորաքույր Ռուզուդանը երբ այս լսեց, իր որդու՝ մյուս Դավթի հետ փախավ Աբխազիա ու Սվանեթիա և պատգամավորներ ուղարկեց թաթարական Բաթու անունով մյուս զորապետի մոտ, որ ղանի ազգականն էր և իշխում էր Ռուսաստանում, Օսեթիայում ու Դերբենդում գտնվող զորքերի վրա, և ղանից հետո [ամենամեծը] նա էր,— նրան հնազանդ մնալու. Նա հրամայեց, որ սա նստի Տփղիս, իսկ նրանք չընդդիմացան, որովհետև այդ օրերին ղանը մեռել էր։

ԼԹ.

## Աղվանքի կաթողիկոս տեր Ներսեսին մեծ պալատ կանչելու մասին

Մինչդեռ թաթար զորքը տեղակայված նստած էր ձմեռը Մուղանում՝ Հայաստանի ու Աղվանքի դաշտերում, վերևում հիշատակված ասորի Ռաբանը լսեց Աղվանքի կաթողիկոսի մասին և հայտնեց Չարմաղունի կին Ելթինա խաթունին, որ [ամուսնու] համրանալուց հետո վարում էր նրա իշխանությունը, թե՝ «Այս կողմերի քրիստոնյաների գլխավորը գաղտնի է նստել և մեզ չի այցելում»։ [Պատգամավոր] ուղարկեցին նրա մոտ, թե՝ «Ինչո՞ւ միայն դու չես այցելում մեզ. անմիջապես եկ մեզ մոտ. եթե կամավոր այդ չանես, քեզ նախատինքով բռնի կբերենք»։

Եվ որովհետև նա նստում էր Միափոր գավառում՝ Խամշի կոչված վանքում և ենթարկվում էր Ջալալի իշխանությանը, առանց նրան հարցնելու չհամարձակվեց գնալ։ Որպեսզի

թանկ չնստի իր ուղեգնացությունը», թաքնվեց նրանցից*. սպասավորներին ասաց, թե պատճառաբանեցեք, որ տանը չէ, այլ գնացել է Ավագի մոտ։ Եվ նրանք երկու, երեք անգամ սպառնալիքներով [պատգամավոր] ուղարկեցին, որ նրանց մոտ գնա։

Ապա թույլտվություն առավ Ավագից, ըստ հնարավորության ընծաներով գնաց Մուղանի դաշտը նրանց մոտ, բայց այնտեղ Ռուքանին չհանդիպեց, որովհետև նա Թավրիզ էր գնացել։ Բայց գնաց մեծ պալատը, տեսնվեց Ելթինա խաթունի հետ։ Նա սիրով ընդունեց սրան, բարձր մեծարանքներով պատվեց, նստեցրեց իր բոլոր մեծամեծներից բարձր, որոնք նրա մոտ էին հավաքվել նրա որդի Բորա նուինի հարսանիքի առթիվ։ Որովհետև նա ուզել էր Ղութուն նուին կոչված մի ոմն մեծի դստերը իր որդու համար կին, իսկ իր դստերը կնության էր տվել Ուսուռ նուին կոչված մի այլ ավագազունի։ Եվ այդ օրերին հարսանյաց ուրախության մեծ տոն էր նրանց մոտ։ Այդ առթիվ [Ելթինա խաթունը] կաթողիկոսին ասում է. «Շնորհավոր օր եկար»։ Իսկ նա իմաստնաբար** պատասխանեց, թե՝ «Ես իսկ ձեր ուրախության այս օրերը ընտրեցի և ապա եկա»։

Իսկ նա նրան [կաթողիկոսին] և նրա սպասավորներին հանձնեց իր եղբայրներ Սադեղ աղային ու Գորգոզին, որոնք հավատով քրիստոնյաներ էին և նոր էին եկել իրենց երկրից, մինչև որ ինքը հոգա հարսանիքի հոգսերը խրախճանքի օրերին։ Նրանք ընդունելով մեծ պատիվներով պատվում էին նրան։

Եվ երբ մի քիչ թեթևացան հոգսերից, նրան պարգևներ և ելտամղաներ*** տվին, որպեսզի ոչ ոք նրան նեղություն չտա։ Նրան տվին մողալ-թաթար առաջնորդ, որին տարավ շրջեցրեց իր վիճակ Աղվանքում, որովհետև երկար ժամանակ էր, որ ոչ ինքը և ոչ էլ իր նախորդները չէին համարձակվում շրջել իրենց վիճակներում [թեմերում] արյունարբու և գազանաբարո արաբների պատճառով։ Իսկ նա շրջելով իր վիճակներում [թեմերում]՝ նորից խաղաղությամբ վերադարձավ Խաչի վանքը՝ իր տեղը։

* Կետադրությունը փոխում ենք։

** Բնագրում՝ իմաստաբար, ուղղվել Հ՝ իմաստնաբար, որ ունեն այլ ձեռագրեր։

*** Ելտամղա, բառացի նշանակում է երկրի նշան (թաթարերեն). այստեղ ունի արտոնագիր, պետությունից տրված արտոնաթուղթ իմաստը։



## Խ.

## Վասպուրականի կողմերում բազմաթիվ գավառների վրա նրանց արշավելու մասին

Ղիաթադին սուլթանին փախցնելու երկրորդ տարեմուտին դարձյալ շարժվեցին գնացին Բզնունյաց կողմերը՝ Խլաթ քաղաքը. գրավելով այն տալիս են Ավագի քույր Թամթային, որ առաջ Աշրաֆ Մելիքի կինը եղած ժամանակ քաղաքի տերն էր եղել և գերվեց Խորազմեցի Ջալալադին սուլթանի կողմից։ Նրանցից [թաթարներից] դարձյալ գերվեց և ուղարկվեց ղանի մոտ ու երկար տարիներ այնտեղ մնաց։

Եվ երբ վրաց թագուհի Ռուզուդանը Համադոլա իշխանին պատգամավոր ուղարկեց ղանի մոտ, Համադոլան իր վերադարձին ղանից խնդրեց Թամթային և ղանի հրովարտակով նրան իր հետ բերեց, որպեսզի Մելիք Աշրաֆի կինը եղած ժամանակ նա ինչ որ ունեցել է, իրեն տան։

Նրանք կատարեցին իրենց արքայի հրամանները. նրան են տալիս Խլաթը իր շրջակա գավառներով, իսկ իրենք ասպատակում են տարիներ Միջագետքի բազմաթիվ կողմեր՝ Ամիթ, Ուռհա, Մծբին, Շամբին երկիրը և ուրիշ շատ գավառներ, [բայց] դատարկ վերադարձան։ Չնայած ոչ որ պատերազմով նրանց դեմ դուրս չեկավ, սակայն ամառվա շոգի հետևանքով նրանցից շատերը սաթահար եղան, մեռան, թե մարդ, թե ձի։

Ձմեռը եկան իրենց իջևանատեղը, հանգստացան։ Հրաման տվին Կարին քաղաքի՝ Թեոդուպոլսի շինության մասին։ Հավաքվեցին ցրված եղածները, թաքնվածները, գերությունից գերծվածները. կանչեցին նաև քաղաքի եպիսկոպոսատեր Սարգսին, որին բերեց Զաքարեի որդի իշխան Շահնշահը, ու գնաց։ Եվ սկսեցին վերստին շինել ավերված ու կործանված քաղաքը։

## ԽԱ.

## Հայոց Կոստանդին կաթողիկոսի կանոնական հրամանների մասին

*Իսկ երբ Հայոց առաջինի կաթողիկոսը՝ Կոստանդինը, տեսավ մեր Հայոց աշխարհի ավերն ու տառապանքները, որ քաշում էին թաթար հարկահանների ու զորքերի ձեռքից, մտքերի մեջ ընկնելով հասկացավ, որ այս ամենի պատճառը մեղքերն են, որովհետև ամեն մարդ ի հաճույս իր ջանասիրաբար մտածում էր չարիքներ գործել։ Որովհետև ամուսնության սուրբ օրենքի կարգը վերացավ և հեթանոսաբար արյունախառնություն էին անում՝ ազգականներին առնելով*. ում կամենում էին, թողնում էին, ում կամենում, առնում էին։ Պարկեշտությունը պահպանելու հոգս չէին քաշում, անխտիր հեթանոսների հետ խառնակվում էին։ Նաև այն, որ բոլոր չարիքներից ամենամեծն է, եպիսկոպոսները փողով ձեռնադրություն էին անում՝ աստծու պարգևները վաճառելով անարժաններին։ Մանուկներին, տգետներին, որ չէին կարողանում մարդկանց առաջ ուղիղ խոսել, աստծու և մարդկանց միջև միջնորդ էին դարձնում։ Անարժան քահանաները, պոռնկացածները, բացարձակ բոզեր պահողները քահանայություն էին անում։ Եվ այլ շատ չարիքներ, որ գործում էին մեծամեծներից մինչև փոքրերը. ըստ այսմ, թե՝ «Քահանաներն ու ժողովուրդը** միասին հիմարացան, իսկ կշտամբիչ ու ոք չկար»։*

*Այս ամենի պատճառով շտապեց [Կոստանդինը] շրջաբերական թղթեր և ընդհանրական կանոններ գրել։ Թղթի հետ ուղարկեց նաև իմաստուն ու հանճարեղ վարդապետ Վարդանին, որ աղոթելու համար գնացել էր Երուսաղեմ երկրպագելու [Քրիստոսի] մարդեղության սուրբ տեղերին։ Եվ շրջեց սուրբ տեղերը, եկավ Կիլիկիա քրիստոսապսակ Հեթում արքայի ու նրա եղբայրների մոտ։ Գնաց նաև կաթողիկոսի մոտ. սրան տեսնելով [կաթողիկոսը] շատ ուրախացավ և երկար ժամանակ իր մոտ պահեց, մտերմությամբ այնպես կապվեց նրա հետ, որ երբեք չէր կամենում նրանից բաժանվել։*

*Այս գործերի համար նրան և նրա հետ իր աշակերտներից ուղարկեց. գրեց բոլոր քաղաքներին, ավաններին, վանքերին, երեցներին* ու փառավոր իշխաններին, որպեսզի անուշադրության չմատնեն գրված կանոնները, որ նրանց հոգու փրկության համար են։ Եվ որովհետև ինքը ծերացած էր, իր փոխարեն վարդապետին ընդունեն։ Նրա կողմից գրվածները հետևյալներն են։*

## ԽԲ.

## Տեր Կոնստանդինի շրջաբերական թուղթը

*Ամենակալ սուրբ հոգու** խնամքների ազդումով այս գիրը իմ՝ Քրիստոսի ծառա Կոնստանդինի և նրա [Քրիստոսի] շնորհներով ամենայն Հայոց կաթողիկոսի ձեռքին է պատկանում, որը գրեցի իմ հոգու հույսերով արևելյան բոլոր կողմերի ընդհանուր հայությանը. նախ՝ սրբազան եպիսկոպոսներին, ապա երկնախումբ վանքերին, քրիստոսազգյաց ճգնավորների մենաստաններին, խոսքի սպասավորներին, զգաստակենցաղ առաջնորդներին, միակից միաբանություններին, այլև քրիստոսասեր իշխաններին, ազնվական ազատներին և ձեզ ենթակա պաշտոնական քահանաներին, քրիստոսազարդ ժողովրդին՝ տղամարդկանց, կանանց, ծերերին, երեխաներին և աստծու ամեն հասակի հոտին, որ գտնվում եք սուրբ առաքյալներ Թադեոսի, Բարդուղիմեոսի և մեծավաստակ նահատակ մեր լուսավորիչ Գրիգորի գավազանի իշխանության տակ, որոնց [ժողովրդին] ինձ տվեց աստծու ողորմու-*

* Բնագրում՝ առնելով, պետք է լինի՝ առնլով, որ ունեն որոշ ձեռագրեր։

** Բնագրում՝ ժողովուրդքն, ճիշտն է՝ ժողովուրդն։ Համեմատ. (Ես. ԻԴ, 7)։

* Գրեալ յամենայն քաղաքս, և յաւանս, և ի վանորայս երիցիս և յիշխանս փառաւորս։ Ուղղում ենք՝ ...և ի վանորայս, և յերիցիս, և յիշխանս փառաւորս։ Նամակը ուղղվում է ոչ թե երեցի վանքերին, այլ վանքերին ու երեցներին։

** Բնագրում՝ հոգւոյն աստուծոյ, ճիշտն է հոգւոյն սրբոյ, որ ունեն որոշ ձեռագրեր։

թյունը իբրև հոգևոր որդեգիրներ և անմարձ զավակներ, որոնց և ողջունում եմ երկնային շնորհներով, տենչագին կարոտով և ծնողական սիրով սուրբ եղբայրության ամրապահ խնամքների պաշտպանությամբ, աստվածընկալ սրբությունների և հայրապետական աթոռի շնորհների զորությամբ. այլև ինձ հետ առած բոլոր սրբերին ի բարեխոսություն՝ աղոթում եմ աստծուն, որ դուք զերծ լինեք երկու տեսակի բոլոր անախորժ պատահարներից։

Թող դուք իմանաք, որ պարտավորական գթով հոգում ենք ձեզ գիշեր-ցերեկ և հաղորդակից ենք լինում ձեր ուրախություններին բստ հայրենի օրենքների և սրբերի հրամանների ու պատվիրանների, որ և սակայն վաղ ժամանակներից մեր հանցանքների շատանալու հետ աստծու ցասման գավազանի հարվածներով շատացավ տրտմության բաժինը, և տերը մեզ խմեցրեց ուշաբարձ մրուր և արտասուք տառապանքի չափով, որ կրեց այս երկիրը. կործանված եկեղեցիների, հոգևոր գանձերի, մասմնավոր [դանձերի], տների, ունեցվածքի կողոպուտ, մանավանդ Քրիստոսի զավակների՝ մեր հոտի ու անդամների գերություն, որոնց վրա ողբացինք դառնաղուխ արտասուքներով և խավարատան սենյակներում՝ թափելու խորքում հավաքված մեր վերքի դառը կսկիծը։ Եվ որովհետև պատուհասը տիրոջից* էր, որի «գթությունները շատ են»**, «մեր մեղքերի համապատասխան չպատժեց մեզ տերը և ոչ էլ բստ մեր անօրենության հատուցեց մեզ»***, այլ նրա գթությունը մեզ պահեց իբրև հիշատակի մնացորդ**** նշխար, հայկական ցեղի զավակի անման սերմ և քրիստոսատունկ ճյուղերի հայրատունկ որթի ողկույզների օրհնության ճութ։ Սրանց՝ մեր ողջ մնացած որդիների աճման ու զարգացման և ավերված վայրերի կարգավորման, վերաշինման լույսը սակավ առ սակավ կթափի մեր տրտմությունը և կփարատի ձեր հոգու մուրը մեր դեմքերից*****։ Եվ կազդուրվելով կմխիթարվենք ու ոտքի կանգնելով կհոգանք աստծուց՝ նրա հարվածող ու բժշկող ձեռքին հավիտյան օրհնություն տալով։

Բայց առաջիկա ժամանակի երկյուղն ու կասկածը չեն թողնում ինձ, քանի որ աստծու բարկության նույն նյութը հանդիսացող մեր մեղքերը մեր մեջ հաստատվել է իբրև սատանա չար որոմների ցանողը՝ մեզ մոտ՝ եկեղեցիներում, իշխանների ու իշխողների մեջ գտնվելով։ Մենք գտնվում ենք մեր առաքյալների ու հայրապետների կանոններից ու սահմանադրություններից դուրս։ Եվ այս մեծագույն կործանության համար ցանկացա ճանապարհ որոնել և անձամբ գալ զգուշացնելու իմ այդ հոտին՝ Քրիստոս աստծու ինձ վստահած ժողովրդին՝ աղաչանքներով, բանագրությամբ, սպառնալիքներով և ամեն հնարներով ձեզնից վանել չարի ոտնքի զենքի կերպարանքը, որ մեղքն է, և ձեզ վերստին երկյուղով երկնեմ, մինչև որ ձեր մեջ Քրիստոսը նկարվի։

Իմ գալստյան համար ունեի և այլ պատճառներ. որովհետև ես ծեր մարդ եմ և հասել եմ գերեզմանի դուռը, իմ կյանքի մայրամուտին կարոտում եմ տեսնելու ձեզ՝ իմ հոգևոր որդյակներից, տալու ձեզ վերջին օրհնությունը և ձեզնից պահանջելու աղոթքներ ու պատարագներ իբրև դեպի Քրիստոսը իմ ճանապարհի օրապահիկ և որ դուք լինեք ինձ համար բարի հիշատակ՝ աստծու առաջ վարքով նշանավոր և հավատով անսխալ։ Եվ որովհետև այս ժամանակը շատ երկյուղալի է ու անկարգ, այդ ինձ հնարավորություն չավեց անձամբ գալ և իմ բաղձանքը կատարել։ Այս ասված այլ միջոցով ամրապնդեց իմ սրտափահար սիրտը. իմ փոխարեն ուղարկեցի ձեզ բեղմնավոր Վարդան Վարդապետին, որին ինձ ավեց աստծու նախախնամությունը՝ ինձ մոտ գցելով ձեր կողմերից հինգ տարուց ի վեր, որին երբ տեսա ու ճանաչեցի անհրաժեշտ չափով, դրան աստծու միջնորդությամբ կապեցի իմ անձին կյանքով ու մահվամբ, մեծ կարոտով ու սիրով հավիտյան ինձ հետ շղթայեցի։

Վերևում ձեզ գրած երկու մեծ ու կարևոր հանգամանքների համար դրան ուղարկեցի ձեզ մոտ աստծու հույսով իմ տեղը լրացնելու ոչ թե դրա ցանկությամբ ու խնդրանքով, այլ իմ սրտով ու կամքով համաձայնվեց և հրամանով հարկադրվեց։ Եվ ինչպես որ կենդանի մարմնից որևէ անդամ ցա-

* Բնագրում՝ տէառն. ճիշտն է՝ տեառնէ:

** Բ Թագ. ԻԴ 14. Ա Մնաց ԻԱ, 13։

*** Սաղմ. ՃԵ, 10։

**** Բնագրում՝ զմնացորդ. ճիշտն է մնացորդ և կամ՝ իբրև զմնացորդ:

***** Բնագրում՝ զմուր ազդյն ձեր, ուղիղ ենք համարում՝ զմուր ազգին ձեր:

վով համարում է*, դա ունի իմ սիրտը և խոսքը ամեն բանի վերաբերյալ աստծու պատշաճ պատվիրաններից է, և դրանով, ձեզ է բերում չափավոր ու դյուրըմբռնելի սահմանադրություն, որ քաղված է սուրբ հայրերի կանոններից ու պատվիրաններից եկեղեցականների ու աշխարհականների կարիքների համար։ Ուստի աղաչում եմ սրբերի բարեխոսությամբ, և դրան իմ փոխարինողն եմ համարում, որպեսզի սիրով ընդունեք դրանք, սուրբ գրքերի պատվիրանները և կատարեք ձեր փրկության ու աստծու ատյանում անդատապարտության համար։ Իսկ եթե որևէ մեկը չլսի, չընդունի ու չկատարի, աններելի մեջ կմնա, և իր արյունն ու աշխարհի կործանումը ահավորի ու մեծի ատյանի առաջ նրանից կպահանջվի։

Բայց մեծ հույս ունեմ աստծու վրա, որ ոչ ոք չի ընդդիմանա իր կյանքին ու փրկությանը. և ընդունողներից աղաչանքով պահանջում եմ՝ յուրաքանչյուր մեկդ օրինակեցեք կանոնական թուղթը, խնամքով հավիտյան պահեցեք և ամեն մեկին անդյալ դարձրեք. իսկ բոլոր եպիսկոպոսներդ իմ առաքած թուղթը ստորագրեցեք և ինձ ուղարկեցեք իմ վարդապետի միջոցով։ Այլև ամենապաշտելի ու երկրպագելի սրբությունները իմ անձից թող երկրպագություն ու աղոթքներ ընդունեն իմ վարդապետ Վարդանի և ձեր միջոցով։ Նույնպես ընդունեցեք և դուք, ինչպես իմ սրտից ու հավատից, դրա բերանով աղոթքների ու պատարագների խնդրանքները, որ մաղթում եմ՝ հուսալով մեծից ու փոքրից քավություն իմ պարտքերի ու հանցանքների։ Որովհետև ինչպես որ հայրերը պարտական են որդիներին գութ ու օրհնություն, այնպես էլ որդիները պարտավոր են հոր պարտքերը վճարել։

Եվ ես հավատով լցված, իմ ձեռքերի տարածումով կենդանի սրբերի միջնորդությամբ, երանուհի աստվածածնի ու բոլոր սրբերի աղոթքներով աստծուց խնդրում եմ, որպեսզի աստծու շարժած բոլոր պարգևները, օրհնություններն ու շնորհները, որոնք հայրը երկնավոր որդով ու սուրբ հոգով տվեց աշխարհին ու եկեղեցուն, և հայրերից անցավ որդիներին, այդ ամենը գա հանգչի ձեր հոգիներում, ձեր եկեղեցի-

* Թվում է, թե բնագրի համեմատ բառից հետո ինչ-որ բառ է պակասում, որովհետև համեմատության հաջորդ եզրը չկա. իսկ՝ «Իր ունի զիմ սիրտ և զբանս» չի կապվում նախորդի հետ։



ներում, ձեր աշխարհում, ձեր իշխանության մեջ և ձեր երեխաների հոգիներում՝ նրանց ի հանգիստ, ողջերին հոգու և մարմնի փրկություն. աճում ու բազմացում լինի նոր Իսրայելին՝ քրիստոնեական հոտին ավելի քան աստղերի շատությունն ու ավազահատիկները։ Թող երկնային շնորհներով օրհնվեն ձեր բոլոր ունեցվածքները՝ անշարժ ու շարժական և ագարակատեղն ու պտղաբերն ձեր անդաստանները, ձեր այգեստանները, և ամեն պտղաբերները երկնային ցողով ու աստծու շնորհներով լցվեն, որոնց վրա աստծու երկնավոր ու երկրավոր բոլոր մերձավորներն ասեն. «Լինի, լինի»։ Ողջ եղեք, և սրտով ձեռագրիս համար ներեցեք, քանի որ փափագեցի իմ ձեռքով ձեզ գրել։

Եկեղեցականներին դրեց նաև մյուս կանոնական թուղթը և ուղարկեց շրջաբերական թղթի հետ նրանց միջոցով՝ այսպես։

## ԽԳ.

## Հայոց կաթողիկոս տեր Կոստանդինի կանոնական սահմանադրությունը

Քրիստոսի ծառա և նրա շնորհներով ամենայն հայոց կաթողիկոս Կոստանդինս օրհնությամբ ու ողջությամբ և աստծու սիրով ծանուցում եմ Հայաստանյայց ողջ եկեղեցուն, սուրբ առաքյալներ Թադեոսի ու Բարդուղիմեոսի, մեծավաստակ նահատակ Գրիգորի և մեր կրոնավորության գավառի իշխանության տակ գտնվող վիճակներին.

Անսքեղագիր հրաման է այս, որ տարին երեք անգամ եկեղեցու առաջնորդները ժողովով քննեն եկեղեցու կարգերը, թե ինչպես պահպանեն հավիտենական սահմանադրությունը, որը սուրբ հոգին հաստատեց. պակասները լրացնեն, ելածուն արմատը պոկեն։ Այս պատվիրանը երկար ժամանակից ի վեր խափանվել է ազգիս ցիրուցան լինելու, հեռավորության և վտանգավոր ճանապարհների պատճառով։ Եվ որովհետև աստծու արդար դատաստանի իրավունքը չի մոռանում* աշ-

* Բնագիրն ունի յիշատակ առաւ, ճիշտն է յիշատակարար — հիշող, չմոռացող։

խարհի անկարգությունն ու անիրավությունը, իր բազում երկայնամտությունից ու ներողամտությունից հետո իր բարկության բաժակը խմեցրեց շատ ազգերի ու ժողովուրդների, որոնց հետ նաև մենք դատապարտվեցինք և պարտք տվինք մեր ազգակիցներով ու հոգևոր ուստրերով ու դուստրերով։ Քանզի մեղքերով ու անիրավությամբ լիքը աշխարհը լցվեց արյունով ու արտասուքով, կոտորածների ու գազանակուր եղածների դիակույտ ոսկորներով։ Իսկ սրից վերծ մնացածները անհարազատ ճանապարհով վտարվեցին օտար ազգերի։ Իսկ մեր փափկասուններն ու ազնվականները՝ Սիոնի որդիները, Քրիստոսի գառները, որոնք համահավասար էին ոսկու, արծաթի և թանկագին քարերի, իբրև անպետք ու թափելիք աղբ, արհամարհվեցին ու չճանաչվեցին։ Այլև սրբության երկրպագելի խաչերն ու սպասքները անարժանների ձեռքով անարժան պետքերի գործածվելով անարգվեցին՝ քաղաքների կործանման, գավառների ամայացման հետ, որոնք ոչ ոք չի կարող բովանդակապես պատմել և արժանավորապես ողբալ։ Բայց աստծու ողորմությունը մեզ համար թողեց կյանքի սերմ և հույս գալիք արևելյան այդ երկրում իբրև մեր հանդեպ աստծու երախտիքների հիշատակ, որ [եղավ] մեր սուրբ նախնիների աղոթքների շնորհիվ մեզ իբրև մխիթարություն իր բազում գթությունների հետևանքով։

Եվ դուք, որ ժողովրդապետներ եք այսօր և ժողովուրդ, և վանքեր, քաղաքներ ու գավառներ, բազմապիսի տառապանքներից հետո, որ դուք կրեցիք, ձեզանում կա օրհնություն, անման ու նախկին փառքին հասնելու հույս։ Քրիստոսի և մեր սեփական ժառանգությունն ու պարծանքի զավակներն եք ու հանձնվել եք մեզ հոգևոր պետքերի համար։ Այդ պատճառով բազում արտասուքներից հետո, որ ձեզ համար թափեցինք ջարդի, ավերման, մեղապարտ սրի կոտորածի այն օրերում, այսօր մխիթարվում ենք ողջ մնացածներովդ և գոհանում ենք աստծուց։ Նաև միշտ զարհուրում ենք ու դողում վախով ու երկյուղով միևնույն անցքերի, որ կրեցիք* քանի որ աստծու բարկության նույն պատճառները այսօր էլ կան շատերի մոտ,

* Բնագրում՝ կրեցաք, ճիշտն է կրեցէք: Համեմատի՛ր մի քանի տող վերև... բազմապիսի տառապանքներից հետո, որ դուք կրեցիք:



դրանք աստծու կամքից, կանոններից ու պատվիրաններից դուրս անցկացվող կյանքն ու վարքն են։ Այդ պատճառով երեք տարի առաջ մեր կաթողիկոսարանի սպասավորների ամբողջ կազմով Նիկիայի մերձակա բոլոր գավառների եպիսկոպոսներով գնացինք մեր քրիստոսասեր թագավոր Աբասի մոտ և մեր հրամանով ու նրա օժանդակությամբ հավաքեցինք եպիսկոպոսներին, վարդապետներին, միաբանից վանքերի առաջնորդներին, իշխաններին, իշխանավորներին, երևելի մարդկանց և մեծ ժողով գումարեցինք. քննեցինք աստծու և աստծուն մերձակա առաքյալների ու հայրապետների պատվիրաններն ու հրամանները և մեզ գտանք շատ բաներում մոլորված, դատապարտելի ու անարդարանալի. և ինչքան կարողացանք վայ տվինք մեզ ու ողբացինք։

Երկար քննությունից հետո բոլորի համաձայնությամբ և ստորագրությամբ գրեցինք սահմանադրություն ու կանոնադրություն չափավոր ծավալով ու դյուրհասկանալի և անհրաժեշտ դեպքում գրքերի բովանդակությունից հավաքեցինք։ Եվ ուխտեցինք աստծու, հրեշտակների ու մարդկանց առաջ դրված կանոնները իրենց ամբողջ զորությամբ ընդունել։ Եվ մեր հույսը դրեցինք աստծու օգնության վրա և սպասեցինք ժամանակի, թե հնար կլինի անձամբ գալ և այդտեղ լրացնել իմ կարոտության փափագը ձեր հանդեպ և ձեզնից ստորագրություն պահանջել ընդունված սահմանադրության համար, ինչպես որ մենք ենք [տվել]։ Եվ որովհետև հնարավորություն չեղավ, ուղարկեցինք նույն սահմանված կանոնները չափավոր հրովարտակով [կոնդակով], և պահանջում եմ ձեզնից աստծու վկայությամբ, առաքելական աթոռի և աստվածընկալ սրբություններիս շնորհով ու զորությամբ սուրբ առաքյալների և մեր սուրբ լուսավորչի առջև, որ անթերի կատարեք։

Եվ ընդունված կանոնադրությունը այս է.

(Ա) Եկեղեցում ամեն ձեռնադրություն, որ սուրբ հոգու շնորհն է, և որ տալիս է արժանավորներին, առանց փողի լինի ըստ կանոնների, որովհետև այն [փողը] Հուդայի ու կախարդ Սիմոնի ախտն է, որ խոտվեցին, իսկ նվերը նրանց չի վերաբերում, որ տեղ-տեղ ագահության ու տգիտության հետևանքով վերացած է։

Բ) Այսուհետև միայն արժանավորներն ու գիտունները առնեն եպիսկոպոսության աստիճան, մանրամասն քննությամբ ու երաշխավորությամբ և թեմի համաձայնությամբ, առանց կաշառքի. հասակով երեսուն տարեկանից ոչ պակաս։

Գ) Իսկ եպիսկոպոսի առաջին գործն այն է, որ եկեղեցու ուսման ուսուցիչներն ու ուսանողները մեծ հոգատարությամբ ինքը նշանակի անսայթաք կերպով. և երեխաները պետք է ունենան գիտուն և ուսումնական ուսուցիչներ։

Դ) Ապա երբ հասունանում են հասակով, ուսումով և մաքրությամբ, աստիճան է տալիս [եկեղեցին] իրենց ու դաստիարակների վկայությամբ՝ առանց վճարի. քահանին տարեկանից ոչ պակաս՝ քահանան, և քսանից ոչ պակաս՝ սարկավագը։

Ե) Իսկ քահանաները պսակն ու կնունքը եկեղեցիներում քաղցած վիճակում պետք է անեն և հաղորդ տան. իսկ եթե երեխայի մահվան երկյուղ կա, ինչ ժամանակ էլ լինի [կնունքը] պետք է անի առանց դրամի։

Զ) Ամեն քահանայագործություն [քահանայական արարողություն]՝ կնունք, պսակ և թաղում երկյուղածությամբ պետք է լինի՝ առանց դրույցի ու ծիծաղի, մերձականների հույսով ու աղոթքներով։

Է) Ավազանը հաստատուն ու անշարժ պետք է լինի և վարագույրով ծածկված, որովհետև նրա խորհուրդը մեծ է։

Ը) Պսակը ընտրությամբ պետք է անեն, արյան ազգակցությունից վեց պորտով հեռացած պետք է լինի. փեսացուն տասնչորս տարեկանից ոչ պակաս, իսկ հարսը՝ տասներկուսից։

Թ) Օտար երկրից եպիսկոպոս, վարդապետ, քահանա կամ գիրու տեր [օտար երկրում գերի ընկածի տեր] առանց թեմի եպիսկոպոսի [գիտության] թող չշրջեն կամ չկառուցեն [եկեղեցի, վանք], այլ [միայն] նրա հրամանով ըստ պատշաճի, բայց օրինականներին չպետք է հակառակվեն և ընդդիմանան. իսկ եթե որևէ մեկը հանդգնի, նզովյալ լինի։

Ժ) Դպրերի դասատացները բազմության ներկայությամբ են քննվում, որ գիտուն, բոլոր գրքերին վարժ ու տեղյակ և ամեն բանով բանիբուն լինեն. նույնպես և գրքերին աշա-



կերտողները նույնի ընտրությամբ և ավելի իմացությամբ ու կատարյալների վկայությամբ։

ԺԱ) Եպիսկոպոսը պետք է հրամայի, որ եկեղեցու սուրբ գրքերը գրեն հմուտները [գրելու մեջ], ուղղափառներն ու գիտունները։

ԺԲ) Եպիսկոպոսը տարեկան երկու անգամ պետք է շրջի իր թեմում, ժողով անի իր հոտին. և սուրբ ու գիտուն քորեպիսկոպոս [առաջնորդի փոխանորդ եպիսկոպոս, քահանա] պետք է նշանակի, որ եկեղեցու դատաստանը ըստ կանոնների անել կարողանա. լինի երկյուղած, ոչ ագահ։

ԺԳ) Ծեր ու գիտուն խոստովանահայրեր պետք է կարգեն, որ ամեն կիրակի առանց փողի խոստովանության կանչի շաբաթվա հանցանքների համար, և քահանաները խոստովանահայրերի հրամանով իրենց ժողովրդի արժանավորներին պետք է հաղորդեն առանց դրամի, նույնպես և հիվանդներին առանց դրամի [պետք է հաղորդեն]։

ԺԴ) Հաղորդը առանց բուրվառի ու մոմեղենի չպետք է տանեն հիվանդների մոտ, այլ մեծ երկյուղածությամբ. իսկ ժողովուրդը իր իրավունքին չէ, ում որ կամենա, նրա ծուխը լինի, այլ պետք է լինի, ինչպես եպիսկոպոսն է հրամայում։

ԺԵ) Եպիսկոպոսներն ու քորեպիսկոպոսները առավել ջանք պետք է թափեն պոռնիկներին, շնացողներին, կախարդներին և ամեն կարգի հանցավորներին գեհենի երկյուղով դարձի բերել։ Իսկ դարձի չեկողներին մարմնական ու հոգևոր պատիժներով պետք է խրատել ու տուգանել, մանավանդ այնպիսիներին, որոնք ամուսինների միջև են մտնում, կամ բոզ կին են պահում, կամ օրինավոր կինը թողնում և բոզերի մոտ են գնում, կամ ատելության հետևանքով թողնում են կանանց առանց պոռնկության պատճառի։ Այսպիսիներին առանց խղճալու անողորմ պատժով պետք է խրատել։ Իսկ եթե պատվավոր մարդ է և եկեղեցու օրենքներին լրբաբար ընդդեմ է խոսում, թագավորը պետք է հիշատակի նրա [illegible] հանցանքը. իսկ իշխանները հանդիմանեն. եթե չխրատվի, պետք է նզովվի։ Եթե կինը լրբանա, ամուսնացած կամ այրի, տղամարդու խաբի, պետք է քահանան խրատի։

ԺԶ) Ամեն պաս ըստ կանոնների առանց ձկան, ձեթի և գինու պետք է պահվի, բացի հիվանդության հարկադրանքից,

առավել աղուհացքի մեծ պասը, ուրբաթը, չորեքշաբթին, որոնք Քրիստոսի չարչարանքի օրերն են. ով սրանք լուծի, պետք է նրան տուգանեն ու տուգանքը տան աղքատներին, իսկ աստծուն՝ պաս պահելով պետք է հատուցեն։

ԺԷ) Սրանից առաջ և ամենից առաջ այս ենք հոգացել Հեթում արքայի, իր հայր Կոստանդինի և բոլոր իշխանների առաջ. ու բանադրելով բանադրանք ենք դրել ամենքի վրա, որ օժանդակեն եկեղեցուն և ամեն տեղ, թե մեծ, թե փոքր, հիշոցապետ* նշանակեն գավառների մոտ, քաղաքներում, գյուղերում, բերդերում, ագարակներում և անօրեն հայհոյաբերաններին՝ աստծու բարկությունը շարժողներին՝ անհերելի անօրեններին, որոնք անարգում են հավատը, ստեղծողին, կնունքը, հրեշտակին, քահանային, բերան, երես, գերեզման և այլ այսպիսի նոր բուսած չարիքներ, այնպիսիների լեզուն կտրեն, կամ ծակեն, լար ներս անցկացնեն և նախատինքով մի օր շրջեցնեն ու ըստ ունեցվածքի տուգանք առնեն, աղքատներին տան։

ԺԸ) Եթե քահանան գտնվի վերոգրյալ մեղքերի մեջ, կրկնակի պատիժ պետք է ընդունի և կարգով հանդերձ [կարգաթող չալվի] պատժվի։

ԺԹ) Այն քահանան, որ եկեղեցական գործից զատ այլ գործով է զբաղվում՝ գրագրություն [քարտուղարություն], կամ որսորդություն, ժողովրդին [ծուխերը] խլում են նրանից. նմանապես պետք է վարվել անուսում քահանաների հետ, մինչև որ լավ սովորեն. անարժաններից նույնպես պետք է առնեն [ժողովրդին]։

Ի) Քահանան տարին մեկ անգամ եկեղեցում պետք է հավաքի ողջամարդկանց առանձին ու կանանց առանձին, և կույս աղջիկներին զատ, տղաներին ու փոքրերին զատ և ըստ պատշաճի խրատի աղաչանքով ու սաստով. և իմանա յուրաքանչյուրի վարքի մասին ու մշտապես դիտի։ Եթե ինքը չի կարող, այլ կատարողի ձեռքով պետք է անի, ինչպես որ սուրբ Աթանասը իր կանոնների մեջ ասում է։

ԻԱ) Ժողովուրդը կամավորությամբ ու խնդրանքով պետք

* Անձինք, որոնք բռնում են հայհոյողներին և հանձնում իշխանություններին։



է տա քահանաների հասը. ամեն ծխից ու բույսից պտուղներ, մառաղի նշանակված մասը, պսակի համար՝ նվերներով, թաղմանը՝ հագուստ, ժամի դրամ [ժամուց]. պատարագին վարձ չպետք է տան, այլ քահանային՝ հագուստ ու կերակուր, որ եկեղեցում աղոթքներով ու պատարագով զբաղվի։

ԻԲ) Քահանաները ժողովրդի համապատասխան [ըստ ծուխերի քանակի] պետք է սուրբ տան եպիսկոպոսին* սահմանված հասով և ըստ պատշաճի ընծաներով։

ԻԳ) Եպիսկոպոսները պետք է հարկ տան հայրապետական աթոռին նշանակված հասով ու արժանավայել ընծաներով ըստ կանոնների, որովհետև սուրբ Լուսավորիչը գրել է, որ քահանաները պետք է ժողովրդին տասանորդով հարկադրեն, եպիսկոպոսները՝ քահանաներին, իսկ հայրապետը՝ եպիսկոպոսներին։ Արդ՝ եթե այդ չենք անում, չափավորը տվեք, և պակասը [տասանորդի], որ գրեցինք, ուրախությամբ տվեք իբրև օրհնություն և ոչ թե ագահության համար, որպեսզի աթոռները հաստատ ու անկարիք, իսկ եկեղեցիները պայծառ մնան, և աստծու օրհնությունը խառնվի ձեր արդար արդյունքին, քանի որ այն աստծուն եք տալիս և ոչ թե մարդուն, և մարդու երես մի տաք։

ԻԴ) Այն երկու աղոթքը, որից հետո «Սուրբ աստված» ենք ասում՝ մի ավարտեք, հորը, որդուն և սուրբ հոգուն, որպեսզի «խաչը» երրորդության վրա չհամարվի. վերջը «այսիր ձայներին», պետք է ասել «որը միշտ տալիս ենք ամենայն տերությանդ բարձունքը՝ Քրիստոս աստված, այժմ և միշտ»։ «Գոհանամքի» վերջում «լինենք տաճար ու բնակարան աստվածային շնորհներին ու գոհությամբ փառավորենք քեզ, Քրիստոս, այժմ և միշտ և հավիտյան, ամեն»։

ԻԵ) Ֆռանկներից մեզ գրել են, թե՝ «Տիրոջ եղբոր պատվիրանը ինչո՞ւ չեք կատարում. [այն է] հիվանդին մահվան ժամին օրհնել, ձեթով օծել, որ եթե մեռնի, օծումը լինի թաղման օծում, իսկ եթե ապրի, լինի քավության և պատճառ առողջության։ Եվ գիտեք, որ Հովհան Օձնեցին[189], որը մեզ զատեց այդ ազգերից, գրել է, որ անենք, և պետք է անել, և

* Բնագրում՝ զեպիսկոպոսն, պետք է ուղղել՝ եպիսկոպոսին ըստ ճիշտ ընթերցվածների։

ալիք ճչալով. միայն թող քահանան զգուշանա և ձեթը քիչ օրհնի, որ ավելի չասացվի և աստծուց ու մեղքից նզովք առնի ու դառնա գայթակղության պատճառ։ Այս համար համարեցինք և կարևոր և հետո գրեցինք։ Ողջ եղեք տիրոջով։

Ով այս չափավոր խոսքերը գրի, պահի, [ուրիշներին] բացատրի ու գործնականում կիրառի, նրա համար տեր աստված կպահի իր գութն ու ողորմությունը. իսկ նա, որ կորցնի ու արհամարհի, հանցավոր կլինի մեր ու արքայի հանդեպ և աստծու ատյանին ամենի համար պատասխան կտա։

Վարդան վարդապետը ու նրա հետ կաթողիկոսի կողմից դեպի արևելք ուղարկվածները եկան և շրջելով Հայաստանի գավառներում, եպիսկոպոսների, վանականների, իշխանների մեջ ու բոլորին տվին կանոնական հրամանները և ամենքից գրավոր համաձայնություն պահանջեցին գրված կանոնների համար։ Եվ որովհետև ամեն ոք խոտորված էր ճշմարտությունից՝ բռնված էին ագահության ու արծաթասիրության ախտով, ուստի ծանր թվաց հրամանը, բայց չհանդգնեցին արհամարհել, այլ առերես մեծարեցին և երդումով ու անեծքով ստորագրություն տվին հրամանը կատարելու՝ Կարին քաղաքի Սարգիս եպիսկոպոսը, Անիի եպիսկոպոս մյուս Սարգիսը, եպիսկոպոս Հակոբը, Բջնու[230ա] եպիսկոպոսներ Վանականն ու Գրիգորը, Ամբերդի[285] եպիսկոպոս Մկրտիչը, Հաղպատի եպիսկոպոս Համազասպը և այլ եպիսկոպոսներ, որ գտնվում էին զանազան կողմերում. նա և գլխավոր վանքերը՝ Սանահինը[230բ], Գետիկը[1], Հաղարծինը[267], Կեչառուքը[257], Հավուց թառը[269], Այրիվանքը[286], Հովհաննավանքը[287], Սաղմոսավանքը[268], Հոռոմոսի վանքը և սրանց շուրջը գտնվածները։ Նաև Աղվանքի կաթողիկոս տեր Ներսեսը, Տվեցի կոչված Հովհաննես եպիսկոպոսը, հռչակավոր մեծ Վանական վարդապետը, իշխանաց իշխան Ավագն ու այլ իշխաններ։

Եվ իմաստուն վարդապետ Վարդանը առնելով այս հավանության թուղթը՝ ուղարկում է Կոստանդին կաթողիկոսին Հռոմկլա, իսկ ինքը գալիս է Կայենի ձորը՝ իր մենարանը, որին սուրբ Անդրին էին կոչում՝ Կայան անառիկ բերդի հանդեպ։ Այնտեղ դադար առավ՝ ուսուցանելու շատերին, որոնք աշակերտում էին նրա վարդապետական խոսքին։

Երբ եկավ երկրորդ տարին, որ հայոց վեց հարյուր իննսունվեց թվականն էր (1247 թ.), առաքինի կաթողիկոս Կոստանդինը իր սպասավոր Թեոդոսի միջոցով արևելյան եկեղեցիներին կերպասից մետաքսատէչ, բազմագույն ու թանկագին շուրջառներ է ընծա ուղարկում իբրև սուրբ պատարագի սպասներ պատվավոր վանքերում։ Նաև շրջաբերական նամակ է ուղարկում, որպեսզի Թադեոսի շիրիմին [եկեղեցի] իբրև թեմ տան շրջակա գավառներն ու քաղաքները և շատ ոսկի զավթի շինության համար, որ կառուցում էր Հովսեփ վարդապետը՝ թուրքերի և վրացի ավազակների ձեռքով ավերվելուց հետո, քանի որ երկար ժամանակ մարդուց թափուր էր ու ամայի։

Հովսեփը գնաց Անագուրակ նույն անունով մի թաթար զորապետի մոտ, որի ամառային բանակատեղը մոտ էր սուրբ առաքյալ Թադեոսի գերեզմանին, և նրա հրամանով մաքրեց եկեղեցին, բացման տոնահանդես կատարեց, շինեց վանքը և նրա մեջ բազմաթիվ կրոնավորներ հավաքեց։

Եվ այդ թաթար մարդը ամեն կողմից ընդարձակեց ճանապարհները, որ ուխտավորներ աներկյուղ գան նրա գործի մեջ՝ խիստ պատվիրելով ու հրամայելով՝ ոչ ոքի, որ կամենան գալ, չանհանգստացնել, նեղություն չտալ, ինքն էլ սիրով խոնարհություն էր անում նրանց նկատմամբ։ Նրանցից շատերը գալիս մկրտում էին իրենց ուստրերին ու դուստրերին. բազմաթիվ այսահարներ ու հիվանդներ էին բուժվում, և փառավորվում էր մեր տեր Հիսուս Քրիստոսի անունը։

Նաև ամբողջ թաթարական զորքը թշնամի չէր խաչին ու եկեղեցուն, կային որ չափազանց մեծարում ու ընծաներ էին մատուցում, որովհետև նախանձ ու հակառակություն նրանց մոտ չկար։

ԽԴ.

## Ղանի կողմից եկած հարկահանների մասին

Երբ Գիուգ ղանը իրենց երկրում գտնվող թաթարական զորքի մեծ թագավորությունը ստացավ, խիստ հարկապահանջ մարդիկ ուղարկեց իր զորքերի մոտ, որ զանազան կող-

միջում ու երկրներում էին գտնվում, որոնց [զորքերին] հնազանդեցրին նրանք՝ առնելու տասնորդ զորքերի բոլոր ստացվածքներից և հարկեր բոլոր իրենց կողմից նվաճված երկրներից ու թագավորություններից, պարսիկներից, արաբներից, թուրքերից, հայերից, վրացիներից, աղվաններից և այն բոլոր ժողովուրդներից, որ նրանց իշխանության տակ էին։ Հարկահանների գլխավորները դաժան ու հափշտակող մարդիկ էին. մեկի անունը Արղուն էր, որ իշխում էր բոլորին, երկրորդինը՝ Բուղա, որ ավելի չար էր, քան այն Բուղան, որ առաջ Զափրի օրերում եկավ Հայաստան ու ավերեց շատ նահանգներ։ Նմանապես և այս Բուղան, որ եկավ թաթարական զորքերի մոտ, մտնում էր ավագանու տները և իրեն ինչ որ դուր էր գալիս, անխնա առնում էր, ոչ որ չէր համարձակվում որևէ բան ասել նրան, որովհետև իր համար ահեղ մարդիկ էր հավաքել պարսիկներից ու արաբներից, որոնք անխնա ամարդի գործեր էին անում և առավել թշնամի էին քրիստոնյաներին։ Այդ պատճառով նրան չարացրին Ջալալ ասված բարեպաշտ իշխան Հասանի դեմ։ Նա բռնեց սրան մեծ պալատում ամբողջ ավագանու առջև բազմաթիվ պատիժների ենթարկեց, քանդեց նրա անառիկ ամրոցները՝ ըստ պարսկերենի Խոխանաբերդ կոչվածը, Դողը, Ծիրանաքարը[289] ու նրա այլ ամրոցները։ Եվ այնպես հատակեց դրանք, որ մինչև իսկ հետքեր չէին երևում, որպես թե բնավ չեն եղել։ Եվ շատ ոսկի ու արծաթ առավ նրանից։ Հազիվ մահից փրկվեց։ Մեծամեծ ավագանին ոչ մի բանով չկարողացավ նրան օգնել. այսպես ահաբեկեց բոլոր տեսնողներին։

Կամեցավ այդպես բռնել նաև իշխանաց իշխան Ավագին սպանելու և անարգելու նպատակով։ Բայց մեծամեծ ավագանին նրան [Ավագին] հասկացրեց, թե՝ «Մի վախենա, այլ բոլոր զորքերը հավաքիր և այդպես գնա նրան տեսության. իսկ եթե այնպես պատահի, որ բռնի քեզ, դու բռնիր նրան»։ Այդպես անելով՝ մեծ զորքով գնաց նրա մոտ։ Բուղան այս տեսնելով՝ վախեցավ ու ասաց նրան. «Այս ի՞նչ զորքի բազմություն է, մի՞թե պատրաստվել ես ղանի դեմ և եկել ես մեզ սպանելու»։ Ավագը ասաց նրան. «Իսկ դու ինչո՞ւ ես հավաքել պարսիկ չարագործ մարդկանց բազմությունը և եկել նենգությամբ մեզ բռնելու»։



Եվ երբ Բուղան իմացավ, թե իր նենգամտությունը հայտնի է նրան, նրա հետ խոսեց հաշտությամբ։ Բայց մշտապես իր մտքում նրա դեմ չարություն էր խորհում՝ հարմար ժամանակ գտնել և կատարել չարակամությունը։ Մինչդեռ այսպիսի չարիքներ էր մտածում, նրան հասավ աստծու արդար պատիժը։ Հանկարծակի վերք գոյացավ նրա կոկորդին, և չարը չարով խեղդամահ սատկեց։ Այսպես վերացավ անօրենը, և թող չտեսնի աստծու փառքը։

## խե.

## Վրաց թագավորների ղանի մոտ գնալու մասին

Վրաց թագավորությունը այս ժամանակ թուլացել էր. սա, որ առաջ մի քիչ ուժեղ էր, ընկավ արևելքում գտնվող թաթարական զորքերի հարկատուական լծի տակ, որոնց գլխավորն էր Չարմաղանի մահից հետո Բաչու նուինը։

Այս ժամանակ վրաց թագավորը Ռուզուդան անունով մի կին էր, որ թաքնվեց, ամրացավ Սվանեթիայի անառիկ վայրերում։ Նրա մոտ պատգամավորներ էին գալիս երկու կողմերից՝ թաթարական զորքից՝ հյուսիսի կողմերում գտնվող Բաթու անունով մեծ զորավարից, որ մոտավոր ազգականն էր ղանի և իշխում էր ամենքին. նույնիսկ ղանը առանց նրա հրամանի աթոռ չէր նստում. և Բաչու կոչված մյուս զորավարից, որ Հայաստանի կողմերում էր։ [Պահանջում էին] գալ նրանց մոտ հաշտությամբ ու խաղաղությամբ և իր տերությունն իշխել նրանց հրամանով։

Իսկ նա, որովհետև գեղեցիկ կին էր, չհամարձակվեց նրանցից ոչ մեկի մոտ գնալ, որպեսզի չխայտառակվի նրանց կողմից. այլ իր Դավիթ անունով մանուկ որդուն թագավորեցրեց, ուղարկեց Բաթու զորավարի մոտ։

Իսկ արևելյան կողմերում գտնվող գլխավորները, որ Բաչու նոյինի հետ էին, գրավել էին ամբողջ Հայաստանը, որոնց մոտ կային վրաց թագավորության իշխաններ ևս,— երբ տեսան, թե թագուհին իրենց մոտ չեկավ, այլ իր որդուն ուղարկեց Բաթուի մոտ, դժգոհեցին այս բանի վրա, ուղար-

կեցին հոռոմների Ղիաթադին սուլթանի մոտ և այնտեղից բերին Ռուզուդանի եղբորորդուն՝ վրաց թագավոր Գիորգի Լաշայի որդուն, որին նույն Ռուզուդանը ուղարկել էր դստեր հետ, որ Ղիաթադին սուլթանի կինն էր։ Իսկ նա [Ղիաթադինը] սրան արգելափակեց, որպեսզի իր զորանքի դեմ թագավորության համար դավադրություն չլինի։

Սրանք նրան այնտեղից բերին և իր հոր իշխանությունը հանձնեցին նրան և ուղարկեցին իրենց արքա ղանի մոտ՝ նրա իշխանությունը հաստատելու համար։ Իսկ իրենք մեկը մյուսի հետևից շատ պատգամավորներ էին ուղարկում Ռուզուդան թագուհու մոտ, որպեսզի նա կամա թե ակամա իրենց մոտ գա։ Նույնպես և Բաթուն նրա որդուն ուղարկեց ղանի մոտ, իսկ ինքը կանչեց Ռուզուդանին, որ իր մոտ գնա։

Նա երկու կողմերի հարկադրանքի տակ, անձամբ մահացեղ ընդունեց և հեռացավ այս կյանքից։ [Իսկ մինչ այդ] կտակագիր գրեց Ավագ իշխանին և իր որդուն հանձնարարեց Ավագին, եթե ղանի մոտից վերադառնա։

Իսկ նրանք գնացին Գիուգ ղանի մոտ, և նա սիրով ընդունեց նրանց։ Նա վճռեց, որ սրանք ըստ հասակի կարգի ստանձնեն թագավորությունը։ Նախ Գիորգի Լաշայի որդի Դավիթը, որ ավագն էր իրենց, իսկ նրա մահից հետո, եթե ողջ մնա, մյուս Դավիթը՝ Ռուզուդանի որդին, սրա հորքուրի որդին։

Թագավորության գանձերը երեք մասի բաժանեցին. փառավոր ու անգին գահը, հրաշալի թագը, որ այլ թագավորներ չունեին և որը, ասում են, հայոց արքա Տրդատ Մեծի հոր Խոսրովին է պատկանել, այնտեղ մնացել է փոխադրությամբ՝ անեղծ ամրության պատճառով և վրաց թագավորների ձեռքը ընկնելով մինչև այսօր մնացել է. այդ և գանձերից այլ թանկագին բաներ ուղարկեցին ղանին, իսկ մնացածը բաժանեցին իրենց մեջ։ Գալով՝ այդ այսպես արեցին Իվանեի որդի Ավագի միջնորդությամբ։

Լաշայի որդի Դավիթը նստում էր Տփղիս քաղաքում, իսկ մյուս Դավիթը՝ Սվանեթիայում։



## ԽԶ.

## Հայոց Սմբատ զորավարի և Ղիաթադին սուլթանի որդու՝ ղանի մոտ գնալու մասին

Հայոց արքա Հեթումը, որ Կիլիկիայում էր նստում, իր եղբայր Սմբատ զորավարին նշանավոր նվերներով ուղարկեց ղանի մոտ։ Նա բարեհաջող կտրեց ճանապարհի երկարությունը և չափազանց մեծարվեց նրա կողմից։ Վերադարձավ մեծ փառքով, արժանահավատ հրովարտակներով. նրան արվեց բազմաթիվ գավառներ ու շատ բերդեր, որոնք առաջ պատկանել էին Լևոն արքային, իսկ նրա մահից հետո նրանցից խլել էր հոռոմների սուլթան Ալադինը։

Մեռավ Ղիաթադին սուլթանը, մնացին նրա երկու մանուկ որդիները. նրանք միմյանց հետ անհաշտ էին. նրանցից մեկը գնաց ղանի մոտ և նրանից առավ իր հոր իշխանությունը, հայոց զորավար Սմբատի հետ վերադարձավ։ Եկան Բաչու նոյինի և մյուս ավագանու մոտ. նրանք հաստատեցին իրենց արքայի հրամանը, զորք դրին նրանց հետ, որ նրանց տանի իրենց իշխանության երկիրը։

Երբ հասան Երզնկա կոչված[290] քաղաքը, լսեցին, որ Ղիաթադին սուլթանի եղբայրը փեսայացել է հոռոմների Լեշքարիս [Լասկարիս] թագավորին, որ Նիկիոսում[291] էր նստում, և նրա օժանդակությամբ սուլթան է դարձել [եղբայրը] Իկոնիում[292], իսկ նույն տղայի եղբայրը՝ Ալայիայում սուլթան է դարձել իսկական աթոռի վրա։ Վախեցավ [Ղիաթադինի որդին] գնալ այնտեղ, այլ կանգ առավ այնտեղ Երզնկայում՝ տեսնելու, թե ինչ է լինելու այս գործի վերջը։

Իսկ զորավար Սմբատը մտավ գնաց իր երկիրը իր եղբայր Հեթում արքայի մոտ։

## ԽԷ.

## Թաթարական զորքի՝ Վրաստանում արած կոտորածի մասին

Մինչդեռ մի փոքր կազդուրվել էր մեր երկիրը ավազակների ու ապստամբների բորբոքած աշխարհաշինչ հրդեհից [պատերազմից] և մարդիկ սրանց [իշխաններին] ավելի

էին ապավինել, քան աստծուն,— իշխանները զրկում ու կողոպտում էին աղքատներին և այդ զրկանքների գնով գնում էին թանկագին զգեստներ ու հագնում, ուտում-խմում էին և ամբարտավանորեն հոխորտում, ինչպես վրաց ամբարտավան սովորույթն է,— աստված այնպես արեց, որ իրենց բարձրությունից խոնարհվեն և ճանաչեն իրենց տկարությունների չափը նրանք, որոնք առաջինով չխրատվեցին։ Իրենց սատանան գայթեցրեց նրանց, որոնց վրա հույս էին դրել։ Հանկարծ թաթարական զորքի ամբողջ ավագանին խորհուրդ արեց, զինավառվեցին, առհասարակ պատրաստվեցին կոտորելու իրենց հնազանդված հայերին ու վրացիներին այն պատճառաբանությամբ, թե վրաց թագավորը բոլոր իշխաններով ապստամբել է կամենում. և զորք են հավաքում՝ գալու մեզ կոտորելու*։ Եվ դա իսկապես այդպես էր, որովհետև իշխանները զորաժողովի էին հավաքվել Տփղիս Դավիթ թագավորի մոտ։ Գինի խմելու ժամանակ նրանց սրտերը թունդ ելան, և նրանցից խակամիտ մարդիկ ասացին. «Ինչո՞ւ մենք սրանց հարկ տանք, երբ այսքան բազմաթիվ զորք ունենք. եկեք հանկարծակի հարձակվենք նրանց վրա և կոտորելով ջնջենք նրանց ու մենք տիրենք մեր երկրին»։

Նրանց այս մտադրությունը խափանեց մեծ իշխան Ավագը։ Թաթարական զորքից տեղում պատահեցին, այս լսեցին և իրենց գլխավորներին հայտնեցին։

Երբ իշխանների զորքերը ցրվեցին իրենց տեղերը, նրանք կամենում էին համահավասար բոլորին այսպես զինված կոտորել։ Իսկ իշխաններից որին իրենց մոտ գտան, կալանավորեցին, իսկ նրանք, որոնք իրենց մոտ չէին՝ հրավիրակներ ուղարկեցին և շտապ իրենց մոտ կանչեցին։

Իսկ ողորմած աստված թույլ չավեց, որ բանը մինչև վերջ հասնի, խափանեց հետևյալ պատճառով։

Ավագ գլխավորներից Ջաղատա անունով մեկը, որ ամբողջ զորքի զորավարն էր և բարեկամ էր Ավագի հետ, կանգնեց զինավառ զորքի մեջ և ասաց նրանց. «Մենք ղանից

* Ու զորաժողով են գալ կատարել զեառս: Ձեռագրերը սրա փոխարեն տալիս են՝ Ու զոր ժողովեն գալ կատարել: Ճիշտը սա է, միայն գալ պետք է ուղղել գալ:



հրաման չունենք կոտորելու նրանց, որ հնազանդված են մեզ. մեզ ծառայություն են մատուցում և հարկատու են ղանին, իսկ նրանց ապստամբության հանգամանքները ճշտված չեն։ Արդ՝ եթե նրանց առանց պատճառի կոտորեք, դուք պատասխան պիտի տաք ղանին»։ Այս լսելով՝ դադարեցին գործը ընելուց։

Նրանց մոտ գնաց Ավագի Խոշաք անունով մայրը, երաշխավորեց իր որդու հավատարմությունը նրանց հանդեպ և [ասաց], թե նա ինքը ընդհուպ նրանց մոտ է գալու, որը և եղավ իսկապես. քանի որ իշխան Ավագը անմիջապես եկավ ու նրանց ցույց տվեց իր հավատարմությունը նրանց հանդեպ շատ վկաների ներկայությամբ։

Եկավ նաև Դավիթ թագավորը ու այլ իշխաններ։ Ըստ իրենց օրենքի բարակ պարաններով ամուր կապեցին նրանց ձեռքերն ու ոտքերը և այդպես կապված թողեցին երեք օր. ծաղրուծանակի էին ենթարկում նրանց գոռոզության և ապստամբ մտադրության համար։ Ապա առնելով նրանց բոլոր ձիերն ու գլխագները, բաց թողին նրանց, իսկ իրենք հարձակվեցին վրաց կողմերը այն բազմաթիվ գավառների վրա, որոնք ապստամբվել, որոնք չէին ապստամբել. և շատերին կոտորեցին ու շատ ավելի շատերին գերեվարեցին։ Բազմությունից անհամար տղամարդիկ, կանայք, մանուկներ գետասույզ արին։ Եվ այս կատարվեց հայոց վեց հարյուր իննսունութ թվականին (1249 թ.)։

Սրանից հետո մեռավ իշխանաց իշխան Ավագը և թաղվեց Պղնձահանքի[275] իր հայր Իվանեի գերեզմանատանը։ Նրա իշխանությունը հանձնեցին Ավագի հորեղբոր որդու՝ Շահնշահի որդի Զաքարեին, որովհետև Ավագը արու զավակ չուներ, ուներ միայն մի մանուկ դուստր և մի արու երեխա, որ ծնված էր ապօրինի կենակցությունից. նրա համար Ավագի մահից հետո ասացին, թե նրանից է, որին նրա քույրը վերցրել պահում էր։ Ապա [իշխանությունը] խլեցին Զաքարեից և տվին Ավագի Գոնցա անունով կնոջը։

## ԽԸ.

## Մոլորեցուցիչ Դավթի մասին

Աշխարհի վերջը մոտեցել է, այդ պատճառով Նեռի ճանապարհ բացողները շատացել են, ինչպես նախօրոք ասաց կենարարը, թե՝ «Վախճանի մոտ մեջտեղ կգան սուտ քրիստոսներ ու սուտ մարգարեներ՝ դիվական հրաշքներ ու հրաշագործություններ ցույց տալու, մինչև որ մոլորեցնեն, եթե հնարավոր լինի, նաև ընտրյալներին»*։

Արդ՝ հայոց վեց հարյուր իննսունինը թվականին (1250 թ.) այսպիսի բան տեղի ունեցավ։ Լուր տարածեցին, թե Խաչենի[231] սահմաններում կարկուտ եկավ, և կարկուտի հետ խառը բազմաթիվ թղթաշափ ձկներ թափվեցին երկրի վրա։ Մենք աչքով չտեսանք, բայց շատերը կային, որ հավատացնում էին, թե ականատես են եղել։ Սրանց հետ առասպելանման խոսքի մի այլ կցմցանք էլ էին ասում, թե Գեղամա ծովի [Սևանի] ափին Կոթ[293] անունով մի ավան կա. այն գյուղի սահմաններում լեռան մոտ՝ մեռած կիսաթաղ մի հսկայաձև մարդ գտան, որ ուներ նոր հագուստներ ու նոր կոշիկներ. սրտի դիմաց ծակ կար, որպես թե խոցված էր նիզակով, իսկ վրան մի քիչ բամբակ։ Եվ երբ բամբակը վերցնում էին, արյունը սաստիկ ցայտում էր նրանից, իսկ երբ դարձյալ բամբակը վրան էին դնում, արգելում էր արյունը։ Եվ եթե ուրիշ նոր բամբակ էին դնում, բայց ոչ իրենը, արյունը նույնպես հոսում էր, մինչև որ նախկինն էին դնում։ Այս բանը շատերն էին շաղակրատում, բայց ճշմարիտ է, թե սուտ, մենք չգիտենք։ Բայց այս սուտը կատարվեց. սույն տարին դիվական հոգուց շարժված հանդես եկավ Դավիթ անունով խաբեբայի մեկը՝ նմանվող մոլորեցուցիչներ Հուդային[294] և Թևդին։

Գեղարքունյաց ծովի սահմաններում՝ Խաչենի կողմը՝ Հանդաբերդ ամրոցի մոտ, ուր Ջերմուկն է, Ծար[295] անունով մի գյուղ կա։ Այստեղ էր այս չքավոր ու աղքատ մարդը, որ պահում էր գյուղի ջրաղացը, և դրանով կերակրվում էին ինքը, կինը և որդիները։

Մի գիշեր սատանան լույսի կերպ առած երևաց նրան և հանդգնեց ասել, թե՝ «Ես եմ Քրիստոսը և եկա քեզ դարձնելու ինձ քարոզիչ. ամեն կողմից քեզ մոտ մարդիկ կբերեմ, և ովքեր որ քեզ մոտ գան բժշկվելու նպատակով, համարձակ ձեռքդ դիր նրանց վրա։ Եվ այդ գյուղի ձիթհանքի գերանը առ, արա խաչ և կանգնեցրու եկեղեցու դռանը»։ Եվ այլ շատ խարդախ հնարներ սովորեցրեց նրան։

Նա սկսեց քարոզել, թե Քրիստոսը երևաց ինձ և ասաց. «Փոխիր աշխարհը և բժշկություն արա»։

Նրան հարեցին նաև ուրիշները. նրանք սկսեցին հռչակել նրան. կոչում էին Դավիթ Միայնակյաց և Սքանչելագործ։ Բռնի կերպով ձիթհանքի գերանը նրա տիրոջ* տանից հանելով՝ դարձրին մի բարձրաբերձ խաչ և այն կանգնեցրին եկեղեցու դռանը։ Նրա համար զվարակներ զենեցին և զվարակի մսից, ոսկորներից, խաչի տաշեղից, ջրաղացի կորեկահատիկից իբրև օրհնության նշխարներ էին տալիս բոլոր ուխտավորներին, որոնք գալիս էին ամեն կողմից։ Որովհետև միևնույն բանսարկուն, որ նրան հորդորեց այդ բանին, դրդեց նաև բոլոր գավառներին՝ գնալու այն համբավին. գնում էին տղամարդիկ, կանայք, մանուկներ, մինչևիսկ քահանաներ, ազնվականներ ու բոլոր ախտավորներն ու ցավագարները։

Նա սկզբում կեղծավորաբար ոչ ոքից որևէ բան չէր առնում։ Սուտ Քրիստոսի նման այսպես էր քարոզում. «Ո՞վ եմ ես, մի աղքատ ու մեղավոր. բայց Քրիստոսը հրամայել է ինձ քարոզել։ Երկուշաբթի օրը պաս պահեցեք, մի հայհոյեք, եկեք ինձ համբուրեցեք, և թողություն կլինի ձեր ու ձեր ցեղի մեղքերին մինչև յոթ պորտ»։

Եվ երբ դիվահարները գալիս էին, առնում էր մի հաստ բիր ու անխնայորեն ծեծում. ոտքերով կոկորդները տրորում էր ու ասում. «Ելիր, շուն, ելիր, շուն, Դավիթ Միայնակյացն է քեզ հրամայում»։ Եվ այսպիսի մարդկանց ասում էր. «Ահա, այլևս մի վախենա, բժշկվեցիր»։ Իսկ նա գնում էր

---

* Մատթ. ԻԴ, 24։ Մարկ. ԺԳ, 22։

* Բնագիրն ունի՝ ի տանէ իւմէ. բացարձակ աղավաղված է. ուղիղն է՝ ի տեառնէ իւրմէ։ Ինքը աղքատ ջրաղացպան էր, որտեղի՞ց նրան ձիթհանք. որ բռնի հանեին, և եթե գերանը իրենն էր, էլ ինչո՞ւ պետք է բռնի հանեին։

նույն չարը իր մեջ ավելի շատացած։ Ուր էլ որ գնում էր, երբ հարցնում էին, չէր համարձակվում ասել, թե չբժշկվեցի, որովհետև պատմում էր, թե երբ ասես՝ չբժշկվեցի, անմիջապես դևից տանջանքի կենթարկվես։ Ու չնայած նա չէր համարձակվում ասել, թե չբժշկվեցի, արդյունքն իսկ ցույց էր տալիս, որ միշտ տանջվում էր։ Նրանք, որոնք նախապես ամիսն ու շաբաթը մեկ անգամ էին կրում տանջանքը, նրա մոտ գնալուց հետո ամեն օր էին տանջվում։ Իսկ երբ խաղալագավով* [լեկրոսները] հիվանդներն էին գնում նրա մոտ, ասում էր, թե՝ «Իմ առաջ խաղացեք ու պարեցեք»։ Իսկ նրանք սիրով էին կատարում այդ, քանի որ դիվահարների** այս տեսակը սիրում է խաղն ու պարը։ Նաև ասում էր. «Եկեք, ինձ և իմ կնոջը համբուրեցեք ու գնացեք, այլևս մի վախեցեք»։ Թորոտներին ասում էր. «Աստծուց այդ ցավը բուժելու հրաման չկա, բայց քանի որ եկել ես ինձ մոտ, մեղքերիդ թողություն եմ տալիս»։ Կորացածների ու կուզիկների համար չորս մարդու հրամայում էր՝ երկուսը գլխից բռնեն, երկուսը ոտքերից և ասում էր՝ քաշեցեք և բացեք։ Իսկ նրանք ուժգին քաշում, ճարճատեցնում էին մարմնի բոլոր հոդերը, իսկ մարդը սարսափելի վայ էր կանչում ցավերի տառապանքից։ Նա [Դավիթը] բարձրանում, տրորում էր թիկունքն ու մկանները, իսկ հիվանդը մեռելի նման անշնչանում էր, կամ իսկապես մեռնում էր։ Իսկ նա մեռածների մասին ասում էր. «Դրա ժամանակը լրացել էր, դա այլևս չէր կարող ապրել. լավ է, որ մեռավ, տառապանքներից հանգստացավ»։ Իսկ նրանց, որ կիսամահ ապրում ու չէին բժշկվում, ասում էր. «Մեր հանդեպ կատարյալ հավատ չունեն, այդ պատճառով չեն բժշկվում»։ Իսկ այն դիվահարներին, որոնց կոկորդները տրորում էր, ու նրանք մեռնում էին, ասում էր. «Սա վաղուց մեռած էր, իսկ այն, որ դրան շրջեցնում էր, դեն էր, որին այժմ հանեցի»։ Իսկ կույրերին ասում էր. «Լավ է քեզ համար՝ աչքե՞րդ բանամ, թե՞ մեղքերիդ թողություն տամ. իսկ ես գիտեմ՝ քո ժամանակը կարճ է, շատ շուտով կմեռնես»։ Իսկ նա ասում էր. «Եթե այդպես է, ինձ համար

* Ալիշանը լեկրոսը թարգմանում է ռռնառեալը կամ պոռնկորոսը։

** Բնագրում դիւաց. օգտվում ենք ըստ Ալիշանի գիտահարցի։



լավ է, որ մեղքերիս թողություն տաս»։ Նրան ասում էր. «Թողություն եմ տվել քո մեղքերին»։

Եվ այսպես ամենքին գայթակղում էր դեպի իրեն։ Մինչև իսկ այնքան բազմություն էր հավաքվում նրա մոտ, որ տեղ չէր լինում մարդկանց համար։ Եվ որովհետև ամառ ժամանակ էր, մարդիկ ելել էին դաշտերն ու սարերը, այնտեղ էին գիշերում և բոլոր չարիքները գործում։ Այն կանայք, որոնք վախենում էին ամուսիններից, ծնողներից, զավակներից իրենց տներում շնանալ ու բոզություն անել, ուխտի պատրվակով գնում էին և ում հետ կամենում էին, համարձակ շնանում էին։ Նույնպես էլ չար տղամարդիկ էին անում, ում որ ցանկանում էին։ Ու գնում էին բազմաթիվ նվերներով՝ ոսկով, արծաթով, դրամակով, ոչխարներով։ Եվ գնացող եկողները չգնացողներին պախարակում ու խարշում էին նրանցից իբրև մեղավորներից ու նրա տեսությանը անարժաններից։ Նաև քահանաներ եկան ու հարեցին նրան ինչքի ու ցանկասիրության համար։ Եվ սպասավորում էին նրան, լվանում էին նրա ոտքերը ու ջուրը շաղ էին տալիս իրենց և ժողովրդի բազմության վրա։

Ինքը կեղծավորաբար ոչ մեկից բան չէր առնում, այլ քահանաների ու իր արբանյակների միջոցով էր վերցնում։ Գյուղի տերը պարսիկ էր և ստացվածքից իր բաժինը առնում էր, քանի որ շատ շատերը տանում և սիրով տալիս էին։ Իսկ եթե վարդապետներից կամ քահանաներից որևէ մեկը արգելում էր կամ խանգարում նրանց գնալը, հայհոյում ու բամբասում էին իբրև նախանձոտների ու աչքածակների, թե՝ «Իրենք նրա գործերը չեն կարողանում անել ու չեն էլ կամենում այն սրբի շարունակությունները»։

Այստեղ մեծ վարդապետ Վանականը, որը բնակվում էր Երզնկայի բերդի հանդեպ գտնվող խորանաշատ[206] վանքում, խիստ պարսավանքի ու մեղադրանքի գիր գրեց, թե՝ «Ինչո՞ւ գեթ Եղիային Քրիստոսին եք համարում, ով քրիստոնյաներ. չէ որ սատանան էլ սովոր է լույսի հրեշտակի կերպարանքով կերպարանավորվել»։ Եվ բանադրեց նրանց, որ այն պիղծ մոլից կերել էին և կամ տաշեղից ու կոճեկից նշխար էին պահում։ Մի սմբողջ քառասունք պաս ու հինգ հարյուր ծունր

[իբրև պատիժ], դրեց նրանց վրա, որ հետո արժանի լինեն սուրբ խորհրդին [պատարագի, հաղորդության]։ Մենք էլ նմանապես նույն պարսավանքով ու բանադրանքով գրեցինք և ուղարկեցինք բազմաթիվ տեղեր։ Գրեց նաև Հաղպատի եպիսկոպոս տեր Համազասպը։

Բազում քահանաներով, խաչերով ու ավետարաններով այն գյուղը եկան Դաղի[297] վանքի եպիսկոպոս տեր Գրիգորիսը, Համար* որդի կոչված Վարդան վարդապետը, որովհետև (այդ գյուղը) նրանց թեմում էր գտնվում։ Եվ գիշերային ժամերգություն արին, խաբված մարդուն մեջտեղ կանգնեցրին, որ գուցե նրանից պիղծ ոգին դուրս գա։ Երբ հարցրին, թե՝ «ի՞նչ ես տեսնում»։ Ասաց, թե՝ «Երբ բերանքսիվայր գետնի վրա եմ ընկնում, գետնից ինձ երևում է և հետո խոսում»։

Ապա եպիսկոպոսներն ու քահանաները ձեռք մեկնեցին, կամենում էին խաբեբայի տնկած խաչը կործանել։ Ամբողջ ամբոխը հարձակվեց սրերով ու բրերով, կամենում էին նրանց սպանել։ Նրանք ամբոխի միջից դուրս գալով սաստիկ նզովքներով անիծեցին հանցագործներին։ Ապա նրանցից ոմանք զղջացին, գնացին եպիսկոպոսներին ու քահանաներին աղաչեցին, որ իրենց անեծքների կապանքներից ազատեն, և այն մարդուն հանձնեցին նրանց ձեռքը։

Մինչդեռ տանում էին նրան, նրանց հանդիպեցին դառնեցի մարդիկ, որ գալիս էին մեծ պալատից։ Այդ մարդը աղաչեց նրանց, որպեսզի իրեն եպիսկոպոսից խնդրեն, որովհետև ասում էր, թե ինքը նրանց ազգակիցն է ու դառնեցի։ Քանի որ հենց սկզբում այսպես էր ասում ժողովրդին, թե՝ «Արշակունյաց ցեղից եմ ես, իմ որդիներից մեկը պետք է թագավոր լինի, մյուսը՝ կաթողիկոս. և սուրբ Սահակի տեսիլքը պետք է նրանց վրա կատարվի»։ Ապա եպիսկոպոսը դրան տվեց նրանց՝ երդում պահանջելով, որպեսզի այլևս մարդկանց չմոլորեցնի։ Եվ այսպես հազիվ հանգավ հայտնված չարը։

* Այսինքն՝ խոնարհ։



## ԽԹ.

### Այն Դևի մասին, որ կնոջ կերպարանք առած մի մարդու հետ խառնակվում էր։

Մեզ պատմեց Հովսեփ վարդապետը, որ սուրբ առաքյալ Թադեոսի գերեզմանի վրա գտնվող վանքը շինեց Արտազ[298] գավառում ավերումից ու ամայի լինելուց հետո, թե՝ «Ես գնացի Դողթն[299] գավառը ինչ-որ գործի համար։ Մի գյուղում ասացին, թե այստեղ մի մարդ կա, որ դև կին ունի։ Իսկ մենք ասածներին չհավատացինք, գնացինք այդ մարդու տունը, բայց դևին չտեսանք։ Եվ երբ մարդուն հարցրինք, նա պատճառը ստույգ կերպով ասաց, թե՝ «Ես կին ունեի, մեռավ, ինձ թողեց մանր երեխաներ, իսկ ես նստած լալիս էի, թե ո՞վ կխնամի դրանց ինձ համար։ Ահա հանկարծակի մի կին հայտնվեց և ասաց. «Մի՛ լար, ես քեզ կին կլինեմ ու քո մանուկներին կխնամեմ»։ Այնուհետև միշտ իմ տանն է, մեզ կերակուրներ է պատրաստում և մեր ամեն կարիքները հոգում։ Ես սաստիկ տարված եմ նրա սիրով, և [նա] միշտ ինձ հետ կենակցում է։ Ամբողջ շաբաթը անգործ է մնում, հինգշաբթի օրը երեք լիտր մանած է անում»։ Իսկ երբ հարցրի, թե այժմ ո՞ւր է, նա մատով ցույց տվեց, թե՝ «Ահա այնտեղ է և երևում է միայն ինձ ու իմ մանուկներին, ուրիշ ոչ ոքի։ Եվ արդեն երկար ժամանակ է, որ միասին ենք բնակվում»։

Իսկ ես վեր կացա աղոթելու և ավետարան կարդալու, որ գուցե մեղսասեր ու պիղծ ոգին հալածվի։ Իսկ նա դրան ոչ մի ուշադրություն չէր դարձնում, այլ նստել ծիծաղում էր, ինչպես պատմեց այն մարդը։ Եվ մենք նրան չտեսանք, ելանք գնացինք»։

## Ծ.

### Այն վեճի մասին, որ տեղի ունեցավ քրիստոնյաների միջև աստծու սուրբ հոգու համար, թե՝ պետք է միայն «ի հօրէ» ասել, թե ի «հօրէ և յորդւոյ»

Հռոմեացիների կողմից հրահրվեց այս վեճը քրիստոնյաների միջև, որովհետև Հռոմի պապը գրեց հայոց մեծ կաթողիկոս տեր Կոստանդինին,— որ այն ժամանակ նստում էր

Հռոմկլայում, քանի որ սուրբ Գրիգորի աթոռը այնտեղ էր գտնվում երկու սուրբ եղբայրներ Գրիգորի ու Ներսեսի ժամանակներից, որոնք Արշակունյաց տոհմից էին և գիտնական, աստծու օրենքներին նախանձախնդիր մարդիկ էին,— թե՝ «Ինչպե՞ս եք դուք խոստովանում աստծու ամենասուրբ Հոգին. Հորի՞ց միայն բխած ու հայտնված, թե՞ Հորից ու որդուց, որովհետև Հռոմեացիք այսպես են խոստովանում՝ Հորից ու որդուց»։ Նմանապես գրեցին Հայոց Հեթում թագավորին և պատասխան էին պահանջում։

Իսկ նրանք իրենց երկրի իմաստուններին՝ հայերից, հույներից, ասորիներից և քրիստոնյա այլ ազգերից, որոնք գտնվում էին այնտեղ, հավաքեցին Կիլիկիայի Սիս[264] քաղաքում՝ հույները ասացին «միայն Հորից», իսկ ասորիներից ոմանք ասացին ուրիշ կերպ։ Իսկ Հայոց ժողովը գրեց արևելքի կողմերը՝ Մեծ Հայք[300], գիտնական վարդապետ Վանականին[32], որովհետև այդ ժամանակ նա նշանավոր էր, և Վարդան վարդապետին, Հովսեփին և ուրիշներին, [որ տեսնեն] թե նրանք ինչ են ասում, ապա կպատասխանեն Հռոմեացիներին։

Նրանք քննեցին եկեղեցին հերձվածողներից մաքրող առաքյալների, մարգարեների և եկեղեցու սուրբ վարդապետների աստվածաշունչ գրքերը [և գտան որ] Հռոմեական խոստովանությունը ըստ անհրաժեշտության ուղղակի երկու բառով է առաջնորդվում։ Իսկ աստվածաշունչ գրքերը լիքն են այդպիսի բառերով։ Ինչպես գրեց հավատի վեմ երանելի առաքյալ Պետրոսը, որ ճշմարիտ հավատի համար տիրոջից երանվեց, թե՝ «երբ և որպիսի ժամանակ Քրիստոսի հոգին մարգարեանում էր նրանց մեջ»*։ Հովհաննես ավետարանիչն ասում է. «Ով Քրիստոսի հոգին չունի, նա նրան չի պատկանում»**։ Եվ մեծ Պողոսը [ասում է]. «Աստված իր որդու հոգին ուղարկեց մեր սրտերի մեջ, որ աղաղակում է աբբա՝ հայր»***։ Եվ այլ բազում այսպիսիք առաքյալների գրքերում։ Իսկ մեր սուրբ Լուսավորիչ Գրիգորը, որ մեզ սովո-

---

* Պետր. Ա 11։

** Հովհ. ԻԲ. 25։

*** Գաղատ. Դ. 6։



րեցրեց հավատի խոստովանությունը, այսպես է ասում. «Հայրը իրենից, որդին Հորից, սուրբ Հոգին նրանց էությունից»։ Իսկ Քրիստոսի հաղթական ախոյանն Աթանասը[301] արիանոսների դեմ այսպես էր քարոզում և ուսուցանում. «Անսկիզբ հայրը ոչ ոքից է, որդին Հորից է, և սուրբ Հոգին նրանց էությունից», որը կրկնում է Սոկրատ պատմագիրը։ Իսկ Գրիգոր Աստվածաբանը իր ճառի մեջ, որի սկիզբն է՝ «Երեկ պայծառ լուսավորությունների օրը տոնեցինք», ասում է՝ սաղմոսից բաղելով. «Քեզնից է, տեր, կյանքի աղբյուրը, և քո լույսով լույսը կտեսնենք»*, այսինքն՝ Հոգով որդուն կտեսնենք։ Եվ դարձյալ՝ «Նա որ Հորից է ելնում, ըստ այդմ այնտեղից է առաքվում, ստացվածք չէ, ըստ այդմ ծնված չէ, որդի չէ, և ըստ այդմ ծնվածներից չէ, և ծնվածների մեջ ասված է»։ Եվ Գրիգոր Նյուսացին[302], և մեծ Բասիլիոսը, և Աբբա Եփրեմը[302], և Հովհան Ոսկեբերանը[303] իրենց գրքերում շատ տեղեր [ասել են], եթե ջանասիրությամբ մեկը որոնի, շատերը կգտնի։ Եվ Եմեսացի եպիսկոպոսը[302], Սեբերիանոսը իր այն ճառի մեջ, որի սկիզբն է՝ «Քրիստոնյաների մեջ խոստացա Քրիստոսից խոսել», վերջում ասում է. «Անծին աստծուն և նրանից ծնված միածին որդուն և սուրբ Հոգուն՝ նրանց էությունից բխողին, մի աստվածության մեջ երեքին, ամեն փառք հավիտյանս, ամեն»։ Եվ Մովսես Խորենացին «Քերականության մեկնության»[304] մեջ ասում է. «Սուրբ Հոգին առնչություն ունեցող է, որովհետև մեկի հոգին է, հանձինս հոր և որդու է հոգի ասվում»։ Նաև Սյունյաց եպիսկոպոս Ստեփանոսը[305] ասում է. «Որովհետև բխում է Հորից շարունակ իբրև ակունքից, դադարում է աղբյուրում. որդուց ելնում է անպատմելի խոհեմագույն գետ՝ արևարաշխ, լուսապատճառ, ծովը ունենալով իբրև հյուրընկալ, հրեշտակների, մարդկանց դիտությունը ունենալով. մանավանդ թե ուժեղ որդի, ինչպես հայրը. թեպետ թույլ որդի, բայց նրա սկիզբը փարթամ է, որովհետև պատճառ է հոգու բխմանը։ Սուրբ Հոգին ուժեղ է, որովհետև մարգարեական գրքերի պատճառ է»։ Եվ սքանչելի Եպիփանը[306] սաղմոսների մեկնության գրքում. ահա սկիզբը. «Ամենասրբուհի Աստվածածին Մարիամը հավատի խոսքի մեջ,

---

* Սաղմ. ԼԵ. 10։

որը հռոմայեց Հովհաննես ավետարանիչին սովորեցնել Սքանչելագործ Գրիգորին», ասում է. «Մի աստված Հայր է կենդանի խոսքին [Քրիստոսին], անձնավոր իմաստության, զորության, էության կերպարանք, կատարյալի կատարյալ ծնող, միածին որդու Հայր, միայնի տեր, աստծուց աստված, աստվածության կերպարանք ու պատկեր, ամենքին ներգործող բանն աստված [Քրիստոս], բոլոր եղածներիս բովանդակող, անսահմանելի զորություն և բոլոր ստեղծվածներիս արարիչ։ Ճշմարիտ որդի ճշմարիտ Հոր, անտեսանելիի անտեսանելի, անմահի անմահ, մի սուրբ Հոգի՝ աստծու էությունը ունենալու, որդու միջոցով [ձևով] երեցած և հայտնված մարդկանց, որդու պատկեր, կատարյալի կատարյալ, կյանք և կենդանության պատճառ, սրբություն և սրբության պարգևիչ, որով հայտնվում է աստված Հայրը, որ ամենքի վրա է ու ամենքի մեջ և աստծու որդին, որի միջոցով և ամենքը։ Կատարյալ երրորդություն՝ փառքով ու մշտնջենավորությամբ, անբաժանելի թագավորությամբ ու անհեռանալի։ Ապա ոչ ինչ-որ ստացական բան, և ոչ երրորդության ծառա, և ոչ ներքսբերովի, որպես թե նախապես չկար, հետո ներս մտավ, որդին ոչ պակաս Հորից և Հոգին որդուց պակաս, այլ անփոփոխ ու անփոփոխելի, միշտ նույն ինքը երրորդությունը»։

Այսպիսի խոստովանությունը ընդունելի է Հայաստանյայց եկեղեցիներում ու Կիրակոսի Հոգում, և արժանի է համարձակ քարոզելու, որ Հոգին Հորից է բխել և որդու միջոցով երևացել։

Արևմուտքի թղթին այս պատասխանեցինք, և մենք սույն հավատի մեջ հաստատ ենք մնում սուրբ երրորդության շնորհներով, որին հավիտյան փառք. ամեն։

## ԾԱ.

## Ուղղափառների ճշմարիտ հավատի խոստովանություն

Հավատում ենք և Հորը, և որդուն, և սուրբ Հոգուն՝ երեք կատարյալ անձերի և մի փառավորված աստվածության, սուրբ ու փառակից երրորդության, անսկիզբ ու անվախճան,



անժամանակ ու անտեղ, միշտ անկարոտ և ուրախ, ամեն բանում կատարյալ և բարու մեջ իմացված, որը [բարին] բնականորեն ունի և անպակաս տալիս է կարոտներին։ Կատարյալ երրորդություն, անաճելի ու աննվազելի, անձով բաժանված, երբեմն նաև անունով, բայց միության մեջ միացյալ, փառավորված է ու փառավորվում է աստվածության էությամբ, զորությամբ, կամքով, իմաստությամբ, գործով, մեծությամբ, մանավանդ անհասանելիությամբ և անասելի ողորմածությամբ։

Հայր անծին, որդի ծնված Հորից, անցավ ու անմարմին, Հոր էակից ժամանակներից առաջ։ Սուրբ Հոգին Հորից բխմունք և որդուց երևացում, ոչ թե որդու նման ծնունդով, այլ աղբյուրի նման առաջ եկած, իրեն համար միայն քննելի օրինակ, իսկ արարածների կողմից անիմանալի, միշտ Հոր հետ որդի ու Հոգի. Հոգի ինչպես Հոր, նմանապես և որդու, ոչ Հայրն է փոխվում որդու, կամ որդին՝ Հոգու, կամ Հոգին՝ որդու և Հոր։

Հայրը ունի անձ և հայրական անուն, և որդին ունի անձ ու որդիական անուն, և Հոգին ունի անձ ու հոգիական անուն. նորոգության կամ անունների ու անձերի փոփոխություն չունեն, այլ Հայրը միշտ Հայր է, որդին՝ միշտ որդի, Հոգին՝ միշտ Հոգի, որին* և հավատում ենք։

Սրանից ու սիրուց որդին անձնավորության պես Հոգով ու մարմնով գոյացավ սուրբ կույս Մարիամի մեջ՝ Գաբրիել հրեշտակապետի ավետումով և մեր փրկության համար նրանից մարդացավ. մեր էության համապատասխան [ունեցավ] հոգի, միտք, շունչ, մարմին, ինչ որ է կատարյալ մարդ՝ Ադամի մեղանչած էությամբ, որից Մարիամն էր, որին առնելով աստվածացրեց առանց խառնման ու փոփոխման, անքննելի ու անպատմելի խառնումով, և եղավ երկու կատարյալ էություններից՝ աստվածայինից ու մարդկայինից, մի կատարյալ անձնավորություն՝ էությամբ անփոփոխելի ու անբաժանելի։ Ոչ փոփոխեց մարդկային խիտ ու բաղադրյալ էությունը աստվածային անբաղադրի ու պարզ էությանը՝ իրենը կարծելով, և ոչ էլ աստվածային պարզ, անմարմին էությու-

* Բնագրում յօր, երևի եղել է յորս:

նը խառնից մարմնական էության հետ. պակասեց իր հավիտենական պարզությունից, թեպետ և անքակտելի միության համար ասվում է անմարմինը մարմնավորվում է և Բանը [Քրիստոսը] թանձրանում է։ Մնաց մի միածին որդի, մի անձ, մի Քրիստոս, և ճշմարտապես երկուսից միացված մի էություն, մի կամք, մի իղձ, մի գործ, կուսությամբ մի ծնունդ, մի մայր առանց հոր, որը հավիտենությունից առաջ առանց մոր էր ծնված։

Եվ դավանում եմ էմմանվելի[307] մորը՝ աստվածածնին մինչև հավիտյան և էմմանվել աստծուն մինչև հավիտյան՝ նույն մարմնով ծննդից հետո։ Մարդեղության բոլոր գործերը աստծու գործ եմ ընդունում՝ ցածրագույնները, բարձրագույնները և անբամբասելի տանջանքները, որ մեզ համար կրեց. չեմ բաժանում, այլ համարում եմ մի, անզույգ իմ տերը, և խառնում չեմ ճանաչում, ու նզովում եմ խառնում ճառողին ու ասողին։

Նույնպես խաչի կրածները խոստովանում եմ աստծու խաչ, և մահը իսկական էությամբ մահ չեմ ընդունում, կամ մարմնից բաժանում, այլ էությամբ միացած աստվածությամբ և աստվածացած. աստված եմ խոստովանում, որով մեռավ անմահը՝ բանական հոգին ավանդելով հորը։

Աստվածությունը հոգուց ու մարմնից չբաժանվեց, այլ անքակտելիորեն միավորվեց, ըստ որում հոգով դժոխքն էր ավերում ու մահը սպանում. մարմինը ջնջում էր քայքայումը որպես աստված և աստծու մարմին, բոլոր գերեզմաններում ճառագայթներ էր արձակում, շատերին հարություն տալիս, գիտեր երկրի վրա սահմանված ժամանակը, շատ մեծ քանակով էր հարություն առնում և ոչ թե մենակաբար, ինչպես Հովնանը[308] ձկանից, այլ դժոխքից մահակուլ հոգիների լրիվությամբ՝ սկսած Ադամից և գերեզմաններում հանգած շատ մարմիններով։ Ելավ ձեռք չտված անլույծ կնիքի գերեզմանից, ինչպես Մարիամի արգանդից, և բարձրացավ մտավ կուսությամբ անճեղքելի երկինքը, որպես անբաց դռներով վերնատուն, որպեսզի հայտնի լինի, թե մարմնական էությունից վեր է։ Քանի որ մարմնի էությունը մահկանացու, ոչնչացող ու մեղսալի է։ Եթե ինքնին առանձնանա, մարմին անել չի կարող անճանաչելի մնալով, այլ տերու-



նականը [մարդեղությունը, մարդ լինելը] և տերը լրիվ ունեն ճշմարիտ մարդը՝ իր սահմանով, սակայն շողացած ու փայլատակած աստվածությամբ, որ ներգործում էր Քրիստոսի վայելուչ [մարմնական] մասի վրա, որը ձեռքերով շոշափեցին առաքյալների դասերը և տեսան նրանց աչքերով անկերպարանքը կերպավորված։ Նույն մարմնով և հոր փառքով գալու է դատելու ողջերին ու մեռածներին. Նրա թագավորությունը վախճան չունի։

Հավատում եմ նույն երրորդությունից ստեղծված չեղածներից բոլոր եղածներին, բարի ձևացրած Ադամին, որ ինքնագլուխ կամքով կատարած հանցանքով լուծվեց մահվան մեջ և միևնույն արարչից վերստին նորոգվեց՝ մեկ միածնի նախախնամությամբ, հոր և հոգու կամքով։

Հավատում եմ բանականներիս ընդհանուր հարությունը Ադամից սկսած՝ ստեղծողի ու նորոգողի միևնույն զորությամբ։

Հավատում եմ հավերժ դատաստանի արդար իրավունքին ըստ արժանվույն և հավիտենական կյանքի ու տանջանքի հատուցմանը։

Այս է մեր և բոլոր ուղղափառների հավատի համառոտ խոստովանությունը, որոնց [ուղղափառներին] թող տերը իր ողորմության շնորհներով մեզ մասնակից դարձնի, որ սրանով աշխարհում ապրենք անարատ կյանքով, բարի գործերով, այս դավանությամբ գնանք մեր հույս ու վստահություն Քրիստոսի մոտ և արժանի լինենք համարձակությամբ տեսնելու նրանելի ու ամենասուրբ երրորդությունը, որ երեք անձի մեջ է, առանձնացել և մի աստվածությամբ, տերությամբ ու թագավորությամբ փառավորվել։ Թող մեզ և բոլոր ճշմարիտ հավատացյալներին արժանացնի անճառ բարիքների ու անպատմելի ուրախությունների, «որ աչքը չտեսավ, ականջը չլսեց և մարդու սրտում չընկավ, որը աստված պատրաստեց իր սիրելիների համար»*։

Արդ՝ այս դավանությունը ընդունում է աշխարհի շատ մասը և պահում է սրբազան առաքինությամբ։ Ամեն քահանա օծելու ժամանակ այս դավանությունը մեծ քահանայա-

* Ա Կորն. Բ, 9։

պետք պետք է հանձնարարի և պահանջի նրանցից, որոնց ձեռնադրել են կամենում։

Ապա անունով նզովում է այլակարծիչ գայլերին, բոլոր հերետիկոսներին՝ մինչև այսօր հարյուր հիսունից հերձվածների և այլոց, որ սրանց են նմանվում։ Պետք է դավանել բոլոր ուղղափառներին, եկեղեցու այն հայրերին, որոնք Քրիստոսի հոտին առաջնորդեցին դեպի ճշմարտության և սնուցին կենարար արոտներում։

Ապա հոգին կիջնի այնպիսի սրբության սեղանին և կհանգչի այն նվիրյալի վրա, որ գիտե ճանաչել օտարներին ու հարազատներին, ինչպես [գիտե] գիտուններին ու իմաստուններին հովիվներ նշանակել, որ կարող է կյանքի կոչել կյանքին արժանիներին, այսինքն՝ բերել առ աստված։ Որովհետև այս է խաչով ու արյունով գնված հավատացյալների պահպանության պարիսպը, ոչ միայն չարիքներից հեռու մնալ, այլև բարիքների հնազանդ լինել մեր տեր Հիսուս Քրիստոսով, որին հավիտյանս փառք. ամեն։

Նաև մեծ վարդապետ Վանականը գրեց, թե ինչպես պետք է խոստովանել և կամ ասել սուրբ հոգին հորից է և որդուց։

ԾԲ.

## Վանական վարդապետի դավանության խրատը

Հոգով խոսել հոգու մասին հոգևորականների գործն է. իսկ եթե մեկը, որ հաստատուն ձեռքով ամռանը ցանկանում է հնձել, խոզանի՞ն հանդիպելն է հաճելի, թե՞ հասկի*. բայց թե կիջնի հոգին անոր նիգիայի համար. կրկնթանա բանն, կըփոխադարձի մի աստվածությունը երեք անձերի մեջ՝ միմյանցով երևալով, ինչպես լույսը՝ լույսով։

Որովհետև, եթե ստեղծական այս լույսը և հուրը չեն փակվում լուսավորներից և ուրիշներից, ինչպե՞ս անստեղծ արարչականը կփակվի միմյանցից ու արարածների մեջ,

* Ըստ Ալիշանի՝ թվում են աղավաղված, ինչպես և հաջորդները, գուցե և հեղինակի կամքով խրթնաբանված են։



թվական մենք չենք կարող իմանալ. որովհետև անձը [հոգեւոր] անձնական մաս չի կարող տալ օդին, հրին, ջրին ու գինուն, սրանց նրբամասնության պատճառով*. և որ սրանք անապատ են, թեև ազատ են թվում, անբացասելի են, բայց բացասելի են թվում, որքան ավելի միտքը չպետք է հանդգնի, անեղ, անսպառ, անսահման, միասնական սուրբ երրորդությանը, բոլոր կողմերով ճանաչել, երբ չկա [սահման], որով եզերվի, կամ տեղ, ուր գրվի, այլ այն, ինչ Աստվածաշունչ գրքերը հայտնաբերության են տալիս եկեղեցուն, որը պետք է ասել [այնպես]։ Իմանալի իմացումը իմացողին լինելով այնպես սնունդ և կերակուր, այսինքն՝ մարմնի։ Հրեշտակային էությունները և նրանց արարչականը, որովհետև իմացողը իմացությամբ իմացողաբար իմանում է իմանալի իմացումը։ «Ուրդ մտածիր դու քեզ համար,— ասում է Մովսես նախամարգարեն,— նայիր քո անձին»։ Նաև Փիլոնիոսն է խրատում, թե՝ «Քո երրորդությամբ իմացիր, որ քո մարմնում կա հոգի, միտք և խոսք»։ Նույն ձևով նաև Պողոսն է գրում մեզ համար. «Մի է հայր աստված, և մի տեր Հիսուս Քրիստոսը, և մի սուրբ հոգին»։ Նույնն է ավանդում նաև Նիկիայի սուրբ ժողովը. «Հավատում եմ մի հայր աստծուն, մի տեր Քրիստոսին և մի սուրբ հոգուն»։ Իսկ Հովհաննես Մկրտիչը միությունն է ընդունում էության համար՝ հորը և հոգուն մարդ է համարում, այսինքն՝ խոսք և որդին էլ ունի, ասում է, հայր և հոգի։

Աթանասը ընդունում է երեք անձ կամ երեք դեմք։ Աստվածաբան Գրիգորը ասում է. «Երեք անձ, կամ երեք երես, կամ որը քեզ հաճելի է, այն ասա։ Ինքը աստված, որ էն է, ոչ սխալվում է և ոչ էլ դադարում է»։ Գրիգոր Աստվածաբանը, Բարսեղը և Գրիգոր Նյուսացին [ասում են]. «Անծին և ծնված և բխում», որին հետևում է ամեն ուղղափառ եկեղեցի։ Հովհան Ոսկեբերանը [ասում է]. «Արմատ, բույս և բողբոջ»։ Պողոսը հորը էություն է համարում, որդուն՝ պատկեր. հորը՝ լույս, որդուն՝ ճառագայթ։ Աթանասը՝ որդուն հոր պատկերն

* Քննական բնագիրն է եւեմ. իսկ ձեռագրերը տալիս են երեք (այսպես է նաև Ալիշանի հրատարակությունը)։ Մենք ճիշտ համարում ենք երեքը և թարգմանում, սակայն ոչ վստահությամբ։

է համարում, Հոգին՝ որդու [պատկերը], այսինքն՝ Հոր և որդու: Ինքը տերը Հորը Հոգի է համարում: Նաև Գրիգոր Լուսավորիչն է որդուն Հոգի համարում, և աստվածաշնչական բոլոր գրքերը որդուն* Հոգի են համարում: Պողոսը Հորը աներևույթ է ասում, իսկ որդուն՝ աներևույթի պատկեր: Սրանից հայտնի է, որ Հոգին Հոր և որդու պատկերն է, որովհետև էությունների պատկերը և նկարագիրը մեկ է. ըստ այն խոսքի, թե՝ «Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով»,** որովհետև էությունները մի պատկեր ունեն, մի մարդու մի նախատիպ [առաջին օրինակը], մի էություն, երեք անձերի, մի աստվածություն: Բոլոր հին ու նոր կտակարանները վկայում են, որ Հայրը անսկիզբ ու առանց պատճառի է. Ինքը [Աստված] Հենց Աբրահամին ասում է. «Իմ էով երդվում եմ քեզ»***: Մովսեսին ասում է. «Ես էն» եմ, որպես ասի թե ոչ ոքից, և որ որդին ու Հոգին Հորից: Ովսեն ասում է. «Իմ Հոգին և խոսքը քո մեջ են»: Եվ Ինքը տերը ասում է. «Հողմը ուր կամենում, այն կողմն է փչում, և չգիտես գալիս է և ուր է գնում, նույնպես էլ ամեն ծնված Հոգուց»: Այդ պատճառով սուրբ Եպիփան Կիպրացին ասում է.. «Հոգին Հայր է, իսկ նրանից են որդին ու Հոգին»: Որովհետև «Հայր» անսկզբնային բառ է, և երեքն էլ ժամանակից անսկիզբ են: Հոգի անելը անմարմնության նշան է, և երեքն էլ անմարմին են: Որդի անելը գոյացության և էության նշան է, որովհետև երեք գոյացություն և մի էություն են: Որդին Հորից է ասվում, իսկ Հայրը որդուց չի ասվում, որովհետև սա է նրանից և ոչ թե նա սրանից: Որդին և Հոգին Հորից են ասվում, Հայրը նրանցից չի ասվում: Որդին ու Հոգին Հորից են ասվում՝ մեկը ծնունդով, մյուսը բխումով: Եվ որդին է բխում ասվում և Հոգին: Ասվում է որդին եկավ Հորից և ասվում է Հոգին եկավ Հորից: Հայրը Հոգի է ասվում, բայց որդի չի ասվում. Հոգին ոչ Հայր է ասվում, ոչ որդի: Որդին Հորից է, իսկ Հոգին և Հորից է, և որդուց:

Հայրը արմատ է, որդին՝ բույս. Հոգին արմատից է և բույսից բողբոջ: Հայրը դոյ է, որդին բերան է, Հոգին՝ շունչ

*Բնագրում Հոգի, տարբերակներում որդի կամ չիք Հոգի:

** Ծննդ. Ա, 27:

*** Ըստ Ակիլյանի հրատարակության՝ «Յիմ էն երդնում քեզ»:



Նրա բոլոր զորությունները նրա բերանի Հոգով են: Եվ թե՝ «Քո առաքումը նռնենիների դրախտը» և թե՝ «Փչեց նրանց երեսներին և ասաց. Առեք սուրբ Հոգին: Հայրը անձ է, որդին՝ գոյացություն, Հոգին՝ բաղուկ, իսկ բաղուկից մասը: Ես աստծու մասով կհանեմ գներին»*:

Որդին Հորից է, իսկ Հոգին նրանցից,— ասում է սուրբ Եպիփանը: Որդին Հորից է ելնում, իսկ Հոգին Հորից և որդուց է ելնում: Որդին Հորից է առնում, նմանապես էլ Հոգին որդուց: Ինքը՝ տերը ասում է. «Ինձնից է առնում և ձեզ ուսուցանում»**: Եվ որդին Հոգուց է առնում ըստ այն խոսքի՝ «Նա, որ նրա մեջ ծնվել է, սուրբ Հոգուց է»***: Երեք արեգակնային լույս կա, ամենն էլ մի օրինակ՝ անհաս, անճառ, անձև, անփոփոխ, անքանակ, անսահման: Բայց մեկը, որ մեր էությունը առավ՝ Բանը [Քրիստոսը] մեր էությամբ է երևում, բայց նրանով են ճանաչվում Հայր և Հոգի: Որդին ծնված է ասվում, որ նշանակում է որևէ մեկից: Անենալ և լինել է ասվում, որ նշանակում է ոչ ոքի չունենալ, որովհետև ոչ ունի Հոր անձը, ոչ Հոգու անձը, այլ միայն իր որդիականը: Հոգին եկավ Հորից ու որդուց է ասվում, որովհետև ոչ ունի Հոր անձը և ոչ էլ որդու անձը, այլ ունի իր Հոգիական անձը:

Այս երեք անունը երեք անձերի հավասար նշանն է. ոչ մեկը մյուսից վեր է, և ոչ մյուսը մեկից ցածր, այլ ամեն բանով միմյանց հավասար են: Ոչ ոք թող երեք էության նշան չհամարի, այլ երեք անձերի նշան և մի էության. մեկը Հայր, որովհետև այլ Հորից չէ. մյուսը որդի, որովհետև Հորից է, և մեկը Հոգի, որովհետև Հորից ու որդուց է: Հայրը անծին է ասվում, որովհետև ոչ ոքից չէ, որդին ծնված է ասվում, որովհետև Հորից է. Հոգին չի ասվում որդի կամ ծնված, որպեսզի երկու եղբայրներ չհամարվեն, և չի ասվում երկվորյակ որդու հետ, որ դուստր չկարծվի, և չի ասվում միայն որդուց, որպեսզի թոռ չհամարվի:

Դու, ով իմաստուն և ճշմարիտ հավատացյալ, ինչո՞ւ ես հետաքրքրվում երկու պատճառ իմանալու: Բարսեղը հարցնում էր իր եղբայր Գրիգորին. «Ի՞նչ է աղբյուրի ակիզբը»: Եվ

* Զաք. ԺԱ, 20:

** Յովհ. ԺԶ, 15:

*** Մատթ. Ա, 20:

նա պատասխանում էր. «Երկրորդ պատճառի առաջին պատճառը։ Եվ սիրելի՛ Ուրիշ ո՞ւմ պատճառ կլինեն Հայրը և Որդին, եթե ոչ՝ իր Հոգուն։ Գրիգոր Աստվածաբանը Պղատոնի խոսքն է անում, որ գրված է. «Որպես խառնելու սափոր սափոր լցվեց», բայց և մերժում է լցված ու խառնուրդ անելը. իսկ առաջին ու երկրորդ պատճառ ասելը ընդունում է։ Դու ինչո՞ւ ես բթացնում, ով երկու պատճառ ընդունող. արդյոք հենց ոչ թե այս անունները և կարգերն են զանազանում մի էությունը, այլ երեք անձերը մի էության համար անուն այլևայլ դեմքեր, որոնցից հավասար խոստովանություն կարգն ու սահմանը անխառնակ ու անշփոթ մնա։ Մի աստվածությունը ամեն ինչ կարգով ու սահմանով հորինել է, որ խոստովանողի մտքում խառնակություն ու շփոթմունք չընկնեն։ Դու որ լսող ես, քեզ եմ ասում, ինչպես քո միտքը ծնվում է, և ուրիշի մեջ էլ է միտք ծնվում։ Եթե այս չես իմանում, ինչո՞ւ ես աստծու վերաբերյալ քննում և գրքերին [Աստվածաշնչին] ընդդիմանում։ Եթե այդ լույսը, որ քո խելքում ծագում է, և միտքը, որ կից է խոսքին, և սրտից բխումը և ոլորքը ձայնից մեջ չես կարողանում տեսնել, աստծուն ու գրքերին հակառակ մի ջանա որևէ բան իմանալ։

Եվ կրկին եմ ասում. քո խոսքը մտքի՞ց է, թե հոգուց։ Եթե մտքից է առանց հոգու, ուրեմն քո խոսքը անհոգի է. իսկ եթե հոգուց է առանց մտքի, անմիտ է քո խոսքը։ Իսկ եթե հոգուց ու մտքից է, հոգևոր ու մտավոր է քո խոսքը, ինչպես որ կա։ Ապա թե շնչավոր [մարմնավոր] իմաստով է քո խոսքը, դատարկ է։

Աստծու էության միությունը և անձի բաժանումը մարմնական օրինակով մի անանիր, որ չգայթակղվես։ Եթե միայն ասես հոգին հորից է ելել ու բխել, անբաժանական է հոգին, իսկ եթե միայն որդուց ասես, ուրիշ սկիզբ է. իսկ եթե հորից ու որդուց ասես, ճշմարիտ է, ինչպես որ կա։ Որովհետև աստծու հայրությունը մարմնական չէ, ոչ էլ որդիությունը և ոչ էլ բխողությունը։ Խոսք է, որ դավանի ավելորդությամբ ասում են.— Այս ինչը այս բանից դուրս պրծավ, այս բաներից բաժանվեց դուրս, ոչ իրենից տեղում մնաց, ոչ ուրիշներից իր հետ բան բերեց և ոչ ուրիշներից կարեց և ոչ էլ ուրիշներից



[illegible]ելուց, կուզես ողջ ասա, կուզես հատակ ասա, կուզես [illegible], որդ ասա։

Այսպես հոգին հորից ու որդուց է. ոչ ինքն է ինչ-որ չափով պակասում, ոչ նրանցից է կտրվում. լրիվ կատարյալ աստված հայր, լրիվ կատարյալ աստված որդի, լրիվ կատարյալ աստված սուրբ հոգի. մի կատարյալ աստվածություն երեք անձերի մեջ ամեն բանով հավասար։

Այս է ուղղափառ եկեղեցու խոստովանությունը։ Սուրբ Դիոնիսիոսը բնության բառը երրորդության վրա հավասար է դնում՝ հոր, որդու, հոգու, այսպես ասելով. «Բնության բառը՝ իմաստացուցիչ է, զորացուցիչ, կենդանացուցիչ և որ բառն ասվել է դարձյալ՝ իմաստնացուցչություն, զորացուցչություն, կենդանացուցչություն և այլը բառ այսմ»։

Կրկին քեզ աղաչում եմ. աստված բառը մի ընդունիր ըստ էության, այլ ըստ մեր նկատմամբ ունեցած խնամքների։ Այսպես աստված ասվում է լույս և կյանք. ի՞նչ ես կարծում ասել. այսպիսի՞ լույս ու կյանք, որպիսին մենք ենք տեսնում և ապրում*։ Կամ թե քո հոգու անունն ու էությունը կարո՞ղ ես իմանալ։ Այս խոստումը հանդերձյալների համար է, երբ այն կհայտնվի. «Ինչ աչքը չտեսավ, ականջը չլսեց, մարդու սրտում չընկավ, որը աստված պատրաստեց իր սիրելիների համար»**։ Այստեղ ավելին մի պահանջիր, որպեսզի բոլորից էլ չզրկվես։

ՄԴ.

## Սուրբ վարդապետ Վանականի վախճանի մասին

Աստվածահաճո և մեծ վարդապետ Վանականը հասնելով բարի ծերության՝ ալևորվեց և տարիներով լցված՝ Աբրահամ նահապետի նման փոխվեց աշխարհից։ Կյանքը վերջացրեց և հավատը պահեց ուղղափառ խոստովանությամբ՝ սուրբ երրորդության և Քրիստոսի մարդեղության հանդեպ։ Մանուկ հասակից աստվածային գործերի ծառայությամբ աշխատելով՝ բազում գրքեր ու ջանք թափեց ուսուցչական գործի վրա, բազմաթիվ աղանդների փառքի հասցրեց, զանազան հմտություններ

* Բնագրում՝ կեանք, ասվում ենք՝ կեամք։

** Ա. Կորն. Բ, 9։

կրեց ու նպանեց երկրավոր մարմինը ըստ առաքյալի այն խրատի, թե՝ մարմինը խաչ հանեց պահանջներով ու ցանկություններով հանդերձ։ Որովհետև աստծու այս մարդը նման էր նրբաթև թռչող մեղվի, որ թռչելով բազմատեսակ ծաղիկների վրա՝ հավաքում է նրանցից պետքականն ու օգտակարը իրենց սկսեքերի և իրեն ուտելիք ու բժշկություն թագավորների ու ռամիկների համար։ Նույնպես է սա իր անձի մեջ հավաքելով բոլոր սրբերի վարքն ու առաքինությունները՝ հյուսում էր խորհրդի բանվածքը իր անձի պետքերի և ուրիշների օգուտի համար, որովհետև ստացել էր Աբելի արդարությունը, Սեթի գեղեցկությունը, Ենովսի հույսը, Ենովքի հավատը, Նոյի կատարելությունը, Աբրահամի հավատն ու գործը, Իսահակի հնազանդությունը, Իսրայելի աստվածատեսությունը, Հովսեփի ողջախոհությունը, Հոբի համբերությունը, Մովսեսի հեզությունը, Փենեհեսի նախանձախնդրությունը, Հեսուի սուրբ կուսությունը, Սամվելի հստակամիտ անմեղությունը, Դավթի սրտի խոնարհությունը, Սողոմոնի իմաստությունը, Եսայու համարձակությունը, Եղիայի վրեժխնդրությունը և Երեմիայի ցավակցությունը։ Ըստ Դանիելի ու Եզեկիելի աստծու ժողովրդի հետ գերության գնաց, ըստ Զորաբաբելի ու Հեսուի աստծու տաճարի նորոգող եղավ, ըստ Թադդեոսի բազմաթիվ գրքեր հավաքեց ազգերից ու լեզուներից. Հովհաննու նման անապատում բնակվեց և տիրոջ հրամանով աշխարհություն քարոզեց, Հին ու Նոր կտակարանները վայելեց. Պետրոսի պես աստվածորդի տիրոջը դավանեց և եկեղեցու գլուխ եղավ։ Որսամանի[369] որդիների հետ հոգևոր բաները խոսեց ու աստվածաբանեց, Պողոսի հետ կենաց խոսքը ընդհանուրի մեջ սերմանեց և գրով հաստատեց. եկեղեցու վարդապետների հետ հանդես եկավ և պայքարին վանեց։ Թերսոններին կաթ խմեցրեց, իսկ կատարյալներին հաստատուն կերակուր*։

Արդ՝ նա որ այս բոլոր բարիքները ստացած ուներ իր անձի մեջ, ինքն էլ տեսնում և ուրիշներին միևնույնը ուսուցանում, տիրոջ մոտ փոխադրվեց՝ բնության պարտքը հատուցելով։ Նրա վախճանը հետևյալ ձևով եղավ։

---

* Ա. Կորնթ. Գ. 2—3։



Իր իսկ շինած Խորանաշատ կոչված վանքում, որ իր մեջ յոթ եկեղեցիներ ունենալու համար այս անունը ընդունեց և գտնվում է Երգեվանք բերդի դիմաց Գարդմանի թիկունքի կողմից, նա նշանավոր կառուցումներ արեց. կոփածո քարերից իր իսկ կառուցած մեծ եկեղեցու դռանը գավիթ շինեց, և վարդապետական խոսքն էր սովորեցնում նրանց, որ ամեն գավառներից հավաքված էին նրա մոտ։

Սուրբ աղուհացքի օրերին նա հիվանդացավ և անմիջապես մեռավ։ Նախքան իր սուրբ հոգու ավանդելը աստծու ձեռքը, ըստ գրվածի, կանչեց միաբաններին, քաղցր ու ախորժալուր խոսքերով մխիթարեց նրանց և աղաչեց հաստատուն մնալ կարգի և ուղղափառ կրոնի ու աստվածպաշտության* մեջ։ Այսպես խաղաղ շնչումով մաքուր հոգին արձակվեց մարմնի կապանքներից արեգ ամսի տասին, ըստ նոր ստույգ տոմարի մարտի տասնութին ըստ հռոմեական տոմարի, զատկից երկու օր առաջ, շաբաթ օրը՝ Երուսաղեմի երանելի Կյուրեղ հայրապետի հիշատակի օրը, որը ընթերցվածները** կարգավորեց, գրեց Կոչման գիրքը*** և հաստատությունը սուրբ Օրենքի ու իր վեց եղբայրների, որոնք նահատակվեցին անօրեն Մաքսիմիանոսից։ Նրանց վարքին հետևող եղավ, այդ պատճառով էլ նրանց հիշատակին [օրվան] արժանացավ։

Նրա թաղմանը անհամար բազմություն հավաքվեց և մեծ սգով ու տխրությամբ դառը ողբացին, որովհետև զրկվեցին երանելու լուսավոր վարդապետությունից ու հոգեշահ խոսքերից։ Նրան տարան թաղեցին վանքի վերևը արևելյան կողմից, ամենափոքր եկեղեցու մոտ, որտեղ աղքատների գերեզմաններն էին գտնվում, քանի որ ինքը այդպես հրամայեց։

Այնտեղ էր այդ գավառի եպիսկոպոս տեր Սարգիսը բազմաթիվ վարդապետներով ու քահանաներով։ Նրա հիշատակի համար գնացին նաև Աղվանքի կաթողիկոս տեր Ներսեսը և եպիսկոպոս տեր Հովհաննեսը մի օր հետո, և դառը ողբացին ու լացին նրա գերեզմանի վրա ու այնտեղի միաբաններին մխիթարելով վերադարձան յուրաքանչյուրն իր տեղը։

---

* Ըստ տարբերակի։

** Այսինքն՝ պատարագի ընթերցվածները։

*** Այսինքն՝ Կոչումն ընծայութեան (մկրտության կանչվածների)։

Վանքի առաջնորդությունը ստանձնեց նրա եղբորորդի Պողոս քահանան, իսկ ուսուցչությունը՝ Գրիգորիս վարդապետը՝ նրա աշակերտն ու ազգականը։ Այս կատարվեց [հայոց] յոթ հարյուր թվականին (1251 թ.)։ Այժմ նրա աղոթքներով թող աստված խաղաղություն տա ամբողջ աշխարհին և մեզ մաս նրա հարության ու [փառքով] պսակվելու ժամանակ։

## ԾԴ.

## Հովհաննես Գառնեցու մասին

Սա մի առաքինի մարդ էր, վարքով զարմանալի, աստծու պատվիրանները կատարող [Քրիստոսի] լուծը կրող. պատանեկությունից արժանացավ կուսակրոն քահանայական աստիճանի. անունը Հովհաննես էր, Գառնի քաղաքագյուղից, ուր գտնվում է Տրդատի հրաշալի սարավույթը*, Այրիվանքի[193] սուրբ միաբանությունից։ Սա մանկության հասակից արհամարհեց կյանքի ամեն ինչը, լքեց հարազատներին ու տունը, բնակվում էր ամայի տեղերում. սիրում էր առանձին լինել և անդադար խոսել աստծու հետ՝ իրեն տալով տևական ճգնությունների, պասերի, գետնատարած ու պառկած աղոթքների և անդադար տեղից տեղ շրջելով ու պատահածներին լուսավորելով։

Նրան տրվեց նաև բժշկության շնորհը, որովհետև ձեռքը դնելով ու աղոթելով բազմաթիվ ախտաժետների բժշկում էր։ Նրանից խնդրում էին նաև իրենց անձերի պահպանման համար թուղթ [թալիսման], իսկ նա անմիջապես տալիս էր բոլոր խնդրողներին։ Եվ այս անում էին ոչ միայն հավատացյալները, այլև բազմաթիվ անհավատները։ Նա գրում էր սուրբ երրորդության անունը և աղոթքի խորհրդավոր խոսքեր ու տալիս էր նրանց։ Իսկ նրանք հավատով առնում և կապում էին իրենց վրա։

* Սարավույթ նշանակում է բարձրաշեն պալատ, որ կոչվում է նաև Տրդատա թախտ, հեթանոսական հովանոց (տե՛ս ծան. 229)։



Սրա մասին շատերը շատ բաներ էին պատմում, բայց շատ ավելի [պատմում էր] մեր հարազատ ու սքանչելի Վարդան վարդապետը, որի խոսքերը արժանի են վստահության [արժանահավատ են], որովհետև նրանք սիրով կապված էին միմյանց հետ։ Որովհետև մենք հեռավորության պատճառով նրան չտեսանք, նա իբրև մխիթարություն՝ մեզ նրա կյանքից որոշ բաներ պատմեց մասնավոր կերպով. ասաց, թե՝ «Տեր Հովհաննեսն հենց մեզ պատմեց, թե ես գնացի սուրբ քաղաք Երուսաղեմ երկրպագելու փրկչական վայրերին. այնտեղ որոշ օրեր մնացի՝ իջևանելով սուրբ Հակոբում։ Մի գիշեր կանթեղի լուսարարության ժամը հնչեր, որ բոլորին զարթեցնում էր աղոթքի, և մինչդեռ ես աղոթում էի սուրբ եկեղեցում, սուրբ Հակոբի առաջնորդ վարդապետը կանչեց ինձ և ասաց. «Եկ մի, զարմանալի բաներ լսիր, որ պատմում է իմ ամենակրոնասեր քահանան»։ Երբ գնացի նրա մոտ, կանչեց քահանային, որ զարմանալի երազ էր տեսել, և ասաց. «Այժմ ասա, ինչ որ ինձ նախօրոք պատմեցիր, որ սա ես լսի»։ Քահանան սկսեց պատմել, թե՝ «Նախքան ձեր մեր եկեղեցին գալը, ես սուրբ եկեղեցու վերնատանը աղոթում էի, հանկարծակի Գաբրիել հրեշտակապետի նկարված պատկերը, որ գտնվում է ամենասրբուհի աստվածածնի պատկերի հանդեպ, խոսեց ու ասաց. «Ուրախ եղիր, ով դու բերկրյալդ, տերը քեզ հետ է»*։ «Օրհնված ես դու կանանց մեջ, և օրհնված է քո արգանդի պտուղը»**։ Բոլոր սրբերի նկարված պատկերները սկսեցին նույնը խոսել մինչև մեծ ժամը՝ («Ուրախ եղիր, ով դու բերկրյալդ, տերը քեզ հետ է»)***։

Ես զարմացած փառք տվի աստծուն և քննելով տոմարական հաշիվներով գտա, որ այդ օրը արեգ ամսի երեսունն էր և ապրիլ ամսի յոթը, Նիսանի տասնհինգը։ Այս տեսիլքը և հրաշքի երևալը հաստատում են հայոց տոնի ճշմարտությունը, որ տոնում ենք սուրբ կույսի ավետյաց օրը արեգի երեսունին, ապրիլի յոթին, Նիսանի տասնհինգին է և ոչ թե, ինչպես հակառակվում են մյուս ազգերը, մանավանդ հույ-

* Ղուկ. Ա, 28։

** Ղուկ. Ա, 42։

*** Թվում է, թե փակագծվածը կրկնություն է և ետնամուտ։

ներր՝ ասելով անխոհեմաբար, թե մարտի քսանհինգին էր։

Այս պատմեց ճշմարտախոհ այն մարդը ի հաստատումն մեր ուղղափառ հավատի։

Սրա նման մի ուրիշ բան էլ պատմեց այն սուրբ մարդ Հովհաննեսը։ «Ես, ասում է, Հորդանան գետի կողմերն էի։ Աղոթում էի տիրոջ և սուրբ Հովհաննես Կարապետի մկրտության տեղում։ Ինձ մոտ կրոնով մահմեդական երեք մարդիկ եկան և խնդրեցին, որ իրենց մկրտեմ։ Ես հապաղում, թողնում էի ուրիշ օրվա և կամ [մտածում էի] թող ուրիշներից մկրտություն ստանան, որովհետև տեսնում էի, որ նրանք վայրենաբարո մարդիկ են և կարծում էի ձևանում են։

Նրանցից սարեցը ինձ պատմեց և ասաց. «Մենք պարսից քաղաք Զանգիանից* ենք, կրոնով մուղրի** ենք։ Շինեցինք մեծ ու գեղեցիկ մի աշտարակ և պատրաստեցինք բաղման տոնահանդեսի համար ինչ անհրաժեշտ է։ Ես ըստ արաբական կրոնի բարձրացա գմբեթի ծայրը անարժան աղանդ տալու։ Եվ ահա տեսա արևելքի կողմից երկինքը պատռված և վայրը անչափ լույսով լի։ Մի զարմանալի ու ահեղ թագավոր նստած փառքի աթոռին, իսկ նրա շուրջը լուսեղենների բազմություն էր, որոնք նրան օրհնում էին անպատմելի ձայնով։ Նրան երկրպագելու էին գալիս բոլոր քրիստոնյա ազգերը՝ յուրաքանչյուրը իր կրոնի առաջնորդներով, որոնք զարդարված էին երևելի փառքով։ Եվ երբ երկրպագում էին նրան, նա ընդունում էր նրանց ողջույնը։ Ի վերջո եկավ մի այլ ազգ, որ փառքով շատ ավելի առավել էր, քան նախորդները, իսկ սրա առաջնորդները չափազանց զարմանալի էին։ Երբ եկան, թագավորին երկրպագեցին։ Նա աթոռից վեր կացավ նրանց ընդառաջ ու համբուրեց նրանց իրենց առաջնորդներով և մյուս ազգերից ավելի մեծարեց։

Եվ մինչդեռ ես հիացած կանգնած էի զարմացումով ու ապշանքով, վերև, ինձ մոտ, եկավ իմ այս ավագ որդին և ասաց. «Ինչո՞ւ ուշացար, ամբողջ ժողովուրդը քեզ է սպասում»։ Սա նույնպես նայեց արևելք ու նույն տեսիլքը տեսավ և հիմարացած կանգնեց։ Ապա երբ չափազանց ուշացանք,

* Ատրպատականի ծայրահարավում՝ Զենջիանը։

** Մահմեդական կրոնավոր, Ղուրան կարդացող։



ամբոխը մեր ուշանալու վրա նեղսրտեց։ Բարձրացավ եկավ իմ այս կրտսեր որդին և մեզ մեղադրում էր մեր ուշանալու համար։ Բայց որովհետև սրա գալու ժամանակ տեսիլքը չքացել էր, սրան պատմեցինք ուշանալու պատճառը և տեսիլքի մանրամասնությունները։ Եվ իսկույն կամեցանք այն բարձունքից Քրիստոսին ճշմարիտ աստված, իսկ մեզ քրիստոնյաներ հայտարարել։ Սա մեզ արգելեց և ասաց. «Եթե այդպես է, խելքով գործ բռնենք. եթե հիմա մենք Քրիստոսին քարոզենք, իսկույն տաճկաց այս ամբոխը մեզ կսպանի, և հրապարակ կհանեն, թե ինչ-որ հանցանքի համար սպանեցին, իսկ մեր մասին ո՞վ է իմանում։ Այլ գնանք մեր պատրաստած ճաշերը տանք նրանց, իսկ մենք գնանք Երուսաղեմ սուրբ քաղաքը և այնտեղ լինենք կատարյալ քրիստոնյաներ սրբազան մկրտության միջոցով, մանավանդ այն քրիստոնյաների ձեռքով, որոնց մասին դուք ասում էք. թե նրանց մեծ ընդունեց թագավորը, և ձեզ տեսիլքում հայտնեց, թե այն հայոց ազգն էր, որ վիճակ ընկավ Թադեոսին, Բարդուղիմեոսին և սուրբ Գրիգորին»։

Մենք անսալով սրա խոսքերին, իջանք նրանց մոտ՝ ոչ մեկին ոչինչ չպատմելով։ Թողեցինք մեր ամբողջ շարժական ու անշարժ գույքերը, եկանք Երուսաղեմ և աստծուն աղաչեցինք, որպեսզի մենք հանդիպենք այն ազգին, որ տեսիլքում փառավոր էր։ Եվ աստված քե՛զ ցույց տվեց մեզ, և նույն նշանը տեսանք քեզ վրա։ Այժմ աղաչում ենք քեզ, տուր մեզ Քրիստոսի մկրտությունը և մեզ դարձրու քո աստծուն կատարյալ ծառաներ»։

Ես տեսա նրանց հոժարությունը, և թե մանավանդ տիրոջն է իմ կոչումը, նրանց մկրտեցի Հորդանան սուրբ գետում՝ անունով Հոր և որդու և սուրբ հոգու, և նրանց հաղորդեցի աստվածորդու պատվական մարմնով ու արյունով։ Մեզ ողջունելով, քաղաքից դուրս եկան գնալու մեծ Հռոմ տեսնելու սուրբ առաքյալներ Պետրոսի ու Պողոսի գերեզմանները ի փառս Քրիստոսի»։

Նաև այս էր ասում նույն սքանչելի Հովհաննեսը, թե՝ «Ազգով հայ քառասուն տղամարդ, գնացին Սինա[310] անապատը, այն լեռը, ուր աստված երևաց Մովսեսին[310] և տվեց քարե տախտակները, որոնց վրա գրված էին տասը պատ-

գամները*, երկրպագելու աստծուն և տեսնելու սուրբ վայրերը։

Լեռան ստորոտում մի վանք կար. այդտեղ Հռոմ, վարքով խստակրոն [մարդիկ] այնտեղ օթևանեցին։ Եվ մինչ նրանք կամենում էին լեռը բարձրանալ [հայերը], վանքի բնակիչները պատվիրեցին նրանց և ասացին. «Գիշերը այնտեղ մի՛ քնեք, որովհետև ովքեր այնտեղ գիշերում են, ահավոր արհավիրքներ են տեսնում. այլև շատ մարդիկ կորստի են մատնվել»։

Իսկ նրանք համարձակորեն բարձրացան՝ առանց որևէ ուղեկցի իրենց հետ վերցնելու։ Այնտեղ մի քանի օր ուշացան։ Վանքի բնակիչները զարմացել էին, թե ինչ եղան, որովհետև [իջնելու] ուրիշ ճամփա չկար. համարում էին, թե արհավիրքից ոչնչացան։

Իսկ նրանք իրենց ուխտը կատարելուց հետո լեռնից իջան փառավորված ու հրաշալի կերպարանքով։ Այժմ նրանք քառասուներկու հոգի էին։ Վանքի բնակիչները զարմացած՝ ջահերով ու լապտերներով ընդառաջ ելան նրանց ու մեծ հարգանքով տարան տեղավորեցին։ Զարմանում էին, որովհետև երբ բարձրանում էին լեռը, քառասուն էին, իսկ երբ իջան, քառասուներկու են. միաժամանակ գիտեին, որ բացի նրանցից դեպի վեր ոչ ոք չի գնացել։ Երբ սեղան գցեցին ճաշելու, երկու այն փառավոր տղամարդիկ, որոնք ավելացել էին քառասունի վրա, վեր կացան նրանց սպասավորելու սեղանի շուրջը և թույլ չէին տալիս վանքի մարդկանց՝ ծառայելու նրանց, այլ ասում էին. «Մենք սովորություն ունենք մեր եղբայրներին ինքներս սպասավորելու»։

Եվ երբ կերան ինչ որ անհրաժեշտ էր, նրանք ողջունեցին ու աներևույթ եղան. դրանք էին Մովսեսն[310] ու Եղիան[311]։ Վանքի բնակիչները մեծ ահով բռնվեցին. նրանց պատվում էին իբրև հրեշտակների, ու մեծ պատվով ճամփու դրին»։

Սրբասեր Հովհաննեսը իր համեստության պատճառով այս բանը պատմում էր ուրիշների անունից, որպեսզի չիմանան, թե ինքն էլ նրանց հետ էր։

Սրանից հետո նա շրջեց բազմաթիվ գավառներ ու քա-

* Ելք ԼԱ, 18։



ղաքներ, հասավ Կողոնիա քաղաքը։ Թուրքերից ու արաբներից շատերը գալիս էին նրա մոտ ու մկրտվում էին նրա սքանչելի վարքի ու բժշկության համար, որ նա անում էր։

Սակայն պարսիկները նախանձեցին նրան, և Կողոնիա քաղաքի իշխանը բռնեց նրան ու մի քահանայի, չոր փայտ կուտակեց, նրանց դրեց մեջը, կրակ տվեց։ Նրա հետ եղած քահանան լաց էր լինում, իսկ նա քաջալերում էր նրան ու ասում. «Մի՛ վախենա, աստված կարող է մեզ ազատել այս կրակից, ինչպես երեք մանուկներին»[312]։

Եվ մինչդեռ բոցը բորբոքվում էր, իշխանի երեխան բերդի պարսպից ընկավ ու անվնաս վեր կացավ։ Եվ երբ հարցրին, թե՝ ինչպե՞ս կենդանի մնացիր,— նա պատասխանեց, թե՝ այն մարդը, որին գցեցիք կրակը, ինձ իր ձեռքերով պահեց և չթողեց, որ գետին ընկնեմ։ Իշխանը անմիջապես [մարդ] ուղարկեց և հրամայեց կրակից նրանց հանել ու թույլ տալ՝ ուր ուզում են, գնան։

Նա շրջեց բազմաթիվ գավառներ, գնաց Հռոմկլա հայոց մեծ կաթողիկոս տեր Կոստանդինի մոտ։ Նա ուրախությամբ մեծ պատվով ընդունեց նրան և թույլ չտվեց որևէ տեղ գնալ։ Այնտեղ մնաց, մինչև փոխադրվեց Քրիստոսի մոտ և թաղվեց այնտեղ։ Իր կյանքը ավարտեց ու հավատը պահեց, հասավ անթառամ պսակին ու անվախճան կյանքի։ Նրա աղոթքը թող մեզ սատար լինի և մեղքերի թողություն տա, իսկ նրա հիշատակը բոլոր սրբերի հիշատակի հետ մեր տեր Հիսուս Քրիստոսի համար լինի, որին հավիտյան փառք։

## ԾԵ.

## Բաթուի որդի Սարթախի մասին

Մեծ զորավար Բաթուն, որ հյուսիսի կողմերում էր, իր բնակությունը հաստատեց Կասպից ծովի և մեծ Աթլ* գետի ափին, որի նմանը երկրագնդի վրա չկա, որովհետև ծովանման է հոսում այն երկրի հարթ մակերեսի պատճառով։

* Աթըլ գետը Վոլգան է։

Ղփչաղների[313] մեծ ու լայնանիստ դաշտում նա տեղավորվեց իր հետ եկած անհաշիվ ու անհամար զորքերով։ Որովհետև վրանների մեջ էին բնակվում, իսկ չվերթ կատարելիս վրանները սայլերով էին տանում, որոնց լծում էին բազմաթիվ եզներ ու ձիեր։

Սա բոլորից ավելի խիստ զորացավ ու մեծացավ, երկրագունդը հնազանդեցրեց, ամբողջ աշխարհը հարկի տակ դրեց. իսկ իր ցեղակիցները նրան ամենքից մեծ էին համարում։ Իրենցից նա, որ թագավորում էր և որին ղան էր կոչում, նրա հրամանով էր աթոռ նստում։ Երբ Գիուգ ղանը մեռավ, նրա տոհմակիցները միմյանց դեմ թշնամացան, թե ով գրավի աթոռը։ Բոլորը արժան գտան նրան, կամ թե նա ում կամենա, նա լինի թագավոր։

Նրան հյուսիսի կողմերից կանչեցին գնալ իրենց երկիրը և թագավորել բոլորի վրա։ Նա գնաց հաստատելու իր թագավորությունը, իսկ զորքերի գլխավոր թողեց իր Սարթախ անունով որդուն։ Ինքը գնաց չնստեց թագավորական աթոռը, այլ տոհմակիցներից Մանգու անունով մեկ ուրիշին նշանակեց, իսկ ինքը վերադարձավ իր զորքի մոտ։

Բայց ազգականներից ոմանք դժգոհ էին այդ գործից, որովհետև ակնկալում էին կամ իրենք թագավորել և կամ թագավորեցնել Գիուգ ղանի որդուն, որի անունը Խոճա ղան էր։ Սակայն չհանդգնեցին իրենց դժգոհությունը երևան հանել։ Իսկ երբ նա վերադարձավ իր զորքերի մոտ, նրանք սկսեցին ապստամբության ցույց անել Մանգու ղանի դեմ և խռովությունների դիմել։ Բաթուն լսելով այս՝ հրամայեց իր ազգականներից ու մեծամեծներից շատերին կոտորել, որոնց հետ նաև Էլչի Գադա* անունով մի ոմն գլխավորի, որ Գիուգ ղանից հրաման ուներ Բաչու Նուինի փոխարեն արևելքում ու Հայաստանում գտնվող թաթարական զորքի զորավարը լինելու։ Մինչդեռ նա Պարսկաստանում ճանապարհին էր, Գիուգ ղանի մահվան լուրը հասավ նրան։ Հենց այնտեղ կանգ առավ, սպասեց, թե ով կգրավի թագավորության աթոռը։

Արևելքում գտնվող զորքի գլխավորները սրան ամբաստանեցին Բաթուի մոտ, որովհետև չէին կամենում, որ սա իրենց վրա իշխի, քանի որ մեծամիտ մարդ էր. և ասում են, թե սա նույնպես Մանգու ղանին չհնազանդվողներից էր։ [Բաթուն] հրամայեց իր մոտ բերել. նրան բռնեցին, կապանքներով տարան, և նա չարաչար կերպով սպանեց։

Այս սկսեցին նրա մոտ գնալ թագավորներ ու թագավորազուններ, իշխաններ ու վաճառականներ և բոլոր տուժածները, որոնք զրկվել էին իրենց հայրենիքներից։ Իսկ նա արդար վճիռով համապատասխանաբար տալիս էր գավառներ, հայրենիքներ, իշխանություններ ամեն մեկին, ով նրա մոտ գնում էր. տալիս էր նաև զորեղ թուղթ, և ոչ ոք չէր հանդգնում նրա կողմից հրաման ունեցողներին ընդդիմանալ։

Սա ուներ մի որդի, որի անունը Սարթախ էր, որին վերևում հիշատակեցինք. սա խնամվեց ու դաստիարակվեց քրիստոնյա դայակներով և չափահաս դառնալով հավատաց Քրիստոսին ու մկրտվեց ասորիների ձեռքով, որոնք նրան դաստիարակեցին։ Սա բազմաթիվ հնարավորություններ ստեղծեց եկեղեցու ու քրիստոնյաների համար. իր հոր համաձայնությամբ [հարկից] ազատելու թուղթ գրեց քահանաների ու եկեղեցիների համար և ուղարկեց բոլոր կողմերը մահվան սպառնալիք նրանց, ով հարկ կառնի եկեղեցուց ու նրա սպասավորներից, ինչ ազգ էլ որ լինեն. նաև [հարկ չպետք է առնեն] արաբների մզկիթներից ու նրանց սպասավորներից։

Այստեղից համարձակություն առնելով նրա մոտ գնացին վարդապետներ, եպիսկոպոսներ ու քահանաներ։ Նա սիրով ընդունում էր բոլորին ու կատարում նրանց խնդրանքները։ Իսկ ինքը միշտ երկյուղածությամբ ու աստվածապաշտությամբ էր ապրում՝ վրանե եկեղեցին իր հետ շրջեցնելով և աստվածային խորհուրդները [պատարագ, հաղորդություն] անհապաղ կատարելով։

Սրանց հետ նրա մոտ գնաց նաև Արցախի կողմերի* Խաչենի մեծ իշխան Հասանը, որին փաղաքշանքով Ջալալ էին կոչում. աստվածապաշտ, երկյուղած ու պարկեշտ մարդ էր,

* Էլչի Գադա = կառավար։

* Բնագրում է խաչենոյ և Կողմանցն Արցախայ։ Եւ կողմանցն ուղղում ենք ի կողմանցն։

*ազգությամբ հայ։ Նա սիրով ու մեծարանքով ընդունեց նրան ու նրա հետ եկածներին՝ իշխան Գրիգորին, որին սովորաբար Տղա էին կոչում, իսկ այդ ժամանակ սա ծեր էր, պարկեշտ պատանի Գետում իշխանին, Մարկոս վարդապետին ու Գրիգոր եպիսկոպոսին։*

*Տարավ իր հոր մոտ, մեծարեց և նրան տվեց իր հայրենիքներ Ջարաբերդը[314], Ականան, Կարկառը[314*], որ նրանից առաջ խլել էին թուրքերն ու վրացիները։ Առավ նաև աղվանից տեր Ներսես կաթողիկոսի ու նրա ամբողջ գույքի ու ստացվածքի համար ազատության թուղթ, որ ազատ ու անհարկատու լինի և ազատ լինի իր իշխանության բոլոր թեմերում ամենուրեք, ու ոչ ոք չընդդիմանա նրա հրամաններին։*

*Ջալալը եկավ իր տունը ուրախությամբ, բայց օրեր անց նեղվեց հարկապահանջներից ու Արղունից, գնաց Մանգու ղանի մոտ։*

*Մանգու ղանը թագավորեց հայոց յոթ հարյուր թվականին (1251 թ.)։*

## ԾԶ.

## Մորեխի մասին, որ մեր երկիրը կերավ

*Հայոց յոթ հարյուր մեկ թվականին (1252 թ.) սարսափելի մորեխ եկավ, այնքան, որ երբ վեր էին բարձրանում, ստվեր էր առաջանում, և արևի լույսը նվազ էր երևում։ Եկավ Պարսկաստանի կողմերից, կերավ մեր հայոց աշխարհը՝ ոչ միայն կանաչ բույսերը, այլև երկրի հողը, և աղբերն էր լափում, մտնում էր տները երդիկներից, դռներից, եթե բաց էին լինում։ Երկիրը սարսափի մատնվեց, և հացի սղություն եղավ։ Երբ հասավ ձմեռը, գետնին ձու դրեց և ոչնչացավ։ Հողը հոտից նեխեց։ Երբ յոթ հարյուր երկու թվականի (1253 թ.) գարունը եկավ, հողը բուսցրեց մորեխի ձագեր այնպիսի սարսափելի թանձրությամբ, մինչև իսկ ծածկվեցին երկրի հողն ու քարերը։ Երեկոյան ժամերին բլրաձև կուտակվում էին միմյանց վրա։ Սկսեց ուտել կանաչն ու հողը։*

*Մարդիկ մտածեցին թողնել իրենց բնակությունները և*



*գնալ ստրություն, որտեղ որ ուտելիք գտնեն։ Եվ քանի որ նախապես կերել էր շրջակա երկրները՝ սկսած Սպանիայից, Ասիայից, Պարսկաստանից, Միջագետքից, այդ պատճառով տարակուսած չգիտեին ինչ անեն։ Սկսեցին այնուհետև ապավինել ամենակարող ձեռքին ու հզոր բազուկին, որ ոչնչությունից գոյացրեց արարածներին և իր ողորմությամբ միշտ խնամում է սրանց, որի համար և անհնարինները հնարավոր են։ Արտասուքներով և ուխտերով նրանից հայցում էին, որ պատուհաս վերացնի երկրից։*

*Իսկ ողորմած ասված ծանր վերքերին արագ սպեղանի տվեց, և «ով հարվածեց, նա էլ բժշկեց»*։ Որովհետև խատուտիկ փոքր թռչունների մի բազմություն եկավ, որին շատության համար սովորաբար տարմ են ասում, և կարգով սկսեց եզրերից, համահավասար կերավ սպառեց մորեխի ամբողջ բազմությունը, այնպես որ մի հատ էլ չէր գտնվում։ Եվ այնտեղ պետք էր տեսնել, թե ինչպես ամեն բերան աստծու գովությամբ էր զբաղված, ամեն միտք հիացման մեջ էր։ Բայց այն զրույցը, որ վերաբերում է այս թռչուններին, արժանի է սքանչացման։*

*Ասում են, Պարսկաստանի կողմերի մի երկրում, որ կոչվում է Քիրման, կա ինչ-որ ջուր. գնում են այդ ջրից առնում և ապակյա շշերով բերում են առանց ետ նայելու, և ջուրը գետին չեն դնում, այլ կախում են ձողերի վրա և ցցում։ Այնտեղ է այդ թռչունների գոզարքի տեղը։ Ջրի հետ, որ տանում են, գալիս են թռչունները ըստ խնդրողի պահանջած քանակի. և այսպես թռչունները գալիս են մորեխի հետևից։ Բայց մենք հավատում ենք, որ ամեն բան կատարվում է աստծու խնամքով, որը բոլոր երկրի մեղքերի թույլ է տալիս պատուհասին վրա հասնել և դարձյալ իր ողորմությամբ բժշկում է, ինչպես կամենում է։ Նա [ասված] մորեխի այս պատուհասին այս տվեց իբրև դեղ ու սպեղանի, այսինքն՝ ոչնչացնող այս ձագերի բազմությանը։*

* Բ Օրին. ԼԲ, 39։

ԾԷ.

## Մանգու ղանի հրամանով կատարված աշխարհագրի մասին

Այժմ հայոց յոթ հարյուր երեք թվականին (1254 թ.) Մանգու ղանը և Բաթու մեծ զորավարը Արղուն անունով մի ոստիկանի, որ Գիուգ ղանից հրաման ուներ հնազանդված երկրներից գանձվող արքունի հարկերի վերակացության, և Բաթուի տանից Բորա աղա անունով մի այլ գլխավոր մարդու ուրիշ բազմաթիվ մարդկանց հետ ուղարկեցին աշխարհագիր [մարդահամար] անելու իրենց իշխանության ենթարկված բոլոր ազգերին։

Նրանք այս հրամանը ստանալով գնացին բոլոր երկրները այդ գործը գլուխ բերելու։ Հասան նաև Հայաստան, Վրաստան, Աղվանք ու նրանց շուրջը գտնվող երկրները. սկսեցին տասը տարեկանից վեր բոլորին համարագրել բացի կանանցից։ Եվ բոլորից խստագույն կերպով հարկեր էին պահանջում շատ ավելի, քան մարդ ի վիճակի էր տալու։ Սկսեցին աղքատանալ։ Տանջում էին անասելի խոշտանգումներով, չարչարանքներով, գելարաններով [պրկող գործիքներով]։ Ով թաքնվում էր, բռնում սպանում էին։ Իսկ ով չէր կարողանում հարկը վճարել, նրանց երեխաներին էին վերցնում պարտքի դիմաց, քանի որ մահմեդական պարսիկների հետ էին շրջում։ Նեղում էին նաև իշխանները, գավառատերերը՝ դառնալով նրանց գործակիցներ տանջելու և պահանջելու գործում իրենց շահի համար։ Սրանով չբավականացան, այլ բոլոր արհեստավորներին թե քաղաքներում և թե գյուղերում ամենքին հարկատու դարձրին։ Նաև ծովակները, ձկնորսների լճերը, երկաթահանքերը, դարբիններին, ծեփարարներին* [հարկի տակ դրին]։ Եվ ի՞նչ անհրաժեշտ է մանրամասն պատմել, մարդկանց եկամուտների բոլոր աղբյուրները կտրեցին, միայն իրենք էին շահում։ Առան նաև Կողբում և դանազան կողմերում գտնվող բոլոր աղահանքերը։

Նաև վաճառականներից մեծ շահ առնելով՝ ոսկու, արծաթի ու թանկագին քարերի հսկայական գանձեր կուտակեցին։ Այսպես բոլորին աղքատացնելով՝ վայով ու վայնասունով երկրները լցրին, չար ոստիկաններ թողին երկրներում, որ ամեն տարի պահանջեն միևնույն չափով ու գրով։

Բայց նրանցից մեծարվեց Ումեկ անունով մի հարուստ վաճառական, որին իրենք Ասիլ էին կոչում։ Սա մի բարեգործ մարդ էր, որին երբեմն հիշատակեցինք. Կարս քաղաքի ավերման ժամանակ թաթարների կողմից Հովհաննես, Ստեփանոս որդիներով ու եղբայրներով աղատվեց։ Այն ժամանակ բնակություն հաստատեց Տփղիս քաղաքում և անվանվեց վրաց Դավիթ թագավորի հայր. ղանից գրով և ամբողջ ավագանուց մեծարվեց։ Սա առատ նվերներ ավեց Արղունին ու նրա հետ եղածներին և նրանցից խիստ մեծարվեց։

Բայց եկեղեցականներից ոչ մի հարկ չառան, որովհետև ղանից հրաման չունեին [հարկ չառան] նաև Սարավանի հարուստ և ունևոր որդիներ Շնորհավորից ու Մկրտչից։

ԾԸ.

## Բաթուի և Մանգու ղանի մոտ հայոց բարեպաշտ Հեթում թագավորի գնալու մասին

Հայոց մեծահավատ ու քրիստոսասեր Հեթում արքան, որ Կիլիկիայի կողմերում էր, նստում էր Սիս քաղաքում։ Նա սկզբում իր եղբայր Սմբատին, որ իր զորավարն էր, ուղարկեց Գիուգ ղանի մոտ ընծաներով ու նվերներով և նրա մոտից [Սմբատը] վերադարձավ պատվով ու ընդունելության հրովարտակներով։

Իսկ երբ Մանգու ղանը թագավորեց, մեծ թագավորահայր և զորավար Բաթուն, որ անթիվ բազմությամբ բանակել էր հյուսիսի կողմերում՝ Աթլ [Վոլգա] կոչվող մեծ ու անհուն գետի ափը, որ թափվում է Կասպից ծովը, (պատվիրակ) ուղարկեց Հեթում թագավորի մոտ, որ գա իրեն ու Մանգու ղանին տեսնելու։ Նա երկյուղելով սրանից՝ գաղտագողի, ծպտյալ թուրքերից վախենալու պատճառով, որ նրան սահմանակից էին և անվանվում էին հոռոմների սուլթան,

* Ըստ Ալիշանի չպարար=չքի հանք (բովք պաղլեղի)։

որի [սուլթանի] անունն էր Ալադին, որովհետև նրա գծով էին պահել թաթարներին օգնելու համար. տասներկու օրում արագ անցավ նրա երկրից, եկավ Կարս քաղաքը։ Տեսավ Բաչու նոյինին, որ արևելքում գտնվող թաթարական զորքի զորապետն էր, և այլ մեծամեծների ու նրանցից մեծարվեց։ Կանգ առավ Արագածոտնում՝ Արայի լեռան հանդեպ, Վարդենիս կոչված գյուղում, ազգով հայ, կրոնով քրիստոնյա Քուրդ անվանված իշխանի տանը. նրա որդիքն էին Վաչեն ու Հասանը, և կինն էր Մարզպանի դուստրը՝ Մամիկոնյան տոհմից Խորիշահը՝ Ասլանբեկի ու Գրիգորի քույրը։ [Այստեղ մնաց] մինչև նրա համար իր տանից բերվեց ինչքը ընծաների ու նվերների համար, որը ուղարկեցին նրա հայր իշխանաց իշխան Կոստանդինը, որ այն ժամանակ ծեր էր, Լևոն և Թորոս որդիները, որին [Թորոսին] թողել էր իր փոխանորդ, որովհետև նրա բարեպաշտ թագուհին՝ Զաբել անունով, որ նշանակում է Եղիսաբեթ, այսինքն՝ աստծու յոթերորդ օրը [շաբաթ], քանի որ արդարև իր անվանը համապատասխան, աստծու կամքի հանգստարանն էր, բարեգործ, ողորմած ու աղքատասեր, որ դուստրն էր առաջին պսակավոր մեծ թագավոր Լևոնի,— փոխադրվել էր Քրիստոսի մոտ [մեռել էր]։

Երբ մեծ կաթողիկոս Կոստանդինը իմացավ, որ նա հաջողությամբ գնաց և կանգ է առել Մեծ Հայքում, ուղարկեց գիտուն ու իմաստուն մեծ վարդապետ Հակոբին, որին առաջ բարեկամության ու միաբանության համար ուղարկել էին հույների թագավոր Հովհաննեսի, որը տիրում էր Ասիայի կողմերին և այդ ժամանակ զորեղացել էր, և նրանց պատրիարքի մոտ։ Գնաց Աստվածաշնչի խորիմաստ խոսքերով հույների հարցաքննության ժողովում ընդդիմացավ հույներին, որոնք մեկ Քրիստոսի մեջ մի էություն ընդունելու համար բամբասում էին, թե մենք եվտիքյաններ[315] ենք։ Նա խելամիտ խոսքերով ու աստվածաշնչով ցույց տվեց, որ Քրիստոսը երկուսից է միավորված՝ աստված ու կատարյալ մարդ՝ երկու անճառ միավորությամբ, որ աստվածությունը չի կորցրել և մարդությունը չի շփոթել [խառնել]։ Մի էությամբ փառավորված է և գործում է աստվածաբար ու մարդաբար. Նույնպես էլ սուրբ Աստվածածնի մասին էր խոսքը գնում, որ



մենք ասում ենք հանձին որդու ըստ Հովհաննես ավետարանիչի վկայության։ Ուրիշ ինչ թյուրիմացություններ նրանք ունեին մեր դավանության վերաբերյալ, ամենը աստվածիմաստ խոսքերով ու գրքերի վկայություններով ժխտեց [Հակոբ վարդապետը], նրանց սիրտը մեր ազգի նկատմամբ լցրեց սիրով ու միաբանությամբ և նրանցից մեծարված վերադարձավ։ Եկան նաև տեր Ստեփանոս եպիսկոպոսը, Մխիթար վարդապետը, որ Սկևռայում[316] էր մնում, ուր նա գնացել էր արևելքի կողմերից, Բարսեղ քահանան, որ Բաթուի մոտ պատվիրակ էր եղել. նրա հետ էլ եկել էր կուսակրոն Թորոս քահանան, Կարապետը, որ արքայի պալատական քահանան էր՝ բնավորությամբ հեզ ու գիտնական, և այլ շատ իշխաններ։

Արքան դրանց իր հետ առած՝ գնաց Աղվանքի միջով և Դերբենդի դռնով, որ Ճորա պահակն է, հասավ Բաթուի ու նրա որդի Սարթախի մոտ, որ հավատով քրիստոնյա էր, և նրանցից մեծարվեց բարձր պատվասիրությամբ։ Ապա նրան ուղարկեցին Մանգու ղանի մոտ երկայնաձիգ ճանապարհով Կասպից ծովի այն կողմը։

Նրանից [Բաթուից] բաժանվեցին մարերի[317] ամսի վեցին՝ մայիսի տասներեքին, անցան Այեխ* գետը, հասան Օր՝ Բաթու ղանի ու Մանգու ղանի միջև ընկած ճանապարհի մեջտեղը. անցան Երթիշ** գետը, մտան Նայիմանի*** երկիրը, հասան Խարախոռում****, հոռի[318] ամսի չորսին՝ սեպտեմբերի տասներեքին՝ խաչի նավակատիքի տոնի օրը մտան Թաթարստան. տեսան Մանգու ղանին՝ երևելի փառքով նստած. Մատուցեցին ընծաները, և ըստ արժանվույն մեծարվեց [Հեթումը] նրանից։ Օրդուում [բանակում] հիսուն օր մնաց, նրան տվին զորավոր մի հրովարտակ, որպեսզի ոչ ոք չհանդգնի նրան և նրա երկրին նեղություն տալ. տվին նաև ազատության գիր բոլոր վայրերի եկեղեցիներին։

Եվ բաժանվելով նրանից հիսներորդ օրը՝ սահմի[319] ամ-

* Ուրալ գետը։

** Օբի վտակներից մեկը՝ Իրտիշ։

*** Թաթարական մեծ տոհմ։

**** Կարա-Խիտայան և Թուրքեստանի, Գոբի անապատի և Տիենշանի միջև

մի քանիսերին՝ նոյեմբերի մեկին, երեսուն օրում Հասան Ղումաղար. եկան Գերպալեխ, Գեչալախ և ավազուտ երկիրը*, որտեղ վայրենի մարդիկ կային՝ մերկ, մազ միայն գլուխների վրա կար, կանանց ստինքները մեծ էին և չափազանց երկար, իսկ իրենք չխոսկան էին։ Այնտեղ կային դեղին ու սև գույներով վայրի ձիեր, ձիերից ու էշերից մեծ ջորիներ՝ սպիտակ ու սև գույներով, և վայրի ուղտեր, որոնք երկու սապատ ունեին։

Այնտեղից եկան Աուլեխ, Քուլլուկ, Ընկախ, Ճանպալեխ, Խութափայ և Անկիպալեխ։ Ապա մտան Թուրքաստան, այնտեղից Եկափրուկ, Դինկապալեխ և Փուլաստ։ Անցան Սուդդյոլը և Կաթնծովը***, Հասան Ալվալեխ, Իլանպալեխ. կտրեցին Իլանսու կոչված գետը, Տավրոսի լեռնաբազուկը, Հասան Դալաս, գնացին Հուլավուի մոտ, որ Մանգու ղանի եղբայրն էր և իրեն բաժին էր վերցրել արևելքի կողմերը։

Ապա արևմուտքից թեքվելով դեպի հյուսիս, եկան Խութուխչի, Գերքանթ, Սուղուլղան, Ուրոսողան, Քայիքանթ, Խուզախ, որ Քամոցն է, Խնգախույր, Սղնախ, որ Խարչուխ լեռն է, որից սուլչուքիններն**** են. սրա [Խարչուխի] սկիզբը Տավրոս լեռից է, գնում է մինչև Փարչին ու այնտեղ վերջանում է։

Այնտեղից գալիս են Սարթախի՝ Բաթուի որդու մոտ, որ գնում էր Մանգու ղանի մոտ. այդտեղից գալիս են Սղնախ, Սավրան, որ խիստ մեծ է, Խարչուխ, Ասոն, Սավրի, Օթրար, Զուռնուխ, Դիզակ և այնտեղից երեսուն օրում Սամարղանդ, Սարիփուլ, Քիրման, Բուխարա։ Ապա անցնում են, Ջեհան***** մեծ գետը, գալիս են Մրմըն, Սարախս, ապա Տուս, որ գտնվում է Խորասանի դիմաց և կոչվում է Խորասան։ Մտան Մազանդարան, այնտեղից Պստան, ապա էրաղ երկիրը՝ Մուլհեդի սահմաններում, գալիս են Տամղա, Ռե մեծ քաղաքը,

* Ըստ Ալիշանի Քոբի անապատը։

** Ավազուտ երկիրը Քոբի անապատն է։

*** Սուդդյոլը նույն Կաթնծովն է, որ ըստ Ալիշանի Բալխաշն է, իսկ ըստ Ք. Պատկանյանի Կարաքալա լիճն է (История монголов, С.-Петербург, 1874, էջ 130)։

**** Սալչուքիները սելջուկներն են։

***** Ջեհուն կամ Սիհուն գետը Ամու-Դարիան է՝ Օքսոսը։



Ղազվին, այնտեղից Ավահր, Զանգիան, Միանա, տասներկուերորդ օրը՝ Թավրիզ։ Քսանվեց օրից հետո անցան Երասխ գետը և եկան Սիսիան Բաչու նոյինի մոտ, որ թաթարական զորքի գլխավորն էր։ Սա նրան ուղարկեց Խոջա նոյինի մոտ, որին իր փոխարեն զորքի գլխավոր էր թողել, իսկ ինքը զորքի գլխավորներին առած ընդառաջ գնաց Հուլավուին՝ Մանգու ղանի եղբորը, որ գալիս էր արևելք։

Իսկ բարեպաշտ Հեթում թագավորը եկավ իշխան Քրդի տունը՝ Վարդենիս գյուղը, որտեղ թողել էր իր ինչքը ու գույքը, և սպասում էր Բարսեղ քահանայի գալստյանը, որին վերստին ուղարկել էր Բաթուի մոտ, որ նրան ցույց տա Մանգու ղանի թուղթն ու հրամանը, որպեսզի նա էլ նման մի հրաման գրի։

Ապա նրա մոտ եկան նրա վարդապետներ Հակոբը, որին այստեղ էր թողել եկեղեցու գործերի համար, Մխիթարը, որին Բաթուից դարձրեց, քանի դեռ չէր գնացել Մանգու ղանի մոտ, այլև եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ, քրիստոնյա իշխաններ, ովքեր գալիս էին նրա մոտ, սիրով ընդունում էր ամենքին, որովհետև քաղցրաբարո, իմաստուն, կարգացած մարդ էր։ Ըստ հնարավորության պարգևներ էր տալիս և բոլորին ուրախ ճամփու էր դնում։ Տալիս էր նաև քահանայական հանդերձներ իբրև եկեղեցիների զարդ, որովհետև չափազանց շատ էր սիրում պատարագ ու եկեղեցի։ Ընդունում էր բոլոր ազգերի քրիստոնյաներին և խնդրում էր սիրով մնալ միմյանց հետ՝ իբրև Քրիստոսի եղբայրներ ու անդամներ, ինչպես սուրբը պատվիրեց, թե՝ «Սրանով կճանաչեն, որ իմ աշակերտներն եք, եթե միմյանց սիրեք»*։

Բազմաթիվ զարմանալի ու անծանոթ բաներ պատմեց մեզ բարբարոս ազգերի մասին, որ տեսել էր կամ լսել։ Նա ասում էր, թե՝ «Մի երկիր կա Ղատայիքից** այն կողմ, ուր կանայք բանական մարդու նման են, իսկ տղամարդիկ շան կերպարանք ունեն և անխոս են, մեծ ու մազոտ։ Շները ոչ ոքի չեն թողնում իրենց երկիրը մտնել. շներն են որս անում և դրանով կերակրվում են շներն ու կանայք։ Շների հետ

* Յովհ. ԺԳ. 35։

** Ղատայիքը Չինաստանն է։

խառնակվելիս արուները շնակերպ են ծնվում, իսկ էգերը լինում են կանանց նման։

Կա մի ավազոտ կղզի, որտեղ ծառի պես թանկագին ոսկոր է բուսնում, որին ձկնատամ են կոչում. կտրելուց հետո տեղում եղջյուրանման մի ուրիշն է բուսնում։

Մի երկիր էլ կա, ուր շատ կռապաշտներ կան. սրանք չափազանց մեծ կավեղեն կուռք են պաշտում, որի անունն է Շակմոնիա*։ Ասում են, որ այդ չաստվածը** երեք հազար քառասուն տարեկան է։ Կա մեկ ուրիշն էլ, որ երեսունհինգ թուման*** տարեկան է, իսկ մի թումանը տասը հազար է։ Հետո նրան հանում են աստվածությունից։ Կա մեկ ուրիշն էլ, որի անունը Մադրին է։ Նրա համար անասելի մեծությամբ կավե մի արձան են պատրաստել մի գեղեցիկ տաճարում։

Մի ազգ էլ ողջ կանանցով, մանուկներով քուրմ են, կոչվում են տոյինք. մազերը և մորուքները սափրված են, ունեն դեղին փիլոն քրիստոնյաների փիլոնի նման, բայց միայն լանջքերն է ծածկում, թիկունք չունի։ Կերակուրների և ամուսնության նկատմամբ զուսպ են։ Քսան տարեկանում կին են առնում, մինչև երեսուն տարեկանը շաբաթական երեք անգամ են մոտենում նրան, մինչև քառասունը՝ ամսական երեք անգամ, մինչև հիսուն տարեկանը՝ տարին երեք անգամ, իսկ երբ հիսունը անցնում է, այլևս նրան չեն մոտենում։

Ուրիշ շատ բաներ էլ պատմեց իմաստասեր թագավորը բարբարոս ազգերից, որը մենք բաց ենք թողնում՝ որպեսզի որևէ մեկին ավելորդ չթվա։

Մանգու ղանի մոտից դուրս գալուց հետո Հայաստան հասավ ութ ամսում. դա հայոց յոթ հարյուր չորս թվականն էր (1255 թ.)։

* Բուդդայական աստված՝ հնդկական Շաքյան թագավորական տոհմի անունից, իսկ մունին նշանակում է սրբազան ապաշխարող։
** Բնագրում՝ աստուած. Ճիշտն է չաստուած, որ ունեն շատ ձեռագրեր։
*** Բնագրում դուման՝ ուղղում ենք ըստ տարբերակների թուման, որ թաթարական բառ է=10 հազար։



## ԾԹ.

## Հոռոմների երկրում տեղի ունեցած կոտորածի մասին

Այժմ հայոց յոթ հարյուր հինգ թվականը սկսվելիս մեռավ հյուսիսի զորապետ Բաթուն, իսկ նրա որդի Սարթախը ճանապարհին էր, որովհետև գնում էր Մանգու ղանի մոտ։ Նա չդարձավ իր տունը հորը թաղելու, այլ գնաց իր բռնած ճանապարհը։ Նրա գալու վրա Մանգու ղանը շատ ուրախացավ, ելավ նրան ընդառաջ ու նրան մեծ պատվով մեծարեց. նրան տվեց նրա հոր իշխանությունը՝ իշխելու բոլոր զորքերին ու նրա իշխանության բոլոր հնազանդվածներին, իր երկրորդը կոչվել և տիրաբար հրաման տալ. և նրան ուղարկեց իր տունը։

Նրա հետ էր նաև Խաչենի բարեպաշտ իշխան Ջալալը, որ գնացել էր տիեզերքի տիրոջը ցույց տալու իր աղետները, որ նա կրեց Արղուն ոստիկանից և մահմեդականների սադրանքի պատճառով հազիվ պրծավ մահվանից։ [Սարթախը] նրան թուղթ տվեց, որ նա իր իշխանությունը տիրի ինքնուրույնաբար և ոչ ոքից չերկնչի, որովհետև նրան [Ջալալին] Սարթախը քրիստոնյա լինելու համար սիրում էր, քանի որ ինքն էլ քրիստոնյա էր։ Սարթախը իր իշխանությունը հասավ մեծ փառքով։ Նրա մահմեդական ազգականները՝ Բարաքան ու Բերքաչայը նրան մահադեղ տվին ու այս կյանքից զրկեցին։ Բոլոր քրիստոնյաները մեծ սուգ արին. սգացին նաև իրենք՝ Մանգու ղանն ու իր եղբայր Հուլավուն, որ տիրում էր ամբողջ արևելքի կողմերին։

Բայց այս դեպքերը դեռ չէին պատահել, զորավարների մեծ ղանանման Հուլավուն հրաման տվեց արևելքում գտնվող ամբողջ թաթարական զորքին, որի գլխավորն էր Բաչու նոյինը, որ ամբողջ իրենց ժողովրդով, ունեցվածքով թողնեն իրենց բնակության երկիրը՝ Մուղանը, Աղվանքը, Հայաստանն ու Վրաստանը և գնան հոռոմների երկիրը, որպեսզի իրենց փոխարեն ինքը նստի բարեբեր երկրում։ Որովհետև այնքան մեծ բազմությամբ եկավ նա, որ ասում են, թե մի ամիսը հազիվ բավականացավ նրա զորքին Ջեհուն[320] մեծ գետով անցնելու համար։ Այլև ոմանք նրա ազգակիցներից՝

Բաթուի և Սարթախի կողմերից եկան անցան Դերբենդի դռներից այս կողմ բազմաթիվ ու անհամար զորքով՝ մեծամեծ մարդիկ և իշխանության գլուխներ, որոնց անուններն էին Բալախա, Տութար, Ղուլի, որոնց հենց մենք տեսանք։ Սրանք Չինգիզ ղանի թոռներն էին, որոնց աստվածորդիներ էին կոչում։ Սրանք հարթեցին, հեշտացրին ճանապարհները, որոնցով անցնում էին, քանի որ հենց սայլերով էին գալիս։

Եվ հարկապահանջությամբ, հափշտակությամբ, անհագորեն ուտելով ու խմելով շատ տառապանքներ պատճառեցին բոլոր երկրներին և բոլոր ազգերին մահվան դուռը հասցրին։ Այլես մյուս բազմաթիվ հարկերի հետ, որ Արղունի կողմից էր նշանակվել, մալի* ու խափչուրի, Հուլավուից հարկապահանջման հրաման տրվեց, որը [հարկը] թաղար էին կոչում՝ արքունական ցուցակագրման մեջ մտած ամեն գլխի համար պահանջում էին հարյուր լիտր ցորեն, հիսուն լիտր գինի, երկու լիտր բրինձ ու ձավար**, երեք տոպրակ, երկու պարան, մի արծաթ դրամ, մի նետ, մի պայտ՝ չհաշված այլ վճարումները. քսան անասունից մի անասուն և քսան արծաթ դրամ։ Ով որ չուներ, պահանջմունքի փոխարեն ուստրերին ու դուստրերին էին առնում։ Այսպես նեղն ընկավ ու տառապեց ամբողջ երկիրը։

Իսկ թաթարական զորքերը թեպետ դժվարացան թողնել իրենց բնակված երկիրը, ստիպված նրա ահից թողին, որովհետև խիստ վախենում էին նրանից, ինչպես ղանից։ Եվ գնացին հոռոմների երկիրը։

Հոռոմների սուլթանը պատերազմով դուրս եկավ նրանց դեմ, բայց չկարողացավ դիմադրել, այլ փախստական դառնալով ընկավ Ալայիա կղզին։ Եվ նրանք սրով մաշեցին նրա

* Մալ բառը թաթարերեն հարկ է նշանակում։ Աճառյանը բացատրում է մի տեսակ հարկ։ Մեր կարծիքով մալ նշանակում է խոշոր եղջերավոր անասուն։ Քանի որ խափչուրը ոչխարի հարկն է, պետք է հավատալ, որ մալը խոշոր եղջերավոր անասուններից գանձվող տուրքն է։ Խափչուրը կամճուռ ձևով կա Օզմի թարգմանում։

** Ալիշանը ենթադրաբար ծնծառը համարում է հաակախառը կամ հարգախառը գարի կամ այլ ընդեղեն։ Աճառյանը համարում է չամիչ։ Ծանծ կամ ծունծ հատիկի կճեպն է։ Ծնծառ նշանակում է կճեպը հանված, այսինքն՝ ձավար։



իշխանության երկրները մինչև Օվկիանոս և Պոնտոս՝ կոտորելով ու հափշտակելով. կոտորեցին նաև Կարին քաղաքը, Երզնկան, Սեբաստիան*, Կեսարիան, Իկոնիան և սրանց շուրջ եղած գավառները։ Եվ իրենց բուշը ետ դարձրին գնալու իրենց իշխանը Հուլավուի հրամանով, իսկ իրենք ասպատակեցին զանազան կողմեր։

Նրանից հետո գնաց նաև հայոց Հեթում թագավորը, որ եկել էր Մանգու ղանի, Բաթուի, Սարթախի և Հուլավուի մոտից ու գտնվում էր Բաչու նոյինի մոտ, որը նրան մեծ զորքով ուղարկեց իր երկիրը՝ Կիլիկիա՝ Սիս քաղաքը։ [Հեթումը] շատ ընծաներով ու զորքով ծառայություն էր մատուցում Բաչու նոյինին և նրա հետ եղած զորքին, մինչև որ նրա մասին գոհության ու գովության թուղթ գրեցին Հուլավուին։ Իսկ մեծ Հուլավուն, որովհետև պատերազմող մարդ էր, հավաքեց զորքերի ամբողջ բազմությունը, գնաց մուլհեդների երկիրը՝ Ալամութ և գրավեց այն, որովհետև երկար տարիներ արքունի զորքը պաշարել էր այն. Ալազնի որդիները սպանեցին իրենց հորը և իրենք եկան Հուլավուի մոտ, իսկ նա հրամայեց Ալամութում եղած բոլոր ամուր բերդերը քանդել, իսկ ինքը հրաման ավեց բոլոր զորքերին և սրանց իշխանության բոլոր հնազանդվածներին հավաքվել միասին՝ հարձակվելու արաբների պետության Բաղդադ կոչված մեծ քաղաքի վրա, այսինքն՝ պարսիկների և տաճիկների սահմանամերը, որովհետև դեռես այն չէին գրավել։

Եվ խալիֆան, որ նստում էր այնտեղ, Մահմեդի ազգից էր, իսկ խալիֆա հետնորդ է նշանակում, որին հնազանդված էին բոլոր մահմեդական թագավորները, որոնք թուրք, քուրդ, պարսիկ, ելամ և այլ ազգերից են։ Նա նրանց իշխանությունների գլխավոր ղեկավարն էր, իսկ նրանք դաշինքով հնազանդվում և պատվում էին նրան՝ որպես ազգակցի և իրենց ընդհանուր օրենսդրի*** իրենց առաջին մոլորեցնողի։

* Ըստ տարբերակի, որ ավելի ճիշտ է։

** Բնագիրն ունի՝ նորա դաշինքը հնազանդելին և պատուէին զնա, որպես զազգակից և զհամազգի օրէնսդրին իւրեանց՝ առաջին մոլորեցուցչին։ Օրէնսդրին ազդեին է՝ օրէնսդիրն, իսկ առաջին մոլորեցուցչին պետք է լինի զառաջին մոլորեցուցիչն։

Հնարավոր է, որ այստեղ հնազանդէին ու պատուէին բայերի հայցա-

Գնացին այս ղալան [ամրոցը] նաև Բաթուի կողմերի մեծամեծ գլխավորները՝ Ղուլը, Բալաղան, Տութարը, Ղատաղանը, որովհետև բոլորն էլ հարգում էին Հուլավուին՝ որպես ղանին, հնազանդվում էին նրան և վախենում նրանից։

## Կ.

## Բաղդադի ավերման մասին

Աշխարհի թագավորների մեջ մեծ և տիեզերակալ Մանգու ղանը հայոց յոթ հարյուր յոթ թվականին (1258 թ.) անթիվ ու անհամար զորք գումարեց, գնաց հարավ-արևելքի կողմերը հեռավոր մի երկիր Նանգիաս [Հարավային Չինաստանը] կոչված ժողովրդի վրա, որովհետև նրանից ապստամբվել էին ու հարկեր չէին վճարում, ինչպես վճարում էին այլ երկրները։ Սրանք պատերազմող մարդիկ էին, ունեին անառիկ երկիր և կռապաշտ էին։ Ուտում էին իրենց ծերունիներին ու պառավներին։ Ամբողջ տոհմը հավաքվում էր՝ որդիներ, թոռներ, ծոռներ և իրենց ծերացած ծնողներին բերանից քերթում էին, միսն ու ոսկորները հանում, եփում, ուտում էին առանց մնացորդի։ Իսկ մորթին տիկ էին հանում, գինի էին լցնում և առանձնացման միջոցով ամենքը խմում էին, ովքեր որ այդ տոհմից էին, բայց ոչ օտար տոհմերը, որպես թե նրանից են սերված և իրենց է վերաբերում այն ուտելն ու խմելը։ Իսկ գանգը պատում էին ոսկով, ամբողջ տարին նրանով էին խմում։

Մանգու ղանը գնաց նրանց վրա պատերազմի, կոտորեց և զորով հնազանդեցրեց։ Տուն վերադառնալիս մահվան ցավը բռնեց նրան, ու նա վախճանվեց։ Աթոռը գրավեց նրա եղբայր Արիք Բուղան։

Իսկ մեծ Հուլավուն, որ նրա եղբայրն էր և նրա կողմից արևելքի զորքի գլխավոր էր նշանակված, հրաման տվեց բոլոր իրեն հնազանդվածներին ընդհանրապես՝ գնալու արաբական մայրաքաղաք Բաղդադի վրա, որ արաբների արքայանիստն էր։

Այնտեղ նստած թագավորին սուլթան կամ մելիք չէին կոչում, ինչպես որ սովորաբար ուրիշներին անվանում էին նրանք, որոնք թուրքերից, պարսիկներից, քրդերից բնատիրված էին, այլ խալիֆա էին կոչում, այսինքն Մահմեդի հետնորդ։

Մեծ Հուլավուն նրա վրա շարժվեց բոլոր հնազանդված ժողովուրդների անհամար բազմությամբ աշնան ու ձմռան եղանակներին՝ այդ երկրի սաստիկ շոգի պատճառով։ Բայց նախքան իր գնալը հրաման տվեց Բաչու նոյինին և նրա հետ Հոռոմների երկրում գտնվող զորքերին, որ գնան շրջապատեն Տիգրիս մեծ գետը, որի վրա շինված էր Բաղդադ քաղաքը, որպեսզի նավերով ոչ ոք Բաղդադից չփախչի, գնա մինչև Կատիփոն, կամ ավելի ամուր Բասրան։ Նրանք անհապաղ կատարեցին հրամանը. նավակամուրջներ կապեցին մեծ գետի վրա և երկաթյա կեռերով ու շամփուրներով ամուր ցանցեր գցեցին գետի մեջ ու հատակում, որպեսզի ոչ ոք լողալով դուրս չպրծնի ու քաղաքից հեռանա*, և իրենք չիմանան։

Իսկ Մուսթասար խալիֆան, որ քաղաքում էր նստում, ինքնավստահ հպարտացած՝ Դավթար անունով իր տան վերակացու մի իշխանավոր մարդու միջոցով մեծ զորք ուղարկեց նրանց վրա, որոնք գետի վրա հսկում էին։ Սա գնաց հաղթեց սկզբում և թաթարներից մոտ երեք հազար մարդ կոտորեց, և երբ երեկոն վրա հասավ, անհոգությամբ նստեց ուտել-խմելու։ Ավետատարներ ուղարկեց Մուսթասար խալիֆայի մոտ, թե բոլորին կոտորեցի, իսկ սակավաթիվ մնացորդներին վաղը կսպանեմ։

Իսկ թաթարների խորամանկ ու բազմահնարագյուտ զորքը ամբողջ գիշերը սպառազինվեց ու պատրաստվեց, շար-

---

կան ու տրական խնդիրները խառնվել են, բայց քանի որ սկզբից սկսած խնդիրները և ժամանակը դրանց որոշիչները հայցականով են, ուստի հիշյալները նույնպես պետք է ուղղել։

* Բնագիրն ունի՝ ընկեցին ցանցս ամուրս հանդերձ երկաթի կռոք և շամփրով ի մէջ գետոյն և յատակսն, զի մի՛ ոք լողալով զերծանիցի. և ենոյ ի քաղաքէն։ Նախ՝ կռոք պետք է ուղղել՝ կեռօք, իսկ ենոյ բոլորովին անիմաստ է։ Անհրաժեշտ է զերծանիցի բայից հետո միջակետը ջնջել և ենոյ-ն ուղղել՝ ելանիցի։

ջանակի պատեց արաբական բանակը. սրա հետ էր նաև Շահընշահի որդի Զաքարե իշխանը։ Եվ երբ լուսանում էր առավոտը, սրերը գործի դրին, համահավասար բոլորին կոտորեցին ու գետասույզ արին։ Նրանցից ոչ ոք չազատվեց [բացի ըլերից]*։

Նույն առավոտյան նաև մեծ Հուլավուն շուրջանակի պատեց Բաղդադ քաղաքը. յուրաքանչյուրին պարսպից մի գըրկաչափ տվեց փլցնելու և զգուշությամբ հսկելու, որ ոչ ոք չփախչի։ Խալիֆայի մոտ պատգամավոր ուղարկեց քաջ Թաուշին և ուրիշներին, որ գա հնազանդվի իրեն և դառնա ղանին հարկատու։

Նա խստությամբ ու անարգանքով պատասխան տվեց. ասաց, որ ինքը աշխարհակալ է, տեր է ծովի ու ցամաքի. պարծեցավ Մահմեդի դրոշակով, թե՝ «Այստեղ է, ասաց, և եթե շարժեմ այն, դու էլ, տիեզերքն էլ ընդհանրապես կոչընչանաք։ Իսկ դու մի շուն ես, ասաց, թուրք ես. ինչպե՞ս քեզ հարկ տամ կամ հնազանդվեմ»։

Իսկ Հուլավուն ոչ անարգանքի համար բարկացավ, ոչ էլ որևէ մեծախոսություն արեց, այլ միայն հետևյալը ասաց. «Աստված է իմանում, ինչ է անում»։ Եվ հրաման տվեց պարիսպը փլցնել։ Ու ամբողջապես փլցրին։ Ասաց՝ դարձյալ շինեցեք և զգուշությամբ հսկեցեք։ Այդպես էլ արին։

Քաղաքը լիքն էր զորքով ու ժողովրդով։ Յոթ օր պարըսպի վրա մնացին, և ոչ ոք նրանց վրա նետ չարձակեց, կամ սուր չօգտագործեց, ոչ քաղաքից, ոչ էլ թաթարական զորքից։ Յոթ օրից հետո քաղաքացիք սկսեցին հաշտություն խընդրել ու նրա մոտ ելնել սիրով ու հնազանդությամբ։ Հուլավուն հրամայեց այդպես անել։

Քաղաքի դռներից անհամար բազմություններ էին դուրս գալիս՝ միմյանց հետ մրցելով, թե ով առաջ նրա մոտ կհասնի։ Իսկ նա եկողներին բաժանում էր զորքերի վրա և հրամայում քաղաքից հեռացնել, ծածուկ կոտորել, որ մյուսները չիմանան։ Եվ բոլորին կոտորում էին։

* Փակագծվածը նոսամուտ է։ Գանձակեցին ասում է՝ Առհասարակ կոտորեցին զամենեսին և գետամայն արարին. և ոչ ոք մնաց ի նոցանէ ազդել: Այսքանից հետո անիմաստ է ասել՝ բաց ի սակաւուց:



Չորս օր* հետո դուրս եկավ նաև Մուսթասար խալիֆան երկու որդիներով ու բոլոր մեծամեծներով՝ մեծ քանակությամբ ոսկի, արծաթ, թանկագին քարեր, մեծագին հանդերձանք վերցրած իր հետ Հուլավուի և մեծամեծների նվերների համար։ Եվ նա [Հուլավուն] սկզբում մեծարեց նրան՝ մեղադրելով ուշանալու և իր մոտ անմիջապես չգալու համար։ Ապա [Հուլավուն] նրան հարցրեց. «Դու ի՞նչ ես, աստվա՞ծ ես, թե մարդ»։ Նա ասաց. «Մարդ և աստծու ծառա»։ Հուլավուն ասաց. «Ուրեմն աստվա՞ծ քեզ ասաց, որ ինձ անարգես, շուն կոչես և ինձ՝ շանս չտաս աստծու կերակուրն ու ըմպելիքը։ Արդ՝ քաղցած լինելով աստծու այս շունը կուտի քեզ»։ Եվ իր ձեռքով սպանեց նրան։ «Այս,— ասաց,— պատիվ է քեզ, որովհետև ես սպանեցի քեզ և չտվի այլ մեկին սպանելու»։ Եվ իր որդուն հրամայեց խալիֆայի որդիներից մեկին սպանել, իսկ մյուսին տալ Տիգրիս գետին ընծա։ «Որովհետև, ասում է, մեր դեմ չմեղանչեց [Տիգրիսը], այլ անզգամներին կոտորելու համար գործակից եղավ»։ Նաև ասաց. «Այս մարդը իր զոռոզությամբ շատ արյուն թափել տվեց, թող գնա աստծուն պատասխան տա, իսկ մենք անպարտ կլինենք»։ Կոտորեց նաև այլ մեծամեծների։

Ապա հրաման տվեց պարսպի վրա հսկող զորքին իջնել ու կոտորել քաղաքի բնակիչներին մեծից մինչև փոքրը։ Իսկ նրանք շարվեցին արտ հնձելու օրինակով, կոտորեցին տղամարդկանց, կանանց ու երեխաների անհամար բազմություն։ Քառասուն օր սուրը գործելուց չդադարեց։ Ձգվեցին, լքվեցին սպանողները, հոգնեցին նրանց ձեռքերը. ուրիշներին վարձում, և անողորմաբար կոտորում էին։

Սակայն Հուլավուի կինը՝ ավագ խաթունը, քրիստոնյա էր, որի անունն էր Տողուս խաթուն. սա խղճաց Բաղդադում գտնվող աղանդով նեստորական քրիստոնյաներին, նաև այլ ազգերից քրիստոնյաներին և իր ամուսնուց խնդրեց նրանց չսպանել։ Եվ նրանց իրենց ունեցվածքով բաց թողին։

Հրաման տվեց ամբողջ զորքին վերցնել քաղաքի ինչքն

* Բնագրում՝ յետ չորս աւուրն: Ճիշտն է, կամ՝ յետ չորից աւուրցն, կամ՝ յետ չորրորդ աւուրն։

ու ստացվածքը։ Ամենը ոսկով, արծաթով, թանկագին քարերով, մարգարիտներով, մեծագին հանդերձանքով լիացան, որովհետև քաղաքը այնքան շատ հարուստ էր, որ աշխարհում նրա նման քաղաք չկար։

Երբ Հուլավուն իր համար բաժին վերցրեց խալիֆայի գանձերը. դրանցից երեք հազար վեց հարյուր ուղտի բեռ բարձեց, իսկ ձիերը, ջորիները, էշերը թիվ չունեին։ Եվ մյուս տները գանձերով լիքը իր մատանիով կնքեց ու պահապաններ դրեց, որովհետև այնքան շատ էին, որ բոլորը չկարողացավ բարձել։ Քանի որ հինգ հարյուր տասնհինգ տարի էր անցել այն ժամանակից, երբ քաղաքը հայոց հարյուր իննսունչորս թվականին (745 թ.) արաբ Ջաֆրի կողմից Տիգրիս գետի վրա՝ Կատիսբոնից վերև, Բաբելոնից մոտ հինգ օրվա ճանապարհ հեռու դեպի վեր կառուցվեց. ամեն ինչ մնացել էր թագավորության մեջ, որն իբրև անհագ տզրուկ ծծել էր ամբողջ տիեզերքը, իսկ այժմ հայոց յոթ հարյուր յոթ թվականին դուրս փսխեց* հատուցելով թափած արյունների ու գործած չարիքների վրեժը, երբ ամենագետ աստծու առաջ իր մեղքերի չափը լցվեց, որ արդար իրավունքով անաչառորեն ու ճշմարտությամբ հատուցում է։ Եվ դադարեց արաբների անօրենի ու կատաղի թագավորությունը, որ տևեց վեց հարյուր քառասունյոթ տարի։ Բաղդադը գրավվեց ագուհացքի [մեծ պասի] առաջին օրը, երկուշաբթի, Նավասարդ[321] ամսին, որը բուն արևադարձի ամսի քսանն էր։

Այս ամենը մեզ պատմեց Հասան իշխանը, որին Պռոշ էին

* Եւ զամենայնն կլեալ էր ի թագաւորութեանն, իբրև անյագ տզրուկ կլեալ զամենայն տիեզերս։ Եւ այժմ՚ի բաց փոխեաց։ Այս տողերում նկատում ենք աղավաղում, իսկ եթե չկա այդպիսին, ապա զամենայնն (սեռի) ձևը գոնե պետք է լինի ամենայնն, իսկ իբր (ճիշտը՝ իբրև) բառից առաջ կարելի է ենթադրել ուոյ ձևը։ Տիեզերս բառից հետո վերջակետի փոխարեն ստորակետ դնել և ամենակարևոր ու միանգամայն հավաստի ուղղումը, որ առաջարկում ենք փոխեաց բայը փախեաց-ի վերածելն է։ Վերևում ասված է, թե թագավորությունը կլանեց ամբողջ տիեզերքը (այսինքն՝ տիեզերքի հարստությունը), իսկ այժմ դուրս է փախում։ Գանձակեցին ցասումով լցված արաբական բռնատիրության դեմ՝ անարգելու և ցասումը հագեցնելու համար վիրավորական այդ բառն է կիրառում։ Փոխեաց-ը անիմաստ է բացարձակապես և աղավաղված՝ ա-ի և ո [illegible], որ մեր ձեռագրերի համար սովորական երևույթ է։



անվանում. սա Հաղբակի որդու բարեպաշտ Վասակի որդին էր, Պապաքի ու Մկդեմի եղբայրը, Մկդեմի, Պապաքի, Հասանի ու Վասակի հայրը, որ ականատես ու ականջալուր էր այս դեպքերին և մեծ պատվով հարգված էր ղանի աչքում։

## ԿԱ.

## Մարտիրոսք[322] քաղաքի ավերման մասին

Բաղդադը ավերելու նույն տարին՝ գարունը գալու ժամանակ մեծ Հուլավուն զորք հավաքեց և հանձնեց իր կրտսեր որդուն, որի անունը Ջիասմութ էր, և իր տան մեծ վերակացու Իլկիա նուինին ուղարկեց նրա հետ գնալու Եփրատ գետի կողմերը գվարճանալու և առավարի ենթարկելու և հնազանդեցնելու այն կողմերը։ Երբ անցնում էին Մարտիրոսք քաղաքով, որ կոչվում է Մուֆարղին, նրանց հնազանդության կոչ արին՝ տալու զորք ու հարկ և ապրելու առանց հոգսի։ Այնտեղ գտնվող Եղլյան ցեղի սուլթանը չհամաձայնվեց, այլ զորք հավաքեց, ընկավ նրանց ետևից և նրանցից ոմանց սպանեց, իսկ ինքը մտավ քաղաքը և ամրացավ թաթար զորքի դեմ։ Նրանք զորքեր թողին քաղաքի վրա, իրենք գնացին մինչև Եփրատ գետը՝ Միջագետքի կողմերը. ինչ որ գտան, ավարեցին և վերադարձան, ավելացան Մարտիրոսք քաղաքի վրա հսկող զորքերին։ Նրանք Հուլավուի մոտ պատմեցին իրենց արածները և քաղաքի անհնազանդությունը։

Նա մեծ զորք ուղարկեց քաղաքի վրա և զորքերի գլխավոր նշանակեց ոմն Ջաղատայի, որ նախապես եղած թաթարական զորքի զորավարն էր, և քրիստոնյաներից Հասան անվանված իշխան Պռոշին, որոնք քաջ ու անվանի մարդիկ էին, որպեսզի գնան ու պաշարեն քաղաքը բոլոր կողմերից և ելումուտը արգելեն։

Նրանք գնացին և հզոր կերպով մարտնչում էին՝ դնելով բաբաններ ու քարընկեցներ։ Կտրեցին քաղաք մտնող ջուրը։ Նույնպես էլ քաղաքի բնակիչներն էին կռվում նրանց դեմ զորեղ կերպով. և շատերին թաթարներից ու նրանց հետ եղած քրիստոնյաներից սպանեցին։

*Այսպես երկու և ավելի տարի տևեց պաշարումը։ Քաղաքում սովը սաստկացավ։ Կերան մաքուր ու անմաքուր անասունները, ապա ուտելիք չլինելու հետևանքով սկսեցին մարդկանց ուտել, և ուժեղները ուտում էին թույլերին։ Երբ թույլերը սպառվեցին, դարձան միմյանց. հայրերը ուտում էին որդիներին, կանայք՝ ամուսիններին։ Չէին խղճում իրենց արգանդից ծնվածներին, և սիրելիք ուտում էին իրենց սիրելիներին, բարեկամները՝ բարեկամներին։ Ուտելիքը այնպես պակասեց, որ մի լիտր մարդու միս վաճառում էին յոթանասուն դահեկանի։ Ամենևին սպառվեցին մարդը և ուտելիքը։ Ոչ միայն սրանց, այլև շատ ուրիշ գավառների համար աղետ, որովհետև այդ երկիրը, որ հնազանդվեց թաթարներին, ազատվեց հարկապահանջությունից ու բռնակալությունից, քանի որ քաղաքի պաշտպաններին ուտելիք ու խմելիք չէին տանում։ Շատերը մեռան ձյան ցրտից, որ [ձյունը] ձմեռվա եղանակին պատել էր լեռները։*

*Շատ ամուր Սասունն էլ հնազանդվեց թաթարների հարկատվությանը՝ ապավինելով հավատով քրիստոնյա իշխան Սադունին՝ Շերբարոքի որդուն՝ Սադունի թոռին, որ հարգված էր Հուլավուի մոտ, քանի որ այնքան պարթևահասակ, քաջամարտիկ ազատմարդ էր, որ Հուլավուն նրան դասում էր առաջին կտրիճների շարքը։ Սրան տվեց Սասնա երկիրը, որոնք հետո դրժեցին երդումը և նրանցից շատերին կոտորեցին։*

*Երբ քաղաքը դատարկվեց մարդկանցից սաստիկ սովի պատճառով, քաղաքը գրավեցին ու կոտորեցին, ումը որ գտան խիստ սովից հյուծված։ Նաև սուլթանին ու նրա եղբորը կենդանի բերին Հուլավուի մոտ։ Սա հրամայեց նրանց սրով սպանել, իբրև կյանքի համար անարժանների և արյունապարտների այսքան բազմության, որոնք սրանց պատճառով կոտորվեցին։*

*Բայց եկեղեցիները չքանդեցին, ոչ էլ սրբերի անթիվ մասունքները, որ սուրբ Մարութան հավաքեց բոլոր ազգերից և դրեց այնտեղ, որովհետև գործի մեջ եղած քրիստոնյաները թաթարներին ծանոթացրին նրանց նշանակության հետ, իրենք էլ բազմաթիվ տեսիլքներ պատմեցին սրբերի մասին,*



*թե ինչպես պարսպի վրա ուժեղ լույս էր ծագել և լուսատեսք մարդիկ էին երևացել։*

*Քաղաքը գրավվեց հայոց յոթ հարյուր ինը թվականին (1260 թ.) աղուհացքի քառասունքի [զատկի] մեծ պասին։*

## ԿԹ.

## Այն մասին, թե ինչ կատարվեց Միջագետքի և Խորին Ասորիքի կողմերում

*Դարձյալ մեծ Հուլավուն հավաքեց իր զորքերի բազմությունը և գնաց Ասորիք, Հալեպ, Դմիշկ [Դամասկոս], Խառան, Ուռհա, Ամիդ*[323] *և այլ գավառներ. ասպատակ սփռեց շատ կողմերում, իսկ ինքը նստեց Հալեպի տակ՝ պատերազմելու նրա դեմ։ Եվ այնտեղ գտնվող Հալեպի սուլթանը՝ Սալահադինի թոռը, որ ավերեց Երուսաղեմը, ընդդիմացավ* նրան և չհնազանդվեց, այլ քաղաքի դռները փակեց նրա դեմ և ուժեղ կռվում էր։ Մեծ Հուլավուն բոլոր կողմերից պաշարեց քաղաքը և շատ օրեր հետո բռնությամբ գրավեց։ Եվ սկսեցին կոտորել քաղաքը։*

*Ապա սուլթանը և նրա հետ մեծամեծները, որ ամրացել էին բերդում, սկսեցին նրան աղաչել ու գալ հնազանդության։ Համաձայնվեց ու հրամայեց դադարել քաղաքը կոտորելուց. հնազանդեցրեց և հարկատու դարձրեց ու գնաց**։*

*Գնաց նաև Դմիշկ [Դամասկոս], իսկ նրանք շատ նվերներով ու մեծ ծախսերով դուրս եկան նրան ընդառաջ։ Նա սիրով ընդունեց նրանց, իր համար գրավեց Հեմսն ու Համան [Սիրիայում] և ուրիշ շատ քաղաքներ։ Զորք ուղարկեցին Մերտին ամուր քաղաքի վրա, որը շատ օրեր հետո հազիվ կարողացան գրավել։ Կոտորեցին նաև բազմաթիվ ավազակների՝ բոլոր ժողովուրդների ու ճանապարհորդների վնասիչ-*

---

* Բնագրում գիմացաւ, ճիշտն է ընդդիմացաւ, որ ունեն շատ տարընթերցվածներ։

** Բնագրին է՝ եւ կալ եւս ի հնազանդութեան և հարկել։ Թարգմանում ենք ըստ տարբերակի։

ներին, որոնց ղաճարիներ էին անվանում. սրանք ազգով թուրք էին, ամրացել էին Թավախիտ անտառներում, ամուր ու դժվարանցանելի վայրերում. անթիվ բազմություններ էին, ու ոչ ոքի չէին ենթարկվում, հավաքածու էին ամեն կողմերից. արիկաներ ու ոչնչացնողներ՝ մանավանդ քրիստոնյաների։ Նրանցից շատերին կոտորեցին, ավելի շատերին գերեցին, զորքերից մոտ քսան հազար մարդ թողեց իբրև տեղապահներ, ինքը [Հուլավուն] վերադարձավ ձմեռելու Հեմիանի դաշտում։

Իսկ Մսրա սուլթանը հավաքեց բազմաթիվ զորքեր, եկավ թաթարական տեղապահ զորքերի վրա, որի գլխավորն էր հավատով քրիստոնյա, ազգությամբ նայիման Քիթբուղա անունով մեծապատիվ մի մարդ, որ պատերազմով դուրս եկավ սուլթանի դեմ։ Քաջաբար կռվեցին. նրա [Քիթբուղայի] հետ եղած ամբողջ զորքը կոտորվեց, որովհետև եգիպտացիք չափազանց շատ էին։ Կռիվը տեղի ունեցավ Թաբորական կոչված դաշտում։ Քիթբուղայի հետ պատերազմում կային բազմաթիվ հայեր ու վրացիներ, որոնք նրա հետ կոտորվեցին։ Այս անցքը տեղի ունեցավ հայոց յոթ հարյուր ինը թվականին (1260 թ.)։

## ԿԳ.

## Բարեպաշտ իշխան Ջալալի մահվան մասին

Իսկ Լաշայի որդի վրաց թագավոր Դավիթը, որ հնազանդվել էր թաթարներին, նեղվեց, զզվեց ծանր հարկապահանջությունից. նեղում էին նրան, բոլոր իշխաններին ու ամբողջ երկիրը անասելի ծանրությամբ, որը չէին կարողանում տանել։ Նա թողեց Տփղիս քաղաքը, աթոռը, ունեցած ամեն ինչը և փախավ խոր Աբխազիա և Սվանեթիայի անառիկ վայրերը։ Նրա հետ [փախան] նաև գավառների մեծամեծ իշխաններ, որոնք նեղվել ու տառապել էին, ծախել ու գրավ էին դրել քաղաքներ ու գավառներ, բայց չէին կարողացել կշտացնել անկուշտներին, որոնք նման էին ագահ տզրուկներին։ Եվ այնպես տագնապահար փախավ, որ իր կին Գոն-



ցա թագուհուն ու նորածին Դեմետրե որդուն չկարողացավ իր հետ տանել, միայն Գիորգուն՝ իր անդրանիկին տարավ։

Իսկ մեծ ոստիկան Արղունը շատ զորք գումարած գնաց փախած Դավիթ թագավորի հետևից, որ բռնի նրան։ Երբ չկարողացավ հասնել նրան, վրաց բազմաթիվ գավառներ անխնայորեն կոտորեց ու գերեց։ Այլև վրաց թագավորների գերեզմանատունը՝ Գելաթը* սաստկապես կողոպտեց ու քանդեց. նաև Ածղոր** կաթողիկոսարանը՝ նույնպես անողորմաբար ջարդուփշուր արեց։

Բայց հանկարծակի Վրաստանից եկավ հեծյալների մի գունդ և մեծ քաջություն ցուցաբերեց։ Արղունի զորքից շատերին կոտորեցին ինչպես կրակը ընթանում է եղեգնուտի միջով, իսկ իրենք անվնաս գնացին. և դրանք մոտ չորս հարյուր հոգի էին։

Արղունը երկյուղեց, այլևս չէր հանդգնում այնպես համարձակ մտնել ու հետախուզել վայրերը։ Ապա վերադարձավ Հուլավուի մոտ և իր մտքում չարություն նյութեց։ Կալանավորեց վրաց թագուհի Գոնցային, սրա դուստր Խոշաքին, մեծ իշխան Շահնշահին, Խաչենի տեր Հասան Ջալալին և ուրիշ շատերին՝ պարտքերի ու հարկի պատրվակով. սրանցից շատ գանձեր առավ, հազիվ մահվանից պրծան։

Իսկ բարեպաշտ ու առաքինի իշխան Ջալալին անասելի խոշտանգումներով տանջում էր՝ այնքան շատ հարկեր պահանջելով նրանից, որ նա ի վիճակի չէր տալու։ Փայտ դրեց նրա պարանոցը և երկաթ՝ ոտքերը։ Եվ սա անում էր նրա նկատմամբ ավելի նրա քրիստոնյա լինելու համար, որովհետև բոլոր մահմեդականները նրա թշնամիներն էին, որոնք հորդորում էին Արղունին նրան սպանելու. ասում էին. «Սա ավելի թշնամի է մեր հավատին ու օրենքներին»։ Որովհետև Արղունը նույնպես մահմեդական էր, նրան առավ տարավ Ղազվին։ Իսկ նա գոհությամբ դիմանում էր ամենին, որովհետև շատ լավ ծանոթ էր աստվածային գրքերին, պաս պահող էր, աղոթք անող, ուտելիքների և ըմպելիքների մեջ չափավոր ու ցանկանում էր մարտիրոսական մահվան։

* Մենաստան Իմերեթիայում, որ կառուցել է Դավիթ Բ-ն։
** Ածղորը Ախալցիխեից հյուսիս։

*Իսկ Ջալալի Ռուզուքան անունով դուստրը, որ թաթարների առաջին գլխավոր Չարմաղունի որդի Բորա նուինի կինն էր եղել, գնաց Հուլավուի կին Տողուս խաթունի մոտ, որպեսզի հորը ազատի Արղունի ձեռքից։ Անօրեն ոստիկանը իմացավ, անմիջապես գիշերը դահիճներ ուղարկեց, սպանել տվեց սուրբ ու արդար մարդուն։ Անօրեն դահիճները գնացին, անդամ-անդամ հոշեցին Հակոբիկ սուրբ նահատակի նմանությամբ՝ նույնի չարչարանքներին հաղորդակից դարձնելով. և թող նրա պսակին արժանացած լինի մեր Քրիստոս աստծույ։ Կյանքը ավարտելով ու հավատը պահելով, այսպես վախճանվեց այն անարատ ու աստվածապաշտ մարդը հայոց յոթ հարյուր տասը թվականին (1261 թ.)։ Նրա Աթաբեկ որդին ուղարկեց հավատարիմ մարդիկ և գողանալ տվեց հոր մասունքները, որ գցված էին մի ցամաք ջրհոր։ Որովհետև այն պարսիկը, որ իր տանը կապանքների մեջ պահում էր նրան, աստվածային նշաններ տեսավ նրա վրա (երբ նրան սպանեցին, պայծառ լույս իջավ վրան). խնամք տանելով՝ նրա մասունքները գցեց ջրհորը, որպեսզի օրեր հետո պատվով թաղի նրան։ Նա փնտրողներին ցույց տվեց նրա մարմինը և պատմեց սքանչելի տեսիլքը։*

*Նրանք ուրախությամբ հավաքեցին ու վերցրին տարան իր [Ջալալի] տունը և թաղեցին Գանձասար վանքում իր հայրերի գերեզմանատանը։ Նաև մասունքներ բերողները ճանապարհին տեսան լույսի նույն տեսիլքը նշխարների վրա։*

*Նրա իշխանությունը ստանձնեց նրա որդի Աթաբեկը՝ Հուլավուի ու Արղունի հրամանով։ [Աթաբեկը] սրբասուն, պարկեշտ, համեստ ու աղոթքասեր մարդ էր, ինչպես սուրբ մենակյացներից մեկը, որովհետև նրա ծնողները այսպես դաստիարակեցին նրան։*

*Հուլավուն սպանեց Շահնշահի որդի իշխան Զաքարեին՝ կեղծ մեղադրանք նրա վրա դնելով։*

*Այս տարում Քրիստոսի մոտ փոխադրվեց Աղվանքի մարդասեր և հեզ կաթողիկոս տեր Ներսեսը՝ աթոռակալելով քսանյոթ տարի։ Աթոռը ստանձնեց հասակով երիտասարդ տեր Ստեփանոսը։*



ԿԴ.

## Շահնշահ իշխանի ու նրա որդի Զաքարեի մահվան մասին

*Զաքարեի որդի մեծ իշխան Շահնշահը իշխանությունը հանձնեց իր ավագ որդի Զաքարեին. նա շատ որդիներ ուներ. Զաքարե, Ավագ, Սարգիս, Արտաշիր, Իվանե։ Եվ ինքն էր իր տունը կառավարում։ Զաքարեն թաթարական զորքի հետ գնում էր պատերազմ և քաջություն ու հերոսություն հանդես բերելով՝ մեծարվեց մեծ Հուլավուից ու Արղուն ոստիկանից։*

*Այնպես պատահեց, որ մի անգամ Արղունը մեծ զորքով Վրաստանի կողմերում էր. նրա հետ էր նաև Զաքարեն։ Արղունից և այլ զորքերից գաղտնի Զաքարեն գնաց իր կնոջը տեսության, որ նրա [կնոջ] հոր Ուխտիքի[324] իշխան Սարգսի մոտ էր, իսկ սա վրաց թագավոր Դավթի հետ ապստամբ էր։ Արղունը իմացավ, հայտնեց Հուլավուին։ Նա հրամայեց կապանքներով իր մոտ բերել, և այլ սուտ մեղադրանքներ բարդելով վրան՝ հրամայեց նրան սպանել, անդամ-անդամ հոշել և գցել շներին։ Երբ նրա հայրը՝ Շահնշահը Օձուն գյուղում լսեց այդ գույժը, սրտաբեկվեց և վշտից մեռավ։ Նրան տարան թաղեցին Քոբայրում, որը նրա կինը գնեց հայերից։*

ԿԵ.

## Հուլավուի և Բերքայի միջև տեղի ունեցած մեծ պատերազմի մասին

*Արևելքում և Հյուսիսում գտնվող աշխարհակալներն ու մեծ զորավարները ազգականներն էին Մանգու ղանի, որ մեռավ Նենգրանի պատերազմից հետո։ Նրա երկու եղբայրները՝ Արիք Բուղան և Ղոբիլան թագավորության համար միմյանց հետ թշնամացան։ Ղոբիլան հաղթեց՝ կոտորելով ու սպանելով Արիք Բուղայի զորքը, իրեն էլ փախստական գցելով երկրից, ինքը թագավորեց։*

*Հուլավուն նրանց ու Մանգու ղանի եղբայրն էր. նա օգ-*

նում էր Ղորիլային։ Իսկ հյուսիսում գտնվող Բերքան օգնում էր Արիք Բուղային։ Իսկ նրանց մի այլ ազգականը՝ Ալղու անունով ուրիշ զորապետ, որ Չինգիզ ղանի անդրանիկ որդի ղան Ջաղաթայի որդին էր, պատերազմում էր Բերքայի դեմ [այն պատճառաբանությամբ], թե Մանգու ղանը իր ազգականներին նրանց խորհրդով կոտորեց։ Եվ [մարդ] ուղարկեց Հուլավուի մոտ, որ այս կողմից Դերբենդի դռնով իրեն օգնի։ Իսկ մեծ Հուլավուն ելավ Բաթուի ու Բերքայի կողմնակից իրեն հավասար ու իր մոտ գտնվող մեծամեծ ու փառավոր իշխաններին՝ Ղուլին, Բալախային, Տութարին, Մեղանին, Ղուլի որդուն, Ղատաղանին և ուրիշ շատերին իրենց զորքերի հետ՝ ծերեր, մանուկներ անխնայորեն ու անողորմաբար կոտորեց և սրակոտոր անելով նրանց՝ սպանեց, որովհետև իր մոտ էին գտնվում և իշխանությամբ խառնաշփոթվում էին միմյանց հետ։ Նրանցից քչերը մազապուրծ, առանց կանանց, երեխաների և ինչքի ճողոպրելով՝ փախստական գնացին Բերքայի ու այլ ազգականների մոտ։

Բերքան այս լսելով՝ անթիվ ու անհամար զորք հավաքեց, որ գա Հուլավուից իր ազգականների արյան վրեժը առնելու։ Իսկ մեծ Հուլավուն նույնպես մեծաքանակ զորք հավաքեց և երեք մասի բաժանեց. մեկը հանձնեց իր որդի Աբաղա ղանին. նրան միացրեց նաև Արղուն ոստիկանի զորքը և ուղարկեց Խորասան՝ օգնելու Ալղուին այն կողմից. մի մասը հավաքեց Ալանաց դռների[325] մոտ, իսկ մնացած զորքը իր հետ առած գնաց Դերբենդի դռներից ներս մտավ, որովհետև Ալանք և Դերբենդ մտնելու համար այս երկու մուտքերը կան։ Եվ ավերելով Բերքայի բաժնի մասը, հասավ մինչև մեծ ու անհուն, շատ գետեր իր մեջ ընդունող գետին, որին կոչում են (Թերքն)* Էթիլ, որ ծովանման հոսում ու թափվում է Կասպից ծովը։

Բերքան նրա դեմ դուրս եկավ հզոր ուժով։ Մեծ գետի մոտ ճակատամարտ սկսվեց։ Երկու կողմերից էլ շատերը ընկան, ավելի շատ կորուստ եղավ Հուլավուի կողմին, որով-

* Աթլ կամ՝ Եթիլ գետի անունը մի քանի անգամ հիշատակում է Գանձակեցին՝ առանց ԹԵՐՔՆ կամ ԹՈՒՐՔՆ ձևի։ Մենք կարծում ենք, որ դա սխալմունք է, մանավանդ որ չունենք բազմաթիվ ձեռագրեր։



հետև սաստիկ ձյունից ու ցրտից սառեցին, շատերն էլ գետատույզ եղան։

Ապա Հուլավուն վերադարձավ, դուրս եկավ Դերբենդի դռնից։ Հուլավուի զորապետներից Սիրամոն անունով մեկը՝ Թաթարների առաջին գլխավոր Չարմաղունի որդին, որ մի քաջ ու պատերազմող տղամարդ էր, իր զորքով կանգնեց Բերքայի զորքերի դեմ, ետ-ետ նահանջեց, իսկ փախչողները ապաստանելով նրան՝ ազատվեցին։ Աստիճանաբար դիմադրելով նա էլ դուրս եկավ Դերբենդի դռներից։

Պահակներ նշանակեցին Դերբենդի դռների վրա, իրենք եկան Մուղանի դաշտը ձմեռելու։

Եվ այսպես հինգ տարի միմյանց դեմ պատերազմեցին՝ սկսած հայոց յոթ հարյուր տասը թվականից մինչև յոթ հարյուր տասնհինգ թվականը (1261—1266)՝ ամեն տարի զորք հավաքելով ու ձմռանը միմյանց բախվելով, որովհետև շոգի ու գետերի բարձրացման պատճառով ամառը չէին կարողանում։

Այս օրերին մեծ Հուլավուն սկսեց մի բազմատար ու բազմամարդ քաղաք շինել Դաանի դաշտում. և պարտավորություն դրեց բոլոր իրեն հնազանդվածների վրա ամեն կողմից մեծ քանակությամբ փայտ բերել քաղաքի տների ու ապարանքների կառուցման կարիքների համար, որը (քաղաքը) շինում էր իր ամառանոցավայրում ամառվա օրերին։

Մարդ ու անասուն խիստ ու դաժան վերակացուների ձեռքի տակ տառապում էին, որոնք ավելի դառն ու դաժան էին, քան փարավոնը Իսրայելի որդիների հանդեպ։ Հարյուր եզներ լուծ էին լծում մի փայտի ամեն կողմից և փայտի մեծության ու հաստության պատճառով չէին կարողանում անգամ շարժել. և հեռավորության, և գետերով ու լեռներով անցնող դժվար ճանապարհների, և ծեծի հետևանքով մեռնում էին մարդիկ ու անասունները։

Այլև մեծ տներ շինեց կուռքերի համար՝ այնտեղ հավաքելով քարագործ, փայտագործ, նկարիչ արվեստավորներ։ Որովհետև մի ժողովուրդ, որին տոյինք են կոչում, դյութեր ու կախարդներ են. սրանք կախարդական հնարանքով խոսեցնում էին ձիերին, ուղտերին, մեռելներին և թաղիքե պատկերներին։ Բոլորը քրմեր են՝ սափրած գլուխներով ու մորուք-

*ներով և ունեն գեղին փիլոն միայն կրծքի կողմից. պաշտում են ամեն ինչ, առավել ևս Շաքմոնիային ու Մադրինին։*

*Սրանք նրան խաբեցին. ասում էին՝ քեզ անմահ կպահենք։ Նրանց խոսքով էր նստում-վեր կենում և հենվում իրեն հանձնելով նրանց կամքին։ Օրվա մեջ շատ անգամ խոնարհվելով երկրպագում էր նրանց գլխավորին և ուտում էր կուռքերի տանը նվիրական սեղանից։ Նրանց՝ բոլորից շատ էր մեծարում, այդ պատճառով նրանց կուռքերի տաճարը ավելի վայելուչ էր զարդարում։*

*Իսկ նրա կանանց ավագը՝ Տողուս խաթունը քրիստոնյա էր. թեպետ շատ անգամ հանդիմանում էր նրան, բայց չկարողացավ նրան դյութերից հեռացնել. ինքը աստվածապաշտությամբ ապրելով՝ նպաստում և օգնում էր քրիստոնյաներին։*

*Իսկ յոթ հարյուր տասնչորս թվականին մեծ հրաշք կատարվեց երկնքում. մի աստղ երևաց, հյուսիսի կողմից ելավ արևելք և հարավի լույսի երկար ճառագայթները նրա առջև սյունաձև էին երևում, բայց աստղը աղոտ էր ու արագ էր ընթանում։ Երևաց մոտավորապես մի ամիս ու այլևս չերևաց ինչպես գիսաստղ, որ ժամանակ առ ժամանակ երևում է՝ ընթանալով արևմուտքից հյուսիս. իսկ սա երկայնաձիգ ճառագայթներով էր, և ճառագայթները օրեցօր պայծառանում էին, մինչև անհայտացավ։*

*Նույն տարին վախճանվեցին Հուլավուն ու իր կին Տողուս խաթունը։ Նրա տեղը բազմեց որդին՝ Աբաղա ղանը յոթ հարյուր տասնչորս թվականին (1265 թ.) և կին առավ հոռոմների թագավորի դստերը, որի անունն էր Դեսպինա խաթուն, որ եկավ երևելի փառքով։ Անտիոքի պատրիարքը և այլ եպիսկոպոսներ նրա հետ էին, որոնց բերին Երզնկա եպիսկոպոս տեր Սարգիսը և Բենեդ վարդապետը։ Մկրտեցին Աբաղա ղանին, աղջկան տվին նրան կին։*

*Նա շագմաքանուն զորք հավաքեց, գնաց պատերազմով Բերքայի զորքերի դեմ կանգնեց, որոնք եկան Դերբենդի դռնից և Կուր գետի ափին իրենց բանակները զարկեցին։ Սրանք բանեցին այս կողմից, նրանք՝ այն կողմից՝ գետերը ամրացնելով պատնեշներով ու շատ խոր փոսերով։*

# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 *Հայաստանում գոյություն ունի երկու Գետիկի վանք. մեկը՝ հին, իսկ մյուսը՝ նոր։ Հին վանքը, որ ներկայումս ավերակ է (քանդվել է երկրաշարժից 12-րդ դարի վերջում) գտնվում է պատմական Կայան գավառում (և ոչ թե Կայեն, ինչպես այժմ սխալմամբ գրում են), Սևանա լճից հյուսիս Արչանոց լեռների վրա։ Գետիկի վանքի առաջնորդն էր հայ հռչակավոր մատենագիր Մխիթար Գոշը, որը քանդված Գետիկի փոխարեն Տանձուտ կոչված վայրում (Դիլիջանի շրջան) շինում է հռչակավոր Նոր Գետիկի վանքը (սկսված է 1191 թ., վերջացած է 1195 թ.)։ Գանձակեցին եղել է Նոր Գետիկում։*

2 *Այս գլուխը հեղինակի նախաբանն է. նախաշավիղ մենք ենք անվանում։*

3 *Դավիթը հրեաների հռչակավոր թագավորն էր Քրիստոսից 11 դար առաջ՝ ըստ ավանդության Աստվածաշնչի հռչակավոր սաղմոսները նա է գրել։*

4 *Իսրայելի որդիները հրեաներն են։*

5 *Մովսեսը ըստ Աստվածաշնչի հրեաների ամենամեծ մարգարեն էր և օրենսդիրը, որ նրանց եգիպտական ստրկությունից առաջնորդեց դեպի Պաղեստին։ Ըստ ավանդության Մովսեսն է հեղինակը Աստվածաշնչի առաջին հինգ գրքերի (Հնգամատյանի)։*

6 *Եվսեբիոսը կեսարացի նշանավոր մատենագիր է (267—340 թ.)։ Գրել է «Քրոնիկոն» (ժամանակագրություն)՝ եկեղեցիական պատմություն գրքեր, որոնք երկուսն էլ հինգերորդ դարի սկզբում թարգմանված են դասական հայերենով։*

7 *Կոստանդինը Բարեպաշտ բյուզանդական Կոստանդիանոս Ա (Մեծ) կայսրն է (306—337 թ.), որ քրիստոնեությունը պետական կրոն հռչակեց։*

8 *Սոկրատես Սքոլաստիկոսը V դարի բյուզանդական պատմիչ է, որ շարունակել ու լրացրել է Եվսեբիոսի «Եկեղեցական պատմությունը» և գրել է Սեղբեստրոսի վարքը։*

9 *Սեղբեստրոսը եղել է Հռոմի պապ (314—335), որի վարքը գրանցվել է մեր Հայսմավուրքների մեջ և բացի այդ կա առանձին «Սուրբ Սեղբեստրոսի վարքի պատմությունը» հրատարակված 1896 թ. Էջմիածնում։*

10 Թեոդոս Փոքր բյուզանդական Թեոդոս Երկրորդ կայսրն է, որ իշխել է 408—450 թվականներին։

11 Տրդատը Խոսրով առաջինի որդի Տրդատ Մեծն է, որ 298 թ. դարձավ Հայաստանի թագավոր և Գրիգոր Լուսավորչի աջակցությամբ քրիստոնեությունը դարձրեց Հայաստանի պաշտոնական կրոնը։ 330 թ. թունավորվեց հայ նախարարների կողմից ու մեռավ։

12 Սահակ Պարթևը հայոց կաթողիկոս էր 387—439 թ. (ընդմիջումով)։ Սա Ներսես Մեծի որդին էր և Գրիգոր Լուսավորչի թոռը։ Ծնվել է 348 թ., կրթվել է Բյուզանդիայում։ Նշանավոր հունագետ էր։ Նրա անմիջական օգնությամբ ու աջակցությամբ Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայոց այբուբենը և հիմք դրեց հայ գրականության։ Առաջին թարգմանիչներից էր։ Մեռել է 439 թվականին։

13 Եղիշեն «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» գրքի հեղինակն է. գիրքը նվիրված է Ավարայրի ճակատամարտի, նրան նախորդող դեպքերի, Վարդանի ու Հայոց զորքի հերոսական կռիվներին։

14 Վարդան Մամիկոնյանը՝ Սահակ Պարթևի թոռը՝ Համազասպ Մամիկոնյանի որդին էր։ Ուներ սպարապետի տիտղոս (սպարապետ)։ Ավարայրի ճակատամարտի (451 թ.) հերոսն ու ոգեշնչողն էր, որ 1036 ընկերների հետ ընկավ պարսիկների դեմ իր վարած անհավասար մարտում 451 թ.։ Ավարայրի ճակատամարտի ու դրան նախորդող իրադարձությունների պատմությունը գրել է ականատես Եղիշեն։

15 Հովսեփ Վայոցձորեցին (Եղեգնաձոր) Մեսրոպի աշակերտներից է, որ հետո դարձավ հայոց կաթողիկոս (440—452)։ Ղևոնդ Երեցի հետ գլխավորում էր կրոնավորների ըմբոստությունը պարսից բռնակալության դեմ։ Մասնակցեց Ավարայրի ճակատամարտին, տարվեց Պարսկաստան և 454 թ. նահատակվեց։ Սրան հետևողները կոչվում են Հովսեփյաններ (Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Հ. Երևան, 1946, էջ 710)։

16 Ներսեհը և Աբրահամ Խոստովանողը Ղևոնդ Երեցի աշակերտներից էին։ Մասնակցում էին Վարդանանց շարժմանը։ Աքսորվեցին Պարսկաստան, կրեցին ծանր չարչարանքներ. ապա քշվեցին Ասորեստան, որտեղ Ներսեհը մեռավ. իսկ Աբրահամ Խոստովանողը 460-ական թվականներին վերադարձավ Հայաստան։ Այս վերջինը դասական գրաբարով ասորերենից՝ թարգմանել է Եփրեմի «Վկայք արևելից» աշխատությունը, որ գրաբարի լեզվական գոհարներից մեկն է։

17 Ղազար Փարպեցին 5-րդ դարի հայ պատմիչ է. գրել է «Հայոց պատմություն», սկսել է Արշակունիների անկումից, հասցրել է մինչև 485 թվականը։

Իշխանական տներին և կաթողիկոսարանին մոտ կանգնած լինելով՝ տալիս է ժամանակի ստույգ պատկերը։ Գրքի մեջ հեղինակը գծել է Արարատյան դաշտի սքանչելի նկարագրությունը։

18 Փավստոս Բուզանդը հայ պատմիչ է, որ իր «Հայոց պատմությունը» գրել է Եղիշեից, Ղազար Փարպեցուց շատ առաջ։ Բուզանդը իր պատմությունը սկսում է Տրդատի որդի Խոսրով Կոտակի թագավորությունից



(330 թ.) հասցնում է մինչև 348 թվականը։ Ըստ Մալխասյանի 319-ից*։ Գիրքը գրված է ժամանակի ժողովրդական լեզվով և աղբյուր է ծառայել հետագա շատ պատմիչների։

19 Յոթերորդ դարի հայ պատմիչ Բագրատունյաց Սեբեոս եպիսկոպոսի պատմական աշխատությունը կոչվել է «Պատմութիւն ի Հերակլն», որ իբր վերաբերում է բյուզանդական Հերակլ կայսրին և նրա շրջանին (610—641)։

20 Կորյունը Մեսրոպի ավագ աշակերտներից էր և նրա ամենամտերիմ գործակիցը։ Մեսրոպի մահից հետո Կորյունը գրեց իր ուսուցչի կյանքի ու գործունեության մասին մի փոքրիկ գիրք, որ կոչվում է «Վարք Մաշտոցի»։

21 Խոսրով պատմիչին հիշատակում են Կիրակոս Գանձակեցին և Մխիթար Այրիվանեցին։ Գանձակեցին նրան տեղադրում է Ղևոնդից առաջ, իսկ Ղևոնդը 8-րդ դարի պատմիչ է։ Մխիթար Այրիվանեցին դնում է Թովմա Արծրունուց առաջ, որ 9-րդ դարի վերջի և 10-րդ դարի պատմիչ է։ Մեզ չի հասել ոչ Խոսրովի պատմությունը և ոչ էլ նրա մասին որևէ այլ տեղեկություն։

22 Ղևոնդ Երեցը կամ Ղևոնդ Վարդապետը 8-րդ դարի պատմիչ է։ Պատմությունը գրել է ինչ-որ իշխան Շապուհ Բագրատունու առաջարկությամբ։ Պատմությունը վերաբերում է արաբական արշավանքներին և հայ ժողովրդի հերոսական դիմադրություններին ու բազմամյա կռիվներին։ Ղևոնդի պատմությունը հասնում է մինչև 788 թվականը։

23 Արծրունիների տոհմը հայոց հնագույն տոհմերից ու նախարարական տներից է. 9-րդ դարում ի հեճուկս Շիրակի Բագրատունյաց թագավորության Արծրունիները Վանում ստեղծում են անկախ թագավորական իշխանություն։ Այս իշխանության կազմակերպողներից առաջինը՝ Գրիգոր Դերենիկը, ապա սրա որդին՝ Գագիկը Թովմա Արծրունուն առաջարկում են գրել Արծրունի տոհմի պատմությունը, որը և պատմագիր Թովմա Արծրունին կատարում է։ Գիրքը գրված է 10-րդ դարի առաջին քառորդում. բաժանված է երկու մասի. առաջին մասը հին ավանդական պատմություն է, որ սկսվում է Ադամից ու հասնում է մինչև 850 թվականը, իսկ երկրորդ մասը՝ իր ժամանակի պատմությունը՝ շատ արժեքավոր է իբրև պատմական աղբյուր՝ պատմված ականատեսի կողմից։

24 Շապուհ Բագրատունին 9-րդ դարի պատմիչ է։ Գրել է Աշոտ առաջինի պատմությունը։ Սրա մասին հաղորդում են Ասողիկը, Հովհաննես Դրասխանակերտցին, Սամվել Անեցին, Ուխտանեսը և այլ պատմիչներ։ Գրված պատմությունը մինչև այժմ չի գտնվել, բայց հայտնի է, որ այն գրվել է իր ժամանակի խոսակցական լեզվով, մի բան, որ գլխավոր նշանակություն կուներ մեր լեզվի պատմության համար, եթե գտնվի։

25 Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին 10-րդ դարի պատմիչ է, գրել է «Հայոց պատմություն» սկզբից մինչև 924 թ.։

26 Մովսես Կաղանկատվացին 7-րդ դարի հայ պատմիչ է, ծնվել է Մեծ Հայքի Ուտի նահանգի Կաղանկատույք գյուղում և գրել է Ուտիքի, Արցախի

---

* Տե՛ս Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 5։

ու դրանց հաջորդ երկրների պատմությունը մինչև իր ապրած շրջանը։ Ապա նրա գործը շարունակել է 10-րդ դարի մի ուրիշ հայ պատմիչ Մովսես Դասխուրանցին՝ պատմությունը հասցնելով մինչև 11-րդ դարի սկիզբը։

[26] Ուխտանես եպիսկոպոսը սեբաստացի էր, բայց Գանձակեցին համարում է ուռհայեցի։ Սովորել է Նարեկա հռչակավոր վանքում. իր ուսուցիչն է եղել հանճարեղ Նարեկացու ազգական Անանիա Նարեկացին, որի առաջարկությամբ գրել է պատմական մի աշխատություն՝ կազմված երեք մասից։ Գրքի երրորդ մասը և երկրորդ մասի կեսը մեզ չեն հասել։ Պատրաստվում է Ուխտանեսի երկի քննական հրատարակությունը։

[27] Կյուրիոնը 7-րդ դարի սկզբում վրաց կաթողիկոս էր, որ ընդունեց Քաղկեդոնի ժողովի որոշումները և դարձավ հունադավան։ Հայերը չընդունեցին այդ ժողովի որոշումները։ 608 թվականի Կյուրիոնի ղեկավարությամբ հայ և վրաց քույր եկեղեցիները պառակտվեցին և վերջնականապես բաժանվեցին։

[28] Ստեփանոս Ասողիկը Տարոնից է. Նրա գիրքը կոչվում է «Տիեզերական պատմություն»։ Գրել է Սարգիս առաջին կաթողիկոսի առաջարկությամբ։ Հասցրել է մինչև 1004 թվականը. այս նշանակում է, որ նա գործել է 10-րդ դարի երկրորդ կեսին։ Չնայած վերնագրին՝ նյութը հիմնականում հայոց պատմություն է։

[29] Արիստակես Լաստիվերտցին 11-րդ դարի հայ պատմիչ է, կրակոտ հայրենասեր մի մարդ, որ ողբում է Բագրատունյաց թագավորության անկումը՝ սելջուկների արշավանքների հետևանքով։

[30] Մատթեոս Ուռհայեցին 12-րդ դարի հայ պատմիչ է։ Պատմությունը սկսել է 952 թվականից, հասցրել է մինչև 1136 թվականը։ Գիրքը գրված է պարզ, ժողովրդին հասկանալի լեզվով և շատ մաքուր հայերենով։

[31] Սամվել Անեցին 12-րդ դարի հայ պատմիչ է, գրել է ժամանակագրություն (հավաքածու պատմագիրների գրքերից)։ Ըստ ժամանակների սովորության պատմությունը սկսում է Ադամից և հասցնում է մինչև 1179 թ.։

[32] Հովհաննես վարդապետը հայտնի է Վանական անունով, ծնվել է 1181 թ.։ Եղել է Մխիթար Գոշի աշակերտը, թողել է մեծ գրական ժառանգություն ի թիվս որոնց նաև «Թաթարների պատմությունը», որ մեզ չի հասել։ Ժամանակակիցները կոչում են մեծիմաստ, հանճարեղ և նման մակդիրներով։ Գերի է ընկել թաթարների ձեռքը, եղել է Գանձակեցու ուսուցիչը։ Մեռել է 1251 թ.։

[33] Սուրբ Ներսեսը Ներսես Մեծն է, որ հայոց կաթողիկոս էր 353—373 թվականներին։ Նա գժտվեց Արշակ 2-րդ և ապա նրա որդի Պապ թագավորի հետ՝ վերջիններիս եկեղեցու իրավունքները սահմանափակելու պատճառով։ Ըստ ավանդության որպես թե Ներսեսը կանխագուշակել է Հայաստանի թագավորության անկումը ու երկրի կործանումը նետողների (թաթարների) ազգի ձեռքով։ Այս առասպելը ստեղծվել է շատ ուշ և վերագրվել է Ներսեսին[1]։

---

[1] (Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության», Երևան, 1957 թ. գիրք առաջին, էջ 13—32)։



[34] Արշակունիների թագավորությունը տևեց ավելի քան երեք և կես դար (66—428 թ.)։ Արշակունի հարստության հիմնադիրը Տրդատ առաջինն է, իսկ վերջին Արշակունի թագավորը Վռամշապուհի որդի Արտաշեսն է, որին պարսից Վռամ 5-րդ թագավորը գահընկեց արեց ու հիմնեց Հայաստանի մարզպանությունը։

Իսկ Բագրատունյաց թագավորությունը հիմնադրվեց Շիրակում 887 թ. Աշոտ առաջին արքայի թագադրությամբ։

Բագրատունիների հայոց թագավորությունը տևեց 158 տարի և վերացավ 1045 թ. ընչաքաղց Պետրոս Գետադարձ կաթողիկոսի և դավաճան Վեստ-Սարգիս իշխանի դավադրությամբ։ Սրանք խաբեցին շատ երիտասարդ, քաջ ու տաղանդավոր արքա Գագիկ երրորդին, ուղարկեցին Բյուզանդիա, որտեղ նրան արգելեցին հայրենիք վերադառնալ, իսկ իրենք աշխարհահռչակ մայրաքաղաք Անիի բանալիները հանձնեցին բյուզանդական նենգ կայսր Կոստանդին Մոնոմախին, որը և ջնջեց 158 տարի տևած հայկական վերածնված նոր պետությունը։

[35] Արշակունիների հարստության նախորդող շրջանի հայ թագավորները կոչվում էին Հայկազանց կամ Հայկազնյան թագավորներ։ Հայկազունիների հարստությունը սկսվում է մեր թվականությունից առաջ 2-րդ դարի վերջից և տևում է մինչև մեր թվականության 66 թվականը, այսինքն մինչև Տրդատ առաջինը, որ հիմնադիրն է Արշակունյաց հարստության։

[36] Ըստ Նոր կտակարանի ավանդության իբր թե վերջին ընթրիքի ժամանակ Քրիստոսը խոստացավ՝ սուրբ հոգուն ուղարկել առաքյալների մոտ և որպես թե համբարձման օրն էլ հրամայեց Երուսաղեմում սպասել սուրբ հոգու գալստյանը (Ղուկաս ԻԴ, 49)։ Զատկից 50 օր հետո սուրբ հոգին իբր այցելում է հրեղեն լեզուներով խոսելու նշաններով։ Համբարձման շարժական տոնը հայոց եկեղեցին տոնում է մայիսի 10-ից մինչև հունիսի 13-ը ընկած ժամանակամիջոցի որևէ օրը՝ ըստ զատկի շարժունության։

[37] Գրիգորը, որ կոչվեց Լուսավորիչ, հայոց առաջին կաթողիկոսն է։ Ծնվել է 239 թ.։ Կրթությունը ստացել է Կեսարիայում և դարձել է քրիստոնյա։ Հայաստան եկավ և սոսկալի հալածանքների ենթարկվեց Տրդատի կողմից։ Գրիգորի հայրը՝ Անակ Պարթևը սպանել էր հայոց արքա Խոսրովին։ Այդ պատճառով նետվեց Խորվիրապը։ Այնտեղից դուրս եկավ, Տրդատին դարձրեց քրիստոնյա և քրիստոնեությունը տարածեց ողջ Հայաստանում՝ ընդունել տալով իբրև պետական կրոն։ Մեռել է 325 թ.։ Նրա անունով կան բազմաթիվ եկեղեցիներ։

[38] Աստվածաշնչի երկրորդ Թագավորաց ԺԸ, 18 համարում գրված է հետևյալը. «Աբիսողոմը իր կենդանության ժամանակ առել ու մի արձան էր կանգնեցրել Թագավորի հովտում. որովհետև, ասում էր, թե որդի չունեմ, որ հիշի իմ անունը։ Նա արձանը կոչեց իր անունով։ Եվ այն մինչև այսօր Աբիսողոմի կոթող է կոչվում»։ Կիրակոսը Աստվածաշնչի այս խոսքն է ակնարկում։

[38ա] Այս գլխի առաջին ութ պարբերությունները համապատասխանաբար սկսվում են Կ, Ի, Ի, Ր, Ա, Կ, Ո Ս, որ ծայրանունաբար նշանակում են ԿԻՐԱԿՈՍ։

39 Ագաթանգեղոսը նկարագրում է Տրդատ Մեծի և Գրիգոր Լուսավորչի ճանապարհորդությունը դեպի Հռոմ և Կոստանդիանոս կայսեր հետ կնքած դաշնագրությունը։ Որպես թե նրանց ուղեկցում էին Արիստակեսը, Աղբիանոսը, չորս բդեշխներ, նախարարներ և մեծ քանակությամբ զորք (70 հազար)։ Այս ուղևորությունը համարվում է Տրդատ առաջինի 66 թվականի Հռոմ գնալու և այնտեղ թագադրվելու արձագանքը, այսինքն պատմականորեն չի հաստատվում։ Կիրակոսը հետևում է Ագաթանգեղոսի պատմությանը[1]։

40 Պետրոսը Քրիստոսի 12 առաքյալներից մեկն էր, որ քրիստոնեություն էր քարոզում Իսրայելի քաղաքներում։ Իսկ Անդրեն նրա եղբայրն էր, որն էլ նրան տարավ Հիսուսի մոտ։

41 Գողգոթան Երուսաղեմի մոտ գտնվող սար է, որտեղ ըստ ավանդության Քրիստոսին խաչեցին։

42 Սուրբ Հակոբը Երուսաղեմի նշանավոր եկեղեցիներից է, որ պատկանում է հայերին։ Այժմ այնտեղ կա հայկական միաբանություն, որն ունի ձեռագրատուն, տպարան, թանգարան, դպրոց։

43 Արիստակեսը Գրիգոր Լուսավորչի կրտսեր որդին էր։ Ծնվել է մոտավորապես 264 թ. և կաթողիկոս է ձեռնադրվել 325 թ.։ Գահակալել է ութ տարի։ Սպանվեց Ծոփքի Արքելայոս իշխանի ձեռքով, որի անբարի բարքի համար Արիստակեսը խիստ կշտամբել էր նրան։

44 Նիկիան հնում Բյութանիայի (Փոքր Ասիա) նշանավոր քաղաքներից էր։ Միջին դարերում բյուզանդական մշակութային խոշոր կենտրոն էր։ 325 թվականին այստեղ գումարվեց տիեզերական եկեղեցական ժողով, որ քննեց Արիանոսի աղանդը։ Այս տիեզերական ժողովին մասնակցում էր հայ կաթողիկոս Արիստակեսը։ Այժմ Նիկիան կոչվում է Իզնիկ ըստ թուրքական անվանակոչության։

45 Թորդանը Արևմտյան Հայաստանի Դարանաղի գավառի (Քեմախ) գյուղերից է։ Եղել է հին մեհյանատեղի։ Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն դառնալով՝ գյուղը իր կալվածքներով տրվեց եկեղեցուն։

46 Զենոնը բյուզանդական կայսր էր, իշխել է 474—491 թվականներին։

47 Ըստ Ագաթանգեղոսի պատմության Հռիփսիմեն Հռոմի նշանավոր գեղեցկուհի էր։ Դիոկղետիանոս կայսրը ուզեց կին առնել նրան, բայց Հռիփսիմեն չուզեց կռապաշտի կին լինել։ Մի խումբ ընկերուհիների հետ փախավ եկավ Հայաստան։ Հայոց արքա Տրդատը սիրահարվեց նրան, բայց նա Տրդատին ևս մերժեց։ Դահիճները նրան ու իր ընկերուհիներին նահատակեցին 301 թվականին։ Գրիգոր Լուսավորիչը մի մատուռ շինեց նրա գերեզմանի վրա, որ հետո յոթերորդ դարում Կոմիտաս կաթողիկոսը կերտել տվեց հայկական ճարտարապետության թանկագին զարդերից մեկը՝ Հռիփսիմեի տաճարը, որ առ այսօր կանգուն է Էջմիածնում։ Հռիփսիմյանք են կոչվում Հռիփսիմեն և իր ընկերուհիները։

48 Բյուզանդական Վասիլ Առաջին կայսրն է, որ կոչվում էր Մակեդոնացի։ Թագավորել է 867—886 թ.։

[1] Տե՛ս Ագաթանգեղոս 872—878:



49 Հայոց Աշոտ առաջին արքան է, որ արաբական ամիրապետից (Մահմեդ Ջաֆր) ստացավ իշխանաց իշխան տիտղոսը։ Իր եղբոր միջոցով ջարդեց Հայաստան ներխուժած և արաբների դեմ ապստամբված պարսկական մի բանակ, որից հետո ամիրապետը նրան թագ ուղարկեց։ 887 թ. թագադրվեց և հիմք դրեց Բագրատունիների թագավորությանը։

50 Գայանեն Հռիփսիմեի ընկերուհիներից է, որի անունով նշանավոր մի վանք կա Էջմիածնում՝ շինված 7-րդ դարում։

51 Զատկի մեծ պասը, որի ընթացքում միայն աղ և հաց էին ուտում։

52 Չորրորդ Հայքը Ծոփքն է, որ Մեծ Հայքի 2-րդ նահանգն էր։ Հյուսիսում, հյուսիս-արևելքում և արևելքում սահմանակից է Բարձր Հայքին (Կարին), Տուրուբերանին (Տարոն), Աղձնիքին (Վանա լճից հարավ)։ Հարավից սահմանակցում է Միջագետքին, իսկ արևմուտքում սահմաններն Փոքր Հայքն ու Կապադովկիան են։ Չորրորդ Հայք անունը ստացել է 536 թվականին Հուստինիանոս առաջինի ժամանակ։ Տարածությունը 15890 կմ է։

53 Կիլիկիան, որ կոչվել է նաև Սիսվան, գտնվում է Փոքր Ասիայի հարավ-արևելյան ծայրում Միջերկրական ծովի ափին՝ Կիպրոս կղզու դիմաց։ Տարսոնը Կիլիկիայի նախահռոմեական մայրաքաղաքն է եղել։ Զանազան ժամանակներում այնտեղ հավաքված հայերը 1081 թվականին հիմնեցին հայկական պետություն Ռուբեն իշխանի գլխավորությամբ։ Հետագայում հայերը այնքան զորեղացան, որ գրավեցին ողջ Կիլիկիան և կազմեցին հայկական շատ զորեղ մի թագավորություն և ստեղծեցին բարձր մշակույթ։ Մայրաքաղաքում ոչ միայն թագավորն էր նստում, այլև կաթողիկոսը։ Հայկական պետությունը Կիլիկիայում հարատևում է մինչև 1375 թվականը, երբ հայկական Կիլիկիան ընկնում է սելջուկ թուրքերի ու մամլուկների միացյալ ուժերի արշավանքի հետևանքով։

54 Հայոց Խոսրով երկրորդ Կոտակ թագավորն է (330—338), որ Տրդատի որդին էր։ Նա հաջորդելով հորը 9 տարի՝ մայրաքաղաքը Արտաշատից փոխադրեց Դվին, որտեղից սկսած մինչև Գառնի տնկեց կաղնու անտառներ և լցրեց որսի կենդանիներով։

55 Սանատրուկը Արշակունի իշխաններից էր, որին Տրդատը նշանակեց Մեծ Հայքի Փայտակարան նահանգի (Երասխից հարավ Արաքսի ստորին շրջանները) վերակացու։ Տրդատի մահից հետո Խոսրով Կոտակի թագավորության ժամանակ Փայտակարանը ապստամբվեց և կազմեց առանձին իշխանություն, նույնիսկ Պարսկաստանի հովանավորությամբ թագավորություն դարձավ։ Խոսրովը հաշտվեց իրադրության հետ, որովհետև թույլ ու խաղաղասեր մարդ էր։

56 Գրիգորիսը Լուսավորչի ավագ որդի Վրթանեսի զավակն էր։ Ծնվել է Կեսարիայում 295 թ.։ Դեռևս 15 ամյա պատանի էր, երբ հայրը՝ Վրթանեսը (ծնվ. 262 թ.) նրան ձեռնադրեց եպիսկոպոս, ապա ուղարկեց Աղվանք իբրև Հայաստանի այդ մասի կաթողիկոս։ Գնաց քարոզչության մազքութների մոտ, որոնց Սանեսան թագավորը, որ պարթև էր և Խոսրով Կոտակի ազգականը, նահատակեց նրան՝ կապելով ձիու պոչից և բաց թողնելով Վատնյան դաշտում։

57 Վատնյան դաշտը ըստ Լեոյի գտնվում է Կասպից ծովի ափին։ Ըստ Անասյանի Դերբենդի մոտ՝ այժմյան Մուսքաթ տեղում։ Իսկ ըստ Ս. Երեմյանի Վատնյան դաշտը նույն Վարդանյան դաշտն է Վարդանակերտ քաղաքի շրջակայքում։ Իսկ Վարդանակերտը գտնվում է նույնանուն գավառում, որ բռնում է Մուղանի դաշտի մեծ մասը։

58 Վրթանեսը (ծնվ. 262 թ.) Գրիգոր Լուսավորչի ավագ որդին էր, որ դարձավ հայոց կաթողիկոս և գահակալեց 333—337 թ.թ.։ Զորեղ կաթողիկոս էր, որին ենթարկվում էր Խոսրով թագավորը։ Խոսրովի մահից հետո Վրթանեսը Փոյիս տարավ նրա որդի Տիրանին և թագավոր օծել տվեց։

59 Արտաշատը հայոց հնագույն մայրաքաղաքն էր, որ գտնվում էր Խոր Վիրապ վանքի և Գինի գետի ու Գինի բլրի միջև՝ Արաքսի ափին։ Հիմնադրվել է մեր թվ. առաջ Արտաշես առաջինի ձեռքով (189—160)։ Հայոց մայրաքաղաքն էր մինչև 5-րդ դարի երկրորդ կեսը։

60 Դվինը հիմնվել է Խոսրով Կոտակի (330—338 թ.) օրոք։ Հենց նա էլ Դվինը դարձրեց մայրաքաղաք՝ Արտաշատից այնտեղ փոխադրվելով։ Արտաշատը դարձավ Դվինի հարավային արվարձաններից մեկը։ Այժմ ավերակ է։

61 Ինչպես ասվեց (տես ծանոթ. 54), հիշյալ անտառը տնկեց Խոսրով Կոտակը չորրորդ դարի 30-ական թվականներին։ Անտառի որոշ մասեր պահպանվում են մինչև այժմ։ Համարվում է մեր երկրի հնագույն արհեստական անտառ՝ պահպանվելով ավելի քան 1650 տարի։ Անտառը տարածված է Ազատ գետի երկու ափերին։ Այժմ վերածված է արգելարանի և տարեցտարի ընդարձակվում է։

62 Տիրանը Խոսրովի որդին էր. Հայոց թագավոր դարձավ 338 թվականին և գահակալեց մինչև 345 թվականը։ Արքունական կուսակալ Վարազ Շապուհը բարեկամ ձևանալով գնում է նրա մոտ Աղահունյաց գավառ (Տարոնում) այժմյան Մանազկերտ և կուրացնելով նրան ուղարկում է Պարսկաստան 350 թ.։

63 Կոստանդիանոս Մեծը (Փլավիոս Վալերիոս) ծնվել է 285 թ.։ Ինքնակալ հռչակվեց 306 թվականին։ Սա էր, որ մայրաքաղաքը Հռոմից փոխադրեց Բյուզանդիոն և վերանվանեց Կոստանդնուպոլիս։ Մեռել է 337 թ.։ Սրա որդի Կոստանդիոսը ծնվել է 316 թ.։ Կեսար դարձավ 317-ին և կոչվեց Կոստանդիոս Երկրորդ։ Սա թագավորեց մինչև 350 թ., որանից հետո թագավորում է նախորդի եղբայր Կոստանդիոսը, 351 թվականին դարձավ ամբողջ հռոմեական կայսրության ինքնակալը։ Դաշինք կնքեց Արշակ 2-րդի հետ և նրան կնության տվեց իր եղբոր նշանած Օլիմպիային։ Հուլիանոսը, որ կայսեր ազգականն ու զորավարն էր, Գալիայում ապստամբեց նրա դեմ։ Կոնստանդիոսը Արևմուտք Հուլիանոսի դեմ գնալու ճանապարհին հիվանդացավ և մեռավ։

64 Հուլիանոսը կայսր դարձավ 361—363 թ.։ Սա ծայրահեղ հեթանոս էր։ Ուրացավ քրիստոնեությունը և երկրում հաստատեց հեթանոսական գիտապաշտությունը, ուստի քրիստոնյաների կողմից հռչակվեց ուրացող մականունով։ Գանձակեցին սխալվում է. Հուլիանոսի ժամանակ Տիրանը և Հուսիկը կենդանի չէին։ Տիրանը 350 թվից հետո այլևս թագավոր չէր, իսկ Հուսիկը դրանից շատ առաջ Տիրանի կողմից բրածեծ էր արված և սպանված։



65 Հուսիկը՝ Վրթանեսի որդին, այդ ժամանակ հայոց կաթողիկոսն էր։ Հուսիկի մահից հետո կաթողիկոս դարձավ Դանիելը, որ Գրիգոր Լուսավորչի աշակերտն էր։ Սա Տիրանին հանդիմանում ու անիծում է վերջինիս վատ վարքի համար։ Տիրանը խեղդել է տալիս նրան 347 թվականին։

66 Տարոնը Տուրուբերան նահանգի գավառներից է, որտեղ գտնվում էր հեթանոսական Հայաստանի կրոնական կենտրոն Աշտիշատը։ Չորրորդ դարում դառնում է քրիստոնեության կենտրոն։ Աշտիշատը այժմ կոչվում է Դերիկ, իսկ Տարոնը նախկին Մշո գավառն է՝ Մուշ կենտրոնով։

67 Արշակ Երկրորդ թագավորը Տիրանի որդին էր, որ հաջորդեց նրան։ Սկսեց թագավորել 345 թ.։ Իբրև պետական գործիչ շատ լավ էր հասկանում երկրի անկախության ու պետականության գոյատևման համար կենտրոնական հզոր քաղաքական իշխանության դերը։ Նա սահման դրեց հոգևոր իշխանության ոտնձգություններին և լայն պայքար ծավալեց նախարարական կենտրոնախույս ուժերի դեմ։ Ինքնուրույն անկախ քաղաքականություն վարելու համար 367 թ. կանչվեց Պարսկաստան և նետվեց Անհուշ բերդը, որտեղ և մեռավ՝ երազելով կորցրած թագի ու ավերված երկրի մասին։

68 Ներսես Մեծն էր, որ գահակալեց 353—373 թվականներին, կրթությունը ստացել էր Կեսարիայում։ Սա Հայաստանում հիմնեց աղքատանոցներ, որբանոցներ, հյուրանոցներ, հիվանդանոցներ, ուրկանոցներ, կուսանոցներ, վանքեր և դպրոցներ հունարեն ու ասորերեն լեզուներով։ Մինչև կաթողիկոս դառնալը Արշակի սենեկապետն էր։ Արշակ երկրորդի հետ գժտվեց և 359 թվականին հեռացավ կաթողիկոսությունից։ Պապի թագավորության օրոք 363 թ. վերադարձավ աթոռը, բայց տաղանդավոր արքա Պապը չէր կարող հանդուրժել Ներսեսի հոգևոր իշխանությունը, որ միտում էր իրեն ենթարկելու քաղաքական իշխանությունը։ Ըստ պատմիչ Փավստոս Բուզանդի Պապը թունավորել է տալիս Ներսեսին և նրանից ազատվում է 373 թ.։ Շատ հնարավոր է, որ թունավորման այս հանգամանքը հոգևորականների՝ Պապի հանդեպ ունեցած թշնամությունից բխած լինի։

69 Արիոսը Ալեքսանդրիայում քահանա էր. 318 թվականից սկսած քարոզում էր, թե Քրիստոսը, որ աստծու որդի է կոչվում, հորը հավասար չէ և չի կարող հավիտենական լինել, քանի որ ծնվել է։ Նրա այդ ուսմունքը կոչվում է Արիոսականություն։ 325 թվ. Նիկիայում (տես. ծան. 44) տիեզերական ժողով գումարվեց և հերքվեց այդ աղանդը։ Արիոսը մեռել է 336 թ.։

70 Մակեդոնը Կոստանդնուպոլսի հույն պատրիարքն էր մինչև 360 թիվը։ Նա նույնպես աղանդի հիմնադիր է։ Ըստ նրա աղանդի սուրբ հոգին չի կարող աստված լինել, ուստի պետք է մերժել նրա աստվածությունը։ 360 թ. գահընկեց արվեց։ Հայ եկեղեցին նույնպես մերժում է մակեդոնականությունը։

71 Այս արարքը, որ Րաֆֆին էլ «Սամվել» վեպում նկարագրել է, տաս-

սել է, և անշուշտ ստեղծվել է կրոնական շրջանակներում։ Այդպիսի մի պատմություն պատմում է Գրիգոր Աստվածաբանը Բարսեղ Կեսարացու մասին, որին Վաղես հրամայել է աքսորել, սակայն չի աքսորել, որովհետև իր վեց ամսեկան որդին նույն գիշեր հիվանդացել է, և կնոջ դրդումով Վաղեսը հրամանը ետ է առել։ Հավանորեն այս պատմությունն է ընկել հայկական առասպելի հիմքում։

[72] Չորրորդ դարի հիսունական թվականներին Արշակը Մասիսի այն կողմը՝ Կոգովիտ գավառում, որի կենտրոնն էր Դարույնք ամրոցը (հին Բայազետ) կառուցում է մի քաղաք և իր անունով կոչում է Արշակավան։ Արշակավանին մեծ արտոնություններ տալով, ուստի կարճ ժամանակում այն բազմամարդացավ։ Բայց՝ թագավորը այնտեղ իր համար պալատ չշինեց։ Այնտեղ հավաքվեցին նաև զանազան քրեական տարրեր, նախարարական տներին ենթակա ճնշված ու հարստահարված գյուղացիներ, որոնք ըստ Արշակի արտոնության Արշակավան ընկնելով ազատվում էին հետապնդումից։

Այդ քաղաքի գոյությունը մեծ դժգոհության առաջ բերեց նախարարների ու հոգևորականների շրջաններում։ Ներսեհ Կամսարականի գլխավորությամբ նախարարները հարձակվում են քաղաքի վրա, շրջապատում և, բացի մանուկներից, բոլորին սրի են քաշում ու քարուքանդ անում արքունական կենտրոն դարձած քաղաքը։

[73] Թեոդոս Մեծը բյուզանդական նշանավոր կայսր էր 379—395 թվականներին։ Նա հովանավորում էր քրիստոնեությունը և եկեղեցին։ Նա Նիկիայի եկեղեցական ժողովի որոշումները կենսագործելով վերահաստատեց ուղղափառ դավանությունը։

[74] Կոստանդնուպոլսի եկեղեցական տիեզերական ժողովը կայացավ 381 թ. 180 հոգու մասնակցությամբ (Խորենացին 150 է ասում)։ Այս ժողովում դատապարտվեց Մակեդոնի աղանդը, որ մերժում է սուրբ Հոգու աստված լինելը (տես ծան. 63)։ Բայց Ներսեսը այս ժամանակ արդեն մեռած էր. ըստ Օրմանյանի Ներսեսը մեռել է 373 թ.։

[75] Պապը տասնչորսամյա երիտասարդ թագավոր էր (368—374)։ Նա Արշակ երկրորդի որդին էր, որ հորից ավելի եռանդով ու խելամտությամբ պայքարում էր եկեղեցու ցերիշխանական հավակնությունները և ջլատում երկիրը կործանող կենտրոնախույս ուժերը։ Ալքի էր ընթանում անկախ ազգային քաղաքականությամբ, այդ պատճառով բյուզանդական նենգ Վաղես կայսեր թելադրանքով սպանվեց Հայաստանում բնակված բյուզանդական զինվորականների ձեռքով հացկերույթի ժամանակ։ Կրոնական պատմիչների նրա հասցեին տարածած վարկաբեկիչ պատմությունները հերյուրանքներ են և բխում են եկեղեցու իշխանատենչական ձգտումների նրա ջլատման քաղաքականությունից։ Բոլոր նշանավոր պատմաբանները, ներառյալ Օրմանյանը, որ մեր եկեղեցու պատմության եզակի ու ամենանշանավորագույն պատմաբանն է, բազմաթիվ փաստերով ապացուցել են, որ Պապը Ներսեսի մահվան մեջ ոչ մի մեղք չունի (տես Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա, էջ 218—219)։ Գանձակեցին սխալվում է, Թեոդոս Ա-ն կայսր է դարձել 379 թ.։ Պապի ժամանակ կայսր էր Վաղեսը։



[76] Մեր պատմիչները նետողների ազգ են կոչում թաթար-մոնղոլներին, որոնք 1220 թ. անցան Դերբենդը և ներխուժեցին Անդրկովկաս ու այնուհետև դարձան աշխարհակալ հզոր պետություն։ Նրանց հիմնական զենքը նետ-աղեղն էր, դրա համար կոչվեցին նետողների ազգ։

[77] Նեռը ըստ եկեղեցական ավանդության սուտ Քրիստոսն է կամ հակաքրիստոսը, որ գալու, կործանելու է աշխարհը և վերացնելու քրիստոնեությունը։ Ենթադրվում է, որ Նեռ բառը առաջացել է Հռոմի կայսր Ներոնի անունից։

[78] Ալբիանոսը (կամ Աղբիանոս) Հարք գավառի մի քրմի որդի էր, որին Գրիգոր Լուսավորիչը 303 թ. օծեց Մանազկերտի եպիսկոպոս։

[79] Հարքը Տուրուբերանի նահանգի իններորդ գավառն էր։ Այս գավառը այժմյան Բուլանխն էր։ Մանազկերտ քաղաքը գտնվել է Հարքի և Ապահունիքի սահմանի վրա՝ Արևելյան Եփրատի ձախ ափին։ Այժմ գյուղ է և կոչվում է Մելազգերտ։

[80] Պապը սպանվեց 374 թվականին, իսկ Թեոդոսը կայսր դարձավ 379-ին։ Պատմիչը Վաղեսի գործողությունները վերագրում է Թեոդոսին։

[81] Վարազդատը թագավոր դարձավ Պապի ողբերգական մահից հետո 374 թ.։ Մեծացել էր Բյուզանդիայում և մարմնական մեծ ուժի տեր ըմբշամարտիկ էր։ Վաղեսը նրան ևս գահընկեց արեց, որ և 378 թ. փախավ Հայաստանից։ Ըստ մեր պատմիչների նախարար Բաթ Սահառունու մատնությամբ Վարազդատը սպանել է տալիս հերոս Վասակ Մամիկոնյանի որդի՝ նույնպես հերոս, սպարապետ Մուշեղ Մամիկոնյանին, որ մեր երկիրը մաքրեց պարսից զորքերից։ Մանվել Մամիկոնյանը Բաթ Սահառունու ձեռքից խլում է սպարապետությունը և ապա գահընկեց է անում Վարազդատին՝ լուծելով Մուշեղի վրեժը։

[82] 384 թվականին բյուզանդական Թեոդոս կայսրի և պարսից Շապուհ երրորդի միջև դաշինք է կնքվում Հայաստանը երկու մասի բաժանելու մասին։ Ըստ այդ դաշինքի Հայաստանի չորս հինգերորդ մասը անցնում է Պարսկաստանին, իսկ հինգերորդը Բյուզանդիային։ Երկրի արևմտյան մասում (Բյուզանդական մաս) թագավոր է թողնվում Արշակը, իսկ արևելյան մասում՝ Խոսրովը։ Փաստորեն քայքայվում է Հայաստանի միասնությունը, և երկիրը կորցնում է իր անկախությունը։ Երկու թագավորներն էլ ենթականեր էին։ Երկու տարի հետո Բյուզանդական մասում վերանում է թագավորությունը, իսկ պարսկական մասում հայոց թագավորը իր կիսանկախ գոյությունը շարունակում է մինչև 428 թ., երբ իսպառ վերանում է Հայ Արշակունի թագավորությունը։

[83] Տես ծան. 12։

[84] Հովհան Ոսկեբերանը (347—407) Կոստանդնուպոլսի արքեպիսկոպոսն էր. գեղեցկախոս քարոզիչ էր, ուսուցում և գրգռում էր հոգևորականության և ազնվականության նախանձը՝ գահազուրկ արվեց և աքսորվեց երկրորդ անգամ։ Թողել է ճառեր, մեկնություններ, որոնց մի մասը հայ գրերի գյուտի առաջին տարիներում թարգմանվել է դասական գրաբարով։ Հայ եկեղեցու համար Ոսկեբերանը սրբերի դասը անցած գրական մեծ

հեղինակություն էր։ Նրա շատ գործեր հայերեն են թարգմանվել նաև հետագա դարերում։

86 Սողոմոնի առակները Հին կտակարանի (Աստվածաշունչը երկու բաժին ունի՝ Հին և Նոր կտակարաններ) մասերից է, որ վերագրվում է հրեական իմաստուն թագավոր Սողոմոնին։ Առաջին անգամ, որ Մեսրոպը գրիչ է շարժել հայերեն գրելու, սկսել է հենց այս առակներից (իմաստություններ)՝ «Ճանաչել Սողոմոնի որդւոյ Դաւթի՝ թագաւորի Իսրայելի»։

86 Տես ծան. 15։

87 Հովհանը (Եկեղյացի) Մեսրոպի աշակերտներից էր։ Ծնվել է Եկեղյաց գավառում (Երզնկան)։ Մասնակցել է Սողոմոնի առակների թարգմանությանը։ Եդեսիայում ու Բյուզանդիայում ուսանող է եղել 424 թվականին։

88 Սա Ղևոնդ Երեցն է։

89 Մովսես Խորենացին է, որ աշխարհահռչակ անուն ունի իր նշանավոր «Հայոց պատմություն» աշխատությամբ, Մեսրոպի կրտսեր աշակերտներից է։ Սովորել է Աթենքում, Գոլսում, Եգիպտոսում, Պաղեստինում, Շատ աշխատություններ է գրել, բայց մեզ հասել են՝ «Հայոց պատմություն»-ը, «Տիրամոր պատկերի պատմությունը», «Հռիփսիմյանների պատմությունը և ներբողը», «Պիտոյից գիրքը», «Վարդավառի ճառը», «Քերականության մեկնություն», շարականներ և այլն։ Հները այնքան բարձր են գնահատել նրա գրվածքները և հատկապես «Հայոց պատմությունը», որ նրան կոչել են քերթողահայր, պատմահայր։

90 Մամբրե Վերծանողը համարվում է Խորենացու եղբայրը։ Նույնպես եղել է մատենագիր, գրել է ճառեր։

91 Եղնիկ Կողբացին ավագ թարգմանիչներից է և Մեսրոպի առաջին աշակերտներից։ Գրած աշխատություններից մեզ հասել է «Եղծ աղանդոց» գիրքը, որ դասական գրաբարի գլուխգործոց է։ Նրա անունով խրատներ կան հրապարակված, բայց կասկածելի են թվում։

92 Մաշտոցի կենսագիրը։

93 Վարդանանց պատերազմի պատմիչը։

94 Դավիթ փիլիսոփան Դավիթ Անհաղթն է, որ ծնվել է Հարք գավառում, եղել է Մեսրոպի աշակերտ՝ Խորենացու քեռորդին։ Իմաստասեր էր։ Ըստ ավանդության իր ժամանակի հույն փիլիսոփաներին հաղթել է վեճի մեջ և կոչվել Անհաղթ։ Թարգմանել ու մեկնել է Արիստոտելի ու Պորփյուրի փիլիսոփայական գրքերը, գրել է նաև ինքնուրույն գործեր։

95 Հովհաննես Մեսրոպի աշակերտներից է, թարգմանիչ։

96 Արձան Արծրունին ավագ թարգմանիչներից է։ Սովորել է Կեսարիայում, Բյուզանդիայում (Կ. Պոլիս)։

97 Մուշեղ Տարոնից էր, Մեսրոպի ավագ աշակերտներից, նրա հետ էլ գնաց Գողթն գավառ դպրոցներ հիմնելու։

98 Տես ծան. 17։

99 Ութերորդ դարի մատենագիր Ստ. Սյունեցին ծնվել է մոտավորապես 688 թ.։ Դվինում ուսանել է կաթողիկոսարանում, ապա գնացել է Մարենացիների վանքը, իսկ հետո Սյունիք, որտեղի դպրոցը հռչակված էր ողջ Հայաստանում։ Սյունիքից մեկնում է Պոլիս, որտեղ սովորում է հունարեն ու լատիներեն։ Դրանից հետո անցնում է Աթենք և այնտեղ թարգմանում Դիոնիսիոս Արիսպագացու և Գրիգոր Նյուսացու երկերը։ 728 թվականին վերադառնում է հայրենիք և ծավալում է մեծ գրական գործունեություն։

100 Հովհաննես Սամոսատեցին հույն կրոնավոր էր։ Ըստ տեղեկությունների նա Մեսրոպի ստեղծած տառերը հղկել, ձևավորել է։

101 Ըստ մեր պատմիչ՝ Մեսրոպի աշակերտ Կորյունի, Մեսրոպը Հայաստանում դպրոցական գործը հիմնադրելուց ու կարգի գցելուց հետո գնաց Աղվանք, ապա Վրաստան և նրանց համար նույնպես տառեր ստեղծեց։ Մեսրոպի ժամանակ Աղվանքի կազմի մեջ էին մտնում նաև Արցախ, Ուտիք ու Փայտակարան նահանգները։ Այս երեք նահանգները հայկական նահանգներ էին և դրանց բնակիչներն էլ հայեր էին։ Սրանց համար նա դպրոցներ հիմնադրեց հայերեն լեզվով։ Իսկ տառեր ստեղծեց Կուրի ձախ ափին Կովկասյան լեռների ստորոտներում ապրող աղվանական ցեղերի գործածության համար։ Բայց, ինչպես երևում է, այդ ցեղերը այնքան էլ պատրաստ չէին գիր ու գրականություն ստեղծելու։ Գիրը չտարածվեց։ Եթե երբևիցե աղվանական ցեղերից կրթության ստացողներ եղել են, ապա նրանք անցել են Կուրից այս կողմ և հայերեն են ուսանել։ Փաստը այն է, որ աղվանական տառերը մեր ձեռագրերում գրանցված մնացել են, իսկ գրականության ոչ մի նմուշ չկա։ Կորյունի հաղորդումը՝ Մեսրոպի կողմից վրաց ու աղվանից տառեր ստեղծելու մասին պատմական անժխտելի ճշմարտություն է։ Այդ ճշմարտությունը կասկածի տակ առնել չի կարելի և գիտության ու պատմության հետ առնչություն չունի։

102 Ստրատեյատ հունարեն բառ է, նշանակում է զորավար, սպարապետ։

103 Կարինը Բարձր Հայքի մայրաքաղաքն էր։ Այն այժմ կոչվում է Էրզրում։ 5-րդ դարում Թեոդոսի անունով կոչվում էր Թեոդոսուպոլիս կամ Թեոդոսապոլիս։ Կարինը գտնվում էր հռոմեական Հայաստանի բյուզանդական մասում։ Էրզրում անունը ստացել է 11-րդ դարից (Արզն ում-ից արաբերեն հույների Արզն)։

104 Արտաշիրը կամ Արտաշես երրորդը հայոց թագավորներից է։ Սա հայերեն տառերի գյուտին մեծ նպաստ բերած Հայոց Վռամշապուհ թագավորի որդին էր։ Մի թույլ թագավոր, որին նախարարները փառամոլ Սուրմակ Երեցի գլխավորությամբ բանսարկեցին պարսից արքայի մոտ և 428 թ. գահընկեց անել տվին, որով և վերջ դրվեց Արշակունի հարստությանը։ Ուրեմն Արտաշիրը կամ Արտաշես Գ-ն Արշակունի վերջին թագավորն էր։ Այս անգամ էլ նույնպիսի վարկաբեկիչ մեղադրանքներ են հարուցում թագավորի դեմ, որպիսին արվում էր Պարսից նկատմամբ։ Սուրմակ Երեցը հենց այդ ժամանակ գրավում է նաև Սահակ Պարթևին ու նրանից խլում կաթողիկոսությունը։

105 Ամենայն հավանականությամբ ձեռագրական սխալի հետևանքով թյուրիմացություն է առաջացել։ Բնագրում գրված է «եւ տեկաց թագաւո-

ռաթիւնն Արշակունեաց ի Հայս ամս ՇԿԸ», այսինքն՝ 568 տարի, մինչդեռ Արշակունի հարստությունը հիմնադրվում է մեր թվականության 66-ին և վերջ է գտնում 428-ին, այսինքն՝ ուղիղ 362 տարի։

106 Արտաշես երրորդի գահընկեցությունից հետո պարսից Վռամ հինգերորդ արքան Հայաստանի մարզպան է նշանակում Վեհմիհրշապուհ անունով մի պարսիկի։ Եթե այստեղ խոսքը վերաբերում է Ավարայրի հերոս Վարդան Մամիկոնյանին, ապա նա մարզպան չի եղել։ Վարդանին Թեոդոս Փոքր կոչված բյուզանդական կայսրը ստրատելատության աստիճան է շնորհում 417 թ., երբ Մեսրոպն ու Վարդանը գնացել էին նրան խնդրելու, որ թույլ տա Հայաստանի բյուզանդական մասում դպրոցներ բանալ։ Վեհմիհրշապուհից հետո մարզպան է դառնում (441 թ.) Վասակ Սյունին։

107 Սահակ Պարթևը վախճանվում է 439 թ. սեպտեմբերի 7-ին, իսկ դրանից վեց ամիս հետո 440 թ. փետրվարի 17-ին իր մահկանացուն է կնքում նաև Մեծ Մեսրոպ Մաշտոցը։

108 Մարկիանոս բյուզանդական կայսրը գահ բարձրացավ 450 թվականին։ Այդ ժամանակ Հայաստանը պատրաստվում էր Ավարայրի ճակատամարտին։ Հայերը դիմեցին Մարկիանոսին, որպեսզի իրենց օգնի պարսիկների դեմ, սա ոչ միայն չօգնեց, այլև բարեկամության դաշինք կնքեց պարսիկների հետ։ Իսկ 451 թվականի մայիսի 17-ին, երբ հայերը Ավարայր ելնում էին Տղմուտ գետի մոտ ճակատելու պարսից փղավորների դեմ, նա հրաման տարածեց Քաղկեդոնի եկեղեցական ժողովի գումարման մասին։ Ժողովը տեղի ունեցավ այդ տարվա աշնանը։ Քաղկեդոնը Պոլսի արվարձաններից է, այժմյան Կադը գյուղի տեղում՝ Սկյուտարի մոտ։

109 Պյուտ կաթողիկոսը գահակալել է 461—471, վախճանվել է 478 թվականին։ Ուրեմն ըստ Գանձակեցու Դավիթ փիլիսոփան ապրել է 5-րդ դարի 2-րդ կեսին։ «Բարձրացուցէք»-ը նրա ճառերից մեկի վերնագիրն է։

110 Աղուհացքը մեծ պատիվ է, երբ միասին աղուհաց էին ուտում։

111 Մաղզման եկեղեցու սեղանի վրա դետեղվող սկավառակն է, որի վրա դրվում է Քրիստոսի մարմինը։

112 Հազկերտ երկրորդից հետո Պարսկաստանի թագավորական գահը անցավ նրա ավագ որդի Որմիզդին (457 թ.)։ Մյուս Պերոզ որդին հեփթաղների օգնությամբ գրավեց գահը և սպանեց եղբորը 459 թ.։ Պերոզը թագավորեց մինչև 484 թ., երբ հեփթաղների (տես ծան. 118) դեմ պատերազմի ժամանակ անհետ կորավ։ Նա Հայաստանի հանդեպ նույն դաժան քաղաքականությունն էր վարում, ինչ Հազկերտ երկրորդը։

113 Մարկիանոսը Բյուզանդիայի այն կայսրն էր, որ կազմակերպեց Քաղկեդոնի ժողովը (տես ծան. 108) և հենց նույն տարում 451 թվականին մերժեց Հմայակ Մամիկոնյանի պատվիրակության՝ Պարսկաստանի դեմ Հայաստանին օգնելու խնդրանքը (տես ծան. 105)։ Մարկիանոսին հաջորդեց Լևոն Ա կայսրը, որ թագավորեց 457—474 թ.։

114 Մանդնոսը 461 թ. պարսից Պերոզ արքայի կողմից նշանակվում է հայոց սպարապետ, սա Վարդան Մամիկոնյանի եղբայրն էր, որի մահից հետո (451 թ.) 10 տարի երկիրը մնաց առանց իշխանի։ Մանդնոսը իշխանությունը վարեց 20 տարի, սրանից հետո իշխանությունը անցավ Վահան Մամիկոնյանին։ Ըստ Աճառյանի Մանդնոսը նույն ինքը Վահան Մամիկոնյանն է՝ մեր պատմության մեծագույն, բայց ըստ արժանվույն չգնահատված հերոսներից մեկը։



115 Թաթուլը Վարդանանց պատերազմից հետո հռչակվեց իբրև ճգնավոր։ Ճգնում էր իր եղբայր Վարոսի և աշակերտ Թոմայի հետ միասին։ Սրան է վերագրվում ձեռատր ու աշակերտ իր Թովմասի գրությունը։ Նա այնքան մեծ հռչակ էր վայելում, որ հետագայում նրա անունով վանք հիմնվեց։

116 Թորդանը գտնվում է Բարձր Հայքի Դարանաղյաց գավառում (այժմյան Քեմախ)։ Մեր պատմիչները և ավան են կոչում և գյուղ։ Թորդանը կառուցված է Եփրատ գետի արևելյան կողմը։ Հայտնի կենտրոն էր հեթանոսական աստվածների, որոնք նշանավոր մեհյան։ Գրիգոր Լուսավորիչը քանդեց մեհյանը և կառուցեց Սուրբ Խաչ վանքը։ Այս վանքում են թաղված Գրիգոր Լուսավորիչը, իր որդիները, թոռները, Տրդատը, նրա կինը, քույրը։

117 Սիմոն Այրիվանեցին և Տիմոթեոսը չորրորդ դարի եկեղեցական գործիչներ էին և հայոց եկեղեցու ջերմ պաշտպաններ ընդդեմ քաղկեդոնական ժողովի որոշումների։

118 Հեփթաղները հոների ցեղախմբից ծագում են եղել և ապրել են Բակտրիայում (այժմյան Աֆղանստան)։ Նրանք կոչվում են նաև սպիտակ հոներ՝ տարբերելու համար հոներից, որոնք ավելի սև էին և ունեին գարշելի կերպարանք։ Հեփթաղները մեր պատմության մեջ կոչվում են նաև քուշաններ, չնայած որանց միջև կա որոշ տարբերություն։ Սրանց մայրաքաղաքը եղել է Բալխը։ Քուշանների կամ հեփթաղների երկիրը Սասանյան Պարսկաստանի մի մարզն էր և կառավարվում էր պարսիկ մարզպանների ձեռքով։ 368 թ. քուշանները ջարդեցին Շապուհի զորքերին և անկախացան, այնուհետև Պարսկաստանը դարձավ սրանց արշավանքների մշտական ասպարեզը մինչև 468 թ., երբ ծանր պարտություն կրեցին և անհետացան Պարսկաստանի հյուսիս-արևելյան սահմաններից։

119 Վահան Մամիկոնյանը քաջ Վարդանի մեծ եղբոր՝ Հմայակի որդին էր։ Հոր մահից հետո պատանդ տարվեց Պարսկաստան։ Վրաց Աշուշա Բդեշխի միջնորդությամբ ազատվեց, վերադարձավ Հայաստան և 481 թ. ապստամբություն բարձրացրեց պարսից դեմ։ Ապստամբական հերոսական կռիվները պսակվեցին փառավոր հաղթությամբ։ Պարսկական Վաղարշ թագավորը ընդունեց Վահանի բոլոր պայմանները և նրան էլ Հայաստանի վրա մարզպան նշանակեց 485 թ.։ Վահան Մամիկոնյանը մեր պատմության մեծագույն հերոսներից է։ Անհերքելի է այն ժամանակվա Հայաստանի համար ապստամբությունը պարսիկների դեմ և անվիճելի փառավոր հաղթանակը։ Սակայն զարմանալի է, որ Վահան Մամիկոնյանը և իր գործը գեղարվեստական լայնահուն երկի նյութ չեն դարձել։

120 Ալանները ներկայիս օսերի նախնիներն են։ Բնակվել են Կուբան գետի ակունքներից մինչև Թերեքը ընկած տարածությունների վրա։ Հայոց

Արտաշես երկրորդ թագավորը (I դար) Կուր գետի ափին կռվեց ալանների դեմ, հաղթեց և ամուսնացավ նրանց թագավորի դուստր Սաթենիկի հետ։

[121] Վաղարշը (կամ Բալաշը) հաջորդում է Պերոզին, որը հեփթաղների դեմ պատերազմելիս անհետացավ։ Վաղարշի թագավորությունը կարճատև եղավ (484—488)։ Մոգերը նրան կուրացրին, և նրա տեղը թագավոր դարձավ Կավատը, որը գահակալեց 489 թ. մինչև 531 թ.։ Այս ընթացքում մոգերը նրա դեմ լարվեցին, գահընկեց արին և բանտարկեցին Անհուշ բերդում։ Կավատի կինը կաշառեց բերդապահներին և ամուսնուն փախցրեց հեփթաղների մոտ։ Հեփթաղների թագավորը նրան փեսայացրեց իրեն և մեծ զորք տվեց, որով նա կրկին խլեց գահը 499 թ.։

[122] Բագրևանդ գավառը մտնում էր Այրարատ նահանգի մեջ։ Համապատասխանում է ներկայիս Ալաշկերտին։ Ընկնում է Հայկական Պարի, Սաղկանց ու Ծիրանիի լեռների միջև։ Գավառի նշանավոր բնակավայրերն են Վաղարշակերտը (Թափրախկալե), Բագավանը (Ուչքիլիսե)։ Այստեղ է գտնվում պատմական Ձիրավի դաշտը, ուր 371 թ. հայ բանակները Մուշեղ Մամիկոնյանի սպարապետությամբ ջարդեցին պարսից զորքերին և դուրս վռնդեցին Հայաստանից։

[123] Հուստինոսը Բյուզանդիայի գահը բարձրացավ 518 թ.։ Սա ծայրահեղ քաղկեդոնական էր և անհանդուրժող ոչ-քաղկեդոնական եկեղեցիների նկատմամբ։ Սրա հետ գահակից էր իր քրոջ որդին, որը կոչվում էր Հուստինիանոս։ Կրոնական հալածանքները այլ ժողովուրդների ու եկեղեցիների հանդեպ քաղաքական նպատակներ էին հետապնդում։ Հուստինիանոսը ջանում էր վերականգնել հին հռոմեական կայսրությունը։ Հուստինոսը 527 թ. վախճանվում է, և իշխանության լիիրավ տերը դառնում է նրա քեռորդի Հուստինիանոսը, որին Գանձակեցին նույնպես Հուստինոս է կոչում։

[124] Երկաբնակներ (դիոֆիզիտ) կոչվում էին այն կրոնավորներն ու պաշտոնական եկեղեցիները, որոնք ընդունում էին, որ Քրիստոսի էության մեջ երկու բնություն գոյություն ունի՝ աստվածային ու մարդկային և այդ երկու բնությունները ոչ թե մի միասնություն են կազմում, այլ բաժանված են միմյանցից և հանդես են գալիս առանձին-առանձին։ Իսկ նրանք, որոնք սրան հակառակ ընդունում էին, որ Քրիստոսի մեջ մարդկայինն ու աստվածայինը միասնական մի ամբողջություն են, կոչվում են միաբնակներ (մոնոֆիզիտ)։ Քաղկեդոնի 451 թ. ժողովը մերժեց այս վերջին պաշտոնական դրույթը, որ հաստատվել էր Նիկիայի (տես ծան. 131) տիեզերական ժողովում, և բյուզանդական եկեղեցին պաշտոնական հավատ հայտարարեց երկաբնակությունը և հալածանք սկսեց քրիստոնյա այն եկեղեցիների ու ժողովուրդների դեմ, որոնք չընդունեցին երկաբնակությունը։ Հայ եկեղեցին մնաց միաբնակ։

[125] Հեմալը քաղաք է եղել Միջագետքում։

[126] Համակար-ը պարսկերեն բառ է. նշանակում է փոխկառավարիչ։ Դեպքը տեղի ունեցավ 552 թվականին։

[127] Ուժիկ (ըստ Բրոսեի) միևնույն էթնիկական ցեղախմբի անունն է, որին հայ պատմիչները կոչում են խուժիկ, խուզիկ, ռազիկ, իսկ սրանց



հայրենիքը պետք է Խուժաստանը համարել, որ գտնվում է Պարսից ծոցից հյուսիս։

[128] 553 թ. զատկի տոնակատարության օրը չփոթվեց։ Երբ քրիստոնյաները սկսեցին զատիկը տոնել, նկատի ունեին հրեական օրացույցը, այսինքն՝ տոնում էին հրեական զատկից հետո լիալուսնին հաջորդող կիրակի օրը, որպեսզի քրիստոնյաների զատիկը չհամընկնի հրեաների զատկի հետ (հրեաները տոնում էին նորալուսնի օրը)։ Նիկիական ժողովից հետո Մանդնոս եպիսկոպոսի եղբայր Անդրեաս փիլիսոփան Կոնստանդին կայսեր հրամանով 200 տարվա համար աղյուսակներ կազմեց՝ ցույց տալով, թե որ տարվա որ օրն է ընկնում զատկի տոնակատարությունը։ Աղյուսակները կազմելիս նկատեց, որ 95 տարին մեկ անգամ զատիկը ընկնում է միևնույն ամսվա նույն օրը, բայց ոչ շաբաթվա միևնույն օրը։ Սկսած 353 թվականից մինչև 552 թվականը զատկի օրերը միանգամայն ստույգ կերպով նշված էին հիշյալ աղյուսակների մեջ։ Երկու հարյուր տարվա շրջանի առաջին օրը հրեական զատիկը տեղի ունեցավ մարտի 22-ին նորալուսնի օրը, իսկ լիալուսինը եղավ ապրիլի 4-ին. երկու հարյուր տարեշրջանի վերջին օրը՝ 552-ին հրեական զատիկը ընկավ մարտի 12-ին նորալուսնի օրը, իսկ այդ տարվա լիալուսինը մարտի 25-ին էր։ Երբ երկու հարյուր տարին վերջացավ, նոր սկսվող տարվա (553 թ.) գարնանամուտից հետո նորալուսինը մարտի 31-ին էր, ուրեմն այդ օրը հրեական զատիկն էր, իսկ լիալուսինը ապրիլի 13-ին էր։ Որովհետև 200 տարի առաջ լիալուսինը ապրիլի 4-ին էր, իսկ երկու հարյուր տարին լրանալուց հետո, նոր սկսվող տարվա գարնան լիալուսինը ապրիլի 13-ին էր, որ անում էր 9 օրվա տարբերություն։ Եթե այդ տարին լիալուսինը լիներ ապրիլի 4-ին, աղյուսակները կշարունակեին օգտագործվել, բայց որովհետև 9 օրվա տարբերություն կար, կրկին զատկի հաշիվները խառնվեցին։

[129] Ըստ Ասողիկի Ներսեսը, Ներշապուհը և Պետրոսը կարգեցին հայոց թվականը. կարգելու տարին Ասողիկը նախ համարում է 553 թվականը։ Ըստ Օրմանյանի մեր պատմիչները շփոթում են Ներսես, Հովհաննես և Մովսես կաթողիկոսներին՝ մեկին կամ մյուսին վերագրելով տոմարական գործի կարգումը։ Կիրակոս Գանձակեցին Մովսես կաթողիկոսին է վերագրում Հայոց թվականության հաստատումը։ Օրմանյանը այդ ևս չի ընդունում, միայն ասում է, որ դա տեղի է ունեցել 561 թ. Ներսեսի մահից հետո։

[130] Գամիրքը Կապադովկիան է, որ գտնվում է Կիլիկիայից հյուսիս, Մեծ Հայքից՝ արևմուտք, Պոնտոսից հարավ։ Գլխավոր քաղաքն է Կեսարիան։ Այդ երկրի բնակիչները մեր պատմության մեջ կոչվում են գամիրներ կամ կապադովկիացիներ։

[131] Նիկիան փոքրասիական քաղաք էր, որտեղ 325 թ. գումարվեց առաջին տիեզերական ժողովը։ Այս ժողովում Հայաստանի ներկայացուցիչն էր Լուսավորչի որդի Արիստակեսը։

[132] Վրթանես Քերթողը Մովսես Եղիվարդեցի կաթողիկոսից հետո ստանձնեց կաթողիկոսական տեղապահությունը 604—607 թվականներին։ Գրել է թղթեր պատկերամարտերի մասին։ Թողել է նաև Հռիփսիմե վանքի

կառուցման նկարագրությունը, որ ծանոթ է եղել Հայկազյան բառարանի հեղինակներին, սակայն առ այսօր չի գտնված։

133 Մորիկը Բյուզանդիայի կայսր էր (582—602)։ Ոմանք համարում են կապադովկիացի, ոմանք՝ օշականցի կամ տարոնցի։ Տվյալ դեպքում ծննդավայրը կարևոր չէ, այլ կարևորը այն է, որ Մորիկը Հայաստանի ոխերիմ թշնամին էր։ Հայ պատմիչ Սեբեոսը հաղորդում է, թե Մորիկը ոճրագործ մի ծրագիր է հղացել և գրել է պարսից թագավորին։ Ըստ այդ ծրագրի ինքը պետք է իր մասի հայերին Թրակիա տեղափոխեր, իսկ պարսից թագավորը իրեն ենթակա հայերին պետք է բերեր արևելք, այսինքն՝ Հայաստանը հայերից դատարկելու մի հրեշավոր ծրագիր, որ 1300 տարի հետո իրագործեցին թուրքերը։ Մորիկի թագավորման պատմությունը լեցուն է. նա Տիբերիոսի փեսան էր և զորավարը։ Տիբերիոս կայսեր մահից հետո Մորիկն է դառնում կայսր։

133ա Արփասս կամ Արաբիսոս՝ Կապադովկիայի (Գամիրքի տես ա. ծան. 130) գյուղերից է, որ այժմ կոչվում է Յարփուզ։

134 Սմբատ Բագրատունին եղել է հաղթանակ զորավար։ Մորիկ կայսրը նրան Թրակիա ճանապարհում է աքսորելու, սակայն նա ապստամբել է Մորիկի դեմ։ Իրեն դատում են այդ ապստամբության համար և երկու գազանների հետ մենամարտի։ Հաղթում է գազաններին, մահապատիժը ներվում է, բայց աքսորվում է Աֆրիկա՝ աքսոր։ Հետագայում գալիս է Պարսկաստան, որտեղ իր քաջությամբ աչքի է ընկնում։ Պարսից Խոսրով Բ թագավորը նրան նշանակում է Վրկանա մարզպան (տես. ծան. 135)։ Մեռել է 617 թվականին։

135 Վրկանա երկիրը Կասպից ծովից հարավ-արևելք է ընկնում, կոչվում է նաև Հուրկանիա։ Այս անունով է կոչվել նաև Կասպից ծովը (Վրկանա ծով)։ Այդ երկրում հայկական փոքրիկ գաղութ է եղել՝ զուրկ ժողովրդային ու կրոնական կյանքից։ Սմբատ Բագրատունին բարվոքել է նրանց վիճակը։

136 Սագաստանը Պարսկաստանի երկրամասերից մեկն է, որ այժմ մտնում է Աֆղանստանի մեջ։ Գանձակեցին Վրկանա երկիրն ու Սագաստանը սխալմամբ նույնացնում է։

137 Նեստորը Կոստանդնուպոլսի պատրիարքն էր (428—431 թ.)։ Եփեսոսի տիեզերական եկեղեցական ժողովում դատապարտվեց և աքսորվեց Աֆրիկա այն բանի համար, որ ասում էր, թե Մարիամը ոչ թե աստված է ծնել, այլ մարդ, որը աստվածային փառքով պսակվեց։ Նրա կարծիքով Մարիամին չպետք է Աստվածածին կոչել, այլ մարդածին, որովհետև Քրիստոսը մարդ էր։ Այն ժամանակ այսպիսի կարծիք հայտնելը մահացու մեղք էր, և Նեստորը համարվում է աղանդավոր ու աղանդի հիմնադիր։

138 Սամվել Անեցին պատմում էր, որ 590 թ. Հայաստան են գալիս սուտ նեստորական քարոզիչներ։ Հայաստանի հոգևոր իշխանությունները այդ քարոզիչներին հալածում են, բայց, այնուամենայնիվ, Հայաստանում գտնվում են մարդիկ, որոնք ընդունում են նեստորական աղանդը։ Սուտ այդ քարոզիչները իրենց հետ բերած գրքերը թարգմանում են հայերեն իրենց հայ հետևողների համար։ Սամվել Անեցին և այս վերջինին հետևող



Կիրակոս Գանձակեցին թվարկում են 10 գիրք՝ Դորոթեոսի, Կիրակոսի և այլն։ Իրականում այդ գրքերից մեզ հասել է ոչ թե 10, այլ 16 կտոր։ Ուրեմն Կիրակոսի թվարկած այդ 10 գիրքը Նեստորի և նրա հետևորդներ Դիոդորի, Թեոդորի, և այլ աղանդավորների գրվածքներն են։ Միայն նշելի է, որ հիշյալ քարոզիչները Հայաստան են եկել ոչ թե Աբրահամ կաթողիկոսի, այլ Մովսես Եղիվարդեցու ժամանակ։

139 Կողովիտը Այրարատյան նահանգի 13-րդ գավառն է։ Համապատասխանում է ներկայիս Հին Բայազետի շրջանին (Հին Բայազետի բերդը հնում կոչվում էր Դարույնք)։ Կողովիտում է կառուցվել Արշակ 2-րդի նշանավոր Արշակավան քաղաքը։ Այդ գավառում են գտնվում Արծափի բերդը Իգդիրից Բայազետ տանող ճանապարհի վրա. այստեղ է Գայլատվա լիճը։

140 Խազիրները կամ խազարները թյուրք ցեղախմբեր էին, որ բնակվում էին Դաղստանում, Ստորին Մերձվոլգյան տարածություններում, Ազովի միջակայքում, Ղրիմում։ 484 թվականին ներթափանցեցին Անդրկովկաս։ Պատմության մեջ հիշատակվում են հենց այդ ժամանակներից։ 10-րդ դարից հետո պատմության ասպարեզից դուրս են գալիս և վերանում են։

141 Խաքան մոնղոլ-թաթարական բառ է, նշանակում է արքա՝ թագավոր։

142 Դավիթ Սահառունին բուն Ասորիքի և Կիրակոսի Հայաստանի մարզպան է եղել 30 տարի։ Նա է 613 թ. կառուցել Մրենի հոյակապ տաճարը։ Սա անկախ պետականության ջատագով էր և գլխավորում էր Հերակլի դեմ ապստամբած հայոց զորքին։

143 Մրեն գյուղը գտնվում է Ախուրյանի աջ ափին նրա ստորին հոսանքի շրջանում։ Այստեղ կան Բագրատունյաց կառույցների շատ ավերակներ։ Դավիթ Սահառունին 613 թ. Մրենում շինեց հոյակապ մի տաճար, որ առ այսօր կանգուն է և Հայաստանի հնագույն եկեղեցիներից է, եթե նկատի առնենք, որ Զվարթնոցի կառուցումը սկսվել է 641 թ. և վերջացել է 661-ին։

144 Կոմիտաս կաթողիկոս ընտրվեց 615 թ.։ Նա Արագածոտն գավառի Աղցք գյուղից էր։ Կաթողիկոս դառնալով ձեռնարկեց եկեղեցիների շինարարությունը։ 618 թ. կառուցեց Հռիփսիմեի տաճարը, որ գտնվում է Էջմիածնում և անվթար կանգուն է մնում մինչև այսօր։ Համարվում է հայ ճարտարապետության հոյակապ կոթողներից մեկը։ Գրել է «Անձինք նուիրեալք» շարականը, որ 36 տուն է ըստ հայոց այբուբենի (ակրոստիքոս)։ Այս շարականը մեր շարականների գլուխգործոցն է, որ գրված է չափածոյով, անհման պարզությամբ, իրական համեմատություններով ու կենդանի գույներով։

145 Եզրը Նիգ (Ապարանը նրան հարող Հրազդանի մի մասը) գավառից էր։ Կաթողիկոս ընտրվեց 630-ին։ Գահակալեց մինչև 641 թ.։ Նրա օրոք բյուզանդական Հերակլ կայսրը (610—641) 633 թ. եկավ Հայաստան ժողով գումարեց, որպեսզի հայերը ևս ընդունեն հունադավանություն։ Եզրը ընդունեց Հերակլի առաջարկությունը, բայց երկրում համարվեց քաղկեդոնական ու հալածվեց։

146 Հովհան Մայրավանեցին հմուտ աստվածաբան էր և կաթողիկոսա-

կան տեղապահ։ Երբ Եզր կաթողիկոսը Հերակլի հրավերով գնաց Կարին ժողովի, Մայրավանեցուն չտարավ իր հետ։ Քաղկեդոնությունն ընդունելու պատճառով Մայրավանեցին խիստ հանդիմանեց Եզրին։ Եզրը պատժեց նրան։ Սա գնաց Բջնիի Մայրոց վանքը, որը Եզրի հորջորջմամբ կոչվեց Մայրագոմ, իսկ Հովհաննն էլ Մայրագոմեցի։ Գրվածքներից քիչ բան է մնացել։

147 Կողբը Այրարատյան նահանգի Ծակատք գավառում է՝ Արաքսի աջ ափին, մոտավորապես այն վայրի դիմաց, որ Ախուրյանը թափվում է Արաքսի մեջ։ Շատ հնուց հայտնի է իր աղահանքերով։ Այստեղ է ծնվել 5-րդ դարի նշանավոր մատենագիր Եզնիկ Կողբացին։

148 Կյուրեղ Երուսաղեմացի եպիսկոպոսը և Հակոբ Մծբնեցին բոլոր աղանդները և նրանց ժողովները պարսավեցին ու կարգեցին եկեղեցական տոները, ընթերցումները, սաղմոսերգությունները դեռևս 4-րդ դարից։ Իսկ Եզրը փոխում է այդ կարգավորությունները և ընդունում է աղանդավոր Արտեմոնի նշանակած տոներն ու ընթերցվածները։

149 Գետաբակը Ուտիքի Գարդման կամ Գարդմանաձոր գավառի նշանավոր վայրերից է, որ հայտնի է իր պղնձահանքերով, այժմ Գետաբակը աղավաղված կոչվում է Գեդաբեկ։

150 Դավիթ Սահառունին Հայաստանի կյուրապաղատ էր (իշխան), երեք տարուց հետո (638—641) հեռացվեց։ Ըստ Գանձակեցու Հայաստանի մարզպան է եղել 30 տարի, շինել է Մրենի եկեղեցին (613 կամ 620)։

151 Թեոդորոս Ռշտունին 7-րդ դարի կեսերի քաղաքական ու ռազմական տաղանդավոր գործիչ էր և ազգային անկախության ջերմ պաշտպան ու երկրպագու։ Նա Հայաստանը հանեց բյուզանդական խարդախ տիրապետության շրջանակներից և դարձավ երկրի իսկական տերն ու պաշտպանը։ 652 թ. արաբների հետ դաշինք կնքեց և նշանակվեց Հայաստանի, Վրաստանի ու Աղվանքի լիիրավ իշխան։

152 Կերինթոսը առաջին դարի աղանդապետ է։ Ուսուցանում էր (Անտիոքում) թլպատության և հրեական օրենքների կարևորությունը։ Քարոզում էր, թե աշխարհը աստծու ստեղծագործությունը չէ, իսկ Քրիստոսը և Հիսուսը տարբեր են։ Հիսուսը մարդ է, իսկ Քրիստոսը համբարձվել է երկինք։

153 Տե՛ս ծան. 69։

154 Ըստ աստվածաշնչական զրույցի Հագարը եգիպտացի աղախին էր, որպեսզի զավակ ունենա, տվեց Աբրահամին իբրև հարճ։ Իբր նրանից ծնվածներից են առաջացել արաբները, դրա համար արաբները կոչվել են նաև հագարացիներ, Հագարի որդիներ։

155 Սինայի թերակղզին տարածվում է Կարմիր ծովի, Սուեզի և Աքաբայի ծոցերի միջև։ Թերակղզու հյուսիսային մասը անապատային տարածություն է։

156 Մադինան կամ Մեդինան մահմեդականների 2-րդ սուրբ քաղաքն է Արաբիայում։ Այնտեղ է թաղված մահմեդական կրոնի հիմնադիր Մուհամեդ մարգարեն։

157 Քաղիրդ, Քաղիրթ, Քաղըրդ անարգաբար հայացրած ձևն է արաբ



զորավար Խալիդ իբն Վալիդ անվանի։ Գրիգոր Տաթևացին «Գիրք հարցմանց»-ում գրում է. «Մահմեդից ութ տարի առաջ մի ոմն իշխան Քաղըրդ անունով առաջինը դարձավ արաբների գլխավորը։ Սա ուժեղանալով տիրեց Դամասկոսը, որ Դմըշխն է, և մտնելով Հայաստան՝ պարսիկներից ու հույներից շատերին սրի քաշեց։ Այս պատճառով հայերը նրա Խալիդ անունը դարձրել են Քաղիրդ, որ թափառ է նշանակում (Բրբրի պարկ)։ Ըստ Ջվանշիրի (վրաց պատմիչ) արաբներն իրենց այս զորավարի անունով միաժամանակ կոչվեցին քաղըթականք (տես Յովհ. Կամենացի, Պատմութիւն պատերազմին Խոթինու, Երևան, 1964, էջ 86)։

158 Պարսկաստանի Սասանյան հարստությունը հիմնադրվեց Արտաշիրի կողմից 224—226 թվականներին պարթևական վերջին Արտավան թագավորի գլխատումով։ Այդ հարստությունը տևեց մինչև 652 թվականը, երբ պարսից վերջին Հազկերտ թագավորը արաբներից պարտվեց, երկրից դուրս փախավ և սպանվեց։

159 Արեգը հայոց շարժական տոմարի 8-րդ ամիսն է, որ այդ ժամանակ զուգադիպել է աշնանը։

160 Քաղոցը հայոց շարժական տոմարի 5-րդ ամիսն է։

161 Մադիամացիները վրանաբնակ ցեղ էին, որ քիչ էին տարբերվում արաբներից։

162 Բզնունիքը Տուրուբերան նահանգի 11-րդ գավառն է 925 կմ տարածությամբ։ Վանա լճի արևմտյան առափնյա շրջանն է։ Այս գավառի նշանավոր վայրերն են Խլաթ և Արծկե քաղաքները։ Այստեղ իշխում էր Բզնունյաց նախարարությունը, որ վերացվեց 4-րդ դարում Արշակունիների դեմ ապստամբվելու պատճառով։

163 Աղիովիտը Վասպուրականի 5-րդ գավառն էր, որ տարածվում էր Վանա լճի՝ հյուսիսում։ Այս գավառի արևմուտքում գտնվում էր Զարիշատ քաղաքը և սա ևս կոչվում էր Աղիովիտ, որ Տուրուբերանի մեջ էր մտնում։ «Աշխարհացույցը» Աղիովիտը համարում է Տուրուբերանի գավառ։ Այդպես է ընդունում նաև Թ. Հակոբյանը։ Մենք հետևում ենք Ս. Երեմյանին (տես. «Հայաստանը ըստ «Աշխարհացույցի» էջ 33)։

164 Մաթը ծանրության չափ է մոտ մեկ հազար երկու հարյուր գրամ կշռով։

165 Ձեռնարար բառը նախապես նույնությամբ գործածել է Սամվել Անեցին. Հայկազյան բառարանը բացատրում է ձեռնոց։ Այդպես ընդունել է նաև Բրոսեն։ Ռուսերենի թարգմանիչը մեկնել է կանթեղ (светильник)։ Մենք նույնպես հակված ենք ձեռնոց հասկանալու, բայց երկու հանգամանք խանգարում են։ Նախ գրված է «ձեռնարար մի», որ պետք է լիներ «զույգ մի»։ Երկրորդ՝ եթե ձեռնոցը վերցվում էր իբրև հարկ, ապա ամենից առաջ պետք է վերցվեր գույքը։ Հավանորեն դա նույնպես ձիու սարք է, տապակ՝ թաղիք, որ դրվում է թամբի տակ։

166 Սա Ներսես Գ. կաթողիկոսն էր, որ հորջորջվում է Շինող։ Գահակալել է 641—661 թ.։ Այս կաթողիկոսը վանքեր կառուցելու մեծ սեր ուներ։ Կառուցեց Դվինի Սուրբ Սարգիս եկեղեցին, Արտաշատի Ս. Գրիգորը, Վաղարշապատի Ս. Աստվածածինը, Վասպուրականի Ջորո վանքը, և

այս ամենի դրսևորումը՝ Զվարթնոցը, որ հայ ճարտարապետության արվեստի գերազանց կոթողներից մեկն էր։

167 Վիրապը Խոր Վիրապն է, որ գտնվում է Ազատ գետի և Արաքսի խառնարանի մոտ և նախկին Արտաշատի տեղում։ Այստեղ Տրդատի կողմից բանտ նետվեց Գրիգոր Լուսավորիչը, որի հայրը՝ Անակ Պարթևը սպանել էր Հայոց Խոսրով թագավորին։ Նա պատժվեց իբրև արքայասպանի որդի։

168 Սուրբ Գրիգորը Զվարթնոցն է։

169 Եկեղեցում երգվում էին սաղմոսները, սուրբ գրքի օրհնությունները, որոնց հետ առնչվելով հայ ինքնուրույն փոքրիկ երգեր, որոնք երգում էին սաղմոսներից և օրհնություններից հետո, այդ երգերը որ հետագայում նվաճեցին ինքնուրույն տեղ, սկզբում կոչվում էին կցուրդներ։ Այս կցուրդների հիման վրա առնչվեցին մեր շարականները։

170 Բագվանը կամ Բագավանը գտնվում է Նպատ լեռան ստորոտում։ Եղել է կրոնական կենտրոն։ Մինչև այժմ էլ այնտեղ կանգուն է 4-րդ դարի Բագինի եկեղեցին։ Այժմ Բագվանը կոչվում է Ուչքիլիսե։ Չենք կարող ասել հեղինակի խոսքը այս Բագվանի մասին է, թե Ախուրյանի ափին գտնվող Բագվանի կամ Բագարանի։

171 «Հարցն» կամ «Հարցը» հայ եկեղեցական այն երգերի անունն է, որի բնաբանը վերցված է Աստվածաշնչի «օրհնյալ ես տէր Աստուած հարցն մերոց» որ վերաբերում է Բաբելոնի երեք մանկանց օրհնությանը։

Այս բնաբանով գրված մեր շարականները ամբողջապես կոչվում են Հարց կամ Հարցն:

172 Անանիա Շիրակացին է, որ կոչվել է նաև Շիրակունի կամ Անեցի։ Սա հռչակավոր աստղագետ էր ու մաթեմատիկոս։ 665 թ. Անաստաս կաթողիկոսը նրան առաջարկեց Հայոց շարժական տոմարը փոխել անշարժի, բայց կաթողիկոսի մահով այդ բանը տեղի չունեցավ։ Շիրակացին գրել է բազմաթիվ գրքեր, որոնցից են «Յաղագս չափուց և կշռոց» (Չափերի ու կշիռների մասին), «Թուաբանականք», «Աստեղագիտություն», «Քննական» կամ Քննիկոն, Շարականներ և այլ գրքեր, որոնց մեջ հայտնի է Խորենացուն վերագրված նրա «Աշխարհացույց»-ը։

173 Բնագիրն է «Գիտող յույժ ամենայն տոմարական արվեստից»: Ռուսերենում արտահայտված է «շատ լավ ծանոթ էր ամեն կարգի տոմարական հաշիվների արվեստին։ Բրոսեն տոմարական արվեստներ թարգմանել է տոմարական հնարքներ (combinaisons)։

174 Արուճը Այրարատյան նահանգի Արագածոտն գավառի գյուղերից մեկն է, որ այժմ կոչվում է Թալիշ և մտնում է Էջմիածնի շրջանի մեջ։ 5-րդ դարում Հայոց զորքի ձմեռանոց էր։ Գրիգոր Մամիկոնյան իշխանը, որ Հայաստանում իշխեց 661—682 թվականներին, այստեղ շինեց Թալիշի հոյակապ կաթողիկե եկեղեցին 665—669 թ.։

175 Այս Դավիթը պարսկական արքայական ցեղից էր՝ խորասանցի։ Անաստաս կաթողիկոսի ձեռքով մկրտվեց և դարձավ քրիստոնյա։ Ստացավ Կոտայքի Զազավանը իբրև սեփականություն։ Հետագայում արաբների ձեռքով Դվինում սպանվեց։



176 Խառանը Հայոց Միջագետքում՝ Եդեսիայի մոտ մի քաղաք էր։

177 Ըստ աստվածաշնչյան զրույցի աստված հայտնվում է Աբրահամին և ասում է, թե նրա զավակը պետք է երկնքի աստղերի պես բազմանա։ Ըստ այդ զրույցի Աբրահամը ամուսնացավ իր կնոջ աղախին Հագարի հետ և նրանից ունեցավ Իսմայել անունով որդի, որից և ծագեցին արաբները։ Կիրակոսը աստծու այդ խոստումն է ակնարկում։ Ուխտադրություն տվյալ դեպքում նշանակում է խոստում։

178 Սահակ երրորդ Ձորափորեցի կաթողիկոսը (677—703) գնում էր Խառան հանդիպելու Մահմեդ-Իբն-Օկբայի հետ, որ Հայերի ապստամբության պատճառով զայրացած Հայաստան էր գալիս պատժելու։ Ճանապարհին մեռնող կաթողիկոսը գրում է այդ երդմնագիրը և Մահմեդը ննջեցյալ կաթողիկոսի ձեռքից վերցնելով թուղթը և կարդալով՝ բարկությունը իջնում է։

179 Ներսեհ Կամսարականը Հայաստանի կառավարիչ է դառնում երկու անգամ, մեկ՝ 685 թ., 689 թ. Յուստինիանոսը նրա փոխարեն նշանակում է Աշոտ Բագրատունուն։ Այս վերջինս իշխում է երեք տարի։ Սպանվում է արաբների դեմ վարած մի ճակատամարտում և կրկին կառավարիչ է նշանակվում Ներսեհը։

180 Սմբատ Բագրատունի Բյուրատյանը 691 թվականին Յուստինիանոսի կողմից նշանակվեց Հայոց սպարապետ, սակայն Ներսեհ Կամսարականի հրաժարականից հետո մարզպան դարձավ Սմբատը։ Արաբները կալանավորեցին նրան ու Սահակ կաթողիկոսին և փոխադրեցին Դամասկոս. Սմբատը փախավ եկավ Հայաստան և Վարդանակերտի (Նորի և Արաքսի խառնարանի մոտերը՝ Արաքսի ձախ ափին ավան էր) մոտ ճակատամարտ տվեց արաբների դեմ և գլխովին ջարդեց նրանց (703 թ.)։ Սրանից հետո կարգվեց Հայաստանի կյուրապաղատ (երկրի կուսակալ)։

181 Վարդանակերտի ճակատամարտը արաբներին բերեց այն համոզման, թե Հայերի պարբերական ապստամբությունները արդյունք են հայ նախարարների գործունեության։ 706 թվականին բոլոր հայ նախարարներին կանչում են Նախիջևան իբր Թոշակի նշանակելու։ Հավաքվեցին բոլոր նախարարները, որոնց արաբները լցրեցին եկեղեցիները և հրդեհեցին։ Օրբելյանը այրվածների թիվը համարում է 8 հազար հոգի։ Այդ տարին (706 թ.) Հայոց պատմության մեջ մնաց կրակի տարի անունով։

182 Բագրևանդը Այրարատյան նահանգի գավառներից մեկն է, որ համապատասխանում է ներկայիս Ալաշկերտի հովտին։

183 Սևանա ծովի բաց թողնելը ավանդություն է և ոչ թե պատմական իրողություն։

184 Ըստ Կիրակոսի Նախիջևանում հայ իշխանների կոտորածը (այրումը) կատարվել է Աբդլմելիք խալիֆի հրամանով, բայց իրականում այդ ժամանակ արաբական խալիֆն էր Աբդլմելիքի որդի Վլիթը, որը և 706 թ. կարգադրում է կատարել այդ ահեղ եղեռնագործությունը։

186 Հուստինիանոս երկրորդ կաղանաբարո թագավորին գահընկեց են անում և նրա տեղը գահ է բարձրանում Փիլի՝ Փիլիպպիկ կամ ինչպես Կիրակոսն է կոչում Փիլիկոս Վարդանը, որ զմյուռնացի հայ էր։ Սա մի

*չվայր, գեներալը մարդ էր, որ թագավորեց ընդամենը 2 տարի (711—713)։ Պալատական դավադիրները մի գիշեր, երբ նա կերուխումից ու կանանց հետ անցկացրած զվարճություններից հետո քնած էր, աչքերը հանեցին և գահընկեց արին։*

186 *Դողթնը Վասպուրականի նահանգի գավառներից մեկն է, որ համապատասխանում է ներկայիս Ագուլիսի և Օրդուբադի շրջաններին (Նախիջևանում)։ Այստեղ էր գտնվում նաև Գողթն ավանը, որ այժմ կոչվում է Բիլիթ։*

187 *Մանազկերտ, ավելի հին անունը Մանավազակերտ, Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Ապահունիք գավառի գլխավոր քաղաքը, որ այժմ թուրքերը կոչում են Մելազգերդ։*

188 *Տես ծան. 171։*

189 *Օձունը Հայաստանի հնագույն բնակավայրերից մեկն է. հին Տաշիրք գավառի կենտրոնն է եղել, որ հետո փոխադրվել է Լոռե։ Այս վերջինը այժմյան Ստեփանավանի մոտ քաղաք էր. այժմ գոյություն չունի, բայց հետագայում Լոռե քաղաքի անունով ողջ գավառը կոչվեց Լոռի։ Օձունը ներկայումս Հայաստանի մեծագույն գյուղն է, որտեղ ծնվել է նշանավոր իմաստասեր կաթողիկոս Հովհան Օձնեցին (716—728)։ Այստեղ այժմ կանգուն է 7-րդ դարի ճարտարապետական կոթող կենտրոնագմբեթ մի եկեղեցի։*

190 *Արամոնք, Արամունիք գյուղը գտնվում է նախկին Կոտայքի շրջանում (այժմ Աբովյանի շրջան)։ Հին ժամանակ այդ շրջանի մեջ էր մտնում նաև Երևանը։ Արամոնքը, որ այժմ կոչվում է Արամուս, Հայաստանի հին բնակավայրերից է։ Դավիթ (Արամոնեցի) Ա կաթողիկոսը (728—741) կաթողիկոսարանը Դվինից փոխադրեց Արամոնք և այնտեղ կառուցեց եկեղեցի ու կաթողիկոսարան։ Արամուսը Գառնիից և Գեղաշենից հետո Կոտայքի ամենամեծ գյուղն է այժմ։*

191 *Օթմուսը Վանանդ գավառի (Կարսի շրջան) գյուղերից մեկի անունն էր։*

192 *Գառնավարը Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի գավառներից մեկն է, որ ընկած է Արածանի ակունքներից դեպի արևելք այժմյան Կարայազին (Տվարածատափին) սահմաններում։*

193 *Սիմ լեռը հայկական Տավրոսի լեռներից է, որ բաժանում է Աղձնիք և Տուրուբերանի նահանգների սահմանագլուխը։ Այդ լեռան հարավային կողմը Սասունն է, իսկ հյուսիսայինը Խութը, որ մտնում է Տուրուբերան նահանգի մեջ և սահմանակից է Տարոնին։*

194 *Մոգ կամ Մոգունք գյուղը (Կիրակոսը գավառ է անվանում) գտնըվում էր Եղեգնաձորի կամ հին Եղեգիսի գավառում Մալիշկա գյուղից հարավ Արփա գետի աջ ափին։ Այդ գավառը Ստեփանոս Սյունեցու եպիսկոպոսական վիճակն էր։ Նա այդտեղ հանդիմանում է մի անպարկեշտ կնոջ, իսկ սա քնած եպիսկոպոսից վրեժ է լուծում՝ սրախողխող անելով (735 թ.)։*

195 *Եղեգնաձորի շրջանի Մոզի հովտում կա մի գյուղ, որ կոչվում է Արդյաղ, որի մոտ գտնվում է Վայոց ձորի հռչակավոր Սուրբ խաչ վանքը, որ կոչվում է նաև Արդյալի Սուրբ խաչ։ Ահա այս Արդյալը Կաղանկատվացու և Կիրակոսի հիշատակած Արկալն է, որտեղ հանգչում է Ստեփանոս Սյունեցու դիակը։*

196 *Թաթևի վանքից (Սյունիք) հյուսիս-արևելք Որոտան գետի մոտ Որոտան լեռան վրա է եղել Թանահատի վանքը։ Գոյություն է ունեցել 4-րդ դարի վերջերից։ 8-րդ դարում այս վանքը դառնում է նշանավոր գրական ու կրթական կենտրոն։ Այժմ ավերակ է։ Մի այլ Թանահատի վանք էլ կա Արգազ գյուղից քիչ հեռու Եղեգնաձորում։ Գայլե և Սյունեցու մարմինը այստեղ են փոխադրում։*

196 *Գանձակեցին մտածում է, որ Խորենացին, Եղիշեն 5-րդ դարում Վայոց ձորը հիշատակում են, ուստի Վայոց ձոր անունը կապ չունի իր ժամանակի 10 հազար գոների հետ։*

197 *Եղեգատուրուշը պատմական Նիգ գավառի (Ապարանի շրջանի) գյուղերից մեկն է եղել։*

198 *Ոստանը Դվինն է, որ գտնվում է Արտաշատի շրջանում։ Ոստան էր կոչվում նաև շրջանը։ Կուրապաղատ, ավելի ճիշտ Կյուրապաղատ, նշանակում է ծառայապետ, հազարապետ (պաշտոնյա), այսինքն՝ պալատի հոգաբարձու։ Հավանորեն սա ուղղելի է ըստ Դրասխանակերտցու պատմածի կյուրապաղատի ապարանից։*

199 *Մաքենացիների վանքը գտնվում է ՀՍՍՀ այժմյան Մարտունու շրջանում, կառուցված է 8-րդ դարում, եղել է խոշոր գրական-կրթական կենտրոն։*

200 *Արագածոտն Այրարատ նահանգի գավառներից մեկն է, որ հին-նական տարածությամբ ընկնում է Արագածի հարավային շրջանը մինչև Երասխը, արևելքից սահմանակցվում է Կոտայքին (այժմ Աբովյան), իսկ հյուսիսից հասնում է մինչև Ապարան գետի ակունքների շրջանը։*

201 *Արաց ամիսը հայոց 6-րդ ամիսն է։*

202 *Երազգավորսը Ախուրյանի աջ ափին (Լենինականից հարավ-արևմուտք) փոքրիկ գյուղաքաղաք էր. կոչվում է նաև Շիրակավան։ Հայտնի է 10-րդ դարից։ Սմբատ առաջին Բագրատունի թագավորի (890—914) և Աշոտ Երկրորդի (Երկաթ) (914—928) որոշ ժամանակ մայրաքաղաքը։*

203 *Մազազը Մեծ Հայքի Այրարատ նահանգի գավառներից մեկն է, որ ընկած է Ազատ գետի վերին հոսանքի շրջանում։ Կենտրոնը եղել է նշանավոր Գառնի գյուղը, որից դեպի արևելք գտնվում են Գեղարդի վիմափոր տաճարները։ Ոմանք Մազազը դնում են Սևանի շրջանում։*

204 *Ողջայ կամ Ողջայից գյուղը սխալմամբ տեղադրվել է Կոտայքի (այժմյան Աբովյանի) շրջանում։ Ըստ Ալիշանի Ողջայը Ոստանի (Արտաշատի շրջանի) Յուվա գյուղն է։ Այդ պատճառով շփոթվել է։ Կոտայքի հարավային սահմաններին մոտ է եղել։*

205 *Ձագը Կոտայք գավառի (այժմ Աբովյանի շրջան) հին բնակավայրերից մեկն է եղել։ Հին գյուղը այժմ գոյություն չունի, նրա տեղը ընկնում են Կոտայքում շատ վաղուց հայտնի Ձագի խնձորի այգիները։ Այժմ Երևան-Աբովյան խճուղու վրա գտնվող Բալահովիտ (Մհուր) գյուղը ընդարձակվելով հասել է Ձագին։*

206 *Խութը գտնվում է Տարոնի և Սասունի սահմանում։ 9-րդ դարի կե-*

սին խալիֆայինները Հովնանի գլխավորությամբ ապստամբվեցին արաբների դեմ, մտան Մուշ, կոտորեցին արաբական բանակը և սպանեցին Յուսուֆ ոստիկանին (կառավարիչ, կուսակալ)։

207 Բագրատունիների թագավորության հիմնադիրը Սմբատ սպարապետի որդի Աշոտ Առաջինն է, որ արաբական խալիֆաթի ու բյուզանդական կայսրության կողմից ճանաչվեց իբրև Հայոց թագավոր։ Նա թագավոր օծվեց 887 թ., այսինքն Արշակունիների անկումից ուղիղ 459 տարի հետո. իսկ Գանձակեցին հաշվում է 434 տարի։ [illegible] սխալի հետևանք է։

208 Մաշտոցը կոչվում է Եղիվարդեցի կամ Սևանեցի, չպետք է շփոթել Մեսրոպ Մաշտոցի հետ։ Այս Մաշտոցի անունը ըստ Աճառյանի ենթադրության պետք է որ Ստեփանոս լինի։ Կաթողիկոս օծվեց 897 թ. և գահակալեց մի տարի։

209 Գառնին Հայաստանի նշանավոր բնակավայրերից մեկն է։ Հնում մտնում էր Այրարատ նահանգի Մազազ գավառի մեջ, այժմ Աբովյան (Կոտայք) շրջանի մեծ գյուղերից մեկն է։ Դեռևս մեր թվականության առաջին դարում. այնտեղ կառուցվել է հեթանոսական հոյակապ մի տաճար բերդամրոցում։ 17-րդ դարում փլված տաճարը այժմ ճարտարապետ Սահինյանի հմուտ ձեռքերով վերականգնվել է նույնությամբ։ Գառնին Արշակունի թագավորների ամառանոցն էր։ Ամրոցը կոչվել է նաև Տրդատի թախտ, Սարավույթ Տրդատայ։ Գանձակեցին Գառնին համարում է գյուղաքաղաք։

210 Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին է, որ գրել է Հայոց պատմություն։ Թե ինչո՞ւ է Դրասխանակերտցի կոչվում, հայտնի չէ։ Կիրակոս Գանձակեցին համարում է Մաշտոց կաթողիկոսի (ծան. 208) ազգականը. ուրեմն պետք է Եղիվարդեցի լինի։ Գահակալել է 898—929 թվականներին։ Արաբների ճնշումների բուռն շրջանն էր, փոխանակ մնալու կաթողիկոսարանում և նպաստելու երկրի ազատագրական կռիվներին, թափառում էր այստեղից այնտեղ ապահով անկյուն գտնելու հույսով։

211 Բասրացիների քաղաքը Բասրան է Իրաքի նշանավոր քաղաքներից մեկը, որ գտնվում է Շատ-էլ Արաբ գետի (Տիգրիս և Եփրատ գետերի միացյալ մասը) ափին։

212 Դիլմաց աշխարհը իրանական Դելեմիկների կամ Դելումք ցեղի երկիրն էր, որ գտնվում է Կասպից ծովի հարավ-արևմուտքում Դեմավենդ լեռան ստորոտներում։

213 Բզնունյաց ծովը Վանա լիճն է, որ այդպես է կոչվել Տուրուբերան նահանգի Բզնունիք գավառի անունով։ Մակերեսը 3733 ք. կմ է (Սևանը 1416 կմ)։ Լճի կղզիներից մեկը հարավային ափի մոտ գտնվող Աղթամարն է։ 10-րդ դարում Գագիկ Ա Արծրունի թագավորը այստեղ մեծ շինարարական աշխատանք է ծավալում. կղզում կառուցում է քաղաք, պարսպապատում և Մանվել ճարտարապետի ձեռքով հրաշակերտել է տալիս մի շքեղազարդ տաճար, որ կոչվում է Աղթամարի Սուրբ Խաչ վանք։ Բոլոր շինությունները ոչնչացել են, չկա նաև Գագիկի հոյակերտ պալատը, բայց վանքը, որ 12-րդ դարում եղավ նաև կաթողիկոսարան, առ այսօր թափուր կանգնած է Աղթամարում։



214 Վոլգայից մինչև Դանուբ ընկած տարածության վրա ապրող ժողովուրդներին հույները և հռոմեացիները մի ընդհանուր անունով կոչում էին սկյութ, սկյութացիներ։ Հոները, սելջուկ թուրքերը դեպի արևմուտք անցնում էին այդ սկյութների երկրով, ուստի դրանք ևս կոչվեցին սկյութներ։ Գանձակեցին սկյութացիներ ասելով հասկանում է բարբարոս սելջուկ թուրքերին, որոնք եկան Միջին Ասիայի խորքերից և նվաճեցին ամբողջ Պարսկաստանը, արաբական խալիֆաթի երկրները և հասան Բյուզանդիայի դռներին։ Երկու-երեք արշավանքի ընթացքում (1043, 1049, 1054 թ. թ.) նրանց խորշակը անցավ Հայաստանի հարավային մասերով։

215 Հովհաննես Սարկավագը ծնվել է 11-րդ դարի կեսերին Փառիսոս գավառում (Արցախի Փառնես գավառը Փառիսոս քաղաքով, որ այժմ կոչվում է Կալաքենդ)։ Եղել է նշանավոր գիտնական, փիլիսոփա, մատենագիր, տոմարագետ, ճարտասան, ուսուցիչ ու բանաստեղծ։ Նա շարադրել է մեկնություններ, ճառեր, շարականներ, տոմարական աշխատություններ, խրատներ և այլն։ Ամենից գուցե կարևորը նրա պատմական աշխատությունն է, որ վերաբերում է սելջուկյան արշավանքներին սկզբից մինչև Մելիքշահի օրերը, որից սակայն դժբախտաբար պատառիկներ են մնացել։ Մեռել է 1129 թ. ու թաղվել Հաղպատի վանքում, ուր մինչև այժմ կա գերեզմանը։

216 Սամվել Անեցին եղել է Սարկավագի աշակերտը. գրել է շատ համառոտ ժամանակագրություն՝ քաղելով մյուս պատմագիրներից։ Հասել է մինչև 1180 թ.։

217 Ալփասլանը՝ սելջուկ-թուրքերի արյունարբու զորավարը, հաջորդեց իր եղբայր Տուղրիլին։ Տուղրիլի նվաճումներից հետո (Պարսկաստանը, արաբական խալիֆաթի երկրները, հարավային Հայաստանը) սա հրով ու սրով մտավ Հայաստան և 1064 թ. գրավեց Անին ահեղ ջարդերով։

218 Արշարունիքը Այրարատ նահանգի 5-րդ գավառն էր. գտնվում է Արաքսի ձախ ափին՝ Կաղզվանից հյուսիս ընկած տարածություններում, այսինքն՝ Ախուրյանի խառնարանի արևմտյան անկյունը։

219 Դպրեվանքը գտնվում է Այրարատյան նահանգի Շիրակ գավառում Անիից հյուսիս երկու ժամվա ճանապարհի վրա Ախուրյանի աջ ափին։ Վանքը կառուցվել է 7-րդ դարի կեսերին։ Եղել է Մենաստան, իսկ 10-րդ դարի առաջին կեսին՝ Աբաս թագավորի օրոք, վերանորոգվել ու միաբաններով հարստացել է։ Եղել է կրթական օջախ։

Իսկ Հոռոմոսի վանքը կառուցվել է 791 թ., կործանվել է 982 թ. և վերաշինվել է 1038-ին Հովհաննես Շահնշահ կոչված թագավորի կողմից։ Գտնվում է դարձյալ Ախուրյանի աջ ափին։ Վանքը Բագրատունիների օրոք շատ ծաղկած վիճակում էր։

220 Սյունիքը այստեղ ավանի անուն է, որ այժմյան Սիսիանն է։ Հենց այս անունից էլ գավառի և նահանգի անունը։ Իբրև գավառ կոչվում է նաև Ծղուկ, որ այժմյան Սիսիանի շրջանն է, իսկ իբրև նահանգ Մեծ Հայքի 11-րդ նահանգն է, որ կոչվում է նաև Սիսական։ Սյունիքը 15 հազար ք. կմ տարածություն էր բռնում, որի մեջ մտնում էին ներկայիս Վա-

փանի, Գորիսի, Սիսիանի, Մարտունու, Վարդենիսի, Սևանի շրջանները մինչև Ծաղկաձոր, դեպի հարավ սահմանը հասնում է մինչև Արաքս։

221 Բաղքը, Բաղաց աշխարհը Սյունիքի գավառներից մեկն է, որ համընկնում է ներկայիս Ղափանի շրջանին։

222 Աշոտ Երրորդ (համարվում է նաև չորրորդ) կամ Աշոտ-Գագիկ Թագավորն է, որ թագավորել է 952—977 թ.։ Կարսից գահը փոխադրեց Անի, շինեց Անիի պարիսպները. մայրաքաղաքը (Անին) զարդարեց վանքերով, եկեղեցիներով, որբանոցներով ու անկելանոցներով, ուստի և կոչվեց Աշոտ Ողորմած։

223 Անիի կաթողիկեն ճարտարապետական հանճարի արգասիք է, որ նախագծել ու կառուցել է Հայոց Տրդատ մեծ ճարտարապետը։ Հիմնարկեքը կատարվել է 980 թ. և ավարտվել է 1001-ին։ Սմբատ Երկրորդը (Աշոտ Ողորմածի որդին) Հնդկաստանից բերել է տալիս բյուրեղյա կանթեղ, որը հրաշք էր համարվում։ Կանթեղը կախվում է գմբեթի ծայրից դեպի ներս և շլացնում է տեսնողին իր փայլով։ Շլացուցիչ էին նաև եկեղեցու չքնաղագեղ զարդերը։ Դրսից գմբեթի վրա խոյանում է մի մարդաչափ արծաթե խաչ։

224 Մարմաշենի վանքը գտնվում է այժմյան Լենինականից հյուսիս-արևմուտք։ Կառուցել է Վահրամ Պահլավունի իշխանը։ Հիմնադրվել է 986-ին, ավարտվել է 1029-ին։

225 Գագիկ առաջինը՝ Աշոտ Ողորմածի որդին՝ Սմբատ Երկրորդի եղբայրը կաթողիկեի դիմաց Ծաղկոցաձորի գլխին 996 թ. հիմք դրեց ու կառուցեց մի այլ եկեղեցի, որ կոչվում էր Սուրբ Գրիգոր, սա ճիշտ և ճիշտ Ներսես կաթողիկոսի 7-րդ դարում կառուցած Զվարթնոցի (այդ ժամանակ փլված էր, նույնպես սուրբ Գրիգոր էր կոչվում) կրկնօրինակն էր։ Իր գեղեցկությամբ ու հոյակապությամբ մրցում է կաթողիկեի հետ։ Կառուցումը ավարտվեց 1000 թ.։

226 Բագնայր վանքը գտնվում է նույնանուն գյուղում, որ Շիրակի գյուղերից մեկն է Ախուրյանի աջ կողմը Ալաջա լեռան հյուսիսային ստորոտներում։ Վանքը 1009—1010 թ.թ. կառուցել է Սմբատ Մագիստրոսը, որ որդին է Վահրամ Պահլավունի սպարապետի։ Այժմ ավերակ է։ Այնտեղ կանգուն է 9-րդ դարի Ս. Աստվածածին եկեղեցին։

227 Տե՛ս ծան. 214։

228 Աշոտ Ողորմածի երեք որդիներից մեկը՝ Գուրգենը նշանակվում է Տաշիրքի (Լոռի) կառավարիչ։ Այստեղ հակառակ իր եղբայր Սմբատի, որ թագավոր էր (977—990) Անիում, Գուրգենը իրեն հայտարարում է թագավոր (978 թ.) և հիմք է դնում Գուգարքի կամ Կյուրիկյան թագավորության։ Գուրգենը ուներ մի անուն ևս՝ Կյուրիկե, որից էլ Գուգարքի թագավորությունը կոչվեց Կյուրիկյան. մայրաքաղաքը Լոռին էր։ Թագավորությունը բարձրացումներով ու անկումներով հարատևեց մինչև 13-րդ դարի սկիզբը, իր բարձրությանը հասավ Դավիթ Անհողինի օրոք (989—1048) որ երկրի տարածությունը ընդարձակում է ի հաշիվ Գանձակի ու Տփղիսի էմիրությունների։

229 Կաթողիկոսը այսպես կոչված Պետրոս Գետադարձն է, որ ընկերակից ունենալով Գրիգոր Մագիստրոսին և Վեստ Սարգսին Անին վաճառեց հույներին։ Ոսկի աթոռի ավանդությունը ցույց է տալիս կաթողիկոսի ագահության չափը։ Անիի վաճառքի սև թուղթը կնքվեց 1021 թ.։

230 Սեբաստիան Արևմտյան Հայաստանի քաղաքներից է, որ այժմ կոչվում է Սվազ։

230ա Բջնին գտնվում է Այրարատ նահանգի Նիգ գավառում. 11-րդ դարում Վասակ Պահլավունի իշխանի օրոք դառնում է բերդաքաղաք։ Այժմ Հրազդան գետի աջ ափին գյուղ է Սովետ. Հայաստանի Հրազդանի շրջանում։

230բ Սանահին և Հաղպատ վանքերը գտնվում են Սովետական Հայաստանի Ալավերդու շրջանում։ Սանահինը կառուցվել է 957 թ., Հաղպատը 967-ին. կառուցողը Աշոտ Ողորմածի կին Խոսրովանույշ թագուհին է և ու Կյուրիկե արքան։ Երկու վանքերն էլ ունեին բարձրագույն դպրոցներ, մատենադարաններ։

231 Խաչենը Արցախի գավառներից մեկն էր, որի արևմտյան սահմանը հասնում էր մինչև Սևանա լճի ավազանը, իսկ արևելքում կցվում էր Ջրաբերդին։

232 Վանանդ գավառ Մեծ Հայքի Այրարատ նահանգի գավառներից մեկն է, որ համընկնում է Կարսի ու Սարիղամիշի շրջաններին։ 8-րդ դարից այս գավառը ենթարկվում է Բագրատունիներին և 961 թ. Մուշեղ Բագրատունի իշխանը թագավոր է հռչակվում՝ հիմնադրելով Վանանդի թագավորությունը, մայրաքաղաքը Կարսն էր։

233 Անտափ կամ Անտաքիա Անտիոք քաղաքն է Օրոնտես գետի վրա, որ Սելևկյան թագավորության նշանավոր կենտրոններից մեկն էր Մերձավոր Արևելքում։

234 Ծովք գյուղը գտնվում է Չորրորդ Հայքում Տիգրանակերտ տանող ճանապարհի վրա. Խարբերդից հարավ-արևելք։ Ուներ Ս. Նշան վանքը, որ 12-րդ դարի սկզբին նստոցն էր Գրիգոր Պահլավունի կաթողիկոսի, որտեղից հետագայում կաթողիկոսարանը փոխադրվեց Հռոմկլա։

235 Հռոմկլան գտնվում է Կիլիկիայի արևելյան սահմանի վրա՝ Եփրատի աջ ափին, ուր 12-րդ դարի սկզբին Ներսես Շնորհալու եղբայր Գրիգոր կաթողիկոսը (1113—1166) կաթողիկոսական աթոռը փոխադրեց։

236 Կիլիկիան գտնվում է Փոքր Ասիայի հարավ-արևելյան անկյունում։ Հարավից նրա սահմանը Միջերկրական ծովն է. իսկ հյուսիսից և արևմուտքից Տավրոսի լեռներով է սահմանագծվում։ Հնում էլ Կիլիկիայում ապրել են հայեր, սակայն արաբական, առավելապես թուրք-սելջուկյան արշավանքներից հետո բուն Հայաստանից գաղթած հայերը լցվում են Կիլիկիա այն չափով, որ Գագիկ երկրորդի ազգականներից Ռուբեն անունով մի իշխան, որ Անիից գաղթել էր Կիլիկիա, հայերից կազմակերպեց զորախմբեր և դուրս քշեց հույներին ու 1080 թ. հաստատեց հայկական իշխանություն Կիլիկիայի լեռնային մի մասում, որը 1095 թ. հետո նրան հաջորդած նրա Կոստանդին որդին մաքրեց ամբողջ լեռնային Կիլիկիան և գրավեց Վահկա ամուր բերդը։ Հետզհետե այդ իշխանությունը ընդարձակում է իր սահմանները և վերջապես ավելի քան հարյուր տարի հետո

1198 թ. Դաշտային Կիլիկիայի Տարսոն քաղաքում Լևոն երկրորդը հռչակվում է Կիլիկիայի թագավոր։ Պետությունը 400 կմ ծովային սահման ուներ և գրավում էր ավելի քան 40 հազար քառակուսի կմ տարածություն։ Երկիրը բուռն ծաղկում էր ապրում մոտ երեք հարյուր տարի։ 1375 թ. եգիպտոսի մամլուկները գրավեցին պետության մայրաքաղաք Սիսը և վերջ տվին Կիլիկիայի հայկական թագավորությանը։ Մնացին կիսանկախ մի քանի լեռնային իշխանություններ, որոնցից մեկը՝ Զեյթունը կիսանկախ վիճակը պահպանեց մինչև 19-րդ դարի 60-ական թվականները։

237 Դրազարկը Կիլիկիայում Սսի մոտ հռչակավոր վանք էր, որի ավերակները մինչև իսկ հայտնի չեն։ Այստեղ էր Կիլիկիայի թագավորների ու բարձրաստիճան հոգևորականների շիրմատունը։ Վանքը շեն էր ու բարգավաճ 12-րդ դարի սկզբից մինչև 14-րդ դարի կեսը։ Այստեղ գրվեցին բազմաթիվ գրքեր։ Վանքի նշանավոր դեմքերն են եղել Թորոս երաժիշտը, Սարգիս Պիծակ նկարիչը և այլք։ Կոչվել է նաև Թրազարկ։

238 Սկևռան նույնպես Կիլիկիայի հռչակավոր վանքերից է, որը 12-րդ դարից հայտնի է իր դպրոցով ու գրչագրության արվեստով։

239 Այս հատվածին մենք ուրիշ մեկնություն ենք տվել։ Ճշտում ենք ըստ պրոֆ. Էդվարդ Աղայանի բանավոր դիտողության։ Ճիշտ է դրված նաև ռուսերեն թարգմանության ծանոթագրություններում։

240 Ներսես Շնորհալի կաթողիկոսը, որ կոչվում է նաև Կլայեցի, ծնվել է 1102 թ.։ 18 տարեկանից դառնում է վարդապետ և օգնական իր կաթողիկոս եղբոր (Գրիգոր Պահլավունի)։ 1166 թ. օծվում է կաթողիկոս։ Գրել է բազմաթիվ աշխատություններ, որոնք թվարկում է Կիրակոս Գանձակեցին։

241 Դիոնիսիոս Արիսպագացին Աթենքի եպիսկոպոս էր առաջին դարում և հռչակված էր իր գիտնականությամբ և գրելաձևով։ Սակայն նրան վերագրված գրքերը համարվում են ուրիշի հեղինակություն։

242 Առաջավորաց պասեր են կոչվում զատկից, սուրբ Սարգսի տոնից կամ Գրիգոր Լուսավորչի տոնից առաջ եղող պասերը։

243 Թաբորը կամ Թաբորական լեռը Պաղեստինում է գտնվում։ Ըստ աստվածաշնչյան ավանդության հրեական Մովսես և Եղիա մարգարեները, որ Քրիստոսից երկու հազար տարի առաջ են եղել, իբր այդ լեռան վրա իրենց հպատակությունն են հայտնում Քրիստոսին, այսինքն դրանով իբրև հեղինակավոր մարգարեներ նրան համարում են տեր մեռածների ու ողջերի։

244 Օրենքի և մարգարեների գրքերը Աստվածաշնչի գրքերից են. առաջինը կոչվում է «Գիրք օրինաց», իսկ մարգարեների գրքերը համարվում են 16 մարդու հեղինակություն, որոնցից կարևորներն են չորսը՝ Եսայի, Երեմիա, Եզեկիել և Դանիել։

245 Ի հիշատակ վրանաբնակության (40 տարի անապատում թափառելուն) հրեաները յոթ օրվա մեծ տոն են սահմանել, որ կատարվում էր յոթերորդ ամսի 15-ից։ Այդ յոթ օրը բոլորը պարտավոր էին տաղավարների



(վրանների) տակ բնակվել։ Այս տոնը կոչվում է տաղավարահարաց տոն, որ նշանակում է վրանաշինությունների տոն։

246 Գրիգոր Տղան կաթողիկոս դարձավ 1173—1193 թ.։ Ներսես Շնորհալու եղբորորդին էր, որ հաջորդեց իր հորեղբորը՝ Ներսեսին։ Թողել է նամակներ, Շնորհալու հետևողությամբ գրել է Երուսաղեմի ողբը, որ հորինվել է մահմեդականների ձեռքով Երուսաղեմի գրավման առիթով (1187 թ.)։

247 Կլա՝ հռոմեական Հռոմկլան է. Տե՛ս ծան. 235։

248 Սեաստը [Սեբաստիան է] գտնվում է Կոռիկոսից հյուսիս-արևելք Միջերկրականի ափին (Կիլիկիայում)։ Այժմ կոչվում է Այաշ։

249 Մասյացոտնը Մեծ Հայքի Այրարատ նահանգի 12-րդ գավառն է, որ ընկած է Մեծ և Փոքր Մասիսների հյուսիսային ու արևելյան փեշերին։ Սուրմալուն նույնպես մտնում է Մասյացոտնի մեջ։

250 Տավուշ գավառը համապատասխանում է Ադրբեջանական ՍՍՀ-ի Թովուզ (Տավուշ-ի աղավաղված ձևը), Ղազախ և ՀՍՍՀ-ի Շամշադինի շրջաններին։ Տավուշ է կոչվել նաև այժմյան Շամշադինի շրջկենտրոն Բերդի մոտ գտնված ամրոցը, որ ավերակ է։

251 Մածնաբերդը գտնվում է Մեծ Հայքի Ուտի նահանգում։ Այժմյան Նուխիի շրջանում։ Մնում են ավերակները։

251ա Նոր բերդը Վայոց ձորի (Եղեգնաձոր) Ամաղու կոչված վայրում է, ուր կառուցվել է Ամաղուի հռչակավոր Նորավանքը, որ կոչվել է նաև Անապատ։

252 Շամքորը հայտնի է 5—6-րդ դարերից։ Մեծ Հայքի Արցախ նահանգի նշանավոր բնակավայրերից է։ Այժմ Ադրբեջանական ՍՍՀ Շամխորի շրջանի կենտրոնն է։ Գտնվում է Թիֆլիս—Եվլախ երկաթգծի վրա։

Երգեվանքը Մեծ Հայքի Արցախ նահանգի Փառիսոս գավառում է գտնվում։ Արցախի մեջ են մտնում նաև Տերունականք և Տավուշը (տե՛ս ծան. 250)։

253 Գետակիցքը հավանորեն Գեաբիկն է (տե՛ս ծան. 1)։

254 Տարսոնը Կիլիկիայի նշանավոր քաղաքներից է, որ գտնվում է Կիդնոս գետի ստորին հոսանքում Կապադովկիայից Սիրիա անցնող առևտրական մեծ ճանապարհի վրա։ Ռուբինյան հայ թագավորների օրոք Տարսոնը նշանավոր կենտրոն էր և ամուր բերդաքաղաք։ Այստեղ էին կատարվում հայ թագավորների թագադրման հանդեսները։

255 Ներսես Լամբրոնացին (Լամբրոնը Կիլիկիայի նույնանուն գավառի կենտրոնն էր և Օշինյան իշխանների աթոռանիստը) ծնվել է 1153 թ., եղել է նշանավոր եպիսկոպոս և գրող։ Տարսոնի, Լամբրոնի և Սկևռա վանքի առաջնորդն էր։ Թողել է ինքնուրույն ու թարգմանական գրական մեծ ժառանգություն։ Մեռել է 1198 թ.։

256 Վանա լճի արևելյան ափին՝ Խլաթ քաղաքում սելջուկյան իշխաններից մեկը հիմնադրում է (1100 թ.) առանձին իշխանություն, որ գոյություն ունեցավ մոտ մեկ ու կես դար։ Այս ընթացքում այդ իշխանությունը իրեն ենթարկեց Վասպուրականի մի մասը և Բերկրիի, Արճեշի, Բաղեշի, Խլաթի, Մանազկերտի, Խնուսի, Բյուրակնի շրջանները և Դերջանի մի

մասը։ Ինչպես տեսնում ենք, սրանց երկիրը Հայաստանի մի մեծ տարածություն էր կազմում, որտեղ ճնշող մեծամասնությունը հայեր էին. այստեղի իշխողներն իրենց կոչում էին Շահարմեն (Հայերի թագավոր)։ Շահարմենները վերացան 1244 թ.։

257 Կեչառուքի կամ Կեչառիսի վանքը այժմյան Ծաղկաձորում է. կառուցվել է 11-րդ դարում Պահլավունիների ձեռքով։ Վանքը (Ս. Գևորգ) և ավելի ուշ կառուցված հարակից վանքերը պահպանվում են առ այսօր։ Վանքը ուներ նշանավոր դպրոց, որտեղ 13-րդ դարի վերջում և 14-րդ դարի սկզբում հայտնի դարձավ տաղասաց Խաչատուր Կեչառեցին։

258 Թեղենիք կամ Թեղենիս վանքը գտնվել է Սովետական Հայաստանի Հրազդանի շրջանում՝ Հրազդան գետի ափին. Այժմ բոլորովին ավերակ է։

259 Հավուց թառի վանքը գտնվում է Ներկայիս Մարտունու շրջանում... Եղիա վարդապետը (13-րդ դարի առաջին կեսում) հայտնի երաժիշտ էր և հենց այդ վանքում ուներ երգեցիկ խումբ։ Մի Հավուց թառ վանք էլ գտնվում է Գեղարդից քիչ հարավ-արևելք Գառնի ձորի ձախ կողմը. կառուցել է Գրիգոր Մագիստրոսը։

260 Ջարեք բերդը գտնվում է Արցախի Դարդման գավառում։

261 Մխաթորը գտնվել է Շագախի շրջանում, որտեղ եղել է Խամշի կոչված վանքը։

262 Արճեշ քաղաքը գտնվել է Վանա ծովի ափին՝ Տուրուբերան նահանգի Աղիովիտ գավառում։ Քաղաքի ավերակները այժմ անցած են ծովի տակ։

263 Զաքարե ամիրսպասալարը Իվանեի եղբայրն էր։ Զաքարեն եղբոր հետ հայ և վրաց միացյալ զորքերով մահմեդական տերողներից 20 տարվա մեջ նվաճեց Հայաստանի մեծ մասը։ Իր վերջին արշավանքը ուղղեց Պարսկաստանի Մարանդ և Արդաբիլ քաղաքների դեմ։ Արդաբիլի սուլթանը դրանից առաջ արշավել էր Անի և Շիրակի Բագավանում կոտորել էր 12 հազար հայ։ Զաքարեն տասներկու հազար մահմեդական իշխաններ ու կրոնավորներ այրեց մզկիթներում ակնարկելով 706 թվականին արաբների ձեռքով հայ նախարարների հրկիզումը Նախիջևանի եկեղեցիներում և Արդաբիլի սուլթանի կոտորածը Բագավանի եկեղեցում։

264 Սիսը Կիլիկիայի նշանավոր բերդաքաղաքներից մեկն էր, որ 12-րդ դարում դարձավ Կիլիկիայի հայոց մայրաքաղաքը և իբրև այդպիսին էլ մնաց 1375 թվականին։ Միաժամանակ նա կաթողիկոսանիստ էր մինչև 1921 թ., երբ ամբողջ երկիրը ֆրանսիական զավթիչ իշխողները հայերից գաղտնի ծախեցին թուրքերին։

265 Գիսը գտնվում էր Մեծ Հայքի Ուտի նահանգում Պարտավից (Բարդա) արևմուտք։

266 Ամարասը գտնվում էր Մեծ Հայքի Արցախ նահանգի Հաբանդ գավառում, որ համընկնում է Վարանդայի ու Դիզակի մելիքությունների տարածությանը։ Ամարասը ուներ նույնանուն նշանավոր վանքը, որ հիմնադրվել էր Գրիգոր Լուսավորչի օրերում։

267 Խաչատուր վարդապետ Տարոնացին ապրել է 12-րդ դարի 2-րդ կեսին, եղել է Հաղարծին վանքի (գտնվում է Դիլիջանի շրջանի՝ նախկին



Ջորափոր գավառի մի չքնաղ վայրում) առաջնորդն էր։ Եղել է երաժիշտ, կանոնավորել է հայկական ձայնագրությունը, գրել է գանձեր. հայտնի է նրա «Խորհուրդ խորին» շարականը։

268 Մելիտինեն Երկրորդ Հայքի մայրաքաղաքն էր, որ հետագայում կոչվում էր Մալաթիա, այժմ թուրքերը անվանում են Էսքի-Մալաթիա։

269 Մխիթար Գոշի ամենահայտնի աշխատությունը նրա գրած Դատաստանագիրքն է, որ այստեղ չի հիշատակված։ Դատաստանագիրքը միջնադարյան Հայաստանի օրենքների ժողովածուն է, որ շատ կարևոր դեր է խաղացել մեր ժողովրդի կյանքում։ Հավանորեն Կիրակոսը ծանոթ չի եղել այդ աշխատությանը, կամ մոռացել է հիշատակել։

270 Կոտայքը Մեծ Հայքի Այրարատ նահանգի 16-րդ գավառն էր, որի մեջ էր մտնում նաև Երևանը։ Նախկին գավառների անուններից միայն Կոտայքն էր մնացել իբրև շրջանի անուն, այն էլ փոխվեց դարձավ Աբովյան։ Այժմ Կոտայք անունը կրում է նույն շրջանի մեջ մտնող Բարձաքի՝ Ելկովան գյուղը, որ գտնվում է Ճամբրամ լեռան հարավային փեշերին՝ Աբովյան քաղաքից 4 կմ արևելք։

271 Բզնունիքը Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի 11-րդ գավառն էր, որ ընկնում է Վանա ծովի արևմտյան ափին։ Այս գավառի անունով էլ Վանա ծովը կոչվում է նաև Բզնունյաց ծով։

272 Կապադովկիան ընկած է Փոքր Հայքից արևմուտք, որ կոչվել է նաև Գամիրք։ Մայրաքաղաքը եղել է Կեսարիան, որ այժմ թուրքերը կոչում են Կայսերի։

273 Ամիդը Միջագետքի նշանավոր կենտրոններից մեկն էր։ Այժմ թուրքերը կոչում են Դիարբեքիր։

274 Ղարաղորումը 13-րդ դարում մոնղոլ-թաթարների մայրաքաղաքն էր։ Տեղավորված էր Օրխոն գետի ափին (Մոնղոլական ժողովրդական Հանրապետություն)։ Մայրաքաղաքը Պեկին տեղափոխելու հետևանքով (1262) աստիճանաբար դատարկվում էր։ Երկար ժամանակ ավերակները ծածկված էին ավազով։ Մայրաքաղաքի հիմքը դրեց Չինգիզ խանը (1155—1227), որը և մոնղոլ-թաթարական ահռելի կայսրության հիմնադիրն էր։

275 Պղնձահանքը այժմ կոչվում է Ախթալա և գտնվում է Սովետական Հայաստանի Ալավերդու շրջանում։

276 Շամքոր. տե՛ս ծան. 252։

277 Տե՛ս ծան. 252։

278 Գագ ամրոցը գտնվում է Գուգարքի Կողբոփոր գավառի Գագ դաշտում Կոթ գյուղից վեց կմ հեռավորության վրա։

279 Կայան բերդը գտնվում է Լոռում։ Կա մի այլ Կայան բերդ էլ, որ Սևանա լճի հյուսիսում Արջանոց լեռների վրա է։ Այստեղ էր կառուցված Մխիթար Գոշի Գետիկ վանքը (Հին Գետիկ) (տես ծան. 1)։

280 Մարի քաղաքը գտնվում է Պարսկահայքի Մարի գավառում։

281 Խոխանաբերդը Արցախ նահանգի (Ղարաբաղ) Ներքին Խաչեն գավառում ամրոց էր։ Կառուցված է Խաչեն գետի աջ կողմը Գանձասարից հարավ։ Նշանակում է իշխանաբերդ։

282 Գանձասարի վանքը այժմ էլ կանգուն է. գտնվում է Արցախի (Ղա-

բարաղ) Խաչեն գավառում մի բարձր բլրի վրա։ Վանքը իր մեծությամբ, հոյակապությամբ, ճարտարապետական անթերի կատարելությամբ հայ արվեստի գլուխգործոցներից է։

283 Տես ծան. 235։

284 Տյուրիկի քաղաքը գտնվում է Դարանաղի գավառից արևմուտք Եփրատից աջ, այժմ կոչվում է Դիվրիգի։

285 Ամբերդը գտնվում է Արագածի լանջին Բյուրականից հյուսիս։ 11—13-րդ դարերում մեծ բնակավայր էր, ուներ իշխանանիստ ամրոց, որտեղ 13-րդ դարի սկզբում հիմնվեցին Վաչուտյան իշխանները։ Ամբերդ ամրոցը այժմ կիսավեր վիճակում է։

286 Այրիվանքը կոչվում է նաև Գեղարդավանք։ Գտնվում է Այրարատ նահանգի Մազազ գավառում։ Այժմ մտնում է Աբովյանի շրջանի մեջ։ Կառուցվել է 12-րդ դարում Վայոց ձորի (Եղեգնաձորի) Պռոշյան իշխանների ձեռքով։

287 Հովհաննավանքը Հայաստանի հնագույն վանքերից է։ Գտնվում է Այրարատ նահանգի Արագածոտն գավառում։ Այժմյան Կարբի գյուղից (Աշտարակի շրջան) 3 կմ հյուսիս Քասախի ափին մի քարաժայռի վրա. դեռ կանգուն է հնամենի վանքը[1]։

288 Սաղմոսավանքը կառուցվել է 13-րդ դարի սկզբում։ Գտնվում է Արագածոտն գավառում (Աշտարակի շրջան) Սաղմոսավանք անվանված գյուղակում։

289 Խոխանաբերդը, Դեգը, Միրանոբաբը Արցախի Խաչեն գավառի (Ներքին Խաչեն) Հասան-Ջալալ-Դոլա մեծ իշխանի ամրոցներն էին 13-րդ դարի կեսերին։

290 Երզնկան Բարձր Հայքի Եկեղյաց գավառի երկրա քաղաքն է, որ հեթանոսական Հայաստանի կրոնական կենտրոններից մեկն էր, ուր կառուցված կար Անահիտ աստվածուհու տաճարը։ 13-րդ դարում արդեն առևտրական նշանավոր քաղաք էր, որտեղ արտադրվում էին բամբակյա ընտիր գործվածքներ։

291 Եփեսոսը Փոքր Ասիայի քաղաքներից մեկն է։ Այստեղ էր գտնվում աշխարհի 7 հրաշալիքներից Արտեմիսի տաճարը։ Այժմ թուրքերը կոչում են Յարփուզ։ Հնում անվանվել է նաև Արաբիսոս։

292 Իկոնը կամ Իկոնիան, որ այժմ կոչվում է Կոնիա, գտնվում է Թուրքիայի նույնանուն վիլայեթում։ Մինչև 3-րդ դարը մտնում էր հռոմեական կայսրության մեջ, ապա դարձավ բյուզանդական քաղաք։ Սելջուկները 1077 թ. գրավեցին և դարձրին մայրաքաղաք։

293 Կոթը գտնվել է Սևանա լճի հարավային ափին Գավառ ավանի մոտ։ Այժմ ավերակ է։

294 Հուռան ու Թեգան լեռ Աստվածածնի վանականներին դրդում էին ապստամբել տիրող կարգերի դեմ։

---

[1] Հովհաննավանքը գոյություն ունի 4—5-րդ դարերից: Տես Վ. Ղաֆադարյան «Հովհաննավանքը և նրա արձանագրությունները», Երևան, 1948, էջ 10—11։



295 Տայ ավանը այժմյան ՀՍՍՀ-ի Հոկտեմբերյանի Քերծակի մոտ գյուղ էր, որ մինչև 1804 թ. Ղարաբաղի մելիքություններից մեկի կենտրոնն էր։ Այստեղ էր նաև Հանդաբերդը։ Միրակոսը գնում է Սևանա ծովի առանձնանում Խաչենի կողմում։ Անապատը Մարք անվանում է Սևանի ափին։

296 Խորանաշատը Արցախի Տավուշ գավառի (այժմյան լեռնային Ղարաբաղի Շուշու շրջան) նշանավոր վանքերից է, որ կառուցել է հոյակապ Վանական վարդապետը 13-րդ դարի սկզբում, ուր և թաղված է։ Նաև Խորանաշատը գտնվում է Երգեվանքի դիմաց։

297 Դադի կամ Խութա վանքը գտնվում է Արցախի Խաչեն գավառում Թարթառ գետի ձախ կողմը։

298 Արտազ գավառը համապատասխանում է այժմյան Մակուին (Իրան), որ ձգվում է Մասսից հարավ-արևելք։ Հնում կոչվում էր Շավարշան։ Այստեղ են գտնվում Ավարայրի դաշտը և Թադեոս առաքյալի վանքը։

299 Դողթն գավառը երբեմն մտնում է Վասպուրականի, երբեմն էլ Սյունյաց նահանգների մեջ։ Գտնվում է Արաքսի ձախ ափին Արարատյան դաշտից արևելք և համապատասխանում է Ագուլիսի, Ջուղայի և Օրդուբադի տարածություններին։

300 Մեծ Հայքի տարածությունը տարբեր ժամանակներում այնքան չափ է ունեցել, ամենաընդարձակը եղել է 311 հազար ք. կմ։ Արևմտյան սահմանը Փոքր Հայքն է (Արևմտյան Եփրատով), հյուսիսում սահմանը Վրաստանն է (Թրիալեթի լեռներից և Կուր գետից հարավ, մինչև Կասպից ծովը)։ Կուրի գետաբերանից դեպի հարավ Կասպից ծովի ափով սահմանը հասնում է մինչև Աստարա և ապա հարավ Կասպից և Ղարադաղի լեռներով հասնում է Կապուտան կամ Ուրմիա լիճը։ Այստեղ հիշատակված հայոց ժողովը Կիլիկիայի հայերին է վերաբերում։

301 Աթանասը (296—373) Ալեքսանդրիայի հայրապետն էր, որին ամբողջ քրիստոնյա աշխարհը սրբացրել է և կոչել ուղղափառության հայր։ Գրել է բազմաթիվ աշխատություններ, որոնցից հայերեն են թարգմանված Կանոններ, Խոստովանություն, Հարցմունք Աթանասի, Պատարագամատույց և այլ գրքեր։

302 Գրիգոր Նյուսացին, Բասիլիոսը 4-րդ դարի եկեղեցական գործիչներ են. Իսկ Եփրեմը կամ Եփրեմ Խուրին՝ նույնը Եփրեմ Ասորի (մեռել է 373 թ.), նաև գրական գործիչ էր, որի գործերը թարգմանված են հայերեն։ Իսկ Սեբերիանոս Եմեսացին, որ կոչվել է նաև Սևերիանոս Գաբաղացի, ժամանակակից է եղել Հովհան Ոսկեբերանին։ Նույնպես եկեղեցական գործիչ էր, եպիսկոպոս, որի ճառերը թարգմանվել են դասական գրաբարով։

303 Տե՛ս ծան. 84։

304 Դիոնիսիոս Թրակացու (հույն քերական) հայ մեկնիչներից մեկը Մովսեսն է, որին մեր ձեռագրերը և հին մատենագիրները ընդունում են Խորենացու տեղ, սակայն դեռևս պարզված չէ՝ այդ Մովսես Խորենացին է, թե մեկ ուրիշ Մովսես է։

305 Տե՛ս ծան. 99։

306 Եպիփան Կիպրացին (մեռել է 408 թ.) 4-րդ դարի հույն եկեղեցա-

կան գործիչ և մատենագիր, որի գրվածքներից հատ ու կտորներ թարգմանվել են հայերեն։

307 Էմմանուել եբրայերեն նշանակում է աստված մեզ հետ է. այս անունը տրված է Քրիստոսին, որպես թե նա լինելով աստված, եկավ բնակվեց մարդկանց մեջ և նրանց հետ։

308 Հովնանը ըստ Աստվածաշնչի մարգարեներից մեկն էր, որ աստծու հրամանով պետք է Նինվե գնար, որ չէր ցանկանում։ Նավ նստած փախչում էր Նինվեից հեռու։ Ալեկոծության ժամանակ նրան վիճակվեց գցվել ծովը։ Կետը նրան կուլ տվեց, կենդանի հանեց ափ և նա երկրորդ անգամ հնազանդվեց աստծու պատվիրանին։

309 Որոտման որդիներ արտահայտությունը թարգմանված է եբրայերեն բանէրեգես բառից։ Քրիստոսը այսպես կոչեց Հակոբին և Հովհաննեսին (Հովհաննու ավետարանի հեղինակը, որի եղբայրն էր Հակոբը) այն պատճառով, որ նրանց քարոզները շատ զորեղ էին։

310 Սինա լեռը գտնվում է արաբական թերակղզու վրա։ Ըստ աստվածաշնչյան ավանդության որպես թե աստված այս լեռան վրա հայտնվելով եգիպտացի հրեաներին դեպի Պաղեստին առաջնորդող Մովսեսին և հանձնեց նրան քարե տախտակների վրա գրված 10 պատվիրանները, որոնք դարձան Իսրայելի ժողովրդի համար օրենքներ։ Մովսեսը համարվում է Աստվածաշնչի առաջին հինգ գրքերի հեղինակը։

311 Եղիան ըստ աստվածաշնչյան առասպելի այն սուրբ մարգարեն էր, որ մինչև հավատարիմ մնաց աստծուն և այդ պատճառով իբր հրեղեն կառքով բարձրացավ երկինք և մնաց անմահ։

312 Ըստ Աստվածաշնչի քաղդեացիների թագավոր Նաբուգոդոնոսորը Հրեաստանից գերի տարված երեք մանուկների (Աբեդնագով, Սեդրակ և Միսաք) աստվածապաշտության համար կրակը նետեց, բայց իբր աստծու հրեշտակի ձեռքով կրակից ազատվեցին։

313 Ղփչաղները քոչվոր ժողովուրդ էին։ Թափառում էին Իրտիշի ափերին, կոչվում են նաև կումաններ։ 11-րդ դարերի կեսերից մինչև 13-րդ դարի կեսերը իշխում էին Ղազախստանում և հարավային Ռուսաստանի ստեպներում։ Նրանց մի մասը հասավ մինչև Հայաստան։ Հետո մոնղոլները նրանց ենթարկեցին իրենց։

314 Ջարաբերդը ամրոց է Արցախի Խաչեն գավառում, որ հիշատակվում է նաև Կաղանկատվացու և Օրբելյանի կողմից։ Այժմ հայտնի է Ջրաբերդ անունով։

314ա Ականան ու Կարկառը պետք է որ նույնպես Խաչենում լինեին։

315 Եվստաթիոսը հույն կրոնավոր էր (վանահայր) Պոլսի վանքերից մեկում։ Նա պայքարում էր Նեստորի դեմ, որ ուրանում էր Քրիստոսի մարմնի աստվածայնությունը, բայց ինքն էլ Քրիստոսի մեջ միայն աստվածային բնություն էր ընդունում առանց մարդեղության, ուստի ինքը ևս ընկավ աղանդավորության մեջ։

316 Սկևռա վանքը գտնվում է Կիլիկիայի Ադանա նահանգի Լամբրոն ամրոցի մոտ։ Կիլիկիայի նշանավոր մշակութային կենտրոններից մեկն էր



12—13-րդ դարերում։ Այնտեղ գործել են նշանավոր գրական ու եկեղեցական հայ գործիչներ։

317 Մարերի ամիսը ըստ անշարժ տոմարի համապատասխանում է մոտավորապես մայիսի 2-ից մինչև հունիսի 5. սա հայոց 10-րդ ամիսն է։

318 Հայոց Հոռի ամիսը անշարժ տոմարով համապատասխանում է սեպտեմբեր և հոկտեմբերի կեսերին. երկրորդ ամիսն է նավասարդից հետո։

319 Սահմի ամիսը հայոց երրորդ ամիսն է, որ անշարժ տոմարով համապատասխանում է հոկտեմբերի և նոյեմբերի կեսերին։

320 Ջեհուն գետը Ամուդարիան է։

321 Նավասարդը հայոց առաջին ամիսն է, որ ըստ անշարժ տոմարի համապատասխանում է օգոստոսի և սեպտեմբերի կեսերին։ Նավասարդի մեկը օգոստոսի տասնմեկն է, այսինքն՝ հայոց նոր տարվա առաջին օրը։

322 Մարտիրոսապոլ կամ Մարտիրոսաց քաղաք (Նփրկերտ, Տիգրանակերտ, Մուֆարղին) Հայաստանի նշանավոր քաղաքներից մեկն էր, որ գտնվում է Սասունից հարավ Աղձնիք նահանգում։ Կառուցվել է մեր թվականությունից առաջ 70-ական թվականներին Տիգրան Մեծի ձեռքով։

323 Միջագետքի քաղաքներ։ Հալեպը այժմյան Սիրիայի քաղաքներից է. Խառանը աշխարհի հնագույն քաղաքներից է, գտնվում է Եդեսիայից (Ուռհա, Ուրֆա) հարավ և այժմ էլ գոյություն ունի միևնույն անունով. Ուռհան կամ Եդեսիան Աբգարի Օսրոյնե թագավորության մայրաքաղաքն էր, այժմ կոչվում է Ուրֆա։ Ամիդը Միջագետքի հնագույն քաղաքներից է, գտնվում է Մեծ Հայքի Աղձնիք նահանգի հարավ-արևմտյան սահմանի վրա, այժմ կոչվում է Դիարբեքիր։

324 Ուխտիքը, որ կոչվում է նաև Ոքաղե, Մեծ Հայքի Տայք նահանգի գավառներից մեկն էր։ Ուխտիքը եղել է նաև Բերդաքաղաք, որ այժմյան Օլթին է։

325 Ալանաց դռներ էր կոչվում այժմյան Դարիալի կիրճը։

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ[1]

### Բնագրի հրատարակություններ

1. Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ՝ ի լոյս ընծայեաց Օսկան Տէր-Գէորգեան Յովհաննիսեանց Երեւանեցի, ի Մոսկուա, ի տպարանի Արեւելեան լեզուաց ճեմարանի Տեարց Լազարեանց, 1858։

2. Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ «Համառօտ պատմութիւն ի սրբոյն Գրիգորէ՝ ցաւուրս իւր լուսաբանեալ», Վենետիկ, ի տպարանի Մխիթարեանց, 1865։

[1] Կազմված է Հ. Ս. Անասյանի «Մատենագիտության» հիման վրա, տես Կիրակոս Գանձակեցի. Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ ԺԶ։

3. *Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի Վարդապետի Գանձակեցւոյ Թիֆլիս, 1909։*

4. *Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, (աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի) Երևան, 1961։*

## *ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

1. Histoire d'Armenie, par le Vartabied Kirakos de Gantzac.
*Հետևյալ հրատարակությունների մեջ* «Deux historiens Arméniens... traduits par M. Brosset» I-re livraison Saint Pétersbourg, 1870, P. I-19 ։

*Հրատարակության հավելվածում (էջ 195—205) Բրոսեն տվել է Կիրակոսի պատմության 6 հատվածների լատիներեն թարգմանությունը՝ կատարված Պետերմանի կողմից. հատվածներ, որոնց 4-ը բաց է թողնված ֆրանսերեն վերոհիշյալ թարգմանության մեջ։ Թարգմանչի նախաբանը լույս է տեսել հաջորդ պրակում* (2 e livraison, Saint-Petersbourg, 1871, p. I–XXIV: «Notice sur Kirakos et sur Oukhtanes»):

2. Киракос Гандзакеци. История [Армении]. Перевод с древнеармянского Т. Тер Григорьяна. Отв. редактор проф. А. Г. Тер-Матевосян. (Для служебного пользования). Издательство АН Азербайджанской ССР, Баку, 1946 (Академия наук Азербайджанской ССР. Институт истории им. А. Бакиханова).

*1—302 էջ։ Թարգմանչի առաջաբանով և ծանոթագրություններով։*

*Քաղվածքներ.*

1. Aperçu des entreprises des Mongols en Géorgie et en Arménie dans le XIII-e siècle, par M. Klaproth. Nouveau Journal Asiatique t. XII, 1833, p. 273—289.

2. Extrait de Kirakos, auteur arménien du XIII-e siècle, relatif principalement au regne de Thamar et de ses successeurs, M. Brosset, «Additions et éclaircissements a l'Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'en 1469 J.—C., Saint-Pétersbourg, 1851, p. 412—437.

3. Les Mongols d'apres les historiens arméniens. Fragments traduits sur les textes originaux par M. Ed. Dulaurier. Extrait de l'historien Guiragos. Journal Asiatique, 5-e série. t. XI. 1858, p. 192—255. 426—473 et 481—508, *Թարգմանչի նախաբանով։*

*Գրախոսություն. «Կիրակոս պատմիչ և պարոն Տի-լորիէ», Երևակ, Կ. Պոլիս 1859, հ. 6, էջ 358—365։*

4. (Extraits de Guiragos de Kantrag) Ed. Dulaurier. «Recherches sur la chronologie arménienne technique et historique», Paris, Imprimerie Impériale, 1859, p. 205, 229—230, 267—268, 280, 319—320, 326, 330—332, 334, 335—338, et 348—349.

5. Extrait de l'Histoire d'Arménie de Guiragos de Kantzag (traduit par Ed. Dulairier *Հետևյալ հրատարակության մեջ* «Recueil des historiens



des Croisades, publié par les soins de l'Académie des Inscriptions et Belles-Lettres. Documents arméniens», t. I, Parism Imprimerie Impériale, 1869, p. 413—430.

6. The journey of Haithon, king of Little Armenia, to Mongolia and Back, a.d. 1254—1255, Emil Bretschneider, «Mediaeval researches from Eastern Asiatic sources. Fragments towards the knowledge of the geography and history of Central and Western Asia from the 13th to the 17th century», vol. I, London, 1910, p. 164—172.

7. Путешествие Армянского царя Гетума к Бату (Батыю) и к Мангу-Хану, в лето армянского счисления 703 и 704.
Сибирский Вестник, С.—Петербург, 1822, часть 19, стр. 69—84.
*Թարգմանիչն է՝* Д. Б. Аргутинский-Долгорукий.

8. Краткий обзор писателя XIII века Киракоса Гандзакеци о монголах (с переводом нескольких глав его Истории). Русское Слово, 1860, № 6, отд. II стр. 108—124.

9. История монголов по армянским источникам. Выпуск второй, заключающий в себе извлечения из Истории Киракоса Гандзакеци. Перевод и объяснения К. П. Патканова. С.—Петербург, 1874.
*Թարգմանչի նախաբանով։*

10. Киракос Гандзакеци. История Армении, Москва, 1976 (перевод с древнеармянского, предисловие и комментарий Л. А. Ханларяна)..

## *ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ*

**(Կիրակոս Գանձակեցու վերաբերյալ)**

1. *Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ», Երուսաղէմ, 1915, էջ 304։*

2. *«Դաւթի բանասիրի Բաղիշեցւոյ ծաղկաքաղ արարեալ ի բազում պատմագրաց» և այլն, Հետևյալ հրատարակության մեջ։ Վ. Ա. Հակոբյան, «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.», հտ. Բ, Երևան, 1956, էջ 344։*

3. *«Պատմութիւն կամ Յիշատակ ինչ ինչ անցից՝ գիտելոց յաշխարհին Աղուանից, համառօտաբար ի սրբազնակատար կաթուղիկոսէն Աղուանից ի տէր Եսայեայ Հասան Ջալալեանց» և այլն, Շուշի, 1839, էջ 8։*

4. *«Զաքարեայ Սարկաւագի պատմագրութիւն», հտ. Բ, Վաղարշապատ, 1870, էջ 55—56։ Հտ. Գ, Վաղարշապատ, 1870, էջ 3, 6 և 11։*

5. *«Մաղաքիա Աբեղայի պատմութիւն վասն ազգին նետողաց», Պետերբուրգ, 1870, էջ 12 և 52։— «Պատմութիւն Թաթարաց Վարդանայ պատմչի. հանեալ ի ձեռագիր օրինակաց Թանգարանի Սրբոց Յակովբեանց», Երուսաղէմ, 1870, էջ 22։*

6. Միխիթարայ Այրիվանեցւոյ պատմութիւն ժամանակագրական, Պետերբուրգ, 1867, էջ 37։

7. «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ» Վենետիկ, 1862, էջ 146—147։— «Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 192։

8. «Վարդան վ. պատմիչ առ Կիրակոս վ. պատմիչ ուսումնակից իւր», Հետեւյալ հրատարակության մեջ. Ղ. Ալիշան, «Հայապատում», Վենետիկ, 1901, մասն Բ, 470—471։

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


Աբեղյան Ման.— «Հայոց հին գրականության պատմություն», գիրք Բ, Երևան, 1946, էջ 192—199։

Աբրահամյան Ա. Գ.— «Դավիթ Բաղիշեցու տարեգրությունը և նրա արժեքը հայ մատենագրության համար», Էջմիածին 1946, № 11—12, էջ 39։

Ալթունյան Գ.— «Մոնղոլները և նրանց արշավանքները ԺԳ. դարում», Վաղարշապատ, 1913, էջ 56—87։

Ալիշան Ղև.— «Հայապատում», Վենետիկ, 1901, մասն Ա, 106—108։

Ակինյան Ն.— «Մուրիկ կայսեր հօր խրատը», Հանդես Ամսօրեայ, 1930, էջ 364—366։

Կիր. Գանձակեցու մի հատվածի մասին է. տպ. Վենետիկ 1865, էջ 28։ Ակինյան Ն., Հանդես ամսօրեայ, 1910, էջ 253—54։

Աճառյան Հր.— «Մի քանի սրբագրութիւններ հայ մատենագիրներու մէջ», Արարատ, 1913, էջ 1145։

Աճառյան Հր.— «Հայերէն նոր բառեր հին մատենագրության մէջ», Վենետիկ, 1913, էջ 73—83։

Նույնն է և հետևյալը։

Աճառյան Հր.— «Հայերէն նոր բառեր Կիրակոս Գանձակեցւոյն մէջ, Բազմավէպ, 1914, էջ 301—304։

Աճառյան Հր.— «Ձեռագրական սրբագրութիւններ հայ մատենագիրների մէջ» (առանձնատիպ), Երևան, 1926, էջ 56—57։

Աճառյան Հր.— «Հայոց անձնանունների բառարան» հտ. Բ. Երևան, 1944, էջ 625—626, 639։

Այտնյանց Գր.— «Գայթակղիմ», Բազմավէպ, 1914, էջ 257—258։

Առաքելյան Ա.— «Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն (I գ. մ.թ.ա.— XIV գ)», Երևան, 1959, էջ 470—472։

Առաքելյան Վարագ, «Կիրակոս Գանձակեցի», «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, Երևան 1968, հուլիսի 10։

Առաքելյան Վարագ, բնագրական ուղղումներ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկում, «Պատմաբանասիրական հանդես» 1969, № 2։

Գուրյան Եղ.— «Պատմութիւն հայ մատենագրութեան, ի վաղ ժամանակաց մինչև մեր օրերն», Կ. Պոլիս, 1885, էջ 64—65։





Գուրյան Եղ.— «Պատմութիւն հայ մատենագրութեան», Երուսաղեմ, 1933, էջ 237—238։

Զամինյան Արր.— «Հայ գրականութեան պատմութիւն», մասն Ա, Նոր-Նախիջևան, 1914, էջ 203—204։

Զարբհանալյան Գար.— «Հայկական հին դպրութեան պատմութիւն (Դ—ԺԳ դար.)», Գ. Տպ. Վենետիկ, 1897, էջ 747—751։ (Thorossian H.) Histoire de la littérature arménienne, des origines jusqu'a nos jours, Paris, 1951, p. 171:

Հակոբյան Վ. Ա.,— «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.», հտ. Բ, Երևան, 1956, էջ 291—292։

Մատնացույց է արված Կիր. Գանձակեցին՝ որպես աղբյուր Դավիթ Բաղիշեցու ժամանակագրության։

Ղազիկյան Արս.— «Հայկական նոր մատենագիտութիւն և հանրագիտարան հայ կեանքի», հտ. Ա, Վենետիկ, 1909, էջ 1293—1301։

Մանանդյան Հ. Հ.— «Հայաստանի պատմութիւնը թուրք-թաթարական արշավանքների շրջանում» (վիմատիպ), Երևան, 1922, էջ 106։

Մանանդյան Հ. Հ.— «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հտ. Գ, Երևան, 1952, էջ 123—125 և այլն։

Մելիքսեթ-Բեկ Լ. (მელიქსეთ—ბეგი ლ.) „ძველი სომხური ლიტერატურის ისტორია) სახელმძღვანელო უმაღლესი სკოლისათვის)", თბილისი, 1941.

(«Հայկական հին գրականության պատմություն», Թիֆլիս, 1941)։

Նազարյանց Ստ. (Назарянц Ст.), «Беглый взгляд на историю гайкской литературы до конца XIII столетия». Казань, 1814, стр. 45. (Neumann C. F.), «Versuch einer Geschichte der armenischen Literatur» Leipzig, 1836, S. 189.

Շահնազարյանց Ա.— «Զաքարեան (Երկայնաբազուկ) տոհմի ծագումը», հետևյալ հրատարակության մեջ. «Ճաղակաթ, Ս. Էջմիածնի հայագիտական ժողովածու», Վաղարշապատ, 1913, էջ 68 և այլն։

Ոսկյան Համ.— «Կիրակոս Գանձակեցի». Հանդէս Ամսօրեայ, 1922, էջ 89—94 և 214—221։

Նույնն է և հետևյալը։

Ոսկյան Համ.— «Յովհաննէս Վանական և իր դպրոցը», Վիեննա, 1922, էջ 92—101՝ «Կիրակոս Գանձակեցի»։

Չամչյան Միք.— «Պատմութիւն Հայոց, հտ. Ա, Վենետիկ, 1784, էջ 16։ Նույնը՝ հտ. Գ., Վենետիկ, 1786, էջ 210, 233, 236—239 և 271։

Պատկանյան Ք.— «Հայ պատմագիրների երկասիրութեանց ցուցակը» Փորձ, Դ տարի, 1880, № 1, հավելված, էջ 26—27։

Պողոսյան Սեր.— «Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի շրջանում, IX—XIII դարեր», Երևան, 1958, էջ 306—307։ (= Հայ ժողովրդի պատմության 12 դասախոսություն, ուսումնական ձեռնարկ Հայկ. ՍՍՀ բուհերի համար (Պրակ 4)։ Երևան, Երևանի համալսարանի հրատարակություն, 1958)։

Ջանփոլադյան Հ.,— «Մխիթար Գոշը և Նոր Գետիկի վանքը», Աշխա-

ություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի, հտ. Ա, Երևան, 1948, էջ 102, 105—106, 131 և այլն։

Սարգսյան Գր.— «Դիտողութիւններ Հայերէն նոր բառեր-ուն», Բազմավէպ, 1927, էջ 43—46։

(Հր. Աճառյանի «Հայերէն նոր բառեր»-ի հրատարակության կապակցությամբ դիտողություն է անում Կիր. Գանձակեցու «ասպատաթ» բառի մասին, էջ 45)։ (Somal P. S.), «Quadro della storia leteraria di armenia», Venezia, 1829, p. 111:

Տեր-Մկրտչյան Կար.— «Նիւթեր հայ մելիքութեան մասին», պրակ Բ, Էջմիածին, 1914, էջ 20—21 և այլն։ Մատրագրված է՝ «Կարապետ եպիսկոպոս»։

Փափազյան Վրթ.— «Պատմութիւն հայոց գրականութեան (բանահիւսութեան պատմութիւն), սկզբից մինչև մեր օրերը», հատոր Ա, (սկզբից մինչև XVII դարը), Երևան 1907, էջ 241։

Փափազյան Վրթ.— «Պատմութիւն հայոց գրականութեան (բանահիւսութեան պատմութիւն), սկզբից մինչև մեր օրերը», նոր տպ., Թիֆլիս, 1910, էջ 196—197։ (Bedros de Constantinople) «Etude philologique et lexicographique» Londres, 1945, p. 269:

(Կիր. Գանձակեցու «մայր» բառը համարում է մոնղոլերեն «մայր» (արշաւ) բառից. իբրև «արշաւի տարրը»)։

(Խմբական հեղինակություն)— Հայ ժողովրդի պատմություն։ Առաջին մաս։ Ձեռնարկ միջնակարգ դպրոցի համար։ Թույլատրված է Հայկական ՍՍՀ լուսավորության մինիստրության կողմից։ Երևան, Հայպետուսմանկհրատ, 1953, էջ 258։

(Խմբական հեղինակություն) История Армянского народа, часть I, Ереван, 1951, стр. 185.

Տե՛ս նաև Կիր. Գանձակեցու Պատմության բնագրի և թարգմանությունների հրատարակություններին առընթեր՝ հրատարակիչների և թարգմանիչների առաջաբանները։

# ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

## Ա.

Աբագա—282, 284
Աբաս (Սմբատի որդի)—70, 72
Աբաս (Կյուրիկե Բագրատունու որդին)—116
Աբաս (Դավթի թոռը)—116, 117
Աբաս (եպիսկոպոս)—143
Աբբա Եփրեմ—237
Աբգար—193
Աբդիսո—56
Աբդլա—62
Աբդլա (Աբդլդանկի)—62, 65
Աբդլա—67
Աբդլմելիք—58, 144
Աբլաբաս (տե՛ս Սմբատ)
Աբել—248
Աբիսողոմ—25
Աբրահամ (Խոստովանող)—[illegible]
Աբրահամ (Մեսրոպի աշակերտներից)—36
Աբրահամ (կաթողիկոս)—47, 50, 51
Աբրահամ (Հագարի ամուսինը)—55, 57, 108, 109, 244, 247, 248
Աբրահամ (վարդապետ)—162
Աբուբաքր—56, 58
Աբուսահակ Մահմեդ—66
Ագաթանգեղոս—23
Ադամ—22, 27, 95—97, 109, 161, 240, 241
Ադդե—45, 155
Աթաբեկ—280
Աթանագինես—31
Աթանաս (կամ Աթանասիոս)—38, 98, 99, 102, 103, 220, 237, 243
Աթանաս—45
Աթանաս (ասորի պատրիարք)— —60
Ալադին—140, 166, 227, 262, 269
Ալբիանոս—33
Ալեքս—70
Ալեքս (նաև Ալեքսիոս)—84, 85, 86, 94, 114, 115
Ալի—54
Ալղու—282
Ալփասլան—70, 76, 83
Ահարոն—66
Ահարոն (կաթողիկոս)—145
Ահմադ—67
Աղբայրիկ—135
Աղբուղա (կամ Աղբուղ)—123, 175, 189, 200, 203, 207
Աղսարթան—80, 117, 175
Աղսարթան (թոռ Աղսարթանի)— —117
Ամարի—85
Ամիրա—196
Ամր—56, 58
Անագուրակ—223
Անանիա (Շիրակացի)—57
Անանիա Մոկացի—71, 72, 73
Անանիա (վարդապետ)—88
Անանիա (կաթողիկոս)—114, 119, 146
Անանիա (Աղվանից կաթողիկոս)— —145
Անանիա (մարգարե)—180

Անաստաս (կայսր)—42
Անաստաս (կաթողիկոս)—57, 63
Անդրէ—26
Անդրէաս—45, 155
Անդրոնիկոս—87, 118
Անտոն—92, 158
Աշոտ Բագրատունի—28, 65, 67, 68, 70
Աշոտ—58
Աշոտ Մսակեր—65
Աշոտ (Ողորմած)—72, 73, 75
Ապլոփ—69
Ապողինար—102
Ապուսեթ—66, 68, 69
Առան (իշխան)—142
Առա—142
Ասիլ (տե՛ս Ոսմեկ)
Ասլանբեկ—196, 262
Ասպուրակես—34
Աստվածատուր (Ավրայրեկի որդի)—135
Ավագ (տե՛ս Սարգիս)—138, 162, 172, 183, 184, 185, 188, 189, 190, 191, 200, 203, 206, 207, 208, 209, 222, 224, 226 228, 229
Ավագ (Շահնշահի որդի)—231
Ավալիկ Ապութարող—69
Ատան—138
Արամ Հայկազն—80
Արիստակես—27, 28, 29
Արիստակես (Լաստիվերտցի)—24
Արիստոտել—37
Արիք Բուղա—270, 281, 282
Արկադիոս—34, 33
Արձան—36
Արղուխաթուն—157
Արղուն—224, 258, 260, 261, 267, 268, 279, 280, 281, 282
Արմեն—80, 81
Արշակ—31, 32, 33
Արշակ (Պապի որդի)—34
Արտաշես (Արտաշիր)—38, 39
Արտաշիր (պարսից արքա)—52
Արտաշիր (Շահնշահի որդի)—281



Արտեմոն—52
Ափշին—69
Ափոփմերոս—58
Արքայություն (քահանա)—90
Արքեղայոս—28

Բ.

Բաբգեն (կաթողիկոս)—41, 42
Բաբգեն (իշխան)—63
Բագարատ—66
Բաթու—207, 225, 226, 255, 256, 257, 260, 261, 263, 264, 265, 267, 268, 269, 270, 282
Բալախա—268, 270, 282
Բալրինա—117
Բաչու-Ղուրչի—199
Բաչու—201, 202, 204, 225, 227, 256, 262, 265, 267, 269, 271
Բառնարաս—158
Բասիլա—160
Բասիլիոս—237
Բարաքա—267
Բարդուղիմեոս (առաքյալ)—141 211, 216, 253
Բարշապուհ—60
Բարսեղ—33, 38, 243, 245
Բարսեղ (եպիսկոպոս)—79, 80, 85, 87
Բարսեղ (Խաչատուրի եղբայրը)——162
Բարսեղ (Հեթումի եղբայրը)—199
Բարսեղ (քահանա)—263, 265
Բարքայայ—267
Բեժգեն—132, 134, 147
Բենեդիկտոս—87
Բենեք վարդապետ—284
Բեսելիել—157
Բերքա—281, 282, 284
Բեքիարուք—84
Բոր—52
Բորա—208, 280
Բրքիշո—39
Բուղա—69, 224
Բուղա (երկրորդը)—224, 225

Գ.

Գաբրիել—60
Գաբրիել (Հրեշտակապետ)—95, 239, 251
Գագիկ (Դերենիկի որդի)—69
Գագիկ Շահնշահ—73, 74, 76, 80, 81, 82, 83, 86
Գագիկ (Աշոտի որդի)—75, 76
Գագիկ Արծրունի—86
Գագիկ (կաթողիկոս)—146
Գագիկ (տե՛ս Գրիգորես)—146, 147
Գայիանե—28
Գառնիկ—27, 42
Գեորգես (նաև Գիորգի)—89, 122, 124, 138, 153, 172
Գերմանոս—37
Գիզան—45, 155
Գիորգի—91
Գիորգի Լաշա—137, 138, 148, 149, 172, 206, 226, 278
Գիորգի (Դավթի որդին)—279
Գիուգ—223, 226, 256, 260, 261
Գյուտ—41
Գնել—32
Գոնցա (Ավագի կինը)—229
Գոնցա (Դավթի կինը)—279
Գորգ Կարենեցի—135
Գորկող—208
Գրատիանոս—33
Գրիգոր Լուսավորիչ (նաև Գրիգորիոս)—21, 23, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 39, 40, 42, 46, 50, 52, 56, 61, 72, 85, 86, 92, 101, 106, 112, 140, 141, 142, 153, 238
Գրիգոր Պարթև—23
Գրիգոր Աստվածաբան—33, 89, 92, 109, 243, 245, 246
Գրիգոր Նյուսացի—33, 237, 243
Գրիգոր (տե՛ս Մանաճիհր)—45
Գրիգոր (վարդապետ)—49
Գրիգոր Պատրիկ—57
Գրիգոր Մամիկոնյան—57
Գրիգոր (Տուտեորդի)—74, 75, 128
Գրիգոր Մագիստրոս—77
Գրիգոր (Հռոմի պապ)—87
Գրիգոր (Թոքակերի որդի)—90, 146, 147
Գրիգոր Նարեկացի—93
Գրիգոր Տղա—113, 162, 184, 258
Գրիգոր Ապիրատ—114
Գրիգոր (Մոնոնիկն)—128, 130
Գրիգոր Դվնեցի—128
Գրիգոր (Հաղբակի որդի)—150
Գրիգոր—156
Գրիգոր (կապալեցի)—162
Գրիգոր (իշխան)—196, 262
Գրիգոր Խաչենցի—200, 203
Գրիգոր (Բջնիից)—222
Գրիգոր կամ Գրիգորիս (Ներսեսի եղբայրը)—85, 236
Գրիգոր (եպիսկոպոս)—258
Գրիգորես (Հաղպատի եպիսկոպոս)—127, 128, 129
Գրիգորես (տե՛ս Գագիկ)
Գրիգորես (Խաչենի վարդապետ)——194
Գրիգորես (Դադի վանքից)—234
Գրիգորիս—29, 30, 143
Գրիգորիս (տե՛ս Վահրամ)—77, 78, 79, 80
Գրիգորիս—79
Գրիգորիս (Հայրապետ)—87, 91, 94, 146
Գրիգորիս (Գրիգոր Տղայի քեռորդին)—113, 114
Գրիգորիս (Վախթանգի եղբայրը)—156

Գրիգոր (վարդապետ)—250
Գուրգի Բագրատի—133
Գեորգ—65, 68
Գեորգ (վարդապետ)—77, 78
Գեորգ (եպիսկոպոս)—79, 80, 81
Գեորգ Մեգրիկ 87
Գեորգ (կաթողիկոս)—145, 146
Գեորգ—146
Գեորգ—162

## Դ.

Դանիել (քորեպիսկոպոս)—30, 31
Դանիել (ասորի)—35
Դանիել (Մարգարե)—37, 113, 180, 248
Դավգար—271
Դավիթ Մարգարե—22, 61, 87, 93, 248
Դավիթ փիլիսոփա—36, 37, 41
Դավիթ Սահառունի—51, 53
Դավիթ (տե՛ս Սուրհան)—57
Դավիթ (կաթողիկոս)—61, 63
Դավիթ Հոռոմայրեցի—63
Դավիթ—66
Դավիթ (Գերենիկի որդի)—79
Դավիթ (Դեմետրիոսի որդի)—89, 91
Դավիթ (Թագավոր)—89
Դավիթ (Աշավկա որդի)—90, 146
Դավիթ (կաթողիկոս)—114, 126, 127, 138
Դավիթ (Կյուրիկեի Բագրատունու որդին)—116
Դավիթ (Նոր բերդի իշխան) 117
Դավիթ Քոբայրեցի—128
Դավիթ—143
Դավիթ—145
Դավիթ—145
Դավիթ—145
Դավիթ—146
Դավիթ—146
Դավիթ—146
Դավիթ (Քուրդի որդի)—152, 157
Դավիթ (Ռուզուդանի որդի)—192, 207, 225, 226
Դավիթ (Լաշայի որդի)—206, 207, 226, 228, 229, 261, 278, 281
Դավիթ (Մոլորեցուցիչ)—230, 231
Դեմետրե (նաև Դեմետրիոս)—89, 91, 122, 147
Դեմետրե (Դավթի որդի)—279
Դեոսկորոս—74, 88
Դեսպինա—284
Դետում—258
Դերենիկ—69
Դերենիկ (Դավթի հայրը)—79
Դիոքրիտոսոս—115
Դիոնիսիոս Արիոպագացի—93, 247
Դոփի—200, 203

## Ե.

Եզեկիել—37, 180, 248
Եզնիկ—36, 37
Եզր—52, 61
Եզրաս Անգեղացի—42
Ելթինա—204, 207, 208
Ելոզ—45, 46, 155
Եղիա (կաթողիկոս)—58, 59
Եղիա (Մարգարե)—98, 242, 248, 254
Եղիա (Հավուց թառի)—128
Եղիա—144
Եղիա (վարդապետ)—194
Եղիար—157
Եղիազար—144
Եղիշե—23, 36, 37
Եղիշե (կաթողիկոս)—71
Եղիշե—142
Եղիսաբեթ—101
Եմեսացի եպիսկոպոս—237
Ենովս—248
Ենովք—248
Եպիփան Կիպրացի—237, 244, 245
Եփիմե—65
Եսայի—64
Եսայի (Մարգարե)—98, 248
Եվաղեն—142
Եվա—161
Եվսեբիոս—22
Եվագրոս—102, 103
Երեմիա—143
Երեմիա (Մարգարե)—161, 248
Եփրեմ—63, 88

## Զ.

Զաբել (նաև Եղիսաբեթ)—139, 205, 262
Զավեն—33, 34
Զարմանդուխտ—52
Զաքարե (նաև Զաքարիա (իշխանաց իշխան)—74, 79, 80, 116, 122, 123, 124, 125, 126, 127, 128, 129, 130, 131, 135, 137, 138, 153, 155, 156, 157, 160, 161, 162, 172, 189, 192, 207, 209, 281
Զաքարե—123
Զաքարե (Ջալալի եղբայրը)—193
Զաքարե (Շահնշահի որդի)—229, 272, 280, 281
Զաքարիա—66, 68
Զաքարիա (Հովհաննես Մկրտչի հայրը)—101, 143
Զաքարիա—116, 122
Զաքարիա (կաթողիկոս)—143
Զաքարիա (կաթողիկոս)—144
Զենոն—27, 41, 42
Զոմզոմա (տե՛ս Սոփիանոս)—89, 90
Զորաբաբել—248

## Է.

Էաս—45, 155
Էլլի Գադա—256
Էմանվել (Մանել)—115
Էմմանվել—240

## Թ.

Թադեոս (առաքյալ)—141, 211, 215, 223, 235, 253
Թաթուլ—41
Թալիլե—145
Թաղիադին—117
Թամար—79, 122, 124, 138, 152, 153, 155, 172
Թամթա—124, 166, 209
Թեոդոս Փոքր—23, 38, 39, 40
Թեոդոս Մեծ—33, 34
Թեոդոս—92
Թեոդոս (սպասավոր)—223
Թեոդոր—37
Թեոդորա—43
Թեոդորոս—41
Թեոդորոս Ռշտունի—53, 56
Թեոդորոս (կայսր)—58
Թեոդորոս (կաթողիկոս)—71
Թեոդորոս (սուրբ)—112
Թեոդորոս (կաթողիկոս)—145
Թեորա—92
Թեոփիլոս—67
Թորոս—260
Թովմա վարդապետ—24
Թովմա—67
Թովմաս (առաքյալ)—110
Թորոս—86, 87, 118
Թորոս (Գողի աշակերտ)—159
Թորոս (Հեթումի որդի)—262
Թորոս քահանա—263
Թումա—41
Թեղի—230

## Ի.

Իբնգոկլ—64
Իգնատիոս—88, 128
Իգիա—58, 59, 62
Իլիգիա—275
Իսահակ (վարդապետ)—68
Իսահակ—248

Իսմայել—55, 57, 132
Իսրայել—22, 215, 243, 283
Իսրայել (կաթողիկոս)—57
Իսրար—197
Իվանե—79, 116, 122, 123, 124, 131, 135, 137, 138, 148, 149, 150, 151, 153, 154, 158, 160, 162, 163, 166, 172, 183, 192, 206, 220, 229
Իվանե (Շալվեի եղբայրը)—123, 163
Իվանե (Ջալալի եղբայրը)—193
Իվանե (Շահնշահի որդի)—231
Իուսպատա—183, 184
Իրան—45, 46, 155

## Լ.

Լեչգարիս—227
Լևոն Մեծ—41
Լևոն (կայսր)—58
Լևոն (կայսր)—58, 59, 62
Լևոն—65
Լևոն—65, 67
Լևոն—70, 71
Լևոն (Թագավոր)—83, 87, 114, 118, 119, 120, 121, 122, 125, 126, 127, 131, 138, 139, 204, 205, 227, 262
Լևոն (իշխան)—86, 113
Լևոն (Հեթումի որդի)—204, 262

## Խ.

Խաչատուր Տարոնացի—153
Խաչատուր վարդապետ—162
Խաչիկ—63
Խաչիկ (կաթողիկոս)—73
Խաչիկ (կաթողիկոս)—77
Խղըլ—84, 85
Խոճա—256, 265
Խոյդան—156
Խոշաք (Ավագի մայրը)—229
Խոշաք (Գոնցայի դուստրը)—279
Խոռիան—51, 52
Խոռյամ—52
Խոսրով (պատմիչ)—83
Խոսրով (Կոտակ)—29, 30, 226
Խոսրով—34
Խոսրով (Մեսրոպի աշակերտը)—36
Խոսրով (Վռամշապուհի եղբայրը)—38
Խոսրով (պարսից արքա)—44, 50, 51, 143
Խոսրով—52
Խոսրով (եպիսկոպոս)—71
Խորեն—23
Խորիշահ—262

## Կ.

Կալոժան—114
Կասմ Ամիրա—53
Կավատ—42
Կավատ—52
Կատարամիտե—73
Կարապետ—146
Կարապետ քահանա—263
Կերինթոս—53
Կիռ Թոդոռ—83
Կիռժան—71, 73
Կիրակոս—21, 25, 180, 238
Կիրակոս Գանձակեցի (տե՛ս Կիրակոս)
Կյուռղի—83
Կյուրեղ (Երուսաղեմացի)—52, 61, 88, 249
Կյուրեղ Ալեքսանդրացի—102
Կյուրիկե (Գուրգեն)—79
Կյուրիկե Բագրատունի—116
Կյուրիկե (Դավթի որդի)—116
Կյուրիկե (Աղսարթանի որդի)—116, 117, 175
Կյուրիոն—24, 46, 47
Կոմիտաս—51, 52
Կոնոսավրի—85
Կոստանդ (Լևոնի հայրը)—86
Կոստանդին (Կոստանդիանոս Մեծի որդին)—29, 30, 45
Կոստանդին (Հերակլի որդին)—53, 54, 58
Կոստանդին (Կավալինոս)—62, 65
Կոստանդին (Իռինեի որդին)—65
Կոստանդին (Լևոնի որդին)—71
Կոստանդին (կայսր)—83
Կոստանդին—118
Կոստանդին (Հեթում արքայի հայրը)—138, 139, 140, 199, 205, 220, 262
Կոստանդին (կամ Կոստանդինոս, կաթողիկոս)—140, 199, 210, 211, 215, 222, 223, 235, 255, 262
Կոստանդին (Լամբրոնի իշխան)—204, 205
Կոստանդիանոս Մեծ (կամ Բարեպաշտ)—22, 26, 30, 92, 112
Կորյուն—23, 36, 37
Կուզ—124
Կուրապաղատ—64

## Հ.

Հաբել (քահանա)—35
Հաբել (կաթողիկոս)—50
Հագար—53
Հազկերտ—40, 142
Հաղկերտ—52, 54
Հակոբ (Մծբնեցի)—52, 61, 93
Հակոբ—71, 72
Հակոբ (եպիսկոպոս)—222
Հակոբ (վարդապետ)—262, 265
Հակոբոս երեց—125
Հակոբոս—142
Հակոբյան Հուդա—141
Հակովբիկ (նահատակ)—280
Հաղբակ—150, 275
Համադոլա—209
Համազասպ (մարզպան)—57
Համազասպ (եպիսկոպոս)—80, 90, 222, 234
Հայկ (նահապետ)—142
Հասան (տե՛ս Ջալալ)
Հասան (տե՛ս Պռոշ)
Հասան (Վուրդի որդին)—262
Հասան (Պռոշի որդին)—275
Հեթում (արքա)—87, 139, 140, 141, 199, 203, 204, 205, 210, 217, 220, 227, 236, 261, 265, 269
Հեթում (Լամբրոնի տերը)—204, 205
Հեղինե (Աբգարի կինը)—193
Հեսու—248
Հերակլ (կամ Հերակլես)—23, 51, 52, 53, 58, 61
Հիպերիքոս—125
Հիսե—69
Հմայակ—42
Հռիփսիմե—28, 51, 158
Հովհանոս Սամոսատցի—36
Հոր—37, 63, 157, 248
Հոհան—45
Հովար—64
Հովասափ—162
Հովբիանոս—32
Հովել—54
Հովհան Ոսկեբերան—34, 38, 88, 107, 237, 243
Հովհան (Մեսրոպի աշակերտներից)—36
Հովհան Մանդակունի—41
Հովհան (պատրիարք)—47
Հովհան Մայրավանեցի—52, [illegible]
Հովհան (նաև Հովհաննես) ավետարանիչ—67, 87, 97, 107, 109, 236, 238, 248, 263
Հովհաննես (Դրասխանակերտցի)—24, 68, 71
Հովհաննես (Թարգմանիչ)—35, 44, 45
Հովհաննես Միրաքել (նաև Հով-

Հովհաննես Կարապետ)—44, 97, 143, 243, 252
Հովհաննես (կոգովիտցի)—50, 61
Հովհաննես (կամ Հովհան) Օձնեցի—59, 189, 221
Հովհաննես (կաթողիկոս)—68
Հովհաննես (թագավոր)—74, 75
Հովհաննես (եպիսկոպոս)—79, 80
Հովհաննես (Աղսարթանի որդի)——80
Հովհաննես (տե՛ս Սարկավագ)
Հովհաննես (կաթողիկոս)—114, 119, 126, 127, 128, 138, 140, 205
Հովհաննես Տվեցի—117, 222
Հովհաննես (Սանահինի)—128
Հովհաննես (Կարսի)—128
Հովհաննես (Աղվանից կաթողիկոս)—135
Հովհաննես (Հոների եպիսկոպոս)—143
Հովհաննես—144
Հովհաննես—145
Հովհաննես—146
Հովհաննես—147
Հովհաննես Տավուշեցի—151, 152
Հովհաննես (Հաղպատի)—157
Հովհաննես Արմանեցի—162
Հովհաննես (արքեպիսկոպոս)—199
Հովհաննես—249
Հովհաննես Գառնեցի—250, 251, 252, 253, 254
Հովհաննես (Ումեկի որդին)—261
Հովհաննես (Հույների թագավոր)—262
Հովնան—145
Հովնան—145, 146
Հովնան—240
Հովսեփ (Վայոցձորեցի)—36, 40, 41
Հովսեփ (արար, Սահակի եղբայրը)—65
Հովսեփ—65, 66
Հովսեփ (կաթողիկոս)—74
Հովսեփ (Աղվանքի կաթողիկոս)—79
Հովսեփ—88
Հովսեփ (Հեռվանցի առաջնորդ)——119
Հովսեփ—145
Հովսեփ—146
Հովսեփ վարդապետ—223, 235, 236
Հովսեփ—248
Հորթա—168
Հուդա—217, 230
Հուլավու—264, 265, 267, 268, 269, 270, 271, 272, 273, 274, 275, 276, 277, 279, 280, 281, 282, 283, 284
Հուլիանոս—30, 41, 60, 112
Հուսիկ—29, 30, 31, 143
Հուսիկ—135
Հուստինոս—42, 43, 45, 47
Հուստինոս—43, 44, 45, 47, 155
Հուստինիանոս—58
Հուստինիանոս—58
Հուսուփ (Աբուսեթի որդի)—68, 69
Հուսուփ (սուլթան)—277

## Ղ.

Ղազար Փարպեցի—23, 36, 37, 42
Ղազար—143
Ղատաղան—175, 270, 283
Ղարա Բահադուր—188
Ղիաթադին—201, 209, 226, 227
Ղորիլա—281, 282
Ղութուն—196, 197, 208
Ղուլի—268, 270, 282
Ղուկաս—88, 101
Ղևոնդ Երեց—23, 36, 40, 42

## Ճ.

Ճիհր Բուրզեն—51
Ճիհր Վշնասպ Սուհեն—51
Ճիհր Վրոն Միհրան—51



## Մ.

Մադրին—266, 281
Մախոժ—44
Մահադի—66
Մահմադ—66
Մահմեդ—23, 53, 54, 55, 61, 150, 269, 271, 272
Մահմեդ—57, 58
Մահմեդ—67
Մահմեդ—67
Մահմուդ—70
Մահմուն—66
Մամբրե Վերծանող—36, 37, 43
Մամքան—194
Մայմուն—85
Մանաճիհր (տե՛ս Գրիգոր)—45
Մանգնոս—41, 45
Մանգու—256, 257, 258, 260, 261, 263, 264, 265, 266, 267, 269, 270, 281, 282
Մանիլ (էմանվել)—93, 115
Մանկվո—59
Մանվել Մամիկոնյան—33, 34
Մանվել—114
Մաշտոց—68, 72
Մավրի—54, 58
Մատթե—143
Մատթեոս Ուռհայեցի—24
Մատթեոս (ավետարանիչ)—93
Մատթեոս (կաթողիկոս)—145
Մարզպան—169, 262
Մարիամ (նաև Աստվածածին)—95, 96, 101, 102, 117, 123, 128, 157, 237, 239, 240
Մարկիանոս—40, 41
Մարկոս—79
Մարկոս—80, 82
Մարկոս—146
Մարկոս—177
Մարկոս (վարդապետ)—258
Մարտիրոս—160, 161, 162
Մաքսիմիանոս—143, 249
Մելիքշահ—70, 83
Մելիք Աշրաֆ (նաև Աշրաֆ)—116, 124, 141, 165, 166, 209
Մելիք Քեմլ—116, 124, 140, 166
Մեղան—282
Մեսրոպ (նաև Երանելի)—35, 36, 37, 38, 39, 40, 89, 142, 143, 181
Մերհավան—142
Մժեժ Գնունի—44, 46
Միխայել—83, 84
Միհրդատ—54
Մինաս—127, 128
Միքայել—65
Միքայել—67
Միքայել—145
Մխիթար (Գոշ)—123, 125, 127, 129, 130, 131, 132, 151, 152, 156, 158, 159, 160
Մխիթար (Հյուսն)—161
Մխիթար (Գետիկի առաջնորդ)—162
Մխիթար—263, 265
Մկդեմ—150, 275
Մկդեմ—(Պռոշ իշխանի որդին)—275
Մկրտիչ (Ամբերդի եպիսկոպոս)—222
Մկրտիչ—261
Մոյար—174, 175, 176, 179, 181
Մոնոմախ—83
Մովսես (մարգարե)—22, 53, 78, 98, 243, 244, 248, 253, 254
Մովսես Խորենացի—23, 36, 37, 41, 43, 237
Մովսես Կաղանկատվացի—24
Մովսես (Բագրևանդի եպիսկոպոս)—42
Մովսես—45, 46
Մովսես (Ցուրտավի եպիսկոպոս)—47
Մովսես—63
Մովսես—143
Մովսես—145
Մովսես (Փառիսոսից)—146

Մարիկ—47, 48, 49, 50, 51
Մրվան—58, 59, 62
Մուշի—36, 42
Մուշեղ—34
Մուշեղ Մամիկոնյան—54, 62
Մութասար—271, 273
Մուսե—66


## Ն.

Նանա—116
Նահան—67
Նարկեսոս—66
Նեռ—39, 40, 115, 167, 230
Ներսեհ Շիրակացի—57, 58
Ներսեհ Կամսարական—58
Ներսես (Մեծ)—25, 31, 32, 33, 34, 73, 89, 168, 236
Ներսես (կաթողիկոս)—42, 44
Ներսես—56, 57
Ներսես (Աղվանքի կաթողիկոս)——80, 85
Ներսես—87
Ներսես Լամբրոնացի—87, 119
Ներսես (Շնորհալի)—92, 93, 94, 113
Ներսես (Կեչառուքի առաջնորդ)——130, 131
Ներսես Բակուր—144, 145
Ներսես—147
Ներսես (Աղվանքի կաթողիկոս)——194, 195, 207, 222, 249, 258, 280
Նեստոր—103, 108
Նիկիֆոր—65
Նիկիֆոր—71
Նոյ (մենակյաց)—64
Նոյ—248


## Շ.

Շաթ—143
Շալվե—123, 163
Շակմոնիա—266, 284




Շահակ—33, 34
Շահ-Արմեն—123
Շահնշահ—80, 138, 172, 182, 183, 185, 188, 189, 191, 200, 203, 207, 209, 229, 272, 279, 280, 281
Շամիրամ—172
Շամ Հեշմ—59
Շապուհ Բագրատունի—24
Շապուհ (պարսից արքա)—29, 30, 31, 32, 33, 34, 112
Շապուհ (պատմագիր)—67
Շեխ—69
Շերբարոք—152, 276
Շմվել—39
Շնորհավոր—261
Շողակաթ—88
Շուփհաղիշո—142, 143


## Ո.

Ոզիա—90
Ովան—244
Որմիզդ—50


## Չ.

Չաղատա—168, 182, 190, 197, 228, 275, 282
Չարմաղուն—169, 184, 186, 191, 197, 199, 204, 207, 225, 280, 283
Չինգիզ ղան (նաև Չանգզ ղան)—168, 196, 268, 282
Չուլու Ղան—180


## Պ.

Պաղտույն—35
Պանտ—143
Պանտալիոն—143
Պապ (Հուսիկի որդին)—31
Պապ (Արշակ թագավորի որդին)—33
Պապաք—150, 275
Պապաք (Պռոշ իշխանի որդին)—275
Պետրոս (առաքյալ)—26, 77, 91, 98, 115, 119, 236, 248, 253
Պետրոս (Գայլ)—47
Պետրոս (Գետադարձ)—74, 75, 76, 77, 86, 114
Պետրոս—146
Պերող—40, 41, 42
Պղատոն—246
Պողոս (առաքյալ)—26, 77, 92, 119, 236, 243, 244, 248, 253
Պողոս (քահանա)—179, 250
Պորփյուր—37
Պռոշ (տե՛ս Հասան)—159, 272, 274, 275
Պտղոմեոս—248


## Ջ.

Ջալալ (տե՛ս Հասան)—189, 192, 203, 204, 257, 258, 267, 278, 279, 280
Ջալալադին—135, 162, 163, 165, 166, 167, 169, 176, 209
Ջամասպ—42
Ջաֆր—66, 67, 224, 274
Ջերու—143
Ջիասմութ—275
Ջոչ-Բուղա—190


## Ռ.

Ռաբան (տե՛ս Սիմեոն)—198, 199, 207, 208
Ռոմանոս—70
Ռոմանոս—70, 71
Ռոմանոս—71, 83
Ռուբեն—86, 118
Ռուբեն—87, 116
Ռուզուդան—172, 183, 191, 206, 207, 209, 225, 226
Ռուկուրան—230




## Ս.

Սաբադա Բահատուր—149
Սադեղ—208
Սադուն (Քուրդի որդին)—152, 157, 276
Սադուն (Շերբարոքի որդին)—152, 276
Սալահադին—115, 124, 155, 277
Սայլուկ—70
Սահակ (Պարթև)—23, 34, 35, 36, 38, 39, 40, 52, 89, 234
Սահակ (Մեսրոպի աշակերտներից)—36, 40, 42
Սահակ Բագրատունի—37
Սահակ (կաթողիկոս)—57, 58
Սահակ (արաբ, Հովսեփի եղբայրը)—65
Սահակ—143
Սահակ—146
Սահակ (եպիսկոպոս)—147
Սամվել (Անեցի)—24, 70
Սամվել (կաթողիկոս)—42
Սամվել—62
Սամվել—145
Սամվել—248
Սանատրուկ—29
Սատո—142
Սարավան—261
Սարգիս (աղանդավոր)—52
Սարգիս (սուրբ)—56, 112, 181
Սարգիս (կաթողիկոս)—73, 74
Սարգիս (քահանա)—79
Սարգիս (վարդապետ)—88
Սարգիս (իշխան)—112
Սարգիս (Զաքարեի և Իվանեի հայրը)—116, 122
Սարգիս—123
Սարգիս (Շալվեի և Իվանեի հայրը)—123
Սարգիս (մենակյաց)—128
Սարգիս (Անիի աթոռակալ)—123
Սարգիս (տե՛ս Ավագ, Իվանեի որդին)—138

Սարգիս—153
Սարգիս (Մարզպանի որդի)—136
Սարգիս (Կարինի եպիսկոպոս)—209, 222
Սարգիս (Անիի եպիսկոպոս)—228
Սարգիս—249
Սարգիս (Շահնշահի որդի)—281
Սարգիս (Ուխտիքի իշխան)—281
Սարգիս (Երզնկա եպիսկոպոս)—284
Սարթախ—255, 256, 257, 263, 264, 267, 268, 269
Սարկավագ (տե՛ս Հովհաննես)—70, 88, 90
Սարկավագ (քորեպիսկոպոս)—132
Սարկավագ (Գետիկի առաջնորդ)—153
Սեբիոս եպիսկոպոս—23
Սեթ—248
Սեղբեստրոս—22, 26, 27, 91
Սերգիս Թիփրոս—53
Սիմեոն (տե՛ս Բարուն)
Սիմոն Սյունական—42
Սիմոն—144
Սիմոն—146
Սիմոն (կախարդ)—217
Սիոն (կաթողիկոս)—62
Սիոն—216
Սիրաման—283
Սմբատ Բագրատունի—50, 65, 68, 69, 70
Սմբատ Բագրատունի Բյուրատյան—58
Սմբատ ասպետ—63
Սմբատ (տե՛ս Աբլաբաս)—65
Սմբատ (սպարապետ)—66, 67
Սմբատ Մագիստրոս—73
Սմբատ Շահնշահ—73
Սմբատ (Հեթումի եղբայրը)—140, 199, 227, 261
Սոկրատես (նաև Սոկրատ)—22, 237
Սողոմոն (իմաստուն)—36, 87, 112, 248



Սողոմոն (կաթողիկոս)—65
Սողոմոն (վանահայր)—145
Սողոմոն—145
Սոսթենես—147
Սոսլան—138
Սոփար—69
Սպրամ—144
Ստեփանե—86, 87, 118
Ստեփանոս (Ասողիկ)—21
Ստեփանոս Սյունյաց—36, 37, 63, 64, 237
Ստեփանոս (քահանա)—62
Ստեփանոս—64
Ստեփանոս Կոն—67
Ստեփանոս—71
Ստեփանոս (Մաշտոցի արյունակից)—72
Ստեփանոս—132, 134
Ստեփանոս (Հուսիկի որդի)—135
Ստեփանոս—146
Ստեփանոս—146, 152
Ստեփանոս—147
Ստեփանոս (Ումեկի որդի)—261
Ստեփանոս եպիսկոպոս—263
Ստեփանոս (Աղվանքի կաթողիկոս)—230
Ստեփաննոս (տես Զոմզոմա)—89, 90
Սուլեման—59
Սուլթան—118
Սուրհան (տե՛ս Դավիթ)—57
Սուրմակ—39

Վ.

Վախթանգ (Հաթերքի իշխան)—152, 157
Վախթանգ (Խաչենցի)—156
Վախթանգ (Տանկիկ կոչված)—193
Վախրիճ (Վահրիճ)—35
Վահան Մամիկոնյան—42, 44
Վահան (Գողթնից)—59
Վահան (Բաղաց)—73
Վահանիկ—72
Վահրամ—73
Վահրամ (տե՛ս Գրիգորիս)
Վահրամ—116, 117, 122, 123
Վահրամ (Աղբուղայի հայրը)—123, 172, 174, 175, 178, 189, 200, 203, 206, 207
Վաղարշ—42
Վաղարշակ (Պապի որդի)—34
Վաղարշակ (պարթև)—142
Վաղես—32
Վանական—24, 132, 159, 176, 179, 194, 222, 233, 236, 242, 247
Վանական (Բջնիի եպիսկոպոս)—222
Վաշխե—162
Վաչագան—142
Վաչագան Բարեպաշտ—142, 143
Վաչե—142
Վաչե (Քուրդի որդին)—262
Վասակ—40
Վասակ (նահատակ)—77
Վասակ (իշխան)—117
Վասակ (Հաղբակի որդի)—150, 275
Վասակ—156
Վասակ (Պռոշ իշխանի որդին)—275
Վասիլ (Վասիլ Առաջին)—28, 67, 70
Վասիլ—78, 83
Վարազդատ—33, 34
Վարդ—44
Վարդան (Մամիկոնյան)—23, 40, 48
Վարդան (վարդապետ)—123, 210, 213, 214, 222, 236, 251
Վարդան (Հոմար որդի)—234
Վարոս—41
Վեհմիհրշապուհ—39
Վեստ Սարգիս—74
Վիրո (Աղվանքի կաթողիկոս)—53
Վիրո—143
Վլիթ—59
Վռամ—39, 40
Վռամշապուհ—35, 38
Վրթանես—28, 29, 30, 143
Վրթանես Քերթող—47, 49
Վրթանես—128, 134

Տ.

Տանգրիլ—85, 87
Տիբերիոս—47, 48, 50
Տիմոթեոս—42
Տիրան—30, 31
Տիրացու—135
Տողուս—273, 280, 284
Տոնղուս—191
Տրդատ (Մեծ)—23, 25, 26, 28, 29, 68, 69, 89, 91, 112, 125, 142, 143, 226, 259
Տրդատ (կաթողիկոս)—61
Տրդատ (կաթողիկոս)—62
Տութար—268, 270, 282
Տութուն—197
Տուղրիլ—70
Տուրքիկ—128

Ու.

Ուխտանես եպիսկոպոս—24, 47
Ուխտանես—144
Ումեկ (տե՛ս Ասիլ)—261
Ուռնայր—142
Ուսուս—208

Փ.

Փահլավան—117
Փառանձեմ—32
Փառներսեհ—31
Փավստոս Բուզանդ—23

Փենեհես (գիտուն)—45, 155
Փենեհես—248
Փիլարտոս—70
Փիլոթեոս—125
Փիլիպոս Վարդան—58
Փիլոնիոս—243
Փիլիպոս—139
Փոտոս—31
Փոռ—68

## Ք.

Քիթբուղա—278
Քրիստափոր—42
Քրիստափոր—52
Քրիստոս (նաև Հիսուս)—22, 27, 30, 31, 34, 35, 37, 41, 42, 44, 45, 46, 51—55, 57, 59, 60, 65—69, 73, 78, 87, 90, 92, 94, 96, 98—109, 111, 113, 115, 121, 123, 130, 136, 137, 143, 150—152, 155, 156, 158, 160, 166, 170, 176, 179, 194, 198, 200, 210—213, 215, 216, 220, 221, 223, 230, 233, 236, 237, 240—243, 245, 247, 250, 253, 255, 257, 262, 265, 280
Քուրդ—152, 153, 157, 262, 265
Քուրդո—63

## Օ.

Օթման—54, 56, 58
Օմառ—59
Օմար—134
Օնորիոս—34
Օշին—204
Օրենդ—249
Օրղան—164, 165

# ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

## Ա.

Աբասաձոր (գյուղ)—154, 158
Աբխազիա—207, 278
Ադանա—86
Աթլ գետ (Վոլգա)—255, 261
Ալամութ (երկիր)—269
Ալայիա (կղզի)—227, 263
Ալանաց դռներ—282
Ալանք—282
Ալեքսանդրիա—42, 79, 155
Ալիս գետ—62
Ալհարակ լեռ—91, 147
Ալվալեխ—264
Ախուրյան գետ—73
Ածղոր (կաթողիկոսարան)—279
Ականա—258
Ակներ (վանք)—120, 139
Աղիովիտ—55
Աղթամար կղզի—69, 80, 114
Աղստև գետ—153, 162
Աղվանից աշխարհ (կամ Աղվանք)—24, 29, 30, 38, 52, 74, 79, 80, 132, 134, 142, 143, 144, 145, 146, 148, 152, 163, 167, 170, 172, 180, 194, 199, 201, 203, 207, 208, 222, 249, 260, 263, 267, 280
Ամարաս—143
Ամբերդ—122, 222
Ամիդ—167, 277
Ամիթ—209
Այեխ գետ—263
Այրարատ—122
Այրիվանք—222, 250
Անապատ (վանք)—117
Անի—24, 72, 73, 74, 75, 76, 80, 122, 127, 128, 130, 135, 185, 186, 187, 222
Անկիպալեխ—264
Անտաք (կամ Անտիոք)—85, 87, 88, 91, 115, 139, 284
Աշավա—158
Աշտիշատ գյուղ—31
Ասլեխ—264
Ասիա—259, 262
Ասոն—264
Ասորեստան (կամ Ասորիք)—35, 45, 54, 85, 277
Ավահր—205
Ատրպատական—123, 169
Արաբիա—45
Արագածոտն—65, 262
Արամունիք (կամ Արամոնք)—61
Արայի լեռ—262
Արկազյան սենյակ (վանք)—64
Արճեշ—135
Արշակավան—32, 33
Արշարունիք—70
Արտազ գավառ—235
Արտաշատ—30
Արտավիլ—137
Արցախ—257
Արուճ ավան—57
Արփուս գյուղ—50

## Բ.

Բարկյոն—67, 274
Բազարան—50

Բաղնայր (վանք)—73
Բաղվան (կամ Բաղավան)—56, 62, 137
Բագրևանդ—42, 58
Բազաց աշխարհ—72
Բաղդադ—62, 67, 269, 270, 271, 272, 273, 275
Բասրա—271
Բարձրաբերդ (բերդ)—82
Բեթանիա—37
Բեթղեհեմ—101
Բելուկան—148
Բեզամեջ—148
Բերդակ—145
Բզնունյաց (երկիր, կամ Բզնունիք)—55, 123, 165, 209
Բզնունյաց ծով—69
Բյուզու—65
Բյուզանդիա—34, 41, 46, 63, 70, 75, 83, 116,
Բջնի քաղաք—77, 122, 127, 128, 134, 222
Բջնի (գավառ)—158
Բվոյն—62
Բուխարա—264

## Գ.

Գագ—123, 175, 181
Գամիրք—45
Գանձակ—90, 91, 132, 134, 147, 149, 150, 151, 163, 164, 170, 172
Գանձասար—194, 280
Գառնի գյուղաքաղաք—68, 164, 250
Գարդման—117, 123, 144, 175, 249
Գելաթ (վրաց գերեզմանատուն)——279
Գեղամա ծով—58, 230
Գեղարքունյաց ծով—122, 184, 280
Գետաբակ բերդ—53, 175
Գետակից (վանք)—117
Գետիկի վանք (նաև Նոր Գետիկ)—21, 123, 125, 127, 129, 153, 154, 156, 160, 162, 182, 222
Գիս (վայր)—142
Գողգոթա—26
Գողթն—59, 235

## Դ.

Դադի վանք—157, 234
Դայաս—264
Դամասկոս (տե՛ս Դմիշկ)—118, 124, 141, 277
Դառնի դաշտ—283
Դաշնավորք գավառ—62
Դաստակերտ—145
Դեղ—224
Դերբենդ—59, 147, 148, 149, 207, 263, 268, 282, 283
Դիզակ—264
Դիլմաց աշխարհ—69
Դինկապալեխ—264
Դմիշկ (տե՛ս Դամասկոս)
Դպրեվանք—70
Դվին—30, 56, 57, 61, 63, 64, 68, 69, 85, 122, 127, 128, 145
Դրազարկ (վանք)—87
Դումանիս—183

## Ե.

Եգիպտոս—53, 54, 78, 80, 85, 97, 116, 124, 140, 166
Եթիլ (Թերեք). տե՛ս Աթլ (Վոլգա)—282
Եկոփրուկ—264
Եղապատրուշ գյուղ—64
Երազգավորս—65
Երասխ գետ—265





Երգեվանք—117, 123, 175, 176, 233, 249
Երզնկա (քաղաք)—202, 227, 269, 284
Երթիճ գետ—263
Երուսաղեմ—26, 37, 42, 51, 66, 85, 91, 101, 115, 116, 124, 142, 155, 156, 170, 193, 210, 249, 251, 253, 277
Եփեսոս—227
Եփրատ գետ—140, 275

## Զ.

Զանգյան (քաղաք)—252, 263
Զորաձոր—158
Զուռնուխ—264

## Է.

Էրաղ—264

## Ը.

Ընկախ—264

## Թ.

Թարտարական լեռ—98, 273
Թաթարստան—263
Թայլին—62
Թանահատների վանք—64
Թանջահ—165
Թավրիզ—198, 208, 265
Թեղենիք—128
Թեոդուպոլիս (տե՛ս Կարին քաղաք)—39, 199, 200, 209
Թիլ գյուղ—67
Թրակ (Թրակիա)—84, 115
Թիֆլիս—148
Թորդան գյուղ—27, 42
Թուն—165
Թուրքաստան—264

## Ի.

Իլանպալեխ—264
Իլանսու (գետ)—264
Իկոն (կամ Իկոնիա)—269

## Լ.

Լամբրոն (բերդ)—88, 204, 205
Լիբանան—165
Լոռե քաղաք—61, 70, 76, 84, 116, 127, 182
Լորուտ (գյուղ)—176

## Խ.

Խաղա (գերեզմանատուն)—194
Խամշի (վանք)—135, 147, 199, 207, 209
Խաչեն—79, 129, 133, 134, 151, 152, 184, 189, 192, 194, 230, 257, 267, 279
Խառան—57, 58, 277
Խարախոտ—263
Խափչուխ (տե՛ս Սղնախ)—264
Խլաթ—123, 165, 209
Խնդախույր—264
Խոխանաբերդ—193, 194, 224
Խորանաշատ—233, 249
Խորասան—69, 85, 135, 162, 163, 169, 264, 282
Խորին Ասորիք—277
Խծկոնք (վանք)—74
Խուզախ—264
Խութ—66
Խութափաղ—264
Խութուխչի—264
Խունան (դաշտավայր)—149

## Ծ.

Ծաղկաձոր—73
Ծառաքար (վանք)—74

Ցար (գյուղ)—230
Ցոլք (վայր)—86
Ցոփք գավառ—28
Ցիրանավոր (ամրոց)—224

## Կ.

Կաթնծով (տե՛ս Սուդգյոլ)—264
Կածարեթ (բերդ)—123, 175
Կախսա գյուղ—66
Կամրջաձոր (վանք)—70
Կայան բերդ—153, 183, 222,
Կայան (գավառ)—123, 129, 152, 153
Կայանի ձոր—222
Կապադովկիա—50, 85, 112, 166, 202
Կապապակ—146
Կապույտ քար (վանք)—70
Կասպից ծով—255, 261, 263, 282
Կատիսբոն—271, 274
Կարին գավառ—39, 200
Կարին քաղաք (տե՛ս Թեոդուպոլիս)—39, 52, 62, 65, 122, 146, 147, 152, 200, 209, 222, 269
Կարկառ—258
Կարս—76, 80, 122, 127, 128, 187, 188, 261, 262
Կեչառուք (վանք)—128, 129, 130, 222
Կեսարիա—32, 76, 80, 166, 202, 269
Կիլիկիա—28, 70, 73, 82, 83, 86, 93, 94, 118, 126, 166, 199, 203, 204, 210, 217, 227, 236, 261, 269
Կիպրոս կղզի—120, 139
Կլա (տե՛ս Հռոմկլա, Հոռոմկլա)—113
Կոթ (ավան)—230
Կողբ—52, 260
Կոլոնիա քաղաք—255
Կոմանա—34
Կոստանդնուպոլիս—28, 31, 34, 37, 41, 44, 48, 51, 68, 78, 84, 92, 115, 120
Կովկաս—149
Կոտայք գավառ—61, 66, 163
Կուր գետ—284

## Հ.

Հաց (վայր)—54
Հաթերք—152, 156
Հալեպ—115, 118, 121, 277
Հաղարծին—154, 162, 222
Հաղպատ—79, 80, 84, 89, 90, 127, 128, 129, 157, 159, 162, 222, 234
Համա—277
Հայաստան (կամ Հայոց աշխարհ)—23, 26, 33, 38, 39, 40, 41, 42, 47, 50, 52, 54, 55, 56, 59, 62, 66, 68, 70, 94, 104, 113, 122, 132, 135, 141, 143, 147, 148, 163, 172, 201, 203, 207, 215, 222, 224, 225, 238, 256, 260, 266, 267
Հանդաբերդ—230
Հավուց թառ (վանք)—128, 222
Հարք—33
Հեմիանի դաշտ—278
Հեմս—44, 277
Հեսվանց (վանք)—119
Հնդաստան—149
Հոռոմոս (կամ Հոռոմոց, Հոռոմե-ցի վանք)—70, 71, 222
Հովհաննավանք—222
Հորդանան—97, 101
Հորդանան գետ—97, 116, 252, 253
Հռոմ—22, 26, 63, 64, 65, 77, 78, 79, 118, 119, 120, 142, 235, 253
Հռոմկլա (կամ Հոռոմկլա)—86, 114, 126, 127, 138, 140, 199, 222, 236, 255
Հրեաստան—45, 101
Հունաստան—45

## Ձ.

Ձագ գյուղ—66

## Ղ.

Ղազվին—265
Ղաստայիք—265
Ղատիա—168
Ղարաղորում—168
Ղումսղուր—264

## Ճ.

Ճանպայեփ—264
Ճորա պահակ—263

## Մ.

Մազանդարան—264
Մազազ (գավառ)—66
Մածնաբերդ—80, 116, 117, 175
Մակարավանք—157
Մահկանաբերդ—152
Մամեստիա (քաղաք)—93, 94
Մանազկերտ—33, 60, 83
Մանյա այրեր—42
Մասյացոտն (գավառ)—115
Մարանդ—137
Մարաշ—70
Մարաստան—54
Մարմաշեն (վանք)—73
Մարտիրոսաց (քաղաք), տե՛ս Մու-ֆարղին—275
Մաքենացիների վանք—65
Մելիտինե—120, 159
Մեծ Հայք—236, 282
Մերդին—115
Մերտին—277
Միանա—265
Միափոր (գավառ)—135, 147, 199, 207
Միջագետք—116, 141, 200, 259, 275, 277
Մինաշեն—154
Մծբին—209
Մոզ գավառ—64
Մոր—278
Մրեն (գյուղ)—51, 62
Մրմրն—264
Մցխեթ—207
Մուհեղ—264
Մուղան (դաշտ)—167, 170, 174, 188, 201, 208, 267, 283
Մուֆարղին (տե՛ս Մարտիրոսաց)

## Ն.

Նախիջևան—59, 65, 137, 164, 198
Նենդրան—281
Նիկիա—27, 46, 243
Նիկոմիդիա—143
Նոր բերդ—117, 175

## Շ.

Շաթառ (քաղաք)—143
Շամախի (քաղաք)—144
Շամբին (երկիր)—209
Շամշուլդա (քաղաք)—183
Շամքոր—117, 123, 143, 148, 174, 175
Շապորան (քաղաք)—144
Շաքի—144
Շիրակ գավառ—57, 70, 71, 129
Շիրակավան (տե՛ս Երազգավորս)—65
Շիրվան—144, 145

Ո.

Ոստան (Դվին)—64
Ովայք գյուղ—66

Չ.

Չարաբերդ (ամրոց)—258
Չարեք (բերդ)—132, 135, 175
Չման-կասուկ (գյուղաքաղաք)—202
Չորրորդ Հայք—28

Պ.

Պաղակծիակ (վանք)—73
Պաղեստին—51, 54, 69, 116
Պարթևստան—54
Պարսկաստան—51, 54, 83, 112, 142, 256, 258
Պարտավ—143, 144, 145, 148
Պեշգալեխ—264
Պերգալեխ—264
Պերքանթ—264
Պղնձահանք—162, 172, 229
Պոնտոս—269
Պոտան—264

Ջ.

Ջեհան գետ—264, 267
Ջերմուկ—230

Ռ.

Ռե (քաղաք)—170, 264
Ռոզաստան—264
Ռուսաստան—207

Ս.

Սագաստան (երկրամաս)—50
Սախս—264
Սահմանախաչ—145
Սաղմոսավանք—222
Սամարա—66
Սամարղանդ—264
Սանահին—70, 74, 79, 80, 84, 88, 128, 137, 222
Սասուն—66, 276
Սավրան—264
Սավրի—264
Սարիփուլ—264
Սեբաստիա—76, 77, 86, 202, 269
Սելևկիա—86, 139
Սիմ (լեռ)—62
Սինա (անապատ)—53, 253
Սիս (քաղաք)—86, 126, 139, 236, 261, 269
Սիսիան—269
Սիրիա—86
Սկևռա (վանք)—88, 263
Սղնախ—264
Սյունիք (կամ Սյունյաց աշխարհ)—63, 64, 71, 72, 122
Սպահան—134, 170
Սպանիա—259
Սվանեթիա—207, 225, 226, 278
Սուգգյոլ (տե՛ս Կաթնծով)—264
Սուղուլղան—264
Սուրբ Գրիգոր (եկեղեցի Դվինում)—56
Սուրբ Գրիգոր (եկեղեցի՝ Վաչեի կառուցած)—162
Սուրբ Գևորգ (եկեղեցի)—162
Սուրբ Կարապետի վանք—45
Սուրբ Կարապետ Հովհաննես (եկեղեցի)—154
Սուրբ Հակոբ (եկեղեցի)—26, 251
Սուրբ Հարություն (եկեղեցի)—26
Սուրբ Մարի (քաղաք)—188
Սուրբ Պարսամայի վանք—120
Սուրբ Պետրոս առաքյալի տաճար—115
Սուրբ Սարգիս (եկեղեցի)—74
Սուրբ Սարգսի վկայարան (եկեղեցի Դվինում)—56





Սև լեռ—152
Սևան—58, 128
Սևանա կղզի—68, 72
Սևաստ—114, 119

Վ.

Վայոց ձոր—64, 122
Վանանդ—76, 83
Վասպուրական—58, 72, 80, 13. 209
Վատնյան դաշտ—29, 143
Վարդանակերտ ավան—58
Վարդենիս (գյուղ)—262, 265
Վրաստան (կամ Վիրք, Վրաց աշխարհ)—38, 72, 135, 143, 148, 149, 172, 190, 227, 260 267, 279, 281
Վրկան երկիր—50

Տ.

Տամգա—264
Տանձուտ (գյուղ)—154
Տանձուտի ձոր—153, 154
Տաշիր (գավառ)—122
Տավրոս—264
Տավուշ—116, 117, 123, 159, 175, 176
Տարոն—31, 47, 55, 66, 67, 124
Տարսոն—28, 86, 119
Տերունական—117, 123, 175
Տղրուկածով (գյուղ)—158
Տիգրիս գետ—67, 271, 273, 274
Տյուրիկե—203
Տրապիզոն—77
Տրապոլիս—115
Տուս—264
Տփղիս—51, 164, 183, 207, 226, 228, 261, 278

Ց.

Ցուրտավ—48

Ու.

Ուխտիք—281
Ուռեյանց (գյուղ)—158
Ուռհա—24, 209, 277
Ուրսուզան—264

Փ.

Փառխոս (վանք)—146
Փարչին—264
Փոքր Մաղիամ—54
Փույտա—254

Ք.

Քաղկեդոն—40, 41, 42, 46, 47, 49, 52, 61, 72, 73, 144
Քաղյան—62
Քամոդ (տե՛ս Խուցախ)—254
Քայիրանթ—264
Քարաշիթավ (վանք)—58
Քարեհերձ—123
Քիրման (երկիր)—259, 264
Քորայր—281
Քոլլուկ—264

Օ.

Օթմուս գյուղ—61
Օթրար—264
Օձուն գյուղ—61, 281
Օշական գյուղ—47
Օսեթիա—207
Օվկիանոս (Միջերկրական ծովը)—114, 269
Օր—263

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կիրակոս Գանձակեցի — Վ. Առաքելյան . . . . . . . 3

Ժամանակների համառոտ պատմություն, որ սուրբ Գրիգորից գալիս հասնում է մինչև վերջին օրերս. գրեց վարդապետ Կիրակոս Գանձակեցին Գետիկի մեծահռչակ վանքում (Նախաշավիղ) . . . 21

Ա.

Համառոտ պատմություն ու հիշատակություն սուրբ Գրիգորի և նրա աթոռը հաջորդածների անունների . . . . . . . . 26

Բ.

Հայաստանյայց եկեղեցու խոստովանության համառոտ գիր՝ գրված հայոց Գրիգորիս կաթողիկոսի եղբայր Ներսես եպիսկոպոսի կողմից բյուզանդական ինքնակալ թագավորի գերագույն փեսայի՝ մեծ հեծելազորապետ Ալեքսիոսի խնդրանքով, երբ եկավ արևելք և գտնվում էր Կիլիկիայի Մամեստիա մայրաքաղաքում, որտեղ հետևում էր նրան՝ [թագավորին] նրա հրավերով վեց հարյուր տասնչորս թվականին (1165) . . . . . . . . . . 94

Գ.

Արևմտյան կողմերում Լևոնի ունեցած թագավորության մասին . . 113

Դ.

Արևելյան Հայաստանի Զաքարե և նրա եղբայր Իվանե իշխանների մասին . . . . . . . . . . . . . . . 122

Ե.

Այն ժողովի մասին, որ Զաքարիան արեց որոշ խնդիրներ քննելու համար . . . . . . . . . . . . . . . 125

Զ.

Աղվանից կաթողիկոսի՝ այլազգիներից նեղված, Մեծ իշխանի մոտ գալու մասին . . . . . . . . . . . . . 132

Է.

Վասպուրականի կողմերում գտնվող նշանավոր վարդապետների մասին 135

Ը.

Զաքարե զորավարի մահվան մասին . . . . . . . 137

Թ.

Լևոն արքայի ու նրա մահվան մասին . . . . . . . 138



Ժ.

Աղվանից կողմերի պատմության համառոտ շարադրանք՝ մեջ բերված պատմողաբար . . . . . . . . . . . 141

ԺԱ.

Թաթարական զորքի (Դերբենդից) ելնելու և վրաց թագավորին փախուստական դարձնելու մասին . . . . . . . . . 147

ԺԲ.

Գանձակի սահմաններում ջարդված զորքերի մասին . . . 149

ԺԳ.

Մխիթար վարդապետի մասին, թե որտեղից և ինչպիսի մարդ էր . 151

ԺԴ.

Նոր Գետիկ վանքի կառուցման մասին . . . . . . . 154

ԺԵ.

Այն մասին, թե նրա աշակերտների մեջ ովքեր էին նշանավորները 158

ԺԶ.

Գոշ անվանված մեծ վարդապետ Մխիթարի մահվան մասին . . 159

ԺԷ.

Նրանից հետո վանքի առաջնորդությունը ստանձնողների մասին . 161

ԺԸ.

Սուլթան Ջալալադինի և վեց հարյուր յոթանասունչորս թվականին (1225 թ.) վրացական զորքը կոտորելու մասին . . . . . 163

ԺԹ.

Սուլթան Ջալալադինի կորստյան՝ աշխարհից վերանալու մասին . 165

Ի.

Թե ինչպես թաթարները եկան ոչնչացնելու ամբողջ աշխարհը . . 167

ԻԱ.

Գանձակ քաղաքի ավերման մասին . . . . . . . . 170

ԻԲ.

Նույն զորքերի կողմից Հայաստանի ու Վրաստանի ավերման մասին 172

ԻԳ.

Շամքոր քաղաքի գրավման մասին . . . . . . . . 174

ԻԴ.

Վանական վարդապետի ու նրա հետ եղածների գերության մասին . 176

ԻԵ.

Լոռե քաղաքի ավերման մասին . . . . . . . . 182

ԻԶ.

Ավագ իշխանի՝ նրանց ձեռքը ընկնելու մասին . . . . . 183

ԻԷ.

Անի քաղաքի մասին, թե ինչպես տերը մատնեց նրա [Չարմաղանի] ձեռքը . . . . . . . . . . . . . . . 186

ԻԸ.

Կարսի ավերածության մասին . . . . . . . . . 187

ԻԹ.

Ավագ իշխանին արևելքի խաղանի մոտ ուղարկելու մասին . . 189

Լ.

Խաչենի կողմերում տեղի ունեցած կոտորածի և բարեպաշտ իշխան Ջալալի մասին . . . . . . . . . . . . . 192

ԼԱ.

Իր կառուցած եկեղեցու մասին . . . . . . . . . 194

ԼԲ.

Թաթարների կերպարանքը ցույց տալու մի փոքրիկ նկարագրություն 195

ԼԳ.

Ասորի Ռաբանի մասին . . . . . . . . . . . . 197

ԼԴ.

Թեոդուպոլսի ավերման մասին . . . . . . . . . 199

ԼԵ.

Սուլթանի ու թաթարների միջև տեղի ունեցած պատերազմի մասին 201

ԼԶ.

Հայոց Հեթում թագավորի և այն մասին, ինչ որ կատարվեց . 203

ԼԷ.

Լամբրոնի Կոստանդին իշխանի և այն մասին, թե ինչ գործեր արեց Կիլիկիայում . . . . . . . . . . . . 204

ԼԸ.

Դավթի թագավորության մասին . . . . . . . . . . 206

ԼԹ.

Աղվանքի կաթողիկոս տեր Ներսեսին մեծ պալատ կանչելու մասին 207

Խ.

Վասպուրականի կողմերում բազմաթիվ գավառների վրա նրանց արշավելու մասին . . . . . . . . . . . . 209

ԽԱ.

Հայոց Կոստանդին կաթողիկոսի կանոնական հրամանների մասին 210

ԽԲ.

Տեր Կոստանդինի շրջաբերական թուղթը . . . . . . 211

ԽԳ.

Հայոց կաթողիկոս տեր Կոստանդինի կանոնական սահմանադրությունը 215

ԽԴ.

Ղանի կողմից եկած հարկահանների մասին . . . . . . 223

ԽԵ.

Վրաց թագավորների ղանի մոտ գնալու մասին . . . . 225

ԽԶ.

Հայոց Սմբատ զորավարի և Ղիաթադին սուլթանի որդու՝ ղանի մոտ գնալու մասին . . . . . . . . . . . . . 227

ԽԷ.

Թաթարական զորքի՝ Վրաստանում արած կոտորածի մասին . 227

ԽԸ.

Մոլորեցուցիչ Դավթի մասին . . . . . . . . . . 230

ԽԹ.

Այն Դևի մասին, որ կնոջ կերպարանք առած մի մարդու հետ խառնակվում էր . . . . . . . . . . . . . . 235





Ծ.

Այն վեճի մասին, որ տեղի ունեցավ քրիստոնյաների միջև աստծու սուրբ Հոգու համար, թե՝ ելնում է միայն ի Հօրէ անտի, թե ի Հօրէ և յՈրդւոյ . . . . . . . . . . . . . . 235

ԾԱ.

Ուղղափառների ճշմարիտ հավատի խոստովանություն . . . 238

ԾԲ.

Վանական վարդապետի դավանության գիրը . . . . . 242

ԾԳ.

Սուրբ վարդապետ Վանականի վախճանի մասին . . . . 247

ԾԴ.

Հովհաննես Գառնեցու մասին . . . . . . . . . . 250

ԾԵ.

Բաթուի որդի Սարթախի մասին . . . . . . . . . 255

ԾԶ.

Մորեխի մասին, որ մեր երկիրը կերավ . . . . . . . . 258

ԾԷ.

Մանգու ղանի հրամանով կատարված աշխարհագրի մասին . . 260

ԾԸ.

Բաթուի և Մանգու ղանի մոտ Հայոց Բարեպաշտ Հեթում թագավորի գնալու մասին . . . . . . . . . . . . . 261

ԾԹ.

Հռոմների երկրում տեղի ունեցած կոտորածի մասին . . . 267

Կ.

Բաղդադի ավերման մասին . . . . . . . . . . 270

ԿԱ.

Մարտիրոսաց քաղաքի ավերման մասին . . . . . . . 275

ԿԲ.

Այն մասին, թե ինչ կատարվեց Միջագետքի և Խորին Ասորիքի կողմերում . . . . . . . . . . . . . . 277

ԿԳ.

Բարեպաշտ իշխան Ջալալի մահվան մասին . . . . . . 278

ԿԴ.

Ճահնշահ իշխանի ու նրա որդի Զաքարեի մահվան մասին . . 281

ԿԵ.

Հուլավուի և Բերքայի միջև տեղի ունեցած մեծ պատերազմի մասին 281

**Ծանոթագրություններ** . . . . . . . . . . . . 285

**Գրականություն** . . . . . . . . . . . . 321

**Անձնանունների ցանկ** . . . . . . . . . . 327

**Տեղանունների ցանկ** . . . . . . . . . . . 341

ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ

# Հայոց պատմություն

КИРАКОС ГАНДЗАКЕЦИ
История Армении
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван — 1982

Խմբագիր՝ Ս. Գ. Սահակյան
Նկարիչ՝ Ան. Վ. Գասպարյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյուլամիրյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Մ. Սիմոնյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Մ. Բալաբյան

## ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

| Էջ | Տող | Տպված է | Պետք է լինի |
|---|---|---|---|
| 43 | 9 վ. | տերընդառաջը առնել | տերընդառաջը առնել |
| 53 | 13 ն. | Արիոսկաններից | Արիոստականներից |
| 134 | 1 ն. | աշխորհի | աշխարհի |
| 199 | 16 վ. | Հոռկկլայում | Հոռմկլայում |
| 201 | 7 ն. | Բնագրում՝ գայլը | Բնագրում՝ գայլ |
| 259 | 12 ն. | Հավուց թառը[269] | Հավուց թառը[259] |
| 325 | 20 վ. | სკორჩისათვის | სკოლისათვის |

Պատվ.—1274

ИБ № 2150
Հանձնված է շարվածքի 5. 08. 81։ Ստորագրված է տպագրության 4. 02. 82։ Ֆորմատ՝ $84\times108^{1}/_{32}$։ Թուղթ № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրությունը՝ բարձր։ 17,55 հրատ. մամ., 18,48 պայմ. տպ. մամ.։ Պատվեր՝ 1274։ Տպաքանակ՝ 20000։ Գինը՝ 1 ռ. 80 կ.։
«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։
Издательство «Советакан грох», Ереван—9, ул. Теряна, 91.
ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան 65։
Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван, ул. Алавердяна, 65.